Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Рыбяк
Типография Кругляя-
Цирюлёя 1905

891.99
Р-35

Printed in Austria
-6 NOV 2011

ԽԱՉԱԳՈՂԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

891.99
R-35

Nr. 24. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՖՖԻ Nr. 24.

ՐԱՖՖԻ

ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ա. Բ. Գ. ԵՒ Դ. ՄԱՍ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ
1905.

ՊԵՐՊԷՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
HARRY G. BERBERIAN
837 WASHINGTON ST.

24.08.2013

59.229

Дозволено цензурою. Тифлисъ. 17-го Іюля 1895 г.



50302-65

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ





Ի՞ՆՉ Է ԽԱՉԱԳՈՂԸ



Պողնել ընտանիքը անտէր, երկար ու ձիգ տարիներ թափառել աշխարհի մի ծայրից դէպի միւսը, արծաթ որսալու համար չխնայել ամեն տեսակ անասնիւ միջոցներ, — այդ խաչագողի գործն է։

Խաչագողը ունի իւր արհեստին վերաբերեալ բոլոր հմտութիւնները։ Այլ եւ այլ երկրներում թափառելու համար նա գիտէ զանազան ազգերի լեզուներ, ծանօթ է նրանց սովորութիւններին, եւ ինչ ազգի մէջ որ մտնում է, խօսում է այնքան վարժ, որ դժուար է որոշել, թէ նա այն ազգին չէ պատկանում։ Նա իւր ընկերների հետ խօսում է մի առանձին լեզուով, որը ոչ ոք հասկանալ կարող չէ, եթէ խաչագողների հասարակութեանը չէ պատ-

կանում: Դա մի խորհրդաւոր, պայմանական լեզու է. դա աւազակների արգօն է:

Շատ անգամ խաչագողը չէ խօսում, բայց միտք է յայտնում: Նրա աչքերի, յօնքերի, շրթունքի, երեսի, ձեռքերի, մի խօսքով, մարմնի զանազան մասերի այս եւ այն ձեւով շարժումները յայտնում են ամբողջ նախադասութիւններ, որոնց նշանակութիւնը հասկանում է միայն խաչագողը: Միմիկան նրանց դէմքի վրայ սաստիկ զարգացած է: Կապիկի նման կարողանում են նրանք շարժեցնել երեսի այն մասները, որոնք ուրիշների մօտ անշարժ են: Ես տեսայ մի խաչագող, որ աւանակի նման շարժեցնում էր իր ականջները: Մի այլը իւր քիթը զարմանալի կերպով ծամռում էր այս եւ այն կողմ: Խաչագողը խաչագողի ձեռքը բռնելով, առանց մի բառ արտասանելու, յայտնում է իւր միտքը:

Հարկը պահանջած ժամանակ խաչագողը միայն անորոշ ձայներ է արձակում, կամ թռչունների ու գազանների բարբառով ազդարարութիւններ է կարդում: Այդ նրանց գիշերային լեզուն է, մանաւանդ այն ժամանակ, երբ մէկը միւսից հեռու է գտնուում: Նրանց բոլոր նշանախօսութիւնները այն աստիճան ճշդութեամբ պայմանաւորուած են իրանց մէջ, որ երբեք չեն վրիպում նպատակից:

Կերպարանափոխութեան մէջ խաչագողը սատանայական հնարագիտութիւն ունի: ծպտել, այլակերպուիլ այնպէս, որ բոլորովին ուրիշ մարդ երեւալ, — դրանք նրա համար այնպիսի խաղեր են, որոնց մէջ ոչ ոք կարող է նրա հետ մրցութիւն անել: Խաչագողին չէ կարելի տեսնել իւր բուն պատկերի մէջ. այլ եւ այլ երկրներում, գործի եւ հանգամանքների այլ եւ այլ պայմանների համեմատ, նա միշտ նոր ձեւ եւ նոր կերպարանք է ընդունում:

Խաչագողը բովանդակում է իւր մէջ մարդկային ամբողջ հասարակութեան բնաւորութիւնները: Նա ընկերային կեանքի ամէն ելեւէջների վրայ զարմանալի ճարպկութեամբ բարձրանում եւ իջնում է: Նա հասարակութեան բոլոր ծալքերի մէջ մտնում եւ դուրս է գալիս: Յարմարուելու անհամեմատ ընդունակութիւն ունի: Ժողովրդի բարձր դասի հետ, նա մի հպարտ, փառասէր, թեթեւամիտ, պերճախօս ազնուական է, ազնուականի բոլոր փայլով: Ժողովրդի ստոր դասի հետ, նա մի բարի, միամիտ եւ անկիրթ ռամիկ է, բոլոր ռամկական պարզութիւններով: Գիտնականի հետ նա մի գեղախօս հռետորի նման վիճում է, ամէն առարկայի վրայ դատում է եւ հանրամարդկային բարձր ու վսեմ գաղափարներ է յայտնում: Մօլլաների հետ նա խաւարամիտ է որպէս գիշեր եւ մոլեռանդ որպէս հնդկական ֆագիր: Խաչագողը մի օր լոյս է, միւս օր խաւար: Մի օր բարի է, միւս օր չար:

Խաչագողը մի զարշելի տիպ է: Նա աւերուած, փըչացած, անբարոյականացած հասարակութեան հրէշաւոր ծնունդն է: Նա նեխած ջրի մրուրն է:

Երբեմն նա փողոցային սրիկայ է. գիշերի մթութեան մէջ հանդիպող մենաւոր անցորդը հազիւ կարող է ազատուել նրա ճանկերից: Ցերեկով նա բարեպաշտ, երկիւղած քրիստոնեայ է եւ պատահած աղքատին ողորմութեան ձեռք է մեկնում: Մի տեղ, ամենակեղտոտ գինետան ստորերկրեայ նկուղների մէջ, կառապանների հետ նստած, արբեցութեամբ է անցկացնում: Այդ ժամանակ նա մոլի ստահակ է: Մի այլ տեղ, ամենափառաւոր հիւրանոցում նա խիստ նուրբ ճաշակ ունի կերակուրների եւ ըմպելիքների ընտրութեան մէջ: Այդ ժամանակ նա բարեկեաց քաղաքացի է:

Ղաչագողը չափազանց առաձգական է եւ դիւրաթեք։ Նա դէպի ամեն կողմ ծռվռւմ է։ Նա ամեն կաղապարի մէջ մտնում է եւ ամեն տեսակ ձեւեր ընդունում է, բայց երբեք մի յատկանիշ ձեւ չէ պահպանում։ Նա կատարեալ քամելեօն է։ Նա այն առասպելական էակներիցն է, որ ամեն մի անգամին մի այլ տեսակ են երեւում։

Ղաչագողը գիտէ կեղծել, գիտէ խաբել, գիտէ ձեռքից սպրդիլ եւ աներեւոյթ լինել։ Ոստիկանի ամենատես աչքերը չեն կարող նորա հետքերը հետազօտել։ Նա անյայտանում է որպէս դեւ, եւ յայտնվում է որպէս հրէշտակ։ Բայց երբ որ բախտը դաւաճանում է նրան, — բանտը իւր պատճառական օթեւանն է։ Շղթաներից երկիւղ չէ կրում նա, իսկ դահճի առջեւ արհամարհանքով է խոնարհեցնում իւր պարանոցը։

Ղաչագողը նայում է տիեզերքի վրայ, որպէս իւր հունձքի արտի վրայ։ Նա գիտէ կորզել մարդկային ընդհանուր աշխատանքից ինչ որ իրան պէտք է։ Նա չէ ցանում, բայց հնձում է։ Նա չէ արդիւնաբերում, բայց սպառում է։ Նա ապրում է ուրիշի վաստակով։ Իսկ այդ նպատակին հասնելու համար, գործ է դնում իւր հնարագիտութեան ամենակարող հմտութիւնները։ Ուր չէ յաջողվում նրան խաբուսիկ միջոցներով որսալ, — այսպիսի դէպքերում պատրաստ է նրա արիւնահեղ ձեռքը...։

Ղաչագողը ամեն բան ունի, բայց ոչինչ չունի։ Նա նմանում է այն գիշակեր մեծ գազանին, որ խորտակում է մի ամբողջ ցուլի մէջքը, լերդը ուտում է, արիւնը խմում է, իսկ մնացածը թողնում եւ հեռանում է։ Այնուհետեւ օրերով մնում է սոված, երբ ուրիշ որս գրտնել չէ կարողանում։ Ղաչագողը մի օր կուշտ է, միւս օր քաղցած։ Մի օր հարուստ է միւս օր աղքատ։

Ես նկատեցի խաչագողի մի քանի ընդհանուր գծերը միայն, իսկ մանրամասնութիւնները ընթերցողը կը տեսնէ նոյն իսկ "Ղաչագողի Ցիշատակարանի„ մէջ։ Այժմ դառնանք դէպի այն հարցը, թէ ո՞ր երկրից յայտնուեցան խաչագողները։

Սալմաստայ[1] մէջ եղած ժամանակս իմ գլխաւոր զուարճութիւններից մէկն էր Սաւրա գիւղը գնալը։ Այդ գիւղը նշանակութիւն է ստացել նրանով, որ այնտեղ են բնակվում այն հանրածանօթ մարդիկը, որ կոչվում են "խաչագողներ„։ Թողեալ այդ, Սաւրան ունէր իւր մի քանի այլ գեղեցիկ կողմերը. — բնութիւնը այնտեղ հիանալի էր, կնիկները աւելի սիրուն էին, քան Սալմաստայ միւս գիւղերում, հագնվում էին մաքուր եւ չափազանց հրապուրիչ էին։ Մի քանիսը արդէն պարսից շահի կանանոցի զարդն էին դարձել եւ նրանց ազգականները մշտական թոշակ էին ստանում։ Սաւրայի տները, հովանաւորուած աքանչելի պարտէզներով, պահվում էին ամենայն յատկութեամբ։

Բայց ինձ աւելի գրաւում էին խաչագողները։

Ճշմարիտն ասած, շատ հետաքրքրական էր, այդ մոլաշրջիկների հիւրասէր սեղանի մօտ նստած, նրանց հետ գաւաթներ դատարկել եւ լսել նրանց թափառական կեանքի երկար ու երկար պատմութիւնները, որոնք լի էին սարսափելի արկածներով։ Ղաչագողը միշտ մի առանձին պարծանքով է պատմում իւր արարմունքը։ Նա իւր խաբէութիւնների, խարդախութիւնների եւ այլ չարագործութիւնների վրայ նայում է որպէս քաջագործութեան վրայ։ Նա քաջութիւն է համարում անազնուու-

---

1 Սալմաստը Պարսկաստանի Ատրպատական կոչուած նահանգի գաւառներից մէկն է, գտնվում է Ուրմիայ ծովակի արեւմտեան ափերի վրայ։

թիւնը, նենգաւորութիւնը, որովհետեւ նրանց միջոցով կարողացել է շատ անգամ ահագին գումարներ ձեռք ձգել, թէեւ խիստ յաճախ ենթարկել է իր անձը սոսկալի վտանգների։

Սաւրան խաչագողների որջն էր։

Սալմաստայ մէջ թէեւ ամեն մի հայաբնակ գիւղում կարելի էր գտնել խաչագողներ, բայց չկայ Սաւրայի պէս մէկը, ուր ամբողջ բնակիչները իրանց նուիրած լինէին մի այսպիսի կեղտոտ պարապմունքի։ Ո՞րտեղից էր մտել այդ արհեստը նրանց մէջ, — դժուար է բացատրել, միայն այնքան ընտելացել էին մի այդպիսի գործունէութեան, որ համարեա նրանց համար կենսական պահանջ էր դարձել։

Մտնում ես Սաւրա գիւղը։ Փողոցների մէջ խաղում է երեխաների բազմութիւնը։ Մտածում ես, թէ ամբողջ աշխարհի երեխաներից մի-մի հատ այստեղ է բերուած։ Նրանց վրայ տեսնում ես ամեն երկրի, ամեն ազգերի հագուստները ու գլխարկները։ Այդ ի՞նչ հրաշք է։ Սկսեալ Չինաստանից, Հնդկաստան, Աֆրիկա, Ամերիկա, մինչեւ Եւրոպայի ամենախուլ անկիւնները, — ամեն տեղի հագուստով երեխաներ ես տեսնում։ Տղամարդիկը նոյնպէս ման են գալիս բազմատեսակ հագուստներով։ Յետոյ հասկանում ես, որ այդ թափառականները օտար երկրներից վերադառնալու ժամանակ, բերել են իրանց երեխաների համար նոյն երկրների հագուստները։

Մտնում ես սաւրեցու տունը։ Սենեակները զարդարած են ամեն երկրի ամեն տեսակ կարասիներով։ Պատերի վրայ առանց ճաշակի, առանց դասաւորութեան կպցրել են զանազան պատկերներ։ Տեսնում ես մի տեսարան Գարիբալդիի կռիւներից, նրա մօտ սղաւոր Աստուածամօր պատկերները, սրով խոցուած սրտով, յետոյ "Թափառական հրէայի" պատկերը. յետոյ Յիսուս Քրիստոսը աղբիւրի մօտ խօսում է սամարացի կնոջ հետ, յետոյ մի տեսարան Փարաւոնների կեանքից, Փարաւոնը պատգարակի մէջ նստած է, մի խումբ ստրուկներ տանում են նրան ուսերի վրայ. յետոյ մի քանի կիսամերկ գեղեցկուհիք լողանում են անտառում հոսող վտակի մէջ, յետոյ Պիոս Թ.րդի պատկերը, եւ միւսները այս կարգով։

Խիստ զգալի մի տեսարան է ներկայացնում, երբ աչք ես ածում Սաւրայի ընտանեկան կեանքի վրայ։ Տների մեծ մասում գտնում ես միայն հնացած, գործից ընկած, ծերունի խաչագողներ։ Այդ հմուտ, փորձուած վարպետները հայրենական արհեստի մէջ զարգացնում են իրանց կանդիդատներին, — փոքրիկ նորընծայ խաչագողներին։ Բոլոր երիտասարդները պանդխտութեան մէջ են գտնվում. նրանց կնիկները մնացել են առանց ամուսինների։

Սաւրեցի կինը համբերող է, — ողջախոհութեան պէս համբերող է նա։ Նա սպասում է. երկար ու ձիգ տարիներ սպասում է։ Նա տանում է աղքատութեան, միշտ հրապուրուած այն քաղցր յուսով, թէ մի օր իւր տղամարդը կը վերադառնայ գանձերով։ Նա ընդունում է իւր տղամարդին այն հպարտ պարծենկոտութեամբ, որպէս քուրդի կինը ընդունում է իւր հերոսին, երբ նա վերադառնում է կռիւի դաշտից, իւր հետ բերելով անբաւ աւար եւ կողոպուտներ։

Սաւրեցի կնոջ մի այսպիսի վիճակը փոխել է նրա ոչ միայն բնաւորութիւնը, այլ եւ նրա հասարակական դրութիւնը։ Սաւրեցի կինը ինքը տղամարդ է, երբ նրա

ամուսինը տանը չէ: Նա Սալմաստայ միւս գիւղերի կնիկ-ների նման փակուած կեանք չէ վարում: Նա աւելի աշխարհային մարդ է: Նրա վրայ է դրած բոլոր հոգսը, ընտանիքի բոլոր ծանրութիւնը որովհետեւ տղամարդը տանը չէ: Նա մինչեւ անգամ մասնակցում է իրանց գիւղային հասարակութեան բոլոր գործերի մէջ, որպէս են՝ հարկերի բաշխումը, ջրի հերթով բաժանելը, վարը վարելը, ցանքը ցանելը, — մի խօսքով, լծուցանում է գիւղական տնտեսութեան բոլոր պահանջները: Ներեւակայեցէք, մի այսպիսի կնոջ դերութիւնը, որը գերդաստանի մայր է, որը ապրում է Ասիայում, որի գործունէութիւնը ընտանեկան շրջանից դուրս կարող է հանդիպել հազարումէկ փորձութիւնների...

Սաւրայի գերեզմանատունը մինչեւ անգամ զուրկ է տղամարդերից: Նրանք մեծ մասամբ մեռնում են պանդխտութեան մէջ եւ թաղվում են օտար երկրների հողի տակ: Սաւրայի գերեզմանատան մէջ հանդիպում են անթիւ շերիմներ, որոնց մէջ ամփոփուած են ոչ թէ այս եւ այն խաչագողի մարմինները, այլ նրանց գլխարկը, կամ ձանապարհի ցուպը, կամ հողաթափները, վերջապէս մի բան, որ հեռաւոր երկրներից բերել էր մեռած խաչագողի ընկերը, որպէս միակ յիշատակ նրա սիրելի ամուսնին: Կինը տոհմային գերեզմանատան մէջ թաղել է տալիս իւր տղամարդի յիշատակի այն թանգագին նշանը, նրա անունով շերիմ է կանգնեցնում: Եւ ամեն տարի, երբ հանգուցեալների համար հոգեհանգիստ է կատարվում, անբաւատ կինը օրհնել է տալիս այն գերեզմանը, խունկ է ծխում, եւ նրա մօտ նստած, արտասուք է թափում: Ինձ ցոյց տուեցին մի նշանաւոր խաչագողի գերեզման, որի մէջ ամփոփուած էր հանգուցեալի քթա-

խոտի տուփը միայն, իսկ նա ինքը մեռել էր Շապօնիայում:

Բայց պատահում էին զարմանալի դէպքեր:

Շատ անգամ, դեռ առաջին մեղրամիսը չլրացած, տղամարդը թողնում էր իւր նորահարսին եւ հեռանում էր դէպի օտար աշխարհ: Խեղճ կինը սպասում էր նրան: Անցնում էին տարիներ, տասն-քսան տարի, նա դեռ սպասում էր: Վերջը լսում էր նրա մահուան բօթը, ստանում էր նրանից մի յիշատակ եւ թաղել էր տալիս տոհմային գերեզմանատան մէջ: Բայց քիչ էր պատահում, որ այսպիսի, արդէն մեռածների կարգը դասուած պանդուխտը, մի քանի տասնեակ տարիներից յետոյ, յանկարծ յայտնվում էր, կարծես թէ, անդունդից դուրս էր գալիս նա, մաշուած, ալեւորած, եւ բոլորովին հնացած: Բայց նա թողել էր իւր ընտանիքը եւ իւր հայրենիքը, երբ տակաւին առոյգ ու թարմ էր հասակով: Նա գտնում էր իւր ընտանիքը ցրիւ եկած, ամեն ինչ ոչնչացած... կինը ուրիշ մարդու գնացած եւ ուրիշ գերդաստանի մայր դարձած... իւր թողած տան հետքն անգամ չէր մնացել... միայն գերեզմանատան մի քարի վրայ կարդում էր նա իւր անունը, — իւր մահուան արձանագրութիւնը...

Սաւրա գիւղը ռուս-պարսկական 1826 թուի պատերազմից առաջ համարեա մի փոքրիկ քաղաք էր. նա ունէր մի քանի հազար տուն բնակիչներ: Բայց երբ պատերազմից յետոյ աւելի քան 40 հազար հայեր Պարսկաստանից գաղթեցին դէպի Ռուսաստան, նրանց հետ եւ Սաւրայի հայերի մեծ մասը թողեցին իրանց հայրենիքը: Անցնելով Երասխ գետի միւս կողմը, սաւրեցիք բաժանուեցան եւ հիմնեցին չորս գիւղեր: — Հին-Նախիջեւանի

գաւառում Թումբուլ եւ Շարբիջան գիւղերը, Դալ-Ալագաղի գաւառում՝ Փօռ գիւղը, իսկ Շարուրի մէջ՝ Դաշ-Արխ գիւղը:

Փոխելով իրանց հայրենիքը, Պարսկաստանը, եւ վերադառնալով Երեւանայ նահանգում, խաչագողների գաղթականութիւնը չփոխեց իւր հին արհեստը: Կարճ ժամանակում նրանք տարածուեցան ռուսաց կայսրութեան ամենահեռաւոր գաւառներում, սկսեցին գործ դնել իրանց խաբէութիւնները: Ռուսները այդ ժամանակ դեռ նոր էին սիրել Երեւանեան նահանգը: Կառավարութիւնը ուշադրութիւն դարձրեց իւր նոր հիւրերի՝ խաչագողների վրայ: Արգելուեցաւ նրանց անցաթուղթ տալ [1] կամ բաց թողնել Անդրկովկասից դուրս դէպի կայսրութեան այլ կողմերը: Իսկ այդ կարգադրութիւնը չէր արգելում խաչագողներին զանազան խաբուսիկ միջոցներով կեղծ անցաթղթեր ձեռք բերել եւ գնալ, ուր որ ցանկանում էին: Նրանք յայտնւում էին Ռուսաստանի ամենախուլ կողմերում, ըստ մեծի մասին յոյն աբեղաների անունով, որպէս զի, ռուսների հետ կրօնակից ձեւանալով, գրաւեն նրանց համակրութիւնը:

Խաչագողները ոչ միայն իրանց վրայ դարձրին կառավարութեան ուշադրութիւնը, այլ ռուսաց մամուլն անգամ մի ժամանակ զբաղուեցաւ նրանցով: Ն. Փ. Դուբրօվինը, Անդրկովկասի յայտնի պատմագիրը, իւր էանօգրաֆիական նկարագրութիւնների մէջ հայերի վերաբերութեամբ, խօսում է միեւնոյն ժամանակ խաչագողների մասին: Պ. պ. Մասլօվսկին, Ն. Մելեշկօ եւ Զելինսկին իրանց գրուածների մէջ նոյնպէս խօսում են խաչագողների մասին[2]:

[1] Նոյն արգելքը մնում է մինչեւ այսօր:

[2] Այդ տողերը գրելու ժամանակ ես ձեռքի տակ չունէի յիշեալ աշխատութիւնները, միայն օգուտ քաղեցի պ. Մ. Միանսարեանի Բիբլիօգրաֆիայի Ա. հատորի 222, 228 եւ 229 երեսներից:

Առհասարակ ռուս գրողների կարծիքը խաչագողների մասին այն է, թէ դրանք իսկական հայեր չեն, այլ մի տեսակ հայ-ցիգաններ են (միջին դարերի race maudite-ների նման.) նրանք թէեւ խօսում են հայերէն, բայց ունեն իրանց առանձին լեզուն եւ սովորութիւնները. թէ ըստ մեծի մասին վաճառում են ամբողջ աշխարհում քրիստոնէական սրբութիւններ, թափառում են Ռուսաստանում յոյն կրօնաւորների անունով, եւ պանդխտութեան մէջ միշտ խոյս են տալիս իսկական հայերից, աշխատելով չհանդիպել նրանց, որպէս զի ճանաչուեն եւայլն:

Թէ խաչագողները հայ-ցիգաններ են եւ ոչ իսկական հայեր, — դա մի ենթադրութիւն է, որ դեռ եւս ապացուցուած չէ, որը տակաւին վճռաբանութեան ենթակայ է: Ես այդ կարծիքի դէմ ոչ ի նպաստ եւ ոչ հակառակ ասելիք չունեմ: Միայն այսքանը աւելորդ չենք համարում նկատել, որ բոլորսվին սխալ է, թէ խաչագողները առանձին լեզու ունեն: Նրանք ունեն, որպէս վերեւում յիշեցի, մի տեսակ շինծու, հնարած, պայմանական լեզու, — նրանք ունեն արգօ: Այդ է պատճառը, որ խաչագողների մի խումբի խօսակցութիւնը միւս խումբին բոլորովին անհասկանալի է: Եթէ խաչագողը նոյն լեզուով խօսէ իւր կնոջ, իւր զաւակների հետ, նրանք եւս ոչինչ չեն հասկանալ: Ես այդ լեզուն իւրաքանչիւր խումբի մէջ շուտ-շուտ փոխվում է, երբ նա փոքր ի շատէ հասկանալի է դառնում:

Ով որ փոքր ի շատէ ուսումնասիրել է, թէ ինչ է նշանակում "ծոմ լեզու„ — "ճնճղկի լեզու„ — "ագռաւի լեզու„ — կարող է գաղափար կազմել, թէ նոյն իսկ հայկական բառերի մէջ աւելորդ հնչիւններ

մոցընելով (ի հարկէ կանոնաւոր կերպով) կարելի է այնպիսի լեզու ստեղծել, որ միւս հայը չէ կարող հասկանալ, եթէ բառերի կազմութեան պայմանների հետ ծանօթ չէ: Այս տեսակ լեզուի դործածութիւնը մինչեւ այսօր սովորական է մեր գաւառացի հայերից շատերի մօտ:

Ես չեմ հերքում, որ մենք ունեցել ենք հայ-բօշաներ եւ այժմ ունենք: Բայց հայ-բօշաների եւ խաչապողների թէ սովորութիւնների եւ թէ կենցաղավարութեան պայմանների մէջ մեծ տարբերութիւն կայ: Հայ-բօշաները ասիական միւս ցիդան (չինգանէ) ցեղերի նման հաստատաբնակ չեն, թափառական կեանք են վարում, ընտանիքով, ամբողջ խումբերով գաղթում են մի տեղից միւս տեղ, երկրագործութեամբ չեն պարապում: Հայ-բօշաների կնիկները պարապում են կախարդութիւններով, պար են գալիս, երգում են, իսկ տղամարդիկը կամ նուագածուներ են, կամ պարապում են մի քանի ողորմելի արհեստներով, որպիսի են՝ մաղ գործել, զամբիւղներ հիւսել եւայլն: Դրանք խարդախներ, խաբեբաներ չեն: Դրանք աղքատ, բայց մի եւ նոյն ժամանակ խիստ սակաւապէտ մարդիկ են: Հարստանալու բարձր ձգտումներ չունեն: Դրանց տիպը կատարեալ բօշայական է եւ պահպանել են բօշաների կենցաղավարութեան ձեւերը: Որոնց ընդհակառակն, խաչապողը հաստատաբնակ է, նա իւր ընտանիքը իւր հետ մեռն չէ ածում. տղամարդիկը թափառում են, բայց կնիկները իրանց տեղից չեն շարժվում: Նա իւր հայրենիքում գեղեցիկ անտեսութիւն ունի. նրա տունը, պարտէզը, այգին, մշակութեան դաշտերը կարող են օրինակելի դառնալ ամենազարգացած երկրագործների համար: Բայց երբ տանից դուրս է գալիս նա, այն ժամանակ միայն սկսում է ածխերաների մէջ մտնել: Խա-

չապողը շատ անգամ ոչնչով սկսում է ահագին դրամական շրջաբերութիւնների մէջ դեր խաղալ: Նա սակաւով չէ բաւականանում. նա սարսափելի անյագ ձգտումն ունի մեծանալու, բարձրանալու եւ հարստանալու: Իսկ այդ անսանձ բաղձանքը ձգում է նրան խաբեբայութիւնների եւ խարդախութիւնների մէջ: Խաչապողը եւ կառավարչական ատեաններին վրայ, անվստահելի եռանդով, աշխատում է միշտ դէպի վեր մագլցել: Եղել են խաչապողներից այնպիսիները, որոնք անգլիացոց տիրապետութիւնից առաջ, հնդկական թագաւորների մօտ առաջին վէզիրի պաշտօն էին կատարում, կամ ամբողջ նահանգների փոխարքաներ էին: — Այդ բոլորը այն եզրակացութեան է հասցնում, որ խաչապողները եթէ հայ-բօշաներ չեն, իսկական հայեր եւս չեն: Նրանք հայերի մի առանձին ցեղին են պատկանում:

Բայց ի՞նչ անուն է այդ — խաչապո՞ղ: — Ի՞նչով ժառանգեցին նրանք այդ անունը:

Խաչապողները իրանց վարքուբարքով արժանացան մի քանի այլ անունների եւս, որպիսի են՝ "պառաւխեղդող", "հշ ներկող", "սաւրգեղջի" եւ այլն: Աւելորդ չէր լինի այդ անունների համառօտ բացատրութիւնը յիշել:

"Խաչապողը" ասում են նրանց այն պատճառով, որ շատ անգամ պատահել է, որ նրանցից մէկը իրան ձեւացրել է որպէս աբեղայ եւ այս ու այն եկեղեցում կամ վանքում հոգեւոր պաշտօն է ստացել: Յետոյ աբեղան, տաճարի բոլոր խաչերն ու արծաթեղէնները գողանալով, յանկարծ անյայտացել է: "Պառաւ խեղդող" կոչում են նրանց այն պատճառով, որ այդ մարդիկը շատ են սիրում մօտենալ հարուստ պառաւներին,

ծանօթանալ, բարեկամանալ նրանց հետ, իսկ երբ բոլորովին ընտանի են դառնում, մի օր խեղդում են պառաւին, եւ բոլոր հարստութիւնը կողոպտելով, աներեւութանում են։ “Էշ ներկող„ կոչում են նրանց իրանց չափազանց ճարպկութեան համար գողութեան գործի մէջ։ Խաչագողը կարող է գողանալ մէկի, օրինակ մոխրագոյն էշը, յետոյ ներկելով գոյնը սեւի փոխել, եւ իր առաջուայ տիրոջ վրայ վաճառել։ Տէրը երբեք չէ կարող ճանաչել, թէ այդ անասունը մի ժամանակ իրան էր պատկանում։ “Սաւրգեղցի„ կոչում են նրանց իրանց բնիկ գիւղի՝ — Սաւրայի անունով, որը գտնվում է Պարսկաստանի Սալմաստ գաւառում։

Պարսկաստանի հայերի 1827 թուի գաղթականներից յետոյ, թէեւ Սաւրա գիւղի բնակիչների մեծ մասը, որպէս ցոյց տուի վերեւում, տեղափոխուեցան դէպի Երեւանեան նահանգը, բայց Սաւրայի մէջ դարձեալ մնացին մի քանի հարիւր տուն խաչագողներ եւ մնում են մինչեւ այսօր։

Սալմաստում եղած ժամանակս ես յաճախ գնում էի խաչագողների գիւղը. իմ նպատակն էր ոչ միայն ուսումնասիրել այդ բախտախնդիրների կեանքը, այլ ինձ առաւել հետաքրքրում էր մի երեւելի խաչագողի պատմութիւնը, որին կոչում էին Մուրադ։ Ինձ ցոյց տուին նրա տունը, ես մտայ այն գեղեցիկ սենեակը, որի մէջ մի ժամանակ ապրում էր այդ նշանաւոր մարդը, որ թողել էր իր արհեստակիցների յիշողութեան մէջ շատ եւ շատ զարմանալի պատմութիւններ։ Մուրադը վաղուց մեռած էր, աւելի ճիշտ կը լինէր ասել՝ սպանուած էր, առանց ժառանգ թողնելու։ Ես գտայ նրա կնոջը միայն, եօթանասունամեայ պառաւ Սանային։ Դա մի կին էր

խիստ բարի երեսով եւ խելացի աչքերով։ Նա շատ դժուարութեամբ յանձն առեց պատմել ինձ մի քանի դէպքեր իր ամուսնի կեանքից։ Բայց ինչ որ պատմեց, այն էլ բաւական էր իմ հարցասիրութիւնը յագեցնելու համար։

Երբ ես փոքր ինչ մտերմացայ պառաւի հետ, երբ նա հասկացաւ իմ հարցասիրութեան նպատակը, աւելի համակիր եղաւ դէպի ինձ։ Ես հարցրի՝ — չէ՞ մնացել արդեօք հանգուցեալից որեւիցէ գրաւոր բան։ Նա վերկացաւ, եւ մի հնադարեան պահարանից դուրս բերելով մի տետրակ, դողդոջուն ձեռքով տուեց ինձ։ Աւերակների մէջ թաղնուած գանձ գտնողը այնքան ուրախ չէր լինի, որքան ուրախացայ ես նոյն րոպէում։ Այդ, հնութիւնից դեղնած, քրքրուած տետրակը Մուրադի օրագիրն էր։ Նա գրուած էր զանազան ժամանակ, զանազան գոյն մելաններով։ Մի քանի տեղերում պակասում էին ամբողջ երեսներ. մի քանի տեղերում եւս սկսուած գլուխը մնացել էր առանց վերջացնելու։ Այսուամենայնիւ, տետրակը բովանդակում էր իր մէջ խիստ հետաքրքիր տեղեկութիւններ թէ՛ հեղինակի եւ թէ՛ առհասարակ խաչագողների վերաբերութեամբ։

Նրա թերութիւնները լրացրեց պառաւը իր պատմութիւններով։

Ես վաղուց դիտաւորութիւն ունէի գրել մի բան խաչագողների կեանքից, եւ այդ բաղձանքը իրագործելու համար, բաւական էր ինձ օգուտ քաղել Մուրադի օրագրութիւններից։ Այդ օրագրութիւնը կոչվում էր “Խաչագողի Յիշատակարան„։ Ես էլ այդ անունը տուեցի իմ վէպին։ Բարեկամներիցս ոմանք խորհուրդ էին տալիս ինձ չտպել այդ վէպը։ Բայց մինչեւ երբ պիտի

ծածկենք մեր կեղտերը: Դա նոյնը կը լինէր, ինչպէս մի հիւանդ ամաչելով թագցնէր այն վէրքերը, որոնք օրըստօրէ աւելի փտելով, նեխելով, վարակում են մարմնի ամբողջ կազմուածքը․․․։

Պառաւը, որի մասին յիշեցի վերեւում, բանաստեղծական տիպ չէ, դա միեւնոյն Նանան է, որին կը տեսնէ ընթերցողը այդ վէպի ընթացքում: Նա մեռաւ 1857 թուին, ապրելով որպէս առաքինի կին եւ բարեպաշտ քրիստոնեայ: Իսկ Մուրադը, այդ վէպի հերոսը, նոյնպէս պատմական անձնաւորութիւն է: Նա վերջը խաչագողների հասարակութիւնից հեռանալով, մտաւ մի այլ խումբի մէջ, դարձաւ անդամ մի այլ հասարակութեան, որի հետ կը ծանօթանայ ընթերցողը, երբ կը կարդայ իմ “ԿԱՅԾԵՐ„ կոչուած աշխատութիւնը:

Վերջացնելով իմ նախաբանը, սկսում եմ “Խաչագողի Յիշատակարանը„, պահպանելով նոյն ձեւը, եւ նոյն դասաւորութիւնը, որպէս Մուրադը գրել էր իր օրագրութիւնները:

50302-65

Ա.

ԹՈՅՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԱԹԻԼՆԵՐԸ

Ես հայր չեմ տեսել: Մայրս ասում էր, որ ես դեռ չծնուած, հայրս թողեց հայրենի երկիրը, դիմեց դէպի օտար աշխարհ եւ պանդխտութեան մէջ կորաւ:

Երկար ժամանակ մենք նրա մասին տեղեկութիւն չունէինք. ոչ նամակ էինք ստանում եւ ոչ որեւիցէ լուր: Մի անգամ յայտնուեցաւ հօրս պանդխտութեան ընկերը, բերեց նրա մատանին, եւ տալով մօրս, հաղորդեց նրա մահուան բօթը: Մեր դրացի կնիկները համոզում էին մօրս, որ թաղել տայ այդ մատանին գերեզմանատան մէջ եւ հօրս համար մի յիշատակարան կանգնեցնէ: Բայց մայրս չկամեցաւ, որովհետեւ նա ամենեւին չէր հաւատում, որ իւր ամուսինը մեռած է: Նա վճռել էր սպասել երկար տարիներ, սպասել հօրս վերադարձին: Այդ պատճառով նա մերժեց հօրս մահուան բօթը մեզ բերող մարդու ձեռքը, որ ցանկանում էր մօրս հետ ամուսնանալ:

Մօրս կոչում էին Նազանի. Նա շատ գեղեցիկ կին էր եւ բարի, ով չէր սիրի նրան: Բայց նա ասում էր, եթէ իւր ամուսնի մահը ստոյգ եւս լինի, դարձեալ ցանկութիւն չունի մարդու գնալու, որովհետեւ մտածում է իւր երեխաների համար: Մենք, երեխաներս, չորս հոգի էինք, — մէկը ես եւ երեք քոյրեր:

ՊԵՏ ԿՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՀ-Арм ССР
им. А. Мясникяна

Գիւղը, ուր բնակվում էինք մենք, կոչվում էր Սաւրա: Դա Սալմաստայ ամենագեղեցիկ գիւղերից մինն էր: Շրջապատուած ընդարձակ այգիներով, նա կարծես, թաղնուած լինէր խիտ անտառների մէջ: Նրա միջով հոսում էր Սօլա գետը եւ ոռոգում էր բոլոր այգիները:

Հօրից ղրկուելով, մենք ճնացինք մեր քաւոր Պետրոսի խնամակալութեան ներքոյ:

Քաւոր Պետրոսը յայտնի էր մեր գիւղում որպէս փորձուած, խելացի եւ լաւ մարդ: Նա այնքան սիրելի էր ժողովրդին, որ բոլորը նրա անունով էին երդվում: Դեռ ժամատան կոչնակի առաջին զարկի ձայնը չլսուած, դեռ քահանաները չկած, քաւոր Պետրոսը եկեղեցու դրանը կանգնած էր լինում, սպասում էր, որ դռները բաց անեն, գնա իւր վաղորդեան աղօթքը կատարելու: Նա այն տեսակ մարդկանցից էր, որ Սաղմոսը, Աւետարանը եւ Նարեկը ձեռքից բաց չեն թողնում, միշտ հոգու եւ Աստուծոյ արքայութեան վրայ են մտածում: Մայրս շատ ուրախ էր, որ իւր զաւակները մի այդպիսի բարեպաշտ մարդու հոգաբարձութեանն էին յանձնուած:

Բացի քաւոր Պետրոսից մենք ուրիշ բարեկամ չունէինք:

Ես ունէի մի հօրեղբայր միայն, որին կոչում էին Մինաս: Նա մօտ յիսուն տարեկան մարդ էր: Ես երբեք առանց սարսափելու չեմ կարող յիշել այդ մարդու միշտ ուրախ, միշտ անհոգ եւ վայրենի դէմքը: Նա միանգամայն իրան տուած էր զբաղմունքների եւ ամբողջ օրերով տանը չէր գտնվում: Մենք զարմանում էինք, թէ ո՞ր տեղից այնքան վատնում էր նա, որովհետեւ ոչ մի արհեստ կամ պարապմունք չունէր: Նա երբեմն մի քանի ամիսներով, իսկ երբեմն մի քանի տարիներով անհետա-

նում էր, չէր երեւում, եւ յանկարծ յայտնվում էր ոսկիներով լի քսակով: Ի՞նչպէս էր վաստակում, ի՞նչ հնարքով էր ձեռք բերում այդ ոսկիները, — ես հասկանալ չէի կարողանում, միայն տեսնում էի, որ նրա ոսկիների թուում կային ամեն պետութեան սիքք էնե: Կը նշանակէ, նա շատ երկիրներ էր թափառել...:

Բայց հայի առածն ասում է, որ "քամու բերածը էլի քամին կը տանէ". այսպէս էլ փայլուն ոսկիները նրա ձեռքում երկար չէին մնում. նա շուտով վատնում էր, դարձեալ մնում էր աղքատ, դարձեալ ապրում էր պարտքերով: Պարտատէրները մեծ վստահութիւն ունէին նրա յաջողակութեան վրայ, գիտէին, որ իրանց փողը չի կորչի, բաւական էր միայն, որ Մինասը ոտքը դուրս դնէր տանից, կրկին ձեռքն առնէր պանդխտութեան գաւազանը, այնուհետեւ փող վաստակելը նրա համար հեշտ էր...

Իմ հօրեղբայրը շաբաթը մի քանի անգամ հիւրեր էր ունենում: Ես երբեմն գնում էի նրանց տունը: Հիւրերը ուտում էին, խմում էին, խօսում էին, ես միշտ մի առանձին հետաքրքրութեամբ էի լսում նրանց խօսակցութիւնը: Նրանք պատմում էին իրանց կեանքի զանազան արկածները այլ եւ այլ երկրներում: Սարսափելի եւ միանգամայն խիտ սոսկալի պատահարներով լի էին լինում այն արկածները, այսուամենայնիւ գրաւում էին իմ սիրտը: Ես այն ժամանակ անփորձ էի, եւ երեւակայական պարզամտութեամբ քաջութիւն էի համարում նրանց արարմունքը, այդ պատճառով մտածում էի. "ա՛խ, երբ կը լինէր, որ ես էլ մեծանայի, գնայի օտար աշխարհ եւ դրանց նման փող վաստակէի"...:

Այդ միտքը շատ անգամ տանջում էր իմ անմեղ սրտիկը: Երբ իմ բաղձանքը յայտնում էի մօրս, նրա

աչքերը լվում էին արտասուքով եւ միշտ պատասխանում էր ինձ միեւնոյն խօսքերով. "Աստուած մի արասցէ, որ դու նրանց նման փող աշխատես„...:

Ինչո՞ւ էր բարկանում մայրս, ինչո՞ւ էր անիծում ինձ միթէ վա՞տ էին նրանք, միթէ լա՞ւ էր այնպէս աղքատութեան մէջ ապրել, որպէս ապրում էինք մենք: Ես վրդովւում էի եւ սկսում էի մօրս կոպտութիւններ ասել:

Նա միայն լաց էր լինում եւ ոչինչ չէր պատասխանում...:

Միանգամ միայն նա ասաց ինձ.

— Նրանք "խաչագողներ„ են...:

Այդ խօսքը, կարծես, այրեց նրա լեզուն:

Բայց ի՞նչ էր խաչագողը. այդ բառի նշանակութեան մասին ես ոչինչ գաղափար չունէի: Մայրս նոյնպէս չբացատրեց: Նա միայն խրատում էր, որ հեռու կենամ նրանցից, չհրապուրուեմ նրանց գործերով, որովհետեւ նրանք լաւ մարդիկ չեն:

Մայրս մեր գիւղացի չէր. նա Վանի կողմերիցն էր, այդ պատճառով զզվում էր մեր գիւղացիներից: Վերջին ժամանակներում նա արգելեց ինձ, որ այլեւս հօրեղբօրտունը չգնամ եւ նրա երեխաների հետ չխաղամ: Նա որպէս զի ինձ բոլորովին հեռացնէ մեր գիւղից, մտածում էր այդ մասին մի հնար գտնել: Մի անգամ ասաց ինձ.

— Մուրադ, որդի, քեզ պէտք է մի արհեստ սովորել:

Նա սկսեց երկար ու երկար բացատրել ինձ, թէ ո՛րքան բախտաւոր մարդ է աղնիւ եւ աշխատասէր արհեստաւորը, ո՛րքան ապահովուած է նրա կեանքը, ո՛րքան ազատ եւ անկախ է նրա ապրուստը:

— Ի՞նչ արհեստ. հարցրի ես:

Նա ասաց, որ քաւոր Պետրոսի հետ խորհրդակցել է այդ մասին, եւ վճռել են, որ ես սովորեմ դարբնութիւն:

— Դարբնութի՞ւն, զոչեցի ես, — ես չեմ ուզում սեւանալ երկաթի ու ածուխի փոշիների մէջ:

— Դու չես սեւանայ, պատասխանեց մայրս իր սովորական հանդարտութեամբ: — Ածուխի սեւ փոշիներից դուրս է գալիս սպիտակ հաց եւ սպիտակ արծաթ: Որի ընդհակառակն, միշտ սեւ են եւ միշտ սեւ կը մնան այն մարդկանց երեսները, որոնք խարդախութեամբ ուրիշի օսկիները կողոպտում են, իսկ իրանք դարձեալ մնում են քաղցած...:

Ես հասկացայ. մօրս ակնարկութիւնը խաչագողների մասին էր:

Ես մօրս շատ էի սիրում. հօրս անյայտանալուց յետոյ նա անուցել էր ծնողական բոլոր քնքշութեամբ: Այդ պատճառով նրան հակառակել չկարողացայ, միայն հարցրի.

— Ինչո՞ւ անպատճառ դարբնութիւն, միթէ ուրիշ արհեստները վատ են:

— Բոլորը լաւ են, պատասխանեց նա: — Աշխատանքը եւ աշխատութիւնը միշտ լաւ է. վատ է միայն ծուլութիւնը, անգործութիւնը:

Յետոյ աւելացրեց, նրա համար է բարւոք համարում սովորել ինձ դարբնութիւն, որ այդ արհեստը աւելի յարմար էր իմ կազմուածքին: Դարբնի համար հարկաւոր էին ուժեղ մկնակներ, զօրեղ բազուկներ եւ յաջողակ ձեռք, — այդ բոլորը ունէի ես:

— Քաւոր Պետրոն եւս այդ խորհրդի մէջ համաձայն է ինձ հետ, ասաց մայրս:

Քաւոր Պետրոսի հեղինակութիւնը այն աստիճան նշանակութիւն ունէր մեր ընտանիքի համար, որ մենք

ամենքս խոնարհվում էինք նրա առջեւ եւ ընդունում էինք նրա տուած խորհուրդները:

Մեր գաւառի դարբնոցները գտնվում էին քաղաքի մասին Հին-քաղաքում, (Քօհնա-Շըհարում) որը հեռու էր մեր գիւղից մէկ մղոն հեռաւորութեամբ: Երկու օր չանցած այդ խօսակցութիւնից, մայրս ինձ իւր հետ առնելով, տարաւ Հին-քաղաքը, յանձնեց ուստա Գրիգորին: Եւ որովհետեւ հեռաւորութեան պատճառով դժուար էր ամեն օր գնալ այնտեղ եւ վերադառնալ մեր գիւղը, դրա համար ես ամբողջ շաբաթը գնում էի դարբնոցը աշխատելու, իսկ գիշերները կենում էի իմ մօրաքրոջ տանը: Կիրակի օրերը միայն գալիս էի մեր տունը, մօրս եւ քոյրերիս տեսնելու համար:

Թէ՛ քաւոր Պետրոսի եւ թէ՛ մօրս նախատեսութիւնը, իմ ընդունակութեան մասին դարբնութեան արհեստի մէջ, սխալ չէր: Ես մի քանի ամիսների ընթացքում սովորեցի այնքան, ինչ որ ուրիշ աշակերտները սովորել էին տարիներով: Մայրս չափազանց ուրախ էր իմ յառաջադիմութեան համար. ոչ սակաւ ուրախանում էր եւ քաւոր Պետրոսը: Նա մի օր ինձ տուեց մի բանալի, ասելով.

— Այդ բանալին փորձելու համար եմ տալիս քեզ, Մուրատ. եթէ դու կը շինես դրա նման մէկը, ես կը հաւատամ, որ դու քո արհեստի մէջ բաւական առաջ ես գնացել:

Ես քննեցի բանալին, իսկոյն հասկացայ, որ դա մեր երկրի արհեստաւորների գործ չէր, այլ Փրանգստանում, կամ մի այլ տեղում էր շինուած, ուր արհեստը աւելի առաջ էր գնացել, քան թէ Պարսկաստանում:

— Իսկ եթէ ձիշդ դրա նմանը շինելու լինեմ. հարցրի ես բանալին լաւ զննելուց յետոյ:

— Քեզ համար կարել կը տամ մի ձեռք բոլորովին նոր հագուստ, ասաց քաւոր Պետրոսը: — Շատ ժամանակ է, որ քեզ ոչինչ չեմ ընծայել:

Հետեւեալ կիրակի օրը, երբ վերադարձայ մեր գիւղը, արդէն պատրաստ բանալին տարայ քաւոր Պետրոսի մօտ: Նա առեց ձեռքը, համեմատեց, այս կողմ շուռ տուեց, այն կողմ շուռ տուեց, յետոյ ասաց.

— Բոլորովին նման է...:

Քաւոր Պետրոսը կատարեց իւր խոստումնքը. ես հէնց նոյն օրը հագայ նրա կարել տուած նոր հագուստը:

— Մուրատ, հարցրեց նա փոքր ինչ մտածելուց յետոյ — այդ բանալին շինելու ժամանակ դարբնոցում ո՞վ տեսաւ. երեւի, վարպետ կամ մեծ աշակերտներից մէկը քեզ ցոյց տուին շինելու կերպը:

— Ես ոչ ոքին ցոյց չեմ տուել:

— Ինչո՞ւ:

— Մեր դարբնոցում արգելուած է աշակերտներին իրանց համար բաներ շինել, այդ պատճառով ոչ ոքին ցոյց չտուի, թագուն շինեցի:

— Երբ որ այդպէս է, ես էլ ոչ ոքին ցոյց չեմ տայ, դու էլ ոչ ոքին մի ասա: Ես չեմ ուզում, որ քո վարպետը քեզ վրայ բարկանայ:

Ես այն աստիճան հրապուրուած էի իմ նոր հագուստի ուրախութիւնով, որ ամենեւին հասկանալ չկարողացայ, թէ ի՞նչ խորհուրդ ունէին քաւոր Պետրոսի այդ նախազգուշութիւնները: Դիտցած թէ մեր դարբնոցում աշակերտներին արգելուած էր իրանց համար իրեղէններ շինել, գիտցած թէ իմ վարպետը հասկանար, թէ ես մի բանալի եմ շինել, ի՞նչ պիտի անէր նա, — շատ-շատ

ականջներիցս փոքր ինչ ձիգ կը տար եւ դրանով կը վերջանար պատիժը:

Բայց ես զարմացայ, երբ քաւոր Պետրոսը պատուիրեց, որ իմ մօրն էլ չըսայտնեմ, թէ նրա համար մի բանալի եմ շինել: Ինչո՞ւ չի պիտի յայտնէի, մայրս աւելի կ'ուրախանար. դրա մէջ ինչ ծածկելու մի բան կար:

Բայց ես քաւոր Պետրոսին սուրբի նման պաշտում էի: Երեւի, մտածում էի, այնպէս աւելի լաւ կը լինի. նա ինձանից թէ խելքով եւ թէ հասակով աւելի մեծ է, բաների կարգը ինձանից աւելի լաւ է իմանում:

Անցան մի քանի ամիսներ, անցաւ մի տարի: Ես բոլորովին մոռացայ բանալիի գոյութեան մասին: Քաւոր Պետրոսի ընծայած հագուստը մաշուեցաւ, ես դարձեալ նոր հագուստներ ու ընծաներ ստացայ նրանից: Նա ինձ որդու պէս սիրում էր, եւ ամեն անգամ, երբ տեսնում էր իմ շինած բաներից մի գեղեցիկ գործ, իմ առաջադիմութիւնը առանց վարձատրութեան չէր թողնում: Մայրս ուրախանում էր, երբ ես օրըստօրէ գրաւում էի մեր բարեբարի հարևկրութիւնը եւ նրան սիրելի էի դառնում:

Ամբողջ չորս տարի ես աշխատում էի իբրեւ աշակերտ. վարպետս ինձ միայն հացի փող էր տալիս, բայց երբ տեսաւ իմ աշխատանքն ու իմ ջնորհքը, այն ժամանակ ռոճիկ նշանակեց: Ռոճիկը ստանում էի իւրաքանչիւր ամսի սկզբում, ամեն անգամ երկու ոսկի: Երբ առաջին անգամ ստացայ երկու ոսկին, իսկոյն շտապեցի մօրս մօտ, տուեցի նրան իմ քրտինքի առաջին պտուղը:

Մայրս ուրախութեան արտասուքը աչքերում դրկեց ինձ, եւ համբուրելով ասաց.

— Տեսնում ես, զաւակս, որ երկաթի ու ածուխի փոշիներից փայլուն ոսկիներ դուրս կը գան, — տեսնո՞ւմ ես թէ ձրքան քաղցր է արդար աշխատութեան պտուղը:

Ես իսկոյն յիշեցի, որ այդ միեւնոյն խօսքերը նա ասաց ինձ չորս տարի առաջ, երբ առաջին անգամ աշխատում էր համոզել ինձ, որ արհեստ սովորեմ: Իսկ այժմ միայն հասկացայ, որ ճշմարիտ էին նրա խօսքերը, — իրաւ որ, քաղցր էր, շատ քաղցր, արդար աշխատանքի պտուղը:

Ես այնպէս սիրով կպած էի իմ արհեստին, որ այլ եւս ուրիշ բանի վրայ չէի մտածում: Ես այնուհետեւ հօրեղբօրս տունը չէի գնում, եւ այնքան զզվում էի նրա ընտանիքից ոչքան մայրս: Մենք այժմ կարօտութիւն չունէինք հօրեղբօրս օգնութեանը: Վարպետս հետզհետէ իմ վարձը աւելացնում էր, ես այնքան էի ստանում, որ բաւական էր մօրս եւ քոյրերիս համեստ սպրուստի համար:

Վարպետս զարմանալի ընդունակութիւն ունէր իւր աշակերտներին խրախուսելու, նրանց եռանդը բորբոքելու եւ նրանց միշտ թարմ աշխուժութեան մէջ պահելու համար: Նա չափազանց լաւ մարդ էր, ինձ որդու նման սիրում էր եւ միշտ բարի խրատներ էր տալիս: Նա խոստանում էր, որ եթէ մի քանի տարի եւս կը շարունակեմ գործել նրա արհեստանոցում, եւ բոլորովին կը կատարելագործուեմ, այն ժամանակ կ'օգնէ ինձ, միջոցներ կը տայ, որ ինձ համար սեպհական արհեստանոց բաց անեմ: Ես բոլորովին հաւատում էի, որ նա կը կատարէ իւր խոստմունքը, այդ պատճառով աւելի եռանդով էի աշխատում: Նա այնքան բարի եւ ճշմարիտ մարդ էր, որ երբեք չէր խաբի: Ես արդէն մի քանի օրինակներ էի տեսել, թէ որպէս իւր աշակերտներին բախտաւորացրել էր նա:

Բայց մի սարսափելի դէպք ոչնչացրեց իմ բոլոր գեղեցիկ ցնորքները...:

Մի օր յանկարծ մտան մեր արհեստանոցը ոստիկանութեան ֆէրրաշները, վարպետիս կալանաւորեցին, արհեստանոցը ընդապատեցին զինուորներով, սկսեցին խուզարկութիւններ անել: Վարպետիս հետ կալանաւորեցին մեր աշակերտներից ու բանուորներից շատերը: Ես փախայ. ինձ բռնել չկարողացան:

Երեկոյ էր. արեւը մայր էր մտել. գիշերային խաւարը հետզհետէ տարածվում էր երկրի վրայ:

Ես առանց կանգ առնելու, վազում էի ինչպէս մի սրընթաց եղջերու, բայց ինքս էլ չգիտէի, թէ ո՛ւր էի գնում: Երկիւղն ու սարսափը ինձ առաջ էին մղում: Ես լաւ գիտէի, թէ ինչ բան է պարսկական ֆէրրաշը, եւ ինչ սոսկալի հետեւանք կարող է ունենալ մի քանի ժամ առաջ պատահած անցքը:

Երբ բոլորովին մթնեց, կանգնեցի, որ փոքր ինչ հանգստանամ: "Ո՞ւր գնամ„ — այդ հարցը ծագեց իմ գլխում: Մտածում էի, մտածում եւ ոչ մի ելք չէի գտնում: Եթէ մեր տունը գնայի, այնտեղ էլ կարող էին յայտնուել ֆէրրաշները: Ծուսահատութիւնը խեղդում էր ինձ. ամբողջ մարմնով դողում էի:

Մինչ այդ տաղնապի մէջ էի, յանկարծ լսեցի իմ անունը. մէկը կոչում էր ինձ: Զարհուրանքը բոլորովին սիրեց ինձ: Նա մօտեցաւ:

— Մուրադ, ասաց նա, — ինչո՞ւ ես այսպէս շփոթուած, ի՞նչ է պատահել քեզ հետ:

Ես հանդստացայ: Ինձ հետ խօսողը իմ ծանօթներից մէկն էր: Նա մի լաւ պատանի էր, որին կոչում էին Ասլան: Ես պատմեցի նրան մի քանի ժամ առաջ պատահած դժբախտութիւնը: Նա փոքր ինչ մտածեց, յետոյ ասաց.

— Եկ ինձ հետ, մենք չենք թողնի, որ դու ֆէրրաշների ձեռքը ընկնես:

Այդ "մենք„-ից ես հասկացայ, որ նա մենակ չէր, այլ ուրիշ ընկերներ եւս ունէր:

Նա տարաւ ինձ իւր ընկերների մօտ. մէկի անունը Կարօ էր, միւսինը Սագօ: Դրանք որբ պատանիներ էին, անտուն, անտեղ, անհայր եւ անմայր: Ապրում էին երկնքի թռչունների նման, քնում էին այնտեղ, որտեղ մթնում էր օրը: Երեքն էլ հասակակից էին ինձ հետ: Ես առաջուց ծանօթ էի նրանց հետ եւ լաւ ծանօթ: Նրանք Հին քաղաքի դպրոցի աշակերտներից էին, սովորում էին մի քահանայի մօտ, որին կոչում էին աէր-Թօդիկ: Մի անգամ այդ երեքն էլ փախան նրա դպրոցից եւ բոլորովին անյայտացան: Այն օրից անցել էին մի քանի ամիսներ. այժմ առաջին անգամ կրկին հանդիպում էի վաղեմի ծանօթներիս:

— Մուրադ, ասաց ինձ նրանցից աւելի մեծը, Կարօն, — եթէ մեզ մօտ ճնալու լինես, դու ազատուած կը լինես վտանգից:

Մուրադը մեզ հետ ընկեր կը դառնայ, մէջ մտաւ Սագօն:

— Ես այդ նպատակով բերեցի նրան, աւելացրեց Ասլանը:

Այդ ինչ ընկերութիւն էր, ինչով կարող էի ես ընկեր դառնալ նրանց հետ, — այդ մասին ոչինչ չխօսեցին: Բայց ես գիտէի, թէ այդ մոլաշրջիկները ովքեր են, կամ ինչ տեսակ տղերք են: Նրանք դեռ աէր-Թօդիկի դպրոցում եղած ժամանակ, յայտնի էին իրանց ճարպկու-

թիւններով եւ զանազան արկածներով։ Նրանց մասին մարդիկ լաւ չէին խօսում, որովհետեւ նրանք փոքրիկ սրիկաներ էին....։

Ես խոստացայ նրանց մօտ մնալ, մինչեւ տեսնէինք, թէ վարպետիս գործը ինչով կը վերջանար։ Իմ նոր ընկերներս ուրախացան։

Ամառ էր։ Բաց երկնքի տակ ամէն տեղ կարելի էր օթեւանել։ Ախ, որքան լայն եւ ընդարձակ է Աստուծոյ աշխարհը, որքան ախորժելի է, երբ նրա մէջ ազատ ես եւ չար մարդիկ չեն նեղացնում քեզ...։

Երբ հանգստացայ, երբ բոլորովին ուշի եկայ, այն ժամանակ միայն հասկացայ, որ մեր գիւղից շատ հեռու չեմ գտնւում։ Մեր գիւղը շրջապատուած էր լայնատարած այգիներով եւ ձեռատունկ անտառներով։ Այդ անտառներից մէկի միջումն էինք գտնւում։ Լուսնկայ գիշեր էր։ Բայց ծառերի խտութեան մէջ չէր թափանցում լուսնի արծաթափայլ լոյսը։ Իմ նոր ընկերները ծառերի ճիւղերից հիւսել էին այդ անտառում մի փոքրիկ տաղաւար. նրա մէջ նստած էինք։ Նրանք ինձ հաց տուին, խմցրին, աշխատում էին ամէն կերպով մխիթարել ինձ։ Գիշերը քնեցի ես խիստ անուշ քնով։

Անցան մի քանի օրեր։ Ես գտնւում էի բոլորովին ապահով դրութեան մէջ եւ ամենեւին երկիւղ չունէի, թէ անտառների այն մոռացուած խլութեան մէջ, ֆէրրաշները կարող էին գտնել ինձ։ Բայց ինձ անհանգստացնում էր վարպետիս վիճակը. ես մտածում էի իմ մօր, իմ քոյրերի մասին։ Ինձ յայտնի էին պարսից դատաւորների անիրաւութիւնները, ես գիտէի, երբ որեւիցէ յանցաւոր փախչում է, ձեռք չէ ընկնում, այն ժամանակ նրա փոխարէն կալանաւորում են նրա մերձաւորներին, սկսում

են չարչարել, մինչեւ յանցաւորը յայտնուի։ Բայց ինչո՞վ էի յանցաւոր ես, ի՞նչ էի արել, կամ ի՞նչ մեղ ունէր վարպետս։ — Ինձ ոչինչ յայտնի չէր։

Ընկերներս հանգստացնում էին ինձ, խոստանում էին, թէ ճիշդ տեղեկութիւններ կը բերեն թէ վարպետիս եւ թէ մեր ընտանիքի դրութեան մասին, բայց դեռ որոշ ոչինչ չէին ասում։

Օրըստօրէ ընկերներիս հետ աւելի մտերմանում էի եւ աւելի ընտելանում էի նրանց սովորութիւններին։ Այդ ուրախ, մշտազուարթ պատանիները այժմ այն չէին, որպէս ես տեսել էի, որպէս ես ճանաչում էի նրանց, երբ դեռ տէր-Թօդիկի դպրոցում սովորում էին։ Այժմ բոլորովին փոխուել էին։ Այդ դպրոցի աշակերտներից շատերի հետ ես ծանօթ էի, որովհետեւ դպրոցը գտնւում էր մեր արհեստանոցի մօտ։ Երբեմն ես գնում էի այնտեղ, որ տեսնեմ, թէ ինչպէս են սովորում աշակերտները։ Ես նրանց ուսման մասին դատել չէի կարող, բայց զարմանում էի, տեսնելով, որ համարեա բոլորը ապուշ, բթամտացած տղերք էին, կարծես, նրանց մէջ շունչ եւ հոգի չկար։ Վարժապետի մշտական երկիւղը շինել էր այդ ողորմելիներին կենդանի դիակներ։ Ես չէի տեսնում նրանց մօտ զուարթ երեսներ, ինձ երեւում էր, թէ արտասուքը միշտ հոսում էր նրանց աչքերից։ Երկիւղը մի գուցէ ընկերը մատնէր իրան, շինել էր բոլորին կասկածոտ եւ կեղծաւոր։ Ծեծի եւ ճիպոտների ուժով աշակերտների գլուխներում միտք տարածելը, շինել էր նրանցից մի տեսակ կապիկներ, որոնք չեն կարող որոշել իրանց խաղի ձեւերը, մինչեւ խաղցնողը չէ շարժում ձեռքի գաւազանը։

Բայց Կարօն, Ասլանը, Սաքօն, թէեւ նոյն դպրոցի աշակերտներն էին, բայց այժմ իրանց աշակերտակիցների

նման չէին: Դրանք կենդանի տղերք էին, համարձակ, միշտ ուրախ, միշտ անհոգ: Անհոգ էին ինչպէս երկնքի թռչունները եւ ապրում էին ճիշդ նրանց նման: Դրանց մէջ կար սէր, անձնանուիրութիւն դէպի ընկերը եւ չափից դուրս անկեղծութիւն: Ես շատ շուտ ճանաչեցի նրանց, որովհետեւ այսպիսի մարդերին ճանաչելը հեշտ է եւ շուտ էլ կապուեցայ նրանց հետ...:

Մենք այժմ չորս հոգի էինք. մեզանից ամեն մէկը մի ընորհք ունէր. ես լաւ ձայն ունէի, երգում էի. Ասլանը գիտէր ածել ջութակի վրայ. Սագօն ածում էր թութակի վրայ, իսկ Կարօն լաւ ածել գիտէր դայիրա: Գիշերները կազմում էինք մի ամբողջ երաժշտական խումբ: Մեր սեղանը լի էր լինում ամենատեսակ ուտելիքներով, գինին խօ այնքան էր, որքան կ'ուզես՝ խմէ: Ես առաջին անգամ այնտեղ սովորեցայ խմելը: Պատահում էր, մեզ սեղանակից էին լինում սիրելի հիւրեր: Ամառը գիւղացիների մեծ մասը մեր կողմերում անց են կացնում այգիներում, բօստաններում, մշակութեան դաշտերում, եւ գիշերներն այնտեղ են պառկում: Շատ անգամ մեր նուագարանների ձայնը դուրս էր կոչում գիւղացի աղջիկներին այգիների խորքից. նրանք գաղտնի գալիս էին մեզ մօտ. քաղցր էր նրանց անցկացնել ամառնային գեղեցիկ գիշերները մանկահասակ սրիկաների հետ...:

Այդ զուարճութիւնները այն աստիճան գրաւել էին ինձ, որ ես համարեա թէ մոռացայ վարպետիս: Ընկերներս թէեւ խոստացել էին նրա գործերի մասին ինձ տեղեկութիւն տալ, բայց, որպէս հաւատացնում էին, դեռ իրանք եւս ստոյգ տեղեկութիւններ չունէին: Միայն ասում էին, որ երկիւղը դեռ չէ անցել:

Ասեցի, մենք ապրում էինք երկնքի թռչունների պէս. թռչունները չեն վարում, չեն ցանում, նրանք վայելում են ուրիշի մշակութեան բերքը: Այսպէս էլ անում էինք մենք: Գիշերային խաւարի մէջ սատանան այնպէս հաւարձակ չէր կարող լինել, որպէս մենք: Բոլոր այգիների լաւ-լաւ պտուղները մեզ էին պատկանում: Շատ անգամ թագուն մտնում էինք գիւղերը: Ամառուայ տօթերի պատճառով տանեցիք քնած էին լինում կտուրների վրայ, բակերը եւ սենեակները թողնելով բոլորովին անմարդաբնակ: Ներս էինք մտնում մի տուն, գողանում էինք հաց, պանիր, հաւեր, ձուաներ եւ այլ ուտեստներ: Երբեմն այսպիսի գողութիւններ անում էինք մեր բարեկամների կամ ազգականների տներից: Բայց երբեք չէր պատահում, որ բացի ուտելիքներից, գողանայինք մի ուրիշ բան: Մեր գիւղացիները գինու կարասները սովորաբար թաղում են այգիներում, գետնի տակ: Մեզ յայտնի էին տեղերը, գիշերով գնում էինք, բաց էինք անում, վեր էինք առնում որքան մեզ պէտք էր: Մենք խրճմտաւոր եւ փոքրիկ գողեր էինք. մեզանից հասակով ամենամեծը քսան տարեկան հազիւ կը լինէր:

Ես առաջ շատ երկչոտ էի. վախենում էի դեւերից, սատանաներից եւ մինչեւ անգամ մաշկալեւիկներից: Իսկ այժմ ո՞րտեղից էր այդ քաջասրտութիւնը, որ ես ոչ մէկ բանից էլ չէի վախենում: Երեւի, ազատ կեանքը մտցրեց իմ մէջ այդ երկաթի սիրտը: Իմ ընկերները բոլորն էլ պէնքեր ունէին. ես թէեւ չունէի, բայց մի տեղ գնալու ժամանակ նրանք իրանց պէնքերից աւելորդը ինձ էին տալիս:

Զարմանալի ներգործութիւն է անում մարդու վրայ վայրենի բնութիւնը: Երբ գիշերը մութն է, երկինքը ամ-

պած է, կայծակը երբեմն փայլատակում է եւ որոտը որոտում է, — այդ բոլոր սարսափելի երեւոյթները այն աստիճան ախորժ են քո սրտին, այնքան ուռեցնում են քո կուրծքը, մինչ դու, ոգեւորուած մի քաղցր կատաղութեամբ, ուզում ես խորտակել, ուզում ես զարհուրեցնել, որպէս որոտը եւ կայծակը:

Բայց բոլորովին հակառակ ազդեցութիւն էր անում իմ վրայ, երբ բնութիւնը խաղաղ էր, երբ երկինքը ուրախ էր, երբ լուսինը մեղմ ընթացքով սահում էր լաստակ կամարի վրայով, երբ ամեն տեղ տիրում էր մի խուլ, խորհրդաւոր լռութիւն: Այսպիսի րոպէներում իմ սիրտը, կարծես թէ, աղնուանում էր, քնքշանում էր, ես փափագում էի սիրել... եւ իսկոյն միտս էր գալիս գեղեցիկ Սառան:

Սառան մեր հարեւանի աղջիկն էր. մենք միասին էինք մեծացել եւ մեր մանկական ամենաքաղցր րոպէները միասին էինք անցկացրել: Այն օրից, որ փախստականի կեանք էի վարում, ամենեւին չէի տեսել նրան: Ա՛խ, ո՛րքան կը տխրէր նա, ո՛րքան լաց կը լինէր իւր կորած, մոլորուած սիրելիի համար...: Ես երեւակայում էի Սառայի դրութիւնը. նա այնքան բարի, այնքան զգայուն աղջիկ էր, որ չէր կարող չցաւել իմ վիճակի վրայ: Բայց ես այն աստիճան վայրենացել էի, իմ սիրտը այն աստիճան կոշտացել էր եւ իմ կամքի զօրութիւնը այն աստիճան թուլացել էր, որ չէի կարողանում գնալ նրա մօտ, մխիթարելու նրան: Ես մոռացել էի մինչեւ անգամ մօրս, քոյրերիս եւ յարգելի վարպետիս: Իմ նոր ընկերները, կարծես, կախարդել էին ինձ, կարծես, մի անբեւեռելի զօրութեամբ կաշկանդուել էի նրանց հետ, եւ ամենեւին բաժանուել չէի ցանկանում: Մարդկային բնակութիւնը,

մարդկային հասարակութիւնը ինձ խորթ էր թուում: Ես սիրում էի ազատ դաշտերը, լեռները, անտառները եւ մթին ձորերի քարանձաւները...: Ես դարձել էի գիշերային բուե, որ խաւարի մէջ է որսում իւր որսը...:

Ոչ մի մարդկային արարած չէր անցկենում այն անտառի միջով, ուր թագնվում էինք մենք: Միայն երբեմն յայտնվում էր մի բարձրահասակ որսորդ, որը հրացանը ուսից քարշ գցած, մի զոյգ շների հետ, որպէս այն մթին անտառների ծերունի աստուածը, հանդարտ անց էր կենում, մտախոհութեամբ իւր շուրջը նայելով: Կաթսն, Ասլանը եւ Սագօն բնաւ չէին խորշում այդ տարապայման որսորդից: Երբեմն նա մօտենում էր, նստում էր մեր տաղաւարի առջեւ հանգստանալու համար: Նա բաց էր անում իւր ահագին ճաղատ գլուխը, սրբում էր ճակատի քրտինքը, սկսում էր ծխել: Նրա գագաթը պատած էր խորին սպիներով: Երեւում էր, այդ պատակռելի մարդը իւր կեանքը անց էր կացրել սոսկալի կռիւների մէջ: Նրան ես ճանաչում էի. նա շատ անգամ գալիս էր վարպետիս արհեստանոցը, զանազան գործիքներ էր շինել տալիս: Նրան կոչում էին Ավօ:

Առաջին անգամ, երբ տեսաւ ինձ, հարցրեց Կարօից.

— Դա ո՞վ է:

— Խաչագողներից է, պատասխանեց Կարօն ծիծաղելով:

— Խաչագողները շատ օգտաւէտ մարդիկ կը լինէին, ասաց նա մի առանձին խորհրդաւոր ձայնով, — եթէ իրանց խելքը, սրամտութիւնը եւ բոլոր զարմանալի ճարպկութիւնները, որ ունեն նրանք, գործ դնէին, փոխանակ խաբէութիւնների, աւելի լաւ գործերի մէջ, մարդկային բարօրութեան համար: Նրանք ամենակարող

մարդիկ են. նրանք հրաշքներ կը գործէին, եթէ աղնիւ լինէին...:

Ես նրանց նման չեմ լինի, պատասխանեցի կարմրելով:

— Ցացէ Աստուած, որ չլինես, որդի, ասաց նա, ուղիղ նայելով իմ երեսին. — բայց հասկացիր, որ դու եւս միւնոյն ճանապարհի սկզբումն ես կանգնած, եթէ փոքր ինչ առաջ գնալու լինես, նրանց նման կը լինես...:

Ես ոչինչ չգտայ պատասխանելու: Միայն մտածում էի, ինչպէս է պատահել, որ մի այսպիսի բարի մարդը, որը զզվում է խաչագողներից, որը ցանկանում է, որ նրանք ուղղուէին եւ իրանց հմտութիւնները մարդկային օգտի համար գործ դնէին, — մի այսպիսի մարդը բարեկամ է Կաթոի եւ նրա ընկերների հետ, ներում է նրանց գողութիւնները: Գուցէ, մտածում էի ես, այդ բարեկամութիւնը մանկահասակ սրիկաներին ուղղելու եւ նրանց աւելի հաստատ ու բարոյական ճանապարհի վրայ կանգնեցնելու համար է: Այդ ենթադրութիւնը սխալ չէր, որովհետեւ ես շատ անգամ լսում էի ծերունի որսորդի խրատները, որ կարդում էր մեզ, եւ այդ իմաստուն, խոբախորհուրդ խրատները ես յիշում եմ մինչեւ այսօր:

Մինչ այդ խորհրդածութիւնների մէջ էի, յանկարծ մտաբերեցի վարպետիս. որսորդը նրա բարեկամը լինելով, կարող էր դիտենալ, թէ ինչով վերջացաւ նրա գործը:

Ես պատմեց սարսափելի բաներ:

Վարպետիս կալանաւորելուց յետոյ, նրա ամբողջ արհեստանոցը գրաւել էին եւ աճուրդով ծախել էին: Այդ բաւական չէր, նրան ենթարկել էին ահագին տուգանքի, եւ որովհետեւ վարպետս պատրաստի փող չունէր, փոխարէնը վաճառուել էր նրա տունը, բոլոր կայքը եւ կալուածները:

— Այդ բոլորը դեռ տանելի է, աւելացրեց ծերունի որսորդը ցաւակցական ձայնով: — Դեռ սպասում է նրան ամենասարսափելին...:

— Ի՞նչ բան, հարցրի ես, ոչ սակաւ սարսափելով:

— Երկու օրից յետոյ, հրապարակի վրայ, դահիճը պիտի կտրէ նրա աջ ձեռքի բազուկը...:

Կարծես, կայծակով հարուածեցին ինձ:

— Ինչո՞ւ համար, ինչով է յանցաւոր գողեցի ես խեղագարի նման:

— Հանդարտուիր, ասաց ծերունի որսորդը եւ շարունակեց. — Թէ ինչով է յանցաւոր նա, յանցանքը յայտնի է, բայց թէ ո՛ր աստիճան ստոյգ է այդ յանցանքը, — դա մի գաղտնիք է, որ պատած է խորին մթութիւնների մէջ: Ես համարում եմ վարպետ Գրիգորին շատ խստակ եւ արդար մի արհեստաւոր: Նա խաբեբայ, ստախօս մարդ չէ: Նա իրան թոյլ չի տայ մասնակից լինել անարդար գործի: Բայց մի ապացոյց, ոչ միայն նրան կասկածանքի ներքոյ է դնում, այլ հաստատում է նրա վրայ դրած մեղադրանքը:

— Ի՞նչ ապացոյց, հարցրի ես անհամբերութեամբ:

— Մի բանալի...:

Ես սոսկացի: Որսորդը չնկատեց իմ խռովութիւնը, շարունակեց.

— Ահա ինչումն է գործը. դու խօ ճանաչում ես Հին-քաղաքի հարուստ աղալարներին, դու խօ գիտես, թէ ինչ տեսակ գաղտնիք են նրանք: Քո վարպետի կալանաւորուելու նախորդ գիշերը, անյայտ չարագործներ մտել էին այդ աղալարների ամրոցը, բայց էին արել մեծ

երկաթէ արկղը եւ նրա միջից դողացել էին շատ թանգագին իրեղէններ: Ամրոցից այլեւս ուրիշ բաներ չէին տարել: Աւազակները մռռացմամբ թողել էին արկղն վրայ այն բանալին, որով բաց էին արել նրա փականքը: Ջննելով այդ բանալին, ստուգուեցաւ, որ շինուած էր քո վարպետի արհեստանոցում:

— Ի՞նչով ստուգուեցաւ:

— Նրա վրայ դրած էր արհեստանոցի փոքրիկ դրոշմը, որ կրում էր իւր մէջ մի մուրճ, հորիզոնաձեւ դրած, իսկ նրա ներքոյ երկու տառեր՝ Գ. եւ Մ...: Այդ տառերը քո վարպետի անունի եւ ազգանունի սկզբնատառերն են, կարծեմ, քեզ պէտք է ծանօթ լինի այդ դրօշմը:

— Ծանօթ է... պատասխանեցի ես խեղդուած ձայնով:

Ես մտաբերեցի այն բանալին, որը մի ժամանակ շինել էի քաւոր Պետրոսի համար, եւ որի գոյութեան մասին բոլորովին մոռացել էի: Որպէս մի լաւ եղեռնագործ, ես զգացի այն բոլոր զարհուրանքը, թէ իմ անգիտութեամբ որպիսի սարսափելի դժբախտութիւն պատճառեցի իմ սիրելի վարպետին: Իմ ձեռքն էր շինել այն բանալին. ես էի դրել նրա վրայ արհեստանոցի փոքրիկ դրոշմը: Իսկ այժմ իմ փոխարէն պիտի պատժուէր արդար եւ աշնիւ արհեստաւորը: Հրապարակի վրայ դահիճը պիտի կորէր նրա ձեռքը: Ի՛մ, իմ ձեռքը պիտի կորէին, ես էի արժան այդ պատժին, ի՞նչով էր յանցաւոր անմեղ մարդը...:

Ես յիշեցի քաւոր Պետրոսի խօսքերը, որոնցով աշխատում էր համոզել ինձ, որ ոչ ոքի չասեմ, թէ նրա համար մի այսպիսի բանալի եմ շինել, — ես յիշեցի այն

ընծան, որով նա խաբեց ինձ, ոտքից ցգլուխ նոր հագուստ կարել տալով ինձ համար... Ուրեմն, ես միջնորդ դարձայ մի չարագործութեան, իսկ իմ փոխարէն պիտի պատժուէր այն աշնիւ մարդը, որը այնքան սիրում էր ինձ, որը այնքան ուրախանում էր իմ յառաջադիմութեամբ, որը խոստանում էր աւելի եւ աւելի բախտաւորացնել ինձ... Այդ դառն մտածութիւնները պաշարեցին ինձ, երբ բացուեցաւ իմ առջեւ սարսափելի իրողութիւնը, եւ ես գոչեցի իմ խռովութեան մէջ.

— Ապա քաւոր Պետրոսը... ապա քաւոր Պետրոսին ի՞նչ պիտի անեն...:

— Ո՞վ է քաւոր Պետրոսը, հարցրեց որսորդը զարմանալով:

— Մեր քաւոր Պետրոսը...:

— Հա, ճանաչում եմ... Նա ի՞նչով է խառն այդ գործի մէջ: Նա խաղաղ, հանդարտ շարունակում է իւր սովորութեան համեմատ ամեն առաւօտ եւ երեկոյ եկեղեցի գնալ, աղօթել: Նկեղեցուց դուրս գալուց յետոյ, փողոցներով անցկենալու ժամանակ, աչ ու ձախ ողջունում է մարդկանց, աշխատում է ճանճերին էլ չվշտացնել, որ իւր հոգին Աստուծոյ դրախտից չզրկուի...:

Որսորդի խօսքերի մէջ կար խիստ դառն հեգնութիւն դէպի քաւոր Պետրոսը, որոնք աւելի գրգռեցին իմ բարկութիւնը դէպի այն գարշելի մարդը, եւ ես պատրաստւում էի այն չարագուշակ բանալիի ամբողջ պատմութիւնը յայտնել որսորդին, եւ ցոյց տալ, թէ ինչով է քաւոր Պետրոսը խառն աղալարների ամրոցի գողութեան գործի մէջ, — բայց այդ րոպէում որսորդի ուշադրութիւնը գրաւեց մի այլ արարած, նա թողեց ինձ եւ երեսը շուռ տուեց դէպի այն կողմը:

Նրա շունը, որ մինչեւ այն րոպէին, գլուխը առջեւի թաթիկների վրայ դրած, պառկել էր տիրոջ մօտ, յանկարծ վազ տուեց եւ մտաւ մեզանից ոչ այնքան հեռու գտնուած թփերի մէջ: Վարկենական խուզարկութիւնից յետոյ, գլուխը կրկին դուրս հանեց թփերի միջից, եւ մի առանձին հրաւիրական հայեացքով սկսեց նայել տիրոջ երեսին:

— Ի՞նչ կայ, Ջէյրան, հարցրեց տէրը:

Ջէյրանը արձակեց մի քանի խուլ մռնչիւններ:

— Հասկացայ, ասաց որսորդը եւ վեր առեց իւր մօտ դրած հրացանը:

Մեզանից բաւական տարածութեան վրայ, մամռապատ քարաժայռի գլխին, կանգնած էր մի վայրենի այծ, եւ զգոյշ նայում էր իւր շուրջը: Հեռուից երեւում էր նա մի հաւի չափ: Ծերունի որսորդի սրատես աչքերը տեսան նրան, հրացանը որոտաց, այծը գլորուեցաւ ցած:

— Տղերք, գնացէք վեր առէք, Աստուած ձեզ համար խորովածացու ուղարկեց:

Տղերքը վազեցին դէպի այն կողմը, իսկ ես քարացածի նման դեռ մնացել էի կանգնած, որպէս մի կատաղի եղեռնագործ. որին յանկարծ տիրում է խղճահարութեան երկունքը:

Ծերունի որսորդը դարձաւ դէպի ինձ, ասելով.

— Ընկեր, դու այստեղից դեռ եւս չպիտի հեռանաս. քեզ որոնում են, մնա այստեղ, մինչեւ անցնի վտանգը...:

Նա այլեւս չսպասեց իմ պատասխանին, եւ մնաք բարեաւ ասելով, հեռացաւ:

Կարօն իւր ընկերների հետ վերադարձան, իրանց հետ բերելով այծը:

— Այն բոլորը, ինչ որ պատմեց քեզ որսորդը, մենք առաջուց գիտէինք, ասաց Ասլանը:

— Դուք գիտէիք եւ թագցնում էիք ինձանից, գոչեցի ես վրդովուած ձայնով:

— Մենք չէինք ուզում քեզ տխրեցնել:

Մինչեւ ընկերներս մորթեցին այծը, մինչեւ յօշոտեցին, մինչեւ կրակ վառեցին, գիշերից բաւական անցաւ: Առատ խորովածը մատակարարում էր նրանց սեղանին այն ճոխ ընթրիքներից մէկը, որի նմանը խիստ հազիւ անգամ նրանք վայելում էին անմարդաբնակ անտառում: Գինին նոյնպէս առատ էր: Ջնայելով, որ ընկերներս ամեն կերպ աշխատում էին ուրախացնել ինձ, վանել իմ տխրութիւնը, բայց հնար չէր լինում: Իմ սիրտը լցուած էր անսահման դառնութեամբ, գլխում պտտվում էին հազարաւոր սատանաներ: Ես ոչինչ ուտել չկարողացայ, միայն խմում էի, աշխատում էի գոնէ գինով թմրեցնել ինձ տանջող ցաւերը: Բայց նա էլ չէր օգնում: Սալմաստայ գօրեղ գինին ինձ վրայ ջրի ազդեցութիւն էր անում:

— Անհոգ կաց, Մուրադ, ասաց ինձ Կարօն, — մենք չենք թողնի, որ քո վարպետի ձեռքը կտրեն:

— Դուք, հարցրի ես թերահաւատութեամբ, — դուք ի՞նչ կարող էք անել:

— Մենք շատ բան կարող ենք անել, պատասխանեց Կարօն մի առանձին անձնավստահութեամբ:

Ես չկամեցայ ընկերներիս հպարտութիւնը վիրաւորել եւ լուռ կացայ:

— Հանաք չենք անում, Մուրադ շարունակեց Կարօն բաւական լուրջ կերպով. — քո վարպետը առաջիկայ գիշերում ազատուած կը լինի բանտից: Միւս առաւօտը,

երբ բանտի դռները բաց կ'անեն, որ տանեն նրան հրապարակի վրայ ձեռքը կտրելու համար, կը գանեն նրան անյայտացած:

— Դա անկարելի բան է:

— Շատ հնարաւոր է, պատասխանեց Կարօն: — Ամեն ինչ կարգադրուած է, ինքը ծերունի որսորդը կ'առաջնորդէ մեզ. մենք ունենք ուրիշ ընկերներ եւս...

Վերջին բառերը, կարծես, սխալմամբ նա բաց թողեց բերանից, եւ շուտով խօսքը փոխեց.

— Դու էլ, ի հարկէ, մեզ հետ կը լինես:

— Վարպետիս ազատութեան համար ես գժոխքն էլ կը մտնեմ:

Ընթրիքից յետոյ ընկերները շուտով պառկեցան, քնեցին, երեւի, առաջիկայ գիշերուայ արշաւանքի համար ուժեր կազդուրելու մտքով: Բայց ես քնել չկարողացայ:

Ջով գիշեր էր. մեղմիկ քամին հազիւ օրօրում էր քնած տերեւները եւ անտառի լռութիւնը կենդանանում էր ծառերի խորհրդաւոր սոսափիւնով:

Ես միայնակ նստած էի տաղաւարի մօտ, ականջ էի դնում: Յաճախ մտածութիւններ անհանգստացնում էին ինձ: Կարօի խօսքերը անհաւատալի էին թուում: Ես աւելի հաւանական էի գտնում, որ ոգեւորուած գինու ազդեցութեամբ, նա միայն կամեցաւ առժամանակ հանգըստացնել ինձ: Եթէ մի այսպիսի դիտաւորութիւն լինէր, ծերունի որսորդը անպատճառ կ'ասէր ինձ: Բայց նա ոչինչ չէ յայտնեց եւ հեռացաւ:

"Երկու օրից յետոյ, հրապարակի վրայ, գահիճը պիտի կտրէ նրա աջ ձեռքի բազուկը"... յիշեցի ես ծերունի որսորդի խօսքերը: — Անմեղ մարդը պիտի պատժուէր ինձ նման մի յիմար համբակի եւ մի նենգաւոր

չարագործի պատճառով...: Ոչ, ոչ, մտածում էի ես, այդ անկարելի բան է... կը գնամ քաւոր Պետրոսի մօտ, հէնց այս գիշեր կը գնամ... Կ'ասեմ նրան, դու ինձ խաբեցիր, այժմ քո չարագործութեան պատճառով պատժվում է մի արդար մարդ... կամ պիտի գնաս դատաւորի մօտ եւ յայտնես, թէ դու ես մեղաւորը, որ ազատես նրան դատապարտութիւնից... կամ ես ինքս կը գնամ եւ ամեն ինչ կը յայտնեմ, ուր որ հարկն է...:

Այդ մտածութիւնները, կարծես թէ, ինձ ուժ տուին, ես վեր կացայ: Իմ խռովութեան մէջ ես մինչեւ անգամ մոռացայ այն խօսքերը, որ ընթրիքի ժամանակ Կարօն ասաց ինձ, — մոռացայ եւ իմ խոստմունքը, թէ նրանց հետ գժոխքն էլ կը մտնեմ սիրելի վարպետիս ազատելու համար:

Տաղաւարի մօտ դեռ վառվում էր կրակը եւ աղօտ լոյսը տարածում էք քնած ընկերներիս վրայ: Մի անբացատրելի նախազգեցութեամբ, կարծես, զգում էի, թէ այլեւս չպիտի տեսնեմ այդ կեանքով լի, եռանդոտ եւ անկեղծ բարեկամներիս: Նրանք քնած էին տաղաւարի մէջ: Ես մօտեցայ, խոնարհուեցայ, եւ արտասուքը աչքերումս, համբուրեցի երիքի երեսները, ապա դուրս եկայ տաղաւարից: Եւ վերջին անգամ հայեացք ձգելով այն անտառային մենաւոր խրճիթի վրայ, որ կապուած էր իմ պատանեկութեան սրտի հետ անմոռանալի յիշատակներով, — "Ձեզ բարեաւ, սիրելի ընկերներ", ասեցի եւ հեռացայ...:

Բ.

ԿՐԿԻՆ ՄՈԼՈՐՈՒԹԻՆՆ

Դուրս գալով անտառէն, սկսեցի դիմել մեր գիւղը: Անզադար նայում էի դէպի "աղօթարանը„, որ տեսնեմ, արդեօք չէ՞ ծագում օրը: Դեռ բաւական գիշեր կար: Ուսուարը ինձ պէտք էր. մթութեան մէջ ես շատ բան ուշ նէի կատարելու...:

Մտայ մեր գիւղը: Նա նիրհում էր խորին քնի մէջ. միայն երբեմն մի որեւէցկէ անհամբեր շան անխորհուրդ աղաղակը ընդհատում էր գիշերային լռութիւնը: Իմ սիրտը բաբախում էր ե՛ւ ուրախութիւնից ե՛ւ տրտմութիւնից: Ուրախ էի, որ պիտի տեսնեմ մօրս, քոյրերիս եւ վերջապէս Սառային: Տրտում էի, երբ յիշում էի վարպետիս ցաւալի դրութիւնը:

Ես վճռել էի մի սարսափելի դիտաւորութիւն. նախ գնալ քաւոր Պետրոսի մօտ, առաջարկել նրան, որ դիմէ դատաւորին եւ յայտնէ, թէ ինքն է կատարուած չարագործութեան հեղինակը եւ ազատէ անմեղ վարպետիս կեանքը: Իսկ եթէ քաւոր Պետրոսը այնքան ազնուութիւն չէ ունենայ, որ յանձն առնէ իմ առաջարկութիւնը, — ես երդուել էի՝ իմ սուրը ցցել նրա նեղ-քաւոր սրտի մէջ, եւ նրա դիակի վրայից անցնելով, ինքս անձամբ գնալ այն հրապարակի վրայ, ուր պիտի կատարուէր վարպետիս դատապարտութեան վճիռը, եւ իմ

ձեռքը մեկնել դահճին, ասելով. "կարեցէք այդ բազուկը, այդ ձեռքով է շինուած այն բանալին„...:

Այդ մտածութիւններով բորբոքուած, ես արդէն գտնվում էի քաւոր Պետրոսի դռան հանդէպ: Սկսեցի դռան մուրճը զարկել: Ծայտնուեցաւ ծառան, յայտնեց որ աղան տանը չէ:

— Ի՞նչպէս տանը չէ, յիմար, գոչեցի ես, եւ չհաւատալով նրա խօսքերին, ներս մտայ:

— Ասում եմ տանը չէ, ելէ, պատասխանեց նա մրմրթալով, — գնա աչքովդ տես, թէ կը գտնես, այն ժամանակ ասա ինձ յիմար:

— Իսկ քաւորկի՞նը:

— Քաւորկինը քնած է:

Բայց մեր ձայնից քաւորկինը արդէն զարթնել էր, նա կիսահագնուած, ճրագը ձեռին դուրս եկաւ բակը, ուր ես վիճում էի ծառայի հետ:

— Ա՛խ, Մուրադ, զաւակս, դո՛ւ ես, ասաց նա դառն հառաչանքով, եւ մօտեցաւ, գրկեց ինձ:

Ես ապշած մնացի:

— Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, ասում էր նա արտասուքը աչքերում. — ես քեզ բոլորովին կորած էի համարում... դարձեալ փառք լինի մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ կարողացայ տեսնել քեզ...

Քաւորկնոջ զթասրտութիւնը ինձ բոլորովին զինաթափ արեց. իմ կատաղութիւնը բաւական մեղմացաւ, եւ ես հանդարտութեամբ յայտնեցի, թէ ցանկանում էի քաւոր Պետրոսին տեսնել:

— Քանի շաբաթ է, որ նա տանը չէ, զաւակս, ոնց է գնացել մենք էլ չգիտենք: Այն օրից, որ քո վարպետի հետ պատահեց այն դժբախտութիւնը (ամէն, Թող

Աստուած ինքը ողորմութիւն անէ այն խեղճին)։ Պետրոսը քուն եւ հանգստութիւն չունէր, ասում էր, սուրբ Տիրամայր, այդ ի՞նչ պատահեց, միշտ քեզ վրայ էր մտածում, միշտ քեզ համար էր աղօթում։ Յետոյ ասաց ինձ, կնիկ, ես պիտի գնամ գնամ Մուրադին, անփորձ տղայ է, չլինի թէ նա էլ վտանգի մէջ ընկնի։ — Գնաց քեզ պտռելու, ախ, հիմայ ո՛րքան կ՚ուրախանայ, երբ տեսնէ, որ դու ողջ առողջ տուն ես եկել...։

Ես ամենևին չէի կասկածում, որ քաւոր Պետրոսը իմ մասին անհանգիստ կը լինէր, ես բոլորովին հաւատում էի, որ նա գնացել էր ինձ որոնելու, որովհետեւ իմ մի սխալ քայլից, իմ մի անզգոյշ խօսքից կախուած էր նրա կեանքը։ Այդ պատճառով կարճ կտրեցի քաւորկնոջ հետ, որովհետեւ գիշերը անցնում էր, շտապում էի մօրս տեսնել։

— Մնա մեզ մօտ, զաւակս, թախանձում էր քաւորկինը, — այդ ժամանակ ո՞ւր ես գնում։

Երբ ես յայտնեցի, թէ գնում եմ մօրս տեսնելու, նա ասաց.

— Գնա, զաւակս, պէտք է նրան էլ ուրախացնել. խեղճ կնիկ, ո՛րքան լաց էր լինում նա քո համար, ասում էր՝ Մուրադս կորաւ, էլ չեմ տեսնի նրան... հիմայ կը տեսնէ, կ՚ուրախանայ։

Երբ ես կամենում էի բակից դուրս գալ, քաւորկինը խորհուրդ տուեց, որ ծառային ինձ հետ տանեմ, — գիշեր է, զաւակս, ասում էր նա, — ո՞վ է իմանում, կարող է հաղար չար ու բարի պատահել...։

— Պէտք չէ. ասեցի ես եւ հեռացայ։

Դուրս գալով փողոցի խաւարի մէջ, ինձ պաշարեցին նոր եւ աւելի ծանր մտածութիւններ. — քաւոր Պետրոսին չգտայ, ուրեմն նրա մասին իմ բոլոր նախապատրաստութիւնները ոչնչացան, ի զուր անցան...։ Ի՞նչ էր պիտի անել։ Վարպետիս գտտապարտելու օրը մօտ էր. — երկու գիշեր եւս, այնուհետեւ նրան պիտի դուրս բերէին մեղապարտների հրապարակի վրայ...։ Ի՞նչ պիտի անէի, եթէ մինչեւ այնօր չգտնէի քաւոր Պետրոսին։ Ահա մի հարց, որին վճիռ տալու մէջ ես դժուարանում էի։ — "Եթէ նրան չգտնեմ, ինձ կը պիտի կատարել իմ վերջին դիտաւորութիւնը, այսինքն, անձամբ ներկայանալ դատաւորի մօտ, խոստովանուել ձշմարիտ իրողութիւնը, եւ իմ աջը մեկնելով դահճի դանակի առջեւ, ասել՝ "կտրեցէք այդ ձեռքը, որ իւր միամտութեամբ մի չարագործի համար գործիք դարձաւ„...։

Բայց պէտք էր նախ եւ առաջ տեսնուել մօրս հետ. նա կը մեռնէր կսկիծից, եթէ յանկարծ կը լսէր սիրելի որդու բօթը։

Ես մտայ այն փողոցը, ուր գտնվում էր մեր տունը։

Պարսից վարչութեան կամայականութիւնները ինձ բաւական յայտնի էին. ես գիտէի, եթէ մի յանցաւոր փախստական է դառնում, կառավարութիւնը կամ կալանաւորում է նրա ազգականներին, կամ նրա տան վրայ սարվազներ է դնում, սկսում են նեղացնել տանեցիներին, մինչեւ փախստականը յայտնուի։ Ի՞նչ պիտի անեմ, մտածում էի ես, եթէ կը մտնեմ մեր տունը եւ կը տեսնեմ այնտեղ սարվազներով լցուած։ Քաւորկինը այդ մասին ինձ ոչինչ չասեց, եւ ես այնքան շփոթուած էի, որ մոռացայ հարցնելու, թէ ինչ դրութեան մէջ է մեր տունը։

Վճռեցի նախ գնալ Սառայի մօտ, նրանից տեղեկանալ մեր ընտանիքի դրութեան մասին, յետոյ գնալ մօրս

տեսնելու։ Սառայենց տանը կից էր մեր տունը, նրան, ի հարկէ, յայտնի կը լինի ամեն ինչ։

Զարմանալի բան է մարդու սիրտը, այն եւս հրաբորբոք, անփորձ պատանու սիրտը — շատ անգամ ինչ բանին որ փափագում է նա, խելքն էլ սատանայի նման այնպիսի ապացոյցներ է առաջ բերում, որ անպատճառ կատարուի այդ փափագը։ Ես ցանկանում էի տեսնել եւ մօրս եւ Սառային։ Որին պէտք էր տալ գերադասութիւնը։ Սիրտս ասում էր՝ Սառային, իսկ խելքս, փոխանակ հակառակելու նրան, իրան օգնութեան կանչելով զգուշութիւնը ու խոհեմութիւնը, հաստատում է սրտիս բաղձանքը, ասելով ինձ, չէ, առաջ մօրդ մօտ մի գնա, այնտեղ կարող են սարվաղներ լինել, ֆէլրաշներ լինել, կառավարութեան մարդիկ լինել եւայլն։ Այդ բոլորը երեւակայում էի ես, որովհետեւ սրտիս շահերին նպաստաւոր էին դրանք։։։ Սառան կապուած էր իմ հոգու հետ, ես նրան սիրում էի։

Չեմ կարող նկարագրել, թէ ինչպիսի ոգեւորութեամբ մօտեցայ ես նրանց տանը։ Երեք ամբողջ ամիսներ չէի տեսել նրան։ Կատուն այնպէս արագութեամբ չէր կարող թռչել, ինչպէս ես բարձրացայ նրանց կտուրի վրայ։ Տարուայ այն եղանակներում բոլոր գիւղացիները կտուրների վրայ են պառկում։ Սառան քնած էր ինչպէս մի երեխայ։ Ես մօտեցայ ձեռքով շօշափեցի նրա երեսը։ Նա զարթնեց մի անսովոր ձիչ բարձրացնելով։ Ես փօշմանեցի, որ իմ անզգուշութեամբ վախեցրի նրան։

— Ես եմ, Սառա։

Նա ճանաչեց իմ ձայնը եւ հանգստացաւ։

— Ա՛խ, ինչո՞ւ եկար այստեղ։։։ գնա։։։ հիմայ հայրս։։։

Ես յետ քաշուեցայ, վախենալով, մի գուցէ զարթեցնեմ նրա հօրը, որ աղջկանից մի փոքր հեռու պառկած էր։ Սառան մայր չունէր։ Երկու քայլ չէի փոխած, երբ ականջիս դիպաւ նրա հազիւ լսելի ձայնը։

— Գնա՛ ներքեւ, այնտեղ սպասիր ինձ։։։

Որքան ուրախալի էր այդ ձայնը։ Ես իսկոյն կտուրից իջայ նրանց բակը, նստեցի սրահում եւ անհամբերութեամբ սպասում էի։ Շատ չանցաւ, Սառան բոլորովին հագնուած, այնտեղ եկաւ։ Նա հանդիպեց ինձ նոյն հիացմունքով, որպէս մէկի սիրելին գերեզմանից յարութիւն է առնում։ Այսպիսի դէպքերում սիրոյ զգացմունքը լուռ է մնում, տիրապետում է միայն ուրախութեան հրճուանքը, այն եւս արտասուախառն ուրախութեան, երկնչելով, մի գուցէ սիրելին կրկին դէպի գերեզման վերադառնայ։։։

Սառան ձրագ վառեց, մենք մտանք նրա սենեակը։ Առաջին բանը, որ նրա աչքին ընկաւ, էր իմ հագուստը։

— Ա՛խ, այդ ի՞նչ է, քո շորերը ի՞նչպէս պատառոտուել են։։։ ո՞րքան կեղտոտուել է քո շապիկը։։։ ասաց նա ցաւակցաբար։

— Անտառների մէջ այսպէս է լինում, Սառա։

Նա պատրաստում էր թել ու ասեղ, որ կարկատանէ հագուստիս պատառոտած տեղերը։ Բայց ամբողջ ամիսներով մացառների եւ ծառերի մէջ նրանք այնպէս էին քերքրուել, որ փոքր ի շատէ նորոգելը մի քանի օրուայ գործ էր, թէեւ բարի Սառայի սիրտը ցաւում էր ինձ այդ վիճակի մէջ տեսնել եւ մտածում էր նոյն րոպէում նորոգել բոլորը։

Ցանկարծ նա թելն ու ասեղը մի կողմ դրեց, կարծես թէ, մոռացաւ հագուստիս վիճակը, եւ մի նոր բան մտաբերելով, ասաց։

— Ախ, ձրքան լաց եմ եղել ես, Մուրադ... ձրքան տանջուել եմ...:

— Ինչի՞ համար:

— Ասում էին, թէ...

— Ի՞նչ էին ասում:

— Ախ, շատ խօսքեր էին ասում... ասում էին քեզ բռնել են... ասում էին քեզ բանտ էին դրել...

— Հիմայ տեսնում ես, որ այդ բոլորը սուտ է. ես քեզ մօտ եմ:

— Հիմայ ես ուրախ եմ: Բայց...

— Դու կարծում ես ինձ դարձեալ կը կալանաւորեն:

— Ո՛չ... ես կարծում եմ, որ քեզ միւս անգամ չեմ տեսնի...

— Ի զուր ես այսպէս կարծում, Սառա, Աստուած կ'օգնէ ինձ. ինչպէս մինչեւ այսօր չկարողացան կալանաւորել, այսուհետեւ եւս Աստուած կը պահպանէ ինձ: Ես սկսեցի մխիթարել նրան:

— Ո՞ւր էիր այդքան ժամանակ, ձրտեղ էիր պահուած, հարցրեց նա: Ես նկատեցի, որ ձայնը սկսեց դողալ:

— Այդ մի՛ հարցրու, Սառա:

— Ինչո՞ւ, ես չե՞մ պիտի գիտենամ:

— Ցետոյ կ'ասեմ քեզ:

Նա լուռ կացաւ, եւ հեկեկալով սրբում էր արտասուքը:

— Ի՞նչու ես լաց լինում:

— Ասում էին, որ դու գողերի հետ ես ապրում...

Խեղճ աղջիկ, նա լաց էր լինում, նրա համար, որ ես գողերի հետ էի ապրում: Խաչադողն աղջիկը զզվում էր գողերից... դա հազուագիւտ երեւոյթ էր... դա

մի մարգարիտ էր աղբի մէջ ընկած... Մի քանի րոպէից յետոյ հարցրեց նա.

— Դու մօրդ տեսե՞լ ես:

— Դեռ չեմ տեսել, ուզում եմ գնալ նրա մօտ:

— Ախ, եթէ գիտենայիր, թէ ձրքան մաշուել է, ձրքան հալուել է նա քո պատճառով... Խեղճ կնիկ, աչքերիցը արտասուքը չէր ցամաքում, միշտ լաց էր լինում... Ամեն օր գնում էի նրա մօտ, գրկում էր ինձ, համբուրում էր, ասում էր՝ "Մուրադիս կարօտութիւնը քեզանից եմ առնում, Սառա, դու որդուս նշանածն ես„... Ամեն անգամ խօսալիս, քո անունն էր յիշում, ասում էր, Աստուած այնքան ժամանակ հոգիս չառնէ, մէկ էլ տեսնեմ որդուս, ու յետոյ մեռնեմ...: Հիմայ, ձրքան կ'ուրախանայ, Մուրադ, եթէ քեզ տեսնելու լինի:

Ես հարցրի Սառայից, թէ իմ բացակայութեան միջոցում ի՞նչեր էին պատահել մեր տանը: Նա սարսափելի գոյներով նկարագրեց այն բոլոր տանջանքները, որ կրել էր մայրս տեղային պարսիկ պաշտօնատարների, Ֆէրրաշների եւ սարվազների ձեռքից: Պատմեց, թէ ամեն օր գալիս էին, մօրս ասում էին, ո՞ւր է որդին, կամ որդուդ պիտի տաս մեր ձեռքը, կամ այսքան փող պիտի տաս մեզ, որ քեզ ժամանակ տանք, մինչեւ որդուդ գտնես: Եւ այսպէս ամեն անգամ "ղուլղուլ„ եւ "ռուշուաթ„ էին առնում, յետոյ գնում էին: Մայրս փող չունէր, որ տար եւ ազատուէր: Սառայի հայրը գնում էր, նրանց փող էր տալիս եւ ճանապարհ էր դնում: Քոյրերս միշտ Սառայենց տանը թաղնուած էին լինում, երբ նրանք գալիս էին. մայրս չէր ուզում, որ Ֆէրրաշները նրանց երեսը տեսնեն: Այսպիսի շատ բա-

ներ պատմեց ինձ Սառան, իմ սիրտը կտոր-կտոր էր լինում այդ բոլորը լսելու ժամանակ: Եթէ ես մի որեւիցէ յանցանք էի գործել, Թող պատժէին ինձ: Ի՞նչով էր մեղաւոր մայրս, ի՞նչով էին մեղաւոր քոյրերս, բարեկամներս: Բայց դա մեր երկրի կարգն էր, կորածի, մեռածի յանցանքների համար մնացածներին պատժել...

Հոյսը սկսել էր բացուել. լսելի եղաւ գիւղական ժամատան կոչնակի ձայնը. այլեւս Սառայի մօտ երկար մնալ անկարելի էր. շուտով նրա հայրը կ'ինչներ կտուրից, կը լուացուէր, որ եկեղեցի գնայ աղօթելու: Սառան չէր ցանկանում, որ իւր հայրը մեզ միասին նստած տեսնէր: Զարմանալի բան է սովորութիւնը: Սառան իմ նշանածն էր, քանի տարի էր, որ մայրս այդ նպատակի աղջկան նշանել էր ինձ համար որպէս հարսնացու: Բայց մենք իրաւունք չունէինք միմեանց հետ տեսնուելու, միմեանց հետ խօսելու, մինչեւ այն օրը, քանի որ դեռ քահանան Աստուծոյ սեղանի առջեւ չէր ասել՝ Թէ նա իմ կինն է, իսկ ես նրա ամուսինը: Եւ մեր երկրում խիստ սրբութեամբ էր պահպանւում այդ կարգը:

Ժամատան բարձրութիւնից լսելի եղաւ կոչնակի երկրորդ անգամի զարկը: Ամբողջ Սաւրան այժմ ոտքի վրայ էր: Ծերունիները, պառաւները պիտի գնային ժամ աղօթելու, իսկ աւելի մանկահասակները պիտի գնային դէպի մշակութեան գաշտերը գործելու:

Մեր տունը Սառայենց տնից բաժանուած էր մի ցած միջնապարիսպով միայն: Այդ միջնապարիսպը, գիշերային մթութեան ժամանակ, շատ անգամ եղել էր մի խորհրդապահ վկայ իմ եւ Սառայի տեսութիւնների: Նա կանգնած իրանց բակի կողմից, ես կանգնած մեր բակի կողմից, իսկ մեր մէջտեղում միջնապարիսպը, ամբողջ

ժամերով լռսում էինք, լռսում ու չէինք կշտանում: Իսկ այժմ: — Այժմ ես փախչում էի Սառայից, որպէս մի յանցաւոր, որ արժան չէր նրա սէրին:

Սառային դեռ յայտնի չէին իմ վարպետի արհեստանոցում պատահած անցքի մանրամասնութիւնները. նա դեռ չգիտէր, Թէ ինչ պատճառով ոստիկանութիւնը որոնում էր ինձ, նա միայն մի բան էր լսել, Թէ ես "գողերի հետ եմ ապրում"... Այդ մասին նա մի քանի րոպէ առաջ հայցրեց ինձանից, իսկ ես նրա հարցը Թողեցի առանց պատասխանի: Ամօթը խեղդում էր ինձ. ինչ վատ բան է գողութիւնը... Սառան էլ ինձ չի սիրի, մոռացում էի ես, նա բարի աղջիկ է, նա գողին չի սիրի...

Երբ ես կանգնեցայ, պատրաստւում էի բաժանուել Սառայից, հարցրեց նա.

— Դու գարձեալ նրանց մօտ ես գնում:

— Ո՞ւմ մօտ:

— Այն գողերի մօտ...

— Եթէ դու գիտենայիր, Սառա, Թէ ինչ տեսակ տղերք են նրանք, դու երբէք ինձ չէիր մեղադրի, որ ես անցուցի նրանց հետ մի քանի ամիսներ: Նրանք այնքան սիրելի տղերք են, որ եթէ դու տեսնելու լինէիր նրանց, ինքդ էլ կը սկսէիր սիրել: Նրանք վատ տղերք չեն, Սառա, եւ ես ցաւում եմ, որ հանգամանքները բաժանեցին ինձ նրանցից...

Նա, կարծես Թէ, հանգստացաւ:

— Հաւատում եմ քո խօսքերին, ասաց նա: — Բայց հիմայ ո՞ւր ես գնում:

— Գնում եմ մօրս մօտ:

Այդ միջոցին բակից լսելի եղաւ Սառայի հօր ոտնաձայնը: Նա իջել էր կտուրից, պատրաստւում էր եկեղեցի

գնալու: Սառան գունաթափուեցաւ. նա իսկոյն դուրս գնաց սենեակից, եւ հօր առաջը կարելով, ասաց.

— Գիտես, հայրիկ, Մուրադը եկել է:

— Ո՞րը, ո՞ւր է, հարցրեց հայրը զարմանալով:

— Հէնց այս րոպէիս, այստեղ սենեակումն է:

Նա նրանց խօսակցութիւնը լսում էլ. Սառան խաբեց հօրը. երկրի սովորութիւնը սարսեց նրան սուտ խօսել: Նա չկամեցաւ ցոյց տալ, որ մենք մի քանի ժամեր միասին ենք եղել: Դա կարող էր համարուել հրեշտակի նման մաքուր աղջկայ համար մի ահեակ անպարկեշտութիւն:

Հայրը շտապով ներս մտաւ, դրկեց ինձ, համբուրեց եւ աւետարանական խօսքով յայտնեց իւր ուրախութիւնը, որ վերջապէս գտաւ իւր "մոլորեալ ոչխարին„...:

Նրա խօսքերի մէջ բովանդակւում էր եւ ուրախութիւն եւ յանդիմանութիւն: Նա մոլորեալ ոչխար էլ, հովիւը գտաւ ինձ: Բայց ո՛վ մոլորեցրեց ինձ, ինչ բանում էր իմ մոլորութիւնը, — այդ մասին նա ոչինչ չխօսեց:

Սառայի հայրը խելացի մարդ էր, նա ինձ խորհուրդ չտուեց գնալու մեր տունը, որովհետեւ կարող էր այնպէս պատահել, որ ես այնտեղ եղած ժամանակ, ֆէդրաշները վրահասնէին եւ կալանաւորէին ինձ: Նա ասաց, թէ ոստիկանութիւնը մեր գիւղի տանուտէրից իլթիզամ է առել, տուգանք է նշանակել, եթէ ես մեր գիւղում յայտնուելու լինեմ, իսկոյն մատնէ կառավարութեան ձեռքը, եւ "անպիտան„ տանուտէրը, մի լաւ ծառայութիւն անելու համար, մեծ հաճութեամբ կը կատարէ այդ հրամանը: Նա արդէն, աւելացրեց Սառայի հայրը, զանազան լուրեանների միջոցով հսկում է մեր տան վրայ, որ ինձ բռնել տայ եւ այլն:

Սառայի հօր խօսքերից ես հասկացայ այն բոլոր պատճառները, թէ ինչո՛ւ կառավարութիւնը ինձ ամենայն խստութեամբ որոնում էր: Որպէս վարպետիս, նոյնպէս եւ մեր բոլոր աշակերտներին ու բանուորներին կալանաւորել էին: Միայն ես էլ ճնշել, որ փախստական էի: Քրէական գործերի ժամանակ պարսից դատաւորների քննութիւնը հարցմունքներով, վկաներով կամ այլ հետախուզութիւններով չէ կատարվում, — այլ միայն ծեծով: Նրանք պատժում են նախ քան յանցանքի հաստատուելը: Կալանաւորի ոտները դնում են ֆալախկայի մէջ, այնքան ծեծում են, կամ բանտի մէջ այնքան սարսափելի տանջանքներ են տալիս, մինչեւ նա խոստովանուի, թէ ինքն է գործել յանցանքը: Քանի որ դեռ չէ խոստովանուել, տանջանքները աւելի եւ աւելի սաստկացնում են: Այդ բոլորը փորձել էին թէ վարպետիս եւ թէ նրա գործաւորների վրայ, բայց նրանցից մի որոշ խոստովանութիւն չէին դուրս բերել: Վարպետս ասել էր միայն, թէ բանալիի վրայ դրած դրոշմը, իրաւ է, իւր արհեստանոցի դրոշմն է, բայց թէ ինչպէս է շինուել այդ բանալին կամ ո՛վ է շինել, — այդ մասին տեղեկութիւն չունի: Նոյնը ասել էին եւ արհեստանոցի աշակերտներն ու բանուորները: Մնում էի ես, որ փախստական էի, եւ իմ փախչելը աւելի կասկածաւոր էր դարձրել ինձ: Այդ էր պատճառը, որ ինձ ամենայն խստութեամբ որոնում էին, մտածելով, թէ ինձանով կը լուծուի մեզ դաղտնիքը:

Այդ բոլորը լսելու ժամանակ, փոքր էր ճնում, որ ես յայտնէի դառն իսկութիւնը: Բայց ես դարձեալ զսպեցի ինձ, որ ոչ ոքին չասեմ, մինչեւ քաւոր Պետրոսին չտեսնեմ: Բայց գուցէ դա շատ ուշ կը լինել: Մնում էր մի օր. միւս օրուայ առաւօտը վարպետիս պիտի դուրս բե-

րէին դատապարտութեան հրապարակի վրայ...։ «Ինաս չունի, մտածեցի ես, եթէ այսօր չկարողացայ գտնել քաւոր Պետրոսին, ես ինքս անձամբ կը ներկայանամ գլխաւոր դատաւորին, բոլորը մի ըստ միոջէ կը յայտնեմ, ինչ որ կատարուել է»...

— Դու կը մնաս այստեղ, մեր տանը, ասաց Սառայի հայրը։ — Այստեղ կան ապահով տեղեր քեզ թագցնելու համար. ես կը պահեմ քեզ, մինչեւ վտանգը անցնի։

— Ապա մօրս, քոյրերիս չե՞ պիտի տեսնեմ, հարցրի ես։

— Հարկաւոր չէ նրանց տեսնելու համար անպատճառ ձեր տունը գնաս, նրանց այստեղ էլ կարող ես տեսնել։

Նա դարձաւ դէպի Սառան, ասելով.

— Գնա խնամի Նազանիին կանչիր այստեղ. չասես Մուրադը եկել է, ասա միայն, թէ հայրս կանչում է։ Ո՞վ գիտէ, կնամարդ է, սիրտը բարակ կը լինի, կարելի է որդու անունը լսելով, կը սկսէ զանազան անզգոյշ ձայներ բարձրացնել եւ հարեւանների ուշադրութիւնը իւր վրայ կը դարձնէ։

Սառան վազեց դէպի մեր տունը։

Իմ գրիչը անզօր է նկարագրելու այն անսահման ուրախութիւնը, որով մայրս հանդիպեց ինձ։ Մարդկային լեզուն դեռ չէ ստեղծել այն բառերը, որ ընդունակ լինէին արտայայտելու մօր սրտի զգացմունքները, մօր սրտի ցաւերը։

Քոյրերս նոյնպէս, քնից դեռ նոր վերկացած, իսկոյն ինձ մօտ վազեցին, երբ Սառայից իմացան իմ գալուստը։ Նրանց գգուանքը, նրանց հրճուանքը նոյնքան հրեշտակային էր, որպէս նրանց սիրտը։ «Դու այլեւս չե՞ս գնայ, դու մեզ մօտ կը մնաս», անդադար հարցնում էին նրանք։ Ես ոչինչ չէի գտնում պատասխանելու։

Մայրս հաւանեց Սառայի հօր կարգադրութիւնը, որ ինձ իրանց մօտ էր պահել եւ չէր թողել, որ մեր տունը գնամ, որովհետեւ գիւղի գզիրը (տանուտէրի օգնականը) ամեն առաւօտ գալիս էր մեր տունը ինձ որոնելու համար։

Չնայելով, որ այդ բոլորը ինձ մեծ ուրախութիւն էր պատճառում, կրկին տեսնում էի մօրս, քոյրերիս, կրկին տեսնվում էի այն շրջանի մէջ, որ երեխայութիւնից ինձ սիրելի էր, — բայց միեւնոյն ժամանակ մի դառն, անախորժ զգացմունք տանջում էր ինձ, երբ մտաբերում էի, որ ես մի թշուառ յանցաւոր եմ, ինձ որոնում են, ինձ կամենում են կալանաւորել...։ Մօրս եւ բոլոր բարեկամներիս ջանքն այն էր, որ ես չբռնուեմ, որ ինձ բանտը չտանեն։ Բայց մի՞թէ դրանով կը հանգստանար իմ խիղճը, մի՞թէ ես կարող էի մոռանալ այն, ինչ որ գործել էի... այն, որի պատճառով պատժվում էին անմեղ մարդիկ...

Մայրս սկսեց շնորհակալութիւն յայտնել Սառայի հօր մասին, թէ նա ամեն կերպով պահում էր եւ պաշտպանում էր մեր ընտանիքը, եթէ նա չլինէր, սարվազները եւ ֆէրրաշները աւելի նեղութիւններ կը տային։ Նա աւելացրեց, որ իմ հօրեղբայրը իրան այնպէս հեռու էր պահում, որ ամենեւին չէր ուզում լսել, թէ իւր եղբօր ընտանիքը չարչարվում է բարբարոսների ձեռքում եւ այլն։

— Իսկ քաւոր Պետրոսը, հարցրի ես։

— Աստուած նրան բարի տայ, պատասխանեց մայրս մի առանձին զգացմունքով։ — Այդ պատուական մարդը հանգստութիւն չունէր, օրը մի քանի անգամ գալիս էր

մեզ մօտ, սիրտ էր տալիս, մխիթարում էր, ասելով, մի վախեցէք, Աստուած ողորմած է, այդ բոլորը կ'անցնի: Նա ասում էր, որ շատ անգամ Աստուած իւր սուղ ծածկներին փորձելու համար փորձանքի մէջ է ձգում. օրինակ էր բերում Յոբ երանելիի կրած տանջանքները եւ ուրիշ շատ բաներ սուրբ գրքերից:

"Գարշելի"... ասեցի մտքումս, եւ զսպելով իմ վրդովմունքը, հարցրի.

— Հիմայ նա ո՞րտեղ է:

— Քանի շաբաթ է, որ չէ երեւում, պատասխանեց մայրս: — Միանգամ եկաւ ինձ մօտ, ասաց, Նազանի, ես գնում եմ Մուրադին որոնելու. ջահիլ տղայ է, անփորձ է, չլինի թէ բռնուի. մենք նրան պէտք է թագցնենք, մինչեւ Աստուծոյ բարկութիւնը անցնի: Խեղճ մարդ, արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա աչքերից, կարծես, իւր հարազատ որդու համար էր լաց լինում:

Այդ միեւնոյն խօսքերը ասաց ինձ քաւորկինը: Բայց ես շատ լաւ էի հասկանում, թէ քաւոր Պետրոսը ինձ ինչ մտքով էր որոնում...

Սառայի հայրը գնաց եկեղեցի ոչ այնքան աղօթելու համար, որքան լսելու, թէ մարդիկ դրսում ինչ են խօսում: Մեր գիւղացիները սովորութիւն ունէին, ժամից դուրս գալուց յետոյ, հաւաքուել եկեղեցու բակում եւ զանազան բաների վրայ խօսել: Նա պատուիրեց ինձ, որ իրանց տանը մնամ, մինչեւ իւր վերադարձը:

Մօր սէրը, քոյրերիս հրճուանքը, Սառայի ներկայութիւնը առժամանակ մեղմացրին իմ մէջ այն կատաղութիւնը, որ տիրել էր իմ սրտին այդ տունը մտնելուց առաջ: Թանգագին բարեկամներիս ջերմ գգուանքը,

նրանց անկեղծ փաղաքշանքը, կարծես թէ, թմրեցրին իմ զգայմունքները մի տեսակ անբացատրելի արբեցութեան մէջ, մոռանալ տալով այն բոլոր նախամտածութիւնները, որ ես վճռել էի սիրելի վարպետիս ապատութեան համար:

Սառան ուրախ էր, ինչպէս մի գարնանային ծիծեռնակ. նա անդադար ճախրում էր իմ շուրջը, աշխատելով կատարել մինչեւ անգամ իմ ամենափոքր հաճոյքները: Քոյրերս չէին հեռանում իմ մօտից, անթիւ հարցեր էին առաջարկում, ուզում էին խօսել, անընդհատ կերպով խօսել ինձ հետ: Մայրս նստած էր իմ մօտ, եւ իմ աջը բռնած իւր ձեռքի մէջ, զմայլած նայում էր իմ երեսին եւ երբեմն խուլ հառաչանքներ էր արձակում: Խնճոր կնիկ, ծրքան ցաւեր, ծրքան տրտմութիւններ թագնուած էին նրա բեկեալ սրտի մէջ...: Սիրելի ամուսնի կորստից յետոյ, նա միայն իմ մէջ էր գտնում իւր մխիթարութիւնը... ես էի նրա տան սիւնը... ես պիտի վառ պահէի հայրենական օջախի կրակը... նրա բոլոր յոյսերը ինձ վրայ էին դրուած...: Իսկ այժմ: — Այժմ ամեն յոյս պիտի խորտակուէր, այժմ մայրական բոլոր բաղձալի փափագները պիտի ոչնչանային...: Նրա որդին մի սարսափելի յանցաւոր էր, որին վաղ թէ անագան գուցէ կախաղան կը բարձրացնէին...

Ներեւի, այդ դառն մտածմունքներն էին պաշարել մօրս, որ նա այնքան տխուր էր: Բայց նա ինձանից թագցնում էր իւր վշտերը, որ ինձ աւելի ցաւեր չպատճառէ:

Սառայի հայրը վերադարձաւ եկեղեցուց բաւական ուշ. նա պատմեց մեզ շատ նորութիւններ եւ ի միջի այլոց յայտնեց, որ քաւոր Պետրոսին տեսնողներ են եղել Հին-քաղաքում, նա ասել է, որ երեկոեան կը վերա-

դառնայ իւր տունը: Այդ լուրը ինձ սաստիկ ուրախութիւն պատճառեց: "Վերջապէս նա իմ ձանկը կ'ընկնի եւ ես դիտեմ ինչ կ'անեմ"... մտածում էի ես, եւ մեծ անհամբերութեամբ սպասում էի երեկոյին:

Բայց երեկոեան մի քանի անգամ մարդ ուղարկեցինք նրա տունը, պատասխան ստացանք, թէ դեռ չէ եկել: Ես դարձեալ սկսեցի անհանգիստ լինել, դարձեալ դառն մտածութիւններ պաշարեցին ինձ. յուսահատութիւնը խեղդում էր ինձ, չգիտէի թէ ինչ պէտք է անել:

Արեւը մտաւ. մութը պատեց աշխարհը: Դա տադնապալի վերջին գիշերն էր: Եթէ այս գիշեր փրկութիւն չլինէր վարպետիս համար, առաւօտեան ամեն յոյս պէտք էր կորած համարել: — Առաւօտեան նրան պիտի դուրս հանէին դատապարտեալների հրապարակի վրայ...: Այդ միտքը սարսափեցնում էր ինձ:

Գիշերը ես անցկացրի կատարեալ տենդային դրութեան մէջ: Ոչ քնել կարողացայ եւ ոչ արթուն էի: Ինձ տիրել էր մի տեսակ կատաղութիւն, որ պահում է մարդուն ալէկոծութեան մէջ, բայց միեւնոյն ժամանակ թոյլ չէ տալիս տեղից շարժուել, ինչպէս ծովը ծփում է իւր ընդանակի մէջ: Ես նոյն րոպէում պէտք է թռչէի, վազէի, գնայի այնտեղ, ուր անմեղ մարդը պիտի դատապարտուէր: Բայց, կարծես, մի աներեւոյթ ձեռք կաշկանդել էր ինձ. իմ կամքի, բնաւորութեան զօրութիւնը թուլացել էր...:

Ես հիւանդ էի: Գլուխս սաստիկ ցաւում էր, ամբողջ մարմինս վառվում էր կրակի մէջ: Մայրս, քոյրերս, Սառան չհեռացան իմ անկողնից: Նրանց խօսքերը ես լսում էի, հասկանում էի, բայց իմ պատասխանները լինում էին այն աստիճան անկապ, անտեղի եւ խառնաշփոթ, որ մայրս մեծ զարհուրանքով մտածում էր, թէ սիրելի որդին խելագարուած է...:

Առաջին անգամն էր պատահում ինձ արթնութեան մէջ երազներ տեսնել: Երբ աչքերս խփում էի, ինձ երեւում էր, թէ գտնվում եմ Հին-քաղաքում: Առաւօտ է: Փողոցներում տիրում է յուզմունք եւ իրարանցում: Մարդիկ շտապով վազում են դէպի դատապարտեալների հրապարակը: Ես էլ այդ խռովեալ բազմութեան հետ վազում եմ դէպի այն կողմը: Հրապարակի վրայ ասեղ գցելու տեղ չկայ. ամբողջ տարածութիւնը պատած է հետաքրքիր հանդիսատեսներով: Հրապարակի շուրջը դըռնուած ծառերի ճիւղերն անգամ ծանրաբեռնուած են մարդկիկներով: Ներանք երեւում էին ինձ այնքան մանր, փոքրիկ ծառերի նման: "Ի՞նչ կայ, ի՞նչ բանի է սպասում այդ խուռն բազմութիւնը", հարցնում էի ես: — "Մի յանցաւորի ձեռքը պիտի կտրեն", լինում էր պատասխանը:

Սարսափելով այդ խօսքից, աչքերս բաց էի անում, այլ եւս ոչինչ չէի տեսնում, ոչինչ չէր երեւում: Ցետոյ նորից էի միայն մօրս տխրամած դէմքը, որը նստած էր իմ անկողնի մօտ, տեսնում էի Սառայի արտասուալի աչքերը, տեսնում էի իւղային ճրագը, որը աղօտ լուսով վառվում էր իմ քնարանում: Քոյրերս պառկած էին. ամբողջ տունը նիրհում էր. երկու հոգի միայն արթուն էին մնացել — մայրս եւ սիրող աղջիկը...:

Այդ իրականութիւն էր. իսկ մնացածը երազ:

Աչքերս կրկին փակեցի, մտածելով, թէ արդէն անցաւ սոսկալի տեսիլքը: Դարձեալ միեւնոյն երազի շարունակութիւնը. — նոյն հրապարակը, նոյն բազմութիւնը, նոյն մարդիկը կախուած ծառերի ճիւղերից: Բայց տես-

լանը այժմ մասամբ փոխուել էր: Հրապարակի կենարո-
նում, դահլիճը, ոտքից ցգլուխ կարմիր հագնուած, ձեռ-
քում սրում էր դանակը: Նրա մօտ կանգնած էր թշուառ
դատապարտեալը, գունաթափ, մաշուած եւ կիսամեռ:
Բանտը խլել էր նրանից ամեն կենդանութիւն: Ես հազիւ
կարողացայ ճանաչել նրան: Դա իմ վարպետն էր, այն
բարի արհեստաւորը, որ այնքան սիրում էր ինձ, այն
մարդը, որ հօր նման ուրախանում էր, երբ տեսնում էր
իմ յառաջադիմութիւնը արհեստի մէջ, այն մարդը, որ
խոստանում էր բախտաւորացնել ինձ, առանձին արհես-
տանոցի տէր շինել: Բայց ինչով վարձատրեց նրա առա-
քինութիւնները ապերախտ աշակերտը, — դաւաճանու-
թեամբ: Այդ պատիժը, որ կրում էր անմեղ մարդը,
իմ պատճառով էր: Ես ձգեցի նրան այդ սոսկալի փոր-
ձանքի մէջ...:

Այդ մտածութիւնների յուզմունքի մէջն էի ես,
երբ դահլիճը մօտեցաւ դատապարտեալին: Ամբողջ բազմու-
թիւնը դղրդաց մի խուլ, գերեզմանական շշնջիւնով: Կար-
ծես, բոլորի բերանից լսւում էր "անմեղ" բառը: Ես
համբերել չկարողացայ: Յեղափոխի նման ձչալով, աղաղա-
կելով, պատառեցի խիտ ամբոխը, եւ մի ակնթարթում
յայտնուեցայ դահլիճի մօտ: — "Կտրեցէք իմ ձեռքը,
դէնքերի ես որոտի ձայնով, — այդ ձեռքն է շինել այն
բանտլին„...: Ամբողջ բազմութեան վրայ տիրեց խորին
լռութիւն:

Այդ ձայնի հետ ես զարթնեցայ:

Օրը լուսացել էր արդէն. արեւի առաջին ճառա-
գայթները անցել էին իմ քնարանի մէջ: Մայրս դար-
ձեալ նստած էր իմ անկողնի մօտ, իսկ վոքր ինչ հեռու
կանգնած էր մի մարդ:

Մայրս սարսափեց, երբ լսեց իմ վերջին խօսքերը,
բայց կանգնած մարդը հանգստացրեց նրան, ասելով.

— Յանձն տղան երազների մէջ է խօսում:

Երբ ուղիղ նայեցի այդ մարդու երեսին, տեսայ, որ
նա մեր քաւոր Պետրոսն էր: Նրա երեւոյթը ինձ բոլորո-
վին սթափեցրեց իմ անրջային զառանցութիւններից: Ես
այժմ գանվում էի կատարեալ արթնութեան մէջ, բայց
դարձեալ կրկնեցի նոյն խօսքը, որ ասել էի երազիս մէջ.

— Այո, ես եմ շինել այն բանալին...

Չգիտեմ քաւոր Պետրոսը ինչ ասաց, ինչ ակնար-
կութիւն արեց դէպի իմ մայրը, միայն այսքանը տեսայ,
որ նա հեռացաւ իմ քնարանից, ես եւ քաւոր Պետրոսը
մնացինք միայնակ:

Ես զգում էի ինձ բաւական լաւ. գլուխս ցաւը ան-
ցել էր. մարմնիս ջերմութիւնը մեղմացել էր, միայն ան-
գամներիս մէջ տիրում էր մի տեսակ յոգնածութիւն, մի
տեսակ թուլութիւն: Այսու ամենայնիւ, ես վերկացայ
անկողնից եւ հագնուեցայ: Քաւոր Պետրոսը օգնեց ինձ
լուացուելու: Սառն ջուրը բաւական զովացրեց իմ գլուխը,
բաւական կազդուրեց իմ բորբոքուած ուղեղը:

Մարդկային բնաւորութեան մէջ երբեմն կատարվում
են այնպիսի հոգեբանական փոփոխութիւններ, որ շատ
դժուար է լինում բացատրել: Կան մարդիկ, որոնց վրայ
որքան եւ զայրացած լինես, որքան եւ նախատալտաս-
տուած լինես նրանց յանդիմանելու, անարգելու եւ մինչեւ
անգամ սպաննելու, բայց հէնց որ նրանց երեսը տեսնում
ես, իսկոյն, կարծես թէ մի մոգական ազդեցութեամբ, քո
սրտի եւ հոգու նախկին լարուած տրամադրութիւնը
թուլանում է, բարկութեան խստութիւնը մեղմա-
նում է, եւ դու ընկնում ես կատարեալ սառնասրտու-

թեան մէջ։ Նոյն ապրեցութիւնը գործեց ինձ վրայ եւ քաւոր Պետրոսը։

Ես նրա դէմ զայրացած էի. ես մահուան չափ ատում էի այդ գարշելի մարդուն, ես վճռել էի վարուել նրա հետ վրէժխնդրութեան բոլոր բարբարոսութեամբ, — բայց հէնց որ նրա պատկառելի երեսը տեսայ, իմ բոլոր սրտմտութիւնը, իմ բոլոր կրքերը փշրուեցան, խորտակուեցան այդ խորհրդաւոր մարդու կախարդիչ զօրութեան առջեւ...։ Զգիտեմ ինչ պէտք էր վերաբերել այդ փոփոխութիւնը, արդեօք իմ պատանեկական բնաւորութեան թուլութեանը, թէ իմ կամքի անհաստատութեանը...։

Բայց ես այնքան քաջութիւն ունեցայ, որ պահանջեցի առանձնութեան մէջ խօսել նրա հետ։

— Ես էլ դրա համար հեռացրի քո մօրը, ասաց նա մեղմութեամբ եւ նստեց իմ մօտ։

— Մուրատ, շարունակեց նա, առանց թոյլ տալու, որ ես խօսեմ։ — Դու ցանկացար ինձ հետ առանձին խօսել. հասկացայ քո միտքը եւ դրա համար գովում եմ քո խելացութիւնը։ Բայց առանց քո խօսքերը լսելու, ես գիտեմ, թէ դու ի՞նչ պիտի ասես ինձ։ Դու պիտի ասես, քաւոր Պետրոս, այն բանալին, որ ես շինեցի քեզ համար, նրանով կատարուել է մի մեծ չարագործութիւն, գողացուել են թանգագին իրեղէնները, եւ որպէս յանցաւոր, բռնուել են եւ պատժվում են անմեղ մարդիկ։ Դու պիտի ասես, քաւոր Պետրոս, բանալին քո ձեռքումն էր գտնվում, ուրեմն, թէ՛ կասկածանքը եւ թէ՛ պատասխանատուութիւնը քեզ վրայ է ընկնում։ Դու այնքան ազնիւ ես եւ բարեսիրտ, որ կը պահանջես ինձանից, որ ես անպատճառ պատասխանատուութիւնը ինձ վրայ առնեմ եւ ազատեմ անմեղ մարդիկներին դատաստանի բարբարոսութիւններից։ Իսկ եթէ ես չլսեմ քեզ, դու այնքան անաչառ կը լինես, որ չես թագցնի չարագործութիւնը, կը դիմես որտեղ հարկն է, կը մատնես ինձ, եւ կը յայտնես բանալիի ամբողջ պատմութիւնը...։

— Կարծեմ, ես նախազուշակեցի բոլորը, ինչ որ դու մտքումդ դրած ունէիր, այդպէս չէ՞։

— Ուղիղ այդպէս է։

— Սիրում եմ քո անկեղծութիւնը եւ ուրախանում եմ քո ճշմարտախօսութեան վրայ։ Ես էլ, եթէ քո տեղը լինէի, այսպէս կը վարուէի. ես էլ թոյլ չէի տալ, որ չարագործութիւնը ծածկուէր, իսկ անմեղութիւնը նրա փոխարէն պատժուէր։

Ես չկարողացայ իմ վրդովմունքը զսպել։

— Ուրեմն ինչո՞ւ թոյլ տուեցիք, որ անմեղութիւնը պատժուի։ Մինչեւ այսօր ի՞նչ բանի էիք սպասում, որ ծածկեցիք չարագործութիւնը։ Միթէ ձեր պատճառով չէր, որ դժբախտ վարպետիս ամբողջ արհեստանոցը, կայքը, կալուածները եւ բոլորը, ինչ որ ունէր, աճուրդով վաճառեցին, ու նրա ողորմելի ընտանիքը օրեկան հացի կարօտ թողեցին։ Միթէ ձեր պատճառով չէր, որ խեղճ վարպետիս բանտի մէջ մաշեցին, իսկ հիմայ, գուցէ այս րոպէիս, դատապարտեալների հրապարակի վրայ, դահիճը կտրում է նրա ձեռքը։ Ինչո՞ւ թողեցիք, որ այդ բոլոր բարբարոսութիւնները կատարուէին, եթէ դուք խիղճ ունէիք, եթէ ձեր սրտումը Աստուծոյ երկիւղը կար, եթէ դուք յարդում էիք արդարութիւնը։ Իսկ այժմ, երբ բանը բանից անցել է, նոր եկել էք, ու իմ գլխին քարոզներ էք կարդում։

Նա պատասխանեց, պահպանելով իւր սառնասրտութիւնը.

— Իրաւացի եմ համարում քո մանկական սրտի բարկութիւնը, շատ իրաւացի: Դա մի լաւ նշան է, որ դու բարոյապէս փչացած տղայ չես: Բայց լսի՛ր, Մուրատ, լսի՛ր ցաւալի իրողութիւնը:

Վերջին խօսքերը արտասանելու ժամանակ նրա ձայնը սկսեց դողդողալ եւ աչքերումը յայտնուեցաւ արտասուք:

— Այն խիթալն բանալին, որ դու շինեցիր ինձ համար, ես պահում էի իմ մօտ, իբրեւ մի անմոռանալի յիշատակ, որ հայրը կարող է ունենալ սիրելի որդուց: Դա քո ձեռքի առաջին գործն էր եւ այդ պատճառով ինձ համար թանգագին էր: Բայց երեւում է, որ Աստուած կամեցել էր ինձ պատժել հէնց այն բանով, որը իմ սրտին շատ մօտ էր: Յանկարծ բանալին անյայտացաւ: Ո՛վ տարաւ, ո՛րտեղ կորաւ, — մինչեւ այսօր մտածում եմ, մտածում եւ ոչինչով բացատրել չեմ կարողանում: Նրա կորստից մի շաբաթ յետոյ կատարուեցաւ քեզ յայտնի չարագործութիւնը: Այն օրից ես ամեն տեղ մեն էի գալիս, ամեն տեսակ հարցուփորձ դործ էի դնում, դուցէ մի հնարքով կարողանամ երեւան հանել կատարուած եղելութեան դաղանիքը: Բայց իմ բոլոր ջանքերը անցան ապարդիւն: Այժմ ես մոլորուած եմ տարակուսութիւնների մէջ. մտատանջութիւնը խեղդում է ինձ. չգիտեմ, թէ ինչ պիտի անեմ, չգիտեմ, թէ ի՞նչով կարող եմ քաւել այն յանցանքը, որ ինքս չեմ դործել, այլ իմ միամտութեան պատճառով կատարուել է...:

Նրա աչքերը դարձեալ լցուեցան արտասուքով: Այդ խօսքերը արտասանում էր նա մի այնպիսի մեղմ, համեստ եւ անկեղծ եղանակով, որ կարծես, ինքը ճշմարտութիւնը լսում էր նրա շրթունքներով:

Ես հաւատացի:

Ես այն հասակում յիմար տղայ չէի, բայց այնքան խելահաս եւս չէի, որ կարողանայի խորին կերպով քննել քաւոր Պետրոսի խօսքերը: Ես գոնէ այնքան հասկացողութիւն չունէի, որ հարցնէի նրանից. — լաւ, դէյուք թէ բանալին քո մօտից անյայտացաւ, կամ մի ուրիշ մարդ գողացաւ քեզանից: Բայց այդ ուրիշ մարդը որտեղից կարող էր գիտենալ, որ քո մօտ մի այսպիսի բանալի էր պահուած: Դէյուք թէ գողացան, այլ դու կորցրիր: Բայց գոնողը ինչպէս կարող էր հասկանալ, որ այդ բանալին կը բաց անէ մի անյայտ երկաթէ արկղի դռնակը, որը դրած է այս ինչ ամրոցում: Այդ հարցերից եւ ոչ մէկը չառաջարկեցի նրան, եւ ոչ հետաքրքիր եղայ տեղեկանալու, թէ այն ինչ բանալի էր, որ դու առաջին անգամ տուեցիր ինձ եւ պատուիրեցիր նրա նմանը շինել: Միթէ այդ բանալին յիշեալ արկղի իսկական բանալին չէր: Ո՞վ տուեց քեզ իսկականը, կամ ինչ նպատակով շինուեցաւ երկրորդը: Ինչո՞ւ էիր դու սկզբում ինձ ամենայն խստութեամբ պատուիրում, որ իմ շինած բանալիի գոյութեան մասին ոչ ոքի հետ չխօսեմ, ոչ ոքի չյայտնեմ, մինչեւ անգամ իմ մօրը: — Կրկնում եմ, որ այդ հարցերից եւ ոչ մէկը իմ մտքում չեկաւ, որ առաջարկեի նրան: Ես քարացածի նման ճնացել էի ապշած, զարմացած, իմ ուղեղին տիրել էր մի տեսակ մթին թմրութիւն:

Նկատելով իւր խօսքերի ազդեցութիւնը, քաւոր Պետրոսը մինչեւ անգամ ժամանակ չտուեց, որ ես կարողանայի մտածութիւններս ամփոփել եւ նրան մի բան ասել: Նա շարունակեց.

— Այժմ, սիրելի զաւակս, իմ խղճմտանքի վրայ մի ծանր բեռն է դրուած. ես քուն ու հանգստութիւն

չունեմ. գիշեր ու ցերեկ տանջվում եմ այն մտածութիւնով, որ իմ անխոհեմութեամբ պատճառ եղայ մի աղետալի գործի եւ շատերին դժբաղդութեան մէջ ձգեցի: Զգիտեմ, ինչով կարող եմ քաւել այդ մեղքը:

Ես սթափուեցայ:

— Նրանով, պատասխանեցի, — որ հէնց այս րոպէիս պիտի գնաք պատուորի մօտ եւ յայտնէք նրան, թէ մի՛ կորցրէ տուէք այդ անմեղ մարդու ձեռքը, որովհետեւ յանցաւորը դուք էք:

— Ես այդ կ'անէի եւ մեծ յօժարութեամբ կ'անէի, բայց նրա ձեռքը այլ եւս չեն կարող կտրել:

— Ի՞նչու:

— Այս առաւօտ երբ գնացին, որ բանտից դուրս բերեն նրան եւ տանեն դատապարտեալների հրապարակի վրայ վճիռը կատարելու, գտան բանտի դռները խորտակուած, պահապաններից մի քանիսը սպանուած, իսկ կալանաւորը անյայտացած:

Իմ կեանքում ոչինչ ինձ այնքան չէ ուրախացրել, որքան ես ուրախացայ, լսելով վարպետիս ազատութեան լուրը: Ես իսկոյն յիշեցի Կարօի խօսքը, որ ասել էր ինձ, թէ "մենք նրան կը փախցնենք„...: Ընկերներս կատարեցին իրանց խոստումնքը, նրանք չխաբեցին ինձ: Ես այդ մասին քաւոր Պետրոսին ոչինչ չյայտնեցի, նկատելով, որ նա տեղեկութիւն չունի, թէ ինչ հնարքով կամ ո՛վքեր փախցրին նրան բանտից: Միայն ասացի.

— Լաւ, դիցուք թէ նա փախչելով բանտից, դրանով կարողացաւ իւր ձեռքը ազատել դահճի դանակից, բայց այնքան չարչարանքներ, այնքան վնասներ որ կրեց նա, տուննից, կայքից, հարստութիւնից զրկուեցաւ, — այդ բոլորը ոչինչ, դուք ձեզ մեղապարտ չէք համարում այդ բոլորի մէջ:

— Համարում եմ, ինչպէս չեմ համարում: Ինձ այնպէս է թուում, որ այդ բոլոր վնասները ես պատճառեցի նրան: Եթէ ես այն անիծեալ բանալին չինել տայի, այդ վնասները նրան չէին հանդիպի: Բայց միայն Աստուծուն յայտնի է, թէ որքան անպարտ եմ ես...:

Վերջին խօսքերի միջոցին նա ձեռքը տարաւ դէպի մօրուքը, եւ շապիկի թեւքը յետ քաշուելով, երեւան հանեց նրա մերկ բազուկը: Ամեն անգամ այդ բազուկը տեսնելիս, ինձ սիրում էր մի սրբազան սարսուռ եւ սիրտս սկսում էր դողդողալ մի անբացատրելի հոգեւոր երկիւղածութեամբ: Նրա վրայ դրոշմուած էր Նրուսաղէմի վանքի սուրբ կնիքը, որը պատկերացնում էր իւր մէջ այն նուիրական տեղերը, որոնց հետ կապուած են ամբողջ քրիստոնեայ աշխարհի սրտերը: Իսկ ձեռքի վրայ դրոշմուած էր մի խաչ — սիրոյ եւ եղբայրութեան նշանը — Յիսուս Քրիստոսի ուխտի նշանը, որը պատուիրեց Նա կրել, որպէս մի հոգեւոր զէնք արդարութեան եւ ճշմարտութեան համար մարտնչելու: Մի՞թէ մի այսպիսի ձեռքը, որ կրում է իւր վրայ այդ քրիստոնէական զինուորութեան նշանը, ընդունակ կը լինի չար գործելու:

Քաւոր Պետրոսը մահտեսի էր: Նա իւր կեանքում մի քանի անգամ այցելութիւն էր գործել Նրուսաղէմի վանքը եւ իւր ձեռքերը, բազուկները դրոշմել էր սուրբ ուխտի կնիքով:

Երբ նրանից հարցրի՝ — Ուրեմն ինչ հատուցում պիտի անէք այն անմեղ մարդուն, որին դուք թէեւ անգիտակցաբար դժբախտացրիք, — նա պատասխանեց.

— Ես այդ մասին մտածել եմ եւ վճռել: Լսիր, Մուրատ, ես, ինչպէս ասում են հէքիաթների մէջ,

պէտք է երկաթէ ցուպ կրեմ ձեռքիս, պէտք է երկաթէ տրեխներ հագնեմ, վերջապէս պէտք է երկաթէ շղթայ անցկացնեմ պարանոցիս, եւ երկրէ երկիր, աշխարհից աշխարհ ման գամ, մուրացկանութիւն անեմ, փող հաւաքեմ, որ նրա կրած վնասների փոխարէնը վճարեմ, որպէս զի խիղճս հանգստացնեմ:

— Ուրեմն դուք վճռել էք գնալ օտար աշխարհ:

— Անպատճառ:

— Եւ այդ նպատակով:

— Այո, այդ նպատակով:

Ես հիացած մնացի նրա առաքինութեան վրայ:

Րոպէական մտածութիւնից յետոյ խօսեց նա.

— Ես քեզ խոստովանուեցայ իմ բոլոր յանցանքը, խոստովանուեցայ նաեւ թէ ինչով դիտաւորութիւն ունեմ քաւելու այդ յանցանքը: Հիմայ ես դառնում եմ դէպի քեզ, Մուրադ, դու խելացի տղայ ես, դու հասկանում ես այնքան, որքան կարող է հասկանալ մի աղնիւ, հասակաւոր մարդ: Խոստովանուիր, քո խիղճը, քո սիրտը չէ՞ ասում քեզ, որ վարպետիդ դժբախտութեան մէջ դու նոյնքան յանցաւոր ես, որքան ես: Այսինքն ուզում եմ ասել, որպէս ես անգիտակցական պատճառ դարձայ նրա անբախտութեանը, այնպէս էլ դու: Կորստաբեր բանալին շինել տալու ժամանակ ես, ի հարկէ չգիտէի, թէ ծրագիծ չարիքների դուռն պիտի բաց անէ նա. այնպէս էլ դու չգիտէիր, երբ շինեցիր: Ուրեմն մենք երկուսս էլ մեր անմեղութեամբ պատճառ դարձանք մի մեղաւոր գործի: Այդ մեղքը տարածվում է մեր երկուսի վրայ: Մէ՞թէ միասին չի պիտի քաւենք նրան:

— Այո, միասին: Բայց ես ի՞նչ կարող եմ անել:

— Այն, ինչ որ ես պիտի անեմ: Դու անպատճառ պիտի գաս ինձ հետ. դու պիտի թողնես այդ երկիրը:

— Լսիր, Մուրադ, քո վարպետը, իրաւ է, ազատուեցաւ պատժուելուց, փախաւ բանտից, բայց դրանով գործը պէտք է վերջացած չհամարել, ընդհակառակն, աւելի ծանրացաւ: Կառավարութիւնը այսուհետեւ աւելի խստութեամբ կը սկսէ որոնել նրան եւ նրա մարդիկներին, որոնք նոյնպէս փախած են, — այսինքն քեզ: Երբ քեզ բռնելու լինեն, այլ եւս փրկութիւն չկայ, անպատճառ կախաղան կը բարձրացնեն: Այդ ես գիտեմ: Քո անբախտ մայրը կը մեռնի կսկիծից եւ քո հօր տան ճրագը իսպառ կը հանգչի: Եթէ ցանկանում ես, որ քո կեանքը ապահով դրութեան մէջ լինի, պէտք է անպատճառ հեռանաս այդ երկրից: Այստեղ պահուել չես կարող: Կը գնանք օտար աշխարհ, մի քանի տարի անց կը կացնենք պանդխտութեան մէջ, փող կը վաստակենք, յետոյ կը վերադառնանք: Մինչեւ մեր վերադարձը ամեն ինչ փոխուած կը լինի, ամեն բան մոռացուած կը լինի: Պարսից դատարանների վճիռները ժամանակաւոր են. փոխուեցան դատաւորները, փոխվում են եւ վճիռները: Ոչ աստեղական դիւանագրութիւն կայ եւ ոչ որ եւ իցէ արձանագրութիւն: Ներկայ մարդը չգիտէ, թէ իւր նախորդի օրերում ինչեր են կատարուել:

Վերջացնելով իւր բացատրութիւնները, նա դարձաւ դէպի ինձ, ուղղելով իմ երեսին նայելով.

— Ասա, համաձայն ես ինձ հետ գալու:

— Ես համաձայն եմ, բայց չգիտեմ, թէ մայրս ինչ կ'ասէ:

— Մայրդ շատ ուրախ կը լինի: Նա գիտէ, որ դու այստեղ ձնալ կարող չես. միշտ պէտք է թաղնուած լինես, միշտ պէտք է փախստականի կեանք վարես: Ինչ այսպէս ապրել անկարելի է:

— Ուրեմն դուք խօսեցէք մօրս հետ:

— Ես անպատճառ կ'առնեմ նրա համաձայնութիւնը:

Գ.

ՊԱՆԴԽՏՈՒԹԻՒՆ

Աշնան վերջը մօտեցաւ: Մեր գիւղը օրըստօրէ ստանում էր տխուր կերպարանք: Տերեւաթափ այգինները կորցրին իրանց գեղեցկութիւնը եւ մերկ դաշտերի գունաթափ երեսը ներկայացնում էր մի հիւանդոտ պատկեր: Ամեն երեւոյթ տրամադրում էր դէպի տխրութիւնը: Թռչուններն անգամ լուռ էին եւ շտապում էին շուտով թողնել այդ երկիրը, որ այլ եւս նրանց ուրախացնել կարող չէր:

Մի եւ նոյն զգացմունքներով լի էր եւ իմ սիրտը: Հայրենի երկիրը ինձ համար բանտ էր դարձել: Ինձ թըւում էր, որ բոլոր շրջապատող առարկաները այնքան ծանրացել էին իմ վրայ, որ ճնշում էին, խեղդում էին ինձ եւ շունչ առնելու հնար չկար: Ես կորցրել էի իմ ազատութիւնը: Ես մի անբախտ փախստական եւ դեռ չպատժուած յանցաւոր էի: Դրսից նեղացնում էր ինձ օրէնքի ահն ու երկիւղը, իսկ ներսից՝ — խղճի խայթը...:

Մայրս շուտով կարողացաւ հասկանալ իմ դրութիւնը. նա խելացի կին էր, եւ մի օր դարձաւ դէպի ինձ այս խօսքերով.

— Մուրադ, դու մեր երկրում անունդ կոտրեցիր... կեղծ դրամ դարձար... դու այլ եւս այստեղ չես մնալու...

Այդ խօսքերի մէջ խառնուած էր եւ մօր սրտի կրակիծը եւ մի դառն յանդիմանութիւն, որի նմանը մինչեւ այնօր լսած չէի նրանից:

— Ես այդ զգում եմ, մայրիկ, պատասխանեցի ես: — Ես այդ գիտեմ, որ կեղծ դրամը ձանձրացուած տեղում այլ եւս չի մնասուն, բայց այդ դրութիւնից ազատուելու համար չգիտեմ, թէ ինչ պէտք է անեմ:

— Դու պիտի գնաս օտար աշխարհ. տացէ Աստուած, որ այնտեղ օրինաւոր մարդ դառնաս...:

Արտասուքը թոյլ չտուեց նրան շարունակել իր խօսքը: Նա թաշկինակը տարաւ դէպի աչքերը, սկսեց դառն կերպով հեկեկալ:

Մայրս սկզբում ինձ բոլորովին անմեղ էր համարում. հաւատացած էր, որ ես ոչինչով խառն չեմ վարպետիս արհեստանոցում կատարուած գործի մէջ, եւ այդ պատճառով մխիթարվում էր, մտածելով, թէ իւր որդին թէեւ հալածվում է, թէեւ կասկածանքի ենթակայ է, բայց արդար է: Իսկ սկսեալ այն րոպէից, երբ ես իմ անրջային տաղնապի մէջ արտասանեցի այն աղէտալի խօսքերը, թէ "ես եմ շինել այն բանալին„ — այդ րոպէից նա համարում էր ինձ գող, աւազակ, կամ աւազակների ընկեր: Ես առիթ չունեցայ նրան բացատրելու գործի իսկութիւնը, որովհետեւ այդ մասին նա ինձ հետ չէր ախորժում խօսել, որովհետեւ նրա կոտրուած սրտին խիստ ծանր էր լսել, իւր կարծիքով, արդէն փչացած, անբարոյականացած եւ յանցաւոր որդու դառն խոստովանութիւնները...: Այդ մասին նա խօսացել էր միայն քաւոր Պետրոսի հետ, իսկ քաւոր Պետրոսը ինչ էր ասել նրան, ինձ յայտնի չէր: Միայն մօրս վերջին խօսքերից, որ ասաց ինձ, թէ "դու պիտի գնաս օտար աշխարհ,

տացէ Աստուած, որ այնտեղ օրինաւոր մարդ դառնաս„ — ես հասկացայ, որ արդէն վճռուած էր իմ մասին հեռանալ հայրենիքից: Ես հարցրի.

— Մինչեւ այսօր օտար երկիր չեմ տեսել. ո՞ւմ հետ գնամ:

Նա պատասխանեց.

— Մեր քաւոր Պետրոսը գնում է, դու էլ պիտի գնաս նրա հետ:

Ես ուրախացայ: Իսկ այդ բառերը արեան հետ բղխեցին մօրս սրտից: Մինչեւ այսօր յիշում եմ, թէ որքան գունաթափ ու որքան տխուր էր նրա դէմքը այդ խօսքերը արտասանելու րոպէում: Բարեսիրտ մայր, նրան խիստ դժուար էր բաժանուել արդէն փչացած որդուց...: Բայց միթէ փչացած էի ես: — Այդ հարցը դժբախտաբար ինձ անորոշ...:

Մօրս փոքր ի շատէ մխիթարում էր այն միտքը միայն, որ իւր որդուն յանձնում է մի փորձուած եւ հաւատարիմ բարեկամի ձեռքը, որպիսին քաւոր Պետրոսն էր եւ յոյս ունէր, որ մի այսպիսի մարդու ձեռքում օտարութեան մէջ ես կ'ուղղուէի եւ "օրինաւոր„ մարդ կը դառնայի: Բացի դրանից, նա մտածում էր, որ թողնելով հայրենիքը (այսինքն իմ յանցանքի գործուած տեղը) եւ առժամանակ գնալով հեռաւոր աշխարհ, ես, եթէ "օրինաւոր„ մարդ եւս չդառնայի, գոնէ իմ կեանքը կ'ազատէի օրէնքի եւ դատաստանի դատապարտութիւնից, որը, քաւոր Պետրոսի ասելով, պիտի վերջնապէս կախաղանով:

Իմ Մինոսի հետ մենք մի քանի օր առաջ արդէն վճռել էինք իմ պանդխտութեան մասին: Մեզ մնում էր միայն ստանալ մօրս համաձայնութիւնը: Այդ եւս

այժմ կայացաւ։ Էլ ի՞նչը կարող էր այնուհետեւ պահել ինձ հայրենի երկրում։ Բայց ես մոռացել էի մի բան — Սառայի սիրտը։ Մի՛թե կարող էի նրանից բաժանուել։ Այդ միտքը սկսեց տանջել ինձ։

Ա՛յն օրից, որ վերադարձել էի մեր գիւղը, ես պահվում էի սառայենց տանը։ Սառան ամեն կերպով մխիթարում էր իմ դժբախտութիւնը, գրկում էր, համբուրում էր ինձ, ծածկում էր ինձանից իր տխրութիւնը, աշխատում էր միշտ ուրախ ձեւանալ, որպէս զի ինձ եւս ուրախացնէ։

Մինչեւ վերջին օրը նրանից ծածուկ էին պահում իմ օտար երկիր գնալու խորհուրդը։ Ես միշտ երեւակայում էի, թէ որքան ծանր ազդեցութիւն պիտի անէր խեղճ աղջկայ սրտին, երբ յանկարծ կը լսէր, որ ընդերկար բաժանուելու է ինձանից։ Բայց իմ ակնկալութեան հակառակ, նա շուտով հաշտուեցաւ այդ մտքի հետ։

Ա՛յն գիշերը, որի առաւօտեան ես պիտի ճանապարհ ընկնէի, նա մնաւ իմ սենեակը։ Տխրամած դէմքից արդէն նշմարվում էր, թէ սիրտը որպիսի ալեկոծութեան մէջ է։ Բայց աշխատում էր զսպել իր խռովութիւնը։ Կատարուող պատրաստութիւններից նա արդէն հասկացել էր բոլորը։

— Մուրադ, եղաւ նրա առաջին խօսքը, — դու գնում ես օտար երկիր եւ այդ մասին ինձ ոչինչ չես ասում։

— Դու ո՞րտեղից գիտես։

— Մանիշակը ասաց ինձ։

Մանիշակը իմ մեծ քոյրն էր. երեւում էր, մօրիցս տեղեկանալով, հաղորդել էր Սառային։ Ես չմտադրի

նրանից, յայտնեցի, թէ վաղ-առաւօտեան, դեռ լոյսը չծագած, պէտք է ճանապարհ ընկնեմ։ Խորին ցաւակցութեամբ սպասում էի, որ նա կը սկսէր լաց լինել, կը սկսէր աղաչել, պաղատել, որ ես չբաժանուեմ, չհեռանամ նրանից։

Դրանցից ոչ մէկը չեղաւ։ Սառան խելացի աղջիկ էր, աւելի խելացի քան թէ ներում էր նրա հասակը եւ կրթութիւնը։ Նա բոլորովին նախապատրաստուած էր եկել ինձ մօտ, իւր սրտի բոլոր ամրութեամբ եւ իւր հոգու բոլոր քաջութեամբ։ Նրա արիւնով լցուած գեղեցիկ աչքերից նկատեցի ես, որ առաջուց թագուն այնքան լաց էր եղել, այնքան տանջուել էր, որքան բաւական էր իւր սիրտը հանգստացնելու համար։ Իսկ ինձ մօտ աշխատում էր որքան կարելի էր սառնասիրտ երեւալ, մխիթարել ինձ, որովհետեւ ես աւելի անբախտ էի քան թէ նա։

— Երեւի, դու շատ պիտի տխրես, Սառա, որ ես գնում եմ օտար աշխարհ, հարցրի ես։

— Ընդհակառակն, ես շատ ուրախ եմ, պատասխանեց նա։ — Օտար աշխարհ գնալով, դու միշտ իմը կը լինես եւ ինձ համար կը պահուես։ Իսկ այստեղ...

— Այստեղ ի՞նչ կը լինեմ։

— Այստեղ կարող եմ կորցնել քեզ...

Այդ երկիւղը հաշտեցնում էր Սառային ինձանից անջատուելու դրութեան հետ։ Նրա նշանածը մի յանցաւոր էր, դատապարտութեան մատնուած մի փախստական էր, բաւական էր, որ բռնէին նրան, եւ Սառան այնուհետեւ յաւիտեան պէտք է զրկուած լինէր սիրած տղամարդից։ Իսկ օտարութեան մէջ ես կը պահուէի. այնտեղ չէր հասնի օրէնքի եւ դատաւորի ձեռքը. իմ

կեանքը ապահովութեան մէջ կը լինէր, — եւ այդ բաւական էր Սառայի համար:

Նա միայն հարցրեց.

— Շա՞տ կ'ուշանաս, Մուրադ:

— Աստուած գիտէ: Կարելի է շատ . . . :

Իմ պատասխանը չվախեցրեց նրան եւ խորին զգացմունքով պատասխանեց նա.

— Ես քեզ կը սպասեմ, ես քեզ չեմ մոռանայ . . . : Ես քեզ միշտ կը սպասեմ . . . եթէ մինչեւ տասն տարի, քսան տարի էլ յետ չգալու կը լինես, ես դարձեալ կը սպասեմ քեզ: — Իսկ դո՞ւ:

Ես երդուեցայ, ասելով.

— Եթէ ես քեզ մոռանալու լինեմ, Սառա, թող Աստուած էլ ինձ մոռանայ: Ես միշտ քոնն եմ եղել եւ քեզ համար կը մնամ մինչեւ այն օրը, երբ Աստուած կրկին կ'արժանացնէ մեզ միմեանց տեսնելու:

Նա մօտեցրեց ինձ իր երեսը եւ մեր շրթունքը երկար չէին բաժանվում միմեանցից: Ցետոյ դրեց իմ գլխին իւր մատներով նաշխատ մի արախչին, տուեց մեսաքսով բանուած մի քսակ, որ նոյնպէս իւր ձեռագործն էր, եւ որը սովորաբար տալիս են հարսնացու աղջիկները իրանց ապագայ ամուսիններին, երբ նրանք օտար աշխարհ են գնում իրանց բախտը փորձելու համար, որպէս զի նրանց աշխատանքն ու վաստակը արդիւնաւոր լինի:

— Ես ուրիշ բան չունեմ, Մուրադ, ասաց նա խիստ զգալի կերպով. — դրանք քեզ մօտ յիշատակ եմ թողնում:

— Ապա ես ինչ տամ քեզ յիշատակի համար:

— Քո սիրտը, այդ բաւական է ինձ:

— Նա բոլորովին քեզ է պատկանում:

Աքաղաղները սկսեցին կանչել: Գիշերի կէսից անցել էր արդէն: Բայց սառայենց տանը դեռ ոչ ոք չէր քնել: Մայրս եւ քոյրերս այնտեղ էին եւ Սառայի հօր հետ պատրաստում էին իմ ճանապարհի իրեղէնները: Նրանք գիտէին, որ Սառան ինձ մօտ է, բայց, հակառակ տեղային սովորութեան, ճնողական բարի ներողամտութեամբ թոյլ էին տալիս մեզ, որ գոնէ մեր բաժանման վերջին րոպէներում խօսէինք, երկար խօսէինք միմեանց հետ:

Երբ աքաղաղները երկրորդ անգամ սկսեցին կանչել, այդ միջոցին ներս մտաւ Սառայի հայրը:

— Ջաւակս, ասաց նա դառնալով դէպի ինձ, — ճանապարհ ընկնելու ժամանակ է:

Սառան այլեւս չկարողացաւ զիմանալ, թաշկինակով աչքերը բռնեց եւ դուրս եկաւ սենեակից: Հօր ներկայութեամբ պարկեշտութեան կանոնները չէին ներում նրան ոչ ուրախանալ եւ ոչ լաց լինել սիրած աղամարդի համար:

Ես ապշած մնացի. չգիտէի ինչ անել:

— Ճանապարհ ընկնելու ժամանակ է, կրկնեց Սառայի հայրը:

— Այսպէս վաղ, հարցրի ես մեքենաբար:

— Դեռ եւս ուշ է, պատասխանեց նա: — Դու այնպիսի ժամանակ պէտք է ճանապարհ ընկնես, որ բոլոր գիւղացիները քնած լինեն. որ ոչ ոք քեզ չտեսնէ:

Ես շուտով հագնուեցայ եւ դուրս եկայ այն սենեակը, ուր մայրս եւ քոյրերս սպասում էին ինձ: Այնտեղ եկաւ եւ Սառայի հայրը:

— Աշ, երանի թէ գիտենայի, այսօր ինչպիսի օր է, հարցրեց մայրս:

— Բարի է, պատասխանեց Սառայի հայրը: — Տէրտէրից հարցրի, Էֆէմերդին մտիկ տուեց, ասաց բարի է, ճանապարհ գնալու համար, նոր հագուստ ձեւել տալու համար, երակներից արիւն բաց թողնելու համար եւայլն:

Տէր հօր գուշակութիւնը բաւական մխիթարեց մօրս: Նա մի ամբողջ շաբաթ զբաղուած էր իմ ճանապարհի պատրաստութիւններով, եւ սպասում էր մի բարի րոպէի, որ ես ոտքս դուրս դնէի հայրենական տնից:

Ոստիկանութեան ֆէրրաշները, սարվազները մեր տանը ոչինչ չէին թողել, բոլորը կողոպտել, բոլորը տարել էին: Մնացել էր մի կով միայն, որի վրայ մեր ընտանիքը դրել էր իւր ապրուստի յոյսը: Այդ կովը եւս մայրս վաճառել էր տուել եւ ինձ համար գնել էր մի աւանակ, որպէս զի ես ոտքով չճանապարհորդեմ, որպէս զի ես ճանապարհին չյոգնեմ: Թանգագին մայրը, տակաւին որքան սէր, որքան գութ էր մնացել նրա սրտում դէպի անառակ, դէպի մոլորեալ որդին...:

Կարգադրուած էր, որ ես առանձին պէտք է գիւղից դուրս գայի, եւ մի նշանակեալ տեղում միանայի քաւոր Պետրոսի հետ: Այդ այն մտքով էր, որ քաւոր Պետրոսին ճանապարհ գնողները, կամ նրա բարեկամները ինձ չտեսնէին:

Իմ փոքրիկ խուրջինը դրեցին աւանակի վրայ եւ մենք դուրս եկանք բակի դռնից: Գիշերային խաւարը սարսափելի էր: Ամպամած երկնքի վրայ ոչ մի աստղ չէր երեւում: Հանդարտ, առանց շշուկ բարձրացնելու մենք անցնում էինք դատարկ փողոցների միջով, աշխատելով չզարթեցնել դրացիներին: Մայրս, քոյրերս, Սառան եւ նրա հայրը երկար չբաժանուեցան ինձանից: Նրանք եկան

ինձ հետ, մինչեւ գիւղից դուրս եկանք եւ բաւական հեռու գնացինք: Վերջապէս հասանք նշանակեալ տեղը, ուր քաւոր Պետրոսը միայնակ կանգնած, սպասում էր մեզ:

Ես երբէք չեմ մոռանայ այն խօսքերը, որ բաժանման րոպէում մայրս արտասուքի հետ դուրս էր հեղում:

— Հայրդ գնաց օտար աշխարհ եւ կորաւ, Մուրադ, ասում էր նա ինձ իւր գրկում սեղմած ունենալով. — այժմ դու ես մնացել քո հօր օջախի միակ յոյսը... մի մոռացիր, թէ որքան թշուառութիւններ կրեցինք մենք... մի մոռացիր, որ դու անբախտ մայր ունես եւ որբ մնացած քոյրեր...: Մեր ամենի յոյսը քեզ վրայ է դրած, Մուրադ, աշխատիր, որ մեզ խղճութեան մէջ չթողնես...:

Յետոյ նա յանձնեց ինձ իմ Մենտօրին, ասելով.

— Որդուս քեզ եմ յանձնում, քաւոր Պետրոս, նա հայր չունի, դու նրա վրայ միշտ հայրական խնամք ես ունեցել: Քո բարի խրատներով ուղղիր նրան, որ լաւ մարդ դառնայ, որ լաւ անուան տէր լինի...:

Քաւոր Պետրոսը խոստացաւ, իւր աչքի լոյսի պէս կը պահէ, կը պահպանէ ինձ, եւ այնպիսի մարդ կը դարձնէ ինձ, որ ամեն մի տեսնող երանի կը տայ իմ հօրն ու մօրը, որ ինձ նման խելացի եւ շնորհալի զաւակ ունեն:

Բաժանման րոպէն հասաւ: Ես մօտեցայ համբուրեցի Սառայի հօր աջը: Նա եւս իւր կողմից շատ խրատներ տուեց ինձ եւ շատ բաներ ասաց: Ես բոլորը մոռացայ, միայն մի խօսք յիշում եմ մինչեւ այսօր, երբ նա իւր գտեր ձեռքը տալով իմ ձեռքի մէջ, ասաց.

— Չմոռանաս դրան, Մուրադ, դրա սէրը պէտք է առաջնորդէ քեզ յառաջադիմութեան ճանապարհի վրայ. դրա սէրը պէտք է վառէ քո եռանդը, — պէտք է ուժ

եւ զօրութիւն տայ քեզ արիութեամբ անցնելու այն բոլոր խոչնդոտները, որ պիտի հանդիպեն քեզ քո պանդխտութեան մէջ...:

Մայրս կրկին եւ կրկին անգամ համբուրեց ինձ: Քոյրերս սկսեցին լաց լինել, երբ տեսան իրանց մայրը լաց էր լինում: Նա նոյնպէս չկարողացայ պահել իմ արտասուքը: Համբուրեցի քոյրերիս, համբուրեցի Սառային...: Մենք բաժանուեցանք: Նրանք երկար կանգնած նայում էին մեր եռեւից, բայց գիշերային խաւարը թոյլ չէր տալիս միմեանց տեսնել...:



Դ.

ԿԵՂԾ ՀԱՋԻՆ

Քաւոր Պետրոսը մօտ յիսուն տարեկան մարդ էր, բաւական համակրական դէմքով: Մօրշոմը նրա լայն ճակատի վրայ խորին ծալքերով իջել էր մինչեւ թաւամազ յօնքերը, որ կիսով չափ ծածկում էին նրա սեւ եւ կրակոտ աչքերը: Թխագոյն, արեւելեան երեսը իւր խոշոր, բայց կանոնաւոր գծագրութեամբ, միշտ պատկառանք էր ազդում նայողի վրայ: Գլխի երկայն մազերը ալեխառն խտութեամբ թափվում էին մինչեւ նրա ուսերը. այդ տալիս էր նրա դէմքին աւելի մի խստակեաց դէրվիշի կերպարանք, որ իւր սրտի խաղաղութիւնը գտնում է միայն մշտական աղօթքի եւ ճգնութիւնների մէջ: Սպիտակ մօրուքը խիստ փառաւոր էր, հովանաւորում էր նրա ամբողջ կուրծքը: Միջակ հասակ ունէր, բայց սաստիկ ամուր կազմուածքով: Նրա շարժմունքը արտայայտում էր երիտասարդական առոյգութիւն, թէեւ ինքը աշխատում էր միշտ թոյլ եւ տկար ձեւանալ: Ձայնը զօրաւոր էր եւ ազդու, բայց նա դիտմամբ միշտ խեղդում էր իւր ձայնը:

Մենք երկուսս էլ գնում էինք ոտով. մեր ճանապարհի ծանրութիւնները տանում էին երկու ուժեղ աւանակները, որոնցից մէկը ինձ էր պատկանում, իսկ միւսը նրան: Քաւոր Պետրոսը գլուխը խոնարհեցրած,

դանդաղ քայլերով գնում էր ինձանից առաջ: Նա բոլորովին լուռ էր. երեւում էր, որ դառն մտածութիւնները տանջում էին նրան: Շատ անգամ այդ ողորմելին ոտքը դուրս էր դրել հայրենական երկրից, իսկ այժմ ուղեղ տասներորդ անգամն էր, որ իւր ծերութեան հասակում կրկին ձեռքն էր առել պանդխտութեան գաւազանը:

Նա նոյնպէս տխուր էի. ծնողներից, սիրելի բարեկամներից անջատուելը ինձ մեծ ցաւ էր պատճառում: Արդեօք միւս անգամ կը տեսնէի նրանց, — եւ երբ...: Ուրախ էր միայն իմ մոխրագոյն աւանակը. ճանապարհի եղերքից խոտեր արածելով, նա առաջ էր վազում, առանց սպասելու, որ ես նրան քշէի: Մեր ճանապարհորդական ղէնքերը կազմուած էին մի-մի հատ ցուպից, որ բռնած ունէինք ձեռքներիս: Աւազակներից երկիւղ անգամ կրել աւելորդ էր, որովհետեւ բացի աւանակներից, նրանք չէին գտնի մեզ մօտ մի բան, որ փոքր ի շատէ արժէք ունենար: Իսկ այսպիսի ստոր անասունները նրանք չեն տանում:

Ամբողջ օրը եղանակը պարզ էր, բայց երեկոյեան սկսեց անձրեւել եւ ճանապարհի վրայ գոյացաւ սաստիկ ցեխ: Ես իմ տրեխները հանեցի, գնում էի բոբլիկ ոտքերով: Խեղճ անասունները դժուարութեամբ էին կարողանում փոխել իրանց քայլերը, որովհետեւ նրանց սուր-սուր սմբակները թաղվում էին կաւի մէջ, եւ չէին դուրս գալիս: Ես շատ ախրեցայ, երբ նկատեցի, որ աւանակիս երկայն ականջները սկսեցին հետզհետէ քաշ ընկնել: Դա պարզ նշան էր, որ նա բոլորովին յոգնեցաւ:

Գիշերից բաւական անցել էր, երբ հասանք մի պարսկական գիւղ: Բոլոր դռները կողպուած էին, դրսում ոչ ոք չէր երեւում: Այստեղ պէտք էր իջեւանել, որովհետեւ թէ մենք եւ թէ մեր անասունները սաստիկ յոգնած էինք. այլ եւս առաջ գնալ անհնարին էր: Բայց ո՛ր դրանը մօտենում էինք, թակում էինք, թակում, ոչ ոք չէր ուզում բաց անել, երբ իմանում էին, որ մենք քրիստոնեաներ ենք: Անձրեւը հեղեղի նման թափվում էր. ես մինչեւ ոսկորներս թրջուած էի: Այդ դրութեան մէջ քրիստոնեային անկարելի էր մտնել մահմեդականի տունը. իւր հպատակութեամբ կարող էր ամեն ինչ պղծել: Սառն քամին սկսեց սաստկանալ. ցրտից դողում էինք թէ՛ ես եւ թէ՛ քաւոր Պետրոսը:

— Այդ անպիտանների հետ պէտք է ուրիշ կերպ վարուել... ասաց քաւոր Պետրոսը եւ մօտեցաւ մի մեծ տան դրանը, սկսեց սաստիկ կերպով բաղխել:

Ներսից հարցրին. — Ո՞վ է:

Քաւոր Պետրոսը բարկութեամբ պատասխանեց.

— Մուսուլմաններ, մեղք չէ՞ ձեզ համար, որ իսլամի որդիքը անձրեւից ու ցրտից մեռնում են, իսկ դուք ձեր դռները չէք բաց անում նրանց առջեւ:

Ես սարսափեցայ, տեսնելով, որ իմ Մենտօրը իրան ձեւացնում էր մահմեդական: Նա ինձ հրամայեց ոչինչ չխօսել, միշտ լուռ ինալ եւ ձեւանալ որպէս խուլ ու մունջ: Շուտով դռները բացուեցան. մեր չորքոտանիքը տարան ախոռը, իսկ մեզ հրաւիրեցին մի բաւական մաքուր սենեակում: Ցան սարքուկարգից երեւում էր, որ մեր հիւրընկալը դիւղի հարուստներից մէկը պէտք է լինէր: Իսկոյն բուխարին վառեցին, մենք տաքացանք եւ չորացրինք մեր թրջուած հագուստները: Յայտնուեցաւ եւ տան տէրը, խորին կերպով ողջունեց մեզ, որպէս մահմեդականը ողջունում է մահմեդականին, եւ նստեց քաւոր Պետրոսի մօտ: Ցետոյ տեղային քաղաքավարական ձեւե-

լով յայտնեց իւր ուրախութիւնը, որ մենք "բարով ենք եկել, հազար բարով, իւր տունը-տեղը մեզ փիշքէշ է (նուիրուած է) եւ իւր որդիքը մեր ծառաներ են" եւ այլն:

Վերջացնելով իւր փոքրիկ ճառը, նա դարձաւ դէպի քաւոր Պետրոսը, ասաց.

— Ամօթ չլինի հարցնելը, ի՞նչպէս է ձեր անունը:

— Ձեր ծառայ Հաջի-Ռահիմ, պատասխանեց քաւոր Պետրոսը:

Ցեւանելով, որ իւր հիւրը հաջի է եւ ոչ հասարակ մահմեդական, տան տիրոջ յարգանքը աւելի եւս բազմացաւ դէպի քաւոր Պետրոսը: Բայց ծիծաղը ինձ խեղդում էր. ես չգիտէի, թէ ինչով կը վերջանայ այդ խայտառակութիւնը: Իսկ քաւոր Պետրոսը իրան այնքան ծանր էր պահում, որ չէր կարելի չյարգել նրան: Ես ոչինչ չէի խօսում, որովհետեւ ինձ պատուիրուած կը խօսել ու մունջ ձեւանալ: Տան տէրը նկատելով իմ լռութիւնը, հարցրեց քաւոր Պետրոսից.

— Դա ձեր ի՞նչն է:

— Ձեր փոքրիկ սարուկը, — իմ որդին է:

— Աստուած պահէ, զօրանայ, ասաց տան տէրը, յետոյ դարձաւ դէպի ինձ, հարցնելով.

— Դու, երեւի, մրսեցա՞ր անձրեւից, դէմքդ խիստ գունատ է երեւում:

Ես ոչինչ չպատասխանեցի: Քաւոր Պետրոսը իմ փոխարէն ասաց.

— Նա խուլ ու մունջ է. ոչինչ չէ լսում:

— Խեղճ տղայ, Աստուած ողորմութիւն անէ, բացականչեց տան տէրը ցաւակցական եղանակով եւ ապա հարցրեց:

— Մօրից այդպէ՞ս է ծնուած, թէ յետոյ է պատահել:

— Մօրից այդպէս չէ ծնուած, առաջ նա սովորական լեզու ունէր, լսում էր, խօսում էր, ինչպէս մենք խօսում ենք: Ուղիղ երկու տարի է, ինչ որ պատահել է այդ անբախտութիւնը: Թող Աստուած հեռու պահէ քո զաւակներից: Իմ մեղքերի համար Աստուած պատժեց ինձ...:

Ցետոյ քաւոր Պետրոսը հնարեց մի ամբողջ պատմութիւն, թէ որպէս չար սատանաները ամեն գիշեր երեւում էին ինձ, սարսափելի տեսարաններ էին ներկայացնում իմ աչքերի առջեւ, եւ սաստիկ վախենալուց իմ ականջները փակուեցան եւ իմ լեզուն կապուեցաւ:

Այդ պատմութեան միջոցին, որի մէջ քաւոր Պետրոսի ճարտար լեզուն ահ եւ սարսափ էր ազդում լսողի վրայ, ես նկատում էի, թէ որպէս զարհուրած տան տիրոջ երկար մօրուքը շարժվում էր, եւ նա լռութեամբ կարդում էր աղօթքի նման մի բան:

— Հիմայ ո՞ւր էք տանում դրան, հարցրեց նա:

Ցանում եմ Սէիդ-Հաջինի մզկիթը, պատասխանեց քաւոր Պետրոսը: — Սուրբ Իմամը, ինձ երազի մէջ յայտնուելով, ասաց, որ որդուս փրկութիւն կը լինի, եթէ այնտեղ կը տանեմ:

Սէիդ-Հաջինի մզկիթը մեծ համարում ունէր մահմեդականների մէջ իւր հրաշագործ զօրութեամբ: Անտեղ տանում էին գլխաւորապէս խելագարներին եւ խուլ ու մունջերին: Բայց տան տիրոջ համարումը աւելի մեծ եղաւ դէպի քաւոր Պետրոսը, երբ լսեց, որ "սուրբ Իմամը" յայտնուել էր նրան երազի մէջ եւ խօսացել էր նրա հետ:

Բոլոր ժամանակը նրանք խօսում էին թուրքերէն: Քաւոր Պետրոսի թէ արտասանութեան եւ թէ բառերի

դարձուածների մէջ չէր կարելի նկատել, որ նա հայ էր։ Նա խօսում էր աւելի լաւ, քան թէ մի թուրք։ Եւ այդ իսկ պատճառով նա հրամայեց ինձ լուսթեան դեր կատարել, մի գուցէ իմ մի անզգոյշ խօսքով ես մերկացնէի մեր հայութիւնը։

Վերջապէս տան տէրը հրամայեց, որ ընթրիք տան։ Քաւոր Պետրոսը յայտնեց, որ նա դեռ իւր երեկոյեան նամազը չէ կատարել եւ չէ կարող առանց աղօթելու սեղան նստել։ Նրան տուեցին նամազ անելու համար պէտք եղած պարագայքը, նա լուացուեցաւ, եւ մաքրութեան ծէսերը կատարելուց յետոյ· սկսեց խորին ջերմեռանդութեամբ աղօթել։ Ես զարմանում էի, թէ ո՞րտեղից գիտէր նա այդ բոլորը։ Մահմեդականի նամազը կատարվում է արաբական լեզուով։ Աղօթելու եղանակը, երկրպագութիւնները որոշուած կարգեր ունեն։ Մաքրութեան կամ լուացուելու ծէսերը նոյնպէս առանձին կանոններ ունեն։ Պէտք է բոլորի մէջ ճշգութիւն պահպանել։ Մի փոքրիկ սխալ կարող է "բաթիլ" անել (ոչնչացնել) նամազը։ Բայց ո՞րտեղից, երբ էր սովորել քաւոր Պետրոսը այդ արարողութիւնները։

Քաւոր Պետրոսի բարեպաշտութիւնը այն հեռուանքն ունեցաւ, որ աւելի գրաւեց մեր հիւրընկալի համակրութիւնը։ Կրօնին եւ հաւատքին հաւատարիմ մարդիկ խիստ յարգելի են մահմեդականների մէջ։ Այդ յարգանքի արտայայտութիւնը աւելի նկատելի էր ընթրիքի ճոխութեան մէջ։ Բացի զանազան ուտելիքներից, մեզ համար պատրաստել էին եւ փլաւ։

Երբ սեղանը պատրաստ էր, քաւոր Պետրոսը հարցրեց տան տէրից, թէ իւր կեանքում սուրբ տեղերից ո՞րին ուխտ է գնացել։ Երբ պատասխան ստացաւ,

թէ ոչ մէկին, — նա հրաժարուեցաւ սեղանից, ասելով·

— Քո հացը հարամ (անսուրբ) է, ես ուտել չեմ կարող։ Դու մեղանչել ես շաւիաթի դէմ։

Տան տէրը սաստիկ ամաչեց, սկսեց աղաչել, որ իւր սեղանը չանպատուէ, խոստացաւ, որ գարունքին անպատճառ կը գնայ Բաղդադ իմամների գերեզմանները համբուրելու եւ Քարբալայի ուխտը կատարելու։ Պատմեց, թէ որպիսի արգելքներ միշտ այնօր զրկել էին նրան սուրբ տեղերի ուխտագնացութիւնից։

Քաւոր Պետրոսը փոքր ինչ հանգստացաւ, ասելով·

— Ամեն մի ուղղափառ մուսուլմանի պարտականութիւնն է, երբ նրա նիւթական միջոցները այնքան նեղրում են, որ կարող է հոգալ ճանապարհի ծախքը, պէտք է անպատճառ կատարէ սուրբ տեղերի ուխտագնացութեան խորհուրդը։

Այնուհետեւ սկսեց երկար բացատրել, թէ որպիսի հոգեւոր վարձատրութիւններ են սպասում Քարբալայի, Մէշհէդի եւ մանաւանդ Մէքքայի ուխտաւորներին, — պատմեց, թէ որքան հիւրընկալներ (հրեղէն աղջկներ) պիտի ստանան նրանք Մուհամմէդի դրախտում, եւ վերջացրեց իւր խօսքերը նրանով, թէ "անհաւատ քրիստոնեաները զրկվում են այդ բոլոր երկնային երանութիւններից"։

Վերջին խօսքերը ինձ վրայ այնպիսի վատ ներգործութիւն ունեցան, որ ուզում էի փակուած լեզուս բաց անել եւ յայտնել, թէ դա ինքը քրիստոնեայ է, բայց խաբէութեամբ իրան մահմեդական է ձեւացնում։ Բայց վախեցայ, մտածելով, թէ որպիսի վտանգի կարող էինք ենթարկուել երկուսս էլ։

Քաւոր Պետրոսը մեծ ախորժակով ուտում էր: Ես սկզբում սեղանին չմօտեցայ, ոչ այն պատճառով, որ տան տէրը սուրբ տեղերը ուխտ չէր գնացել եւ ես նրա հացը հարամ էի համարում, ոչ, — այլ այն օր պաս էր, ես երբեք պասս չէի լուծել: Կրօնի եւ եկեղեցու պատուէրները ամենայն մաքրութեամբ դեռ պահպանվում էին իմ մէջ: Բայց քաւոր Պետրոսը իմ վարմունքը նկատելով, ինձ այնպէս խստութեամբ աչքով արեց, որ ես ակամայ սոխպուեցայ ուտել...:

Ընթրիքից յետոյ մեզ համար մաքուր անկողին պատրաստեցին, որ հանգստանանք: Երբ մտայ իմ մահիճը, երկար քնել չկարողացայ, թէեւ սաստիկ յոգնած էի: Զանազան մտածութիւնները ալէկոծում էին իմ սիրտը: Երբեմն մտածում էի, թէ ինչ կը լինի մեր դրութիւնը, երբ տան տէրը յանկարծ հասկանայ, որ իւր սենեակում պառկած են երկու քրիստոնեաներ: Նա այդ տեղաշորերը պղծուած համարելով, պիտի կը տայ, եւ գուցէ մեզ եւս կ'այրեն նրանց հետ: Ու ինչի համար ուրանալ կրօնը, ուրանալ ազգութիւնը: Նրա համար միայն, որ մի կաթ հաց եւ պառկելու տեղ ստանալ: Մի՞թէ դրանք են պանդխտութեան, գաղթականութեան պայմանները. — ինչ ազգի մօտենալ, այն ազգից ձեւանալ...: Իմ ճանապարհորդութիւնը հէնց առաջին իջեւանից ինձ անտանելի դարձաւ: Մտածում էի, աւելի լաւ չէը լինի, որ իմ հայրենի գիւղից չհեռանայի: Թող այնտեղ բռնէին, ջարդէին, սպաննէին ինձ: Գոնէ հայի անունով կը մեռնէի:

Քաւոր Պետրոսը նոյնպէս անքուն էր: Նա, երեւի, նկատեց իմ անհանգստութիւնը, թէ ինչպէս անդադար մի կողքից դէպի միւսը շուռ էի գալիս, անդադար հառաչանք էի արձակում, ախ ու վախ էի անում, եւ հոգուց էի հանում: Նա հարցրեց.

— Ի՞նչու ես քնում, Մուրադ:

Ես փոխանակ պատասխանելու, սկսեցի հեկեկալ: Նա հասկացաւ իմ լացի պատճառը եւ ասաց առածի ձեւով.

— Չէ, զաւակս, այսուհետեւ ինչ ազգի մէջ որ մտնելու լինես, պէտք է այն ազգի փափախը ծածկես: Այդպէս է աշխարհի կարգը...:

Ես հարցրի.

— Մեղք չէ՞ արդեօք, որ մարդ իւր սուրբ կրօնը, իւր ազգութիւնը ուրանում է:

Նա պատասխանեց ինձ Պօղոս առաքեալի խօսքերով, թէ ինչպէս նա հրէաների մօտ հրէայ էր ձեւանում, իսկ հեթանոսների մօտ հեթանոս, որ նրանց սրտերը շահէ:

Քաւոր Պետրոսը կարդացած մարդ էր: Ես նրա խօսքերը, որպէս ասում են, հալած իւղի տեղ ընդունեցի: Այն ժամանակ այնքան հասկացողութիւն չունէի, որ գիտենայի, թէ ինչպէս մարդիկ սուրբ գրքերի ամենապարզ ճշմարտութիւնները աղաւաղում են եւ նրանցով բացատրում են ամենաանբարոյական մտքեր...:

Ե.

ՓՈՔՐԻԿ ՄԱՔՍԱՆԵՆԳԸ

Մեր ճանապարհորդութեան չորրորդ օրը հասանք Թաբրիզ քաղաքը, իջեւանեցինք հայոց եկեղեցու բակում:

— Այժմ պէտք է մտածել փողի մասին... ասաց քաւոր Պետրոսը, եւ կիրակի օրը վաղ-առաւօտեան, ինձ իւր հետ առնելով, սկսեցինք գնալ եկեղեցու երեսփոխանի տունը:

— Այնտեղ կարո՞ղ եմ խօսել, թէ դարձեալ պէտք է խուլ ու մունջ ձեւանամ եւ թագցնեմ իմ հայութիւնը, հարցրի ես քաւոր Պետրոսից:

— Կարող ես խօսել, պատասխանեց նա ժպտելով. — եւ լաւ հայ պիտի ձեւանաս:

Բայց իմ խօսելը պէտք չեղաւ, որովհետեւ քաւոր Պետրոսը ինձ ներս չտարաւ երեսփոխանի մօտ, այլ հրամայեց սպասել դրսում, իսկ ինքը միայնակ ներս մտաւ: Չգիտեմ ինչ խօսեց նրա հետ, ինչ ասաց, միայն այդքանը յիշում եմ, որ այն օր եկեղեցում քահանան մեր մասին ժողովրդին "ծանուցում" արեց, որի մէջ յայտնեց այն միտքը, թէ մենք Մուշի երկրից ենք եկել, թէ մեր կնիկները, զաւակները "անհաւատների" ձեռքում գերի են ընկած, այժմ բարեպաշտ քրիստոնեաներից ողորմութիւն ենք հաւաքում, որ տանենք տանք "անհաւատներին" եւ մեր գերիներին ազատենք. եւ այլն:

— "Դարձեալ խաբեբայութիւն"... մտածեցի ես խորին վշտովմունքով:

Որքան էլ սուտ լինէին այդ խօսքերը, այսուամենայնիւ, ժողովրդի վրայ խորին տպաւորութիւն գործեցին: Ծէր հայրը այնպիսի ազդու եղանակով նկարագրեց մեր գերիների ողբալի դրութիւնը, որ բոլոր լսողների մէջ ցաւակցութիւն շարժեց: Քարոզից յետոյ եկեղեցում գանձանակ մատ ածեցին եւ մեզ համար փող հաւաքեցին: Իսկ մենք մուրացկանի նման, գլուխներս ծռած, կանգնած էինք եկեղեցու դրան մօտ. քաւոր Պետրոսը աջ կողմում, իսկ ես ձախ կողմում: Ժամաւորները դուրս գալու միջոցին ձգում էին մեզ սեւ փողեր: Այդ առաջին անգամն էր, որ ես, քաւոր Պետրոսի յորդորանքով, ստիպուած էի ձեռքս մեկնել եւ ողորմութիւն խնդրել...: Ամօթը խեղդում էր ինձ: Որքան ցածութիւն էր: Ծաբե՛լ եւ մուրալ...:

Այն օրը ես խելագարի նման էի եւ միշտ լաց էի լինում: Բայց քաւոր Պետրոսը մխիթարում էր ինձ, ասելով. — "Ղարիբի երեսը սեւ կը լինի, իսկ ջերը — լեզը"...:

Միւս օրը մենք արդէն փող ունէինք: Մեր ամենահարկաւոր գնելիքը արտասահման գնալու համար՝ էր անցագիրը:

— Գիտե՞ս Մուրադ, ասաց ինձ քաւոր Պետրոսը, — օտարութեան մէջ յաջողակ կերպով թափառելու համար, աւելի լաւ է մտնել ուրիշի մորթու մէջ:

Ես ոչինչ չհասկացայ: Նա բացատրեց.

— Պէտք է անունդ, ազգանունդ, ծնած տեղդ, պատմունքիդ անունը, — բոլորը փոխես:

Ես ապշած մնացի: Նա շարունակեց.

— Քո անունը այսուհետեւ Մուրատ չէ, դու կոչվում ես Ամբրոսիոս: Քո պարապմունքը, քո արհեստը դարբնութիւն չէ, դու այսուհետեւ եկեղեցու պաշտօնեայ ես, դու սարկաւագ ես: Քո ծննդավայրը Սալմաստը չէ, դու Երուսաղէմացի ես: Ես ուրիշ այսպիսի շատ բաներ ասաց նա, թէ ինչ էի ես եւ ինչ պիտի լինեմ այնուհետեւ. բայց ես չկրցայ նրան վերջացնել, ընդհատեցի նրա խօսքը, հարցնելով.

— Հապա, ինչպէս կարող եմ ես սարկաւագ լինել, որ ամենեւին կարդալ չգիտեմ, եւ երբեք եկեղեցում չեմ երգել:

— Այդ միեւնոյն է, պատասխանեց նա արհամարհանքով. — քեզ ինչ որ ասում են, այն լսի՛ր:

— Իսկ քո անունը եւ կոչումը ի՛նչ պիտի լինի:

— Իմ անունը Անտօնիոս է. ես յոյն աբեղայ եմ եւ Երուսաղէմի վանքի միաբան:

— Ե՞ս էլ յոյն եմ:

— Դու էլ յոյն ես:

Դարձեալ ապշութիւն...:

Ես չհակառակեցի: Ես հաւատացի նրան, որ օտարութեան մէջ թափառելու համար այդ բոլոր պայմանները անհրաժեշտ էին: Այն օր Թուրքաց հիւպատոսից անցագրեր ստացանք միեւնոյն անուններով, որ մեր մէջ որոշել էինք: Բայց զարմանալին այն էր, որ քաւոր Պետրոսը հէնց առաջուց ունէր իւր մօտ երկու անցագրեր միեւնոյն անուններով. միայն հնացել էին, ժամանակները անցել էր: Նա տարաւ հիւպատոսի մօտ եւ նորը ստացաւ:

Բայց քաւոր Պետրոսը յիշեալ երկու անցագրով չբաւականացաւ: Նա աշխատում էր ձեռք բերել զանազան անցագրեր զանազան անուններով այլ եւ այլ պարապմունքներով: Թաբրիզում, Աստրախանի այդ մեծ մայրաքաղաքում, այդ բոլորը հնարաւոր էր: Այնտեղ կային եւրոպական պետութիւնների բոլոր ներկայացուցիչները, որոնցից կարելի էր անցագրեր ստանալ: Այնտեղ կային այլ եւ այլ պետութեան հպատակներ, որոնք պարապվում էին զանազան գործերով, որոնք կարող էին իրանց անուններով անցագրեր վեր առնել, տալ ուրիշներին, որ ուրիշները նրանցից օգուտ քաղէին, իսկ իրանք դարձեալ կը մնային Թաբրիզում: Բայց քաւոր Պետրոսը դնեց մեծ քանակութեամբ պարսկական անցագրեր: Դրանք վաճառվում էին այնպէս, ինչպէս վաճառվում են տէրութեան դրոշմաւոր թղթերը: Հաւական էր ուղարկել պատահած մարդու ձեռքով անունների մի ցուցակ (ի հարկէ, նշանակելով իւրաքանչիւր անունի ներքոյ տարիքը, հասակը, դէմքը եւ այլն) եւ նա կը տանէր Թէսքիրաջի մօտ, եւ նոյն անունների համեմատ կը գնէր զանազան անցագրեր: Թէսքիրաջի կոչում էին անցագրերի կապալառուին:

Ընդելով, որ քաւոր Պետրոսը մի քանի օր առաջ իրրեւ մուրացկան կանգնած էր հայոց եկեղեցու դրանը եւ ձեռքը մեկնում էր ամեն մի անցնողին, բայց երեւում էր, որ նա առաջուց ունէր իւր մօտ մի փոքրիկ գումար: Նա գնեց մեծ քանակութեամբ զանազան տեսակ անցագրեր: Ես զարմանում էի, թէ ինչ նպատակի կարող էին ծառայել դրանք: Մեզ բաւական էր երկուսը միայն, եւ ուներինք արդէն, իսկ մնացածները ո՞ւմ համար էին: Երբ հարցրի նրանից, նա ինձ ոչինչ չպատասխանեց: Մէկի վրայ գրած էր՝ "սպահանցի ակնաբոյժ Հաջի-Աբդուլ-Ջուսէին-Ղուլի-էֆէնդի", մի ուրիշի վրայ գրած էր՝ "խօրա-

տանցի ակնավաճառ Մաշադի-Մուհամմէդ-Ղուլի-աղա„։ Բայց ինձ շատ չէին հետաքրքրում այդ զանազան անունները. ինձ գրաւեց մի այլ բան։

Մի օր քաւոր Պետրոսը ինձ իւր հետ առնելով, գնացինք Թաւրիզի բազարը։ Այնտեղ գնեց նա զանազան տեսակ էժանագին իրեղէններ, որպիսի են՝ թել, ասեղ, հասարակ մատանիներ, ապակուց շինած գոյնզգոյն հուլուններ, երեխաների խաղալիկներ, կանանց երեսը ներկելու դեղեր, եւ այլ այս տեսակ վաճառքներ։ Այդ բոլորը այնպէս փայլուն եւ խայտաճամուկ կերպով պատրաստուած էին, որպէս գիտէ եւրոպացին ասիական ազգերի ճաշակին իւր վաճառքները յարմարացնել։ Ամբողջ մթերքը եղաւ մի փոքրիկ արկղիկ, բացի դրանցից, քաւոր Պետրոսը գնեց մի պարկի մէջ բաւական մաստաք։ Այդ ամենը շալակած, ես հասցրի մեր իջեւանը, որ եկեղեցու բակումն էր։

Նոյն օրուայ գիշերը նա ասաց ինձ.

— Մուրադ, այն գումարը, որ եկեղեցում հաւաքուեցաւ մեր գերիների փրկութեան համար, ես բոլորը քեզ եմ ընծայում, թէ՛ իմ մասը եւ թէ՛ քո մասը։ Այդ գումարով ես գնեցի այն իրեղէնները, որ դու այսօր բազարից տուն բերեցիր։ Այդ իրեղէնների վրայ դու պիտի փորձես քո բախտը, թէ ո՛րքան կը յաջողուի քեզ առեւտրական գործունէութիւնը։

Ես զարմացայ քաւոր Պետրոսի առատաձեռնութեան վրայ։

— Ես երբեք վաճառականութիւն չեմ արել, ասեցի նրան։

— Կը սովորես . . . ասաց նա եւ հրամայեց բերել մեր աւանակների փալանները։

Իսկոյն վազեցի ախոռատունը եւ բերեցի փալանները։ Ես մինչեւ այսօր չեմ կարող զսպել իմ ծիծաղը, թէ որպիսի խորամանկութեամբ այդ հին մաքսանենգը սովորեցրեց ինձ, թէ որպէս պէտք էր զանազան վաճառքներ փախցնել մաքսատնից։ Նա իմ աւանակի փալանի միջի եղած յարդը դուրս հանեց, եւ ինձ համար գնած իրեղէնները մի այնպիսի ճարտարութեամբ դարսեց յարդի տեղը, որ մաքսատան ամենահմուտ ծառայողն անգամ չէր կարող երեւակայել, որ նրա մէջ կարող էին գտնուել թագցրած ապրանքներ։ Բայց իւր աւանակի փալանի մէջ թագցրեց նա ուրիշ իրեղէններ, որ ես տեսնել չկարողացայ . . . ։

Միւս օրը առաւօտեան մենք թողեցինք Թաւրիզը։ Չորրորդ օրը հասանք Երասխ գետին, որ բաժանում էր պարսից հողը Ռուսաստանից։ Մենք պէտք է անցնէինք Ջուլֆայի կարանտինից, որ ռուսաց հողի վրայ էր գտնվում։ Այստեղ էր եւ ռուսաց մաքսատունը։

Քաւոր Պետրոսը տեսաւ մի քանի պարսկաստանցի աղքատ հայեր, որոնք նոյնպէս կամենում էին անցնել սահմանը, բայց անցագիր չունենալու համար մնացել էին պարսից հողի վրայ։

— Ո՞ւր պիտի գնաք, հարցրեց նրանցից քաւոր Պետրոսը։

— Գնում ենք Նախիջեւանի, Երեւանի կողմերը, պատասխանեցին նրանք,

— Ի՞նչ գործով։

— Մշակութիւն անելու։

— Ապա ինչո՞ւ էք մնացել այստեղ։

— Անցագրի փող չունենք։

Քաւոր Պետրոսը ասաց, թէ ինքը ունի մի քանի աւելորդ անցագրեր, կը տայ նրանց, միայն այն պայմանով, որ սահմանը անցնելուց յետոյ կրկին յետ դարձնեն իրան:

— Մեր դժուարութիւնը սահմանը անցնելն է, պատասխանեցին նրանք, — այնուհետեւ ի՞նչ պէտք է մեզ անցագիրը:

Քաւոր Պետրոսը տուեց նրանց իւրաքանչիւրին մի մի անցագիր եւ մենք միասին անցանք Նրասխ գեաղը:

Կարանտինի մաքսատունում բացի մեր անցագրերին նայելը եւ ձեռք քաշելը ուրիշ բան չեղաւ: Մեր աւանակների փալանների վրայ ուշադրութիւն անգամ չդարձրին:

Մենք անցանք Նրասխը առաւօտեան եւ նոյն օրուայ երեկոյեան պահուն հասանք Նախիջեւան քաղաքը: Մեզ հետ եկած մշակները մեծ ընորհակալութեամբ յետ դարձրին քաւոր Պետրոսից ստացած անցագրերը: Եւ իրաւ, այնուհետեւ նրանք անցագրի պէտք չունէին, որովհետեւ պիտի գնային Պարսկաստանից գաղթած իրանց ազգայիններին մօտ եւ մշակութիւն անէին:

Բայց ինձ զարմացնում էր մի բան. քաւոր Պետրոսը այն տեսակ մարդկիններից չէր, որ առանց նպատակի մի գործ կատարէր, ուրեմն ի՞նչ խորհուրդ կարող էր ունենալ մշակներին անցագիր տալը: Աւելորդ էր մտածել, թէ նրանց վրայ խղճաց եւ կամեցաւ օգնել նրանց: Երբ այդ մասին հարցրի, նա պատասխանեց.

— Ինձ պէտք էր, որ այդ անցագրերի վրայ լիներ մաքսատան կնիքը եւ ստորագրութիւնը:

— Դուք ինքներդ կարող էիք ներկայացնել, որ կնքէին եւ ստորագրէին:

— Բանը նրանումն է, որ ես չէի կարող. մի մարդ կարող է միայն մէկ անցագիր ներկայացնել:

— Բայց ի՞նչ հարկաւոր է անպատճառ մաքսատան ստորագրութիւնը կամ կնիքը:

— Դա շատ հարկաւոր է. դա նշանակում է, որ անցագրի տէրը սահմանից անցնելու ժամանակ յայտնուել է, որտեղ որ հարկն է:

— Եւ դուք մշակներից օգուտ քաղեցիք:

— Նրանք ինձանից օգուտ քաղեցին, իսկ ես նրանցից:

Ես դարձեալ չհասկացայ այդ բոլոր ձեռնածութեան նպատակը: Քաւոր Պետրոսը իմ հետաքրքրութիւնը հանդստացրեց նրանով, որ ասաց, թէ յետոյ կը հասկանամ, երբ շատ բան կը սովորեմ:

Նախիջեւանում երկար չմնացինք: Մենք իջեւանել էինք մի կեղտոտ քարվանսարայում: Հէնց առաջին գիշերը քաւոր Պետրոսը հրամայեց ինձ դուրս բերել իմ աւանակի փալանի մէջ թագցրած վաճառքը:

Երբ ամենը դուրս բերեցի, նա ասաց ինձ բաւական փաղաքշական եղանակով:

— Այդ բոլոր քեզ է պատկանում, իմ փոքրիկ մաքսանենգս, առաւօտեան մի մանրավաճառ կը բերեմ եւ բոլորը միանգամից կը ծախենք:

Ես երբէք այնքան ուրախ չեմ եղել, որպէս այն գիշեր: Մեծ անհամբերութեամբ սպասում էի, մինչեւ առաւօտը լուսանար եւ մաքսատնից փախցրած իմ մթերքը վաճառուէր: Արեւը այն առաւօտ ծագեց ինձ համար, որպէս մի աւետաբեր հրեշտակ: Քաւոր Պետրոսը վաղուց գնացել էր փողոց գնող հրաւիրելու: Վերջապէս բերեց մի հայ մանրավաճառին: Բաւական խօսեցին, բաւական բա-

զառ արեցին, յետոյ բարիշեցան: Մանրավաճառը համբարեց արծաթը, եւ մէթերքը առնելով հեռացաւ: Քաւոր Պետրոսը փողերը ինձ տուեց, ասելով.

— Բախտդ յաջողակ է. մի հարիւրին երկու հարիւր վաստակ ունեցար:

Ես ուրախութեամբ ընդունեցի փողերը եւ լցրեցի այն քսակի մէջ, որ ստացել էի Սառայից որպէս յիշատակ: Այդ փողերը ինձ տալով, քաւոր Պետրոսը, վերուեցաւ ինձ հետ նոյն վարպետութեամբ, որպէս վարվում է խորամանկ որսորդը իւր անփորձ, դեռ եւս որսորդութեան չսովորած շան հետ: Նոր սովորող շան առաջին որսը տալիս է իրան ուտելու, որպէս զի նա աւելի քաջալերուի, աւելի վստահութիւն ստանայ . . . : Բայց նրա աւանակի փալանի մէջ թագցրած մէթերքը եւս չտեսայ, թէ ո՞ւր տարաւ, կամ ինչ արեց . . . :

Նոյն օրը մենք դուրս եկանք Նախիջեւանից եւ գնացինք Թումբուլ գիւղը: Նախիջեւանը կանգնած է մի բարձրավանդակի վրայ, իսկ Թումբուլը գտնվում է հարեւան նրա ստորոտում:

Մտնելով այդ գիւղը, ինձ թուում էր, թէ իսկապէս մեր գիւղումն եմ գտնվում: Ոչնինչ զանազանութիւն չկար: Ես տեսնում էի տների նոյն ձեւը, որպէս մեր գիւղումն էր, մարդկանց նոյն բարբառը, նոյն լեզուն, նոյն ուրախ եւ անհոգ դէմքերը: Հագուստների ձեւն անգամ չէր փոխուել, — բոլորը նոյնն էր: Քաւոր Պետրոսը ինձ ասաց, թէ դրանք մեր գիւղացիները են. ռուս-պարսկական 26 թուի պատերազմից յետոյ գաղթեցին եւ եկան հիմնեցին այդ գիւղը:

Թումբուլցիք չէին փոխել եւ իրանց կենցաղավարութեան եղանակը եւ իրանց պարապմունքները: Դրանց էլ

այս կողմերում կոչում էին "խաչագողները„ . . . : Նոր երկիրը չուղղեց նրանց. նրանք պահպանեցին այն բոլոր յատկութիւնները, ինչ որ բերել էին իրանց հետ Պարսկաստանից . . . :

Ուղիղ տասն տարի էր անցել այն օրից, որ թուրք գաղթել էին Պարսկաստանից: Մի այսպիսի փոքր ժամանակում իրանց գիւղը դրախտ էին դարձրել: Քաւոր Պետրոսին ամենքը ճանաչում էին, իսկ ինձ ճանաչեցին հօրս անունով: Այստեղ գտնուեցան ինձ ազգականները, որոնց թուրումն էր իմ մօրաքոյրը: Մայրս շատ անգամ խօսացել էր ինձ իւր քրոջ մասին եւ միշտ մեծ կարօտութեամբ էր յիշում նրան: Քաւոր Պետրոսը տարաւ ինձ նրանց տուն: Երբ մօրաքոյրս դուրս եկաւ մեղ ընդունելու, քաւոր Պետրոսը ինձ ցոյց տալով, ասաց նրան.

— Ես չեմ ասի թէ ով է, տեսնեմ կը ճանաչե՞ս: Մօրաքոյրս նայեց իմ վրայ եւ խորին հրճուանքով գրկեց ինձ բացականչելով. — Ի՜նչպէս չը ճանաչեմ . . . իմ Մուրադն է . . . :

Նա երկար անմռունչ մնաց իմ կուրծքի վրայ:

Եթէ կանայքը չը լինէին, ես կարող էի համարձակ ասել, որ "խաչագողների„ մէջ մարդկային սիրտ չկայ: Դրանց մօտ էր պահպանուել այն աստուածային աւանդը, որ կրում է իւր մէջ բոլորը, ինչ որ գեղեցիկ է, ինչ որ լաւ է, ինչ որ առաքինական է: Դրանք սիրտ ունէին:

Մօրաքոյրս շատ նման էր մօրս. կարծես, մի ձու լինէին, մէջտեղից կէս կլոսած: Նա տեսել էր ինձ եօթն տարեկան հասակում. այն օրից անցել էր ամբողջ տասն տարի, եւ իմ պատկերը մնացել էր նրա հոգու մէջ անմոռանալի: Ես չեմ կարող նկարագրել այն սրտաշարժ տեսարանը իւր ամբողջ հոգեբանական բնաւորութեամբ, թէ

որպիսի հիացմունքով ընդունեց նա ինձ: Ամբողջ ժամերով նայում էր իմ վրայ, գրկում էր, համբուրում էր եւ ուրախանում էր: — Իմ քոյրը այժմ անբախտ չէ, ասում էր նա, որ ունի քեզ պէս սիրուն տղայ:

Քաւոր Պետրոսը ինձ թողնելով մօրաքրոջս տանը, ինքը հեռացաւ, յայտնելով, թէ մի քանի մարդկանց հետ գործեր ունի, պէտք է վերջացնէ:

Թումբուլցոց հիւրասիրութիւնը մեծ հոչակ է ստացել: Երեք օր մեզ պահեցին այնտեղ, անդադար մի անից միւսը մատն էին անում: Ամեն տեղ սփռուած էր հացի սեղանը, ամեն տեղ կերուխումով եւ ուրախութեամբ էինք անցկացնում:

Այդ խնճոյքները ինձ յիշեցնում էին միեւնոյն զուարճութիւնները, որ կատարվում էին մեր գիւղում: Այստեղ եւս, երբ հրաւիրեալների գլուխները տաքանում էին, սկսում էին մի առանձին պարծանքով պատմել իրանց քաջագործութիւնները զանազան երկիրներում: Սրանք յիշում էին այնպիսի երկրների, այնպիսի քաղաքների եւ այնպիսի ազգերի անուններ, որ ես բնաւ չէի լսել: Կարծես թէ, այդ մարդիկը աշխարհի մի ծայրից մինչեւ միւսը արշաւել էին: Քաւոր Պետրոսը բոլոր ժամանակը լուռ էր մնում: Նա լսում էր նրանց արկածքների պատմութիւնը խորին սառնասրտութեամբ, որպէս մի հսկայ, որ լսում է գաճաճների դատարկախօսութիւնը իրանց քաջագործութիւնների մասին, եւ ժպտում է միայն:

Գիշերները ես անց էի կացնում մօրաքրոջս տանը: Նա երկար նստած իմ անկողնի մօտ, չէր թողնում ինձ քնել, անդադար խօսում էր, հարցնում էր Սաւրայի մասին: Հայրենիքի սէրը դեռ մնացել էր նրա սրտում անմոռանալի: Նա դեռ յիշում էր բոլոր արտերը, այգինները,

պարտէզները, մինչեւ անգամ մեր գիւղի նշանաւոր ծառերը: Հարցնում էր սուրբ Յովհաննու մատուռի ուխտագնացութեան մասին. պատմում էր, թէ իւր ժամանակում որպիսի բազմութեամբ էր կատարվում նրա տօնախմբութիւնը: Խօսում էր կնիկների, աղջիկների սովորութիւնների մասին, թէ ինչ խաղեր էին խաղում, թէ որպիսի հանդէսներ էին կատարում, երբ ուխտ էին գնում: Հայրենական երկրի, հայրենական կեանքի բոլոր սիրելի պատկերները կենդանի մնացած էին նրա յիշողութեան մէջ:

Հազար անգամ հարցնում էր մեր ընտանիքի մասին միեւնոյն բաները եւ նրա հարցասիրութիւնը չէր յագենում: — "Մօրդ ծամերը լսո չեն սիպտակել" — "Քոյրերդ որքան են մեծացել" — "Հիմայ Նազլուն մարդու գնալու աղջիկ կը լինի" — "Ձեր սպիտակ վանի կատուն մնո՞ւմ է" — "Հիմայ որտեղ էք պահում ձեր չորացրած մրգեղէնները" — "Քանի՞ կով ունէք, օրեկան որքան կաթ են տալիս" — "Ո՞վ է կթում կովերը, ո՞վ է թխում հացը" — "Ձեր հարեւան պառաւ Գոհէն մնո՞ւմ է" — "Մայրդ ի՞նչ գոյնով քօղ է կրում. քոյրերդ ի՞նչ ձոթից հագուստ են հագնում" եւ այլն:

Ես նրա հարցերին գոհացուցիչ պատասխան էի տալիս, ի հարկէ, չէի ասում, թէ ֆէրրաշները մեր տունը այնպէս դատարկել են, որ ոչ կով է մնացել եւ ոչ վանի կատու...

Բայց այն գիշերը, որի առաւօտը ես պիտի ճանապարհ ընկնէի, նա աւելի խրատներ էր տալիս ինձ, քան թէ բաներ էր հարցնում: — "Գնա Մուրադ, ասում էր նա, — սուրբ Աստուածածինը թո՛ղ բարի ճանապարհ տայ քեզ, գնա երկրէ երկիր մեռի՛, փող աշխատի՛ր,

եւ բարձրացրուս հօրդ անունը: Քո հայրը անյայտութեան մէջ կորաւ. հիմայ դուս ես մնացել քո հօր տան միակ սիւնը: Մօրդ, քոյրերիդ, բարեկամներիդ յոյսերը քեզ վրայ են դրուած: Դուս պէտք է բոլորին ուրախացնես, դուս պէտք է բոլորին մխիթարես...:

Ես հաւատացած եմ, եթէ մօրաքոյրս գիտենար, թէ "խաչագողները" ի՞նչ միջոցներով են փող աշխատում, նա երբէք ինձ խորհուրդ չէր տայ, որ ես օտար աշխարհ գնայի եւ նրանց հետ թափառէի: Բայց նա չէր իմանում... ես նոյնպէս չէի իմանում...:

Քաւոր Պետրոսին խիստ սակաւ էի տեսնում: Նա ինչ որ պատրաստութիւններով զբաղուած էր: Թումբուլը մի նշանաւոր կայարան էր Պարսկաստանի "խաչագողների" համար, որտեղից վեր էին առնում իրանց գործունէութեան համար պէտք եղած բոլոր պարագայքը, ինչ որ իրանց պակաս էր: Բայց ես քաւոր Պետրոսի վերաբերութեամբ տակաւին այդ կարծիքը չունէի:

Նա մի առաւօտ բերեց իւր հետ մի թուղք եւ վաճառեց իմ աւանակը: Շշմարիտն ասած, ինձ խիստ զգալի էր բաժանուել իմ խոնարհ եւ հաւատարիմ ընկերից, որ այնքան ժամանակ ճանապարհորդել էր ինձ հետ եւ ամենայն յօժարութեամբ կրել էր իմ ծանրութիւնները: Բայց քաւոր Պետրոսը հանգստացրեց ինձ, ասելով.

— Աւանակի փողը այն փողերի հետ, որ դուս վաստակեցիր քո վաճառքներից, պիտի ուղարկես մօրդ. դուս գիտես, որ նա իւր մի հատիկ կովը ծախեց եւ գնեց քեզ համար այդ աւանակը:

— Այդ ես գիտեմ: Բայց դրանից յետոյ ինչով կարող եմ շարունակել իմ ճանապարհորդութիւնը:

— Դուս կը նստես մի փառաւոր կառքի մէջ:

Ես զարմացայ: Բայց իմ զարմանքը երկար չտեւեց: Քանի րոպէից յետոյ մի գեղեցիկ ճանապարհորդական կառք կանգնեց մօրաքրոջս դրանը: Երկու ուժեղ սեւ ձիաները լծած էին կառքին Թումբուլցիք ունէին կառքեր, ունէին լաւ ձիաներ, որ բերում էին իրանց հետ, երբ վերադառնում էին Ռուսաստանից: Երբ իրանց պէտք չէին, վաճառում էին: Քաւոր Պետրոսը այդ կառքը եւ ձիաները գնել էր մի "խաչագողից", որ նոր էր վերադարձել պանդխտութիւնից:

Կառքի մէջ տեղաւորուած էին զանազան մեծ եւ փոքր արկղներ: Ի՞նչ կար նրանց մէջ, — ես չգիտէի: Միայն քաւոր Պետրոսը տուեց ինձ մի ձեռք լաւ հագուստ, մի զոյգ ուղեւորի կօշիկներ, եւ հրամայեց հագուստս փոխել: Այդ նորաձեւ հագուստին ես բոլորովին անսովոր էի. մօրաքոյրս օգնեց ինձ հագնելու: Քաւոր Պետրոսը նոյնպէս փոխել էր այն ցնցոտիները, որոնցով մի քանի օր առաջ մուրացկանի պէս կանգնած Թաբրիզի եկեղեցու դրանը, ողորմութիւն էր ընդունում: Այժմ մեր հագուստը բոլորովին համապատշաճ էր այն փառաւոր կառքին, որի մէջ պիտի նստէինք:

Մօրաքոյրս տուեց ինձ մի նամակ, խնդրեց, որ հասցնեմ իւր ամուսնին: Նրա ամուսինը պանդխտութեան մէջ էր: Նամակի վրայ միայն գրած էր ամուսնի անունը եւ անզգանունը. քաղաքի անուն չկար: "Խաչագողները" միշտ այսպէս են գրում իրանց պանդուխտների հասցէները, որովհետեւ չգիտեն, թէ ո՛րտեղ են գտնվում նրանք: Նամակատարը պահում է իւր մօտ նամակը, եթէ մի տեղում կը հանդիպէ պանդուխտին, կը տայ: Բայց խիստ հազիւ էր պատահում, որ նամակները տեղ հասնէին, կամ տանողն էր կորչում, կամ ստացողը վաղուց արդէն կորած էր լինում...:

Աւանակներով մտանք Թումբուլ եւ դուրս եկանք այնտեղից կառքով: Դա ինչ հրաշք էր...:

Ժամատան դրանը քաւոր Պետրոսի ծանօթները սպասում էին, որ մեզ ճանապարհ դնեն: Մօրաքոյրս իւր երեխաների հետ եկաւ մինչեւ գիւղից դուրս: Ամեն կողմից թափվում էին բարեմաղթութիւնները. ամեն բան ցանկանում էր մեզ բարի ճանապարհ եւ բախտաւոր վերադարձ:

Վերջապէս յայտնուեցաւ քահանան, կարդաց "ՏԸր, ուղղեա զճանապարհս խաղաղութեամբ, աղօթքը, եւ մեր կառքը շարժուեցաւ...:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ա.

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՆՈՒԻՐԱԿԸ



Ուսական 1840 էր։

Անցել էր հինգ տարի այն օրից, որ մենք թողեցինք Պարսկաստանը։

Ռուսաստանի հիւսիսային, հեռաւոր գաւառներից մէկում, անապատի մէջ ցրուած գիւղերի միջով, անցնում էր մի ծածկուած կառք։ Հինգ միագոյն ուժեղ ձիաներ տանում էին նրան։

Այդ կառքը, այնպէս ծածկուած, անցել էր շատ նահանգներ, շատ գաւառներ եւ ամեն տեղ, որտեղ յայտնուել էր նա, ժողովուրդը խորին ջերմեռանդութեամբ հանդիպել էր նրան եւ նրա փոշին սրբել էր իւր համբոյրներով։ Այժմ կառքը շարժւում էր դէպի մի

մեծ գիւղ, որ չորս վերստ հեռաւորութեան վրայ էր: Ճանապարհի ամբողջ երկարութիւնը, որ տանում էր դէպի յիշեալ գիւղը, պատած էր մարդիկներով: Ծեր, մանուկ, այր եւ կին կոս էին տալիս միմեանց, առաջ էին մղւում, որ տեսնեն անցորդին: Բայց անցորդը չէր երեւում. ծածկուած կառքի լուսամուտների վարագոյրներն անգամ ցած էին թողած:

Կառապանի տեղը նստած էր եւ կառավարում էր ձիաները մի աբիսինիացի խաւիշիկ նիհար դէմքով եւ բաց ղահուէի գունով: Սառը հիւսիսը, կարծես, փոքր ինչ փոխել էր տաք աշխարհի որդու բնական գոյնը եւ խլել էր նրա սեւութիւնը:

Կառքի ետեւում նստած էր մի երիտասարդ արեւելեան թուխ դէմքով եւ երկայն դանդրահեր մազերով: Այդ մազերը սեւ սաթի նման փայլում էին: Նրա ամբողջ հագուստը նոյնպիսի սեւ գոյն ունէր, որպէս զի մազերը: Պատրաստուած էր կոշտ բուրդից: Այսպիսի հագուստ արեւելքում կրում են անապատական աբեղանները միայն, որոնք աշխարհ չեն մտնում, մարդկանց երես չեն տեսնում, այլ առանձնացած իրանց խցիկներում, աղօթում են կամ սուրբ գրքեր են կարդում:

Կառքի մէջ նստած էր մի անձնաւորութիւն միայն: Նրան ոչ ոք չէր տեսնում:

Երբ կառքը մօտեցաւ գիւղին, սկսեցին զանգակները հարկանել: Այդ ժամանակ միայն կառքի փոքրիկ լուսամուտների վարագոյրները բարձրացան, եւ աչ կողմի լուսամուտը բացուեցաւ: Այստեղից դուրս պարզուեցաւ մի ձեռք եւ սկսեց խաչակնքել, օրհնութիւն տալ ամբոխին.

Ձեռքի երեսը եւ բազուկը (որ բոլորովին մերկ էր) դրոշմուած էին մոյգ-կապտագոյն նկարներով (татуированный), որոնք ներկայացնում էին սերովբէներ, քերովբէներ եւ մի վանքի պատկերը, զարդարած խաչերով: Մուժիկները մօտենում էին եւ ջերմեռանդութեամբ համբուրում էին այդ խորհրդաւոր ձեռքը: Նրա շաղանակի գոյն ունեցող կաշուց երեւում էր, որ կրողը ծնուել էր տաք կլիմայի տակ, ուր մարդկանց կաշին արեւի ջերմութեան ներքոյ կորցնում է իւր սպիտակութիւնը:

Կառքը մտաւ գիւղը:

Այդ կառքը ամեն գիւղ, ամեն փոքրիկ քաղաք, ուր որ հասնում էր, կանգնում էր կամ եկեղեցու դրանը, եթէ այնտեղ կար յարմար իջեւան, կամ հոգեւոր առաջնորդի դրանը եւ կամ աւագ քահանաների դրանը: Նա իրան հեռու էր պահում աշխարհականների բնակարաններից: Իսկ այսօր նրան ընդունելու համար պատրաստուած էր գիւղի հարուստ կալուածատիրոջ տունը:

Կառքը դանդաղ էր շարժվում: Ուժեղ ձիաները, հակառակ իրանց կամքի, գնում էին համրընթաց քայլով: Որովհետեւ նրանք իրանց ընթացքը պիտի յարմարեցնէին ահագին ամբոխի շարժման հետ, որ շրջապատել էր կառքը: Երեւում էր, այդ խելացի անասունները այնքան սովրած էին այսպիսի բազմութեան, որ բնաւ չէին խրտչում, այլ մի առանձին կամակատարութեամբ, այնքան կամաց էին գնում, որ ամբոխը որքան կամենում է նայէ եւ բաւականացնէ իւր փափաքը:

Փողոցները, տների լուսամուտները բռնուած էին մարդիկներով: Կնիկները, իրանց երեխաներին գրկած, անց էին կենում ձիաների երասանակների տակով: Շատերը փորձում էին անիւների տակով անցնել:

Կառքը կանգնեց գիւղի կալուածատիրոջ տան դրանը: Նրա ետեւում նստած գանգրահեր երիտասարդը

ցած ցատկեց, եւ շուտով բաց անելով նրա դռնակը, օգնեց նստողին դուրս գալու: Գիւղի երկու քահանաները եւ կալուածատէր պարոնը մեռան սրբազան հիւրի թեւքերի տակը, եւ համարեա ձեռքերի վրայ նրան ներս տարան:

Թէեւ երիկոյ էր, բայց տակաւին բաւական լոյս կար: Այստ առենայնիւ, բազմութիւնը դարձեալ զուրկ մնաց նրա դէմքը տեսնելուց: Որովհետեւ երեսի վրայ ձգած ուներ մի տեսակ լինտ օտարոտի քող, որի վրայ նկարուած էր վերջին դատաստանի սոսկալի պատկերը:

Երբ նրան ներս տարան իւր համար յատկապէս պատրաստուած սենեակը, երեսի քօղը վեր առեց: Յայտնուեցաւ մի պատկառելի դէմք փառահեղ սպիտակ մօրուքով, երկայն ալէխառն մազերով: Արդարութիւնը, հոգեւոր խաղաղութիւնը, լուսաւորուած ջերմ հաւատքով, դուրս էին ցոլանում նրա երեսի մեղմ գծերից:

Տունը գեղեցիկ կերպով զարդարած էր: Նրա տէրերը այն տեսակ աղնուականներից էին, որոնք իրանց կեանքի առոյգ տարիները մայրաքաղաքների զեղխութեան, շռայլութեան եւ անբարոյական շուայտութիւնների մէջ մաշում են, ապառում են, եւ երբ մօտենում են գերեզմանին, այնուհետեւ յոգնած, ձանձրացած, վերադառնում են դէպի հեռաւոր գաւառը, եւ անձնատուր են լինում կրօնական բարեպաշտութեան:

Առանձնանալով մի հեռաւոր գիւղ խուլ անկիւնում, այդ տեսակ մարդիկ չեն զլանում, հին յիշողութիւնները պահպանելու համար, շրջապատել իրանց այն զարդարանքներով, այն խայտաճամուկ առարկաներով, որոնց մէջ մի ժամանակ լողում էին: Այդպէս զարդարուած էր եւ յիշեալ կալուածատիրոջ տունը:

Մի գեղեցիկ դիւան, պատած մանիշակագոյն ատլասով, սպասում էր, որ յարգելի հիւրը նստէր նրա վրայ: Երբ տան տէրը հրաւիրեց նստել, յարգելի հիւրը կանգ առեց գեղեցիկ դիւանի առջեւ, եւ մի տեսակ զարմացական հայեացք ձգելով նրա վրայ, արտասանեց այդ խօսքերը.

— Մեր Տէր Յիսուս Քրիստոսը Բեթլեհէմի մսուրի մէջ ծնուեցաւ, եւ առաջին անգամ աղքատ, խղճուկ հովիւների հետ տեսնուեցաւ: Այնուհետեւ շատ գիշերներ անց էր կացնում բացօթեայ, մերկ գետնի վրայ պառկելով: Այժմ նրա անարժան աշակերտին ինչ կը վայելէ այսպիսի փառաւոր գահաւորակի վրայ բազմել: Այդ խօսքերը արտասանեց նա յուզմունքից լեզուով, իսկ գանգրահեր երիտասարդը թարգմանեց ռուսերէն:

Տան տէրը չգիտէր՝ վերաւորուե՞լ, թէ ամաչել իւր, քրիստոնէական սակաւապէտութեան հակառակ, շռայլ կենցաղավարութեան համար:

Գանգրահեր երիտասարդը, մանաւորապէս ծանօթացնելով տան տիրոջը "վշտալի հօր„ սովորութիւնների հետ, յայտնեց թէ աւելի յարգած կը լինէին, եթէ թոյլ կը տային նրան չհեղձուիլ իւր կեանքի սովորական եղանակներից: Այդ խօսքերի հետ գանգրահեր երիտասարդը տարածեց դիւանի մանիշակագոյն ատլասի վրայ մի մաշուած կապերտի կտոր, որ "վշտալի հօր„ գործածական օթոցն էր: Նրա վրայ եւ նստում էր նա, եւ գիշերները քնում էր:

Նա իւր ծանր հոգեթափները հանեց դիւանի առջեւ եւ ասիական կերպով ծալապատիկ բազմեցաւ նրա վրայ: Այդ հոգեթափները, երկու մատնաչափ հաստ տակերով, նոյն ձեւը ունէին, որպէս մեր քահանաները հագնում են սուրբ սեղանի վրայ պատարագ մատուցանելու ժամանակ:

Նրա անշուք, անպաճոյճ զգեստը իւր վրայ առանձին ուշադրութիւն էր դարձնում: Դա կոշտ մաղից գործուած մի տեսակ մոյգ-մոխրագոյն հագուստ էր, որը անապատներում կոչում են "խարազն", իսկ հագնողներին "խարազնազգեստ": Այդպէս հագնվում են միայն իրանց անձը ամենախիստ ճգնութիւնների ենթարկող անապատական աբեղաները: Գլխին կրած ունէր մոյգ-լաջվարդի գոյնով ֆէս, փաթաթած սեւ ապարօշներով, որոնց ծայրերը իջնում էին մինչեւ ուսերը: Վերնազգեստը արեւելեան կրօնաւորների ֆարաջայի նմանութիւնն ունէր, մինչեւ կրունկները հասած լայն փէշերով եւ բաւական ընդարձակ թեւքերով: Մէջքը սեղմուած էր սեւ կաշուց պատրաստուած լայն գօտիով: Մի ահագին երկաթեայ խաչ զարդարում էր նրա կուրծքը, որ կախուած էր նոյնպէս երկաթեայ հաստ շղթայից: Գլխի եւ երեսի մազերը այնքան աճել էին, որ կարծես երբէք մկրատի եւ ածելու հետ ծանօթ չեն եղել: Այդ տալիս էր նրա դէմքին դերվիշի տպաւորութիւն:

Այդ աբեղան Երուսաղէմի վանքի նուիրակ էր, իսկ գանգրահեր երիտասարդը, որ իւր հագուստի ձեւերով շատ չէր տարբերվում իւր վարդապետից, նրա սարկաւագն էր:

Մինչեւ այս տունը հասնելը, աբեղայի մասին ռամիկ գիւղացիների մէջ տարածուել էին շատ առեղծուածային պատմութիւններ, շատ առասպելներ: Ասում էին, որ նա ոչինչ չէ ուտում, ոչինչ չէ խմում, այլ միայն աղօթքով է կերակրվում: Ասում էին, որ նա կոյրերի, կաղերի, հիւանդների վրայ բժշկութիւններ է անում, եւ ուրիշ շատ այսպիսի բաներ էին ասում: Բայց ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ նա չափազանց պարզ եւ սակաւապէտ մարդ էր. խորշում էր ամեն տեսակ վայելչութիւնից,

որոնք թուլացնում են հոգին, իսկ սնուցանում են մարմնականը եւ անասնականը մարդու մէջ:

Երբ աբեղան ծալապատիկ նստեց դիւանի վրայ, գիւղի երկու քահանաները եւ տան տէրը դեռ կանգնած էին նրա առջեւ, չէին համարձակվում նստելու: Նա խնդրեց, որ նստեն, ասելով.

— Դուք նստեցէք, որպէս սովոր էք:

Տան տէրը տեղաւորուեցաւ բազկաթոռի վրայ, իսկ երկու քահանաները, նստեցին հեռու աթոռների վրայ:

Հիւրանոցում, ուր գտնվում էին նրանք, տիրում էր մի տեսակ ծանր լռութիւն: Տան տէրը, չնայելով որ բաւական զուարճախօս եւ մինչեւ անգամ շատախօս մարդ էր, ինչպէս լինում են առհասարակ շատ մեծ եկած, շատ բան տեսած եւ շատ բան լսած ծերունիները, — այսու ամենայնիւ, չգիտեր ինչ առարկայի վրայ խօսել իւր տարապայման հիւրի հետ: Նա գտնվում էր մի տեսակ երկիւղածութեան մէջ, որ տիրում է մարդու սրտին, երբ զգում է գերբնական էակների ներկայութիւնը: Իսկ քահանաները վախենում էին խօսել աւելի այն պատճառով, որ ցոյց չտան իրանց տգիտութիւնը:

Վերջապէս կից սենեակի դռնից ներս մտաւ տան տիկինը իւր զաւակների ահագին խումբով եւ հիւրանոցի լռութիւնը փոքր ինչ փարատուեցաւ, փոքր ինչ կենդանացաւ:

Ամենամին այրը կանգնեց, սկսեց ներկայացնել նախ իւր տիկնոջը, յետոյ իւր աղջիկներին եւ որդիներին: Բոլորը հերթով մօտեցան, համբուրեցին աբեղայի ձեռը եւ օրհնութիւն առին:

Տիկինը նստեց աբեղայի դիւանի մօտ, մեծ աղջիկները եւ մեծ որդիները տեղաւորուեցան միւս կողմում, իսկ

փոքրիկները մի քանի րոպէ ոտքի վրայ մնացին, ձանձրացան եւ դուրս գնացին:

Յարգելի հիւրը, ինչպէս երեւում էր, կանանց զբաղեցնել չգիտէր, եւ կարծես թէ, նրանց ներկայութիւնից նեղվում էր: Այդ երեւում էր այն անախորժ արտայայտութիւնից, որ նկատվում էր նրա տխուր դէմքի վրայ, որը ամենայն ջանքով աշխատում էր թագցնել: Դա կուսակրօնի սովորական վրդովմունքն է, երբ հանդիպում է կնոջ: Բայց ինչով բացատրել այդ:

— Ձեր սրբազնութիւնը, երեւի, շատ հեռուից է գալիս, տան տիրուհին սկսեց խօսակցութիւնը:

Աբեղան դարձաւ դէպի գանգրահեր սարկաւագը, որ կանգնած էր նրա մօտ: Թարգմանը պատասխանեց.

— Այո, հեռուից, շատ հեռուից: Ամբողջ երեք ամիս ճանապարհ ենք անցել, մինչեւ հասել ենք այստեղ:

Այդ միջոցին ֆրակով եւ սպիտակ ձեռնոցներով ներս մտան երկու սպասաւորներ եւ արծաթեայ մատուցարանների վրայ տուեցին թէյ:

Աբեղան հրաժարուեցաւ ընդունելուց, ասելով, որ սուրբ տաճարի սպասաւորները իրանց հետու են պահում անուշ ըմպելիքներից: Տան տիկինը երկար աշխատում էր բացատրել, համոզել նրան, թէ դա հասարակ թէյ է, ուրիշ ըմպելիք չէ, թէ դրան գործ են ածում իրանց երկրում մինչեւ անգամ էգզարխները:

Չկամենալով վշտացնել տան տիկնոջ բարեսրտութիւնը, աբեղան ընդունեց մի բաժակ եւ սկսեց առանց շաքարի խմել: Երկու քահանաները, հետեւեցին նրա օրինակին եւ հակառակ իրանց սովորութեան սկսեցին իրանք էլ կծովի խմել:

Տիկինը հետաքրքրուեցաւ գիտենալ, թէ ինչ նպատակով է ճանապարհորդում "նորին սրբազնութիւնը„: (Տիկինը միշտ նրան "սրբազնութիւն„ էր կոչում, թէեւ յարգելի հիւրը եպիսկոպոս չէր, այլ Երուսաղէմի վանքի յունաց միաբանութեան աբեղաներից էր:)

Աբեղան համառօտ կերպով յայտնեց իւր ուղ լինելը կամ ինչ միաբանութեան կողմից իբրեւ Երուսաղէմի նուիրակ ուղարկուած լինելը, — յայտնեց իւր ճանապարհորդութեան նպատակը: Այնուհետեւ խիստ ցաւալի կերպով սկսեց նկարագրել "սուրբ տաճարի„ թշուառ դրութիւնը, — նկարագրեց Փրկչի սուրբ գերեզմանի հալածանքը մահմեդականներից, — նկարագրեց միաբանների կրած նեղութիւնները թուրքերից, նրանց աղքատութիւնը եւ ողբալի վիճակը: Նրա ամբողջ պատմութիւնը այնքան աղդու եւ ցաւակցական էր, որ տան տիրուհին լսելու ժամանակ անդադար խաչակնքում էր իւր երեսը. վերջը նա այլ եւս դիմանալ չկարողացաւ, թաշկինակը տարաւ աչքերին, սկսեց դառն կերպով հեկեկալ:

Աբեղան նկատելով այդ, մխիթարեց նրան ասելով.

— Սուրբ տաճարի բոլոր թշուառութիւններին դարման կը տրուի բարեպաշտ հաւատացելոց նուիրատուութեամբ: Ես ուխտել եմ այնքան ժամանակ չուտել, չխմել, չքնել, եւ այդ երկաթէ շղթան (նա ձեռքը տարաւ դէպի հաստ շղթան, որից քարշ էր ընկած ահագին երկաթեայ խաչը նրա կուրծքի վրայ) միշտ իմ պարանոցին կրած պիտի ունենամ, — մինչեւ բարեպաշտ հաւատացելոց օժանդակութեամբ չհաւաքեմ այնքան նուէրներ, որոնցով կարելի լինի Փրկչի սուրբ գերեզմանը գերութիւնից ազատել:

— Մի՞թէ գերութեան մէջ է նա, բացականչեց տիկինը:

— Այո՛, գերութեան մէջ է, անօրէնների ձեռքում...: Վանքը պարտքի տակ է ընկած... սրբութիւնները դրաւ են դրուած...:

— Աստուածդ իմ, Աստուածդ իմ, բացականչեց տիկինը, դարձեալ թաշկինակը տարաւ դէպի աչքերը:

Տիկնոջ օրինակին հետեւեց եւ նրա ամուսնի այրը: Երկու քահանաները նոյնպէս փորձեցին զգացուած ձեւանալ:

Թէյի երկրորդ բաժակը ընդհատեց այդ տխուր խօսակցութիւնը. սպասաւորները արծաթեայ մատուցարանները ձեռքներում կրկին ներս մտան:

Բոլոր ժամանակը աբեղան խօսում էր յունարէն, իսկ դանդրահեր երիտասարդը թարգմանում էր նրա ասածները: Այդ վերջինը ռուսերէն նոյնպէս շատ փոքր գիտէր, եւ այդ աւելի հետաքրքրական էր դարձնում նրա խօսքերը, երբ շատ բաներ մնում էին անհասկանալի:

Թէյի երկրորդ բաժակից յետոյ խօսակցութիւնը ընդունեց ուրիշ ուղղութիւն: Տան տէրը հարցրեց.

— Երուսաղէմի մէջ այժմ քի՞նչ սրբութիւններ են մնացել:

— Շատ սրբութիւններ են մնացել, պատասխանեց աբեղան, — որոնց թուումն է Յիսուս Քրիստոսի օրօրոցը: Իսկ այդ սուրբ օրօրոցը վաղուց է, որ թուրքերը խլել են մեզանից, պահվում է Օմարի մէչէդում: Երբ մի քրիստոնեայ մտնում է այնտեղ, սուրբ օրօրոցը սկսում է ինքն իրան օրօրուել: Այդ պատճառով քրիստոնեաներին թոյլ չեն տալիս, որ այնտեղ մտնեն:

— Անիծեա՛լներ... բացականչեցին երկու քահանաները, որ բոլոր ժամանակը լուռ էին:

— Այլ եւս քի՞նչ կայ, հարցրեց տան տէրը:

— Յուդայի վերապը, պատասխանեց աբեղան, կարծես թէ դա էլ սրբութիւնների կարգումն էր:

— Յուդայի վերա՞պը, կրկնեց տան տիրուհին երեսը խաչակնքելով:

— Այո՛, Յուդայի վերապը: Անիծեալ Յուդան դեռ կենդանի է այն խոր վերապի մէջ:

— Ի՞նչպէս չէ դուրս գալիս, հարցրեց տան տէրը զարմանալով:

— Յօրի բերանը Աստուծոյ հրամանով յաւիտեան ծածկուած է ահագին ժայռով: Երբ գալիս է աւազ ուրբաթ գիշերը, այսինքն այն գիշերը, որ անիծեալը մատնեց մեր Տէր Յիսուսին, — խորի միջից լսւում են սարսափելի ձայներ, լսւում են նրա տանջանքի հառաչանքները...:

— Երեւի, սատանաները չարչարում են անիծեալին, մէջ մտաւ երկու քահանաներից մէկը:

— Այո՛, չարչարում են... նա միշտ կը չարչարուի եւ այնպէս կը մնայ մինչեւ Յիսուս Քրիստոսի սոսկալի դատաստանի օրը:

— Անիծեա՛լ Յուդա... դարձեալ կրկնեցին ամեն կողմից:

— Այլ եւս քի՞նչ կայ, հարցրեց տիկինը:

— Մի սուրբ աղբիւր, որ գոյացած է Մարիամ Մագթաղենացու արտասուքներից: Կոյրերը բժշկւում են, երբ լուացւում են նրա ջրով:

— Ուղարկենք այնտեղ մեր Փեդկային, ասաց տիկինը, դառնալով դէպի իւր ամուսինը:

Փեդկան նրանց փոքրիկ որդին էր, որի աչքերից մէկը ծաղկից փչացել էր:

— Բժշկութեան համար հաստատ յոյս եւ հաւատ պէտք է, նրանց խօսքը կտրեց աբեղան։

Աբեղայի պատմութիւնները Երուսաղէմի նուիրական տեղերի մասին հետզհետէ աւելի եւ աւելի հետաքրքրական էին դառնում։ Նա խօսեց "Թափառական հրէայի" մասին. Նա խօսեց "անբան մարգարէի" գերեզմանի մասին. Նա խօսեց "Զիթենեաց լերան" եւ "Գեթսեմանի ձորի" մասին. Նա խօսեց "վա՛յ-վա՛յ-գօլի" կոչուած լճակի մասին եւայլն։

— Այդ ի՞նչ լիճ է, հարցրեց տիկինը։

— Դա այն լիճն է, պատասխանեց աբեղան, — որի մէջ Յիսուս Քրիստոսը մանուկ հասակում միանգամ լողանում էր ուրիշ շատ երեխաների հետ։ Չար երեխաները տանջում էին նրան։ Փոքրիկ Յիսուսը վեր առեց մի բուռն աւազ, ցրուեց չար երեխաների վրայ, նրանք բոլորն էլ գորտեր դարձան եւ մնում են մինչեւ այսօր, անդադար աղաղակելով "վա՜յ-վա՜յ", — այդ պատճառով էլ այդ լիճը կոչվում է "վայ-վայ-գօլի", որ նշանակում է վայ-վայի լիճ։

Զարմացած տիկինը, դարձաւ դէպի իւր որդիները, ասելով.

— Լսո՞ւմ էք, զաւակներս, թէ ինչպէս է պատժվում չարութիւնը։

Նրանք կարմրեցին։

Սեղանատանը պատրաստուած էր ճոխ ընթրիք։ Տան տէրը մնաց այնտեղ, տեսնելու, մի գուցէ մի բան պակաս լինէր։ Նա կանչեց գանգրահեր երիտասարդին նրա հետ խորհրդակցելու։

— Ներեցէք, խնդրեմ, հարցրեց նրանից. — ձեր հայր սուրբը ո՞րպիսի գինիներ, ո՞րպիսի նախաճաշիկներ աւելի շատ է ախորժում։

Գանգրահեր երիտասարդը աչք ածեց հարուստ պատրաստութեան վրայ, մի առանձին ախորժանքով պատասխանեց.

— Այդ բոլոր գեղեցիկ պատրաստութիւններից իմ հայր սուրբը ոչինչ չէ կարող ո՛չ ուտել եւ ո՛չ խմել։

— Ներեւակայեցէք, պատուելի, ասաց տան տէրը ներողութիւն խնդրելով, — մենք համարեա անապատների մէջ ենք ապրում. հազարաւոր վերստերով մեծ քաղաքներից հեռու գտնուելով, ամեն բանից զրկուած ենք։ Ինչ որ տեսնում էք այստեղ, այն եւս հազիւ կարելի է գտնել. մենք բերել ենք տուել Մօսկվայից։

— Ներեցէք, տէր իմ, պատասխանեց երիտասարդը։ — Ես լաւ չկարողացայ հասկացնել իմ միտքը։ Այդ բոլորը շատ գեղեցիկ է, չափազանց է եւ մինչեւ անգամ արքայավայել է, բայց իմ հայր սուրբի համար չէ։

— Ի՞նչու։

— Նա ամբողջ տարին պահեցողութեամբ է անցկացնում, համարեա աղ ու հացով. իսկ այստեղ պահոց ոչինչ չկայ։ Ուտում է միայն սուրբ Յարութեան զատկին եւ սուրբ ծննդեան տօնին, այն եւս ոչ միս, այլ սակաւ ինչ իւղեղէն։ Իսկ գինիներ ամենեւին չէ խմում, միայն պարզ ջուր է գործածում։

— Այդ զարմանալի է, շատ զարմանալի։

Հիւրընկալը սաստիկ դժուարութեան մէջ ընկաւ։ Գանգրահեր երիտասարդը նկատելով այդ, ասաց նրան.

— Սուրբ գերեզմանի պաշտօնեաները բոլորը այդպէս են։ Դուք աւելի յարգած կը լինէք ձեր հիւրին, եթէ թոյլ կը տաք նրան իւր սովորութիւններին հետեւել։ Մի պնակ խաշած սիսեռը խիստ ճոխ ընթրիք է

նրա համար: Եթէ այդ էլ չգանուի, նա շատ գոհ կը լինի, եթէ ցանաք հացով կը կերակրուի:

Ընայելով ժուժկալութեան այդ բոլորը խստութիւններին, տան տէրը պատուիրեց պահոց մի քանի տեսակ կերակուրներ, որոնք աբեղային բաւական տհաճութիւն պատճառեցին, թէեւ նա այդ մասին քաղաքավարութեամբ լռեց:

Ընթրիքը վերջացաւ աւելի զուարճութեամբ, քան թէ սպասւում էր: Հայր սուրբը շատ նոր եւ հետաքրքիր բաներ պատմեց Երուսաղէմի վանքի մասին, աբեղաների խիստ ու աշխարհազուրկ կենցաղավարութեան մասին, ուխտաւորների ծոնական հանդիսակատարութիւնների մասին, եւ այն հրաշքի մասին, թէ որպէս սուրբ Յարութեան զաւկի օրը երկնքից լոյս է իջնում Փրկչի գերեզմանի վրայ եւ սուրբ տաճարի բոլոր ջահերը, բոլոր մոմերը միանգամից վառվում են:

Նրա պատմութիւնները լինում էին լսողների սրտերը կրօնական ջերմեռանդութեամբ, վառում էին նրանց հաւատքը եւ մի առանձին հոգեզմայլութեամբ նրանց սրտերը ձգում էին դէպի այն հեռաւոր բիբլէական աշխարհը, ուր ծնուել էին Աստուծոյ մարգարէները, ուր տիեզերքի Փրկիչը կատարել էր Նոր Ուխտի աստուածային պատգամները:

Ընթրիքից յետոյ, որովհետեւ հայր սուրբը յոգնած էր, իսկոյն սկսեցին մտածել նրա հանգստութեան համար: Բարեպաշտ տան տիկինը ինքը անձամբ առանձին խնամք էր տանում նրա անկողնի պատրաստութեան մասին: Այդ զանազան վարագոյրներով, բազմաթիւ մեծ եւ փոքրիկ բարձիկներով, տեսակ-տեսակ վերմակներով եւ դրօշակներով կազմուած փափուկ, փետրային անկողինը,

կարծես թէ, պատրաստուած լինէր Մորփէոսի ձեռքով: Եւ որպէս զի նոյն անախորժութիւնները տեղի չունենային, ինչ որ եղաւ ընթրիքի ժամանակ կերակուրների վերաբերութեամբ, տիկինը կանչեց քնարանում գանգրահեր սարկաւագին, տեղեկանալու համար նրա հայր սուրբի քնելու սովորութիւնների մասին:

— Այդ ինչ է, յարգելի տիկին, բացականչեց գանգրահեր երիտասարդը զարմանալով. — դուք, երեւի, մոռացել էք իմ հայր սուրբին մեղքի մէջ ձգել. աւելի շուտով նա յանձն կ'առնի պառկել Սադայէլի գրկում, քան թէ այդ փառաւոր անկողնի մէջ:

Տիկինը վերաւորուեցաւ երիտասարդի երկմտանի նկատողութիւնից: Երիտասարդը շուտով ուղղեց իւր սխալը, աւելացնելով.

— Երուսաղէմի խստակեաց աբեղաները մեղք կը համարեն այս տեսակ փառաւոր անկողինների մէջ քնելը: Իմ հայր սուրբը ունի իւր առանձին անկողինը, որ միշտ իւր հետ է մեն ածում. նրա մէջ կը պառկի:

Այդ խօսքերի հետ երիտասարդը մոռաւ այն սենեակը, ուր դրած էին իրանց իրեղէնները, եւ բերեց այնտեղից կոշտ մաղից պատրաստուած մի վերմակ եւ մի փոքրիկ բարձ, մէջը լցրած խոտով ու երեսը պատած սեւ սաֆիանով: Դրանց հետ էր այն մաշուած կապերտի կտորը, որ տարածուած էր գեղեցիկ դիւանի մանիշակագոյն ատլասի վրայ, եւ որին հայր սուրբը դորձ էր ածում եւ իբրեւ օթոց եւ իբրեւ դօշակ քնելու ժամանակ:

— Ահա նրա մահճի բոլոր պարագայքը, ասաց երիտասարդը, ցած դնելով ցնցոտիները: — Այդ տեսակ մահիճը լաւ է այն կողմից, որ նրա մէջ դժուար է երկար քնել, եւ այդ իմ հայր սուրբի համար շատ հար-

կաւոր է: Իսկ այն վառաւոր անկողինը հանգիստ քուն կը բերէ. դա շատ վատ է, վտանգաւոր է:

Տիկինը չգիտեր զարմանալ, թէ ծիծաղել երիտասարդի միամտութեան վրայ: Վերջը չկարողանալով զսպել իր համբերութիւնը, ասաց.

— Չէ՞ որ քնում եմ հանգստանալու համար:

— Այդ ուղիղ է, պատուելի տիկին, բայց ոչ ամեն մարդիկ: Իմ հայր սուրբը գիշերուայ մէջ մի ժամ հազիւ է քնում. յետոյ զարթնում է, ճլապը վառում է, սկսում է կարդալ: Ամեն գիշեր պէտք է ծայրէծայր վերջացնէ Դաւթի սաղմոսների ընթերցումը: Յետոյ կարդում է Սողոմոն իմաստունի առակները, յետոյ մարգարէութիւնները, յետոյ Պօղոս առաքեալի թղթերը, եւ միւսները այդ կարգով: Մի այսպիսի կոշտ անկողին անհրաժեշտ է, որ քունը չյաղթէ մարդուն: Բայց դարձեալ երբեմն չար սատանան հակառակվում է եւ քունը յաղթում է: Դրա համար իմ հայր սուրբը հազնում է բոլորովին այլ տեսակ շապիկներ, քան թէ հազնում են հասարակ մարդիկ:

Տիկնոջ զարմացումը այժմ փոխուեցաւ հետաքրքրութեան: Նա հարցրեց.

— Ի՞նչ տեսակ շապիկ:

— Եթէ պատուելի տիկինը հետաքրքրվում է, ես այս րոպէիս կարող եմ ցոյց տալ:

Երիտասարդը դարձեալ մտաւ այն սենեակը, ուր դրած էին իրանց իրեղէնները: Բազմաթիւ մեծ եւ փոքրիկ արկղներից մէկը բաց արաւ, եւ այնտեղից դուրս բերեց տօպրակի պէս մի բան, որը ֆուֆայկայի նմանութիւն ունէր այն կողմից, որ երկու նեղ թեւքեր ունէր: Տիկինը մինչեւ անգամ վախեցաւ իր ձեռքով շօշափել այդ օտարոտի շապիկը, եւ միայն հեռուից սկսեց նայել նրա վրայ:

Միայն ինկվիզիցիան կարող էր հնարել մի այսպիսի սատանայական զգեստ իւր դատապարտեալներին տանջելու համար: Շապիկը գործուած էր նոյնպէս կոշտ մազից, բայց նրա հիւսուածքի մէջ փայլում էին հազարաւոր մանրիկ ասեղնիկներ, որոնք իրանց սուր ծայրերը դարձրել էին դէպի այն կողմը, որ պիտի շօշափուէր մարմնի կաշու հետ:

— Դա կոչվում է "զգաստութեան շապիկ", սկսեց բացատրել երիտասարդը: — Դա արթնութեան մէջ է պահում մարդուն: Դա տանջում է մարմինը եւ զօրութիւն է տալիս հոգուն: Մեր վանքի բոլոր աբեղաները այս տեսակ շապիկներ են հագնում:

— Այդ սարսափելի է, բացականչեց տիկինը: — Ուրեմն նա հիմայ էլ հագած ունի:

— Այո՛: — Ես էլ նոյն տեսակ ունիմ հագած:

Երիտասարդը իւր օձիքը բաց անելով, ցոյց տուեց իւր "զգաստութեան շապիկը": Տիկինը սոսկաց:

Միւս օր, առաւօտեան պահուն, այդ տան մէջ կատարուեցաւ մի հանդիսաւոր մաղթանք: Հայր սուրբը ջուր օրհնեց մի խաչով, որի մէջ, ինչպէս հաւատացնում էր, ամփոփուած էր "կենաց փայտի" մի մասը: Ջրօրհնութեան միջոցին կարգացուեցաւ աւետարան, երգուեցան զանազան հոգեւոր երգեր:

Ամբողջ ընտանիքը, ծառաները, աղախինները եւ հարեւաններից շատերը հաւաքուած էին ընդարձակ դահլիճում, ուր կատարվում էր այդ հոգեւոր ծիսակատարութիւնը: Հայր սուրբը օրհնած ջուրը սրսկեց հանդիսականների վրայ, եւ երբ վերջացրեց, նախ տան տիրուհին եւ նրա ամուսինը մօտեցան հարբուրեցին խաչն ու աւետարանը, յետոյ նրանց որդիները, եւ ապա

ճեացած բազմութիւնը, բոլորը համբուրեցին եւ օրհնութիւն առին:

Երբ ամեն ինչ վերջացած էր, օտարները հեռացան, դահլճում ճեացին միայն տանեցիքը: Հայր սուրբի կառքը արդէն սպասում էր դրանը, նա շտապում էր ճանապարհ ընկնել: Բայց տան տիկինը խնդրեց, որ մի փոքրիկ նախաճաշիկ անեն, եւ յետոյ ճանապարհ ընկնեն: Հայր սուրբը յարգեց նրա խնդիրքը:

Նախաճաշիկից յետոյ, երբ խմում էին վերջին բաժակները եւ ցանկանում էին հայր սուրբին յաջողութիւն ու բարի ճանապարհ, մօտեցաւ տան տէրը, եւ կրկին անգամ համբուրելով յարգելի հիւրի աջը, տուեց նրան մի հատ ծրար ասելով.

— Համարեցէք այդ փոքրիկ նուէրը որպէս այրի կնոջ լուման: Ես քրիստոնէական պարտաւորութիւն եմ համարում իմ կարողութեան չափով մասնակից լինել այն օժանդակութեանը, որ նպատակ ունի թեթեւացնելու Երուսաղէմի սուրբ տաճարի պէտքերը:

Ծրարի մէջ կար 5000 րուբլ արծաթ:

Հայր սուրբը օրհնեց նրա առատաձեռնութիւնը, խոստացաւ հինգ անգամ պատարագ մատուցանել Երուսաղէմի սուրբ տաճարի սեղանի վրայ նրա եւ իւր տիկնոջ հոգիների քաւութեան համար: Բացի դրանից, ընծայեց տան տիկնոջը մի "տէր-ողորմեա", որ շինուած էր ձիթապտուղի կորիզներից: Ասաց, որ այդ ձիթապտուղները հասարակ տեսակից չեն, այլ քաղուած են Ձիթենեաց լեռան նուիրական ծառերից, որոնց հովանիների ներքոյ շատ անգամ հանգստանում էր Յիսուս Քրիստոսը, ուր շատ անգամ խօսում էր Նա իւր ամենանշանաւոր քարոզները:

— Այն օրից անցել է տասն եւ ինը դար, աւելացրեց աբեղան, — այն նուիրական ծառերը, որ արժանացել էին իրանց հովանու ներքոյ հիւրասիրել մարդկութեան Փրկչին, մինչեւ այսօր կենդանի են մնում:

Յետոյ նա ընծայեց տան տիրոջ երեխաներին մի-մի հատ սադաֆիկ փոքրիկ խաչեր: — Այդ սադաֆը, ասաց նա, — հանուած է այն ծովից, որտեղից անցաւ Մովսէսը Իսրայէլի որդիների հետ եւ ազատեց նրանց Փարաւոնի գերութիւնից: Եւ այդ պատճառով այդ խաչերը կրողները ազատ կը մնան ամեն տեսակ չարից ու փորձանքից:

Տան տէրը եւ տան տիրուհին շատ գոհ մնացին իրանց ստացած ընծաների մասին եւ մեծ շնորհակալութեամբ ճանապարհ դրին յարգելի հիւրին:

Սա դարձեալ իւր օտարոտի քօղը, որի վրայ նկարուած էր վերջին դատաստանի սոսկալի պատկերը, ձգեց դէմքի վրայ, դուրս եկաւ եւ նստեց ծածկուած կառքի մէջ: Կառքը մեկնեցաւ:

Գիւղացիների բազմութիւնը դարձեալ չկարողացաւ տեսնել այդ խորհրդաւոր աբեղայի երեսը: Բայց այդ բարի եւ կրօնասէր գիւղացիները երկար ժամանակ չէին մոռանում հայր Անտօնիոսի ու նրա սարկաւագ Ամբրոսիոսի հետաքրքիր պատմութիւնները Երուսաղէմի նուիրական տեղերի մասին...

Բ.

ՇԱՐԺԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆ

Կարծեմ ընթերցողը ճանաչեց հայր Անտոնիոսին եւ նրա սարկաւագ երիտասարդ Ամբրոսիոսին։

Այն բոլոր սրբութիւնները, որ մենք վաճառում էինք Երուսաղէմի վանքի անունով, նրանցից եւ ոչ մէկը Պաղեստինայի երկիրը տեսած չէր։ Մենք ունէինք մեզ հետ ամեն տեսակ նիւթեր, որոնցից պատրաստում էինք հարկաւոր եղած իրեղէնները։ Այդ աշխատութիւնները կատարում էինք մենք գիշերով, եւ այնպիսի խուլ անկիւններում, որ ոչ ոք մեր արհեստի մասին կասկած ունենալ չէր կարող։ Ես սովորել էի շինել գեղեցիկ սադաֆէ խաչեր եւ ձիթապտուղի կորիզներից "տէր-ողորմեաներ"։ Մեր աբիսինիացի խափշիկը գիտէր պատրաստել օրհնութեան թղթեր, եւ զարդարել նրանց զանազան խորհրդաւոր նկարներով։ Այդ պարոնը, որ ճանապարհորդութեան ժամանակ կառապանի պաշտօն էր կատարում, իսկապէս աբիսինիացի չէր, նա նոյնպէս "խաչագող" էր. բայց երեսի մոյգ-դեղին կաշին եւ դէմքի գծագրութիւնը փոքր ինչ աբիսինացու նման լինելով, քաւոր Պետրոսը պահում էր իւր մօտ իբրեւ մի ցոյց։

Ինքը քաւոր Պետրոսը գիտէր պատրաստել "քաւութեան պատանքներ"։ Այսպիսի պատանքներ, ճշմարիտ է պատրաստվում են Երուսաղէմի վանքում եւ միաբա-

նութիւնը մի-մի հատ ընծայում է այն ուխտաւորներին, որոնք մի նշանաւոր քանակութեամբ նուէրներ էին տուած վանքի գանձարանին։ Իսկ մերը իսկականը չէր. մեր ունեցածը մեր ձեռագործն էր։ Բայց այնքան ճշգութեամբ նմանեցրած էր իսկականին, որ կարող էր գրաւել ամեն մի մոլեռանդի սնահաւատութիւնը։ Այն սպիտակ կտաւի վրայ տպուած էին գոյնզգոյն ներկերով Փրկչի մարդեղութեան խորհրդի բոլոր նկարագիրները. Նրա ծնունդը, մկրտութիւնը, խաչելութիւնը, յարութիւնը եւայլն։ Բաց ի դրանցից, կային նրա վրայ զանազան սուրբերի, հրեշտակների եւ հրեշտակապետների պատկերներ։

Մեր արհեստի ճիւղերից մէկն էր պատրաստել այդպիսի պատանքներ։ Կտաւը եւ ներկերը կարելի էր ամեն տեղ գտնել. իսկ փայտի վրայ փորագրած պատկերները մեզ հետ ունէինք։ Շատ գիշերներ անց էինք կ՚անցնում պատանքներ, խաչեր, "տէր-ողորմեաներ", եւայլ դրանց նման իրեղէններ պատրաստելով։ Եւ այդ բոլորը Երուսաղէմի վանքի անունով վաճառելով, մեծ վաստակ էր բերում մեզ։

Այս րոպէիս էլ, այդ տողերը գրելու ժամանակ, սարսափում եմ ես, իմ մարմնի վրայ դող է ընկնում, երբ մտաբերում եմ մեր կատարած չարագործութիւնները։ Արդեօք, ո՞ր աստիճան բարոյապէս ընկած էինք մենք, ո՞րքան մեծ էր մեր մէջ անպատկառ անզգայութիւնը, որ համարձակվում էինք կրօնը, եկեղեցու սրբութիւնները մեր խաբեբայութիւնների, մեր շահասիրութեան առարկայ դարձնել . . .։

Մենք ման էինք ածում մեզ հետ մի ամբողջ շարժական մագազին։ Մեր սնդուկների մէջ կային ամեն տեսակ մթերքներ։ Որտեղ որը շահ էր բերում, այն էինք

վաճառում։ Գնալով աւելի եւ աւելի ներս էինք մտնում Կայսրութեան հեռաւոր գաւառները, միշտ խոյս տալով մեծ քաղաքներից։ Այդ առանց պատճառի չէր։ Ուր աւելի տիրում էր մտաւոր խաւարը, ուր ժողովուրդը դեռ գռեհկութեան մէջ էր, այնտեղ աւելի առատ էր լինում մեր հունձքը․․․։

Խաբել, սուտ խօսել, կեղծել, ամեն տեղ մի նոր կերպարանք տալ իրան, — այդ խարդախութիւնների մէջն էր մեր գործունէութիւնը։ Մենք ունէինք մեզ հետ ամեն տեսակ պարագայք, ամեն տեսակ յարմարութիւններ, մի տեղ իրան ձեւացնելու որպէս ասիացի վաճառական, միւս տեղ՝ որպէս կրօնաւոր, մի այլ տեղ հասարակ արհեստաւոր, եւ երբեմն մուրացկան, բժիշկ, կախարդ, ձեռնածու եւ այլն։

Խաչագողը անդադար պէտք է փոխէ իւր կերպարանքը․ նա միշտ միեւնոյն դերի մէջ մնալ չէ կարող։ Ես ուրախ էի, որ բաւական վարժուած էի այդ բոլորի մէջ եւ հպարտանում էի իմ ճարպիկութիւններով․․․։ Քաւոր Պետրոսը գովում էր իմ յառաջադիմութիւնը, ասելով․

— Մուրադ, զաւակս, դու խելացի տղայ ես, ամեն բան շատ շուտ սովորեցար․․․։

Քիչ չէր պատահում, որ մեր ծուղակի մէջ ընկնում էին այնպիսի բարեպաշտ քրիստոնեաներ, որպիսիքը էին հարուստ կալուածատէրը եւ նրա միամիտ տիրուհին, որոնց պատկերները տեսանք նախընթաց գլխում։ Բայց զարմանալին այն էր, թէ ինչպէս էր յաջողվում մեզ գտնել այդպիսիներին։ Ահա ինչպէս․

Ամեն մի քաղաք կամ մեծ գիւղ մտնելուց յետոյ, քաւոր Պետրոսը ինձ իւր հետ առնելով, կը գնայինք մի հիւրանոց։ (Այդպիսի տեղերը յաճախում էինք հասարակ

արհեստաւորի հագուստով։) Առհասարակ ընտրում էինք այնպիսի հիւրանոցներ, ուր յաճախում էր ժողովրդի ստոր, միեւնոյն ժամանակ անբարոյական մասը։ Ուր ամեն տեսակ մարդկանց կարելի էր գտնել, սկսեալ փողոցային որբիկներից, աւազակներից, մինչեւ խաղամոլներ, գրպանահատներ, մոլարբուներ եւ այլն։ Այդ հասարակութիւնը գիտէ քաղաքի բոլոր գաղտնիքները։ Առանց նպատակի չէր, որ քաւոր Պետրոսը ընտրում էր այդպիսի անառակ տեղեր։ Կը տեսնէիր, մէկին գտաւ։ (Նա իւր նպատակներին յարմար մարդիկ գտնելու մեծ ընդունակութիւն ունէր։) Կը սկսէր նրա հետ ծանօթանալ, իւր հաշուով խմեցնել եւ թուղթ խաղալ։ Թղթախաղի մէջ ոչ ոք քաւոր Պետրոսի հետ կարող էր մրցութիւն անել։ Բայց այսպիսի դէպքերում, դիտմամբ միշտ տանուլ էր տալիս, որպէս զի իւր նոր ծանօթին աւելի եւս մտերմացնէ իւր հետ։ Խաղը, խմելը տեւում էր ամբողջ ժամեր։ Այդ միջոցում նա կարողանում էր թափ տալ իւր խաղակցի գլխից այն գաղտնիքները, ինչ որ իրան պէտք էր։ Դա կատարվում էր այնքան անզգալի կերպով, մինչ նրա խաղընկերը ոչինչ չէր նկատում։

Մի այսպիսի հիւրանոցի մէջ, փոքրիկ գաւառական քաղաքում, քաւոր Պետրոսը տեղեկացաւ մի պառաւ տիկնոջ գաղտնիքները։ Հաղորդողը նոյն տիկնոջ ծերունի սպասաւորն էր, որ մանկութիւնից ծառայել էր նրա մօտ, բայց ալեւոր հասակում արտաքսուած էր չափազանց արբեցութեան համար։ Տիկինը այն պառաւներից մէկն էր, որ իրանց մանկութիւնը անց են կացնում զանազան զուարճութեանց փոթորիկների մէջ, իսկ գերեզմանին մօտենալու ժամանակ մտածում են առաքինի լինել։ Նա ապրում էր իւր կալուածներում, որոնց մէջ մի քանի հա-

զար հոգի ճորտեր կային: Կալուածները գտնվում էին քաղաքից երկու հարիւր վերստ հեռաւորութեան վրայ:

— Դա խիստ պարարտ որս է Երուսաղէմի աբեղայի համար, ասաց քաւոր Պետրոսը եւ միւս օրը վաղ-առաւօտեան պատրաստուեցանք այնտեղ գնալու:

Քաւոր Պետրոսը շատ լաւ գիտէր, թէ ամեն մի տեղ գնալու համար ինչ տեսակ պատրաստութիւններ էին հարկաւոր, որպէս հմուտ զօրապետը իսկոյն կշռում է, թէ այս ինչ բերդը գրաւելու համար ւր կողմից կամ որքան թնդանօթներով պէտք է ռմբակոծել: Բայց այն առաւօտ այնքան շտապեց նա, որ մոռացաւ մի քանի անհրաժեշտ բաներ:

Ծածկուած կառքը իւր հինգ սիւգոյն ձիաներով թռղեց քաղաքում. հրամայեց լծել մի ճանապարհորդական թեթեւ սայլակ երեք ձիաներով: Մեր անդուկները ճնային նոյն հիւրանոցում, որտեղ իջեւանել էինք: Աբիսինիացին ճնաց այնտեղ մեր իրեղէնները պահելու համար: Մենք ճանապարհ ընկանք արեւի ծագելուց շատ առաջ: Ես կառավարում էի ձիաները, իսկ քաւոր Պետրոսը, փաթաթուած իւր աբեղայական լայն վերարկուի մէջ, նստած էր սայլակի վրայ:

Երեկոյեան պահուն մենք յայտնուեցանք պառաւ ռիկնոջ տանը հասարակ աբեղաների հաղուստով, առանց որեւիցէ հանդիսաւոր ձեւ տալու մեր այցելութեանը, պառաւը բարեսրտութեամբ ընդունեց մեզ, որպէս աղքատ օտարերկրեայ կրօնաւորների, եւ աւելի վառուեց նրա գութը, երբ լսեց սուրբ Երուսաղէմի անունը:

Քաւոր Պետրոսը հրամայեց ինձ փոքր ինչ հիւանդ ձեւանալ, որ առիթ ունենանք այն գիշեր մնալ պառաւի տանը: Տիկինը այնքան բարեսիրտ էր, որ խորին ցաւակցութեամբ խղճացաւ իմ վրայ, իւր ձեռքով խինա խմացրեց, պատուիրեց աղախիններին, որ իմ ոտների տակ տաք ջրով լցրած շշեր դնեն, որպէս զի ես քրտնեմ, որովհետեւ մրսած էի:

Թէ ի՞նչ ասաց, ի՞նչ խօսեց քաւոր Պետրոսը, տիկնոջ հետ, ես չգիտեմ, որովհետեւ ես պառկած էի միւս սենեակում. ես հիւանդ էի:

Առաւօտեան ինձ լաւ էի զգում: Քաւոր Պետրոսը պատրաստուեցաւ մի թեթեւ մաղթանք կատարելու, որ յետոյ հեռանանք: Յայտնուեցաւ, որ քաւոր Պետրոսը մոռացել էր իւր յունարէն աւետարանը եւ նրա տեղ սխալմամբ վեր էր առել մի հատ, մագաղաթեայ գիրք, գոյնզգոյն ներկերով գրուած: Դա հայերէն հին բժշկարան էր, որից երբեմն օգուտ էր քաղում քաւոր Պետրոսը իւր բժշկութիւնները անելու ժամանակ: Նրա մէջ կային շատ բաներ. օրինակ, լօշտակի բոյսը գտնելու աղօթքը, զանազան յօդուածներ "վեցհազարեակի", կախարդական արհեստից, տեսակ-տեսակ աստղագիտական աղիւսակներ, համաստեղութիւնների մարդկանց ճակատագրի վրայ ունեցած լաւ կամ վատ ազդեցութիւնը եւայլն:

Քաւոր Պետրոսը ամենեւին չշփոթուեցաւ, երբ նկատեց, որ յունարէն աւետարանի փոխարէն այդ գիրքն է վեր առել: Նա սկսեց կարդալ: Իւր ընթերցանութեան մէջ դարձ էր անում այնպիսի բառեր, այնպիսի խօսքեր, որ ոչ մի լեզուի մէջ չէր կարելի գտնել: Բոլորը ինքն էր հնարում: Ես էլ ոչինչ չէի հասկանում: Բայց այնպիսի մի ջերմեռանդութեամբ ձեւ էր տալիս թէ իւր առոգանութեանը, թէ արտասանութեանը եւ թէ ձայնին, որ անկարելի էր կասկածել, թէ նրա կարդացածը սուրբ գիրք չէ:

Ես էլ սկսեցի քաւոր Պետրոսի օրինակին հետեւել: Բայց ո՛չ նրա նման հնարած, անմիտ խօսքեր կարդալ, այլ երգել զանազան "Ջանգուլումներ", եւ հայերէն ռամկական երգեր, որ սովորել էի մանկութեան ժամանակ: Իմ ձայնը վատ չէր, հոգեւոր երգերը ես էի երգում:

Մեր ամբողջ ծխականաւորութիւնը վերջացաւ մի յիմար երգով, որի մէջ դարձեալ փոքր ի շատէ միտք կար: Դա վերջին մեղքին էր:

Քաւոր Պետրոսը սկսեց.

"Մեր տղայ, որսի ժամանակ է,
"Մեր գործն այստեղ յաջողակ է,
"Պառաւի գլուխը դարտակ է,
"Ոլքան կարող ես՝ հաւաքէ...

"Ալելուեա, ալելուեա,
"Սոխ ու սխտոր, ալելուեա,
"Կանաչ կխտոր, ալելուեա:

Ես պատասխանեցի նոյն եղանակով.

"Վերջացաւ մեր պատարագը,
"Հիմայ պարպենք պառաւի քսակը,
"Ծիմարների այդ տեսակը
"Կը կատարէ մեր փափագը...

"Ալելուեա, ալելուեա,
"Սոխ ու սխտոր, ալելուեա,
"Կանաչ կխտոր, ալելուեա"...

Մեր օրհներգութիւնը, որքան եւ խաբէական լինէր, այսու ամենայնիւ, խորին ազդեցութիւն գործեց պառաւի

վրայ: Ուսուցիչները շատ անգամ զուարճութեան առարկայ են դարձնում իրանց արհեստը. այսօր մենք նոյնպէս վարուեցանք:

Պառաւը առաջարկեց նախաճաշիկ ուտել: Այս անգամ քաւոր Պետրոսը չէր խորշում կերակուրներից եւ թարգմանի բերանով չէր խօսում: Նա անդադար հանաքներ էր անում, եւ երբեմն նուրբ սրախօսութիւններով ծիծաղեցնում էր պառաւին: Բայց երբ պառաւը առաջարկեց նրան հարիւր րուբլ "աջահամբոյր", քաւոր Պետրոսը այն ժամանակ միայն ընդունեց ծանր եւ մինչեւ անգամ խիստ կերպարանք, եւ մերժեց արծաթը, ասելով.

— Այդ բաւական չէ ձեր մեղքերը քաւելու համար, տիկին:

— Ի՞նչ մեղքեր, հարցրեց պառաւը վրդովուած կերպով:

Քաւոր Պետրոսը լինձ աչքով արեց, ես սենեակից դուրս եկայ. նրանք մնացին մենակ: Միւս սենեակից ես լսում էի նրանց խօսակցութիւնը:

— Ի՞նչ մեղքեր, կրկնեց պառաւը:

— Մի թագցրէք, տիկին, ես բոլորը գիտեմ...: Ձեր անցեալի սարսափելի պատկերը նկարուած է իմ աչքի առջեւ:

— Ո՞րպէս:

— Դուք մի ծեր գեներալի միակ զաւակն էիք:

— Այդպէս է:

— Հօրից մեծ ժառանգութիւն ստացաք:

— Ուղիղ է:

— Պետերբուրգում ամուսնացաք մի մեծ աստիճանաւորի հետ:

— Այդպէս է:

— Դուք միմեանց հէնց սկզբից չէիք սիրում. նա հրապուրուեցաւ քո փողով, իսկ դու նրա աստիճանով:

Վերջին խօսքերը լսածին պէս պառաւի երեսի խորշոմների մէջ նկատուեցան ցնցումներ: Քաւոր Պետրոսը շարունակեց.

— Դուք չսիրեցիք ձեր ամուսնին, որովհետեւ ձեր սիրտը ուրիշնի էր պատկանում . . .:

— Ցետո՞յ:

— Ձեր ամուսնի խանդոտութիւնը առիթ եղաւ նրա մահին . . .:

— Աստուած իմ: Բաւական է:

— Լսեցէ՛ք, դեռ բոլորը չէ: — Դուք թունաւորեցիք օրինաւոր ամուսնին, որ ազատ կեանք վարէք սիրականի հետ:

Պառաւը կրկին դողեց զարհուրելով.

— Բաւականն է, ի սէր Աստուծոյ:

— Դեռ բաւական չէ: Ես բոլորը դեռ չեմ աւարտել: Լսեցէ՛ք.

— Դուք սպաննեցիք ամուսնին, որ աւելի ազատ ապրէք սիրականի գրկում, եւ ձեր եղեռնագործութիւնը ծածկելու համար, նրա հետ միասին գնացիք արտասահման: Այնտեղ սիրականը վատնեց ձեր փողերը, կողոպտեց ձեզ եւ մաշուած լաթի նման մի կողմ ձգեց: Դուք վերադարձաք Պետերբուրգ: Այստեղ երկար ճնալ չկարողացաք, որովհետեւ հանապազ ձեզ տանջում էր մի կողմից սպաննուած ամուսնի ուրուականը, միւս կողմից, խաբուած սէրը . . .: Ձեր խիղճը հանգստացնելու համար, դուք աղաչաւոխուեցաք այդ գիւղը, որ միակ կտորն էր ճնացած ձեր հօր ահագին հարստութիւնից, եւ այնուհետեւ սկսեցիք մխիթարութիւն որոնել գիւղական առանձնութեան մէջ:

— Բաւական է, դուք բոլորը գիտէք . . .: Ես սարսափում եմ . . .:

— Ես պէտք է վերջացնեմ: — Այդպէս էր ձեր սխալ անցեալը: Հիմայ նայեցէք, ահա ձեր ապագայի սոսկալի նկարագիրը. — իմ առջեւ բացուած է տարտարոսը . . . ծրծուռների բոցերի միջից հազիւ նշմարում եմ ձեր սարսափած դէմքը . . . սատանաները բորբոքում են կրակը, ձեր տանջանքը աւելի եւ աւելի սաստկացնելու համար . . .: Իսկ այնտեղ, հեռու, մի բարձրութեան վրայ, տեսնում են կանգնած մի մարդ, որպէս վրէժխնդրութեան բոլոքաւոր արձան կանգնած է նա, նայում է ահռելի դէմքով, եւ աղաչաւոր ձեռքերը մեկնել է դէպի Յաւիտենականի աթոռը, արդարադատութիւն է խնդրում . . .: Դա ձեր ամուսնի պատկերն է . . .:

Վերջին խօսքերը հազիւ թէ լսեց պառաւը, որովհետեւ նա արդէն ուշաթափ ընկած էր: Քաւոր Պետրոսի մոգական ազդեցութիւնը կրկին նրան ուշի բերեց, եւ բռնելով նրա թեւից, նստեցրեց դիւանի վրայ:

Փոքր ինչ հանգստանալուց յետոյ պառաւը աչքերում, հարցրեց նա.

— Այդ դուք ո՞րտեղից գիտէք:

— "Աստուծոյ մարդը" ամեն բան գիտէ, պատասխանեց քաւոր Պետրոսը ծանր կերպով:

Բաւական մեծ քանակութեամբ արծաթ արժեց պառաւին, մինչեւ "Աստուծոյ մարդը" յօժարուեցաւ քաւել նրա մեղքերը եւ ազատեց դժոխքի տանջանքներից: Բացի դրանից, տուեց նրան մի սուրբ պատանք, որպէս Երուսաղէմի յիշատակ, եւ պատուիրեց մեռնելուց յետոյ նրանով թաղուել, ասելով թէ չար ոգիները երբէք չեն համարձակուի մօտենալ նրա մարմնին:

Պառաւին ըստ կարգին կողոպտելուց յետոյ, վերադարձանք նոյն հիւրանոցը, ուր թողել էինք մեր իրեղէնները: Այստեղ գտանք արիսէնիացուն անյայտացած: Մեր հարցերին հիւրանոցի տէրը ոչինչ բացատրել չկարողացաւ, որից կարելի լինէր մի որոշ հետեւանքի հասնել: Բայց քաւոր Պետրոսը իսկոյն հասկացաւ պատահածը, եւ մտաւ այն սենեակը, որտեղ դրած էին մեր իրեղէնները: Նա սկսեց քննել արկղները: Ներանցից մէկի կողպէքը կոտրած էր: Դա միւնոյն արկղն էր, որի մէջ սովորաբար պահում էինք մեր փողերը: Պակաս էր յիսուն հազար րուբլ: Նա յիշեցի հայկական առածը.

"Գողը գողից գողացաւ,

"Աստուած տեսաւ, զարմացաւ„ . . .:

— Ես այդ վաղուց սպասում էի . . . ասաց քաւոր Պետրոսը եւ սկսեց ծիծաղել:

Զարմանալի բնաւորութիւն ունէր այդ մարդը. ոչինչ նրան վրդովեցնել չէր կարող: Դա այն տեսակ քարասիրտ մարդկիններից էր, որոնք ոչ դժբախտութեան ժամանակ տրտմել գիտեն եւ ոչ յաջողութեան ժամանակ ուրախանալ:

Ես չկարողացայ համբերել եւ փոքր ինչ կոպիտ կերպով ասեցի նրան.

— Յիսուն հազար րուբլի տարել է անպիտանը, եւ դուք դեռ եւս ծիծաղո՞ւմ էք: — Հէնց այս րոպէիս պէտք է նրա հետեւից ընկնել:

— Երբ խաչագողը անյայտանում է, նրա հետեւից այլ եւս չեն ընկնում, պատասխանեց նա, դարձեալ իւր ծիծաղը շարունակելով:

— Ինչո՞ւ:

— Նրա համար որ, անկարելի է գտնել:

— Ես այդ անպիտանին հէնց այս գիշեր կարող եմ բռնել:

— Չես կարող: Եթէ նա իմ աշակերտն է, ես լաւ եմ ճանաչում, թէ ինչ պատուղ է . . .:

Արիսէնիացին քաւոր Պետրոսի ամենաընդունակ աշակերտներից մէկն էր: Նրա իսկական անունը Մաթոս էր, բայց չափազանց խորամանկութեան համար կոչում էին "Հէյթան Մաթոս„, որ նշանակում է սատանայ Մաթոս:

Ես հարցրի քաւոր Պետրոսից.

— Դուք ասում էք, թէ վաղուց սպասում էիք մի այսպիսի վարմունք նրա կողմից, երբ այսպիսի կասկած ունէիք նրա վրայ, ինչո՞ւ չէիք հեռացնում ձեզանից:

— Երբ խաչագողը կասկած ունի իւր ընկերի վրայ, այդ դէպքում ոչ նրանից բաժանվում է եւ ոչ հեռացնում է իրանից:

— Ապա ի՞նչ է անում:

— Սպասնում է . . .:

Վերջին խօսքը ակատայ թռաւ քաւոր Պետրոսի բերանից:

— Սպասնո՞ւմ է . . . կրկնեցի ես հետաքրքրութեամբ:

— Ուրիշ ճար չկայ: Եթէ կասկածաւորին կենդանի հեռացնէ, այնուհետեւ պէտք է զանազան չարիքներ ըսպասէ նրա կողմից: Նա կարող է գաւաճանել, կարող է մատնել, մի խօսքով, շատ վնասներ կարող է տալ, որովհետեւ իւր ընկերի գաղտնիքների մասին շատ տեղեկութիւններ ունի:

— Որպէս արիսէնիացին մեր գաղտնիքների մասին . . .:

— Այո՛:

— Ուրեմն ինչո՞ւ չսպաննեցիք նրան:

— Ծոստովանվում եմ, որ այդ դէպքում ես սաստիկ ծոյլ գտնուեցայ: Միշտ այսօր էգուց ասելով, գործը այնքան յետաձգեցի, մինչեւ նա աւելի ճարպիկ գտնուեցաւ...:

— Այո՛, ճարպիկ գտնուեցաւ. բացի յիսուն հազար րուբլ յափշտակելը, տարաւ իւր հետ մեր գաղտնիքների մեծ մասը: Այսուհետեւ նա ամեն տեսակ խաղ կարող է խաղալ մեզ հետ:

— Կարող է... ասաց քաւոր Պետրոսը, — մանաւանդ երբ կը մտածի, որ մենք նրան հանգիստ չենք թողնի...:

Այդ ժամանակ միայն ես նկատեցի քաւոր Պետրոսի դէմքի վրայ վրդովմունքի նշանները: Նա առ ոչինչ էր համարում յիսուն հազար րուբլու յափշտակութիւնը: Փողի կորուստը նրան չէր կարող խռովութիւն պատճառել. փող նա միշտ կարող էր գտնել: Բայց նրան վրդովեցնում էր իւր խաբուած դրութիւնը: Նա սաստիկ վերաւորանք էր համարում, որ գտնուեցաւ աշխարհում մի մարդ, որը կարողացաւ խաբել քաւոր Պետրոսին, — այդ խաբէութեան մեծ հանճարին...:

— Պէտք է նրան "ներողամտութեան նշան" ցոյց տալ, ասաց քաւոր Պետրոսը եւ վառեց երկու մոմ, դրեց լուսամուտի առջեւ ներսի կողմից:

Դրսում սիրում էր գիշերային խաւարը:

— Ա՞յդ է "ներողամտութեան նշանը":

— Այդ է: Պէտք է նրան միամտացնել, որ մենք ներում ենք, որ մենք այլ եւս չենք հալածի նրան:

Քաւոր Պետրոսի վարմունքը ինձ բոլորովին ծիծաղելի երեւաց: Ես ասեցի.

— Նա կորաւ, գնաց, եւ գուցէ այժմ մի քանի հարիւր վերստ հեռացել է այս քաղաքից: Նա ո՞րտեղից պէտք է տեսնէ այդ "ներողամտութեան նշանը":

— Նա գուցէ այս րոպէիս պարտվում է մեր հիւրանոցի շուրջը:

Ես լսեցի մի տապար, որ այնտեղ դրած էր, եւ դուրս վազեցի, գոչելով.

— Եթէ այդպէս է, ես հիմայ նրա փոքրիկ գլուխը կը ջարդեմ:

Քաւոր Պետրոսի զօրեղ ձեռքերը բռնեցին ինձ: Նա ասաց բաւական հեգնական եղանակով.

— Աւելի լաւ կ'անես, եթէ նրա փոքրիկ գլխով ու փոքրիկ մարմնով չխաբուես: Նա թէեւ պստիկ է, բայց ջահիկ է: Նա վագրի սիրտ ունի եւ առիւծի ուժ:

Այդ խօսքերը սաստիկ վերաւորեցին իմ հպարտութիւնը եւ ես փոքր ինչ տաքացած կերպով պատասխանեցի.

— Դուք կարծում էք, որ ձեր "ներողամտութեան նշանը" կ'օգնէ՞, եւ նա կը հաւատայ, որ դուք այսուհետեւ չե՞ք հալածի նրան եւ իւր անձը պաշտպանելու համար չի՞ մտանի ձեզ:

— Օրինաւոր խաչագողը պէտք է այնքան աղնուութիւն ունենայ, որ հաւատայ: Այդ նշանը մեր մէջ ընդունուած է որպէս մի սուրբ պայման, որի դէմ հազիւ թէ կը մեղանչէր ամենաստոր խաչագողն անգամ:

Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՅԼ

ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Քաւոր Պետրոսը զարմանալի հոտառութիւն ունէր վտանգի ժամանակ: Նա իսկոյն հասկանում էր, երբ կարող էր պատահել որեւիցէ անյաջողութիւն: Պատաւիճն ըստ կարգին կողոպտելուց յետոյ, աբխազիացու անցքից յետոյ, միանգամ ասաց ինձ.

— Մուրազ, պէտք է առժամանակ փոխել մեր մորթը...:

Ես հասկացայ նրա միտքը: Նա ասել էր ուզում, թէ պէտք է փոխել մեր կերպարանքը, մեր արհեստի ու պատապմունքի ձեւը: Ես շատ շուտ էլ հասկանում նրա բոլոր փոխաբերական խօսքերը. օրինակ, երբ նա ասում էր՝ "երկինքը ամպած է,,, ես գիտէի, որ դա նշանակում է, թէ փոթորիկը մօտ է, սպառնում է վտանգ: Այսպէս մեր մէջ խօսքերի մեծ մասը պայմանաւորուած էին, ունէին առանձին միտք:

Պատրաստուեցանք փոխել մեր "մորթը,,:

Նոյն օրը թողեցինք մեր կեցած հիւրանոցը, գիշերով անցանք մի այլ հիւրանոց: Այդ այն նպատակով էր, որ այսուհետ մեր կերպարանափոխութիւնը ոչ ոք չնկատէ, որովհետեւ առաջին հիւրանոցում բաւական ճանաչուած

էինք: Քաւոր Պետրոսը կարճացրեց իւր փառահեղ սպիտակ մօրուքը, որ ծածկում էր նրա ամբողջ կուրծքը, խուզել տուեց գլխի աբեղայական երկայն մազերը, յետոյ ներկեց սեւ գունով եւ համարեա թէ երիտասարդացաւ: Նրա դէմքը դեռ բաւական թարմ էր ճնացել, միայն մազերը վաղօրօք սպիտակել էին: Նոյնը հրամայեց անել եւ ինձ: Իմ սեւ սամթի պէս փայլուն մազերը ներկելու պէտք չունէին, ես միայն կարճացրի, իսկ երեսի մազերը դեռ այնքան չէին աճել, որ հարկաւոր լինէր կտրել: Մենք ձգեցինք մեր աբեղայական հագուստը, մի կողմ դրեցինք խաչն ու աւետարանը, եւ ստացանք աղքատ, թափառաշրջիկ մանրավաճառների կերպարանք: Անցանք մի այլ գաւառ: Այստեղ մեր ձիանները, ճանապարհորդական սայլակը, եւ ինչ որ աւելորդ ունէինք, բոլորը վաճառուեցան: Մի քանի անհրաժեշտ իրեղէններ, որ կարող էին երբեմն մեզ պէտք գալ, պահուեցան: Ո՞ւմը պահ տուեց քաւոր Պետրոսը, — ես հասկանալ չկարողացայ:

Հագանք ճանապարհորդական կօշիկներ, ծնկներից վեր բարձր վզերով եւ սկսեցինք ոտքով թափառել գիւղից գիւղ: Քաւոր Պետրոսը կրած ունէր մի փոքրիկ արկղիկ, իսկ ես շալակել էի մի ահագին արկղ զանազան յարկերով, զանազան լայն եւ անձուկ խորշերով, որոնց իւրաքանչիւրի մէջ դասաւորած էին առանձին տեսակ վաճառքներ: Երբ մտնում էինք մի գիւղ, ես մանրավաճառների սովորական ձայնով եղանակում էի. "մանդրուք ապրանք... մանդրուք ապրանք... լաւ ասեղներ, թելեր, գուլպաներ, ձեռնոցներ, պատկերներ, յուլունքներ" եւ այլն:

Իսկ շատ անգամ նոյն երկրի լեզուով երգում էի մի այսպիսի երգ.

"Հիքն է, լիքն է իմ արկղիկը
Դոյնզդոյն վարչաներով.
Թող գնէ սիրուն աղջիկը,
Ես կը տամ էժան գնով:

Զթեր ունեմ ես զանազան,
Ծաղիկներով զարդարած,
Մատնիք ունիմ, ապարանջան,
Շուրջը ակներով շարած:

Դուրս ելի, դուրս ելի կարմիր աղջիկ,
Կը զարդարեմ քո մատները.
Եթէ կը տաս ինձ մի պաչիկ,
Զրի կ'առնես իմ չքերը:"

Իմ ձայնը վատ չէր: Առհասարակ մանրավաճառի ձայնը այն ուրախալի ձայներից մէկն է, որ խիստ հազիւ անգամ լսելի է լինում քաղաքներից հեռու ընկած գիւղերի մէջ: Այդ ձայնը մոգական ազդեցութիւն է գործում: Իսկոյն դուրս են վազում խրճիթներից կնիկներ, աղջիկներ, երեխաներ եւ հաւաքուելով ցանկալի հիւրի շուրջը, թափւում են նրա քսակի մէջ իրանց տարիներով խնայած գրօշները: Ահա, որքան ուրախալի բան է առեւտուր ունենալ մի այսպիսի միամիտ հասարակութեան հետ, որ ոչինչ տեղեկութիւն չունի վաճառքի թէ արժողութեան եւ թէ որպիսութեան մասին . . . :

Շորտութիւնը այն ժամանակ դեռ սիրում էր այդ երկրում: Գիւղերում երբեմն պատահում էին մի-մի հարուստ տներ: Դրանք ըստ մեծի մասին լինում էին կալուածատէրները, որոնց պատկանում էր գիւղը իւր ձորտերով: Մեզ հրաւիրում էին աղայի տանը: Շատ

անգամ ամբողջ ժամեր էին անցնում, մինչեւ տիկինը ընտրում էր իւր համար ձեռնոցներ, մանկահասակ օրիորդը անուշահոտ իւղեր, աշակերտ որդին՝ մատիտներ, գրիչներ, երեխաները՝ խաղալիկներ, աղախինները՝ գլխի թաշկինակներ, մի խօսքով, ամեն մէկը ընտրում էր իւր պէտքերի համար զանազան բաներ: Այնուհետեւ պէտք էր երկար ու բարակ բազար անել, երդուել, ստախօսել, գովաբանել վաճառքը եւ այլն:

Այդպիսի դէպքերում քաւոր Պետրոսը առհասարակ ինձ էր թողնում առեւտուրը առաջ տանել: Իմ դէմքը բաւական գեղեցիկ էր: Ես ընդունակ էի գրաւելու, հարկաւոր ժամանակ հանաքներ եւ սրախօսութիւններ անելու: Այդ պատճառով դեռահաս աղջիկներին աւելի ախորժելի էր ինձ հետ բազար անել, քան թէ մնայլոտ քաւոր Պետրոսի հետ գործ ունենալ: Գեղեցկադէմ գործակատարը մի լաւ գրաւական է առեւտուրի յաջողութեանը, մանաւանդ երբ գնողները կանայք են:

Շատ անգամ ես դիտմամբ գործը երկարացնում էի, աւելի այն ժամանակ, երբ տեսնում էի, որ, ինչպէս ասում են, մէկի "աչքումը լոյս կար": — Օրիորդ, ասում էի, ձեր գեղեցիկ գլխին շատ կը սազէ այդ հիանալի վարսակալը, յատուկ ձեր սիրուն մազերի համար պատրաստուած է: Օրիորդը ժպտում էր, խնդրում էր մօրից գնել այն վարսակալը:

Ի՞նչ էր անում քաւոր Պետրոսը:

Ծեսար, մօտեցաւ տան պատուհին: (Ըստ մեծի մասին այնպիսիներին, որոնց վրայ տանեցիք ուշադրութիւն չեն դարձնում, միայն նայում են, որպէս մի հնացած, գործածութիւնից ընկած կարասիքի վրայ): Կը սկսէր զբաղեցնել նրան, առածներ, առակներ կը պատմէր, եւ այ-

տասուելու չափ կը ծիծաղացնէր: Նա առանձին ընդունակութիւն ունէր պառաւներին գրաւելու: Այդ միջոցին ես առեւտուրը աւելի ձըգ-ձգում էի, որպէս զի քաւոր Պետրոսը աւելի երկար ժամանակ ունենայ, որպէս նա սովորաբար ասում էր՝ “տան քիմարի ուղեղը թափ տալու„...:

Այդ առանց նպատակի չէր: Որովհետեւ քաւոր Պետրոսը իւր յատուկ խորամանկութեամբ, տեղեկանալով նոյն տան հանգամանքներին, այնուհետեւ քիչ չէր պատահում որ միանգամ իւր արկղով այն տունը մտնող մանրավաճառը միւս անգամ յայտնվում էր բոլորովին ուրիշ կերպարանքով. — խաչով, աւետարանով, կամ սրով գիշերային մթութեան մէջ...:

Եւ այդպէս, մեր մանրավաճառութիւնը ունէր ոչ թէ շահեկան նպատակ, այլ մենք գործ էինք դնում որպէս մի միջոց, որ նրա պատրուակով կարողանայինք մեր ցանկացած տեղերը մտնել, հետազօտել, լրտեսել, առանց մեզ վրայ կասկած յարուցանելու:

Ես մինչեւ այսօր սարսափելով յիշում եմ մի դէպք... մինչեւ այսօր զգում եմ իմ ձեռքերի վրայ այն անմեղ արեան թացութիւնը...:

Գտնվում էինք փոքրիկ գաւառական քաղաքում: Մենք մտանք մի տուն, ի հարկէ, իբրեւ մանրավաճառներ: Քաւոր Պետրոսը սովորութիւն ունէր հարկը պահանջած տեղերում ցոյց տալ իրան կամ քիմար, կամ ապուշ եւ կամ չափից դուրս միամիտ: Այդ տան մէջ նա ձեւացրեց իրան սաստիկ երկչոտ:

Այնտեղ ապրում էին չորս հոգի միայն՝ — երկու ալեւոր ամուսիններ, մի սպասաւոր եւ մի աղախին: Ամուսին այրը ծխում էր իւր չիբուխը եւ անդադար գանգատվում էր ռեվմատիզմից: Պառաւ տան տիկինը զբաղուած էր իւր մոխրագոյն թութակով եւ երկու սպիտակ կատուներով, որոնք նրա գլխաւոր մխիթարութիւնն էին ներկայացնում:

Երբ որ մենք ներս մտանք, թութակը արտասանեց մի քանի մարդկային բառեր: Քաւոր Պետրոսը զարհուրեցաւ...: Այդ մարդը, որ հազար սատանաներից երկիւղ չունէր. — “սատանա՜ն... “սատանա՜ն„... աղաղակելով, ճիչ բարձրացնելով, դուրս փախաւ: Տանտիրոջ վրայ ցաւալի ներգործութիւն ունեցաւ, երբ տեսաւ, որ իւր թութակը անզգուշութեամբ վախեցրեց խեղճ մարդուն: Նա իւր սպասաւորին ուղարկեց, մի կերպով յետ բերեցին քաւոր Պետրոսին: Պառաւը երկար աշխատում էր համոզել, հանգստացնել նրան, հաւատացնելով, որ իւր տեսածը սատանայ չէ, այլ հասարակ թռչուն է, միայն սովորել է մի քանի բառեր արտասանել: Քաւոր Պետրոսը, որ մի քանի անգամ եղել էր թութակների հայրենիքում եւ ահագին խումբերով էր տեսել նրանց Հնդկաստանի կղզիներում, — վերջապէս համոզուեցաւ, որ իւր տեսածը սատանայ չէր, մանաւանդ երբ պառաւը դրեց նրան իւր ոսկրացած ձեռքի վրայ եւ սկսեց շաքար ուտացնել:

Բարեսիրտ ամուսինները, քաւոր Պետրոսին աւելի մխիթարելու համար, դիտմամբ թանգ վճարելով, գնեցին մեզանից զանազան իրեղէններ, որոնք գուցէ նրանց ամենեւին պէտք չէին: Մենք շնորհակալութիւն յայտնելով, եւ նրանց երկար կեանք բարեմաղթելով, հեռացանք:

Մենք իջեւանել էինք մի կեղտոտ հիւրանոցում, որ աւելի նման էր գինետան, այն զանազանութեամբ

միայն, որ այստեղ կարելի էր գտնել խիստ վատ կահաւորած սենեակները: Նրա ընդարձակ բակում իրանց ձիաները հանգստացնելու համար կանգնում էին կառապանները: Այդ պատճառով այդ հիւրանոցը այն տեսակներից էր, ուր ամբողջ գիշերը յաճախորդները չեն պակասում. անդադար շատերը մտնում են եւ դուրս են գալիս: Ես այդ հարբած, խելագարուած խառնիճաղանճի մէջ տիրում էր այնպիսի բազմայինն խառնաշփոթութիւն, որ ոչ ոք միմեանց չէր հասկանում: Այդ բոլորը մեզ համար շատ նպաստաւոր էր: Մեզ շատ հնարաւոր էր գիշերուայ մի որոշեալ ժամում դուրս գալ այնտեղից, գնալ ուր որ ցանկանում էինք, կատարել մեր գործը եւ կրկին վերադառնալ, առանց ոչ ոքից նկատելի լինելու:

Քաւոր Պետրոսը մի գիշեր չգնաց հասարակաց սեղանատունը ընթրիք ուտելու, այլ պահանջեց մի ահագին կտոր սառն միս եւ մի շիշ արաղ, որ բերեցին մեր սենեակը: Նա մի քանի մարդու չափ ուտել կարող էր, իսկ ամբողջ շիշ արաղը նրա սովորական խմիչքն էր ընթրիքի ժամանակ: Ես արաղ չէի սիրում, պահանջեցի ինձ համար մի շիշ գինի:

Մենք տեղեկացել էինք, որ այն տունը, որտեղ Թուխթակը վախեցրեց քաւոր Պետրոսին, փոքրիկ քաղաքի հարուստ տներից մէկն էր: Մենք գիտէինք, որ երկու ծերունի ամուսինները ունէին իրանց տան մէջ մի նշանաւոր գումար, որ պահել էին սեւ օրուայ համար:

Ընթրիքից յետոյ քաւոր Պետրոսը հարցրեց ինձ.

— Մուրադ, դու ինչ տեսակ զէնք աւելի լաւ գործածել գիտես:

— Ատրճանակներ: Մի օր գրազ եկանք, ես հինգ անգամ մինը միւսի ետեւից կարողացայ խփել օդի մէջ նետած խնձորը:

Քաւոր Պետրոսին երբէք դիւր չէր գալիս, երբ մէկը սկսում էր նրա մօտ պարծենալ: Պարծենալու համար նրա կարծիքով պէտք էր շատ մեծ գործ կատարած լինել:

— Այդ աղմուկ հանող զէնքերը պէտք չեն, երբ ուզում ես սուս-ու-փուս գործ կատարել, ասաց նա:

— Աւելի լաւ են խուլ ու մունջ զէնքերը, որ ձայն չհանեն:

Ես հասկացայ նրա միտքը:

— Ուրեմն ես կարող եմ վեր առնել իմ տապարը:

— Վատ չէ:

Գիշերից բաւական անցել էր, երբ մենք դուրս եկանք հիւրանոցից: Անձրեւը մանր կաթիլներով մաղում էր: Փողոցները դատարկուած էին, մարդիկ չէին երեւում: Գիշերային թանձր խաւարի մէջ մրափում էր քաղաքը:

Անցնելով մի քանի խուլ փողոցներ, մենք արդէն գտնվում էինք յիշեալ տան մօտ, որտեղ Թուխթակը վախեցրեց քաւոր Պետրոսին:

— Եթէ շունը աղմուկ չբարձրացնէ, լաւ է, ասեցի ես:

— Ինչ շուն, հարցրեց քաւոր Պետրոսը:

— Երբ ցերեկով մտանք այստեղ, ես նկատեցի մի ահագին շուն, որ շղթայով կապուած էր բակում: Գիշերը բաց են թողնում նրան:

— Նա հիմայ հանգուցեալների կարգումն է դասուած:

Քաւոր Պետրոսի խօսքերից երեւաց, որ նա մի անգամ եւս մտել էր այս տունը, այն անցքից յետոյ, որ Թուխթակը վախեցրել նրան: Վերջին անգամ յայտնուել էր այնտեղ մուրացկանի վերպարանքով եւ միջոց էր գտել ոչ միայն Թունաւորելու շանը, այլ լաւ հետազօտելու տան դիրքը, մուտքերը եւ այլն:

Տան ընդարձակ բակը շրջապատած էր փայտեայ ցանկապատով, որը այնքան ցածր էր, որ մի առանձին ընդդիմադրութիւն չարեց մեզ բակը լինելու ժամանակ: Այժմ հարկաւոր էր մի կերպով ներս սողալ սենեակների մէջ: Մի լուսամուտ, որ ցերեկով նկատել էինք, ուղղակի բացվում էր սպասաւորների քնարանի մէջ: Գիշերային տօթի պատճառով լուսամուտը բաց էր թողած: Քաւոր Պետրոսը հերքուելուն այժ ունէր, իսկ ես թեթեւաշարժ էի որպէս առիւծ: Երկու ահագին ջրի տակառները, որ կանգնած էին բակում անիւների վրայ, միմեանց վրայ դնելը, եւ այդ սանդուղաններով լուսամուտից ներս մտնելը՝ — մի րոպէի գործ եղաւ: Մենք գտանք սպասաւորի սենեակում եւ աղաւնին: Նրեւում էր, այդ դեռահաս աղջիկը սովորութիւն ունէր երբեմն իւր տիրուհուց գաղտնի ծառայի քնարանը ներս սողալ...:

Քաւոր Պետրոսի երկաթի ձեռքերը երկուսին եւս ճնշեցին միեւնոյն անկողնի մէջ: Նրանք քնած էին. աղջկայ գլուխը դրած էր սիրականի թեւքի վրայ: Նրանք զարթեցան:

— Սենեակների բանալինե՞րը, հարցրեց քաւոր Պետրոսը:

Նրանք փորձեցին ճիչ բարձրացնել: Բայց քաւոր Պետրոսի սպառնալիքը լռեցրեց նրանց: Բանալինները իսկոյն մեր ձեռքը անցան:

— Դու այդ նազելի սիրահարներին կը պահես միմեանց գրկում, մինչեւ ես գործը կը վերջացնեմ... ասաց քաւոր Պետրոսը եւ հեռացաւ:

Մանկահասակ աղախինը երկիւղից իսկոյն ուշաթափ եղաւ եւ դիակ դարձաւ իմ ճանկերի մէջ: Նա գործ ունէի այժմ միայն կատաղած սպասաւորի հետ: Ճշմարիտը խոստովանած, այդ դոլիաթը այնքան ուժեղ էր, որ ես հազիւ կարողանում էի զսպել նրան: Իմ դրութիւնը նախանձելի չէր: Մենք կորած էինք, եթէ նա դուրս պրծնէր իմ ձեռքից: Ուրիշ ճար չկար, պէտք էր այդ գազանին հանգստացնել: Իմ ծանր տապարի մի հարուածը գլորեց նրա գլուխը մահճակալից ցած: Տաք արիւնը դուրս վիժեց պարանոցից սիրուհու կուրծքի վրայ...:

Դա եղեռնագործութեան ամենասարսափելին էր, որ ես կատարել եմ իմ կեանքում: Գազանային անգթութիւնը այդ դէպքում անցնում է ամեն վայրենութիւնից: Սպաննել այն րոպէում, երբ երկու անմեղ արարածներ, իրանց հոգու բոլոր քնքշութեամբ գրկախառնուած, սիրում են միմեանց, — սպաննել սէրը, — դա սոսկալի չարագործութիւն է...:

Մինչ ես կայէնի նման կանգնած էի իմ զոհի մօտ, լսելի եղաւ քաւոր Պետրոսի ձայնը.

— Հեռանանք...:

Միւս առաւօտը քաւոր Պետրոսը հանդարտ, հանդիստ տրամադրութեամբ, ինձ իւր հետ առնելով, մտանք հասարակաց սեղանատունը նախաճաշիկ ուտելու: Հիւրանոցի ամբողջ խօսակցութիւնը գիշերուայ անցքի մասին էր:

— Ի՞նչ է պատահել, հարցրեց քաւոր Պետրոսը իւր մօտ նստած մի արհեստաւորից, որ դատարկում էր թէյի եօթներորդ բաժակը:

— Էլ ինչ պէտք է լինի, պատասխանեց արհեստաւորը ցաւակցաբար, — այս գիշեր անյայտ չարագործներ մտել են մի տուն, ծերունի տան-տէրերին, թէ՛ ամուսնին եւ թէ՛ կնոջը, երկուսին էլ խեղդել են ծառայի գլուխը կտրել են, տանիցը ուրիշ բան չեն տարել, բացի զուտ փողերից: Ասում են տան հաշուից աւել կը լինի:

— Անիծեալներ... այդ ինչ անխղճութիւն է... պատասխանեց քաւոր Պետրոսը նոյնպէս ցաւակցաբար: — Ինչպէս Աստուած չէ պատժում այս տեսակ չարագործներին...: Խեղդել ծերունի մարդկանց, — դա մեքան անգթութիւն է...:

Մենք մի քանի օր եւս բոլորովին անվրդով կերպով շարունակեցինք մեր առեւտուրը, յետոյ թողեցինք այդ քաղաքը: Ոչ ոք կասկած ունենալ չէր կարող խեղդ մանրավաճառի վրայ, որը թուխակից անգամ վախենում էր, որը մի քանի օր առաջ մտնելով նոյն տունը, օրհնում էր, բարեմաղթութիւններ էր կարդում եւ երկար կեանք էր ցանկանում երկու ծերունիներին, որովհետեւ գնեցին նրանից բաւական վաճառքներ աւելի թանգ գնով, — այո՛, ոչ ոք երեւակայել անգամ չէր կարող, որ նոյն "երկար կեանք" ցանկացողը ընդունակ կը լինէր կարճելու նրանց կեանքը...:

Թողնելով յիշեալ քաղաքը, մենք անցանք մի անծանօթ գաւառ: Առհասարակ ամեն մի յանցանք գործած տեղից երբ հեռանում էինք, թողնում էինք մեր ետեւից ահագին տարածութիւն: Այդ երկիրը այնքան ընդարձակ էր, որ ամեն տեղ բացվում էր մեր առջեւ մի նոր ասպարէզ...:

Դ.

ՀԱԽԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Տաներեքն տարեկան էի ես, երբ ոտքս դուրս դրեցի հայրենական երկրից: Այն օրից անցել էր եօթն տարի ես, որ ես թափառում էի օտարութեան մէջ: Այդ եօթն տարուայ ընթացքում, կարծես թէ, ես արբուած լինէի մի տեսակ կախարդական ըմպելիքով, որ օրըստօրէ ինձ թմրեցնում էր, խորասուզում էր մի անբացատրելի ինքնամոռացութեան մէջ: Միանգամ գոնէ չզարթնեց իմ մէջ ինքնաքննութեան միտքը, որ ես խորհէի, թէ ի՞նչ է իմ կոչումը, ի՞նչ նպատակի եմ ձգտում ես, դէպի ո՞ւր է տանում ինձ այդ տեղային եռանդը, ի՞նչ է իմ ներկան եւ ի՞նչ կը լինի իմ ապագան...:

Իմ ամբողջ մտաւոր եւ հոգեկան զօրութիւնը լուսած էր դէպի չարը, դէպի անբարոյականը, դէպի ցնսասակարը: Ես մի առանձին դիւական հրճուանքով ուրախանում էի, երբ արիւնոտ գործը յաջողվում էր ինձ իմ սոսկալի ձեռնարկութիւնների մէջ:

Ինչու այսպէս փոխուեցայ ես, ո՞ւր մնաց իմ հոգու քնքշութիւնը, ո՞րտեղ կորաւ իմ բնաւորութեան մեղմութիւնը...:

Ես գործում էի ոչ թէ խելքով, ոչ թէ գիտակցաբար, այլ մի տեսակ վայրենի բնազդումով, որ միայն գազաններին է յատուկ:

Ուսաբել՝ խաբելու համար, կողոպտել՝ յափշտակութեան համար, սպաննել՝ արիւն թափելու համար, ոսկի եւ արծաթ դիզել՝ միայն ունենալու համար, — դրանք էին այն անյագ բաղձանքները, դէպի որոնք մղում էր ինձ վայրենի բնազդումը:

Չարագործը մի տեսակ բարոյական խելագար է: — Այդ հիւանդութեան մէջ էլ գտնում ես:

Ես ոչ միայն մոռացել էի իմ անձը, այլ մոռացել էի եւ այն արարածներին, որոնք իմ սրտին խիստ մօտ էին: Ես միանգամ գոնէ մտքիս չբերեցի իմ հայրենիքը եւ այն ազգը, որի արիւնն էի կրում եւ որից կարուած էի: Ես միանգամ գոնէ մտքիս չբերեցի մօրս, քոյրերիս եւ վերջապէս Սառային...:

Որպիսի խոստմունքներով բաժանուեցայ նրանցից, որքան մեծ ակնկալութիւններ ունէին նրանք իմ մասին: Պարսկաստանի սահմանից անցնելու ժամանակ իմ սիրտը դեռ թարմ էր, որդիական զգացմունքը դեռ ոչ բոլորովին հանգել էր նրա մէջ: Այն ժամանակ ես մտածեցի մօրս վիճակի վրայ եւ այդ պատճառով ծախած աւանակիս արծաթը ուղարկեցի նրան: Իսկ այնուհետեւ որքան գումարներ անցան իմ ձեռքը, բայց միանգամ գոնէ չմտածեցի, թէ աղքատութեան մէջ ապրող մայրս ունեմ եւ որբ մնացած քոյրեր ունեմ: Ջարմանալի փոփոխութիւն: Պանդխտութիւնը ինչպէս քարացնում է մարդու սիրտը...: Ինչպէս կարծրացնում է բոլոր քնքուշ զգացմունքները: "Աչքից հեռու, սրտից հեռու„ — ասում է հայկական առածը: Դա կատարուել էր իմ հետ:

Այդ բոլոր մտածութիւնները զարթնեցան իմ մէջ այն ժամանակ, երբ յանկարծ առացայ մօրիցս մի նամակ: Ամբողջ եօթն տարի օտարութեան մէջ ապրելով, այդ

առաջին նամակն էր, որ ստանում էի մոռացուած հայրենիքից: Նամակը հասաւ ինձ մի խաչագողի ձեռքով, որ եկել էր Պարսկաստանից: Նրա թուականից անցել էր աւելի քան մի տարի: Դա համարվում է շատ նոր նամակներից մէկը, որ մեր դասակարգի պանդուխտները բախտ են ունենում ստանալու իրանց ընտանիքից: Իոլոր ժամանակը նա մնացել էր նամակաբերի ծոցում, սպասելով, որ մի տեղում կը հանդիպէ ինձ եւ կը յանձնէ:

Կարծես, դառն արտասուքներով գրուած լիներ այդ ողբալի նամակը: Նրա մէջ նկարագրուած էր մօրս եւ քոյրերիս կրած նեղութիւնները ինձանից յետոյ. նկարագրուած էր կառավարութեան սարվաղների ու ֆէլրաշների գործ դրած բարբարոսութիւնները, նկարագրուած էր մեր ընտանիքի թշուառ դրութիւնը, եւ իրանց կրած ցաւերը իմ պանդխտութեան մասին եւ այլն: Նամակը վերջանում էր այսպիսի խօսքերով. "Մուրադ, այդպէս են վճարում զաւակները փոխարէնը այն կաթի, որով մայրը սնուցանում է որդուն...: Դու մոռացար, բոլորը մոռացար...: Դու մոռացար դժբախտ մօրդ եւ թշուառ քոյրերիդ...: Դու մոռացար Սառային, որ մինչեւ այսօր էլ սիրում է քեզ... որին դու եւս մի ժամանակ սիրում էիր„...:

Որքան ազդու է լինում մօր խօսքը: Իմ բոլոր ապերախտութիւնները մի րոպէում նկարուեցան իմ աչքերի առջեւ: Կարծես, իմ ականջներին ղարկում էր մի դառն, յանդիմանական անէծք. "դու անառակ որդի ես„...:

Իմ սիրտը լցուեց ցաւերով: Մի բան միայն մխիթարում էր ինձ, որ այդ նամակից տեղեկացայ, այն արարածները, որ մի ժամանակ սիրելի են եղել ինձ, դեռ կենդանի են:

Ես հէնց նոյն օրը յայտնեցի քաւոր Պետրոսին նամակի բովանդակութիւնը: Ես ցանկացաւ տեսնել խաչագողին, որի ձեռքով հասաւ ինձ նամակը, բայց նամակաբերը արդէն անհետացել էր: Երկու տարբեր խումբերի պատկանող խաչագողներ երբեք միեւնոյն սահմանում չեն գործում: Նա հէնց որ տեսաւ մեզ, իսկոյն հեռացաւ մեր գտնուած տեղից:

Քաւոր Պետրոսը կարգադրեց մի գումար ուղարկել մեր եւ իւր ընտանիքի ծախքերի համար: Երեւում էր, որ նա էլ նոր յիշեց, որ ինքը նոյնպէս կին ունի, զաւակներ ունի, կարօտութեան մէջ թողած աղգականներ ունի:

Այժմեան մեր իջած տեղը այն քաղաքն էր, որ ընտրել էինք մեզ համար որպէս գլխաւոր կենտրոն: Պատահում էր, որ ամիսներով կորչում էինք, թափառում էինք զանազան երկիրներ, եւ մեր ձեռքը ընկած արծաթը հատաքում էինք այստեղ: Այս քաղաքում կար մի բարեսիրտ եւ արդար սեղանաւոր, որը քաւոր Պետրոսի վաղեմի ծանօթն էր: Մեր փողերը յանձնում էինք նրան: Սեղանաւորը ճանաչում էր մեզ մեր իսկական անուններով: Նա գիտէր, որ մենք ուրեղացի ենք, ինչ մարդիկ ենք, բայց չգիտէր մեր իսկական պարապմունքը: Մենք յայտնի էինք նրան իբրեւ օրինաւոր վաճառականներ, որ ասիական ապրանքների առեւտուր են անում: Բայց թէ հեռու տեղերում ինչ գործերով էինք զբաղուած, կամ ինչ միջոցներով այդ գումարները հատաքվում էին մեր ձեռքում, — դրանց մասին նա ոչինչ տեղեկութիւն չունէր:

Երեւում է, կեանքի մէջ ճշմարտութիւնը այնքան անհրաժեշտ է մարդու համար, որ ամենասարսափելի չարագործն անգամ պէտք է ունենայ գոնէ մի բարեկամ, որի հետ պէտք է անկեղծ լինի: Քաւոր Պետրոսի յարաբերութիւնները յիշեալ սեղանաւորի հետ թէեւ իսկութեամբ այսպէս չէին, բայց նա գտնում էր բոլոր ճշդութիւնները, ինչ որ վայել են մի բարեկամի, մի ազնիւ մարդու: Սեղանաւորը մեծ վստահութիւն ունէր նրա հաւատարմութեան վրայ, մանաւանդ այն պատճառով, որ համարում էր նրան միամիտ, բարի եւ ճշմարտասէր մարդ: Ամեն անգամ, երբ յայտնվում էինք այդ քաղաքում, սեղանաւորը մեզ հրաւիրում էր իւր տանը: Նրա կինը, երեխաները, աղախինները, սպասաւորները բոլորը ճանաչում էին քաւոր Պետրոսին, — եւ բոլորի համար քաւոր Պետրոսը ունէր անուշ խօսքեր, զբաղեցնելու, ծիծաղացնելու եւ գրաւելու համար:

Նրանք սիրում էին լսել քաւոր Պետրոսի ճանապարհորդութիւնների պատմութիւնը: Այդ "թափառական հրէան" համարեա ամեն երկրում եղել էր եւ ամեն երկրի մասին կարող էր պատմել նրանց շատ հետաքրքիր տեղեկութիւններ: Թէեւ երբեմն նա առասպելներ էր պատմում, այսուամենայնիւ, մեծ ուշադրութեամբ լսում էին: Օրինակ, միանգամ ասում էր, թէ Հնդկաստանում մի կղզի կայ, որտեղ ոսկին ծնեբեկի նման գետնից բուսնում է, ածում է եւ ճիւղեր է արձակում:

— Այդ լաւ է, ասաց սեղանաւորը զարմանալով. — կարելի է գնալ այնտեղ եւ քաղել մի ամբողջ ոսկու հունձք:

— Եթէ հեշտ լինէր, ամեն մարդ կը գնար, պատասխանեց քաւոր Պետրոսը ժպտելով:

— Ի՞նչ դժուարութիւն կայ:

— Շատ դժուարութիւններ: — Կղզին կախարդուած է: Նաւերը հազիւ կարող են մօտենալ նրա

եզերքին: Հէնց որ մօտեցան, սոսկալի ալէկոծութիւնը կը տանէ նրանց դէպի ովկիանոսի յատակը: Պատահել է, որ մարդիկ ալէկոծութիւնից եւս ազատուելով, դուրս են եկել նրա ցամաքի վրայ: Բայց այդ մարդիկը այլ եւս չեն վերադարձել. նրանք կերպարանափոխուել են, կապիկներ են դարձել եւ ճնացել են այնտեղ:

— Ուրեմն ոչինչ հնար չկայ այնտեղ գնալու:

— Ինչպէս չկայ. միայն պէտք է գտնել կախարդուած կղզու թիլիսմանը: Հազարաւոր բրամիններ քննում են գրքերը, աշխատում են լուծելու թիլիսմանը, բայց դեռ ոչինչ հետեւանքի չեն հասել: Անգլիացիք միլիոններ կը տային, եթէ մէկը գտնելու լինէր անմահացնող կղզու կախարդական բանալին:

Ցետոյ պատմում էր նա, թէ մի այլ կղզում (դարձեալ Հնդկաստանում) գտնվում են այնպիսի հսկայ մրջիւններ, որ մարդիկ նրանց մէջքի վրայ թամք են դնում, նրանց բերանը սանձ են դնում, եւ ձիու նման նստում են նրանց վրայ, ուր որ կամենում են, գնում են: Եւ քաւոր Պետրոսը խիստ ծիծաղելի կերպով նկարագրում էր իւր մի հետաքրքիր ճանապարհորդութիւնը մրջնի մէջքի վրայ նստած: Զարմանալին այն էր, որ նրա լսողները այնքան փոքր տեղեկութիւններ ունէին հեռաւոր երկրների մասին, այնքան սակաւ ճանաչում էին երկրագունդը, որ բոլորովին հաւատում էին նրա պատմածներին:

Ահա այսպիսի եւ դրա նման պատմութիւններով էր զբաղեցնում քաւոր Պետրոսը իւր ունկնդիրներին:

Իւր հաշիւների մէջ քաւոր Պետրոսը վերին աստիճանի ճիշդ էր սեղանաւորի հետ: Շատ անգամ նրանից բաւական խոշոր գումարներ էր փոխ առնում, իբր թէ

մի առեւտրական ընդարձակ ձեռնարկութեան համար: Բայց լինձ յայտնի էր, որ քաւոր Պետրոսը ոչ փողի կարօտութիւն ունէր եւ ոչ առեւտրական ընդարձակ ձեռնարկութիւններ: Նա վեր առած գումարը այնպէս անշարժ պահում էր իւր մօտ, մինչեւ լրանում էր իւր տուած պարտատուրհակի ժամանակը: Այդ միջոցին տանում էր փողը, իւր տոկոսով յետ էր տալիս, պարտքը վճարում էր եւ ստանում էր պարտատուրհակը: Այդ անում էր նա իւր վարկը պահպանելու համար:

Միանգամ մեզ հարկաւորուեց վեր առնել սեղանաւորից 15.000 րուբլ: Փողերը բերեցինք մեր լճեւանը, կրկին համբարեցինք, տեսանք, որ 1000 րուբլ աւել է: Սեղանաւորը փոխանակ 15 հազար րուբլու, սխալմամբ տուել էր 16 հազար րուբլ, իսկ 15-ի պարտատուրհակ էր առել: Քաւոր Պետրոսը միւս օրը հազար րուբլն յետ տարաւ, յանձնեց սեղանաւորին այսպիսի դանդաղներով.

— Այդ ի՞նչ արեցիք լինձ հետ, Արկադիյ Փադեիչ, այսպէս էին կոչում սեղանաւորին: — Եթէ ես այս գիշեր մեռնելու լինեի, ի՞նչ կը լիներ իմ հոգու ճարը: Երեւի, դուք իմ հոգին կորցնել էիք ուզում...:

Սեղանաւորը ծիծաղացած:

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, Պետր Աբրամիչ, հարցրեց նա, խնդրելով վերադարձած քաւոր Պետրոսին նստել:

Պետր Աբրամիչը ոչինչ չէ խօսում, լռութեամբ դնում է սեղանաւորի առջեւ 1000 րուբլ:

— Այդ ի՞նչ փող է, հարցնում է սեղանաւորը:

— Այդ այն փողն է, որ դու լինձ աւել էիր տուած, պատասխանում է քաւոր Պետրոսը դեռ եւս վերադարձած կերպով: — Աւելի լաւ կը լինէր, որ հաշիւքի մէջ զգոյշ լինէիք եւ ուրիշին մեղքի մէջ չձգէիք...:

— Դու բարի ես, շատ բարի, Պետր Արրամիչ, ասում է սեղանաւորը, բարեկամաբար նրա ձեռքը սեղմելով:

— Ես բարի եմ նրա համար, որ չդողայայ ուրիշի փողը: — Այդ բարութիւն չէ, Արկադիյ Փադեիչ:

Ընայելով այդ համեստութեանը, Արկադիյ Փադեիչը աշխատում է ապացուցանել, որ Պետր Արրամիչը բարի մարդ է:

Ամեն անգամ, երկար թափառումներից յետոյ, երբ յայտնվում էինք սեղանաւորի մօտ, նրա սովորական հարցմունքն այդ էր լինում.

— Լաւ վաստակ ունեցար, Պետր Արրամիչ:

— Վա՛տ են գնում գործերը, շատ վատ, Արկադիյ Փադեիչ:

— Ինչո՞ւ:

— Բոլորը մեր մեղքերից:

Սեղանաւորը ծիծաղում է:

— Դուք ծիծաղում էք, Արկադիյ Փադեիչ: Բայց տեսէք, ինչպէս վատացել են ժամանակները, առանց երդուելու, առանց սուտ խօսելու չես կարող առեւտուր անել...: Բայց այդ մեղք է, Արկադիյ Փադեիչ, շատ մեղք է...: Համարեա մարդ իւր հոգին է ծախում...:

— Բայց շահ, այսու ամենայնիւ, լինում է:

— Ի՞նչ շահ... այսպիսի շահը Յուդայի արծաթն է, որ ստացաւ եւ մատնեց մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Այսպիսի շահը սատանան կը տանէ...:

Ընայելով յայտնած դժգոհութեանը վատ ժամանակների եւ իւր առեւտրական անյաջողութեան մասին, քաւոր Պետրոսը դարձեալ համբարում է սեղանաւորի առջեւ մի քանի հազարներ:

— Այս անգամ, երեւի, սատանան չէ դիպել քո փողերին, Պետր Արրամիչ:

— Քրտինքով է աշխատած, դառն քրտինքով, Արկադիյ Փադեիչ: — Արդար աշխատանքը Յիսուս Քրիստոսը կը պահպանէ, պատասխանում է քաւոր Պետրոսը եւ սկսում է յերմեռանդութեամբ խաչակնքել իւր երեսը:

Սեղանաւորը երբեմն սիրում էր քաւոր Պետրոսի հետ հանաքներ անել եւ զուարճանալ նրա պարզմտութեան վրայ:

Բայց ինձ զարմացնում էր քաւոր Պետրոսի հաւատարմութիւնը, որ ունէր դէպի սեղանաւորը: Այդ մարդը, որի համար ոչինչ սուրբ բան չկար, վարվում էր նրա հետ ամենայն ճշմարտութեամբ: Ես կարծում էի, թէ դա մի խորամանկ նախապատրաստութիւն է, սեղանաւորին մեր ծուղակի մէջ գցելու համար, որի հարստութիւնը միլիոնների էր հասնում: Միանգամ հարցրի քաւոր Պետրոսից.

— Սեղանաւորի "հոգւոցը" երբ պիտի կարգանք: Ուզում էի հասկացնել, թէ երբ պէտք է կողոպտենք նրան:

Նա պատասխանեց.

— Եթէ ամեն աղբիւրները պղտորելու լինես, գոնէ մէկը պէտք է մաքուր թողնես, որ ինքդ խմես:

Ես տեսնում էի, որ քաւոր Պետրոսը այս դէպքում եւս չէ շեղվում իւր հիմնական կանոնից. "ամեն ինչ ծառայեցնել իւր օգտի համար"...:

Ճաշադողին եւս պէտք է մի հաւատարիմ մարդ ունենալ: Դուք չգիտէք խաչադողի վճռակը: Նա թափառում է երկրէ երկիր զանազան կերպարանքներով,

զանազան անուններով, որոնց ոչ մէկը իւր իսկական անունը չէ: Ծանկարծ նա մեռաւ. նրա ունեցածն էլ իւր հետ կը մեռնի: Որովհետեւ նա յայտնի է միայն կեղծ անունով, իսկ այդ կեղծ անունը կրողն ժառանգները գտնել անհնարին բան է: Կիրակոսի թողած կայքը չեն տալ Մարկոսի ժառանգներին, թէեւ մեռնողը իսկապէս Մարկոսը լինէր, եւ կեղծ անունով միայն իրան կոչելիս լինէր Կիրակոս: Մի կենտրոն պէտք է, որ խաչադողը յայտնի լինի իւր իսկական անունով եւ հաւաքէ այնտեղ իւր ունեցածը, որպէս զի, եթէ մահ պատահելու լինի, հասցնեն նրա ընտանիքին: Ահա այդ էր քաւոր Պետրոսի յարաբերութիւնների պատճառը սեղանաւորի հետ: Նրա մօտ հաւաքում էր քաւոր Պետրոսը մեր բոլոր վաստակած փողերը: Եթէ մեզ մի բան պատահելու լինէր, սեղանաւորը դիտէր, թէ փողերը ումն են պատկանում: Մենք յայտնի էինք նրան մեր իսկական անուններով, եւ յանձնած գումարների համար ստացական էինք առնում նոյն անուններով:

Քաւոր Պետրոսը յայտնի էր անունով՝ — պարտկաստանցի, այս ինչ գաւառից, այս ինչ գիւղից, վաճառական Պետր Աբրամիչ Ազախանով: Յայտնի էի եւ ես իմ անունով, տոհմանունով եւ տեղի անունով:

Այդ ձեւը ունէր եւ այն յարմարութիւնը, որ դիցուք թէ մեզ մահ չպատահեց, այլ մի տեղ կալանաւորեցին մեզ: Այսպիսի դէպքերում էին կարող մեր կայքը գրաւել, որովհետեւ մեզ կը գտնէին մի որեւիցէ կեղծ անուան տակ, իսկ մեր կայքը մեր սեպհական անունով կը լինէր բոլորովին ուրիշ ձեռքում:

Ես այժմ հասկանում էի այն զանազան անցագրերի անհրաժեշտութիւնը, որ քաւոր Պետրոսը Պարտկաստանից դուրս գալու ժամանակ առել իւր հետ եւ միշտ նորոգել էր տալիս, որ ժամանակները չկորցնեն:

Ծանձնելով մեր այս անգամուայ բերած փողերը սեղանաւորին, վերադարձանք դէպի մեր իջեւանը: Ճանապարհին քաւոր Պետրոսի ուշադրութիւնը գրաւեց մի օտարոտի մուրացկան, որը փողոցում կանգնած էր մի լուսամուտի հանդէպ, եւ խղճալի ձայնով ողորմութիւն էր խնդրում: Լուսամուտի հանդէպ նստած տիկինը ձգեց նրան մի քանի գրօշներ եւ փակեց լուսամուտը: Մուրացկանը սկսեց որոնել, թէ որտեղ ընկան գրօշները.

— Նայիր, Մուրատ, ասաց ինձ քաւոր Պետրոսը, — կարող ես ճանաչել, թէ դա ինչ մարդ է:

Ես նայեցի: Մուրացկանը հագած ունէր պատառոտած սեւ փարաջայ. մէջքը սեղմուած էր գունաւոր լայն գօտիով. գլխին դրած ունէր մի ջարդուած եւ հնութիւնից իսկական գոյնը կորցրած հոգեւորականի ցած շլիապայ (երեւի մէկը ընծայել էր նրան) եւ ձեռքին կրում էր երկայն գաւազան, հասարակ ոսկրեայ գլխիկով:

— Ղաչաղող է, պատասխանեցի ես:

— Ոչ, ասաց քաւոր Պետրոսը: — Քահանայ է եւ հայ քահանայ:

Ես չհաւատացի: Մօտեցայ մուրացկանին եւ հարցրի նրա ինչ մարդ լինելը: Քաւոր Պետրոսի նկատողութիւնը ուղիղ էր: Նա հրաւիրեց Թշուառ քահանային մեզ մօտ: Քահանայի ուրախութեանը չափ չկար, երբ հեռաւոր օտարութեան մէջ հանդիպեց երկու հայերի: Մենք նրան հիւրասիրեցինք թէյով եւ իսկոյն մի բան տուեցինք ուտելու: Ողորմելին այնպիսի ախորժակով կերաւ, որ երեւում էր մի քանի օր քաղցած էր մնացել: Երբ նա փոքր

ինչ կազդուրուեցաւ, քաւոր Պետրոսը հարցրեց, թէ ինչ դէպքով այս կողմերն է անցել:

Նրա պատմութիւնից երեւաց, որ ինքը սպահանցի է: Նրա ժողովրդի մի մասը Կասպից ծովի հարաւ-արեւելեան եզերքի վրայ մի փոքրիկ գաղթականութիւն է հիմնել: Նոր գաղթականները մեծ դժուարութեամբ կարողացան իրաւունք ստանալ պարսից կառավարութիւնից, որ իրանց համար մի եկեղեցի շինեն: Նկեղեցին հիմնեցին, սկսեցին կառուցանել, բայց աւարտել չկարողացան, որովհետեւ սաստիկ աղքատ էին, իրանց միջոցները չէին բաւականանում: Շինուածքը մնայ թերի: Քահանան խնդրեց, որ շուտով խմբուելու է *** քաղաքի մեծ ոճնավաճառը, ինքն եւս դիմեց այնտեղ, այն նպատակով, որ ոճնավաճառի առիթով հաւաքուած հայ վաճառականներից եկեղեցու շինութեան անունով նուիրատուութիւններ հաւաքէ:

— Ցաջողուեցա՞ւ, հարցրեց քաւոր Պետրոսը, թոյլ չտալով քահանային աւարտել իւր պատմութիւնը:

— Ցաջողուեցաւ: Աստուած օրհնէ բարեպաշտ հայերի առատաձեռնութիւնը. նրանք այնքան նուիրեցին, որով ոչ միայն կարելի էր աւարտել եկեղեցու շինութիւնը, այլ բաւական նշանաւոր գումար աւել կը մնար եկեղեցին զարդարելու համար պէտք եղած սրբութիւններով:

— Ուրեմն ինչ է պատճառը, որ այդ ողորմելի դրութեան մէջն ենք գտնում ձեզ.

— Երբ ուղեւորուեցայ դէպի Պարսկաստան, ճանապարհին կողոպտեցին ինձ եւ բոլորը, ինչ որ հաւաքել էի, տարան: Այդ դժբախտութիւնից յետոյ ես չուզեցի դատարկաձեռն եւ ամօթալի երեսով վերադառնալ իմ ժողովրդի մօտ, սոխպուեցայ մուրացկանութեամբ շարու-

նակել իմ ուղեւորութիւնը, գուցէ մի տեղ դարձեալ բարեպաշտ հայեր կը գտնեմ եւ կը դիմեմ նրանց գթասրտութեանը:

— Այժմ ո՞րտեղ դիտաւորութիւն ունէք գնալու:

— Մօսկուա, ասում են այնտեղ եւս հայեր կան:

Ուսչադողին հեշտութեամբ չէ կարելի խաբել, մանաւանդ քաւոր Պետրոսի նման մարդուն: Նա, թէեւ անզգալի կերպով, բայց բաւական խստութեամբ սկսեց զանազան հարցեր առաջարկելով քննադատել քահանային, ստուգելու համար, թէ ո՛ր աստիճան ճշմարիտ էին նրա ասածները:

Նա լսեցի նրանց բոլոր խօսակցութիւնը, որովհետեւ այդ միջոցին քաւոր Պետրոսը հրամայեց ինձ, որ գնամ հիւրանոցը եւ մեզ համար ընթրիք պատուիրեմ: — "Բամբակը ղալին լինի," ասաց նա: Այդ նշանակում էր, որ արագը շատ լինի:

Ընթրիքի ժամանակ քաւոր Պետրոսը աւելի առիթ ունեցաւ քննելու քահանային, որովհետեւ տէր հայրը ուրախութիւնից խմեց աւելի, քան թէ պատշաճ էր:

Քահանան գիշերը մնաց մեզ մօտ:

Միւս առաւօտ, թէյից յետոյ քաւոր Պետրոսը ասաց նրան.

— Ամբողջ եօթն տարի է, տէր հայր, օտարութեան մէջ ապրելով, եւ օտար ազգերի հետ յարաբերութիւններ ունենալով, զուրկ եմ մնացել Հայաստանեաց եկեղեցու սուրբ հաղորդութիւնից: Ձեզ Աստուած ուղարկեց ինձ մօտ, քաւելու իմ մեղքերը եւ արժան կացուցանելու Յիսուս Քրիստոսի կենարար մարմնին եւ արեանը:

Տէր հայրը, հայ քահանաների սովորութեան համեմատ, ճանապարհորդութեան առիթով, մի փոքրիկ արծաթեայ մանգաղուփի մէջ, վեր էր առել իւր հետ

սուրբ հաղորդութեան նշխարները: Նա դուրս հանեց մանր նատուփը, դրեց սեղանի վրայ եւ պատրաստուեցաւ, կատարելու սուրբ խորհուրդը: Քաւոր Պետրոսը եւ ես չդիտցինք նրա առջեւ: Քաւոր Պետրոսի խոստովանութիւնը կատարուեցաւ հրապարակաբար, թէեւ ես ոչինչ չհասկացայ, որովհետեւ դրաբար լեզուով էր: Նա կարդաց հայոց ժամագրքի ամբողջ "մեղան„: Նրա մէջ բովանդակւում է բոլոր մեղքերի խոստովանութիւնը, ինչ որ կարող է մտածել, հնարել եւ գործել միայն չարագործ մարդը, եւ ոչ ուրիշ ապրած:

Նա տէր Հօր թելադրութեամբ կրկնեցի մի քանի տուն նոյն "մեղայից„: Երբ նա, պահանջուած աղօթքները կարդալուց յետոյ, մօտեցրեց իմ շրթունքին սուրբ հաղորդութեան նշխարը, իմ ամբողջ մարմինին տիրեց մի սոսկալի, հոգեւոր սառնութիւն: Նոյն ազդեցութիւնը ես նկատեցի եւ քաւոր Պետրոսի դէմքի վրայ:

Մենք ջրաց տեղից վերկացանք, երկուսս էլ համբուրեցինք տէր Հօր աջը. նա օրհնեց մեզ եւ թողութիւն շնորհեց:

Ցետոյ քաւոր Պետրոսը տէր Հօրը իւր հետ առնելով, դնացին շուկան: Իսկ ինձ տուեց մի տոմսակ եւ ուղարկեց Արկադիյ Փադէիչի մօտ: Ես ստացայ սեղանաւորից 10.000 րուբլ եւ վերադարձայ մեր իջեւանը: Նրանք դեռ եւս չէին եկել: Ես մինչեւ ճաշ սպասեցի նրանց:

Երբ յայտնուեցան նրանք, ես հազիւ կարողացայ ճանաչել քահանային: Նրա հագուստը ոտքից գլուխ նորոգուած էր եւ տէր հայրը իւր կարգին վայելուչ կերպարանք էր ստացել:

Երբ մտան սենեակը, քաւոր Պետրոսը նայեց նրա վրայ, եւ մի առանձին բաւականութեամբ ասաց ինձ.

— Տեսնում ես, Մուրադ, տէր հայրը այժմ մի բանի նման է: Այն ինչ էր առաջ: Ճշմարիտ ասած, իմ սիրտը կարատուեցաւ, երբ առաջին անգամ տեսայ, հայոց եկեղեցու քահանան, պատառոտած հագուստով, փողոցում մուրացկանութիւն է անում: Այդ ամօթը, այդ նախատինքը մեզ, բոլոր հայերիս է վերաբերում: Ի՞նչ կարծիք կ'ունենան մեր մասին օտարազգիները, եթէ հասկանան, որ հայ քահանայ է:

Փակագծի մէջ ասելով, պէտք է խոստովանուած, որ խաչագողները մի առանձին նախանձախնդրութիւն եւ պատկառանք ունեն դէպի հայոց եկեղեցին եւ եկեղեցականները: Նրանք ամեն կրօնների (թէ քրիստոնէական լիներ եւ թէ հեթանոսական) հոգեւորականի անունով յայտնվում են ազգերի մէջ, բայց երբէք իրանց հայ քահանայ չեն ձեւացնում, հայ քահանայի անունը վնաստառակելու համար:

Քաւոր Պետրոսի սովորութիւնները ինձ յայտնի լինելով, ես արդէն նախաճաշիկը պատրաստել էի տուել: Երբ կերան, խմեցին, քաւոր Պետրոսը վեր առեց վերջին բաժակը, եւ զարկելով տէր Հօր բաժակին, ասաց.

— Ցանկանում եմ ձեզ բարի ճանապարհ, տացէ Աստուած, որ յաջողութեամբ վերադառնաք ձեր տեղը եւ շարունակէք եկեղեցու շինութեան գործը: Ամեն ինչ այս աշխարհում անցողական է եւ ունայնութիւն. միայն եկեղեցին եւ սուրբ հաւատը կը մնայ յաւիտեան:

Ցետոյ նա դարձաւ դէպի ինձ հարցնելով.

— Բերեցիր:

Ես սեղանաւորից ստացած 10.000 րուբլու կապոցը տուեցի նրան: Նա տուեց քահանային ասելով.

— Ահա, տէր հայր, այդ կապոյի մէջ դուք կը գտնէք այն գումարը, որ ձեզ պէտք է սուրբ տաճարի շինութիւնը աւարտելու համար: Ես մի մեղաւոր մարդ եմ, ընդունեցէք այդ մանաւոր գումարը, իբրեւ այրի կնոջ լուման:

Քահանան մեծ ընդհակալութեամբ եւ օրհնութիւններով ընդունեց կապոյը, հարցնելով.

— Ես չե՞ պիտի գիտենամ իմ բարերարի անունը:

— Գիտենալու մի առանձին պէտք չկայ, տէր հայր, դուք միայն աղօթեցէք իմ հոգու համար: Աստուած առանց անունների եւս ճանաչում է մարդիկներին:

Մեր իջեւանի դրան առջեւ կանգնեց մի ճանապարհորդական սայլակ, որի վրայ նստած էր մի ուղեկից: Քաւոր Պետրոսը, կամենալով այն օր իւր հիւրին ճանապարհ դնել, գտել էր այդ ուղեկցին, եւ բոլոր հոգով հոգացել էր, որ տէր հօր ճանապարհորդութիւնը անվտանգ լինի եւ ապահով:

Նա իւր ձեռքով կապեց տէր հօր ճանապարհի մափրաշը եւ իւր նուիրած փողերը թաղցրեց նրա մէջ: Ցետոյ ասաց ինձ, որ տանեմ մափրաշը, տեղաւորեմ սայլակի մէջ: Ես յօժարութեամբ կատարեցի այդ, յանկանալով, որ իմ կողմից եւս մի ծառայութիւն արած լինեմ տէր հօրը:

— Ամեն ինչ պատրաստ է, ասաց քահանան, — օրհնեալ լինիք, բայց ինձ պակասում է մի բան. ինձ կողոպտելու ժամանակ, թղթերիս հետ տարան եւ իմ անցագիրը:

— Դա մի մեծ կորուստ չէ, պատասխանեց քաւոր Պետրոսը ծիծաղելով, — ես կը տամ ձեզ մի անցագիր, այն եւս քահանայի անցագիր, միայն դուք այսուհետեւ ձեզ պիտի կոչէք հայր Անաստասիոս:

— Դա հայի անուն չէ, ասաց տէր հայրը դժուարանալով:

— Մխեւնոյն է, մինչեւ սահմանը անցնելը կարելի է հայր Անաստասիոս լինել, իսկ Պարսկաստանում ձեզանից այլ եւս անցագիր չեն պահանջի:

Քաւոր Պետրոսը նայեց տէր հօր դէմքին եւ հասակին, ասաց.

— Բոլորովին համապատասխանում է ձեր կերպարանքին:

Թէ ես եւ թէ քաւոր Պետրոսը կրկին համբուրեցինք տէր հօր աջը եւ տարանք նրան, նստացրինք սայլակի վրայ: Նա երկար բարեմաղթութիւններ անելով իւր անծանօթ բարերարի համար, հեռացաւ:

Այն օր քաւոր Պետրոսը ինձ երեւում էր իբրեւ մի հրեշտակ: Ես երբէք, չէի կարող երեւակայել այդ գազանի մէջ այս աստիճան բարեպաշտական զգացմունք: Գողը, աւազակը, սարսափելի խաբեբան ահագին գումար էր նուիրում եկեղեցի կառուցանելու համար: Այդ ինչ տարօրինակ զոհաբերութիւն էր: Ո՞նչպէս կարող էին մարդու մէջ հաշտուել լոյսը եւ խաւարը, չարը եւ բարին, առաքինութիւնը եւ ոճրագործութիւնը:

Այդ ուրիշ բան է, եթէ կատարած լինէր այդ զոհաբերութիւնը որեւիցէ նենգաւոր եւ խորամանկ նպատակի համար: Բայց ինձ զարմացնում էր այն, որ նրա վարմունքի մէջ գտնում էի կատարեալ անկեղծութիւն: Ես բաւական ուսումնասիրել էի քաւոր Պետրոսին եւ հաղիւ կը պատահէր, որ նրա վերաբերութեամբ սխալուէի իմ կարծիքների մէջ: Կրկնում եմ, որ նրա վարմունքը բոլորովին անկեղծ էր: Նրա հոգու եւ սրտի խորքից էր բղխում այն ջերմեռանդ զգացմունքը, որով նա ցանկա-

ցաւ նպաստամատոյց լինել մի տաճարի կառուցմանը, ա-սիական մի խուլ երկրում, մահմեդականների մէջ:

Այն օր նա աւելի ուրախ էր, գտնվում էր աւելի խաղաղ տրամադրութեան մէջ, վայելում էր իւր բարե-գործութեան բերկրանքը: Այն օր իւր ապաշխարանքը վերջացրած քրիստոնեայի նման, նա զգում էր իւր խիղճը մաքրուած, զգում էր իրան թեթեւացած մեղքերի ծանր բեռնից:

Մի խորհրդաւոր ցնցում տիրում էր իմ մարմնին, երբ մտաբերում էի, թէ տրպիսի հոգեւոր հեզութեամբ, թէ տրպիսի բորբոքուած հաւատով, ծունր իջած Աստուծոյ սեղանի պաշտօնեայի առջեւ, այդ եղեռնագործը ընդունեց սուրբ հաղորդութեան խորհուրդը: Մտածում էի եւ ուրախանում, թէ այդ մարդը արդէն դարձաւ չար ճանապարհից, թէ դա այսուհետեւ այլ եւս չի շարունակի այն, ինչ որ մինչեւ այնօր գործել էր:

Ես սխալվում էի...:

Կրօնական զգացմունքը միշտ վառ էր պահում քաւոր Պետրոսի մէջ: Նա միշտ ճնշել էր հաւատարիմ եկեղեցու պատուէրներին: Դեռ Պարսկաստանում եղած ժամանակ, մեր զրուցում համարվում էր նա ամենաբարեպաշտ մարդկիններից մէկը. — ամեն օր, առաւօտեան եւ երեկոյեան, եկեղեցի էր գնում, պաս էր պահում, եւ ամեն տարի մի քանի անգամ սուրբ հաղորդութիւն էր ընդունում: Պանդխտութեան մէջ դարձեալ նա նոյնն էր ճնշել, բնաւ չէր փոխուել: Ես շատ անգամ տեսել էի (մինչեւ անգամ ամենասարսափելի չարագործութիւններից յետոյ) թէ ինչպէս նա առանձնացած մեր իջեւանի մի անկիւնում, արտասուքը աչքերում աղօթում էր: Ինձ երբէք չէր պատահած տեսնել, որ նա անցկացնէր իւր ա-

ռաւօտեան եւ երեկոյեան աղօթքները: Շատ անգամ, երբ պատրաստվում էինք մի որեւիցէ արշաւանք կատարելու, — կամ, ինչպէս նա սովորութիւն ունէր ասելու՝ երբ պատրաստվում էինք "գործի" գնալ, — տեսնում էի, որ նա ուշանում է: Երբ շտապեցնում էի նրան, պատասխանում էր. "Փոքր ինչ սպասեցէք, դեռ աղօթքս չեմ վերջացրել"...:

Դա փարիսեցութիւն չէր. դա նրա հաստատ հաւատն էր: Նա համոզուած էր, որ ամեն գործ, թէ՛ բարի լինելը նա եւ թէ՛ չար, պէտք էր աղօթքով սկսել եւ Աստուծուց օգնութիւն խնդրել:

Նա մինչեւ անգամ պաս էր պահում, կատարում էր հայկական եկեղեցու բոլոր ծէսերը: Նրա թղթապահի մէջ, կեղծ անցագրերի հետ միասին, կար մի փոքրիկ հայերէն օրացոյց, շատ անգամ նայում էր նրա մէջ, որ չսխալուի, որ գիտենայ, թէ երբ պէտք էր պաս պահել, երբ պէտք էր ուտել, կամ երբ պէտք էր կատարել այս եւ այն ծէսը:

Քաւոր Պետրոսը իւր հոգեւոր հասկացողութիւնների մէջ սաստիկ անհաւատ էր, իսկ իւր կրօնական համոզմունքների մէջ վերին աստիճանի մոլեռանդ: Նա հաւատում էր, որ բացի Լուսաւորչի հօտից, ուրիշ քրիստոնեաներից եւ ոչ մէկը Աստուծոյ ալքայութիւնը չի վայելի: Ես այդ պատճառով սաստիկ նախանձախնդրութիւն ուներ դէպի հայոց եկեղեցին:

Բայց ի՛նչպէս կարելի էր միեւնոյն ժամանակ եւ խաչագող լինել եւ լաւ քրիստոնեայ:

Քաւոր Պետրոսի կարծիքով կարելի էր: Եկեղեցին ներող է: Եկեղեցին հէնց նրա համար է, որ սրբէ մեղաւորներին: Եթէ օրուայ մէջ եօթանասուն եւ եօթն անգամ մեղանչելու լինես, նա դարձեալ կը ներէ: Աստուա-

վանուիր, ղջա՛, սուրբ հաղորդութիւն ընդունիր, — այնուհետեւ դու արդար ես: Այդ հաւատը ունեն եկեղեցու վերաբերութեամբ բոլոր խաչագողները: Նրանց մօտ միտը միւսին չէ խանգարում: Կարելի է եւ պաս պահել, եւ աղօթք անել, եւ սուրբերի բարեխօսութիւնը խնդրել, — կարելի է միեւնոյն ժամանակ եւ նոյն սուրբերի անունով սուտ երդուել, խաբել, գողանալ եւայլն:

Խաչագողը ծխասպաշտ է: Կրօնի հոգեւոր, բարոյական մասը նրան անմատչելի է: Եկեղեցու հրահանգները կատարում է նա որպէս արարողութիւն, — իսկ խաբէութիւնը որպէս գործ:

Քաւոր Պետրոսը եւ նրա նմանները պատրաստ էին եւ եկեղեցի կառուցանել, եւ միեւնոյն ժամանակ հարիւրաւոր ընտանիքների տունը քանդել, նրանց պատառ հացի կարօտ թողնել: Նա սովորած էր մէկ շրթունքով աղօթել, իսկ միւսով հայհոյել, սուտ խօսել: Նա պատրաստ էր մէկ ձեռքով ողորմութիւն տալ, միւսով յափշտակել աղքատի վերջին կոպեկը:

Գործողութիւնների այդ տարօրինակ հակառակութիւնը հաշտւում եւ ներդաշնակվում էր նրա մէջ ամենայն համաձայնութեամբ: Եւ նրա սիրտը միշտ խաղաղ էր, եւ նրա խիղճը միշտ անդորր էր, որովհետեւ ամեն մի մեղանչելու դէպքում նա ունէր մի ապաստարան՝ — եկեղեցին, եւ մի միջնորդ իրան երկնքի հետ հաշտեցնելու համար — քահանան:

Քաւոր Պետրոսը այսպէս էր հասկանում կրօնի եւ եկեղեցու խորհուրդը: Նա մի այլանդակ քրիստոնեայ էր: Բայց նրա հաւատի անկեղծութեան վերաբերութեամբ կասկածելը — շատ սխալ կը լինէր:

Ե.

ԳՈՀԱՐՆԵՐ

Քահանային ճանապարհ դնելու հէնց միւս օրը, քաւոր Պետրոսը լինէ իւր մօտ կանչեց եւ ժպտելով ասաց.

— Մուրադ, մանրավաճառութեան համին էլ գնաց, պէտք է մի ուրիշ բանով զբաղուել:

Խիստ սակաւ էր պատահում, որ նա լինէ հետ հանաքներ անէր: Նա հարցրի.

— Ապա ի՞նչ անենք:

— Պէտք է մի փոքր զուարճանալ, շատ յոգնեցանք:

— Ի՞նչով զուարճանալ:

— Դու խօ խմանում ես երգել, ես էլ լաւ ածել գիտեմ ջութակի վրայ: Այսօր մուժիկի մօտ մի լաւ արջ տեսայ, ծախում է, ես անպատճառ պէտք է գնեմ այն արջը:

Նա ծիծաղեցի: — Ի՞նչի համար, հարցրի, էլինի թէ ուզում էք ոյինբազութիւն անել:

— Մի այդպիսի միտք ունեմ...:

Նա այնպէս լուրջ կերպով արտասանեց վերջին խօսքը, որ անկարելի էր ասածը կատակ համարել:

— Լաւ, ի՞նչ օգուտ դրանից:

— Օգուտը յետոյ կը տեսնես...:

Առաջին անգամն էր, որ քաւոր Պետրոսը ինձ, որպէս ասում են, մարդու տեղ էր դնում եւ ինձ հետ խորհրդակից էր լինում: Նա ինձ հետ միշտ կարճ էր խօսում եւ աւելի հրամայում էր, քան թէ խորհուրդ էր հարցնում:

Թողնելով քաղաքը, որտեղ գտնվում էինք, անցանք մի գիւղ: Արջը արդէն պատրաստ էր: Մեր նոր պարապմունքի համար ընտրած երաժշտական գործիքներով եւ հագուստի ձեւերով մենք բոլորովին նմանում էինք թափառական ցիգաններին: Թէ ես եւ թէ քաւոր Պետրոսը խիստ ծիծաղելի էինք այդ նոր կերպարանափոխութեան մէջ:

Արջը վարժուած էր: Մնում էի ես: Քաւոր Պետրոսը երկու ամբողջ շաբաթ սովորեցնում էր ինձ բոլոր եղանակները, թէ որպէս պէտք էր պար ածել նրան: Ես այս գործի մէջ եւս ցոյց տուի իմ ընդունակութիւնը: Քանի օրից յետոյ այն աստիճան պատրաստուած էի, որ կարող էի ամենայն վստահութեամբ հանդէս դուրս գալ, որպէս մի լաւ արջ պար ածող:

Քաւոր Պետրոսը, այդ երեւելի չարագործը, օրըստօրէ բարձրանում էր իմ աչքում իւր խաբեբայութեան հսկայական մեծութեամբ: Նա իւր արջ պար ածողի մուշտակի մէջ նոյնքան մեծ էր, որքան Երուսաղէմի արեղայի փարաջայի մէջ: Նրա համբերութիւնը, նրա հեռատեսութիւնը սահման չունէր: Ինձ թւում էր, որ նա նայում էր այն ընդարձակ երկրի վրայ, որպէս իւր մշակութեան դաշտերի, որպէս իւր ագարակի վրայ: Արջ պար ածողի կեղեւի մէջ պարածածկուած. կարծես թէ, նա ցանում էր սերմերը, որոնց բեղմնաւոր արդիւնքը մի ժամանակ պիտի հնձէր . . . : Թափառելով գաւառից

գաւառ, քաղաքից քաղաք եւ գիւղից գիւղ, նա հետազօտում էր հողը, նշանակում էր իւր յիշողութեան մէջ այն տեղերը, ուր մի ժամանակ նրա մանգաղին յաջող հունձ էր սպասում . . . :

Եւ արդարեւ, արջ պար ածողը, ռամիկ ժողովրդի ռամիկ ծաղրածուն, այնքան անմեղ, այնքան անվտանգ մարդ է, որ բոլոր տների բակի դռները բաց են նրա համար: Տիկինները, պարոնները, իրաւ է, նրա վրայ ուշադրութիւն չեն դարձնում, բայց աղախինների, սպասաւորների եւ տան երեխաների սիրելին է նա: Ժամերով կանգնում է նա բակում, տասն անգամ կրկնել են տալիս մի եւ նոյն խաղը, մինչեւ ձգում են նրան մի քանի գրօշներ: Այդ առիթով կարողանում է նա ամեն տուն մտնել, ամեն տան ծակուծուկը հետազօտել եւ ամեն գաղտնիք իմանալ: — Այդ բաւական է “խաչագողի„ համար . . . :

Քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, մեր արջը պար ածելով, առաջ էինք գնում: Ունէինք մեզ հետ մի ճանապարհորդական ողորմելի սայլակ, լծած մի ձիով միայն: Նրա վրայ տեղաւորվում էինք ես, քաւոր Պետրոսը եւ արջը: Վերջինը նստում էր իմ կողքին, եւ ես երբեմն նրա ձեռքն էի տալիս ձիան երասանակները, երբ կամենում էի փոքր ինչ նիրհել սայլակի վրայ:

Վերջապէս հասանք *** քաղաքը, ուր դեռ նոր սկսուել էր տարեկան տօնավաճառը: Այստեղ ամեն տեսակ ապրանքների հետ կարելի էր գտնել եւ ամենատեսակ մարդիկ երեսների գոյնզգոյն կաշիներով եւ հագուստների զանազան ձեւերով: Սկսեալ Միջին Ասիայի խորքերից մինչեւ Արեւմտեան Եւրոպան, ամեն երկրից մարդիկ կային այնտեղ:

Շատ հասկանալի է, որ մեր ալջով չէինք կարող մրցութիւն անել այն բազմաթիւ ձեռնածուներին, լարախաղացներին, մոլաշրջիկ երաժիշտներին ու զբաստանական խմբերի հետ, որոնք զանազան երկիրներից հաւաքուել էին այստեղ իրանց շնորհքը վաճառելու համար: Այսուամենայնիւ, "Ճիւղը թէեւ փոքրիկ է, դարձեալ թռչունն է„: Ալջ պար ածողն էլ ունի իւր սիրողները:

Ամբողջ բազմութիւնը զանվում էր սարսափելի խառնաշփոթութեան մէջ: Ամեն ոք տենդային անհամբերութեամբ շտապում էր, որպէս զի մինչեւ ուշանալը, վաճառէ իւր մթերքը: Ամեն տեղ տիրում էր վաղվզոց, աղաղակ եւ խռովութիւն: "Շունը տիրոջը չէր ճանաչում„: Գողութիւնները չափ չունէին: Երկրի բոլոր արտիստները, որոնք սովոր են զարմանալի ճարպկութեամբ ձեռքը տանել մարդկանց գրպանը, — այստեղ էին: Ես եւ քաւոր Պետրոսը լցացնում էինք պակասը...:

Այստեղ հասնելու ժամանակ քաւոր Պետրոսը ինձանից բաժանուեցաւ: Նա խնայով ներկեց իւր մօրուքը, մազերը եւ մատները, հագաւ իւր ամենապատուաւոր հագուստը, դլխին դրեց երկայն պարսկական մորթէ գտակ, եւ ձեւացնելով իրան խորասանցի ակնավաճառ, խիստ թանգ գնով վարձեց մի խանութ դլխաւոր փողոցի վրայ: Ես այժմ միայն հասկացայ այն անցագրի գաղտնիքը, որը մի քանի տարի առաջ սաացաւ նա Թաբրիզում այս անունով. "խորասանցի ակնավաճառ Մուշադի-Մուհամէդ-Ղուլի-ազա:„

Ինկ ես իմ ալջի հետ կենում էինք վաճառահանդէսի մի յետ ընկած, կեղտոտ եւ մթին կողմում, ուր աշխատում էին ժամանակաւոր տակառագործները, ուր

կանգնեցրած էին բազմաթիւ ֆուրգոններ, սայլակներ եւ ապրանք կրող քարաւաններ, ուր իջեւանել էին ցիգաններ, թամթարներ եւ դրանց նման մարդիկ: Երբեմն իմ ալջի հետ դուրս էինք գալիս այդ խառնափնթոր բանակից, անցնում էինք ծօնավաճառի միջով եւ փող էինք հաւաքում:

Մի օր կանգնեցի քաւոր Պետրոսի խանութի առջեւ, սկսեցի ալջս պար ածել: Նա ձեռքը պարզեց, որ տայ ինձ մի քանի գռօշ: Երբ մօտեցայ ստանալու, հազիւ լսելի ձայնով ասաց. — "գիշերը ինձ մօտ եկ...:„

Մենք ունէինք մեզ հետ զանազան տեսակ հագուստներ: Որտեղ որը հարկաւոր էր լինում, այն էինք հագնում: Գիշերը հագուստս փոխեցի եւ գնացի քաւոր Պետրոսի մօտ: Նա հարցրեց.

— Քեզ մօտ կան անտէր, անծանօթ, եւ ոչինչ պարապմունք չունեցող մարդիկ:

— Որքան ուզես:

— Որոնց կազմուածքը ինձ նման լինէր:

— Ես ճանաչում եմ մի խըրսըզ թամթար, որի, բացի գլուխը, ամբողջ մարմինը ձեզ նման է:

— Հէնց մարմինն է հարկաւոր, ասաց նա: — Հգուց երեկոյեան պահուն դու անցիր իմ խանութի մօտով եւ այն թամթարը թող քեզ հետ լինի: Հիմայ գնա:

Ես հեռացայ, առանց հարցնելու այդ պատրաստութեան նպատակը: Ես գիտէի, որ քաւոր Պետրոսը աննպատակ ոչինչ չի անի:

Միւս օրը, երեկոյեան, ես թամթարին հրաւիրեցի մի սաոր հիւրանոց, լաւ ուտացրի, յետոյ փողոցը տարայ, ասելով, թէ գնելու եմ մի քանի բաներ: Անցանք քաւոր Պետրոսի խանութի առջեւից: Նա կանչեց մեզ:

— Ինչ մարդիկ էք, հարցրեց։

— Ես արջ պար ածող եմ, պատասխանեցի։

— Իսկ այդ պարոնը։

— Ես եկած եմ այստեղ գործ գտնելու, ասաց Թաթարը։

— Դեռ եւս որեւիցէ գործ գտած չե՞ս։

— Ոչ։ Երեք օր է որ եկած եմ։

— Ընկեր ունե՞ս։

— Մենակ եմ։

— Քեզ ո՞վ է ճանաչում այստեղ։

— Միայն այս պարոնը, նա գալձաւ գէպի ինձ, — ես այստեղ ուրիշ ծանօթ չունեմ։

— Ես ճանաչում եմ, աղա, լաւ մարդ է, ասեցի, — եթէ կամենում էք գործ յանձնել, կարող էք հաւատալ։

Թաթարը ամենեւին չէր սպասում, որ ես այսպիսի վկայութիւն կը տայի իւր մասին։ Աղան, այսինքն քաւոր Պետրոսը, իմ խօսքերով բաւականացաւ, խոստացաւ նրան ամիսը տասն եւ հինգ րուբլ վճարել, որ իւր մօտ ծառայէ։

— Քո ծառայութիւնները խիստ թեթեւ կը լինեն, ասաց նա, — քո գլխաւոր գործը այն կը լինի, որ գիշերները իմ խանութում պահակես, որքան կարելի է արթուն կերպով, որ հակես գրան վրայ։ Ծօնավաճառի պատճառով գողերը բազմացել են։

Միամիտ մահմեդականի ուրախութեանը չափ չկար։ Աղան շնորհեց նրան մի րուբլ, հրամայեց, որ իսկոյն բաղանիք գնայ, մաքրուի, հագուստը փոխէ եւ այն օրից սկսէ ծառայութիւնը։

— Ես ուրիշ հագուստ չունեմ, բացի դրանցից, որ տեսնում էք, ասաց Թաթարը։

— Ես կը տամ, պատասխանեց աղան։

Թաթարը մեծ գոհունակութեամբ հեռացաւ։

Քաւոր Պետրոսի խանութը, իրաւ որ, առանձին հսկողութեան կարօտ էր։ Նրա մէջ գտնուած հարստութիւնը կարող էր հրապուրել գողերի եւ աւազակների ախորժակը։ Շատերը նրան ճանաչում էին իբրեւ մի յայտնի ակնավաճառ, որի մօտ գտնվում էին խիստ հազուագիւտ գոհարներ։ Բայց որտեղից էին այդ գոհարները, ո՛վ տուեց նրան, ի՞նչու մինչեւ այժմ ես տեղեկութիւն չունեի նրանց գոյութեան մասին, — այդ հարցերը սաստիկ հետաքրքրում էին ինձ։

Թաթարի բաղանիք գնալուց յետոյ, քաւոր Պետրոսը կողպեց խանութը, եւ իւր երկայն չիբուխը թամբաքուի քսակի հետ տալով ինձ, ասաց. — Հետեւիր ինձ։

Արեւը վաղուց մայր էր մտած. փողոցներում վառվում էին ճրագները։ Բազմութեան աղմկալի անցուդարձը փոքր ինչ դադարել էր։ Ես այն ղիշերը փոխել էի իմ արջ պար ածողի մուշտակը, եւ հագած ունէի պարսիկ սպասաւորի հագուստ։ Քաւոր Պետրոսի երկայն չիբուխը ձեռքիս բռնած, նրա հետեւից գնալով, ես կատարում էի այն տեսակ սպասաւորների պաշտօնը, որոնք արեւելքում միայն չիբուխ կամ ղեյլան են պատրաստում իրանց պարոնների ծխելու համար, եւ մի տեղ գնալու ժամանակ հետեւում են նրանց։

Քաւոր Պետրոսը մտաւ մի բուխարեցի վաճառականի մօտ։ — Համեցէք, համեցէք ասելով, նրան նստացրին սենեակի ամենապատուաւոր տեղում։

Ես իսկոյն պատրաստեցի չիբուխը, եւ մատուցանելով իմ պարոնին, խոնարհութեամբ կանգնեցի սենեակի մի

անկիւնում, դրան մօտ, եւ ձեռքերս սրտիս դրած, սպասում էի, մինչեւ նա ծխէ ու վերջացնէ։

Բուխարեցին մի երիտասարդ վաճառական էր, որ բերել էր ահագին քանակութեամբ Բուխարայի թանգագին մորթիք, մետաքս եւ զանազան տեսակ ասիական ապրանքներ։ Իւր վաճառքները ծախած, վերջացրած լինելով, նա միտք ունէր նրանց փոխարէն գնել իրանց երկրին յարմար մի քանի տեսակ եւրոպական եւ Ռուսաստանի ապրանքներ, յետոյ վերադառնալ իւր հայրենիքը։

— Բերեցի՞ք, հարցրեց նա քաւոր Պետրոսից։

Քաւոր Պետրոսը հանեց իւր ծոցից մի արծաթեայ տուփ ասելով. — Երդւում եմ Օմարի եւ Աբուբաքրի գլուխներով, որ ոչ Ստամբուլի Սուլթանը եւ ոչ պարսից Շահը չունեն այսպիսի գեղեցիկ գոհարներ իրանց գանձարանում։

Լսելով Օմարի ու Աբուբաքրի անունները, ես հասկացայ, որ քաւոր Պետրոսը իրան ներկայացրել է որպէս մահմեդական շի ա աղանդից, որին եւ պատկանում էր երիտասարդ բուխարեցին։

— Ես ձեզ հաւատում եմ, պատասխանեց բուխարեցին, — ճշմարիտ է, լաւ գոհարներ են, բայց թանգ էք գնահատում, շատ թանգ։

— Լաւ բանը լաւ էլ գին կ՚ունենայ, պատասխանեց քաւոր Պետրոսը։ — Բայց թող ես կոյր աչքերով ներկայանամ Մուհամմէդի դրախտում, եւ թող յաւիտեան զուրկ մնամ մեծ մարգարէի լուսապայծառ դէմքը տեսնելուց, եթէ սուտ լինեմ ասում։ — Այդ պատուական գոհարները ես բոլորովին կէս գնով եմ տալիս ձեզ։

Նա սկսեց արծաթեայ տուփի միջից մէկ-մէկ դուրս բերել փայլուն գոհարները, որոնք ճրագի լոյսի առջեւ աստղերի նման վառվում էին։ Ես շլացած մնացի։ Ոչ սակաւ շլացաւ եւ երիտասարդ բուխարեցին, բայց վաճառականական խորամանկութեամբ իւր հիացմունքը թագցնելով, պատասխանեց նա.

— Դուք հաւատացնում էք, թէ կէս գնով էք տալիս, բայց ես բաւական թանգ եմ գտնում։ Իմ առաջարկած գինը պակաս գին չէ։ Աւելի լաւ կ՚անէք, որ ընդունէք եւ այս րոպէիս վերջացնենք գործը։

— Ձեզանից, որպէս մի հմուտ վաճառականից, աններելի է այդ լսել։ Մի՞թէ կարելի է այս աստիճան ստորացնել իմ գոհարների արժէքը, ասաց քաւոր Պետրոսը եւ դժգոհութեամբ սկսեց թանգագին քարերը կրկին դարսել արծաթեայ տուփի մէջ։

Պէտք է ասած, որ երիտասարդ բուխարեցին ամենեւին հմտութիւն չունէր առհասարակ վաճառականութեան մէջ, մանաւանդ գոհարներ ճանաչելու կամ գնահատելու մէջ։ Քաւոր Պետրոսը կամեցաւ միայն շողոքորթել նրան։ Հարուստ հօր միակ զաւակը լինելով, նրան առաջին անգամ վաճառականութեամբ օտար աշխարհ էին ուղարկել, նրա բախտը փորձելու համար։ Եւ որպէս խորհրդատու, անփորձ երիտասարդի հետ դրել էին նրա ծերունի դայեակին, որը այն գիշեր ուրիշ տեղ հիւր էր գնացած։ Բայց ծերունի դայեակի ներկայութիւնը այժմ այնքան հարկաւոր չէր, որովհետեւ գոհարների մասին բանակցութիւնը սկսուել էր մի քանի օր առաջ. եւ ծերունի դայեակը զանազան հասկացող ակնավաճառների ցոյց էր տուել, գնահատել էին գոհարները։ Տարբերութիւնը քաւոր Պետրոսի պահանջածի ու նրանց ա-

ռաջարկածի մէջ հինգ հազար րուբլ էր միայն։ Քաւոր Պետրոսը երկու հազար եւս գլխում արեց, եւ վերջնական գինը յայտնելով, ասաց.

— Քսան հազար րուբլ, բոլորակ թիւ է, մի կօպէկ անգամ չեմ պակասացնի։

Երիտասարդը համաձայնուեցաւ եւ հրամայեց իւր գործակատարին իսկոյն համրարել փողերը։ Քաւոր Պետրոսը ստացաւ եւ յանձնեց գոհարները, ասելով.

— Թող ես Մուհամմէդի սուրբ ատամը կոտրող բազդործներից մէկը լինեմ, եթէ սուտ լինեմ ասում, — որ այդ առեւտուրի մէջ ոչ միայն վաստակ չունեցայ, այլ բաւական վնաս եմ կրում։ Ես այդ գոհարները գնել եմ Հնդկաստանում մի հարուստ ռաջայից քսանեւհինգ հազար րուբլով։ Իսկ այժմ փոխարէնը ստանում եմ միայն քսան հազար րուբլ։ Ես վնասուեցայ, բայց տացէ Աստուած, որ դուք մէկին հազար օգուտ վեր առնէք։

— Ցոյս ունեմ, ասաց երիտասարդը լինքնաբաւական ժպիտով։ — Դուք բարի մուսուլման էք, ձեզանից կարելի է "խէյր" սպասել։

— Հաւատացէք, որ այդպէս է, դուք չէք սխալվում, պատուելի պարոն, պատասխանեց քաւոր Պետրոսը մի առանձին ջերմեռանդութեամբ։ — Երբ յաջողութեամբ կը վերադառնաք ձեր հայրենիքը, իսկոյն կը տեսնէք իմ ձեռքի օրհնութիւնը. դուք այդ գոհարներից մի քանիսը կընծայէք Բուխարայի էմիրին եւ նա անպատճառ կը տայ ձեզ մի քանի գաւառների նահանգապետութեան պաշտօնը եւ դուցէ ձեզ իւր վէզիր կը նշանակէ։

Բուխարեցին սկսեց ուրախ-ուրախ ծիծաղել։ Դուցէ այդ իսկ նպատակով գնեց նա գոհարները։

Քաւոր Պետրոսը (այսինքն խորասանցի ակնավաճառ Մաշադի-Մուհամմէդ-Ղուլի-աղան) բարի գիշեր ասելով, հեռացաւ։ Ես չէքուխը ձեռքումն հետեւեցի նրան։

Դրսում եղանակը բոլորովին փոփոխել էր։ Անձրեւը հեղեղի նման թափվում էր. այդ պատճառով փողոցներում մարդիկ հազիւ էին երեւում։ Գիշերը այնքան խաւար էր, որ եթէ մատ կոխելու լինէիր մէկի աչքը, բնաւ չէր տեսնի։

Քաւոր Պետրոսը հրամայեց ինձ հեռուից-հեռու հետեւել իրան։ Նա գնաւ նոր վարձուած թաթար ծառային բաղանիքից վերադարձած, սպասում էր խանութի դրանը։ Աղան նրան ներս տարաւ։ Ճրագները վառուեցան։

Այդ միջոցին ես անցայ խանութի դռնից. ծառան տեսաւ ինձ եւ ճանաչեց։ Իմ այնօրուայ վկայութիւնը նրա հաւատարմութեան վերաբերութեամբ, երեւում էր, այնքան գրաւել էր նրա սէրը դէպի ինձ, որ խեղճը մոռացել մի բանով երախտամտօրէն լինել։ Նա չկամեցաւ, որ ես անձրեւի տակ մնայի, հրաւիրեց իւր մօտ։ Ես հրաժարուեցայ պատասխանելով, թէ չեմ կարող ներս մտնել, զուցէ նրա աղային հաճելի չէր լինի այդ։ Նա ասաց, որ այդ մասին աղայից թոյլտուութիւն կը խնդրէ։ Ի հարկէ, ստացաւ թոյլտուութիւնը։

Խանութը ունէր մի քանի բաժանմունքներ. մենք գնում էինք ծառայի սենեակում։ Այդ ժամանակ միայն ես մոռացել հարցնել նրա անունը։

— Ասկէր, ձեր ոտքի հողը, ասաց նա։

Ասկէրը բոլորովին մաքրուել էր բաղանիքում. նրան հարկաւոր էր մի լաւ հագուստ, որ օրինաւոր սպասաւորի կերպարանք ստանար։ Աղան ընծայեց նրան նոյն

հագուստը, որով ինքը այն դիշեր յայտնուել էր երիտասարդ բուխարեցու մօտ: Ծառայի համար տիրական իրանից առնուած հագուստը ամենամեծ պարգեւներից մէկն է: Ասկէրը ընդունեց այդ թանգագին պարգեւը երեխայական հրճուանքով: Յետոյ մարդը չգիտէր, թէ որպէս շնորհակալութիւն յայտնէր իւր նոր աղայի բարեսրտութեան համար: Աղան հրամայեց նրան, որ խոկոյն հագնուի: Երբ բոլորովին պատրաստ էր նա, ասաց, որ գնայ խոհանոցում ղահուէ պատրաստէ: Ասկէրի հեռանալուց յետոյ քաւոր Պետրոսը ինձ կանչեց իւր մօտ:

— Մուրատ, ասաց նա, — ունեմ քեզ մօտ որեւիցէ գէնք:

— Մեծ դանակս մօտս է:

— Այդ բաւական է, ասաց նա շտապով: — Ես գնում եմ, դու այդ յիմարի պարանոցը կը կտրես... գլուխը կը բերես քեզ հետ... իսկ մարմինը կը թողնես այստեղ... այդ արկղը եւ խանութի կողպէքը կը կոտրես... դուռը կիսաբաց կը թողնես... ես գնում եմ քո արջի մօտ... այնտեղ կը սպասեմ քեզ...:

Այդ խօսքերը այնպիսի արագութեամբ արտասանեց նա, որ ես ժամանակ չգտայ բացատրութիւն պահանջելու: Վստահ լինելով, որ իւր պատուէրները ճշդութեամբ կը կատարուեն, այլ եւս չսպասեց պատասխանի, Ասկէրի շորերը հագաւ եւ հեռացաւ:

Երեւում էր, որ Ասկէրը սպասաւորութեան մէջ բաւական վարժուած էր: Տան բոլոր չանցած, ղահուէի լեցը գաւաթները մատուցարանի վրայ դրած, ներս բերեց: Տեսնելով իւր տիրոջ բացակայութիւնը, հարցրեց նա.

— Ո՞ւր գնաց աղան:

— Դրացի խանութից կանչեցին նրան, շուտով կը վերադառնայ, պատասխանեցի ես:

Ասկէրի աչքը այն աստիճան վառուած էր դէպի ինձ, որ մի առանձին մտերմութեամբ տուեց ղահուէի գաւաթներից մէկը եւ խնդրեց խմել: Երբ վերջացրի, իսկոյն մտաբերեցի քաւոր Պետրոսի սոսկալի պատուէրը: Ի՞նչ պէտք էր անել: Ես ճնշուել էի շուարած: Մի մթին, անորոշ զգացմունք ներսից տանջում էր ինձ: Գուցէ դա հանգած խղճի մի փոքրիկ կայծը լինէր, որ դեռ վառ էր ճնշուել իմ սրտում: Երբէք եւ ոչ մի ժամանակ ես այնպէս կանգ չէի առել եղեռնագործութեան առջեւ, որպէս այդ րոպէում: Կեանքից զրկել մի անմեղ մարդու, դա սարսափելի չարագործութիւն էր: Եւ ի՞նչի համար, ի՞նչ էր արել նա: Բայց մի՞թէ դահիճը իրաւունք ունի քննելու. մի՞թէ իրաւունք ունի խղճալու: Ես դահիճ էի, ես մի կոյր, անսիրտ գործիք էի: Հրամայում էին մորթել, պէտք է մորթէի...:

Ես կանգնեցի: Ասկէրը տեսնելով, որ մենք մենակ ենք, երախտագէտ սիրտը այլ եւս չհամբերեց: Նա մօտեցաւ, գրկեց ինձ, եւ իւր կուրծքի վրայ սեղմելով, ասաց.

— Ա՜խ, դու որքան լաւ մարդ ես, շա՜տ լաւ մարդ, Աստուած քեզ բարի տայ: Եթէ ինձ այդ աղայի մօտ չբերէիր, ես սովից կը մեռնէի:

— Դարձեալ կը մեռնես... պատասխանեցի ես, եւ դանակը ցցուեցաւ նրա կոկորդի մէջ...:

Խեղճը դողդողաց եւ գլորուեցաւ ցած...:

Ես ամենայն ճշդութեամբ կատարելով իմ վարպետի պատուէրները, հեռացայ, ինձ հետ տանելով ողորմելի Ասկէրի կարած կառափը:

Գալով քաւոր Պետրոսի մօտ, հարցրի.

— Ի՞նչ պէտք է անել այդ գլխի հետ:

— Ջարդիր, տուր արջիդ, թող ուտէ:

Ես կատարեցի եւ նրա վերջին հրամանը:

Քաւոր Պետրոսը այրեց Ասկէրի շորերը, որ հագնելով դուրս էր եկել իւր խանութից, եւ կրկին հագաւ իւր արջ պար ածողի մուշտակը:

Միւս առաւօտ նա ուղարկեց ինձ փողոցը, տեսնելու, թէ ինչ ձայն կայ: Դեռ նոր էին ուշադրութիւն դարձրել խանութի կոտրած կողպէքի վրայ, դեռ նոր էին գտել մորթուած դիակը եւ գոհարների խորտակուած արկղիկը: Ոստիկանութիւնը շրջապատել էր խանութը, ոչ ոքին չէին թողնում մօտենալ:

— Ի՞նչ է պատահել, հարցնում էին մարդիկ միմեանցից:

— Այս գիշեր խորասանցի հարուստ ակնավաճառի գլուխը կտրել են, բոլոր գոհարները տարել են, լինում էր պատասխանը:

— Աստուած պատժեց նրան, ամբոխի միջից լսել եղաւ մի ձայն, — այս գիշեր նա վաճառեց ինձ քսան հազար րուբլու կեղծ գոհարներ...:

Ոստիկանութիւնը իսկոյն կալանաւորեց այդ մարդուն: Դա երիտասարդ բուխարեցին էր:

Վերադառնալով քաւոր Պետրոսի մօտ, ձանձրացրին զանազան մանրամասնութիւններ պահանջել էին ինձ: Ես հասկանում էի, թէ ինչ նպատակով խաղացուեցաւ այդ ամբողջ դրաման: Ես հասկանում էի, որ խեղճ Ասկէրին խորասանցի ակնավաճառի հագուստի մէջ մորթել տալով, քաւոր Պետրոսը կամեցաւ կորցնել իսկական ակնավաճառի (այսինքն իւր) հետքերը: Բայց ես չէի հասկանում մի բան: Ինչու է, քաւոր Պետրոսը, օգուտ քաղելով երիտասարդ բուխարեցու միամտութիւնից, վաճառեց նրան քսան հազար րուբլու կեղծ գոհարներ: Բայց ինձ յայտնի էր, որ նա սկզբում ցոյց էր տուել բոլորովին բնական գոհարներ, յետոյ բնականի փոխարէն տուեց կեղծը, արհեստականը, նմանեցրածը: Այժմ գլխաւոր հարցը նրանում էր, թէ որտեղից ունէր քաւոր Պետրոսը այն բնական գոհարները, որ ուրիշ շատ մարդկանց վրայ եւս վաճառեց:

Մի ակնթարթում ծագեց իմ յիշողութեան մէջ վաղուց մոռացուած անցքը, որ սկիզբն դրեց իմ դժբախտութեանը...: Ես յիշեցի այն աղետալի բանալին, որ դարբնի աշակերտ եղած ժամանակս շինել էի քաւոր Պետրոսի համար: Ես յիշեցի նոյն բանալիով մի ամրոցի մէջ պահուած երկաթէ արկղը բացուելը եւ նրա միջից մեծ քանակութեամբ գոհարների եւ զանազան թանգագին իրեղէնների կողոպտուելը: Ես յիշեցի վարպետիս կրած տանջանքները, նրա արհեստանոցի յատակունիս գրաւուիլը:

— Այդ բոլորը ինձ ասում էին, թէ քաւոր Պետրոսի այժմեան ակնավաճառութիւնը խորին կապ ունէր Պարսկաստանում մի ժամանակ կատարուած գողութեան հետ: Ես յիշեցի մի այլ փաստ, որ բոլորովին հաստատում էր իմ ենթադրութիւնները: Երբ անցկացանք Երասխ գետից եւ առաջին անգամ ոտք դրեցինք ռուսաց հողի վրայ, քաւոր Պետրոսը մանսաանից փախչելու նպատակով իւր աւանակի փալանի մէջ թաղցրեց զանազան իրեղէններ, որ յետոյ ամենայն զգուշութեամբ աշխատում էր ծած-

կել խնձանից: — Մի՞թէ այն իրեղէնները այժմեան գօհարները չէին, որ գողացուել էին յիշեալ երկաթէ արկղից, իմ ձեռքով շինուած բանալիով:

Երբ այդ մասին փորձեցի տեղեկանալ քաւոր Պետրոսից,՝ նա խիստ խոժոռ հայեացքով նայեց իմ երեսից եւ լռեց...:

Մենք մի քանի օր եւս մնացինք տնավաճառում, պար ածեցինք մեր արջը եւ ապա հեռացանք:

Զ.

ՌԱԲԲԻ ՇԻՄՕՆԸ

Թողնելով տնավաճառը, մենք շարունակեցինք մեր արշաւանքը դէպի Կայսրութեան հարաւարեւմտեան գաւառները: Մի ամսից յետոյ գտնվում էինք *** քաղաքում: Այստեղ քաւոր Պետրոսը ծանօթացաւ մի հրէայ սեղանաւորի հետ, որը, թանգագին իրեղէններ գրաւառնելով, փող էր տոկոսով տալիս, ի հարկէ, խիստ ծանր տոկոսով:

Փոքր միջոցում քաւոր Պետրոսը կարողացաւ այնքան գրաւել հրէայի համակրութիւնը, որ նրանց յարաբերութիւնները, կարելի է ասել, բոլորովին բարեկամական էին: Բայց պէտք չէ մոռանալ, որ քաւոր Պետրոսը իրան ձեւացրել էր նոյնպէս հրէայ, ոչ թէ հասարակ հրէայ, այլ մի գիտնական ռաբբի, որը Թօվրաթը եւ Թալմուդը անգիր գիտէր: Դրա մէջ կասկածել ոչ ոք կարող չէր. որովհետեւ նրա դէմքի գծագրութիւնը բաւական նման էր Իսրայէլի հալածուած որդիների տխրամած դէմքին: Բացի դրանից, նրան ծանօթ էին՝ ոչ միայն եբրայեցոց, այլ զանազան ասիական ազգերի սովորութիւնները ու լեզուները: Քաւոր Պետրոսը իրան ներկայացրել էր որպէս Սպահանի եւ Համադանի հրէաների հովիւ:

Սեղանաւորը եկած էր այս քաղաքը բոլորովին աղքատ. մի բան, որ բերել էր նա իւր հետ, էր նրա հրէա-

կան անվաստակելի եռանդը, եւ հրէական խելքը, որ զօրաւոր է հանդիսանում աւելի մեծին ճանապարհների մէջ...: Սկզբում նա ժամագործ եւ կնիքների փորագրող էր, բայց մի քանի տարուց յետոյ դառնում է բանկիր:

Սեղանաւորը որքան եւ ջերմեռանդ փողապաշտ էր, այնքան էլ մոլեռանդ մովսէսական էր: Արծաթի եւ ձին կտակարանի պաշտամունքը նրա մօտ համահաւասար նշանակութիւն ունէին: Նրա պապերը Սինա լեռան ստորոտում գուցէ չէին պաշտի Ահարոնի շինած հորթին, եթէ ոսկուց ձուլուած չլինէր:

Սեղանաւորը իւր հայրենական կրօնի նախանձախընդրութիւն ունէր: Այդ էր պատճառը, որ նա խիստ յարգանքով ընդունեց քաւոր Պետրոսին, որ յայտնուել էր նրա մօտ, որպէս նրա թշուառ աղգակիցների քահանայ, որոնք աղքատ, հալածուած, ապրում էին Պարսկաստանի հեռաւոր գաւառներում:

Ռաբբի Շիմոնի (այսպէս էր կոչում իրան քաւոր Պետրոսը) ցաւալի պատմութիւնները, արեւելքի հրէաների աննախանձելի դրութեան մասին, ոչ միայն գրաւեցին հարուստ սեղանաւորի սիրտը, այլ շարժեցին այն քաղաքում գտնուած բոլոր նշանաւոր հրէաների կարեկցութիւնը դէպի ուխտեալ աշխարհի հայրենազուրկ եւ տառապրուած որդիները:

Գլխաւորապէս սեղանաւորի յորդորանքով տեղային հրէաները մի նշանաւոր գումար հանգանակեցին ի նպաստ Սպահանի եւ Համադանի մէջ բնակուող եղբայրների, որոնց կողմից քաւոր Պետրոսը ներկայացել էր իբրեւ հոգեւոր նուիրակ:

Իրան ձեռացնել նուիրակ այս եւ այն գաւառութեան, այս եւ այն եկեղեցու հոգեւոր իշխանութեան

կողմից, եւ ժողովրդից հաւաքել բարեգործական օժանդակութիւններ, — դա "խաչագողի" արհեստի գլխաւոր ճիւղերից մէկն է: "Խաչագողը" գիտէ մարդկային հասարակութիւնների թոյլ կողմերից օգուտ քաղել: Այդ թոյլ կողմերից աւելի դիւրախաբը, աւելի հեշտ հրապուրուողը կրօնական զգացմունքն է: "Խաչագողը" ամենայն ճարպկութեամբ հարստահարում է այդ սրբազան զգացմունքը:

Հասկանալի է, որ այս եւ այն կրօնական համոյքի, այս եւ այն եկեղեցական պետի ներկայացուցիչ լինելու համար, պէտք է ունենալ իւր ձեռքում թղթեր կամ կոնդակներ զանազան բարձր հոգեւոր իշխանութիւններից, որոնց ներկայացուցիչն են ձեւանում: "Խաչագողները" ունենում են այս տեսակ թղթեր, եւ այն աստիճան վարպետութեամբ պատրաստուած, որ անկարելի է կասկածել նրանց անհարազատութեան մասին կամ ճանաչել, որ նրանք կեղծ են: Խաչագողներից առանձին մարդիկ իրանց համար արհեստ են շինել պատրաստելու կեղծ կոնդակներ, որ վաճառում են ցանկացողներին խիստ թանգ գնով: Քաւոր Պետրոսը ունէր մի կոնդակ, երբայեցոց լեզուով մագաղաթի վրայ գրուած, եւ Բաղդադի հրէից քահանայապետի ահագին կնիքով դրոշմուած: Քաւոր Պետրոսը չէր գնած այդ նշանաւոր կոնդակը, այլ փոխել էր մի ուրիշ թղթի հետ, որը իբր թէ նա ստացել էր Մեքքայի շերիֆից, եւ որի շնորհիւ նա մի քանի տարի կողոպտեց Հնդկաստանի մահմեդականներին:

"Խաչագողները" ունենում են զանազան թղթեր, որոնք մէկի համար հնացած եւ գործածութիւնից ընկած են լինում, իսկ միւսի համար նոր են համարվում: Այսպիսի թղթերը նրանք փոխում են միմեանց հետ, կամ վաճառում են միմեանց վրայ: Նոր թուղթ ստացող "խա-

չադողը, ման չէ գալիս երկրի այն կողմում եւ այն ժողովրդի մէջ, ուր նոյն թղթով շրջան էր գործել նրա նախկին ունեցողը։ Որպէս ձկնորսը իւր ուռկանը չէ գցում գետի այն տեղը, ուր մի քանի օր առաջ որսացել էր մի ուրիշը։

Այդ քաղաքը մտնելուց յետոյ անցել էր երկու շաբաթ։ Ես ամենեւին տեղեկութիւն չունէի, թէ քաւոր Պետրոսը ինչ բանի վրայ է մտածում կամ ինչով է զբաղուած, որովհետեւ նա շատ ժամանակ բացակայ էր գտնվում մեր իջեւանից։ Բայց հէնց առաջին օրից ինձ պատուիրեց, որ մեր կացարանից դուրս չգամ եւ ամենեւին ցոյց չտամ, թէ ես նրա ընկերն եմ։ Ինձ սկզբում անհասկանալի էր, թէ ինչու թագստի մէջ էր պահում ինձ։ Բայց մի օր դարձաւ դէպի ինձ այդ հարցով.

— Կամենո՞ւմ ես շատ փող ունենալ, Մուրադ։

— Ի՞նչու չէ։

— Ուրեմն ինչ որ ասեմ, պէտք է կատարես։

— Ես միշտ հնազանդ եմ եղել ձեզ։

— Դու պէտք է մտնես այդ մեծ սնդուկի մէջ, որ այսօր բերեցի բազարից։

— Կամենո՞ւմ էք, որ դա իմ դագաղը լինի։

— Այո՛ դրա նման մի բան, պատասխանեց նա ժպտելով, եւ ապա շարունակեց.

— Լսիր, քեզ այս սնդուկի մէջ փակած, պէտք է տանեմ մի հրէայ սեղանաւորի խանութը։ Սնդուկը այնտեղ պահ կը տամ, ուր կը մնայ երեք օր։ Վերջին օրուայ գիշերը դու կը բացես քո դագաղը եւ յարութիւն կ'առնես նրա միջից։ Սնդուկը այնպէս պատրաստուած է, որ ներսից խիստ հեշտութեամբ կը բացուի։ Խանութում դու կը գտնես երկաթեայ ահագին արկղ։ Նա լիքն է ոսկիներով

եւ զանազան թանգագին իրեղէններով։ Նրանց մէկ մասը, ի հարկէ մեծ մասը քեզ հետ առած, կրկին կը մտնես քո դագաղի մէջ։

— Ինչու ոչ ամենը, այլ նրանց մէկ մասը։

— Այստեղ նպատակ կայ...։

Թէեւ նա չասաց, բայց ես հասկացայ, որ քաւոր Պետրոսի սակաւապէտութիւնը այն նպատակով էր, որ իսկոյն ուշադրութիւն չդարձնեն յափշտակութեան վրայ, երբ արկղը բոլորովին դատարկուած կը գտնեն իւր հարստութիւնից։ Ես պատասխանեցի.

— Ես էլ կ'ընտրեմ, ինչ որ աւելի թանգագին է։

— Այդ թողնում եմ քո ճաշակին, միայն թուղթ փողերին չի պիտի դիպչես։

— Որովհետեւ թուղթ փողը բանացնում են, միւս օրը իսկոյն կը նկատեն, որ պակաս է։

— Դու խիստ հասկացող տղայ ես, գառնուկս, ասաց նա ձեռքով փաղաքշաբար իմ մէջքին զարկելով։ — Ահա քեզ երկու բանալիներ, որ շատ հեշտութեամբ կը բաց անեն երկաթեայ արկղը։

— Եթէ չբաց անեն, իմ դարբնութեան արհեստը այնտեղ պէտք կը գայ...։

— Ոչ, կը բաց անեն. քո արհեստը հարկաւոր չի լինի։ Միայն պէտք է զգուշանաս, որ արկղի վրայ կամ բանալիների տեղում որեւիցէ խանգարմունք չպատճառես։

— Հասկանում եմ։ Յետո՞յ։

— Այդ գործը կը կատարուի, որպէս ասեցի, երրորդ օրուայ գիշերը։ Չորրորդ օրուայ առաւօտեան պահուն ես սնդուկը կը վեր առնեմ հրէայի խանութից։

— Բայց ես նրա մէջ կը մեռնեմ սովից։

— Դու կը գտնես նրա մէջ բոլոր յարմարութիւնները, ինչ որ քեզ պէտք կը լինի:

Այդ միջոցին նա բաց արեց անդուկը եւ ցոյց տուեց նրա միջի պատրաստութիւնները:

— Ցերեկները, ասաց նա, — դու պէտք է անշարժ եւ լուռ մնաս քո դագաղի մէջ, որպէս մի դիակ: Իսկ գիշերները ազատ ես, կարող ես դուրս գալ, զբօսանալ, որքան կամենաս: Յանուխթում ոչ ոք չէ լինելու:

Նոյն օրուայ երեկոյեան պահուն մի բեռնակիր սայլակ խորհրդաւոր անդուկը տարաւ սեղանաւորի խանութը: Նրա միջից ես լսեցի հետեւեալ խօսակցութիւնը:

— Այդ ի՞նչ է, ռաբբի Շիմօն, հարցրեց սեղանաւորը:

Ռաբբի Շիմօնը, այսինքն քաւոր Պետրոսը, պատասխանեց.

— Բնակարանս ապահով տեղ չէ, Աբրաամ Իսայիչ, համարեա ամեն գիշեր գողութիւններ են պատահում: Մի քանի բաներ գնել էի մեր այնտեղի սինագոգայի համար. շատ բաներ էլ նուիրեցին բարի մարդիկ. բոլորը, ինչ որ հաւաքել եմ, դրել եմ այդ անդուկի մէջ: Վախենում եմ, չլինի թէ մի գժբախտութիւն պատահի, եւ հաղարաւոր խեղճ իսրայէլացիներ կը զրկուեն այն օժանդակութիւնից, որ շնորհեցին մեր այստեղի եղբայրները:

— Մտածեցի անդուկը ձեզ մօտ թողնել, Աբրաամ Իսայիչ, մինչեւ իմ գնալը:

— Լաւ ես մտածել, ռաբբի Շիմօն, ասաց սեղանաւորը եւ հրամայեց անդուկը դնել իւր խանութում: Յետոյ հարցրեց.

— Ե՞րբ էք կամենում գնալ, ռաբբի Շիմօն:

— Եթէ Աստուած յաջողի, մի երկու կամ երեք օրից յետոյ: Շատ ուշացայ, Աբրաամ Իսայիչ: Այնտեղի գործերս կատարող չկայ. խեղճ ժողովուրդը մնացել է բոլորովին անտէր, անխնամ: Պէտք է շտապեմ, որ նրանց օգնութիւն հասցնեմ:

— Պէտք է շտապել, ռաբբի Շիմօն, երբ որ այդպէս է, ասաց սեղանաւորը:

Ռաբբի Շիմօնը շնորհակալութիւն յայտնելով, հեռացաւ: Այնուհետեւ ամեն օր գալիս էր նա սեղանաւորի խանութը, եւ ամեն անգամ իմ դարանի միջից լսում էի նորանոր խօսակցութիւններ:

Երկրորդ օր:

— Ռաբբի Շիմօն, հարցնում է սեղանաւորը, — դեռ երկա՞ր պէտք է սպասենք Մեսիայի գալստեանը:

— Ժամանակը մօտեցել է:

— Ի՞նչպէս կը լինի մեր վիճակը, երբ նա կը յայտնուի:

— Սուրբ քաղաքը (Երուսաղէմը) կը վերականգնուի իւր աւերակների միջից: Իսրայէլի ցրիւ եկած որդիները կը հաւաքուեն աշխարհի ամեն կողմերից: Աւետեաց երկիրը կրկին կը ծաղկի իւր հին փառքերով: Մեսիան կը տիրե ամբողջ տիեզերքին: Եւ երկրի ամենահզօր թագաւորները, մեկ գռեհիկ հրէայի փէշից բռնած, նրանից ողորմութիւն կը խնդրեն:

— Իսկ երբ կը յայտնուի՞ Մեսիան:

— Բոլոր հեթանոսները կը դիմեն դէպի նա. բոլորը հրէայ կը դառնան:

— Ուրեմն այդ հեթանոսները, որ այժմ մեզ հալածում են, էլ չեն լինի:

— Արեւի ծագելու տեղից մինչեւ նրա մուտքը կը տիրե Մովսէսի սուրբ օրէնքը:

Երրորդ օր։

— Ռաբբի Շիմօն, ինչու ընկաւ Երուսաղէմը։

— Իսրայէլի որդիների մեղքերի պատճառով։ Նրանք օրէնքը քանդեցին. Եհօվայի փոխարէն կուռքեր պաշտեցին. օտարազգի կանանց հետ ամուսնանալով, պոռնկութիւն գործեցին, սուրբ տաճարի խնամատարութիւնը եւ քահանաների յարգանքը մոռացան. իրանց զոհերի, իրանց նուէրների մէջ ժլատ գտնուեցան. այրի կնոջ հացը խլեցին եւ որբերի ժառանգութիւնը յափշտակեցին։ Այդ բոլորը տեսնելով, Աստուած բարկացաւ նրանց վրայ, սուրբ քաղաքը կործանեց եւ Իսրայէլին գերութեան մատնեց։

— Այժմ էլ մենք միեւնոյնն ենք գործում. ուրիշի հացը խլում ենք, նրա որդիներին քաղցած ենք թողնում։

— Դա ներելի է, երբ գործը օտարազգիների հետ է, բայց մի Իսրայէլացուն թոյլ տուած չէ իւր եղբօրը հարստահարել։

— Ուրեմն օտարներին կարելի՞ է։

— Կարելի է։ Միթէ չես յիշում Թօվրաթի այն տեղը, երբ Մովսէս մտածում էր Իսրայէլը Փարաւոնների գերութիւնից ազատել եւ տանել նրանց իրանց հայրենի աշխարհը, նա խորհուրդ տուեց Իսրայէլի կիներին, որ իրանց եգիպտացի հարեւաններից արծաթեայ եւ ոսկեայ զարդեր փոխ առնեն, ասելով, թէ ոչ այնքան հեռու մի տեղ ուխտ ենք գնում, երբ կը վերադառնանք, կրկին յետ կը տանք ձեզ։ Կնիկները կատարեցին այդ պատուէրը, եւ եգիպտացիների հարստութիւնը իրանց հետ տանելով, անցան Կարմիր ծովը։

— Յիշում եմ Թօվրաթի այդ տեղը։ Բայց այդ խարէբայութիւն չէ՞ր։

— Ոչ։ Եգիպտացիները շատ էին հարստահարել Իսրայէլացիներին, դրանք էլ փոխադարձաբար կողոպտեցին նրանց։ "Ակն ընդ ական" — դա օրէնք է։

Չորրորդ օրուայ առաւօտեան պահուն խանութի դրանը կանգնեց մի սայլակ։

— Ռաբբի Շիմօն, այդ ի՞նչ է, հարցրեց սեղանաւորը։

— Գնում եմ, Աբրաամ Իսայիչ, եկայ սնդուկը վեր առնելու եւ իմ շնորհակալութիւն ձեզ յայտնելու։

— Մի՞թէ, այդպէս շուտ, շատ ցաւում եմ, ռաբբի Շիմօն։ Ես դեռ երկար յոյս ունէի լսել ձեր բարի խրատները։

— Այո՛, գնում եմ, Աբրաամ Իսայիչ, Մովսէսի եւ Ահարոնի օրհնութիւնը ձեզ թողնելով։

— Թող Եհօվան բարի ճանապարհ տայ ձեզ, ասաց սեղանաւորը եւ հրամայեց սնդուկը տեղաւորել սայլակի վրայ։

Ռաբբի Շիմօնը կրկին եւ կրկին օրհնեց Աբրաամ Իսայիչին. նրանք համբուրուեցան, բարեմաղթեցին միմեանց շատ օրեր, երկան կեանք եւայլն։

— Ես մի յիշատակ պիտի թողնեմ ձեզ, Աբրաամ Իսայիչ, դուք շատ բարութիւններ արեցիք ինձ համար, ասաց ռաբբի Շիմօնը եւ տուեց նրան մի բան։

Թէ ինչ էր այդ, ես, ի հարկէ, սնդուկի միջից տեսնել չէի կարող, միայն լսեցի, որ քաւոր Պետրոսը ասաց նրան, թէ այդ արծաթեայ տուփի մէջ ամփոփուած է "տապանակ ուխտի" մի մասը, եւ տուփը ինչպէս շինուած է, պէտք է այնպէս անձեռնմխելի եւ առանց բացուելու մնայ։

— Պահիր քեզ մօտ, ասաց նա, եւ Աստուծոյ օրհնութիւնը պակաս չի լինի քո տանից։ Քո զաւակները

կը ծլեն, կը ծաղկին, եւ քո հարստութիւնը ծովի աւազի չափ կը լինի:

Սեղանաւորը չգիտէր ինչով յայտնել իւր ընորհակալութիւնը, մանաւանդ երբ լսեց, որ այդ աւուրի ընորհիւ իւր հարստութիւնը ծովի աւազի չափ կը լինի: Նա լսեսայ, թէ ինչ տուեց նա քաւոր Պետրոսին, միայն լսում էլ նրանց գրկախառնութեան նրանց համբոյրների ձայնը, լսում էլ նրանց փոխադարձ զոհաւնակութիւնների ջերմ արտայայտութիւնները:

— Սայլակը շարժուեցաւ: Նա իմացայ, որ նրանք բաժանուեցան:

Սայլակը, որ տանում էր քաւոր Պետրոսի մթերքը, մեր սեպհականն էր: Ինքը քաւոր Պետրոսը կառավարում էր ձիանները: Նա շարժվում էր շատով եւ արագ կերպով: Բայց դէպի ձոր էր տանում, ես տեսնել չէի կարողանում. ես դեռ իմ դադաղի մէջն էի:

Մի քանի ժամից յետոյ քաւոր Պետրոսը ինձ ձայն տուեց. — Հիմայ կարող ես դուրս գալ:

Մնդուկը պատրաստուած էր ձեռնածուների մնդուկի նման, որի մէջ հեշտութեամբ կարելի է մտնել եւ դուրս գալ առանց կողպէքը բաց անելու, առանց նրա խուփը բարձրացնելու:

Երբ դուրս եկայ, նայում եմ իմ շուրջը, կէսօրից բաւական անցել էր: Գտնվում էինք մեծ ճանապարհի վրայ, որը այդ միջոցին բոլորովին դատարկ էր: Քաւոր Պետրոսը հրամայեց ինձ՝ նստել իւր տեղը եւ կառավարել ձիանները: Ես կատարեցի հրամանը, ասելով.

— Ես կը մեռնեմ սովից, եթէ մի բան չուտեմ. հէնց այս պիշերը պաշարս ապառուած էր:

— Փոքր ինչ առաջ գնանք, ճանապարհին կայ մի իջեւան, այնտեղ մի բան կը գտնենք ուտելու: — Քշեր, ձիանները շատ կամաց են գնում:

Ես հարցրի.

— Ի՞նչ պիտի անենք, եթէ մեզ հետամուտ լինեն:

— Ոչ ոք հետամուտ չի լինի, պատասխանեց նա հանդարտութեամբ: — Ինձ յայտնի է, որ սեղանաւորը այսօր զբաղուած է մի գատաստանական գործով. նա խանութում չի մնայ, ուրեմն եւ իւր արկղը չի բաց անի, որ նկատէ, թէ իւր հարստութեան հետ ինչ է պատահել: Իմ բաժանուելու ժամանակ նրան կանչեցին գատարանը:

Իջեւանը այնքան մօտ չէր, որպէս ցոյց տուեց քաւոր Պետրոսը: Երեկոյեան, արեւը մտնելուց յետոյ, հազիւ կարողացանք հասնել: Սայլակը պահեցինք ճանապարհի վրայ, քաւոր Պետրոսը ցած իջաւ, իսկ ինձ պատուիրեց մնալ ձիանների մօտ: Նա մտաւ իջեւանը, մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ, իւր հետ բերելով մի շիշ արաղ, հաց, պանիր եւ տասն հատ ձուաններ: Ուրիշ բան չէր գտել: Նոյն միջոցին իջեւանի ծառաներից մէկը բերեց եւ գարի ձիանների համար:

— Այստեղ էք կամենում կերակրել ձիանները, հարցրեց նա:

— Ոչ, մենք պէտք է շարունակենք ճանապարհը, ասաց քաւոր Պետրոսը:

Այդ բոլոր պաշարը մեզ հետ առնելով, սկսեցինք առաջ գնալ: Երեք վերստաչափ հազիւ էինք հեռացել իջեւանից, երբ քաւոր Պետրոսը հրամայեց դուրս գալ մեծ ճանապարհից եւ շրջուել դէպի աջ:

— Հիմայ կանգնեցրէք, ասաց նա։ — Այստեղ կարող ենք հանգստացնել ձիաները, մենք եւս մի բան կ'ուտենք։

Բայց ինձ ուտելու ոչինչ չէր մնացել, որովհետեւ ես իմ բաժինը գալու ժամանակ ճանապարհին բոլորը կերել էի։

Մեր գտնուած տեղը մի տափարակ դաշտ էր։ Թէեւ շատ չէինք հեռացել մեծ ճանապարհից, բայց այնքան սաստիկ մութն էր, որ անցորդները հազիւ կարող էին նշմարել մեզ։ Երբ ձիաները գարին կերան, փոքր ինչ հանգստացան, քաւոր Պետրոսը հրամայեց լծել։ Ես ղաղուեցայ ձիերը լծելով, իսկ քաւոր Պետրոսը այդ միջոցին փոխում էր իւր ռաբբիի հագուստը։ Երբ բոլորովին պատրաստ էինք, ասաց նա.

— Նստի՛ր, քշե՛ր դէպի այդ կողմը։

— Այդ կողմով մենք դարձեալ կը վերադառնանք քաղաքը, նկատեցի ես։

— Ես էլ այդ եմ ուզում։

Մեծ պաղտ գործելով, ղարտուղի ճանապարհներով, մենք լուսաբացին հազիւ կարողացանք հասնել քաղաքը։ Մեր սայլակը կանգնեց քաղաքի մի հեռաւոր եւ խուլ անկիւնում գտնուած տան հանդէպ։ Այդ տունը այն կասկածաւոր բնակարաններից մէկն էր, որի դռները ցերեկով միշտ փակ են մնում, եւ գիշերները միայն մարդիկ այնտեղ ելումուտ են գործում։ Այստեղ քաւոր Պետրոսը վարձել էր մի փոքրիկ սենեակ, ուր հազիւ տեղաւորեցինք մեր իրեղէնները։ Բաւական յոգնած էինք։ Ես պառկեցի բակում, սայլակի վրայ, ձիաների մօտ, իսկ քաւոր Պետրոսը քնեց փոքրիկ սենեակում։

Հեռանալ մէկ քաղաքից, գնալ ձեւացնելով, եւ կրկին վերադառնալ նոյն քաղաքը, — դա քաւոր Պետրոսի վախտեան եղանակներից մէկն էր։ Դիցուք թէ սեղանաւորը հէնց նոյն օրը հասկանար իւր խանութում կատարուած գողութիւնը, բայց մինչեւ կը յայտնէր ոստիկանութեանը, մինչեւ մեր ետեւից մարդիկ կ'ուղարկէին, բաւական ժամանակ կ'անցնէր։ Մարդիկը կը գային եւ մեզ ճանապարհի վրայ չէին գտնի, որովհետեւ մենք արդէն մի այլ ճանապարհով կրկին վերադարձած կը լինէինք նոյն քաղաքը։

Ես զարթնեցայ այն ժամանակ, երբ արեւը մի ժամ առաջ ծագել էր եւ հնդկահաւերը բակում կանչում էին։ Բայց այդ հնացած, խանաւութիւնից բորբոսած եւ գերեզմանի պէս մթին տան մէջ դեռ մարդիկ չէին երեւում։ Կարծես, դա ժանտախտով վարակուած այն տներից մէկը լինէր, ուր մարդիկ չեն համարձակվում բնակուել։ Միայն ես նկատեցի քաւոր Պետրոսին, իւր սենեակի դրան առջեւ կանգնած, հեռուից ձեռքով կանչում էր ինձ։

— Իսկոյն թէյ կը տան, ասաց նա, — շուտով խմիր, որովհետեւ ուրիշ տեղ եմ ուղարկելու քեզ։

Ներս մտայ սենեակը, նստեցի նոյն անզուկի վրայ, որ ամբողջ երեք օր իմ գազաղն էր եղած։ Քանի րոպէից յետոյ, թէյի մատուցարանը ձեռքում ներս մտաւ մի մանկահասակ, բայց սաստիկ կեղտոտ հագնուած կին։ Նրա մի ժամանակ գեղեցիկ դէմքը պղանդակուել էր կարմիր բծերով, որ երեւում էին երեսի վրայ։

— Դա ո՞վ է, գարձաւ նա դէպի քաւոր Պետրոսը, մի առանձին ուշադրութեամբ իմ վրայ նայելով։

— Իմ որդին է, պատասխանեց քաւոր Պետրոսը։

— Այդպիսի սիրուն որդի ունէիր, եւ ինձանից թագցնո՞ւմ էիր, ախ, դու ծերուկ, անխիղճ ծերուկ, բացականչեց նա, եւ մօտեցաւ ինձ, սկսեց փայփայել իմ մազերը:

— Լիզա, թո՛ղ տուր, լքուածների ժամանակ չէ, գոչեց քաւոր Պետրոսը բարկութեամբ:

Լիզան ինձ բաց թողեց, բայց քաւոր Պետրոսին աւելի բարկացնելու համար ասաց.

— Հիմայ կը գնամ քեզ համար սպիտակ հաց եւ կարագ կը բերեմ: Ես կարծում էի, որ միայն ծերուկն է այստեղ, այդ պատճառով թէյի հետ ոչինչ չբերեցի նախաճաշելու:

Նա շտապով դուրս վազեց սենեակից:

Լիզայի յարաբերութիւնները քաւոր Պետրոսի հետ բաւական ընտանեկան էին թուում ինձ: Երեւում էր, որ նրանք վաղուց ճանաչում էին միմեանց: Բայց քաւոր Պետրոսը այդ կարծիքը ցրուելու համար, ասաց ինձ, որ նրա "վերնատունը փոքր ինչ դարտակ է". այսինքն յիմար է, եւ այդ պատճառով իրան վայելուչ պահել չգիտէ:

Բայց Լիզան այնքան յիմար չէր երեւում, որպես կամենում էր ցոյց տալ քաւոր Պետրոսը: Նա երեւում էր այն տեսակ կնիկներից, որոնք վշից եւ յուսահատութիւնից տանջուած, աշխատում են իրանց սրտի ցաւերը թմրեցնել արաղի շշիներով:

Երբ վերջացրի իմ նախաճաշիկը, քաւոր Պետրոսը ասաց.

— Դու ճանաչում ես հրէայ սեղանաւորի խանութը, կը գնաս նրա մերձակայքում կը պտըտես եւ ինձ տեղեկութիւններ կը բերես:

Ես գնացի, քաւոր Պետրոսին թագստի մէջ թողնելով, ինչպէս նա առաջ ինձ թագստի մէջ էր պահում: Ո՛չ սեղանաւորը եւ ոչ մի այլ մարդ այդ քաղաքում ինձ չէր ճանաչում:

Քաւոր Պետրոսի ենթադրութիւնը ուղիղ յայտնուեցաւ: Սեղանաւորը առաջին օրը չէր հասկացել, թէ ինչ էր պատահել իւր արկղի հետ: Որովհետեւ այսպիսի սեղանաւորները, որոնք ոսկի, արծաթ եւ գոհարներ գրաւ առնելով, փող են տոկոսով տալիս, սովորաբար միշտ վէճեր են ունենում գրաւատէրների հետ, եւ հետեւաբար շատ անգամ գործ են ունենում դատարանների հետ: Այն օրը, որի գիշերը կատարուեցաւ յայտնի գողութիւնը, սեղանաւորը մի տիկնոջ գանգատով կանչուած էր դատարանը: Հրէան վաճառել էր տիկնոջ 5000 րուբլ արժէք ունեցող օղամանեակը 1500 րուբլ պարաքի փոխարէն: Դատարանը գործը վճռել էր յօգուտ տիկնոջ:

Իսկ երկրորդ օրը, երբ ես գնացի քաւոր Պետրոսի համար տեղեկութիւններ բերելու, գողութիւնը արդէն յայտնուած էր: Ոստիկանութիւնը քննութիւն էր անում եւ կազմում էր իւր տեղեկագիրը: Յանութի դռները, կողպէքները, լուսամուտները գտան ամբողջ: Երկաթեայ արկղը նոյնպէս կոտրած չէր: Ուրեմն հրաեղից էր մտել գողը: Ինքը հրէան նոյնպէս ցոյց էր տալիս, որ նա իւր արկղը բոլորովին կողպուած գտաւ, եւ խանութի դռները փակուած էին, երբ գործակատարները առաւօտեան եկան բաց անելու:

— Ուրեմն սատանաներ պէտք է մտած լինեն խանութը, ծաղրում էին շատերը հրէային, — որովհետեւ սատանան կարող է անցնել փակ դռնից, պատի միջից, առանց հետք թողնելու:

Բազմութեան հետ հաւաքուած էին այնտեղ եւ գրաւատէրներից շատերը: Նրանք աղաղակում էին.

— Սուտ է խօսում անիծուած հրէան, սուտ է խօսում: Նա ինքն է թաղցրել մեր իրեղէնները, պատճառ բերելով, թէ գողացել են: Ո՞րտեղից մուտ գողը, ինչպէս դուրս եկաւ: Ի՞նչու արկղի միջի թուղթ փողերը չտարաւ, միայն մեր իրեղէնները տարաւ:

Ոսիկանութիւնը հաւանական գտաւ կասկածը եւ կալանաւորեց հրէային:

Հրէան, երեւի, մոռացել էր ռաբբի Շիմոնի անդուկը, եւ երեւակայել անգամ չէր կարող, որ նրան "տապանակ ուխտի" մէկ մասը ընծայող քահանան, եւ նրա հարստութիւնը ծովի աւազների չափ բազմացնելու ցանկութիւն յայտնող քահանան, կարող էր նրա արկղի հետ անբարեխղճաբար վարուել:

Մենք մի ամբողջ շաբաթ մնացինք Լիզայի մօտ: Նա ամեն օր նոր տեղեկութիւններ էի բերում քաւոր Պետրոսի համար: Նա ցերեկները դրսում չէր յայտնվում, այլ դիշերները միայն դուրս էր գալիս իւր մթին աւենեակից: Արդեօք ո՞ւր էր գնում, — այդ մասին ինձ ոչինչ չէր ասում:

Լեզան օրըստօրէ աւելի համակրելի էր դառնում: Այդ դժբախտ կինը զարթեցնում էր իմ մէջ ոչ այլ զգացմունք, այլ միայն ցաւակցութիւն: Երբ նա պատմում էր ինձ իւր կրած տանջանքները, իւր հետ պատահած անցքերը, ես սարսափում էի: Նա մի կատաղի աւազակի սիրուհին էր, որից բաժանուել չէր կարող, որովհետեւ սաստիկ սիրում էր նրան, թէեւ օր չէր անցնում, որ չծեծուէր նրանից:

Որպէս դիշերով մտանք Լիզայի տունը, այնպէս էլ դիշերով դուրս եկանք այնտեղից: Խեղճ աղջիկը պա-

տրաստել էր ինձ համար բաւական ճոխ պաշար ճանապարհին ուտելու համար: Նա ինձ կոչում էր Նիկալայ, որովհետեւ այդ անունով ծանօթացայ նրա հետ:

— Նիկալայ, հոգեակս, ասաց նա մեզ ճանապարհ դնելու ժամանակ, — երբ կը պատահի քեզ միանգամ եւս անցնել այդ քաղաքով, չմոռանաս խեղճ Լիզային:

— Չեմ մոռանայ, պատասխանեցի ես, եւ մեր սայլակը հեռացաւ:

Քաւոր Պետրոսը բարկացաւ: Նա սաստիկ ատում էր, երբ մարդիկ քաղցրութեամբ էին խօսում "քաճերի" հետ, ինչպէս սովորաբար պատահում էր նա:

Է.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Գիշեր էր, երբ մենք դուրս եկանք յիշեալ քաղաքից: Լուսնեակի լուսով մեր սայլակը հանդարտ վազում էր հարթած ճանապարհով: Երկու ուժեղ ձիաներ քաշում էին նրան ամենայն արագութեամբ: Ես կառավարում էի նրանց երասանակները: Քաւոր Պետրոսը մրափում էր սայլակի մէջ, որպէս մի հսկայ, որ հանգստանալու պէտք է զգում մի մեծ յաղթութիւնից յետոյ:

Մեր ճանապարհը ձգվում էր անսահման անապատի միջով, ուր դէպի որ կողմը նայում ես, երկինքը միանում է հորիզոնի հետ: Այսպիսի անապատները ոչ միայն ցերեկով, այլ եւ գիշերով, այն եւս լուսնկայ գիշերով, կախարդիչ կերպով ազդում են մարդու երեւակայութեան վրայ: Ու ինչպիսի պատկերներ, ասես, չեն գալիս ու չեն գնում նրա աչքերի առջեւից...:

Ցանկարծ միտքը սլանում է հեռու եւ հեռու, եւ օտարական պանդուխտը տեսնում է իրան իւր հայրենիքում... տեսնում է ծանօթ երեսներ... տեսնում է ծանօթ տեղեր... տեսնում է իւր մանկութեան սրբավայրը եւ ուրախանում է...: Բոլորը հետզհետէ անհետանում են: Իսկ այն պատկերը, որ միշտ կից է եղել նրա սրտին, նա մնում է, նա երկար ժամանակ մնում է...:

— Այդ իմ Սառայի պատկերն է...:

— Սաղելի Սառա... ո՛րքան մեծացել է նա... ո՛րքան գեղեցիկ է... ահա նա ժպտում է... ո՛րքան ուրախ է... ահա մօտ եկաւ... ի՞նչու է գլուխը քարշ դցել... երեւի ամաչում է... տես կարմրեց...: Սիրելի Սառա, մի վախիր... ես քո Մուրադն եմ... գրկիր ինձ... համբուրիր ինձ... աի՛, ի՞նչու ես փախչում... Սառա ջան... իմ Սառա...

Վերջին խօսքերը այնպիսի բարձր ձայնով արտասանեցի ես, որ քաւոր Պետրոսը իւր քնից զարթնեց:

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել, գոչեց նա շփոթուելով:

— Ոչինչ, պատասխանեցի ես փոքր ինչ յուշի գալով:

Նա կրկին աչքերը խփեց, քնեց:

Քաւոր Պետրոսի խռովութիւնը առանց պատճառի չէր: Ես ամբողջ գիշերը անցուցել էի զառանցութեան մէջ: Մի կողմից անքնութիւնը, միւս կողմից սայլակի անդադար օրօրուիլը, այն աստիճան գլուխս էին իմ ուղեղը, որ ես ընկել էի հալուցինասիծների մէջ...:

Այդ ինձ հետ շատ անգամ էր պատահում: Բայց երբէք չէր պատահել, որ ես ինձ բոլորովին մոռանայի: Երբեմն, ամբողջ ժամերով, բոլորովին քնած գրութեան մէջ, ես կառավարում էի ձիաները, բայց գէթ միանգամ չէր պատահել, որ կամ մտրակը, կամ երասանակները իմ ձեռքից ցած ընկնէին: Ես իմ կիսաքուն գրութեան մէջ՝ մինչեւ անգամ հետեւում էի ճանապարհի ուղղութեանը, նկատում էի կամուրջները, զգուշանում էի ջրհորներից, եւ սայլակը վտանգի չէի ենթարկում: Իսկ այս անգամ, ինձ այն աստիճան մոռացել էի, որ ձիաներին իրանց կամքին էի թողել եւ բոլորովին շեղուել էինք ուղիղ ճանապարհից: Այդ նկա-

տելի եղաւ այն ժամանակ, երբ լոյսը բացուեց եւ աւետելքը սկսեց շառագունիլ:

— Այդ ճանապարհը, սատանան գիտէ, թէ ուր է տանում, ասաց քաւոր Պետրոսը, երբ զարթնելով սկսեց նայել իւր շուրջը: — Մենք մոլորուել ենք...:

Այդ խօսքերը թէեւ արտասանեց նա հանդարտութեամբ, բայց նրանց մէջ կար ե՛ւ բարկութիւն ե՛ւ յանդիմանութիւն:

— Ցետ դառնանք, պատասխանեցի ես, — գուցէ կը գանենք ուղիղ ճանապարհը:

— Հարկաւոր չէ, շարունակի՛ր, տեսնենք Աստուած ուր է տանում մեզ:

Քաւոր Պետրոսը մեր մոլորուելու մէջ գտնում էր Աստուծոյ կամքը: Նա մտածում էր, գուցէ ուղիղ ճանապարհի վրայ մեզ մի վտանգ կը պատահէր, գուցէ այնտեղ հետամուտ էին լինում, որ կալանաւորեն մեզ, իսկ շեղուելով ուղիղ ճանապարհից, ազատուեցանք:

Զարմանալի բան է Աստուծոյ ներկայութիւնը ամեն գործի մէջ. թէ գողը եւ թէ կողոպտեալը մի օրինակ յոյս են դնում Նրա վրայ: Սպաննողը Նրանից ուժ է խնդրում իւր բազկի համար, իսկ սպանուողը — ազատութիւն: Բոլորը դիմում են դէպի Նա:

Արեւը բաւական բարձրացել էր: Մենք գտնվում էինք դեռ միեւնոյն հարթ-հաւասար անապատի մէջ: Դէպի որ կողմը եւ նայում ես վերջ չկայ: Մի ծանր, ճնշող ապաւորութիւն էր գործում այդ լայնատարած, մռայլոտ անապատը մարդու վրայ: Կարծում ես, թէ հորիզոնը ամեն կողմից հեռուհեռ նեղնալով, պատրաստվում է խեղդել քեզ: Ցեղ-տեղ պատահում էին փոքրիկ դիւղեր, նոյնպէս փոքրիկ, ողորմելի խրճիթներով,

բայց մենք կանգ չէինք առնում, անցնում էինք: Մի տեղ միայն քաւոր Պետրոսը ցած իջաւ սայլակից, մտաւ դիւղը, մեզ համար ճանապարհի պաշար գնելու, եւ մանաւանդ տեղեկանալու, թէ ո՛րտեղ ենք գտնվում, կաս դէպի ո՞ր է տանում մեր բռնած ուղին:

Ես սայլակը կանգնացրի դիւղի գլխաւոր փողոցի վրայ, սպասում էի քաւոր Պետրոսի վերադարձին: Նա կանչել տուեց դիւղի տանուտէրին, ինչոր խօսեց նրա հետ, եւ քաւորդ ժամից յետոյ վերադառնալով, ասաց ինձ.

— Այս տեղ անկարելի է մնալ:

— Ինչո՞ւ:

— Ո՛չ մեզ համար հաց կարելի է գտնել եւ ո՛չ ձիանելի:

— Ի՞նչ է պատահել:

— Այս կողմերում սարսափելի սով է տիրում. մարդիկ ամեն ինչ սպառելով, յետոյ կերել են իրանց անասուններին, այդ եւս սպառելով, այժմ ուտում են այն, ինչ որ անասուններն պիտի ուտէին:

Ես սոսկացի: Նա նստեց սայլակի վրայ եւ հրամայեց քշել:

— Դէպի ո՞ր կողմը, հարցրի ես:

— Դէպի աջ:

— Դուք հիմայ գիտէ՞ք, թէ ո՞ւր է տանում այդ ճանապարհը:

— Գիտեմ:

Քաւոր Պետրոսի պատմութիւնից երեւաց, որ նախորդ տարուայ երաշտութեան պատճառով այս կողմերում հունձքը խիստ անյաջող է եղել, իսկ ներկայ տարուայ ցանքերը նոյնպէս մի առանձին բեղմնաւորութիւն

չէին խոստանում: Գիւղացիները, որ առանց այդ դժբախտութիւնների եւս միշտ աղքատ են եղել, այժմ զրկուել էին ապրուստի ամէն միջոցներից:

— Իսկ մեզ մօտ ուտելու մի բան մնացե՞լ է, հարցրեց քաւոր Պետրոսը:

— Միայն հացը պակաս է: Շատ ապրի Ղիզան, նրա առատաձեռնութեան շնորհիւ, մենք այժմ ունենք մի ամբողջ բուդ խոզի ապուխտ մի քանի կտոր երշիկներ եւ պանիր:

— Պանիրը պահիր ինձ համար, իսկ միւսները դու կ'ուտես:

Քաւոր Պետրոսը խոզի միս ուտելու սովորութիւն չունէր, որովհետեւ մեղք էր համարում:

Առաջիկայ գիւղը այնքան հեռու էր, որ մենք հասանք այն տեղ, երբ երեկոյեան ճրագները վառվում էին: Թէեւ քաւոր Պետրոսին ասել էին, որ այստեղ աւելի յարմարութիւն կը գտնենք իջեւանելու համար, բայց յայտնուեցաւ, որ սովը եւ չքաւորութիւնը այստեղ աւելի սարսափելի էր:

Մեր սայլակը կանգնեցրինք առաջին հանդիպած խրճթի դրանը: Ճրագուի մոմ անգամ չգտանք վառելու համար, որովհետեւ ճրագուի մոմերը այժմ գործ էին ածվում որպէս կերակուր: Մեր հեռուից տեսած ճրագները ուրիշ ոչինչ չէին, բայց միայն փայտի տաշեղներ, որ բանեցնում էին մոմերի տեղ:

Մենք ունէինք մեզ հետ "մոմպատ", այսինքն մոմով պատած թելի մի ահագին կծիկ, որ մարդիկ ճանապարհորդութեան ժամանակ մոն են ածում: Բայց այդ կծիկը մեզ ուրիշ շատ գործերում եւս հարկաւոր էր լինում: Վառեցինք "մոմպատը":

Մտանք խրճիթը: Դա մի կատարեալ հիւանդանոց էր. ընտանիքի մեծ մասը պառկած, հառաչում էր ցրնցոտիների ներքոյ: Ոտքի վրայ էր մնացել միայն ծերունի տանտէրը եւ մի փոքրիկ աղջիկ — նրա թոռնիկը:

— Այստեղ անկարելի է մնալ, ասեցի ես քաւոր Պետրոսին:

— Ամեն տեղ այսպէս է, պարոն, մէջ մտաւ ծերունի տանտէրը, — ամեն խրճիթում հիւանդներ կը գտնէք:

Ամառուայ եղանակը եւ լուսնկայ գիշերը նպաստեցին մեզ իջեւանելու բակում, դատարկ ախոռատան հանդէպ: Այստեղ հիւանդներ չկային, որովհետեւ եւ շնչաւորներ չը կային:

— Սամօվար կը գտնուի՞, հարցրի ես տան տէրից:

— Սամօվար, կրկնեց թաւամօրուս տանտէրը ծոծրակը քորելով:

— Այո՛, սամօվար:

Ռուս մուժիկին մի բան հասկացնելու համար պէտք է տասն անգամ կրկնել:

— Սամօվար եթէ գտնուի, պարոն, պէտք է տէրտէրի տանը գտնուի: — Մենք էլ առաջուայ ժամանակներում ունէինք, պարոն, բայց մեր մեղքից ոչինչ չմնաց, բոլորը ծախուեցաւ...:

— Ինչո՞ւ ծախուեցաւ:

— Ծախեցինք կերանք, պարոն: Մեր մեղքերի համար Աստուած պատիժ ուղարկեց սովը: Ոչինչ չկար ուտելու:

— Իսկ հիմա՞:

— Հիմայ աւելի վատ է. սովի հետ աւելացաւ եւ հիւանդութիւնը:

Ես ընդհատեցի տխուր խօսակցութիւնը եւ կրկին յիշեցի նրան սամօվարը:

— Օլեա, ձայն տուեց նա իր փոքրիկ թոռնիկին, — վազիր տէր հօր տունը, ասա, որ մեզ մօտ պարոններ եկան, թող փոխ տայ մեզ սամովարը:

Եւ իրաւ, նրա խրճիթում ոչինչ չէր մնացել. կամ առաջուց չէր ունեցել, կամ ունեցածը վաճառել էր: Մի հասարակ սեղան, որի երեսի վրայ սեւ փոսիկները էին կազմուել սամովարի տակից ընկած կրակներից, մի քանի հատ կոտրած տաբուրետկաններ, մի հատ ալուրեայ կաթսայ, հնոցի մօտ դրած, որի մէջ վաղուց կերակուր չէր եփուել, մի քանի փայտեայ գդալներ, մի քանի անկոթ դանակներ առանց պատառաքաղների, — եթէ աւելացնենք դրանց վրայ երկաթեայ անթրոցը (кочерга), կը ստանանք կարասիների ամբողջ թիւը:

Միակ առարկան, որ մնացել էր իր տեղում անշարժ, որին սովի բոլոր սաստկութիւնը չէր կարողացել ստիպել վաճառելու, Աստուածամօր պատկերն էր, փոքրիկ Ցիսուսը գրկում, որ դրած էր խրճիթի մի անկիւնում: Մուժիկը նրանից չէ բաժանվում, մուժիկը ամէն բան նրանից է սպասում եւ նրա համար է զոհում:

Քաւոր Պետրոսը այս գիշեր լուռ էր, ոչինչ չէր խօսում: Նա նստած էր մեր անդուկներից մէկի վրայ եւ ծխում էր: Ինիա հացիւ անգամ էր պատահում, որ նա ծխէր, բայց երբ որ ծխում էր, դա արդէն նշան էր կամ սաստիկ ուրախութեան եւ կամ սաստիկ տրտմութեան: Վերջինը այս գիշեր աւելի հաւանական էր: Շրջապատող թշուառութիւնները դառն տպաւորութիւն էին գործել նրա զգայուն սրտի վրայ:

Օլեան վերադարձաւ սամովարը իր հետ բերելով, բայց սամովարի հետ եկաւ եւ տէր հայրը, երեւի, նրա համար, որ լսել էր, թէ հիւրերը "պարոններ" են եւ ոչ

հասարակ մարդիկ: Քաւոր Պետրոսը քաղաքավարութեամբ ընդունեց նրան:

Քահանան յայտնուեցաւ բաւական բարեկիրթ մարդ, որպիսիները խիստ հազիւ են պատահում գիւղերում: Լսելով, որ մենք "պարոններ" ենք, նա կարծել էր, թէ գուցէ պաշտօնական անձինք ենք, եկել էր յայտնելու մի սպասափելի դէպք: Մի սովատանջ կին, քաղցածութեան կատաղութեան մէջ, սպանել էր իր երեխային եւ ուտելու փորձ էր արել...:

Քաւոր Պետրոսը զարհուրեցաւ: Ինձ վրայ եւս խիստ սոսկալի տպաւորութիւն գործեց այդ լուրը:

— Միթէ այս աստիճան սաստկացել է սովը, հարցրեց քաւոր Պետրոսը:

— Մարդիկ այժմ համարեա ոչինչ չեն գտնում ուտելու, պատասխանեց քահանան, — կերակրվում են բանջարներով, խոտերով, արմատներով եւ դեռ չհասունացած ցորենի հասկերով, — իսկ դրանք աւելի շուտով են սպասնում նրանց, որովհետեւ հիւանդանում են ու մեռնում են:

— Շա՞տ է մեռնողների թիւը:

— Շատ է: Գիւղի բնակիչների համարեա կէսը չէ մնացել: Տիֆը աւելի մեծ կոտորած է անում, քան թէ քաղցածութիւնը: Մնացածներից շատերը հիւանդ են:

— Գիւղական հասարակութիւնը ոչինչ հնարների վրայ չէ՞ մտածում:

— Գիւղական հասարակութիւնը ի՞նչ կարող է անել: Սպասում են կառավարութիւնից հաց եւ բժիշկ ստանալ: Մեզ խոստացել են:

— Շուտո՞վ կը ստացուի:

— Աստուած գիտէ։ Դեռ պէտք է քննեն, դեռ պէտք է տեղեկանան, թէ ո՛ր աստիճան օգնութեան կարօտ է մեր զրութիւնը, որ յետոյ օգնեն։

— Դուք ձեր զրութեան մասին տեղեկութիւններ չէ՞ք տուել։

— Ի՛նչպէս չենք տուել. մի քանի անգամ խնդիրներ ենք մատուցել, բայց դեռ խնդիրները չեն քննուել։

— Հայ ամենեւին չէ՞ մնացել։

— Ձեզ յայտնի է, որ այսօր տէրունական ուրբաթ է. ես պէտք է պատարագ մատուցանէի. ամբողջ գիւղում այնքան ալիւր չգտնուեցաւ, որ նշխարք պատրաստէինք։

— Իսկ մերձակայ քաղաքում հայ գտնվո՞ւմ է։

— Գտնվում է, բայց գիւղացիների մօտ միջոցներ չեն մնացել բերել տալու համար։

Տէրութեան մտայղը պատեց քաւոր Պետրոսի դէմքը, մի քանի րոպէ մնաց լուռ մտածութեան մէջ, յետոյ նա դարձաւ դէպի քահանան այդ խօսքերով.

— Խնդրեմ, նեղութիւն յանձն առէք, տէր հայր, ես կամենում եմ անձամբ տեսնել մի քանի խրճիթներ, առաջնորդեցէք ինձ։

— Մեծ ուրախութեամբ, ասաց քահանան եւ վերկացաւ։

Սրանք գնացին։ Մեր հիւրընկալը վազից գիւղի տանուտէրին խնդրում տալու, թէ աստիճանաւոր է եկել։ Քաւոր Պետրոսի այցելութեանը տալիս էին պաշտօնական նշանակութիւն։

Ես եւ փոքրիկ Օլիան մնացինք մենակ. պատուում էինք սամովարի շուրջը, հոգս էինք տանում թէյի պատրաստութեան համար։

— Այսօր ի՞նչ ես կերել, Օլիա։

— Այնօրից, որ մայրս մեռաւ, ես հայ չեմ կերել։

— Շատ ժամանա՞կ է, որ մայրդ մեռաւ։

— Երկու շաբաթ է։ — Յետոյ Սաշան մեռաւ, յետոյ Միսկան մեռաւ... երէկ թաղեցին փոքրիկ Վերային...։

Խեղճ աղջիկը չկարողացաւ վերջացնել. նա սկսեց հեկեկալ։

— Գիտե՞ս, Վերան իմ քոյրն էր, ասաց նա արտասուախառն ձայնով։

Ես տուեցի Օլիային մի կտոր երշիկ եւ խնդրեցի, որ ուտէ։ Խեղճ աղջիկը առաջին անգամ տեսնում էր մի այսպիսի բան։

— Այդ ի՞նչ է, հարցրեց նա։

— Խփած միս է։

Նա չկերաւ, թէեւ մօր մեռնելուց յետոյ հայ չէր կերել, այլ վազեց մտաւ խրճիթը, երեւի, հիւանդներից մնկին ուտացնելու համար։

Քաւոր Պետրոսի այցելութիւնները երկար չտեւեցին, որովհետեւ նա մտել էր մի քանի խրճիթներ միայն, եւ ամեն տեղ տեսնելով միեւնոյն զարհուրելի տեսարանները, միեւնոյն դժբախտութիւնները, այլ եւս համբերել չէր կարողացել եւ յետ էր դարձել։ Նա սաստիկ զզայուն մարդ էր. թշուառութեան համար դեռ պահուած էին նրա աչքերում արտասուքի մի քանի կաթիլներ...։

Նրա հետ էր եւ քահանան եւ գիւղի տանուտէրը։ Իսկ գիւղացիների մի խումբ, լսելով այդ անակնկալ այցելութեան համբաւը, հաւաքուել էր մեր կեցած տան դրանը։

Հէնց որ նատեցին, քաւոր Պետրոսը դարձաւ դէպի քահանան այդ խօսքերով.

— Ես ձեզ կը տամ մի գումար, տէր Հայր, դրանով դուք հաց, բժիշկ եւ դեղօրայք բերել կը տաք քաղաքից: Ես հաւատացած եմ, որ ձեր ծուխի թշուառութիւնը ձեզ համար նոյնքան զգալի է եւ ցաւակցական, որքան եղաւ նա ինձ համար, երբ այս գիշեր իմ աչքով տեսայ ողբմելի մարդկանց կրած տառապանքը:

— Այդ փողերը գանձարանից են, հարցրեց գիւղի տանուտէրը:

— Այդ փողերը ես եմ տալիս ձեզ, պատասխանեց քաւոր Պետրոսը:

Նրանք զարմացած նայեցին: Նրանց վրայ տիրեց մի տեսակ երկիւղ, մի տեսակ կասկած, թէ ինչ նպատակ կարող էր լինել դրանում, որ մի անծանօթ մարդ, մի քանի ժամ իրանց գիւղում հիւր լինելով, նուիրում էր այդքան փող:

— Աստուծոյ եւ իմ հոգու համար եմ տալիս, ասաց քաւոր Պետրոսը:

Աստուծոյ եւ հոգու անունը տալու ժամանակ նրանց կասկածը փարատուեցաւ, եւ ամէն կողմից օրհնութիւններ ու շնորհակալութիւնները չափ չունէին:

Քահանան, որպէս երեւում էր, բարեխիղճ մարդ էր. նա թոյլտուութիւն խնդրեց քաւոր Պետրոսից, որ ներս կանչէ դրսում կանգնած գիւղացիներին եւս, որ մի քանի վկաների ներկայութեամբ ստանայ գումարը, որպէս զի վերջը տարաձայնութիւնների առիթ չմնայ:

— Ես, ասաց նա, — այդ գումարը մի քանի անձինքների գործակցութեամբ կը ծախսեմ, եւ նրա գործադրութեան մասին մանրամասն հաշիւ կը ներկայացնեմ ձեզ: Ցետոյ խնդրեց նա քաւոր Պետրոսի հասցէն:

— Այդ հարկաւոր չէ, տէր Հայր, ես ձեզ բոլորովին հաւատում եմ:

Քաւոր Պետրոսը մինչեւ անգամ չյայտնեց նրանց իւր անունը, թէեւ շատ խնդրեցին, եւ հանգստացրեց քահանային Աւետարանի խօսքերով, թէ բարեգործութիւնները պէտք է ծածուկ կատարուեն եւ միայն Աստուած պիտի գիտենայ:

Յետոյ դարձաւ նա դէպի ինձ, եւ ներկայ գտնուողներին անհասկանալի լեզուով, ասաց.

— Պատրաստուիր, որ շուտով ճանապարհ ընկնենք, այս գիւղը մնալու տեղ չէ:

Քաւոր Պետրոսը իւր ձեռքով մխիթարեց այն գիւղացու դժբախտութիւնը, որի տանը հիւրասիրուեցանք մենք: Քառորդ ժամից յետոյ մեր սայլակը արդէն գտնուում էր ճանապարհի վրայ:

Սպահանցի քահանային եկեղեցու շինութեան համար հանգանակած գումարից յետոյ, քաւոր Պետրոսի այդ երկրորդ բարեգործական վարմունքը ինձ աւելի զարմացնում էր: — Զարմացնում էր, գլխաւորապէս այն պատճառով, որ եկեղեցու շինութեան գործում նրան թելադրում էր հաւատը, կրօնի զգացմունքը եւ վերջապէս ազգային նախանձախնդրութիւնը: Իսկ այստեղ ինչ կար, որ զարթեցնէր նրա կարեկցութիւնը: Մի՞թէ մի ամբողջ սովատանջ բազմութեան թշուառութիւնը կարող էր ազդել նրա քարացած սրտի վրայ:

Այդ խորհրդածութիւնները զբաղեցնում էին իմ միտքը երբ մեր սայլակը դանդաղ կերպով առաջ էր գնում: Ձիաները ամբողջ օրը չարչարուած լինելով, չէինք կամենում աւելի յոգնեցնել նրանց: Այդ միջոց էր տալս ինձ քաւոր Պետրոսից բացատրութիւններ խնդրելու:

— Բարեգործութիւնը լա՛ւ բան է, Հարցրի Նրանից:

— Ես չեմ հասկանում՝ ի՞նչը առիթ տուեց քեզ յանկարծ մի այսպիսի հարց առաջարկել ինձ:

— Ինձ առիթ տուեց ձեր այսօրուայ վարմունքը:

— Լաւ բան է:

— Ուրեմն մենք ի՞նչու ենք խաբում, կողոպտում, սպաննում, եւ ամեն տեսակ եղեռնագործութիւններից չեմ ետ մնում:

— Մենք կողոպտում ենք ժլատ հարուստներին: Իսկ աղքատներին պէտք է օգնել:

Գիշերային լռութեան պահուն, անապատի մէջ, ճանապարհի վրայ, առանձնացած մի խստասիրտ մարդու հետ, այս տեսակ վիճաբանութիւնը կարող էր վատնգաւոր հետեւանքի հասցնել: Իմ տապարը, որ միշտ սայլակի նստարանի տակ էր պահուած լինում, հանեցի եւ խրեցի գօտիս մէջ: Լուսնեակի լուսով քաւոր Պետրոսը նկատեց այդ: Իսկ ես նրա դէմքի վրայ նկատեցի մի արհամարհական ժպիտ:

— Դուք ասում էք, թէ աղքատներին եւ թշուառներին պէտք է օգնել: Շատ գեղեցիկ միտք է, շարունակեցի ես: — Իսկ ողորմելի Թաթար Ասկերը աղքատ եւ թշուառ չէր, ինչո՞ւ հրամայեցիք ինձ սպաննել նրան:

— Ես մէջոցների մէջ խարութիւն չեմ դնում: Եթէ Ասկերին սպաննել էտայի, չէի կարող կողոպտել բուխարեցի հարուստ վաճառականին: Իսկ բուխարեցուն կողոպտելով, ես այսօր մի ամբողջ գիւղ ազատեցի սովատանջ մահից:

Քաւոր Պետրոսի խօսքերը որքան էլ ինձ տարապայման թուէին, այսու ամենայնիւ, նրանք բղխում էին հաստատ համոզմունքից, որոնց համեմատ եւս գործում էր նա: Նա իւր գաղափարների մէջ յաջորդաբար էր վար-

ւում: Այնքան ժամանակ նրա մօտ ծառայելով, ես վկայ էի եղել շատ անգամների եւ միշտ նկատել էի, որ նա մի առանձին կատաղի ատելութիւն ունէր դէպի ժլատ հարուստները, — որոնց ընդհակառակն, նա երբէք չէր վշտացրել աղքատին եւ միշտ թշուառների բարերար էր հանդիսացել: Բայց ես յիշեցի մի պայման, որի մասին մինչեւ այնօր առիթ չէի ունեցել խօսելու նրա հետ: Ես Հարցրի:

— Դուք, որ միշտ բարի էք եղել դէպի աղքատը, դէպի հարստահարեալը եւ դէպի թշուառը, ինչո՞ւ մինչեւ այսօր չփատարեցիք ձեր խոստմունքը մի անձի վերաբերութեամբ, որ ձեր պատճառով թշուառացաւ:

— Ո՞նչ անձ:

— Իմ վարպետը: Հէ՞ք յիշում, երբ առաջին անգամ մենք վճռեցինք թողնել մեր հայրենիքը եւ օտար աշխարհ գնալ, մենք ուխտեցինք փող վաստակել եւ այդ մարդու կլած բոլոր վնասների փոխարէնը վճարել: Մոռացա՞ք էք:

— Չեմ մոռացել: Երբ կը հասնենք իջեւանը, դու ինձ յիշեցրու, ես ցոյց կը տամ քեզ մի նամակ, որից դու կը տեղեկանաս, որ ես վաղուց կատարութիւն արել եմ այդ մասին: Ես ուղարկել էի մի գումար մեր գիւղի քահանային, խնդրելով, որ հասցնէ քո վարպետին, բայց պատասխան ստացայ, թէ այն օրից որ նրան փախցրին բանտից, նրա մասին ոչինչ տեղեկութիւն չկայ, թէ ինքը եւ թէ իւր ընտանիքը անյայտացել են: — Բայց ինձ զարմացնում է մի բան, Մուրատ, թէ ի՞նչը առիթ տուեց քեզ այսպէս կասկածաւոր կերպով վերաբերուել դէպի իմ գործունէութիւնը:

Ես ոչինչ չպատասխանեցի:

Ը.

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Անցել էր աւելի քան մի ամիս այն օրից, որ մենք թողեցինք հրէայ սեղանաւորի գտնուած քաղաքը։

Շատ երկար կը լինէր, եթէ մանրամասնաբար նկարագրէի մեր ամբողջ ճանապարհորդութիւնը։ Իմ յիշատակարանի այս գլուխը ես կիսով չափ համառօտում եմ, — համառօտում եմ, որովհետեւ շտապում եմ ծանօթացնել ընթերցողին մի նոր դէպքի հետ, որը իմ սրտին շատ մօտ է...։

Կարճ կ'ասեմ, անցնելով զանազան գաւառներից եւ փոքրիկ քաղաքներից, մենք արդէն գտնվում էինք Կայսրութեան հարաւային գաւառներում Սեւ ծովի եզերքի մօտ։ Բնութիւնը այստեղ փոխուեցաւ, անապատներից ազատուեցանք, երկիրը աւելի լեռնային էր։

Ամառնային գեղեցիկ առաւօտներից մէկն էր։ Մեր ճանապարհը գնում էր նեղ ձորի միջով, որ պատած էր խիտ անտառներով։ Ճանապարհի մէկ կողքով զուգընթաց կերպով ձգվում էր խորին անդունդ, որի յատակում հազիւ նշմարվում էր լեռնային գետակը։ Իսկ ճանապարհի միւս կողքին բարձրանում էին ապառաժներ, որ ծածկուած էին ծառերով։

Ինձ յայտնի չէր, թէ ո՞ւր էր տանում այդ ճանապարհը, կամ ի՞նչ էինք որոնում այդ վայրենի, համարեա

անմարդաբնակ լեռների մէջ։ Նա միայն հիացած էր բնութեան գեղեցկութիւններով։ Երբեմն ես լսում էի առուակների խոխոջմունքը, որոնք թագուն վազում էին թփերի միջով. երբեմն տեսնում էի նրանց ջրվէժը, որ նոր ծագող արեգակի առաջին ճառագայթներից ծիածանի նման կամար էին կապում կանաչազարդ լեռան վրայ։ Տեղ-տեղ հանդիպում էին հին ամրոցների աւերակներ, որ մնացել էին թաթարների տիրապետութեան ժամանակներից։

Կրկնում եմ, որ ես ամենեւին տեղեկութիւն չունէի, թէ ինչ նպատակով էինք ճանապարհորդում։ Միայն քաւոր Պետրոսը մի բան որոնում էր այն լեռների մէջ. նա շտապում էր, որքան կարելի է, շուտով հասնել ծովի ափերին։

Մինչեւ կէսօր մենք գնում էինք միեւնոյն նեղ ճանապարհով, որ երկու կողմից սեղմուած էր ծառերով։ Բայց դեռ ոչ մի բնակութեան չէինք հանդիպել եւ ոչ մի մարդու երես չէինք տեսել։ Շարունակել ուղին անհնարին էր, որովհետեւ ձիաները սաստիկ յոգնած էին։ Պետք էր փոքր ինչ հանգստանալ։ Մենք կանգնեցրինք սայլակը մի տեղում, ուր ձորի միջով անցնող գետակը աւելի բարձրից էր հոսում եւ ջուրը բոլորովին մաքուր էր։ Իմ առաջին հոգսը եղաւ ձիաները ջրել եւ նրանց կեր տալ։ Յետոյ սկսեցինք յագեցնել եւ մեր քաղցը։

Ճաշելուց յետոյ քաւոր Պետրոսը նստած էր մի ծառի հովանու ներքոյ, լուռ մտախոհութեան մէջ էր գտնվում։ Սատանան գիտէ, թէ ինչ էր մտածում նա։ Նրա այս տեսակ լռութիւնը միշտ նախագուշակում էր մօտալուտ փոթորիկ։ Ես ձանձրացայ եւ մտայ անտառը փոքր ինչ ծառերի մէջ ման գալու համար։

— Հեռու չգնաս, զգուշացրեց նա:

— Ինչու:

— Այս տեղերը խիստ երկիւղալի տեղեր են:

— Ես ինձ հետ կը վեր առնեմ տապարս:

Այս ձէնքը իմ մարմնի անբաժանելի անդամներից մէկն էր:

Զարմանալի բան է, լինում են այնպիսի րոպէներ, երբ հասակ առած մարդն անգամ երեխայ է դառնում: Իմ մանկութեան զուարճութիւնները միտս եկան. սկսեցի քաղել եւ ուտել վայրենի պտուղներ: Ներանք անզգալի կերպով հրապուրում էին ինձ աւելի հեռու եւ հեռու դէպի անտառի խորքը: Ես բոլորովին մոռացայ քաւոր Պետրոսի պատուէրը:

Յանկարծ իմ ականջին զարկեց մի ձայն. նա աւելի նման էր խուլ հառաչանքի: Ես մնաեցայ: Ձայնը կրկնուեցաւ: Պարզ որոշեցի, դա կանացի ձայն էր, որ լսելի էր լինում ոչ այնքան հեռուից: Ես թաղնուեցայ թուփերի մէջ եւ այնտեղից սկսեցի դիտել: Ի՞նչ եմ տեսնում. — մէկ մանկահասակ աղջիկ, չոքած գետնի վրայ, զրկել էր մի տղամարդի ոտքերը, աղաչում էր, պաղատում էր լինայել իւր կեանքին: Տղամարդը կանգնած, բռնել էր նրա մազերից, եւ վայրենի կատաղութեամբ պատրաստվում էր սպաննել: Հէնց որ նա սուրը բարձրացրեց, ես կայծակի արագութեամբ վրայ հասայ: Իմ հասնելը եւ տապարիս զարկը կատարուեցաւ միեւնոյն րոպէում: Նա ընկաւ գետնի վրայ:

Աղջիկը ազատուած էր:

Զարագործը լողում էր արեան մէջ: Նա իւր գազանային դէմքը դարձրեց դէպի ինձ, արձակեց մի քանի հայհոյանքներ եւ լռեց . . .:

Ես սարսափելի խռովութեան մէջ ընկայ. լսածս հայոց լեզուի բառեր էին: Ուրիմն իմ ձեռքը շաղախուեցաւ մի հայի արեան մէջ, որը մահուան տագնապի րոպէում, մոռանալով իրան, իւր հայհոյանքները արտասանեց մայրենի լեզուով:

Այստեղ անպատճառ պէտք է մի գաղտնիք լինի, մտածեցի ես եւ դարձայ դէպի աղջիկը, որ զարհուրած նայում էր իմ վրայ:

— Ո՞վ ես դու:

— Իմ հայրն ու մայրը մեռան խօլերայից:

— Այդ մարդը ինչու էր սպաննում քեզ:

— Գիւղացիք ինձ հայ էին տալիս. ես նրանց համար գուշակում էի . . .:

— Ես այդ չեմ հաւատում: — Այդ մարդը ինչու էր սպաննում քեզ:

— Նա լաւ մարդ չէ . . . նա շատ վատ մարդ է . . .:

— Ի՞նչպէս ընկար նրա ձանկը:

— Ինձ բռնեց, երբ մի օր գառնում էր գիւղից:

— Ցետո՞յ:

— Տարաւ անտառը . . . այնտեղ ընկերներ ունէր, բոլորը չար մարդիկ էին . . . բոլորը աւազակներ էին . . .:

— Ի՞նչ արեցին քեզ:

— Ձարչարեցին . . . շատ չարչարեցին . . .:

— Էլ ի՞նչու էին սպաննում քեզ:

— Ես ասեցի, եթէ ինձ բաց չձողնէք, կը մատնեմ ձեզ:

— Ի՞նչ բանում պէտք է մատնէիր:

— Ներանք թուղթ փողեր էին շինում:

— Դու մատնեցիր:

— Ջմռանեցի: Ինձ տուին այդ մարդու ձեռքը, որ ապահնէ ինձ:

Դազանները մռայլ պարզուեցաւ:

— Այն մարդիկը հեռո՞ւ են կենում:

— Այդ անտառի մէջն են:

— Դու ճանապա՞րհ ես նրանց բնակարանը:

— Ճանապարհ եմ:

— Կարո՞ղ ես ինձ ցոյց տալ:

— Ա՛խ, ես չեմ գնայ այնտեղ, ես վախում եմ...:

— Դու գիտե՞ս ինչ ազգից են նրանք:

— Ես շատ լեզուներով խօսում եմ, բայց նրանց լեզուն չէի հասկանում:

— Կարո՞ղ ես ինձ տանել նրանց մօտ:

— Մի՛ գնացէք նրանց մօտ. նրանք լաւ մարդիկ չեն:

Վերջին խօսքերը մի այնպիսի զգալի կերպով արտասանեց խեղճ աղջիկը, որ ես համոզուեցայ իսկոյն չգնալ աւազակների բնակարանը եւ վճռեցի նախ այդ անցքը յայտնել քաւոր Պետրոսին եւ ապա սպասել նրա կարգադրութեանը:

Աղջիկը կը լինէր հազիւ տաս եւ ութ տարեկան: Նա ցիգանուհի էր, բայց ոչ Ռուսաստանի ցիգաններից, այլ հեռաւոր երկրներից եկած, բայց ի՞նչ երկրներից, — նա բացատրել չկարողացաւ: Նրան կոչում էին Նէնէ: Նրա հայրը ածում էր արծիւի վրայ, մայրը երգում էր, իսկ ինքը պար էր գալիս: Այդ պարապմունքով թափառում էին եւ դրանով ապրում էին: Ծնողները մինը միւսից յետոյ, խօլերայից բռնուելով, մի շաբաթուայ մէջ մեռան: Նէնէն մնաց որբ եւ անտէր: Նա շարունակեց այնպէս թափառել գիւղից գիւղ, քաղաքից քաղաք,

մարդկանց համար գուշակութիւններ էր անում, հմայում էր եւ փող էր ստանում:

Նէնէն իւր ցեղին յատուկ լղարիկ կազմուածք ունէր, բայց սաստիկ դիւրաթեք, սաստիկ առաձգական էր նա: Առհասարակ մի գեղեցիկ նրբութիւն պատափայլում էր նրա մարմնի իւրաքանչիւր գծերից: Աչքերը սեւ եւ կրակոտ էին. գոյնը նոյնպէս թուխ էր, որպէս մազերը: Բայց ո՛րքան կեանք կար նրա հայեացքի մէջ, ո՛րքան պարզութիւն կար նրա խօսքերի մէջ...:

Վերադառնալով քաւոր Պետրոսի մօտ, ես չգիտէի ինչ տեսակ հաշիւ եւ համար տամ իմ անտառում կատարած գործողութեան մասին: Նա հեռուից տեսնելով ինձ Նէնէի հետ միասին, հեգնեց, ասելով.

— Որտորդութիւնդ յաջողակ է երեւում. մենակ գնացիր, զոյգով վերադարձար:

— Նա նստած էր միւնոյն ծառի հովանու ներքոյ, ուր առաջ թողել էի նրան: Ես ոչինչ չպատասխանեցի, տարայ Նէնէին սայլակի մօտ: Խեղճ աղջիկը այնպէս շուտով մտերմացաւ ինձ հետ, որ իսկոյն հարցրեց.

— Ասեղ ունե՞ս:

— Ի՞նչ ես անում:

— Դրանք պէտք է կարկանեմ:

Նա ցոյց տուեց իւր պատառոտած հագուստը:

Ես Նէնէին թողեցի սայլակի մօտ եւ շտապեցի դէպի քաւոր Պետրոսը:

— Այդ ի՞նչ բան է, հարցրեց նա այժմ խիստ տառն կերպով:

Ես առանց մի բան թագցնելու պատմեցի նրան անտառում պատահած անցքը, պատմեցի բոլորը, ինչ որ լսել էի Նէնէից: Նա հետաքրքրութեամբ լսում էր: Ես

կարծում էի, որ նա կը յանդիմանէր ինձ իմ գործած անխոհեմ սպանութեան համար, որի մէջ շահեկան կամ օգտաւէտ ոչինչ չկար: Բայց նա գտաւ դրա մէջ մի շահ:

— Պէտք է օգուտ քաղել այդ դէպքից, ասաց նա, երբ ես վերջացրի աղէտալի պատմութիւնը:

— Ո՞րպէս:

— Այդ մարդիկը մեզ հարկաւոր են . . . :

— Ի՞նչով :

— Աղջիկը չասաց քեզ, թէ նրանք շինում են կեղծ թղթադրամներ:

— Ասաց:

— Այդ բաւական է:

Նա էլ չխօսեց, հրամայեց իսկոյն լծել ձիաները: Երբ սայլակը պատրաստ էր, ես հարցրի.

— Ի՞նչ պէտք է անել այդ աղջկայ հետ:

— Վեր ած մեզ հետ: Մենք պէտք է առանձնանանք այդ անտառի մէջ մի ապահով տեղում, մինչեւ կը ստուգէինք, թէ ո՛վքեր են այդ մարդիկը: Քշիր դէպի ձախ:

Արեւը արդէն խոնարհվում էր դէպի իւր մուտքը, երբ մենք մտանք մի ձորում, որ գոգաւորութեամբ, կազմում էր մի նեղ ծոց անտառապատ լեռների մէջ: Այստեղ իջեւանեցինք:

Նէնէն լուռ էր եւ տխուր: Կարծես թէ, խեղճ աղջիկը մտածում էր, թէ աւազակի ձեռքից ազատուելուց յետոյ, կրկին ո՛րպիսի վիճակի ենթարկեց նրան ճակատագիրը, կրկին ո՛րպիսի մարդկանց ձեռքը ձգեց: Բայց նա դրա վրայ չէր մտածում. նա քաղցած էր. նա մի քանի օր ոչինչ չէր կերել եւ սովից նուաղել էր: Ես

իսկոյն տուեցի նրան մի բան ուտելու. նա կազդուրուեցաւ, եւ ժպիտը երեսին ասաց.

— Դուք լաւ մարդիկ էք, ես ձեզ մօտ կը ճնամ՝ դուք ինձ չէք սպանի:

Երբ մութը բոլորովին պատեց, քաւոր Պետրոսը ասաց ինձ.

— Մուրադ, այդ աղջիկը ճանաչում է աւազակների բնակարանը, դրան վեր ած քեզ հետ, գնացէք, լաւ բերեցէք այն մարդերի մասին:

Ես իսկոյն համաձայնուեցայ: Ինձ հետաքրքրում էր աւելի այն, որ այնօր իմ սպաննած մարդու բերանից լսեցի հայերէն խօսքեր: Ի՞նչ գործ ունէր հայը այդ վայրենի, անմարդաբնակ լեռների մէջ: Ես վեր առի բացի տապրից եւ մի զոյգ ատրճանակներ: Ամեն ինչ պատրաստ էր, միայն դժուար էր համոզել Նէնէին, որ նա առաջնորդէր ինձ մինչեւ աւազակների բնակարանը:

— Ամէն, մի տարէք ինձ այնտեղ . . . նրանք չար մարդիկ են . . . ես վախենում եմ . . . կրկնում էր նա ողորմելի ձայնով :

— Ի՞նչու ես վախենում, ես քեզ հետ եմ գալիս:

— Դու կը սպաննէս նրանց, այդպէս չէ՞:

— Կը սպաննեմ, եթէ քեզ դիպչելու լինեն:

— Հա՛, սպաննիր նրանց... նրանք Աստուած չունեն...:

Նէնէն այնօր իւր աչքով տեսել էր իմ ձեռքի ուժը: Նա շատով համոզուեցաւ, որ ես կը կատարեմ իմ խոստումնքը: Երեւում էր, որ անբախտ աղջկայ մանուկ կուրծքի մէջ բորբոքվում էր խիստ դառն վրէժխընդրութիւն դէպի այդ չարագործները, եւ այդ պատճառով, երբ վերջին խոստումնքը լսեց, իսկոյն յօժարուեցաւ ինձ հետ գալու:

Լուսնեակը լուսաւորում էր հաղիւ նշմարուող շաւիղը, որ տանում էր դէպի աւազակների բնակարանը: Այդ լեռնային շաւիղը տեղ-տեղ կորչում էր խստութեամբ աճած խոտաբոյսերի մէջ եւ դարձեալ յայտնվում էր: Նէնէն գնում էր իմ մօտով եւ համարեա կպած էր իմ կողքին: Նա իմ աջը բռնել էր իւր փոքրիկ ձեռքի մէջ, եւ մի այնպիսի հոգատարութեամբ պահում էր, կարծես թէ, վախենում էր, չլինի թէ թողնեմ նրան մենակ, գիշերային մթութեան մէջ, աւազակների բնակարանի մերձակայքում, իսկ ես փախչեմ:

Ցանկալի նա կանգ առեց, եւ ընդհատելով մեր մէջ տիրող լռութիւնը, ասաց.

— Դու լաւ մարդ ես:

— Ի՞նչ գիտես:

— Եթէ դու չլինէիր, այն աւազակը ինձ կը սպաննէր:

— Այդ Աստուած ազատեց քեզ:

— Նա քեզ ուղարկեց, որ դու ինձ ազատես:

Այդ խօսքերի միջոցին նա իմ ձեռքը տարաւ եւ սեղմեց իւր բորբոքուած շրթունքի վրայ: Դա նրա լուռ շնորհակալութեան նշանն էր: Բայց ո՛վ կարող էր նախատգուշակել, որ այդ անմեղ աղջիկը, որը իւր սրտի բոլոր ջերմութեամբ երախտամտացած էր լինում ինձ. որպէս իւր կեանքի ազատչին, մի օր կը լինէր իմ փրկութեան հրեշտակը...:

— Ախ, ժլքան չիմար եմ ես, խօսեց նա յանկարծ մտաբերելով, — ես մինչեւ հիմայ չեմ հարցրել, թէ ինչպէս է քո անունը:

— Մուրատ:

— Մուրա՛դ, ինչ գեղեցիկ անուն է, ինչպէս հնչատարանվում է:

Մահուան երկիւղը այնքան տիրել էր խեղճ աղջկայ սրտին, որ նա ամեն անգամ, երբ մտաբերում էր իւր հետ կատարուած անցքը, հարցնում էր.

— Մուրա՛դ, դու ինձ չես սպաննի, այդպէս չէ՞:

— Ես քեզ իմ հոգու պէս կը պահեմ:

Նա նայեց իմ երեսին եւ նրա աչքերը վառուեցան ուրախութեան բոցով: Նա գոհ էր. նա ապահով էր: Անտէր, անխնամ, թափառաշրջիկ, բախտի կամքին թողած որբիկը այժմ մի պաշտպան ունէր:

Անտառի խորքից նշմարուեցաւ ճրագի աղօտ լոյս:

— Տէ՛ս, այնտեղ են... ցոյց տուեց Նէնէն:

Շաւիղը, որ տանում էր դէպի այդ կողմը, բոլորովին անհետացաւ մացառների մէջ: Մենք դժուարութեամբ կարողանում էինք առաջ գնալ: Նէնէի առանց գրան եւս քրքրուած հագուստը, բռնելով փշոտ թփերից, պատառոտվում էր:

— Դու այստեղ կը սպասես, մինչեւ ես կը վերադառնամ:

— Ո՛ւր ես գնում, հարցրեց Նէնէն դողդոջուն ձայնով:

— Այնտեղ, որտեղից երեւում է ճրագի լոյսը:

— Ախ, մի գնացէք այնտեղ... մի մտէք նրանց մօտ...:

Նրան միամտացրի, ասելով, թէ պէտք է հեռուից միայն նայեմ նրանց բնակարանին, եւ այնքան գաղտնի կերպով, որ ինձ տեսնել չեն կարող: Նա հանգստացաւ: Նրեւում էր, որ Նէնէն այնքան երկչոտ չէր, որքան ես կարծում էի: Նա մտածում էր իմ մասին, չլինի թէ վտանգի հանդիպէի: Խեղճ աղջիկ, այն ինչ զգացմունք

էր, որ զարթեցրեց նրա մէջ մի այդպիսի կարեկցութիւն դէպի ինձ։

Նա ձեռց թուփերի մէջ, ասելով, թէ հեռուից կը դիտէ ինձ։ Ես ուղեցի իմ ընթացքը դէպի այն կողմը, ուսկից նշմարվում էր լոյսը։ Քառորդ ժամից յետոյ երեւաց մի խրճիթ, որ թաղնուած էր ծառերի ու պատատուկների մէջ։ Ամենայն զգուշութեամբ, առանց մի թեթեւ շշուկ անգամ հանելու, մօտեցայ։ Ընշմարուող լոյսը դուրս էր ցոլանում միակ պատուհանից որ շատ բարձր չէր գետնի մակերեւոյթից։ Այդ ծակից կարելի էր դիւրութեամբ հետազօտել խրճթի ներսը։ Ի՞նչ եմ տեսնում։ — Մի քանի ուրախ դէմքեր բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը, ուտում էին ու խմում էին։ Այդ հարբած, մոլեգնած հասարակութեան աղմուկն ու աղաղակը չէր թողնում մի բառ անգամ որոշել նրանց խօսակցութիւնից։ Մի քանի րոպէ ես ականջ էի դնում, բայց իմ ականջներին չէի հաւատում։ Ծէր Աստուած, այդ ի՞նչ բան է։ Իմ ականջին դիպան Յաչատուր, Համբարձում, Մնացական անունները։ Դրանք հայի անուններ էին։ Ես լսում էի հայոց ձայները, հայոց խօսքերը, իսկ եւ իսկ այն բարբառով, որպէս խօսում էին իմ հայրենիքում ...։

Ինձ համար դրանց ինչ տեսակ մարդիկ լինելը արդէն պարզուած էր։ Շուտով թողեցի խրճիթը եւ հեռացայ, որովհետեւ չէի ուզում Նէնէին երկար սպասել տալ։ Նրա ուրախութեանը չափ չկար, երբ ողջութեամբ վերադարձայ նրա մօտ։ Նա այժմ միամտաբար սկսեց դովել իմ քաջութիւնը։

— Դու զօհաղ տղայ ես, Մուրադ, ասաց, — գնացիր նրանց բնակարանի մօտ ու քեզ ոչինչ չկարողացան անել։

Մենք շտապեցինք քաւոր Պետրոսի մօտ։ Նա անհամբերութեամբ սպասում էր մեզ։ Ես պատմեցի բոլորը, ինչ որ տեսայ, ինչ որ լսեցի խրճիթում։ Նրա խոժոռ դէմքի վրայ երեւացին մի տեսակ ցնցումներ, որ արտայայտութիւն էին նրա սրտի բերկրութեանը։

— Դա խաչագողների մի նշանաւոր որջ է, ասաց նա մի առանձին բաւականութեամբ։ — Ես այդ մարդիկներին որոնում էի ...։

Թ.

ԽԻՂՃՍ ԶԱՐԹՆՈՒՄ Է

Միւս օրը առաւօտեան քաւոր Պետրոսը ասաց ինձ հետեւեալ խօսքերը.

— Մուրադ, ես տեսնում եմ, որ Աստուած մեզ հետ է. մեր գործը օրըստօրէ յաջողութիւն է խոստանում: Ես վաղուց որոնում էի այդ մարդիկներին, վերջապէս բախտը մեզ հանդիպեցրեց նրանց: Նրանք խիստ համաձայն եւ ընդունակ մարդիկ են: Նրանց ձեռքով կարելի է միլիոններ դիզել: Գնանք եւ միանանք նրանց հետ, մենք սիրով կ'ընդունուենք նրանց ընկերութեան մէջ:

Երեւում էր, խօսակցութեան առարկան խիստ մօտ էր քաւոր Պետրոսի սրտին, այդ պատճառով նա այնպէս երկար ձգեց իւր ճառախօսութիւնը: Ես ես, համոզուած լինելով, որ նա ամէն բանի մէջ իմ բարին է ցանկանում, ընդունեցի նրա առաջարկութիւնը:

— Բայց մէկ դժուարութիւն կայ, ասաց նա:

— Ի՞նչ դժուարութիւն:

— Այդ աղջիկը...:

Նա ցոյց տուեց Նէնէի վրայ, որը դեռ քնած էր:

— Նա ինչո՞վ կարող է արգելք լինել մեզ:

— Ամէն բանով:

— Ես չեմ հասկանում:

— Ուրեմն լսի՛ր: Այդ աղջկայ կեանքը ազատելու համար, դու սպաննեցիր այն մարդուն, որը յիշեալ ընկերութեան անդամ էր: Այժմ մենք ցանկանում ենք նրանց հետ միանալ: Մտածի՛ր, նրանք կարող են վատահութիւն ունենալ դէպի մեր հաւատարմութիւնը:

Ես ոչինչ չգտայ պատասխանելու: Նա շարունակեց.

— Մենք ի՞նչպէս կարող ենք այսօր միանալ նրանց հետ, երբ երէկ սպաննել ենք նրանց ընկերներից մէկին:

— Մենք կարող ենք այդ սպանութիւնը թագցնել:

— Այո, կարող ենք այդ սպանութիւնը թագցնել: Բայց քանի որ աղջիկը մեզ հետ կը լինի, թագցնել չենք կարող: Բայի դրանից, այդ աղջկայ մասին նրանք կասկած ունէին, թէ կը մնանէ իրանց, եւ այդ պատճառով վճռեցին նրա մահը: Աղջիկը դեռ կենդանի է, ուրեմն նրանց կասկածը կը ճիշդ դարձեալ կասկած: Իսկ երբ մենք կը միանանք նրանց ընկերութեան հետ, եւ այդ աղջկան մեզ հետ կը տեսնեն, արդեօք մեր անձը չի՞նք ենթարկի նոյն կասկածանքին, որ նրանք ունէին այդ աղջկայ մասին:

— Մենք կարող ենք աղջկան մեզ հետ չտանենալ, այլ բաց թողնել, ուր որ ուզում է, թող գնայ:

Քաւոր Պետրոսը, որ ոչ մէկ խօսքի առջեւ կանգ չէր առնի, լուց, մտածութեան մէջ ընկաւ: Ես չէի հասկանում, թէ ինչո՞ւ նա այսպէս սատանայաբար ոլորում էր, քաշքշում էր իւր բացատրութիւնները, առանց իւր վերջնական միտքը յայտնելու: Ի՞նչ երկիւղ ունէր ինձանից: Վերջապէս փոքր առ փոքր յայտնեց նա իւր միտքը:

— Դու ասում ես, որ մենք կարող ենք աղջկան բաց թողնել, ուր որ ուզում է, թող գնայ: Բայց այդ անկարելի է: Ցիգանուհին երբէք չի մոռանայ վերաւո-

բանքը եւ իրան հասցրած անպատուութիւնը: Այդ մարդիկը, որպէս քեզ յայտնի է, անպատուել են այդ աղջկան, եւ մինչեւ անգամ պատրաստուել են սպաննել նրան: Այդ բոլորը չի մոռանալ նա, եւ պէտք է վրէժխնդիր լինի, պէտք է մատնէ նրանց: Իսկ մատնելով նրանց, կը մատնուենք եւ մենք, որովհետեւ նրանց խումբի մէջ կը լինենք, որովհետեւ կամենում ենք ընկերանալ նրանց հետ:

— Ուրեմն ի՞նչ պէտք է արած:

— Պէտք է անել այն, ինչ որ նրանք էին կամենում անել:

— Սպաննե՞լ...:

— Այո՛, սպաննել:

Առաջին անգամն էր, որ քաւոր Պետրոսի խօսքը ոչ միայն վատ տպաւորութիւն գործեց իմ վրայ, այլ կատաղութեան չափ գրգռեց իմ բարկութիւնը: Ես գոչեցի.

— Սպաննել նրան, որի կեանքը ազատել ես, — դա խղճի եւ աղնուութեան հակառակ բան է:

Մի դառն, արհամարհական ժպիտ երեւաց նրա դէմքին պէս սառն դէմքի վրայ:

— Խղճմտանք... աղնուութի՜ւն... բացականչեց նա, — ի՞նչ գեղեցիկ խօսքեր են... բայց նոյնքան դատապարտական, որքան ինքը՝ յիմարութիւնը...:

— Ինչո՞ւ:

Այդ հարցին պատասխանելու ժամանակ նա իր ձայնը մեղմացրեց:

— Դու դեռ տղայ ես, Մուրադ, եւ աշխարհը չես ճանաչում: Մարդ չէ կարող խղճմտանք եւ աղնուութիւն ունենալ այնպիսի ժամանակներում, երբ ամբողջ միջնորդը, որի մէջ ապրում է նա, վարակուած է անբարոյականութեամբ: Եթէ նա այնքան յիմար կը լինի, որ կը ցանկանայ աղնիւ լինել, անտարակոյս, ինքը իրան դժբախտութեան կը դատապարտէ: Այսպիսի հանգամանքներում, մարդ պէտք է խղճմտանք եւ աղնուութիւն ունենայ դէպի իւր անձը միայն եւ դէպի նրա բարօրութիւնը: Իսկ երբ մի ուրիշը արգելք է լինում իւր բարօրութեանը, պէտք է ոչնչացնէ նրան, որ ինքը կարողանայ ապրել, եւ լաւ ապրել:

Ես պատասխանեցի նրան կրօնական փաստերով.

— Դա Աստծուն ընդդէմ է, դա մեղք է, դա քրիստոնեայի գործ չէ:

— Ինչպէս կամենում ես, համարիր, բայց դժբախտաբար այդպէս է: Ես ճանաչում եմ միայն կեանքը եւ նրա պայմանները: Եթէ մի ծառ արմատախիլ չանես, նրա տեղը մի ուրիշը անկել չես կարող: Բոլոր աշխարհը այդ բնական օրէնքին է հետեւում, — մինը միւսին ոչնչացնում է, սպառում է, կլանում է, որ իւր գոյութիւնը պահպանէ: Դա կեանքի կռիւն է, եւ երբէք չի դադարի, քանի որ տեւում է կեանքը:

Ես չհակառակեցի քաւոր Պետրոսի այդ օտարոտի վարդապետութիւններին, որոնք ինձ բոլորովին անհասկանալի էին. ես միայն ցաւում էի Ենէնէի վրայ, այդ պատճառով հարցրի.

— Ի՞նչով է մեղաւոր այդ խեղճ աղջիկը, որ զոհ դնայ մեր զանազան սատանայական մեքենայութիւններին:

— Ոչնչով մեղաւոր չէ, պատասխանեց նա: — Բայց դա պէտք է զոհուի, որ մենք ապահով լինենք:

Համոզուած լինելով, որ երբէք չէ կարելի փոխել նրա երկաթի կամքը, ես սպիտակեցայ կեղծել, սպիտակեցայ խաբել նրան: Իմ ընդդիմադրութիւնը կարող էր

աւելի վատ հետեւանքի հասցնել: Նա պատրաստ էր թէ ինձ եւ թէ Նէնէին սպաննել, որ փարատուի իւր կասկածը, որ հաստատ կերպով կարողանայ սկսել այն գործը, որից միլիօններ էր սպասում:

Ես համաձայնութիւն ցոյց տուի:

— Ուրեմն տար աղջկան եւ հէնց այս առաւօտ մի տեղում ամփոփի՛ր...:

Արեւը դեռ նոր էր արձակել իւր առաջին ճառագայթները, թռչունները ուրախ-ուրախ ճըլ-ճըլում էին. ամեն տեղ զարթնում էր կեանքը իւր նոր, սքանչելի զուարճութեամբ: Իսկ ինձ հրամայում էին կործել մի անմեղ արարածի կեանքը...:

Ես մօտեցայ Նէնէին: Նա դեռ քնած էր սալլակի վրայ: Ի՜նչպէս քաղցր եւ հանդարտ քնել էր նա: Ինձ խիստ դառն էր խռովել դեռահաս կոյսի հանգստութիւնը: Ո՞վ գիտէ, ո՜րպիսի երազներ հրապուրում էին նրան: Նա ժպտում էր, նրա մարջանի պէս կարմիր շրթունքները շարժվում էին: Գուցէ նա այդ րոպէում համբուրում էր մէկին, որին սիրում էր: Նրբեմն արձակում էր ինձ անհասկանալի բառեր: Մէկի հետ խօսում էր նա: Ո՞վ գիտէ, գուցէ խօսում էր հէնց իւր ծնողների հետ, որոնց կորցրել էր: Նա իւր նուրբ թեւիկները տարածեց, երեւի, գրկում էր նրանց, եւ ահա նրա դէմքը պայծառացաւ ուրախութեան լուսով...:

Երկար զմայլած նայում էի նրա վրայ: Կիսամերկ կուրծքը խիստ մեղմ կերպով բարձրանում եւ իջնում էր: Շնչառութիւնը խաղաղ էր: Ցանկարծ նրան տիրեց մի տեսակ խռովութիւն: Երեսի վրայ երեւացին զայրացած ցնցումներ: «Հեռու, անիծեալ»... գոչեց նա եւ վեր թռաւ տեղից:

— Ա՜խ, դարձեալ այն աւազակը... բացականչեց նա ցաւալի ձայնով, սկսեց երկչոտ աչքերով նայել իւր շուրջը:

Երբ տեսաւ ինձ իւր մօտ կանգնած, հանգստացաւ:

— Ի՞նչ եղաւ այն աւազակը, հարցրեց ինձանից:

— Ո՞ր աւազակը:

— Այն, որ սպաննում էր ինձ:

— Դու երազի մէջ տեսել ես նրան, Նէնէ:

Յնեղծ աղջկայ երեւակայութիւնից չէր հեռանում չարագործի պատկերը, որը մի օր առաջ փորձում էր սպաննել նրան: Բայց նա չգիտէր, որ այժմ կանգնած էր իւր մօտ մի ուրիշ չարագործ, որին պատուիրել էին նոյն դահճի դերը կատարել:

— Դու այստեղ ես, ես էլ չեմ վախենայ... ասում էր նա, իւր մտերմութեամբ լի աչքերը դարձնելով դէպի ինձ:

Ո՜րքան կրակ կար այդ աչքերի մէջ, ո՜րքան խոր թափանցում էր նրանց փայլը իմ սրտի մէջ:

Մտածելով, որ մեր յամեցողութիւնը կարող էր շարժել քուրդ Պետրոսի կասկածը, ես հրաւիրեցի Նէնէին ինձ հետ գնալ անտառը տաւօտեան զբօսանքի համար: Նա հրաժարուեցաւ, ասելով.

— Չէ, անտառը չգնանք:

Նա վախենում էր հանդիպել աւազակներին: Ես հանգստացրի նրան, ասելով.

— Շատ հեռու չենք գնայ եւ ոչ քեզ այն աւազակների կողմը կը տանեմ:

Նա համաձայնուեցաւ:

Գեղեցի՜կ էր այն առաւօտը: Ո՜րքան ախորժ ազդում էր հովասուն օդի թարմութիւնը, խնկարկուած բիւրաւոր

ծաղիկների անուշհոտութեամբ։ Ի՜նչպէս ուրախ երգում էին անհոգ թռչունները։ Եւ ո՜րքան ծիծաղկոտ փայլում էին արեգակի առաջին ճառագայթները ցողազարդ տերեւների վրայ։ Ամեն ինչ սքանչելի էր, ամեն ինչ խորին, անսահման բերկրութեամբ զուարճանում էր բնութեան սրբազան տաճարի մէջ։ Տխուր էր միայն իմ սիրտը...։

Նէնէն շուտով նկատեց այդ, եւ երբ փոքր հեռացանք մեր իջեւանից, հարցրեց նա․

— Դու սիրո՞ւմ ես ծաղիկներ։

— Սիրում եմ։

— Ես քեզ համար մի լաւ փունջ կը պատրաստեմ․ ես իմանում եմ գեղեցիկ փունջեր շինել։ Իմ հայրը մի ժամանակ մի պարտիզպանից գնում էր մեծ քանակութեամբ զանազան տեսակ ծաղիկներ, ես փունջեր էի պատրաստում, ածում էի զամբիւղի մէջ, եւ փողոցներում ման ածելով, վաճառում էի։

Ես ժամանակ չունէի պատասխանելու Նէնէի այս տեսակ քնքշութիւններին․ ինձ զբաղեցնում էր այն միտքը, թէ ի՞նչ պէտք էր անել խեղճ աղջկայ հետ։

— Նէնէ, հարցրի նրանից, — այդ անտառում բնակիչներ կա՞ն։

— Այն աւազակները...։

— Բացի նրանցի՞ց։

— Բաւական հեռաւորութեան վրայ գտնվում է մի փոքրիկ գիւղ։

— Իսկ մօտի՞կ տեղերում։

— Մի տնակ կայ, ուղիղ ծովի ափի մօտ։

— Ո՞վքեր են բնակվում տնակի մէջ։

— Երկու հոգի միայն, — մի ալեւոր մարդ եւ մի պառաւ կին։

— Ի՞նչպէս մարդիկ են։

— Բարի ձկնորսներ են։

— Քեզ ճանաչո՞ւմ են։

— Ճանաչում են։ Ամեն անգամ, երբ պատահում էր ինձ մտնել նրանց տնակը, կերակրում էին ինձ, հագուստ էին տալիս։

— Կարո՞ղ ես ինձ տանել այնտեղ։

— Կարող եմ։

Մինչեւ ձկնորսի տնակը հասնելը, ես ընկղմուած էի խառն մտածութիւնների մէջ։ Նէնէին սպանելու մտքից շատ հեռու էի։ Այժմ նրա կեանքը նոյնքան թանգագին էր ինձ համար, որքան իմը։ Բայց ինձ համար անհասկանալի էր մի բան, թէ այդ ի՞նչ փոփոխութիւն էր, որ կատարուեցաւ իմ մէջ։ Ի՞նչու իմ ձեռքերը այս անգամ դողում էին արիւնոտ գործում։ Ո՞վ մեղմացրեց իմ բնաւորութեան վայրենութիւնը։ Մի՞թէ կնոջ շունչի կախարդական ազդեցութիւնը զարթեցրեց իմ մէջ քնած խիղճը։ — Այդ բոլորը դեռ անորոշ մթութեան մէջ էր ինձ համար։ Միայն ես զգում էի մի բան, — զգում էի, որ իմ սիրտը կապուած էր այդ անբախտ աղջկայ հետ։ Արդեօք սիրում էի նրան։ Ո՛չ։ Իմ զգացմունքը աւելի ցաւակցական էր, աւելի բղխում էր կարեկցութիւնից դէպի նրա թշուառ վիճակը։ Նէնէն որբ էր, Նէնէն անտէր էր, Նէնէին ես ազատեցի մահից, եւ մի ներքին ձայն ասում էր ինձ, որ պէտք է շարունակեմ նրա պաշտպանը լինել։

Միւս կողմից, ես այժմ զգում էի մի տեսակ ատելութիւն դէպի քաւոր Պետրոսը։ Կարծես Նէնէն խլեց իմ աչքերից այն դիւթական քօղը, որ մինչեւ այսօր թոյլ չէր տալիս ինձ նկատել այդ հրէշաւոր մարդու բարոյական այլանդակութիւնը։ Ոչինչ չէր կարող այնպէս համոզել

կերպով բացատրել ինձ նրա բարբարոսութիւնը, որպէս այն խօսքը, որով հրամայեց ինձ սպաննել Ենկէին: «Դրանից լաւ առիթ գտնել չեմ կարող, մտածում էի ես, — կը վեր առնեմ Ենկէին, կը հեռանամ, եւ կ'ազատուեմ այդ չարագործից»...:

Բայց իսկոյն երեւան էին գալիս՝ աղքատ մայրս, քոյրերս եւ վերջապէս իմ նաղելի Սառան: Դրանք սպասում էին իմ լի քսակով վերադարձին: Իսկ իմ վաստակած բոլոր արծաթը քաւոր Պետրոսի մօտ էր գտնվում: Բաժանուելով նրանից, պէտք է կորցնէի իմ ամբողջ հարստութիւնը: Ի՞նչպէս թողնէի, ի՞նչպէս հեռանայի նրանից: Շահասիրութիւնը եւ այդ դէպքում կուրացրեց ինձ... ես մնացի անվճռականութեան մէջ...:

Այդ բոլոր խորհրդածութիւնների մէջ մի բան, որ ես որոշեցի անպատճառ բաժանուել քաւոր Պետրոսից: Բայց մտածեցի, թէ նախ պէտք է Ենկէին յանձնել ձկնորսին պահելու համար, եթէ կը գտնեմ նրան այնպիսի բարի մարդ, որպէս պատմում էր Ենկէն: Իսկ յետոյ կ'աշխատեմ մի կերպով քաւոր Պետրոսի ձեռքից դուրս բերել իմ արծաթը, որ նա ոչինչ չհասկանայ: Երբ այդ կատարուած կը լինի, այն ժամանակ կ'առնեմ Ենկէին եւ կը հեռանամ մի օտար աշխարհ եւ այնտեղ նրա կեանքը ապահով վիճակի մէջ կը դնեմ:

Բայց ես չգիտէի, արդեօք Ենկէն կը համաձայնուէր մնալ ձկնորսի տնակում եւ սպասել ինձ, մինչեւ ես քաւոր Պետրոսի հետ հաշիւները վերջացնէի: Նրան փորձելու համար ասեցի.

— Ենկէ, մենք ուրիշ տեղ պիտի գնանք, դու չես կարող միշտ մեզ մօտ մնալ: Հիմայ ես քեզ ազատ եմ թողնում, ուր որ ուզում ես, գնա:

— Ես քեզանից չեմ բաժանուի:

— Ի՞նչու:

— Ես հիմայ շատ եմ վախենում:

— Առաջ էլի՞ր վախենում:

— Չէի վախենում, նրա համար որ, էլի իմանում, որ մարդիկ այդքան վատ են լինում...:

Նա ափնաքում էր իրան չարչարող աւազակների վրայ:

— Կարելի է ես էլ վատ եմ:

— Դու լաւ մարդ ես. ես քեզանից չեմ վախենում:

— Ես հեռու երկիր պիտի գնամ:

— Ուր որ գնաս, կը գամ քեզ հետ:

— Բայց եթէ ինձ այստեղ:

— Ես էլ կը մնամ քեզ մօտ:

— Մենք տուն չունենք:

— Այդ անտառի մէջ մեզ համար մի խրճիթ կը շինենք, նրա մէջ կ'ապրենք:

Նա գարձեալ յիշեց աւազակներին եւ խօսքը փոխեց.

— Չէ, հեռու, այստեղից շատ հեռու գնանք:

Խեղճ աղջիկ, ի՞նչ էր, որ նրան այդպէս կապել էր հետ. արդեօք սէրը, արդեօք երախտագիտական զգացմունքը, որ ես նրա կեանքը ազատեցի մահից: Այդ հարցերը քննելու համար ես ոչ միջոց ունէի, եւ ոչ ժամանակ: Ես միայն մտածում էի Ենկէի կեանքը գոնէ առժամանակ ապահով վիճակի մէջ դնել, մինչեւ քաւոր Պետրոսի հետ գործերս վերջացնէի: Ինձ հրամայուած էր սպաննել նրան, եթէ ես այդ հրամանը չկատարէի, անտարակոյս կը կատարէր նա, որ հրամայեց ինձ: Աղջիկը չէր կարող ազատուել քաւոր Պետրոսի գազանութիւնից, եթէ նա հասկանար, որ տակաւին կենդանի է մնացել նա:

Մենք այժմ գանվում էինք լեռնային բարձրութեան վրայ: Մեր առջեւ բացուեցաւ անսահման մոյգ-ալծաթափայլ տարածութիւն — ծովը:

— Հիմայ մօտեցանք ձկնորսի անակին, ասաց Նէնէն:

— Քեզ կը տանեմ նրա խրճիթը:

— Ես այնտեղ մենակ չեմ մնայ:

— Ես շուտ-շուտ քեզ մօտ կը գամ:

— Ամեն օր, հա՛:

— Հա՛, ամեն օր:

Մենք պէտք է իջնէինք լեռնային զառիվայրը, որ տանում էր դէպի ծովեզերը: Անտառը այստեղ վերջանում էր, սկսվում էին մանր թուփեր միայն: Այդ թփերի մէջ թագնուած էր ձկնորսի խրճիթը, ոչ այնքան հեռու ծովի ափից: Այդ մենաւոր խրճթի մէջ բնակվում էր այն գաղտնաճաճուկ մարդը, որի մասին շրջակայքում ոչինչ տեղեկութիւն չունէին, թէ ո՞վ է նա, ո՞րտեղից է եկել, կամ ի՞նչ մարդ է:

Ես գայ նրան իւր պառաւի հետ այնպէս բարի, որպէս պատմել էր Նէնէն: Ուրանք խիստ սիրով ընդունեցին իմ առաջարկութիւնը, մանաւանդ երբ պատմեցի անբախտ աղջկայ աղէտալի անցքը:

— Որդի չունէինք, Աստուած մեզ որդի ուղարկեց, ասաց Ծերունին, — կը պահենք մեզ մօտ, կը անուցանենք, գուցէ մի ժամանակ բախտաւոր կը լինի նա:

Ես շատ էի, գիտէի, որ քաւոր Պետրոսը որպիսի անհամբերութեամբ սպասելիս կը լինի ինձ: Ես առաջարկեցի ձկնորսին իմ ոսկով լի քսակը, բայց նա հրաժարուեցաւ ընդունելուց: Երբ պատրաստվում էի հեռանալ, Նէնէն հարցրեց.

— Ե՞րբ կը գաս:

— Շուտ կը գամ: Բայց դու այդ խրճիթից չի պիտի հեռանաս:

— Երբ դու ինձ հետ չես լինի, ես ոչ մի տեղ չեմ գնայ:

Բաժանման րոպէին խիստ զգալի եղաւ: Նէնէն չկարողացաւ զսպել իւր կրքերը: Նա քարշ ընկաւ իմ պարանոցից, արտասուքը հեղեղի նման թափվում էր նրա աչքերից, եւ սրտաշարժ հեկեկանքով ասում էր. "Մի գնա, ինձ մենակ մի թողնիր„...:

Ձկնորսը եւ նրա պառաւը հազիւ կարողացան հանգըստացնել նրան: Ես դարձեալ խոստացայ, որ նրան մենակ չեմ թողնի եւ ամեն օր կ'այցելեմ ձկնորսի խրճիթը: Ես բաժանուեցայ:

Գալով քաւոր Պետրոսի մօտ, նրա առաջին հարցը եղաւ.

— Ի՞նչ արեցիր:

— Սպանեցի:

— Իսկ դի՛ակը:

— Ձգեցի ծովը:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ա.

ՆՈՐ ՇՐՋԱՆ



Ի քանի րոպէից յետոյ սայլակը պատրաստ էր։ Քաւոր Պետրոսը հրամայեց քշել դէպի խաչագողների բնակարանը։ Նա լուռ էր, ինչպէս առհասարակ լինում էր, երբ պատրաստվում էր սկսել մի նոր ձեռնարկութիւն։ Նա նոյնպէս լուռ էլ, բայց ես ոչինչ ձեռնարկութեան մասին չէի մտածում. իմ միտքը գրաւել էր գեղեցիկ Նէնէն։ — Խաչագողների բնակարանը ցերեկով բոլորովին ուրիշ տեսք ունէր։ Թաղնուած պատատուկ բոյսերի մէջ, հովանաւորուած դարեւոր ծառերով, նա աւելի նմանում էր գաղանների որջին, որ գտնվում է ժայռերի խոռոչների մէջ։ Նրա շուրջը ընկած էին քարերի ահագին բեկորներ, որոնք պոկուելով մերձակայ լեռնից, ցած էին գլորուել, բոլորովին մերկ թողնելով ծառերի արմատները։ Անծանօթ մարդը հազիւ կարող էր

դուշակել, թէ այդ գետնափոր որջի մէջ բնակվում էին մարդիկ: Բայց ծուխը, այդ մարդկային բնակութեան ազդարար նշանը, միայն խուլ թփերի միջից մխացող ծուխը, յիշեցնում էր, թէ այդ ծառախիտ անտառների դարեւոր լռութեան մէջ եւս տիրում էր մարդու շունչը:

Բայց ինչ ծուխ էր այդ: Ծուխը բարձրանում էր զանազան կէտերից: Ձորի մէջ զանազան տեղերում ինչոր այրվում էր: Ու բարձրացած ծուխը, միախառնուելով, կազմում էր թանձր, թխագոյն մառախուղ ամբողջ ձորի վրայ. — Այստեղ ածուխ էին պատրաստում:

Գիշերով ես տեսայ խաչագողներին թուով աւելի շատ. իսկ այժմ երեք հոգի միայն գտանք նրանց բնակարանում: Նրանցից մէկը նստած կարկատում էր ջորիների փալաններ եւ ձիանների մաշուած սայլքը, միւսը մանր աւազով մաքրում էր մի ժանգոտած հրացան, իսկ երրորդը դեռ քնած էր:

Որջիթը ներսից բոլորովին նման էր ածխագործների տնակին, որ գտնվում է անտառների մէջ: Այստեղ եւ այնտեղ ածած էին մրոտած տոպրակներ, փայտ կտրելու տապարներ, կրակ խառնելու երկաթեայ անթրոցներ, հող փորելու բահեր եւ այլն: Ածուխի սեւ փոշին նստած էր թէ՛ բնակիչների եւ թէ՛ բնակարանի վրայ: Բոլորը, բոլորը համապատասխանում էր սեւ արհեստի սեւ պարապմունքին:

Ու իրաւ, այդ մարդիկը ածխագործներ էին, կապալով վեր էին առել անտառի մի մասը, ածուխ էին պատրաստում: Ծուխը ափի մօտ կանգնած էին նրանց մի քանի նաւակները, որոնք տանում էին ածուխը մերձակայ քաղաքներում վաճառելու համար: Մի քանի խումբ ջորիներ տանում էին նոյն մթերքը ցամաքի ճանապարհով դէպի շրջակայ գիւղերը եւ փոքրիկ քաղաքները, կամ հասցնում էին մինչեւ ծովեզերը նաւակների մէջ դնելու համար:

Մեր անակնկալ յայտնութիւնը նախ խռովութիւն պատճառեց նրանց, բայց երբ մեզ ճանաչեցին, էլ չափ չկար նրանց ուրախութեանը: Քաւոր Պետրոսի մի քանի կախարդիչ խօսքերը բաւական եղան գրաւելու նրանց վստահութիւնը: Ու ահա նրանց մէկի ձայն տալովը խրճթի մի անկիւնում շարժուեցան մերկ յատակի վրայ փռած ցամաք տերեւները, տախտակամածից բարձրացաւ մի դռնակ եւ ստորերկրեայ վերապի միջից դուրս երեւաց մի գլուխ: Նա մի քննողական հայեացք ձգելով մեզ վրայ, դուրս եկաւ փոսից: Նրանից յետոյ յայտնուեցաւ երկրորդը, երրորդը: Այդ նորերի թէ հագուստի գունաւոր բծերից եւ թէ՛ ձեռքերի ներկերից երեւում էր, որ նրանք այն ստորերկրեայ վերապի մէջ ինչ-որ ներկերով կամ գոյներով աշխատում էին: Դրանք ածխագործներ չէին:

Նրանք ուրախութեամբ ընդունեցին քաւոր Պետրոսին, համբուրուեցան նրա հետ եւ խնդրեցին նստել: Քաւոր Պետրոսը ներկայացրեց եւ ինձ, մի քանի կարմիր խօսքեր աւելացնելով իմ ընդունակութիւնների մասին:

Ինձ ճանաչեցին իմ հօր անունով, որովհետեւ ինձ տեսել էին շատ փոքր հասակում:

Դրանք իմ հայրենակիցներն էին: Նրանց գլխաւորը, որ կոչվում էր Նազար, դարձաւ դէպի քաւոր Պետրոսը, հարցնելով.

— Մենք վաղուց սպասում էինք ձեզ, Պետրոս եղբայր, ինչու այդքան ուշացաք:

— Երկար պատմութիւն է, պատասխանեց քաւոր Պետրոսը, — այդ մասին յետոյ կը խօսինք: Դուք այն ասեցէք, ինչպէս են տղերքը, լա՞ւ են, առողջ են:

— Լաւ են, բայց . . . :

— Ի՞նչ է պատահել:

Նաղարը պատմեց, թէ իրանց ընկերներից մէկը մի յանձնարարութեամբ ուղարկուած էր մի տեղ, հիմայ նա անհետացել է, եւ նրա մասին խիստ անհանգիստ են:

Այդ պատմութեան միջոցին քաւոր Պետրոսը նայեց իմ երեսին, որ տեսնէ իմ դէմքի արտայայտութիւնը: Իմ մէջ ոչինչ խռովութեան նշան չգտաւ: Պատմութիւնը Ենէնէին սպաննելու յանձնարարութեամբ ուղարկուած աւազակի մասին էր, որ հոգին տուել էր իմ տապարի հարուածների տակ: Բայց ես նրա մարմինը մի այնպիսի տեղում էի ամփոփել, որ ինքը սատանան չէր կարող գտնել:

Քաւոր Պետրոսը իրան ձեւացրեց որպէս սաստիկ հետաքրքրուած: Ղաչագողի ընկերի անհետանալը, իրաւ որ, սաստիկ անհանգստութիւն է պատճառում մնացածներին:

— Ո՞վ էր, ի՞նչ յանձնարարութեամբ եւ ո՞րտեղ էր ուղարկուած:

Նաղարը պատմեց, թէ նրան տուել էին մի աղջիկ, որ տանէ, անտառում "անհետացնէ", բայց աղջկայ հետ ինքն էլ անհետացաւ:

— Աղջիկը դեղեցիկ էր, հարցրեց քաւոր Պետրոսը:

— Գեղեցիկ էր:

— Իսկ տղան երիտասարդ էր:

— Երիտասարդ էր:

— Այսպիսի գործը երիտասարդին չեն յանձնում, շատ հակառակ է, որ երկուսն էլ հաշուել են միմեանց հետ եւ հեռացել են ամէն գիտէ ո՞րտեղ:

— Մենք արդէն մարդիկ ուղարկեցինք նրանց որոնելու, պատասխանեց Նաղարը:

— Ի զուր, պէտք էր նրանց թողնել իրանց քէֆին, ինչ որ ուզում են թող անեն:

Նաղարը ասաց, կան ուրիշ պատճառներ, որ այդ անցքը խիստ վտանգաւոր են դարձնում, եւ խոստացաւ, որ այդ պատճառների մասին յետոյ կը խօսէ քաւոր Պետրոսի հետ: Իսկ մենք ճանապարհից նոր եկած լինելով, եւ մանաւանդ ճաշի ժամանակ լինելով, այժմ սկսեցին հոգ տանել մեր հանգստութեան մասին:

Մեր ձիանելը եւ սայլակը տեղաւորեցին՝ ես ինքս էլ չհասկացայ թէ որտեղ. երեւում էր, անտառի մէջ ուրիշ խորշեր եւս ունէին: Մեր իրեղէնները բերեցին խրճիթը: Շաշի սեղանը արդէն պատրաստ էր: Ամենքը բոլորեցին սեղանի շուրջը, մեզ ամենապատուաւոր տեղը տալով: Զնայելով, որ նրանք բնակվում էին մի այնպիսի առանձնացած տեղում, լեռների մէջ, անտառների խորքում, բայց սեղանի վրայ յայտնուեցան այնպիսի ուտելիքներ եւ այնպիսի ըմպելիքներ, որ այդ կողմերում հազուագիւտ էին: Երեւում էր, որ քաղաքների հետ խիստ յաճախ յարաբերութիւններ ունէին:

Ընկերութիւնը սկզբում, ըմպելիքների գաւաթների համեմատ, հետզհետէ կենդանանում էր զանազան հանաքներով եւ զուարճախօսութիւններով: Բայց գնալով աւելի ախուր կերպարանք ստացաւ, երբ նրանք սկսեցին հարցնել իրանց հայրենիքի եւ ընտանիքների մասին: Մենք Պարսկաստանից աւելի յետոյ դուրս եկած լինելով, քան թէ նրանք, ունէինք շատ նորութիւններ նրանց համար:

— Մեր Մկրտիչը մեծացել է, հարցնում էր մէկը: Մկրտիչը հարցնողի որդին էր, որին օրօրոցի մէջ թող-

նելով, հայրը հեռացել էր հայրենի երկրից, եւ այն օրից ապրում էր պանդխտութեան մէջ:

— Մկրտիչը այժմ պսակուած է, երեխայ ունի, պատասխանում է քաւոր Պետրոսը:

Հայրը ուրախանում է:

— Մայրս իսօ շատ չէ պառաւել, հարցնում է մի ուրիշը:

— Մայրդ կեանքը քեզ բաշխեց. արդէն եօթնեղորդ տարին է, որ պառկած է հողի տակ.

Որդին տխրում է: Մի քանի ձայներ կրկնում են՝ "Աստուած հոգին լուսաւորեսցէ„...:

— Մեր Խաչօի աղջիկը ինչ է անում, հարցնում է մի այլը:

— Դա իւր կնոջ մասին է հարցնում:

— Խաչօի աղջիկը հինայ ուրիշ մարդու է գնացել:

— Ի՞նչպէս, գոչում է զարմացած ամուսինը:

— Չէս հասկանում: Երկար սպասեց քեզ, ոչ լուր ստացաւ, ոչ փող ստացաւ, վերջը յուսահատուելով, պսակուեցաւ ուրիշ մարդու հետ:

Դժբախտ ամուսինը արձակում է խորին հառաչանք եւ լռում է...:

— Մեր Արեւնազը ինչ է անում, հարցնում է մի ուրիշը իւր դատեր մասին:

— Արեւնազին թուրքերը փախցրին:

— Աշխ, քօռանամ ես... բացականչում է հայրը:

— Երեւի, շատ գեղեցիկ աղջիկ էր դարձել, հարցնում են միւսները:

— Տգեղին չեն փախցնի, պատասխանեց քաւոր Պետրոսը:

— Իւր նմանը չկար մեր գիւղում, մէջ մտայ ես:

— Իսկ մեր Գասպարը, հարցնում է մէկը իւր եղբօր մասին:

— Նա հինայ գիւղի քահանան է:

— Մեր այգու խնձորենիները լաւ բերք տալիս են, հարցնում է քահանայի եղբայրը:

— Բերքը լաւ է, բայց պտուղը օտարն է ուտում:

— Ի՞նչպէս:

— Քո պարտքերի փոխարէն տիրեցին:

— Ափսո, այն խնձորենիները ես իմ ձեռքով էի տնկել, հէնց այն տարում, երբ հեռացայ մեր երկրից:

Խօսակցութիւնը ընտանեկան անցքերից անցաւ աւելի հասարակական գործերի վրայ:

— Գիւղի տանուտէրը ո՞վ է հիմայ:

— Աղախանը:

— Այն քօռ անիրաւը դեռ գիւղը քանդո՞ւմ է:

— Բոլորը տանջուած են նրա ձեռքից:

— Երկրի կառավարիչն ո՞վ է:

— Ս... խանը:

— Անիծածը կաշառքից չի կշտանում...:

— Մենք էլ նրա համար ենք վաստակում...:

— Փողի տոկոսը քանո՞վ էր:

— Թումանին ամիսը մէկ կտան:

Վերջին խօսքը սարսափ ձգեց շատերի վրայ: Ներանք այսպիսի ծանր տոկոսներով պարտքեր ունէին իրանց հայրենիքում: Ամուսնի պարտամուրհակը կնոջը փոխել էին տալիս, եւ ամեն տարի տոկոսը բարձրանում էր դրամագլխի վրայ: Վաշխառուն հարստահարում էր դրանց, իսկ դրանք հարստահարում էին անմեղ, միամիտ մարդիկներին:

Ընդհատուած խօսակցութիւնը շարունակուեցաւ:

— Լուսին ինչ է անում:

Դա մեր գիւղի նշանաւոր գեղեցկուհիներից մէկն էր:

— Նա հիմայ լաւ բազար ունի... պատասխանեցի ես:

— Ի՞նչպէս:

Չե՞ս հասկանում...

— Ամօթ նրա տղամարդին, մի այնպիսի սիրուն կնոջը կարելի՞ է տասն տարիներով անտէր եւ քաղցած թողնել, ասաց նրանցից մէկը:

Կարծես, իրանց կնիկները տասն տարիներից աւել չէր, որ անտէր ու քաղցած էին մնացած:

Մի ուրիշը հարցրեց.

— Մեր սեւ շունը մնո՞ւմ է:

— Չէ, կեանքը տուեց քեզ:

Այդ լուրերը, որ քաւոր Պետրոսը հաղորդեց իւր սովորական սառնասրտութեամբ, յարուցին ոմանց մէջ ուրախութիւն, իսկ ոմանց մէջ տրտմութիւն: Ինձ խիստ զարմանալի էր թւում, երբ նկատում էի, որ այդ հոգով եւ սրտով քարացած մարդիկն էլ զգացմունք ունեն, կարող են ուրախանալ եւ տրտմել: Բայց շուտով ամեն ինչ մոռացուեցաւ, իբր թէ ոչինչ չէին լսել:

Ես չէի կարողանում զսպել իմ վրդովմունքը, երբ նայում էի այդ անփոյթ, անհոգ մարդկանց վրայ, որոնք օտարութեան մէջ մոռացել էին ամեն ինչ, որ իրանց համար ամենաթանգագինն էր: Ունենալ կին, որդիներ, ազգականներ, եւ նրանց երկար տարիներով թողնել անխնամ, գերի թուրքերի եւ պարսիկների ձեռքում, իսկ իւրեանք անհետանալ պանդխտութեան մէջ, — դա գերդաստանի հօր ամենասարսափելի անտարբերութիւններից մէկն է: Այդ մարդիկը, մտածում էի ես, ամենեւին գութ չունեն, նրանց մէջ մեռել է ծնողական սիրտը. Նրանց

զգալի չէ ոչ երեխայի ժպիտը եւ ոչ կնոջ արտասուքը, — երկուսն էլ կատարվում են նրանց աչքերից հեռու...:

Միթէ ես էլ նոյն դրութեան մէջ չէի գտնվում...:

Ես շատ լաւ էի հասկանում, որ աղքատութիւնն էր ստիպել դրանց թողնել իրանց հայրենիքը, թողնել իրանց ընտանիքը, եւ նոյն աղքատութիւնը իմ ձեռքս տուեց պանդխտութեան գաւազանը: Հայրենի երկրում չկարողանալով հայթայթել իրանց ապրուստը, նրանք հարկադրուել էին օտարութեան մէջ բախտ որոնել:

Արդար վաստակի նրանք ոչ միայն սովոր չէին, այլ եւ անընդունակ էին. չգիտէին որեւիցէ արհեստ, չէին վարժուած տոկուն աշխատանքի: Նրանց միտքը, նրանց ընդունակութիւնները բնականաբար սրուել, կատարելագործուել էին խաբեբայութիւնների մէջ, այն չափով, ինչ չափով որ զարգացել էր նրանց մէջ արծաթ որսալու անյագ ախորժակը, որի համար ներելի էին համարում ամեն միջոցներ, որքան եւ անազնիւ լինէին:

Մի անգամ քաւոր Պետրոսը խիստ իրաւացի կերպով նկատեց, թէ "արծաթը աղի ջուր է, որքան խմես այնքան կը ծարաւես„: Նոյն ծարաւը զգում էի եւ ես: Ահա, թէ ինչ էր, որ ինձ առժամանակ բաժանեց Նէնէից եւ ձգեց այդ անբարոյական հասարակութեան մէջ:

Ինձ բոլորովին զզուելի էր թւում այդ նոր շրջանը: Զարմանալի է, թէ ո՛րքան վայրենանում է մարդը լեռների եւ անտառների առանձնութեան մէջ. կերպարանքը, բնաւորութիւնն անգամ ամենակոպիտ ձեւեր են ստանում: Նրանց կոշտացած դէմքը, խառնուած մազերը, երեսների անախորժ արտայայտութիւնը, ճշմարիտն ասած, ինձ վրայ սարսափ էր բերում: Թէեւ մեզ, որպէս իրանց հայրե-

նակցին, ցոյց էին տալիս հիւրասիրութեան բոլոր պատրաստականութիւնները։

Ամենազարշելին այն էր, որ այդ մարդիկը ածխագործի սեւ փոշու տակ ծածկուած, կատարում էին մի այլ աւելի սեւ արհեստ...։

Ո՞վ մտցրեց իմ մէջ այդ փոփոխութիւնը։ — Ես պարտական էի Նէնէին, որ զարթեցրեց իմ մէջ զզուանք դէպի այդ մարդիկը, եւ ստիպեց սիրել գեղեցիկը ու լաւը...։

Բ.

ՔԱՋԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիշերը ի պատիւ մեր պատրաստուեցաւ ճոխ ընթրիք։ Ըմպելիների քանակութիւնը աւելի շատ էր։ Խաչագողները աւելի խմում էին, քան թէ ուտում էին։ Այժմ հաւաքուել էին եւ այն ընկերները, որոնք ցերեկով անտառի զանազան տեղերում ածուխ էին պատրաստում։ Բոլորի թիւը տասից աւել էր։ Երբ բաւական խմեցին, նրանցից ամեն մէկը սկսեց պատմել իւր կատարած քաջագործութիւններից մի անցք։ Աստուա՜ծ իմ, ի՞նչեր չէին պատմում նրանք. բոլորը, բոլորը չլսած եւ չտեսած բաներ էին...։ Ես, որպէս քաւոր Պետրոսի յառաջադէմ աշակերտներից մէկը, նոյնպէս շատ գործեր էի կատարել, բայց նրանց հետ համեմատելով, դեռ կատարեալ համբակ էի։

— Է՜հ, ասում էր մի ծերունի խաչագող արհամարհական ժպիտով, — այդ ի՞նչ գողութիւններ են, որոնցով պարծենում էք դուք։ Երբ ես երիտասարդ էի, գողացայ հնդկաց աստուծու աչքերը։

Ամենքը ծիծաղեցին. ծերունու ասածը շատերին անհաւատալի երեւաց։

— Երեխաները ու յիմարները ծիծաղում են ամեն բանի վրայ, երբ չեն հասկանում, պատասխանեց ծերունին, որին, ինչպէս երեւում էր, վիրաւորեց ընկերների

արհամարհանքը: — Ձեզ անհաւատալի է թուում իմ ասածը, ականջ դրէք, ես կը պատմեմ:

Նա սկսեց իւր պատմութիւնը այսպէս.

"Հնդկաց աստուածները մեր Աստուծոյ նման չեն. մերը աչքի չէ երեւում. իսկ նրանց աստուածները միշտ կանգնած են տաճարների մէջ, ամեն մարդ տեսնում է, հարցմունք է անում եւ պատասխան է ստանում: Ես մտայ այդ տաճարներից մէկի մէջ, ուր կանգնած էր գլխաւոր աստուածներից ամենամեծը ոսկեղէն հագուստով: Թէեւ ոսկին շատ սիրուն բան է, բայց ինձ աւելի գրաւեցին նրա գեղեցիկ աչքերը: Գեղեցիկ էին, աննման գեղեցիկ, ես խելագարի նման սիրահարուեցայ այդ աչքերի վրայ: Նրանք կազմուած էին երկու հատ խոշոր ալմաստներից եւ ճրագի նման վառվում էին: Ալմաստների իւրաքանչիւրը աղաւնու ձուի չափ կը լինէր: Այո, իմ սիրտը գրաւեցին այդ փայլուն աստղերը եւ ես կատարելապէս սիրահարուեցայ նրանց վրայ: Ե՛կ, մտածեցի, քեզ նուիրէ այդ աստուծոյ սպասաւորութեանը, որ այդպիսի գեղեցիկ աչքեր ունի: Ես ընդունուեցայ այնտեղ, ի՞նչ էք կարծում, ոչ թէ իբրեւ հասարակ սպասաւոր, այլ բրամին, — այսպէս են կոչվում նրանց քահանաները: Ես կատարում էի իմ պաշտօնը ամենայն ջերմեռանդութեամբ, ամենայն անձնանուիրութեամբ, այնպէս որ, փոքր ժամանակում գրաւեցի ոչ միայն իմ աստուծոյ ընդհը, այլ եւ ժողովրդի յարգանքը: Ինձ յանձնեցին տաճարի բանալիները եւ նրա հսկողութիւնը: Այդ տեւեց մի քանի ամբողջ տարիներ: Վերջը բրամինական կեանքը, անընդհատ աղօթքները, խիստ ճգնութիւնները ձանձրացրին ինձ: Ես վճռեցի վերադառնալ իմ հայրենիքը: Բայց ցանկալի էր ինձ ունենալ մի յիշատակ այն աստուծուց, որին այնքան

տարիներ ծառայել էի: Ես ընտրեցի աչքերը, որոնց վրայ միշտ սիրահարուած էի: Մի բարի գիշերուայ կատարուեցաւ այդ գործը: Բայց պետք էր պահել խոշոր ալմաստները: Սրունքներիս կաշին ծակեցի, ալմաստները դրեցի վէրքի մէջ, յետոյ լաւ փաթաթեցի: Այժմ սատանան էլ չէր կարող գտնել: Մնաք բարեաւ ասեցի իմ աստուծուն եւ հեռացայ: Հնդկաստանի անտառները խիստ հիւրընկալ ծոց ունեն փախստականների համար, եթէ առիւծների եւ վագրների ճանկը չընկնէ մարդ: Բայց իմ աստուծու օրհնութիւնը ինձ հետ էր, վտանգ չպատահեց: Ես իմ բրամինի հագուստը փոխեցի, եւ հալածուած պարիայի հագուստով շարունակեցի իմ փախուստը: Պարիային ոչ ոք չէ մօտենում . . . :

Ծերունին վերջացրեց. ամեն կողմից լսելի եղան զօվացական ձայներ. մի քանիսը ծափահարեցին:

Մի այլ խաչագող ասաց.

— Ես մի օր գողացայ մի մեխրագոյն աւանակ, եւ սեւ գունով ներկելով, ծախեցի դարձեալ իւր տիրոջը. նա չկարողացաւ ճանաչել իւր աւանակին:

— Կարծեմ ներկը աւելի թանգ արժեց քեզ, քան թէ այն փողը, որ դու ստացար, նկատեց նրան մէկը ծիծաղելով:

— Իրաւ է, ներկը աւելի թանգ արժեց, պատասխանեց նա, — բայց ես ընկերիս հետ գրաւ էի բռնել:

— Եւ դու կնքեցիր մեր ձակատին "էշ ներկող" անունը, վրաբերեց առաջինը:

Բոլորը ծիծաղեցին:

Մի ուրիշը պատմեց, թէ իւր կեանքում փոխել է տասն զանազան կրօնքներ եւ զանազան դաւանութիւններ: Շրջագայում ընդունել է մահմեդականութիւն եւ ամուս-

նացել է մի սէյիդի գեղեցիկ աղջկայ հետ։ Կիլիկիայի մէջ ընդունել է կաթոլիկութիւն եւ պսակուել է կաթոլիկ աղջկայ հետ. յետոյ մի կաթոլիկ գերապայծառից ստացել է ժողովարարութեան թուղթ, պտտել է Իտալիայում, Սպանիայում եւ Փրանսիայում, հաւաքել է ահագին հարստութիւն, այլեւս չի վերադարձել իւր կնոջ մօտ. Կիեւում ընդունել է օրթօդօքս եկեղեցու դաւանութիւնը, մի գեներալ նրա կնքահայր է դարձել, եւ ընծայելով մի նշանաւոր գումար, ամուսնացրել է իւր աղախնի հետ։ Իսկ Կ. Պոլսի մէջ ընդունել է բողոքականութիւն, տեղային միսիոնարների թղթով գնացել է Ամերիկա, փողեր է հաւաքել եւ ամերիկացի կին է ունեցել եւայլն։

Այդ մարդուն շուացրին, որովհետեւ խիստ հասարակ բան էր պատմում, որովհետեւ նրանց մէջ չկար մէկը, որ տասն անգամ կրօնը փոխած չլինէր։

Մի երիտասարդ խաչագող, բաւական գեղեցիկ դէմքով, շնորհալի, եւ աշխարհային կեանքի սովորած մարդ, պատմեց, թէ եւրոպական մի մայրաքաղաքում նա իրան ձեւացրեց իշխան Արարատի. ման էր գալիս թանգագին ակներով զարդարած խենջալով եւ նոյնպէս գոհարներով զարդարած, ոսկեայ քամարով. նրա կառապանի մօտ միշտ նստած էր լինում մի սեւամորթ արաբ։ Մի պարահանդէսի ժամանակ նրա վրայ սիրահարուեցաւ մի հարուստ կոմսի աղջիկ. խոստացաւ նրա հետ պսակուել, իսկ օրիորդի ծնողները խոստացան մեծ օժիտ տալ։ Օժիտի կէսը նա ստացաւ եւ վատնեց, բայց օրիորդի հետ չամուսնացաւ։ Խեղճ աղջիկը մեռաւ բարակացաւից, երբ տեսաւ իւր փեսային անյայտացած։

Այդ պատմութիւնը, որ շատ հետաքրքրական էր եւ շատ գեղեցիկ կերպով նկարագրեց երիտասարդը, նոյնպէս

անցաւ խիստ աննշան կերպով, իսկ մի քանիսի մէջ առաջացրեց արհամարհանք։ Որովհետեւ սիրային յարաբերութիւնները առհասարակ մի տեսակ թուլասրտութիւն էր համարվում ամէն մի խաչագողի համար, եւ մինչեւ անգամ ամօթ էր բերում նրան։ Խաչագողը կարող էր սէրը ընտրել որպէս միջոց մէկին կողոպտելու համար, իսկ ճշմարտապէս սիրել անվայել էր։ Երիտասարդի պատմութիւնից երեւաց, որ ինքն եւս սիրահարուած է եղել կոմսուհի օրիորդի վրայ։ Այդ պատճառով մէկը նկատեց նրան.

— Դուք այն ժամանակ արժան կը լինէիք գովասանութեան, երբ փոխանակ շուայլաբար վատնելու այն օրիորդի փողերը եւ փոխանակ նրա հետ սիլի-բիլի անելու, կը պսակուէիք նրա հետ, կը ստանայիք ամբողջ օժիտը եւ յետոյ բաց կը թողնէիք, կը հեռանայիք։

Այդ նկատողութիւնը ընդհանուր հաւանութիւն ստացաւ։

Մի զուարճալի խաչագող, որին աւել անունով կոչում էին “Էշի ականջ„, պատմեց, թէ իւր ընկերի հետ մի անգամ մտան մի աղքատ գիւղացու տուն։ Երկուսն էլ իրանց ձեւացրել էին վանական աբեղայ։ Տանը ոչինչ չգտան, բացի մի կացինից, որ դրած էր դրան մօտ։ Սկսեցին մաղթանք կատարել, երգելով հետեւեալ երգը.

Աբեղան երգեց.

“Էդա կացին, դրան տակին,
“Վեր ա՛ռ կոխէ մէջ տոպրակին.
“Ալէլուեա, ալէլուեա։

Ընկերը պատասխանեց.

“Պոչն երկէն ա անիրաւին,
“Չի պարտկուի մէջ տոպրակին.
“Ալէլուեա, ալէլուեա։

Արեղան շարունակեց.

"Վեր ած, զարկ ի դա քարին,
"Պոչը կորչի անիրաւին,
"Որ զարակուի մէջ տօպրակին.
Ալէլուեա, ալէլուեա":

"Նշի ականջի" պատմութիւնը, թէեւ մի քանիսի մէջ ծիծաղ շարժեց, բայց շատերին զզուանք պատճառեց, որովհետեւ խաչագողը չպիտի այն աստիճան ստորացնէ իրան, որ աղքատ գիւղացու խրճիթից մի կացին գողանայ: — Խաչագողը պէտք է մեծ որսերին հետամուտ լինի, ասեցին նրան:

Այդ պատմութիւնները, որքան եւ անհամակրութեամբ լսում էի ես, բայց դարձեալ գրգռեցին իմ ինքնասիրութիւնը, եւ ես պատմեցի իմ հերոսութիւններից մէկը, թէ որպէս քաւոր Պետրոսը թաղցրեց ինձ անդուկի մէջ, եւ որպէս ես կողոպտեցի հրէայ սեղանաւորի կրպակը: Ես սպասում էի որ իմ քաջագործութիւնը կը զարմացնէր բոլորին: Բայց մի խաչագող պատասխանեց ինձ ծիծաղելով.

— Դա մի հասարակ խաղ է, որ ամենքս խաղացել ենք: Բայց ես կը պատմեմ դրա նման մի բան, որ դուք գուցէ լսած եւս չէք: Նա պատմեց.

"Հարաւային Փրանսիայի քաղաքներից մէկում մենք մտանք մի եկեղեցի: Այդ քաղաքի կաթոլիկ ժողովուրդը այնքան կրօնամոլ էր, որ կարծես, ապրում էին եւ գործում էին միմիայն եկեղեցու համար: Քահանաները հոգու փրկութեան անունով առել էին ժողովրդի հարստութիւնը եւ նրանով զարդարել էին իրանց տաճարները: Արծաթեայ խաչերը, աշտանակները եւ զանազան սուրբ անօթները թիւ եւ չափ չունէին: Մենք երեք ընկեր էինք, մտածեցինք, թէ ինչ հնար գործ դնենք, որ այդ հարստութիւնից մի լաւ բաժին վեր առնենք: Մեր ընկերներից

մէկին ձեւացրինք մեռած, դրեցինք դագաղի մէջ եւ տարանք եկեղեցին: Այդ քաղաքում սովորութիւն կար, որ մի գիշեր մեռելը պէտք է մնար եկեղեցում: Գիշերը մեր մեռելը յարութիւն է առնում իւր դագաղից եւ հաւաքում է իւր մօտ խաչերից եւ անօթներից որը աւելի թանգագին էր: Միւս օրը մենք վեր առեցինք դագաղը, տարանք թաղելու: Այդ քաղաքում գետնի պակասութեան պատճառով աղքատ եւ պանդուխտ ննջեցեալներին տեղ չէին տալիս հասարակաց գերեզմանատունում, այլ դնում էին առանձին դամբարանի մէջ, որ յատկապէս աղքատների համար պատրաստուած էր: Ընկերիս դագաղը դրուեցաւ նոյն տեղը, որ ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի սառոյցկրեայ մթին այր: Բայց նա երկար չմնաց ննջեցեալների ամբարում. հէնց առաջին գիշերը դուրս եկաւ դագաղից, իւր հետ բերելով եւ իւր կողոպուտը: Հասկանալի է, որ մենք եւս օգնեցինք նրան այդ վերջին յարութեան մէջ":

— Նրեւի, այն օրից սկսեցին մեզ կոչել "խաչագող", որովհետեւ դուք կողոպտեցիք սուրբ տաճարի խաչերը, նկատեց մէկը:

Բոլորը ծիծաղեցին:

Քաւոր Պետրոսը, որպէս միշտ սովորութիւն ունէր այսպիսի խօսակցութիւնների ժամանակ, լուռ էր: Նա երեւի, աւելի ուրիշ բաների վրայ էր մտածում, քան թէ լսում էր: Նա չէր սիրում երբ մարդիկ պարծենում էին նրա մօտ: Նա իւր մեծագործութիւնների մէջ խիստ համեստ էր...:

Ընթրիքը վերջացաւ մեր կենաց համար առաջարկուած բաժակներով: Բոլորը յայտնեցին իրանց ուրախութիւնը, որ բախտ ունեցան ընդունելու մեզ իրանց ընկերութեան մէջ...:

Գ.

ԱՆԲԱՅԱՏՐԵԼԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Երբ առաջ լսում էի այդպիսի խօսակցութիւններ, ես ոգեւորվում էի, իմ սիրտը լվում էր կատաղի նախանձով, իմ եռանդը աւելի բորբոքվում էր, եւ ես մտածում էի. "Երբ կը լինի, որ ես էլ պարծենալով պատմեմ իմ քաջագործութիւնները"... Իսկ այժմ ինչո՞ւ այդպէս սառեց իմ սիրտը, ինչո՞ւ այդպէս անզգայացաւ նա: Այլ եւս ինձ չէր գրաւում խաչագողի փառքը, այլ եւս ես չէի հրապուրվում չար գործի քաղցր մղումով: Կարծես թէ, իմ զօրութիւնը թուլացել էր, կարծես թէ, իմ մէջ հանգել էր այն կրակը, որի առաջին վառողը եղաւ մի երեւելի չարագործ...: Ինձ տիրել էր մի տեսակ վհատութիւն, մի տեսակ հիւանդոտ ձանձրոյթ: Ես փախչում էի գործից, փախչում էի աշխատանքից...:

Որտեղից ծագեց այդ փոփոխութիւնը:

Ես ինքս չգիտէի, բացատրել չէի կարողանում, միայն զգում էի, որ իմ մէջ դեռ ճնացել էր աշխոյժ, եռանդ, բայց ոչ դէպի խաչագողի գործունէութիւնը: Ես բոլորովին ոգով ընկած չէի: Իմ սիրտը լուսած էր ինչ որ ուրիշ բանով, որը հետզհետէ այնքան աճում էր, ընդարձակվում էր, որ պատաքսում էր այնտեղից բոլորը, ինչ որ առաջուց մտցրել էր քաւար Պետրոսի սոսկալի դատաիարակութիւնը...: Բայց ի՞նչ էր այդ, — ինքս էլ չէի հասկանում:

Երբ առաջ ինձ աջողվում էր կատարել մի եղեռնագործութիւն, որքան սարսափելի լինէր նա, որքան խառնուած լինէր արիւնով, այնքան աւելի բերկրութիւն էր բերում ինձ: Իսկ այն օրից, երբ սպանեցի այն չարագործին եւ ազատեցի Նէնէին, զգում էի, որ այդ սպանութիւնը այն չէր, ինչ որ ինձ շատ անգամ պատահել էր գործել: Առաջինների ղեւարձութիւնը լոպէական էր, շուտով անցնում էր, իսկ այդ վերջինի ուրախութիւնը քաղցր էր եւ տեւողական: Ես սպաննելով, ազատել էի մի անմեղի կեանքը...:

Առաջ ինչ որ անում էի, դարձեալ ուզում էի անել, չէի կշտանում, ոչ մի բանի մէջ բաւականութիւն չէի գտնում: Կարծես թէ, սիրտս միշտ եւ միշտ դատարկ էր ճնում: Իսկ այժմ զգում էի, որ աւելի ուրախ եմ, սիրտս հանգիստ էր եւ գոհ, որպէս թէ, նա լեցուած լինէր անսահման երջանկութեամբ...:

Որտեղից ծագեց այդ փոփոխութիւնը:

Երբ խաչագողները քնեցին, ես ամբողջ գիշերը քնել չկարողացայ: Իմ աչքերի առջեւն էր Նէնէն, նրա պատկերը ինձանից չէր հեռանում, միշտ նրան էի տեսնում եւ նրա մասին մտածում: Ի՞նչ էր, որ իմ սիրտը կապեց այդ թշուառ աղջկայ հետ: Մարդու հոգեբանական գաղտնիքները դեռ անհասկանալի էին ինձ: Ես Նէնէի վերաբերութեամբ ունեցած իմ զգացմունքը բացատրում էի խիստ պարզ եւ հասարակ պատճառներով, թէ կեանքի մէջ մարդ իւր արդիւնաբերութիւնը աւելի է սիրում, ինչպէս նա խիստ ախորժակով է ուտում այն երէկի մնից, որ ինքն է պատրաստել, իսկ բազարից գնածը այն համը

չունի: Մարդ ինայողութեամբ է ծախսում այն արծաթը, որ իւր քրտինքի վաստակն է, իսկ ժառանգական հարստութեան հետ շատ անգամ շռայլաբար է վարվում: Այնպէս էլ քաղցր է մարդուս համար իւր ձեռքով անկած, հասցրած ծառի պտուղը: Արդեօք այդ համեմատութիւնները ճի՞շդ էին, դրանցով կարելի՞ էր բացատրել Նէնէի վերաբերութեամբ ունեցած իմ զգացմունքը...:

Կեանքը ամեն բան սովորեցնում է մարդուն, իսկ դէպքերը նրա վարժապետն են դառնում: Քաւոր Պետրոսը ինձ սովորացրեց ատել, ոչնչացնել, կողոպտել, յափշտակել, մի խօսքով, ուրիշին պատկանածը իրան սեպհականացնելու համար չնայել ոչ մի միջոց: Աւազակութիւնը ամենամեծ զուարճութիւնն էր ինձ համար, որի մէջ ես զգում էի բախտի քաղցրութիւնը: Ուրախութիւն էր պատճառում ինձ առանց քրտինքի պարպել ուրիշի քսակը: Բայց այն օրից, երբ ես իմ քսակը առաջարկեցի ծերունի ձկնորսին, եւ խնդրեցի նրանից պահել, պահպանել Նէնէին, — այդ օրից ես վայելում էի մի աւելի մեծ բաւականութիւն, որ երբէք ճաշակած չէի:

Քաւոր Պետրոսը ինձ սովորացրեց ատել, ոչնչացնել, բայց Նէնէն սովորացրեց սիրել, բարիք գործել:

Ո՛րքան գեղեցիկ բան է սէրը:

Ես Սառային էլ էի սիրում. այժմ նոյնպէս սիրում եմ իմ մանկութեան բարեկամին: Բայց հանգամանքները բաժանեցին մեզ, տարիները ահագին անդունդ փորեցին մեր մէջ. մենք անջատուեցանք: Ո՛րքան ժամանակ էր, որ չէի տեսել նրան. այժմ իմ յիշողութեան մէջ միացել էր նրա մեռյալ պատկերը միայն, թէեւ սրտիս մէջ տակաւին չէր հանգել նրա սէրը: Սառան ինձ երեւում էր այն բանի նման, որպէս երեխային երազումը կը տայնի

մի խաղալիկ եւ նա կ'ուրախանար, բայց հէնց որ զարթնում է քնից, սկսում է տխրել, որ այն խաղալիկը այլ եւս չունի...:

Առաւօտեան խաչագողները զարթնեցան խիստ վաղ: Որպէս գործի մարդիկ, գեռ արեւը չծագած, նրանք ոտքի վրայ էին: Մի քանիսը վեր առին կացինները, գնացին անտառը, փայտ կտրելու եւ ածուխ պատրաստելու, իսկ Նազարը, նրանց գլխաւորը, մնաց խրճիթում իւր երկու բանուորների հետ:

Ինձ երեւում էր, որ նրանք խիստ ուրախ էին քաւոր Պետրոսի յայտնուելով, եւ յարգում էին նրան, որպէս իրանց պատրիարգին: Իսկ ինձ գեռ մարդու տեղ չէին դնում. ինձ վրայ նայում էին, որպէս մի անփորձ համրակի վրայ: Նազարը մեզ ցոյց տուեց իրանց ստորերկրեայ վիրապը, այնտեղ էր նրանց գործարանը: Կեղծ թղթադրամը ահագին կապոցներով դասուած էր զանազան խորշերում: Մեքենաները, մամուլները, ներկերը բոլորովին շլացրին իմ աչքերը: Նազարը, գործարանի կառավարիչը, որ երկար ժամանակ Լօնդօնում սովորել էր այդ արհեստը, եւ այդ բոլոր պարագայքը բերել էր այնտեղից, մի առ մի ցոյց էր տալիս մեզ իւր պատրաստութիւնները եւ նրանց գործածութեան ձեւերը: Իսկ այնօր չէին բանում, որովհետեւ գլխաւոր մեքենապետը, որը մի հրէայ էր, գնացել էր քաղաքը մի մեքենայի խանգարուած մասը շինել տալու համար: Հրէան միեւնոյն ժամանակ փորագրիչ էր. ընկերութեան մէջ դա էր միայն, որ օտարազգի էր:

Քաւոր Պետրոսը արեց մի քանի նկատողութիւններ, յետոյ հարցրեց, թէ ի՞նչպէս էին ծախսում այդ թղթերը: Նազարը պատասխանեց, թէ թղթերը ծախսելու համար

ընտրել են Կայսրութեան ամենախուլ կողմերը, ուր ժողովուրդը դեռ գոհհկութեան մէջ է, ասայ, որ զանազան տեղերում ունեն գործակատարներ, որոնք փոխարինում են թղթերը դիւղացիների հետ, ստանալով նրանցից հում բերքեր, որպիսի են ալիւր, քաթան, կամ տնային անասուններ եւայլն: Այդ մթերքը վաճառվում է քաղաքներում:

— Այդ ես տեսնում եմ, որ դուք գործ ունէք միայն դիւղացիների հետ, ասայ քաւոր Պետրոսը, — դրա համար էլ ձեր թղթերը մանր տեսակներից են: Բայց պէտք է ընդարձակել գործը:

Թէ ինչպէս պէտք էր ընդարձակել, այդ մասին քաւոր Պետրոսը ոչինչ չյայտնեց: Նա առհասարակ սովորութիւն ունէր խոհոյն չյայտնել իւր միտքը: Բայց նրա նկատողութիւնը ճիշդ էր. թղթերի տեսակները հասնում էին մինչեւ տասն րուբլնոցի միայն, որովհետեւ նրանք գործ ունէին մանր առեւտրականների հետ:

Ուսչագողները հէնց նոյն օրից ընդունեցին մեզ իրանց ընկերութեան մէջ: Եւ որովհետեւ բոլորի պաշտօնները որոշուած էին, քաւոր Պետրոսին, որպէս հմուտ եւ փորձուած մարդ, կարգեցին ընկերութեան տեսուչ: Իսկ ինձ, դեռ մանուկ եւ անվարժ համարելով, պարապմունք տուեցին ածխագործների մասնում: Իմ գործը բաղկանները աւելի յարմար էին փայտ կտրելու համար: Ես գոհ եղայ այդ պաշտօնով, որովհետեւ մտածում էի, որ դա միջոց կը տայ ինձ բացակայ լինել նրանց բնակարանից, եւ անտառը գնալու պատրուակով շուտ շուտ տեսնուել Նէնիի հետ: Իմանալով, որ ես միեւնոյն ժամանակ լաւ որսորդ եմ, նրանք յանձնեցին ինձ եւ այդ պարապմունքը: Մարդկային բնակութիւններից հեռու գտնուելով, նրանք

խիստ հաղիւ անգամ կարողանում էին միս գնել, եւ ապրում էին ըստ մեծի մասին որսի մսով:

Հետեւեալ օրից ես մտայ պաշտօնիս մէջ: Վաղ — առաւօտեան առայ ինձ հետ մի հրացան, մի որսորդական շուն եւ ճանապարհ ընկայ: Ամէն, որքան ուրախ էի, որքան շտապում էի: Երկու օր էր, որ չէի տեսել Նէնիին: Ես խոստացել էի ամեն օր այցելել նրան: Այժմ որքան անհանգիստ կը լինէր նա, ինձ չտեսնելով, եւ որքան կ'ուրախանար, երբ կրկին կը տեսնէր ինձ, — ճանապարհին միշտ այդ էի մտածում:

Դեռ ձկնորսի տնակին չհասած, ծովի ափի մօտ հանդիպեց ինձ պառաւը, որ ապրում էր ձկնորսի հետ:

— Որդի, ասայ նա մի առանձին ցաւակցական եղանակով, — այդ ինչ արեցիք մեզ հետ. այն աղջիկը ցաւով լցրեց մեր սիրտը...:

— Ի՞նչ կայ, հարցրի ես սարսափելով, — հիւա՞նդ է... մեռե՞լ է... ինչ է պատահել...:

— Չէ, զաւակս, Աստուած մի արասցէ, որ այդպէս բան լինի, պատասխանեց պառաւը այժմ աւելի հանգիստ կերպով: — Նա այնքան լաւ աղջիկ է, որ ես կը ցանկանայի, որ իմ աչքերը կուրանային, բայց նրան մի չար չհանդիպէր: Նա այնքան բարի է, այնքան սիրուն է:

— Ապա ինչ է պատահել, հարցրի ես անհամբերութեամբ: — Ասեցէք, ինչո՞ւ էք ծածկում:

— Հիւանդ ասես, հիւանդ չէ, որդի, բայց ամբողջ գիշերը չէ քնում. հէնց ամէն ու վաղն է քաշում եւ լաց լինում: Ինչն է այդպէս տանջում խեղճ աղջկան, Աստուած գիտէ, բայց միշտ տխուր է եւ տխուր. պատառ հաց բերանը չէ դնում: Պատահում է, կամ կատուն է անցնում դրան մօտով, կամ թռչունն է թռչում, կամ

աերեւն է շարժվում, — նա խոզին դուրս է վազում, ժամերով նստում է դրան մօտ, նայում է եւ նայում դեպի ճանապարհը; կարծես, մեկին սպասում է:

Մինչ ես պառաւի հետ խօսում էի, յանկարծ յայտնուեցաւ Նէնէն. նա երեխայի պէս քարշ ընկաւ իմ պառանոցից, եւ երկար բաց չէր թողնում:

— Ինչո՞ւ ինձ խաբեցիր, հարցրեց նա:

— Ցեանում ես, որ եկայ, պատասխանեցի ես:

— Այդպէս ուշ: — Ախ, որքան ես լաց եղայ...:

— Ինչո՞ւ էիր լաց լինում:

— Կարծում էի, որ դու էլ չես գայ ինձ մօտ:

Մենք մօտեցանք խրճիթին: Նէնէն նայեց իմ որսորդական հագուստի ու ջինքերի վրայ, եւ ուրախացաւ:

— Դու հրացան էլ ունես, ես էլ չեմ վախենայ...:

— Ումից պէտք է վախենաս:

— Ախ, այն աւազակները...:

Դարձեալ մտաբերեց չարագործներին:

— Մոռացիր նրանց, Նէնէ, նրանք քեզ էլ ոչինչ չեն կարող անել:

Այդ գազանների վարմունքը այնպիսի վատ տպաւորութիւն էր թողել խեղճ աղջկայ վրայ, որ նա առանց սարսափելու չէր կարողանում մտաբերել նրանց: Ես միշտ աշխատում էի հեռացնել նրանից այդ յիշողութիւնը, մանաւանդ երբ տեսնում էի, որ նա ամբողջ մարմնով դողում էր եւ գունաթափւում էր նրանց մէտ բերելու ժամանակ:

Նէնէն սկսեց վայելել իմ որսորդական շանը, որ խիստ մանրմասն քննում էր նրա ջորս կողմով:

— Այդ շունը քո՞նն է, հարցրեց նա:

— Իմն է:

— Որքան լաւ շուն է: Նա կճում է, այնպէս չէ՞. ումը որ ցոյց տալու լինես, կը կծէ՞:

— Կը խեղդէ, եթէ ես հրամայեմ:

— Նա քեզ սիրում է: Ասա թող ինձ էլ սիրէ:

— Գնանք խրճիթը, ես նրան կը կերակրեմ: Ի՞նչպէս է անունը:

— Համիդ:

Նէնէն սկսեց կանչել շանը իւր անունով եւ տարաւ դեպի խրճիթը, որը մի քանի քայլով միայն հեռու էր մեզանից: Մենք ներս մտանք, ծերունի ձկնորսին տանը չգտանք. նա գնացել էր ծովը ափի մօտ ձուկ որսալու: Նա նստեցի ճիւղերից հիւսած մահճակալի վրայ: Նէնէն իմ մօտից չէր հեռանում: Նա երեխայի նման ձեռքը դրել էր իմ ուսի վրայ, նայում էր իմ երեսին եւ շարունակ խօսում էր առանց լռելու:

— Դու, երեւի, նախաճաշիկ չես արել, սոված կը լինես, հարցրեց նա, — ես քեզ համար ուտելու մի բան կը պատրաստեմ: Տես, այդ ելակները ես եմ քաղել անտառից, պահեցի քեզ համար: Դու խո սիրո՞ւմ ես ելակներ:

— Ես քեզ պատուիրեցի, որ անտառը չգնաս Նէնէ:

— Հեռու չեմ գնացել, նայիր, այդ մօտիկ տեղից քաղեցի: Նա վազեց դեպի լուսամուտը, սկսեց ցոյց տալ ինձ:

— Ոչ, այնտեղ էլ չի պիտի գնաս:

— Դրանից յետոյ չեմ գնայ:

Նէնէն կազմեց մի պարզ նախաճաշիկ, որ պատրաստուած էր տապակած ձկներից եւ անտառային բանջարներից: Սեղանի վրայ նա ասաց ինձ.

— Ահա, որքան լաւ մարդիկ են այդ ձկնորսները, ես հիմայ շատ եմ սիրում նրանց: Պառաւը ինձ իւր մօտ է պառկեցնում, եւ գիշերը ամեն անգամ նայում է, որ չքացուեմ, չմրսեմ: Ծովից գիշերը սաստիկ քամի է փչում, ցուրտ է լինում: — Ես հիմայ ծերունի ձկնորսին "պապա" եմ կոչում. նա ինձ շատ է սիրում. երէկ համբուրեց ինձ, ասաց "զաւակս":

Նախաճաշիկից յետոյ ես պատրաստուեցայ հեռանալու: Իմ որսորդութեան առաջին օրն էր, պէտք էր աշխատել մի բան որսալ, որ ընկերներիս մօտ ամօթով չմնայի: Նէնէն հարցրեց.

— Դու էլի՞ գնում ես: Ո՞ւր ես գնում:

— Անտառը, մի բան որսալու:

— Ես էլ կը գամ քեզ հետ:

Ծանկարծ մտաբերեց իմ պատուէրը եւ խօսքը փոխեց.

— Չէ, ես չեմ գայ. դու ասեցիր, որ անտառը չգամ:

— Հա, այսպէս, սիրելիս, զգոյշ եղիր, որ այն աւազակներին կրկին չհանդիպես, նրանք չի պիտի տեսնեն քեզ, հասկանո՞ւմ ես:

— Հասկանում եմ: Բայց դու շո՞ւտ կը վերադառնաս:

— Երեկոյեան: Ամբողջ գիշերը քեզ մօտ կը մնամ:

Նա ուրախացաւ եւ մի առանձին զգացմունքով խնդրեց ինձանից.

— Թոյլ տուր, մինչեւ այն ծառը գամ քեզ ճանապարհ դցելու. տես, մինչեւ այն եղեւինը, շատ հեռու չէ:

— Մինչեւ այն եղեւինը, — կարող ես գալ:

Նէնէն եկաւ ինձ հետ քսան քայլ միայն, որովհետեւ այդքան էր ցոյց տուած ծառի հեռաւորութիւնը: Նա գրկեց ինձ եւ դարձեալ արտասուքը աչքերում աղաչում էր, որ շուտ վերադառնամ նրա մօտ: Խնճղճ աղջիկ, որքան ջերմ էր նրա մէջ սէրը, դեռ մաքուր բարեկամական սէրը: Ես հեռացայ: Պառաւը իմ եռեւից ձայն տուեց.

— Զգո՛ղնես Նէնէին մենակ, նա մեզ հանգստութիւն չի տայ...:

Դ.

ԿՈՐԱԾ ՀԱՅՐ

Իմ այն օրուայ որսորդութիւնը անցաւ յաջող կերպով. ես սպաննեցի մի նորահաս եղջերու եւ մի քանի հատ վայրենի աղաւնիներ: Բայց քաւոր Պետրոսի մօտ չվերադարձայ, որովհետեւ Նէնէին խոստացել էի այն գիշերը անցկացնել ձկնորսի խրճիթում: Ընկերներս իմ մասին անհանգիստ չէին լինի, որովհետեւ կը մտածէին, թէ որս չգտնելու պատճառով ես մնացել էի անտառում: Բացի դրանից, ընկերութեան մէջ ես միայն կրտսերների եւ ածուխ պատրաստողների բաժնումն էի. իմ պաշտօնակիցները ըստ մեծի մասին գիշերները անց էին կացնում բացօթեայ, անտառի մէջ, ածուխի խարոյկների մօտ, մանաւանդ որ ամառ էր, եղանակը տաք էր:

Արեգակը դեռ նոր սկսել էր թեքուել դէպի իւր գիշերային մուտքը, երբ ես վերադարձայ ձկնորսի խրճիթը: Շանապարհին մտածում էի, թէ Նէնէն շատ կ'ուրախանայ, երբ կը տեսնէ իմ որսերը: Նա նստած էր խրճիթի դրանը, սպասում էր ինձ: Երբ հեռուից տեսաւ, մինչեւ եղեւնի ծառի մօտ վազեց իմ առաջը: Այդ ծառը նրա սահմանն էր:

Նա նկատեց եղջերուին, որ քարշ էր ընկած իմ ուսից եւ աղաւնիները, որ դրած էին իմ որսորդական մախաղի մէջ:

— Աշ, ինչու սպաննեցիր դրան, ասաց նա ցաւալի ձայնով. — խեղճ եղջերու, ով գիտէ, գուցէ մայր ունի... Հիմայ լաց է լինում դրա մայրը...:

— Եղջերուն լաց չէ լինում, Նէնէ, պատասխանեցի ես, հանգստացնելով նրան:

— Ի՞նչպէս լաց չէ լինում, չէ որ նա էլ աչքեր ունի, ասաց նա եւ սկսեց վեր բարձրացնել իմ սպանած եղջերուի գլուխը եւ նայել աչքերին:

— Դրա աչքերը խփած են, դա մեռել է... ասաց նա սոսկալով եւ յետ քաշուեցաւ: — Դրանից յետոյ էլ չես սպաննի, այդպէս չէ՞:

— Ապա ինչ որսամ:

— Գայլեր սպաննիր, նրանք այնպէս չար են, որպէս այն աւազակները...: Աշ, էլի մոքիս եկան անիրաւները... դու ասեցիր, որ մոռանամ նրանց...:

— Հա՛, սիրելիս, մոռացիր նրանց...:

Մենք մտանք խրճիթը: Պառաւը դեռ նոր էր վառել ճրագը: Ծերունի ձկնորսը վերադարձել էր ծովի ափից: Նա այս երեկոյ աւելի լաւ տրամադրութեան մէջ էր գտնւում, թէեք էր ընկած ճիւղերից հիւսած մահճակալի վրայ, եւ մի առանձին բաւականութեամբ ծխում էր: Երեւում էր, ծովի վրայ նրա որսորդութիւնն էլ յաջող էր անցել: Երբ տեսաւ ինձ, գլուխը վեր բարձրացրեց, եւ առանց շարժուելու իւր տեղից, խիստ ջերմ բարեսրտութեամբ ողջունեց: Ես նստեցի նրա մօտ, իսկ Նէնէն տեղաւորուեցաւ իմ կողքին: Նա դարձեալ առանց լռելու խօսում էր, միշտ նոր եւ նոր հարցեր էր առաջարկում: Իսկ Ծերունին լսելով նրա անմեղ հետաքրքրութիւնը, ժպտում էր, ուրախանում էր: Նա ասաց.

— Եթէ Նէնէի լեզուն կապես, աչքերով կը խօսի, եթէ աչքերը փակես, ձեռներովը կը խօսի: Ամէն ինչ դրա մօտ խօսում է:

— Այսպիսի կրակոտ բնաւորութիւնները չեն կարող լուռ ճնալ, պատասխանեցի ես:

Նէնէն գլուխը քարշ դցեց, եւ իրան վիրաւորուած ձեւացնելով, ասաց.

— Ես էլ չեմ խօսի:

— Լաւ, տեսնենք, ասաց Ծերունին, — կարծէք ես հարբերել առանց խօսելու:

Նա մի քանի րոպէ լուռ ճնաց, յետոյ սկսեց ծիծաղել:

— Չեմ կարող, չեմ կարող, բացականչեց եւ վազեց Ծերունու մօտ:

Ծերունին գրկեց նրան եւ սկսեց իւր կոշտացած ձեռքով փայփայել նրա սեւ գիսակները:

Պառաւը զբաղուած էր ընթրիքի պատրաստութիւնով: Նէնէն թողեց մեզ, գնաց նրան օգնելու: Նա արդէն այն աստիճան ընտանիացել էր այդ տան մէջ, կարծես թէ, այնտեղ էր ծնուած եւ այնտեղ էր մնուած: Նա գիտէր ինչ բան ինչ տեղ էր դրած, գիտէր տան բոլոր ծակուծուկը:

Անտառների խուլ առանձնութեան մէջ, ծովի ափի մօտ, ձկնորսի անշուք խրճիթը, լուսաւորուած իւղային ճրագով, մի գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Թէեւ ամեն ինչ նրանում կրում էր իւր վրայ խորին չքաւորութեան կնիքը, բայց գոհութիւնը եւ խաղաղութիւնը թագաւորում էր բոլորի վրայ: Այդ բարի ձկնորսները երջանիկ էին, — երջանիկ էին, որովհետեւ ոչինչ չունէին եւ ունենալու ցանկութիւն եւս չունէին: Ի՞նչ աւելի

մեծ հարստութիւն կարող է լինել քան թէ այն, երբ մարդ իւր ունեցածովը գոհ է:

Այդ մտածութիւնները զարթեցրին իմ մէջ իմ անցեալն սարսափելի յիշողութիւնները եւ երեւան հանեցին սոսկալի պատկերներ: Ես արիւնոտ ձեռքերով, քանի՛ քանի՛ տարիներ շարունակ, անդադար ոսկու ամբարներ էի դիզում, բայց իմ անյագ սիրտը ոչինչ բանից գոհանալ չէր կարողանում: Ես միտում էի միշտ աղքատ, միշտ թշուառ, որովհետեւ ունեցածովս չէի բաւականանում:

Ծերունին, այն անտառների պատրիարքը, կը լինէր ոչ աւելի քան չիսուն տարեկան, բայց նրա երկաթի կազմուածքը կորցրել էր իւր ամրութիւնը: Նա ծերացել էր աւելի վաղ, քան թէ ներում էր նրա հասակը: Երեւում էր, որ նա իւր կեանքում շատ դժբախտութիւնների էր հանդիպել, շատ տանջանքներ էր կրել, որոնց հետքերը դեռ միտում էին նրա տխրամած ճակատի վրայ: Առանձնութեան մէջ, հեռու աշխարհից, բնակուելով լայնատարած ծովի ափի մօտ, երեւի, նրա աչքերի մէջ նա կամեցել էր թափել իւր անցեալ կեանքի պատնութիւնները:

Բայց ինչ որ աւելի էր ինձ զարմացնում, դա էր նրա արտասանութիւնը: Մենք խօսում էինք ռուսաց լեզուով: Ես այդ լեզուով այնքան վարժ էի խօսում, որ ոչ ոք չէր կարող կասկածել, որ ես ռուս չեմ: Բայց նրա ինչ ազգից լինելը դեռ ես չգիտէի. նրա արտասանութիւնը ինձ բոլորովին խորհրդաւոր էր թուում: Նոյն կասկածը, որպէս ես նկատում էի, ունէր Ծերունին եւ իմ վերաբերութեամբ: Իմ վարժ խօսելը չէր կարող նրան համոզել, թէ ես ռուս եմ: Իմ դէմքը, իմ դծագրութիւնը,

իմ սեւ մազերը, բոլորովին հակառակ վկայութիւն էին տալիս իմ մասին:

Ընթրիքը արդէն պատրաստ էր. մենք բոլորեցինք սեղանի շուրջը. Նէնէն նստեց իմ մօտ, իսկ պառաւը նստեց Ծերունու մօտ: Իմ որսորդական սրտակից մէջ միացել էր բաւական ախորժ, ես տուեցի Ծերունուն, նա խմեց: Սառած ուզիղը տաքացաւ. նա սկսեց աւելի եւ աւելի կենդանանալ: Բայց բոլորովին առասպելական մի երեւոյթ էր ներկայացնում այդ ծածկամիտ ալեւորը: Նա իւր մասին ամենևին չէր խօսում, եւ երբ իւր վրայ խօսք էր լինում, միշտ աշխատում էր խոյս տալ, կամ հաւանգօրէն անցնել, առանց մի որոշ միտք յայտնելու: Բայց ես նրա երեսի խորշոմների մէջ նկատում էի մի գաղտնիք, որ ամենայն զգուշութեամբ թագցնում էր:

Ես խմացրի նրան արաղը միացորդը եւս:

Սկզբում խօսակցութիւնը խիստ հասարակ բաների վրայ էր. Ծերունին խօսում էր ծովի վրայ, ձկների տեսակների վրայ, խօսում էր, թէ որքան իւր "պառաւը" օգնում է իրան, չորացնում է, պատրաստում է ձկները, եւ ինքը տարէնը մի քանի անգամ կարողանում է քաղաք գնալ, իւր ձկնեղէնները վաճառելու համար եւ այլն: Բայց ոչ էր այդ պառաւը, արդեօք նրա կինն էր, ազգականն էր, — այդ մասին ոչինչ չէր խօսում:

Նէնէն եւ պառաւը շուտով հեռացան ընթրիքի սեղանից. մեր խօսակցութիւնը նրանց չէր զբաղեցնում: Պառաւը քաշուեցաւ մի անկիւնում, սկսեց նիրհել, որովհետեւ շատ յոգնած էր, իսկ Նէնէն մնացաւ ճրագի լոյսին, սկսեց մի բան կարել: Նրան այնօր պառաւը ընծայել էր իւր լաւ հագուստներից մէկը, որ ինքը չէր

գործածում, եւ Նէնէն այդ հագուստը ձեւում էր, յարմարացնում էր իւր հասակին:

Ես եւ ձկնորսը միացինք մենակ:

— Շա՜տ ժամանակ է, որ դուք այդ ծովի ափի մօտ էք բնակվում, հարցրի ես.

— Աւելի քան վեց տարի:

— Միշտ ձո՞ւկն էիք որսում:

— Այ՛ո:

— Իսկ առաջ:

— Այդ մի հարցրու...:

Մէջ մտաւ Նէնէն, իւր կարը բերելով եւ ինձ ցոյց տալով.

— Տես, Մուրադ, ինչպէս լաւ կարեցի. այստեղ շատ լայն էր, նեղցրի. այստեղ երկայն էր, կարեցի. այդ կոճակներն էլ պիտի փոխեմ. այն ժամանակ աւելի լաւ կը լինի:

Ես գովեցի նրա աշխատութիւնը, նա ուրախացաւ, եւ դարձեալ գնաց նստեց ճրագի մօտ:

Բայց Նէնէի հետ խօսելու ժամանակ, ես չէի նկատել, թէ որպիսի խռովութեան մէջ էր գտնվում Ծերունին, երբ նա լսեց իմ անունը՝ "Մուրադ":

— Մուրա՛դ... կրկնեց նա խորհրդաւոր ձայնով եւ դարձաւ դէպի ինձ, հարցնելով.

— Դուա ռուսի անուն չէ:

— Ապա ի՞նչ ազգի անուն է:

— Այսպիսի անուն կրում են հայերը:

— Ես էլ հայ եմ:

— Մի՞թէ... ասաց նա եւ խորհուրդ մտածութեան մէջ ընկաւ:

Ոչինչ հարկ չկար առաքինի Ծերունու մօտ թագցնել իմ ազգութիւնը. ես այդ անում էի միայն այն ժամանակ, երբ պէտք էր խաբել մեկին: Բայց այդ խրճթի մէջ վերին աստվածի անաչառութիւն կը լինէր, եթէ ես անկեղծ չլինէի: Ծերունին աւելի հետաքրքրութեամբ հարցրեց.

— Ո՞ր երկրից էք:

— Պարսկաստանից:

— Նրա հետաքրքրութիւնը աւելի եւս գրգռուեցաւ: Ճշմարի՞տ էք ասում: Ո՞ր գաւառից:

— Սալմաստից:

— Ո՞ր գիւղից:

— Սաւրա գիւղից:

Այժմ տիրեց նրան մի տեսակ խռովութիւն, մի տեսակ սոսկում, որպիսին տիրում է այն մարդկանց, որոնք անգիտութեամբ ընդունում են իրանց տանը մի անծանօթ հիւր, որին սկզբում լաւ մարդ էին համարում, իսկ յետոյ յայտնվում է, որ նա անպիտանի մեկն է: Երեւում էր, որ Ծերունին տեղեկութիւններ ունէր Պարսկաստանի կամ Սաւրայի հասարակութեան մասին: Նա հարցրեց.

— Ի՞նչպէս է ձեր հօր անունը:

— Սաֆար:

— Իսկ ձեր մօր անունը:

— Նաղանի:

— Ո՞ւմ աղջիկն էր ձեր մայրը:

— Նրա հայրը կոչվում էր Բարսեղ, իսկ մօր անունը Նղեսայ էր:

Ծերունին բոլորովին գունաթափուեցաւ:

— Ի՞նչպէս էր կոչվում ձեր պապը:

— Ալօ, եւ մեր տոհմը նրա անունով կրում է Ալօեան ազգանունը:

— Որդի՛ս... դոչեց Ծերունին եւ մարեցաւ կուրծքիս վրայ:

Վերջին բառը նա արտասանեց հայերէն լեզուով:

Ես բոլորովին ապշած էի, կարծում էի, թէ տեսածը երազ էր: Մի՞թէ դա իմ հայրն էր: Այդ ի՞նչ անակնկալ դէպք էր, մի այնպիսի խուլ, մոռացուած տեղում, ձկնորսի մենաւոր խրճթի մէջ, գտնել նրան, որը վաղուց արդէն մեռած կամ կորած էր համարվում իւր ընտանիքի համար:

Իմ առաջին հոգսը եղաւ նրան ուշի բերել: Խեղճը ամբողջ կէս ժամ մնաց իմ գրկում անմռունչ, լեզուն կապուեցաւ, միայն աչքերը բաց էր անում, նայում էր իմ վրայ, իսկ երբեմն արձակում էր խուլ հառաչանքներ, եւ դարձեալ ուշաթափ էր լինում:

Պառաւը, որ այդ միջոցին նիրհում էր խրճթի մի անկիւնում, զարթնեց, եւ տեսնելով Ծերունուն, սարսափի ճիչ բարձրացրեց, եւ սկսեց լաց լինել: Ոչ սակաւ վախեցաւ եւ Նէնէն: Նա թողեց իւր կարը, վազեց իմ մօտ եւ անդադար հարցնում էր՝ — Ցէր Աստուած, այդ ի՞նչ պատահեց, ի՞նչ եղաւ նրա հետ:

Ես նրանց հանգստացրի թէ վտանգ չկայ, թէ անվնաս ուշաթնացութիւն է, շուտով կ'անցնի:

Ես դեռ գրկած ունէի հօրս ալեւոր գլուխը, եւ անբաւական որդու ուրախութեան արտասուքը թրջում էր նրա ճերմակ մազերը:

Ծանկարծ նա ուշի եկաւ եւ սոսկալի կատաղութեամբ ինձ մի կողմ հրելով, աղաղակեց.

— Հեռո՛ւ, անզգամ... դու խաբում ես... խաչագողները միշտ խաբում են... ինչ սատանայական նպատակ քեզ իմ խրճիթը բերաւ... ես չեմ ուզում տեսնել ձեր գարշելի երեսը... բաւական է, ոլքան տանջուեցայ... ոլքան չարիքներ կրեցի ձեր ձեռքից...: Ես չեմ հաւատում...: Դու իմ որդին չես... դու սուտ ես խօսում... դու խաբում ես ինձ... հեռո՛ւ այստեղից...:

Նա կրկին մօտեցաւ, բռնեց իմ օձիքից եւ աշխատում էր բռնութեամբ դուրս ձգել իւր խրճիթից: Այդ միջոցին մէջ մտան Նէնէն եւ պառաւը, եւ դրկելով ծերունուն, տարան նստեցրին իւր տեղը:

Նա գլուխը քարշ դցեց, երկու ձեռքով բռնեց իւր աչքերը եւ արտասուախառն հեկեկանքով սկսեց ինքն իրան խօսել.

— Իմ Մուրադին ես չեմ տեսել... ես նրան մօր արգանդում թողեցի... այնուհետեւ հեռացայ հայրենիքից եւ կրկին չվերադարձայ այդ ապականուած երկիրը...: Երբ իմ Մուրադը ծնուեց, մայրը գրեց ինձ. "Ճիշդ քեզ նման է, քո օրինակն ու պատկերն է... աջ թեւքի վրայ մի սեւ խալ ունի, ինչպէս դու ունես„...:

Վերջին խօսքերը լսելու ժամանակ ես մօտեցայ նրան, եւ աջ թեւքս մերկացնելով, ցոյց տուի.

— Նայեցէք հայր, տեսէք այն խալը, որի մասին մայրս գրել էր ձեզ:

Նա աչքի լոյսից զրկուած Իսահակի նման սկսեց շօշափել իմ թեւքը. նրա վրայ կար մի սեւ խալ արծաթեայ փոքրիկ դրամի մեծութեամբ:

— Մուրա՛դ... զաւակս... դո՛ւ ես, դո՛ւ... ձայն արձակեց նա եւ գրկեց ինձ:

Երկար նա բաց չէր թողնում ինձ իւր թեւքերի միջից, երկար նրա աչքերից հեղեղն նման հոսուող արտասուքը թրջում էր իմ գլուխը: Վերջը, կարծես արեան հետ դուրս բղխեցին նրա սրտից հետեւեալ բառերը.

— Ա՜խ, ինչպէս խաբեցին ինձ...:

Ո՞վ էր խաբել նրան, ուժգին էին վերաբերում նրա խօսքերը, — այդ մասին նա ոչինչ չխօսեց: Ես էլ չկամեցայ հարցնել, որ աւելի չդրգռում նրա ցաւերը: Մի այնպիսի սպասափելի տանջանքի հազիւ կարող էր դիմանալ նրա զառամեալ սիրտը: Անցեալի դառն եւ տխուր յիշողութիւնները, իսկ ներկայի անակնկալ ուրախութիւնը միօրինակ տանջում էին նրան: Ես չկամեցայ աւելի վշտովել նրա բորբոքուած զգացմունքները, թող տուի, մինչեւ առաւօտեան ամէն ինչ կը պարզուէր:

Նէնէն եւ պառաւը զարմացած նայում էին մեզ վրայ: Մեր բոլոր խօսակցութիւնից նրանք ոչինչ չհասկացան, որովհետեւ, մենք խօսում էինք մեր մայրենի լեզուով: Նրանք կամ լաց էին լինում, երբ տեսնում էին մեր արտասուքը, կամ ուրախանում էին, երբ նկատում էին մեր ուրախութիւնը:

Գիշերից բաւական անցել էր, երբ պառաւը իմ օգնութեամբ ծերունուն իմ անկողնի մէջ դրեց: Բայց նա չկարողացաւ հանգիստ քնել: Ամբողջ գիշերը անցկացրեց զառանցութեան մէջ. միշտ ա՛խ էր քաշում, արձակում էր դառն հառաչանքներ եւ լռում էր: Իսկ շատ անգամ ես լսում էի միեւնոյն խօսքերը. "ա՛խ, ինչպէս խաբուեցայ ես„...:

Ես նստած էի նրա անկողնի մօտ եւ լի տխուր մտածութիւններով նայում էի անբախտ հօր տառապանքների վրայ: Արդեօք ի՞նչ մի դժոխային կէտ կար այդ

ողորմելի մարդու ճակատագրի մէջ, որ այնպէս խռովեցնում էր նրան: Ո՞վ գիտէ, ինչեր էին անցել նրա գլխով, ո՞վ գիտէ, իւր կեանքում ծրպիսի դառն արկածների էր հանդիպել նա, որ այնպէս սոսկալի կերպով տանջվում էր, երբ յիշում էր դժբախտ անցեալը:

— Երեւի, դուք վատ լուրեր հաղորդեցիք նրան, հարցրեց պառաւը:

— Ընդհակառակն, իմ հաղորդած լուրերը խիստ ուրախալի էին:

— Ապա ի՞նչու այդպէս խռովութեան մէջ ընկաւ նա:

— Չգիտեմ:

— Այդպէս շատ անգամ պատահում էր նրա հետ, խօսեց պառաւը: — Երբեմն ամբողջ օրերով պատառ հաց բերանը չէր դնում, եւ ոչ դնում էր ձուկն որսալու, այլ անշարժ նստած խրճիթի դրանը, ժամերով նայում էր ծովի վրայ, նայում էր անցուդարձ անող նաւերին ու նաւակներին եւ մտածում էր: Ի՞նչ էր մտածում նա, ես այդ չգիտէի. նա երբէք իւր սիրտը ինձ մօտ չէր բացանում. բայց ես շատ անգամ նկատում էի նրա աչքերում արտասուք: Լինում էին օրեր, որ նա ուրախ էր, խօսում էր, ծիծաղում էր եւ մինչեւ անգամ հանաքներ էր անում: Բայց յանկարծ, կարծես թէ, մի չար ոգի անցաւ նրա մօտով, եւ նա մտաբերից մի ինչ-որ բան, եւ կրկին տխուր մռայլը պատում էր նրա դէմքը, սկսում էր հառաչել, սկսում էր անիծել իւր բախտը . . . :

Ամբողջ գիշերը մենք անքուն մնացինք. Նէնէն նոյնպէս չպառկեց քնելու, երբ տեսաւ, որ ես նստած եմ: Խեղճ աղջիկը չգիտէր ի՞նչով փարատել իմ տխրութիւնը: Նրան յայտնի էր դժբախտ հօր եւ նոյնքան դժբախտ որդու ցաւալի անցեալը: Նա չգիտէր, որ մենք աշխարհի ամենաթշուառ արարածներից մէկն էինք, անտուն, անհայրենիք, հալածուած դառն հանգամանքների բռնութիւնից, թափառում էինք երկրէ երկիր, որպէս մի արմատախիլ եղած, չորացած բոյս, որին փոթորկային հողմի անգթութիւնը տարուբերում է իւր կատաղի հոսանքի հետ . . . :

Այո, Նէնէն չգիտէր ինչով մխիթարել ինձ: Որդին հանդիպում էր կորած, մոռացուած հօրը, եւ փոխանակ ուրախանալու, տրտմում էր, որովհետեւ այդ հանդիպումը պիտի բաց անէր նրա առջեւ կատարուած պատահարների մի սոսկալի վէպ, որ մինչեւ այնօր նրան անյայտ էր . . . :

Նէնէն միայն հարցրեց ինձ.

— Դու առաջուց ճանաչո՞ւմ էիր այդ ծերունուն:

— Նա իմ հայրն է, պատասխանեցի ես:

Ե։

ԳԱՂՑՆԻՔԸ ԼՈՒԾՎՈՒԻ Ի

Առաւօտեան հայրս զարմնից խնամ վազ։ Առաջին բառը, որ պատասանեց, էր իմ անունը։ Ես խոյն մօտեցայ նրան։

— Ես գրկեմ քեզ, որդիս, Թոյլ տուր, արեւի լուսով մի լաւ ուրախանամ քեզանով, ասաց նա ծնողական հոգեզմայլութեամբ։

Ես ընկայ նրա գիրկը։

— Ախ, ինչպէս խաբեցին ինձ... զարձեալ կրկնեց նա գիշերուայ խօսքը, խորին կերպով հոգւոց հանելով։

— Դու ամբողջ գիշերը անհանգիստ էիր, հայրիկ, համարեա չքնեցիր, շատ անգամ կրկնում էիր այդ խօսքը, պատմիր, ոմ խաբեց քեզ եւ ինչ բանում խաբեցին։

— Անցեալը մի յիշեցրու ինձ, որդի, պատասխանեց նա ախուր ձայնով, — դու ինձ այն ասա, մայրդ կենդանի՞ է։

— Ես նրան բոլորովին առողջ Թողեցի տանը եւ մի քանի անգամ նամակներ եմ ստացել. շատ ժամանակ էէ, որ նոր նամակ եւս ստացայ. նա բոլորովին առողջ է։

— Անիծեալ լինես դու... ինչպէս խաբեց ինձ...։

Նա զարձեալ յիշեց իւր խաբուած դրութիւնը։

— Իսկ քոյրերդ, հարցրեց նա։

— Նոյնպէս առողջ են, մեծ քոյրս մարդի է գնացել, այժմ երկու երեխայ ունի. միջնակ քոյրս նշանուած է։

Նրա շեղած աչքերի մէջ փայլեց ուրախութեան մեղմ նշոյլը։ Իսկ իմ հետաքրքրութիւնը աւելի գրաւում էր այն գաղանիքը, թէ ո՞մն էր անիծում հայրս, կամ ում էր խաբել նրան։ Ծերացած [illegible] ջատկէս յոժարուեցաւ նա պատմել։

— Դուէն մայրդ ասած կը լինի, որ ես եղեռնագործ, եւ ես ազգասութիւնից ամօթուած, Թողեցի հայրենի երկիրը եւ դիմեցի դէպի պանդխտութիւն, ասաց աշխարհներում բախտ որոնելու։ Հայի ծանր պարտքերից, ես ոչինչ չԹողեցի իմ ընտանիքի ապրուստի համար։ Մի քանի կտոր կալուածքներ ունէի, նրանք եւս պարտքերիս փոխարէն գրաւ էին դրուած։ Մի քանի տարի երկրէ երկիր Թափառում էի. բայց ոչ մի գործում յաջողութիւն չէի գտնում։ Հայրենիքից ստացուած տեղեկութիւնները միշտ ախուր էին լինում եւ անմխիթար։ Վերջապէս հասաւ Պարսկաստանի սարսափելի ժանտախտի լուրը։ Այդ միջոցին յայտնուեցաւ ինձ մօտ մի խաչագող, որ նոր էր եկել մեր երկրից եւ ունէր իւր հետ մի նամակ իմ անունով։ Նա պատմեց, Թէ որպիսի սոսկալի կատարած կատարեց ժանտախտը եւ որպէս դատարկացաւ ամբողջ երկիրը։ Իսկ նամակի մէջ աւելի մանրամասնութիւններ կային։ Նամակը մեր գիւղի քահանայի գրածն էր։ Նա սկսում էր մխիթարական խօսքերով, որպէս սովորաբար գրում են այն անբախտներին, որոնք կորցրել էին իրանց սիրելիներին։ Նրա մէջ կար մի երկար ցուցակ, Թէ մեր գիւղացիներից ո՞վ մեռաւ, կամ ո՞վ ազատուեցաւ։ Մեռելների Թուում գրած էր քո մօր, քոյրերիդ

եւ քո անունը։ Իմ ամբողջ ընտանիքը ժանտախտի զոհ էր դարձել։ Այդ անիրաւը բերանացի էլ պատմեց, թէ որպիսի պատուհասի ենթարկեց Աստուած իմ ընտանիքը, եւ աւելացրեց, որ իմ թողած բոլոր կայքերը պարտքերիս փոխարէն տիրեցին...։

Վերջին խօսքերի ժամանակ ծերունու ձայնը փոքր առ փոքր թուլացաւ եւ նա դժուարանում էր շարունակել իւր պատմութիւնը։ Նէնէն տուեց նրան մի բաժակ կաթ խմելու։ Նա փոքր ինչ կազդուրուեցաւ եւ շարունակեց.

— Այլ եւս ոչինչ չէր մնում, ես կորցրել էի այն բոլոր առարկաները, որ սիրելի էին ինձ, որ կապում էին իմ սիրտը իմ հայրենիքի հետ։ Այդ տեղեկութիւնները այնքան ծանր եւ սպանիչ ազդեցութիւն ունեցան իմ վրայ, որ ես մի քանի ամբողջ ամիսներ հիւանդ պառկեցայ։ Նահակարերը էհեռացաւ իմ հիւանդութեան մահճից եւ ամենայն հոգատարութեամբ խնամք էր տանում իմ վրայ։ Մինչեւ իմ առողջանալը նա բոլորովին գրաւեց իմ բարեկամութիւնը, եւ ես իմ անձը շատ երախտապարտ կի համարում նրան։ Ես ընդունեցի նրան իմ մօտ, եւ որպէս ընկեր գործում էինք միասին։ Ես վճռեցի այլեւս չվերադառնալ իմ հայրենիքը, ուր պիտի գանէի սիրելի կնոջ, սիրելի զաւակներիս գերեզմանները միայն, եւ իմ դատարկացած տունը, այն եւս պարտատիրոջ ձեռքը անցած։ Ամեն ինչ իմ մէջ պիտի ջարդեցնէր տխուր յիշողութիւններ։ Հայրենիքը ատելի էր դարձել ինձ...։

Նրա ձայնը դարձեալ սկսեց դողդողալ, դարձեալ դառն զգացմունքները խեղդում էին նրան։ Նէնէն տուեց նրան երկրորդ բաժակ կաթ, բայց այս անգամին չընդունեց, եւ փոքր ինչ հանգստանալուց յետոյ շարունակեց.

— Ես այն ժամանակ հարուստ էի, ունէի մի քանի հազար պատրաստի ոսկիներ տնտուկի մէջ։ Իմ նոր ընկերը այն աստիճան գրաւել էր իմ հաւատարմութիւնը, որ ես ամեն ինչ յանձնել էի նրա ձեռքը։ Անցան մի քանի տարիներ, նա ինձանից չէր բաժանվում։ Մեր գործերը օրըստօրէ լաւանում էին եւ օրըստօրէ այդ մարդը սիրելի էր դառնում ինձ։ Բայց ի՞նչ դիտէի, որ նրա բոլոր մտերմութիւնը կեղծ էր, խաբէութիւն էր. մի գիշեր, իմ քնած ժամանակ, նա յարձակուեցաւ իմ վրայ, եւ սրի մի քանի հարուածներ տալով, ես անզգայ եւ ուշաթափ ինձ. իսկ նա, ինձ սպանուած համարելով, յափշտակեց իմ ոսկիները եւ փախաւ։ Ահա այն սպիները, որ թողեց իմ վրայ այն չարագործը...։

Հայրս ցոյց տուեց մի քանի խորն ընկած վէրքերի նշանները իւր մարմնի վրայ եւ շարունակեց.

— Այդ պառաւը, որ դու տեսնում ես իմ խրճթի մէջ, ես իմ կեանքով նրան եմ պարտական։ Նա մի անբախտ այրի էր, ինձ վերադարձ իւր մօտ, խնամք տարաւ եւ առողջացրեց։

Հօրս ցաւալի պատմութեան ժամանակ ես գանգատ էի մի տեսակ զարհուրանքի մէջ, թէ որքան դժբախտութիւնների պատճառ է դառնում սուտը, խաբէութիւնը եւ նենգաւոր մտերմութիւնը։ Հօրս խաբուած վրէժխնդրութիւնից առաջ էր եկել մեր ամբողջ ընտանիքի թշուառութիւնը։ Եթէ նա այդ պատահարներին չհանդիպէր, եթէ նա իւր ժամանակին վերադարձած լինէր իւր հայրենի երկիրը եւ իւր վրայ առնէր իւր ընտանիքի խնամատարութիւնը, ես երբէք սոխպուած չէի լինի ոսքս դուրս դնել իմ հօր անից, եւ անբարոյականութեան մէջ չէի ընկնի։

— Ինչպէս էր այն չարագործի անունը, հարցրի ես, երբ հայրս վերջացրեց իւր պատմութիւնը:

— Օհան, դու կարծեմ կը ճանաչես նրան:

— Կարապետի որդին, ինչպէս չեմ ճանաչում:

— Հէնց նա:

Ես սառած մնացի: Այդ անիրաւը ոչ սակաւ մոլորութեան մէջ էր գցել եւ ինձ եւ իմ մօրը եւ մեր բարեկամներին: Ես այդ անցքը պատմեցի հօրս:

— Լսիր, հայրիկ, թէ ինչպէս վարուեց նա մեզ հետ, այնտեղ, Պարսկաստանում, երբ վերադարձաւ պանդխտութիւնից: Նա լուր բերեց, թէ դու մեռած ես եւ իւր հետ ունէր մի քանի խաչագողների նահակներ, որոնք նոյնպէս հաստատում էին քո մահը: Նա բերել էր եւ քո ոսկեայ մատանին, որի վրայ փորագրուած էր քո անուանական կնիքը: Այդ յիշատակը յանձնեց նա իմ մօրը: Մօրս ծանօթ էր այդ մատանին: Մեր դրացի կնիկները հաւաքւում էին նրան, որ թաղէ մեր գերեզմանատան մէջ, եւ քո անունով մի շիրիմ կանգնեցնէ: Բայց նա չէր հաւատում մեզ հասած տեղեկութիւններին, նրան բաւական յայտնի էին խաչագողների խարէբայութիւնները: Յետոյ Օհանը շատ անգամ գալիս էր մօրս մօտ, եւ իրան ցոյց էր տալիս որպէս մեր տան ամենալաւ բարեկամը: Վերջը նա առաջարկեց պսակուել մօրս հետ, բայց մայրս մերժեց նրա առաջարկութիւնը:

— Աւազակ, գոչեց հայրս ատամները կրճատցնելով, — այստեղ յափշտակեց ոսկիներս, իսկ այնտեղ աշխատում էր խլել կնոջս...:

Մի քանի րոպէ մնաց նա տխուր լռութեան մէջ, եւ ապա դարձաւ ինձ այդ խօսքերով.

— Ահա այդպէս են այդ չարագործները... զգուշացի՛ր որդի, հեռու կացի՛ր այդ մարդերից...: Նրանց համար այս աշխարհում ոչ մի սուրբ բան չկայ: Ես էլ մի ժամանակ պատկանում էի այդ փչացած, անբարոյականացած հասարակութեանը... ես էլ շատ տներ եմ քանդել, շատ ընտանիքներ եմ անբախտացրել... իմ ձեռքերս էլ մաքուր չեն մնացել անմեղների արիւնից...: Թող այդ խրճիթը, հեռացիր, որդի, չարագործ հօրից, որովհետեւ Աստուծոյ անէծքը կայ նրա վրայ...:

Խեղճ հայրը, նա դեռ չգիտէր, որ որդին էլ ընկած է նոյն ցեխի մէջ: Նա հարցրեց.

— Իսկ քեզ, որդի, ո՞ր բախտը ձգեց այս հեռաւոր անկիւնում:

Ես համառօտ կերպով պատմեցի վարպետիս դարբնոցում պատահած անցքը, մօրս ինձ քաւոր Պետրոսին յանձնելը, իմ գործունէութիւնը պանդխտութեան մէջ, եւ վերջապէս այն դէպքը, որ մեզ դէպի այդ անտառը բերեց եւ ձգեց ղրամանենգների ընկերութեան մէջ:

Այդ բոլորը լսելու ժամանակ Թշուառ Ծերունին աւելի եւ աւելի սարսափում էր, մինչեւ նա կարեց իմ պատմութիւնը, բացականչելով.

— Անբախտ որդի, դու էլ կորած ես... եւ արտասուքը հեղեղի նման սկսեց թափուել նրա աչքերից:

Փոքր ինչ հանգստանալուց յետոյ իւր խռովութիւնից, շարունակեց նա.

— Լսիր, որդի, ամէն մի ապականուած շրջանի ժահահոտութիւնը այնքան զգալի չէ լինում, երբ մարդ ապրում է նոյն շրջանի մէջ, որովհետեւ նրա զգայարանքները սովորում են, ընտելանում են այն օդին: Իսկ երբ դրսից, մաքուր օդ շնչելուց յետոյ մօտենում ես ապա-

կանուած ջղանին, այն ժամանակ միայն զգում ես նրա թուլնաւոր արտաշնչութիւնը: Դու այժմ այդ անմաքուր ջղանի, այդ փչացած հասարակութեան մէջ ես գտնվում, եւ զգալ չես կարող, թէ որպէս քո անձը օրըստօրէ վարակվում է, եւ բարոյապէս փտում է: Մի օտար ձեռք պէտք է, որ քեզ դուրս քաշէ նրա միջից, եւ այդ թող լինի հայրական փորձուած ձեռքը: Աղաչում եմ քեզ, հեռացիր այդ չարագործներից, քանի որ բոլորովին ընկած չես... քանի որ բոլորովին կորած չես...:

Նա իմ ձեռքը բռնել էր իւր դողդոջուն ափերի մէջ: Վերջին խօսքերը արտասանեց արտասուքով եւ ծնողական սրտի խորին ցաւակցութեամբ: Ես խոստացայ կատարել նրա պատուէրը, բայց մտածում էի, թէ ինչ հնարքով պէտք է բաժանուել քաւոր Պետրոսից: Այդ սարսափելի մարդը այն աստիճան կաշկանդել էր ինձ, որ նրանից անջատուելը շատ հեշտ չէր: Հայրս պատասխանեց.

— Ես լաւ եմ ճանաչում այն անիրաւին... նրա մէջ գութ կամ խիղճ կոչուած բաները չկան: Ես գիտեմ նրա բոլոր արարմունքը... աշխարհի ամէն կողմերում եղել է նա, եւ որտեղից անցել է, թողել է իւր ետեւից արտասուք եւ դժբախտութիւն...:

— Այսուամենայնիւ, նա ինձ հետ միշտ լաւ է եղել. նա մինչեւ անգամ որդու պէս սիրում էր ինձ:

— Հաւատում եմ: Բայց ինչ նշանակութիւն ունի խաչագողի համար սէրը, բարեկամութիւնը: — Լսիր, որդի, իմ ալեւոր մազերը այդ չարագործների մէջ ճերմակացան: Նրանք չգիտեն, թէ ինչ է ճշմարիտ բարեկամութիւնը: Որքան սերտ են նրանց ընկերական կապերը, որքան մտերմական է նրանց յարաբերութիւնները, այնքան զարհուրելի է լինում վրէժխնդրութիւնը, երբ ընկերը

իւր ընկերի մէջ նշմարում է մի ամենափոքր կասկած: Բայց կասկածել նրանք միշտ կարող են, որովհետեւ ում խիղճը մաքուր չէ, նա կասկածաւոր է լինում:

Այդ բոլորը ուղիղ էր, ես առանց հօրս ասելու էլ գիտէի: Բայց ինչպէս հեռանալ քաւոր Պետրոսից առանց նրան կասկած պատճառելու, — դրանումն էր գլխաւոր հարցը: Ես հարցրի.

— Ի՞նչպէս թողնեմ նրա մօտ իմ այսքան տառապած վաստակը: Ես ունեմ մեծ հարստութիւն, եւ բոլորը նրա մօտ է:

Նա պատասխանեց վրդովուած ձայնով.

— Ձգիր այն ապականուած արծաթը, նա թոյնից աւելի մահաբեր է: Խաչագողի հարստութիւնը մի փոսի մէջ քամուց հաւաքուած ցամաք տերեւների նման է. փչից հակառակ քամին, եւ ահա նա ցրիւ կուգայ: Աւազակը երբէք չի հարստանայ. նա այսօր հարուստ է, վաղը աղքատ: Այսպէս են բոլոր խաչագողները: Շատ անգամ նրանք մեծ գումարներ են ձեռք բերում, շատ անգամ մի սեւ փող չունեն ծախսելու: Որովհետեւ նրանք ոչ միայն սովոր չեն աշխատանքին, այլ նրանց ծանօթ չէ ոչ փողի կանոնաւոր կերպով վաստակելը եւ ոչ նրա տնտեսաբար սպառելը: Թէ առաջինը եւ թէ երկրորդը նրանց մօտ չափազանցութեան է հասնում եւ մէջ տեղում ճնում է միշտ ոչինչ, այսինքն աղքատութիւն:

Ես ոչինչ չպատասխանեցի. հայրս շարունակեց.

— Լսիր, որդի, ով որ իւր կեանքում մի որեւիցէ հիւանդութեամբ վարակուած է լինում, երկար բժշկուելուց յետոյ, ինքը նոյն հիւանդութեան բժիշկն է դառնում: Ես այդ բոլորը փորձել եմ իմ կեանքում, իմ

անձի վրայ: — Փախի՛ր, հեռացիր այդ մարդկանցից, որպէս ժանտախտից, աղատութեան ուրիշ հնար չկայ...:

Ես հարցրի հօրիցս, երբ նրանք այս աստիճան ատելի էին, ինչու էր նա իւր խրճիթը հիմնել նրանց բնակարանի մօտ:

— Նրանք նոր են եկել, ուստի ամիս չկայ, որ նրանք բոյն են դրել այդ անտառների մէջ: Իսկ ես բնակվում եմ այդ ծովի ափի մօտ աւելի քան վեց տարի: Երբ նրանք յայտնուեցան, ես պատրաստվում էի հեռանալ այստեղից, բայց հիւանդութիւնս արգելք եղաւ: Ես պառկած էի, ես հիւանդ էի, մի քանի շաբաթ հազիւ կը լինի, որ փոքր ինչ հազիւ կազդուրուել եմ:

— Բայց ի՞նչը ստիպեց քեզ առանձնանալ այդ ծովի ափի մօտ:

— Դու լսեցիր իմ պատմութիւնը, թէ որպէս խաբուեցայ ես, թէ որպէս դաւաճանեց եւ կողոպտեց ինձ հաւատարիմ ընկերը...: Այն օրից ես ատեցի աշխարհը, հեռացայ մարդկանցից, եւ վճռեցի այդ մոռացուած խրճիթում, այդ ծովի ափերի մօտ, անցկացնել իմ դժբախտ ծերութիւնը...:

Ես խոստացայ բաժանուել քաւոր Պետրոսից, խոստացայ թողնել այն հարստութիւնը, որ անարդար միջոցներով էր հաւաքուած, եւ ասեցի հօրս.

— Ես ընդունում եմ քո խորհուրդը, ես այլեւս չեմ վերադառնայ այն մարդկանց մօտ եւ կը մնամ այստեղ: Բայց դու եւս, հայր, խոստացիր, որ մոլորուած որդու հետ կը վերադառնաս մեր հայրենիքը, կ'ուրախացնես կարօտ մօրս, կ'ուրախացնես անտէր մնացած զաւակներիդ:

— Խոստանում եմ, պատասխանեց նա: — Ես հէնց այս օրից կը սկսեմ ճանապարհի պատրաստութիւն տեսնել:

Այդ միջոցին Նէնէն եւ պառաւը մօտեցան մեզ: Հայրս դարձաւ դէպի պառաւը, ասելով.

— Գրկիր այդ երիտասարդին, դա իմ որդին է:

Նա ուրախութեամբ սկսեց համբուրել ինձ: Ոչ սակաւ ուրախ էր եւ Նէնէն: Նա երեխայական հրճուանքով պտտվում էր իմ շուրջը, ծիծաղում էր, հանաքներ էր անում հօրս հետ, շնորհաւորում էր նրան, որ բախտ ունեցաւ գտնել իւր որդուն, եւ ասում էր.

— Տեսա՞ր, պապա, եթէ ես չլինէի, եթէ Մուբարը ինձ այստեղ չբերէր, դու, կարելի է չտեսնէիր նրան:

2.

ԸՆԿԱՑ ԾՈՒԽՂԱԿԻ ՄԷՋ

Ես վճռեցի երբէք չվերադառնալ քաւոր Պետրոսի մօտ։ Երեք օր էր, որ հօրս խրճիթից դուրս չէի եկել։ Ես դատապարտուած էի նոյն վիճակին, որպէս Նէնէն, — չերեւնալ խաչագողներին մինչեւ այստեղից հեռանայինք։

Բոլոր ժամանակը ես եւ հայրս զբաղուած էինք ճանապարհի պատրաստութիւններով։ Նէնէն շատ ուրախ էր, անդադար շտապեցնում էր մեզ. “գնա՛նք, գնա՛նք, ասում էր, հեռանանք այստեղից„։ Պառաւը նոյնպէս տխուր չէր երեւում. Նա շուտով հաշտուեցաւ հօրս հետ բաժանուելու մտքի հետ, երբ իմացաւ, որ նա մի հեռու երկրում կին ունի, զաւակներ ունի, եւ ցանկանում էր, որ ծերունին գնայ իւր ընտանիքը ուրախացնէ։ Հայրս իւր խրճիթը բոլոր պարագայքով թողնում էր պառաւին։

Ամեն ինչ պատրաստ էր ճանապարհի համար, մնում էր գրաստներ վարձել, տեղափոխուել մինչեւ մերձակայ քաղաքը եւ այնտեղից փոստայի սայլակներով առաջ գնալ։ Չորրորդ օրը վաղ-առաւօտեան ես ուղեւորուեցայ դէպի մօտակայ գիւղը գրաստներ վարձելու համար։

Դուրս գալով հօրս խրճիթից, զգում էի իմ մէջ մի անբացատրելի խաղաղութիւն. իմ սիրտը լցուած էր անսահման ուրախութեամբ. ես ինձ բախտաւոր էի համարում եւ գոհ։ Կարծես թէ, ես ազատուած լինէի խիստ

ծանր շղթաներից, որ յարաժամ ճնշում էին, յարաժամ տանջում էին ինձ։ Այո՛. ես ազատուած էի քաւոր Պետրոսի կապանքներից, ազատուած էի մի անբարոյական շրջանից . . . ։

Որպէս մի մարդ, որ դեռ հազիւ զգաստացել է իւր կատաղի արբեցութիւնից, ես մտաբերում էի իմ սարսափելի անցեալը . . . տեսնում էի այն խորին անդունդը, լցուած ամեն տեսակ ապականութիւններով, ուր բարոյապէս ընկած էի ես . . . ։ Ո՞վ դուրս հանեց ինձ այնտեղից։ — Նէնէն եւ հայրս։ Հայրս սովորեցրեց լինել բ ա ր ի, իսկ Նէնէն սովորեցրեց ս ի ր ե լ . . . ։

Նախախնամութեան մատն էի տեսնում այդ բոլոր դէպքերի մէջ, որ առիթ տուին ինձ ազատելու Նէնէի կեանքը եւ հանդիպելու հօրս։ Թէ՛ առաջինը եւ թէ՛ վերջինը առաջնորդեցին ինձ դէպի ուղղութիւն։ Եթէ Նէնէն չլինէր, ես առիթ չէի ունենայ հօրս տեսնելու, իսկ եթէ հօրս չտեսնէի, ես գուցէ միշտ կը մնայի խաչագողների խումբի մէջ . . . ։

Դեռ արեւը չէր ծագել, դեռ տիրում էր վաղորդեան մռայլը։ Գնալով դէպի մօտակայ գիւղը, ես իմ գլխում կազմում էի մի գեղեցիկ ծրագիր մեր ապագայի մասին։ Ես պատկերացնում էի սիրելի հայրենիքը . . . իմ եւ հօրս վերադարձը . . . մօրս եւ քոյրերիս ուրախութիւնը . . . եւ մեր խաղաղ ու հանգիստ կեանքը հայրենական օջախի կողքում . . . ։

Բայց ինձ տանջում էր մի ամենադժուարին հարց, թէ ինչ պէտք էր անել Նէնէի հետ։ Ես գիտէի, որ նա ինձանից չի բաժանուի. ես զգում էի, որ նրան թողնել չեմ կարող . . . ։ Այդ հարցը երկար զբաղեցնում էր իմ միտքը, երկար ես տարուբերվում էի զանազան մտածու-

թիւններուն մէջ։ Իմ սիրային ասպարիզում միմեանց հետ մրցում էին երկու էակներ՝ — Ենէնէն եւ Սառան։ Որին պէտք էր ընտրել...։

Շանապարհը, որ տանում էր դէպի մօտակայ գիւղը, պէտք է անցնէր այն ձորի միջով, ուր գտնվում էր խաչագողների բնակարանը։ Այդ պատճառով ես որոշել էի արեւածագից առաջ, առաւօտեան մթութեան պահուն, անցնել այնտեղից, որպէս զի նկատելի չլինեմ։

Դեռ բաւական մութն էր, երբ հասայ այնտեղ։ Բայց իմ ուշադրութիւնը գրաւեցին որոտման խուլ ձայներ, կարծես թէ, արձակում էին ատրճանակներ։ Ես կանգնեցայ։ Ձայները լսվում էին ուղիղ այն կողմից, որտեղ գտնվում էր նրանց բնակարանը։ Հետաքրքրութիւնը մոլորեցրեց ինձ։ Ես բարձրացայ մի բլուրի վրայ, սկսեցի այնտեղից նայել։ Իմ առջեւ բացուեցաւ մի հրեղէն ճակատ։ Ամբողջ ձորը վառվում էր կրակի մէջ։ Հրդեհը խաչագողների բնակարանից տարածուել էր անտառի մէջ։ Ամառնային տօթից ցամաքած ծառերը այրվում էին։

Կրակի բոցերը դուրս էին հոսում խաչագողների բնակարանից եւ տարածում էին նրա շուրջը սարսափելի լուսաւորութիւն։ Միլիոնները այրվում էին։ Մի կողմում ածած էին թղթերի կիսավառ կապոցները։ Հրդեհը ոչնչացնում էր կեղծ գործի կեղծ արդիւնքը...։

Հրդեհի լուսաւորութեան միջից երեւում էին զինուած մարդիկ, որոնք, կարծես թէ, խուզարկութիւններ էին անում։ Ոմանք կալանաւորուած էին շղթաների մէջ պահուած էին, ոմանք փախչում էին։ Անտառի մէջ հետամուտ էին լինում, որոնում էին փախստականներին։ Մթութեան մէջ ընդհմտրութիւններ էին կատարվում, այդ ժամանակ լսելի էր լինում ատրճանակների ձայնը։

Ի՛նչ էր պատահել։ Ինչ էլ որ լինէր, այդ սոսկալի տեսարանը մի լաւ բան չէր գուշակում։ Ես մոռացել հեռանալ։ Այդ միջոցին լուսաւորութիւնը աւելի տարածուեցաւ, կարծես, ամբողջ հորիզոնը վառվում էր կրակի մէջ։ Այժմ միանգամից բոցավառուելով, այրվում էին չոր խոտի դէզերը, որ խաչագողները հաւաքել էին իրանց ջորիների համար։ Լուսաւորութիւնը հասնում էր մինչեւ այն բլուրը, որի գագաթին կանգնած էի ես։ Իմ պատկերը մի անշարժ արձանի նման նկատուած էր բլուրի բարձրութեան վրայ։ Յանկարծ լսելի եղաւ մի ձայն։

— Դա էլ մեր ընկերն է...։

Իսկոյն վրայ հասան մի քանի զինուած մարդիկ եւ կալանաւորեցին ինձ։ Ընկերութիւնը արդէն յայտնի եղաւ ինձ. ես ընկայ ծուղակի մէջ...։

Ուղեցոյցը, որ մտանեց ինձ, միեւնոյն անձն էր, որին կոչում էին "էշի ականջ"։ Նրան փախչելու ժամանակ ճանապարհից բռնել էին եւ յետ էին բերում։ Այդ մարդը յայտնի էր ամբողջ խումբի մէջ իւր վատութիւններով։ Ես դարձայ նրան, ասելով.

— Չես ամաչում...։

— Դու պիտի ամաչես, պատասխանեց նա ըրթաբար, — դու մտանեցիր մեզ, եւ կարծում էիր, թէ ինքդ ազատ կը մնաս...։

— Ե՞ս մտանեցի ձեզ...։

— Այո՛, դու, ապա ոչ։ — Դու խաբեցիր մեզ, դու հեռացար մեզանից, դու թաղնուեցար ծերունի ձկնորսի խրճիթում, որտեղ թաղցրել էիր եւ այն աղջկան, որին յանձնել էին քեզ սպաննելու համար...։

— Այդ դու ո՞րտեղից գիտես։

— Ես երկու ամբողջ գիշերները խաւարի միջից, ձրկնորսի խրճիթի լուսամուտներից նայում էի ձեզ վրայ... եւ այդ հրդեհը պիտի կատարուէր այնտեղ... եւ ձեզ բոլորիդ պիտի այրէինք կրակի մէջ... բայց դու, անպիտան, աւելի ճարպիկ գտնուեցար մեզանից... մի քաջի համար մատնեցիր մեզ...:

Ես ոչինչ չպատասխանեցի. ինձ աւելի ծանր էր լսել նրա հայհոյանքները եւ անպատիժ թողնել նրան, քան թէ այն կապանքները, որ այդ րոպէում կաշկանդել էին ինձ: Սկսեցին մեզ տանել դէպի խաչագողների բնակարանի կողմը:

"Հշի ականջի" լոսքերից երեւաց, որ իմ բացակայութիւնը կասկածանքի մէջ էր ձգել ընկերներիս. նրանք սկսել էին որոնել ինձ եւ գտել էին ձկնորսի խրճիթում: Նէնէին կենդանի տեսնելը աւելի շփոթեցրել էր նրանց, մանաւանդ քաւոր Պետրոսին, որին ես հաւատացրել էի, թէ սպաննել եմ այդ աղջկան: "Հշի ականջին" յանձնուած էր եղել գաղտնի հսկել իմ գործողութիւնների վրայ, տեղեկութիւններ հաւաքել, մինչեւ ընկերութիւնը կը պարզէր այդ մթին եւ կնճռոտ հարցը եւ կը տար իւր վճիռը իմ մասին: Բայց ես ինչով էի առիթ տուել նրանց մտածելու, թէ ես եմ մատնել նրանց, — այդ ես հասկանալ չկարողացայ:

Արեգակը իւր առաջին ճառագայթները խառնեց հրդեհի բոցերի հետ, երբ մեզ հասցրին խաչագողների բնակարանի մօտ: Երեւում էր, որ իրանք, խաչագողները, կրակ էին տուել այդ բնակարանին, որպէս զի մոխրի մէջ անհետացնեն իրանց արհեստի նշանները:

Երբ բոլորովին մօտեցայ, տեսնում եմ՝ խաչագողներից մի քանիսը շղթայակապ պահվում են զինուորների ձեռքում: Ամբողջ ձորը շրջապատուած էր բազմաթիւ պահապաններով: Այսուամենայնիւ, մի քանիսին յաջողուել էր փախչել, թէեւ ոստիկանութիւնը վրայ էր հասել այն ժամանակ, երբ բոլորը դեռ քնած էին:

Քաւոր Պետրոսը նոյնպէս կալանաւորների թուում էր. նա խիստ անխռով կերպով կանգնած էր իւր շղթաների մէջ եւ նոյնպէս հպարտ էր, որպէս միշտ: Առաջին անգամը չէր, որ նրա հետ պատահում էին այսպիսի "խաղեր": Նա իւր կեանքում դուցէ հարիւր անգամ գործ էր ունեցել ոստիկանութեան հետ...: Երբ տեսաւ ինձ, խիստ դաժան կերպով նայեց իմ վրայ եւ ոչինչ չհասցրեց. բայց ես նրա թունաւոր հայեացքի մէջ կարդացի այդ խօսքերը. "դու էլ, Մուրադ, դաւաճանեցիր ինձ...,,

Յուզարկութիւնը անտառի մէջ տեւեց կէս օր. խաչագողներից ոմանք, տնակի ստորերկրեայ գաղտնի ճանապարհներով դուրս էին եկել եւ անհետացել էին ծառերի ու թուփերի մէջ: Նրանց գտնել չկարողացան: Կալանաւորների թիւը, բացի ինձանից, չորս հոգի էր:

Հրդեհը արդէն բոլորովին լափել էր այն բնակարանը, որ մօտ մի տարի եղել էր կենտրոն սպասաւելի չարագործութիւնների: Երբ ամեն ինչ վերջացած էր, մեզ սկսեցին տանել դէպի մերձակայ քաղաքը: Մի բան, որ իմ կորստեան այն դառն ձգնաժամում մտաբերեցի ես, էր Նէնէն: Յսեղ աղջիկ, դու գարձեալ միացիր անտէր...:

Երկիւղը եւ յուսահատութիւնը, որ այսպիսի դէպքերում տիրում են յանցաւորի սրտին, ինձ բոլորովին զգալի չեղան: Կարծես թէ, ես հանդուցած էի, թէ հարկաւոր էր որ այսպէս լինէը, թէ այն ճանապարհը, որ ես բռնել էի, ինձ պէտք է հասցնէր մինչեւ այստեղ, թէ ես

պէտք է պատժուէի եւ իմ տանջանքներով քաւէի իմ գործած մեղքերը...:

Երեք օրից յետոյ մեզ հասցրին մերձակայ քաղաքը, եւ փակեցին բերդի մէջ: Դիշեր էր: Բանտի մի անկիւնում, թեք ընկած յարդի վրայ, հեռու իմ ընկերներից, ախուր մտածութիւնների մէջ տանջվում էի ես: Հալիւ-հաղ ինձ համար ծագեց կեանքի մի նոր առաւօտ, հալիւ-հաղ ինձ պատուաճ էի համարում մի անբարոյական հասարակութիւնից, հալիւ-հաղ սկսվում էր ինձ համար արդար ապրուստի մի նոր եղանակ, եւ ահա ախուր հանգամանքները ինձ ձգեցին մի նոր դժբախտութեան մէջ: Ինչով կը վերջանար այդ, ես չգիտէի, բայց համոզուած էի, որ ես ընդերկար պիտի բաժանուած մնամ սիրելի ծնողներից, սիրելի բարեկամներից, եւ ես գուցէ միւս անգամ չէ պիտի կարողանամ տեսնել Նէնէին:

Այդ մտածութիւնների մէջ էի ես, երբ իմ ընկերները, բանտի մի այլ կողմում խումբով նստած, թուղթ էին խաղում, ծիծաղում էին, հանաքներ էին անում, կարծես թէ, իրանց տանը լինէին: Քաւոր Պետրոսը նրանց մօտ էր. նա չէր խաղում, բայց նայում էր նրանց խաղի վրայ: Նա բաժանուեցաւ խումբից եւ մօտեցաւ ինձ:

Մի մարդու թէ բարոյական եւ թէ մարմնական ազնուութիւնները այնքան նշմարելի չեն լինում, երբ նայում ես նրա վրայ բարեկամի աչքով: Բայց երբ սկսեցիր առել նրան, այն ժամանակ միայն յայտնվում է նա իւր բոլոր պլանդակութեամբ: Այսպէս ներկայացաւ ինձ քաւոր Պետրոսը, երբ մօտեցաւ իւր սովորական սառնութեամբ:

— Դու քեզ վա՞ռ ես պղում, հարցրեց նա:

— Ոչ, պատասխանեցի ես:

— Ապա ինչո՞ւ ես այդպէս ախուր:

— Բանտում ուրախ չեն լինում:

— Այդ իրաւ է, բայց ախորեն էլ թուլասրտութեան նշան է:

Նա նստեց իմ մօտ եւ սկսեց զանազան խրատներ տալ:

— Զվախենաս, Մուրադ, այդպիսի դէպքեր շատ են պատահում մեզ հետ: Ինչուց, շատ կարելի է սխալի մեր քննութիւնը. դու պէտք է ջոյանաս քո իսկական անունը, քո հայրենիքը եւ ինչ ազգի կամ ինչ դաւանութեան պատկանելը: Ընտրիր քեզ համար մի կեղծ անուն, ձեւացրու քեզ ուրիշ ազգից եւ ուրիշ երկրից: Ուրացիր ինչ մեղադրանք որ կը դնեն քեզ վրայ. այնուհետեւ քո պատասխանելը դժուար չի լինի:

Ես պատասխանեցի խորին զղջանքով.

— Որքան խարեցի, որքան սուտ խօսեցի, բաւական է: Ես այսուհետեւ պէտք է ճշմարիտը խօսեմ:

Նա սկսեց զարմացած կերպով նայել իմ երեսին:

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, գժուե՞լ ես, թէ ինչ է:

— Ես այժմ աւելի խելացի եմ, քան թէ երբէք:

— Դու կամենում ես կորցնել քեզ:

— Ես այն օրից կորայ, երբ սկսեցի հետեւել քո խրատներին:

Այժմ նրա դէմքի վրայ երեւացին բարկութեան նշանները: Բայց շուտով անցաւ բարկութիւնը եւ ցաւակցական եղանակով խօսեց նա.

— Ես չէի հաւատում, Մուրադ, եւ հիմայ էլ չեմ հաւատում այն կասկածանքին, որ քո նոր ընկերները ունեցան քո մասին, — իբր թէ դու, առանց որեւիցէ պատճառի, հեռացար նրանցից եւ մատնեցիր նրանց: Բայց

ես հաւատում եմ մի բանի, որ այժմ քո խելքը իւր տեղումը չէ. ես նկատում եմ քո մէջ խելագարութեան նշաններ: Դու այլեւս այն չես, ինչ որ էիր առաջ:

— Այդ իրաւ է, ես այժմ այն չեմ, ինչ որ էի առաջ, եւ այդ ապացոյց է, որ այժմ իմ խելքը իւր տեղումն է, իսկ առաջ խելագար էի:

Նա կրկին զայրացաւ, ասելով.

— Ողորմելի՛, ո՞վ փչեց յիմար գլխումդ այդ ցնորքները: Դու կարծում ես, որ ես այժմ չգիտեմ, թէ ինչպէս մի թափառական աղջկայ համար խաբեցիր ինձ: Նրա սէրը խելքից հանեց քեզ, եւ դու վճռեցիր բաժանուել քո բարերարից, որ այնքան տարի իւր որդու պէս սնուցել էր քեզ: Բայց Աստուած պատժեց քեզ քո ապերախտութեան համար. քո ճանապարհը կրկին դարձրեց դէպի մեր կողմը, որ այդ բանտին, այդ շղթաներին մասնակից լինես եւ դու:

— Այդ բանտը, այդ շղթաները իմ հին մեղքերի համար է, պատասխանեցի ես: — Բայց եթէ ես գործել եմ իմ կեանքում մի բարի գործ, այդ այն է, որ ես խաբեցի քեզ եւ չկատարեցի քո պատուէրը՝ զրկել կեանքից մի անմեղ աղջկայ:

— Որին դու սիրեցիր:

— Այո:

— Որը մեր բոլորին մատնեց:

— Այդ սուտ է, այդ զրպարտութիւն է: Նա չէ մատնել ձեզ:

Նա պատասխանեց ինձ աւելի յանդիմանական եղանակով.

— Ինչու ես խաբում ինձ, դու մի քանի րոպէ առաջ ասում էիր, որ այլեւս սուտ չի պիտի խօսես: Միթէ

քեզ յայտնի չէ՞, որ այն աղջիկը սպառնացել էր մատնել ամբողջ ընկերութիւնը. այդ պատճառով էլ վճռել էին սպաննել նրան: Մի դիպուածով դու նրա կեանքը ազատեցիր եւ դրանով միջոց տուեցիր նրան կատարելու իւր վրէժխնդրութիւնը:

— Բոլորովին սխալ է ձեր ենթադրութիւնը, պատասխանեցի ես: — Ձեզանից բաժանուելուց յետոյ, եթէ դուք յանձնել էիք "Էշի ականջին" լրտեսել իմ գործողութիւնները, — այն եւս պէտք է լաւ յայտնի լինի ձեզ, որ այն աղջիկը ձկնորսի խրճիթից ոչ մի տեղ չէ հեռացել, ուրեմն եւ չէր կարող մատնել ձեզ:

— "Էշի ականջը", գտաւ քեզ ձկնորսի խրճիթում քո բացակայութիւնից երկու օր յետոյ. նա չէր կարող տեղեկութիւններ հաւաքել, թէ մինչեւ այնօր թէ դու եւ թէ այն աղջիկը ինչպէս էիք անցուցել:

Մեր վիճաբանութիւնը քաւոր Պետրոսի հետ տեւեց երկար, ես դարձեալ չկարողացայ համոզել նրան, թէ Նէնէն մեղաւոր չէր մատնութեան գործի մէջ: Հանգամանքները ինքը ըստ ինքեան այնպէս էին կազմուել, որ Նէնէի կարծիքական վարմունքը հաւանական էին դարձնում: Այդ անբախտ աղջիկը ընկել էր խաչագողների ձեռքը. նրան չարչարել էին. Նա սպառնացել էր, եթէ իրան բաց չթողնեն, կը մատնէ նրանց. այդ երկիւղը առիթ էր տուել խաչագողներին սպաննելու նրան. Ես ազատեցի նրա կեանքը. եւ մի քանի օրից յետոյ կատարուեցաւ մատնութիւնը, խաչագողներին կալանաւորեցին: Այլեւս ո՞ւմ վրայ կարող էին նրանք կասկած ունենալ, եթէ ոչ, կամ իմ, կամ Նէնէի վրայ: Քաւոր Պետրոսը թէեւ չէր հաւատում, որ ես կը դաւաճանէի նրան, այսուամենայնիւ, նա ինձ բոլորովին արդար եւս չէր համարում, յայտնելով

նոյն միտքը, որ եթէ ես նրա հրամանը կատարած լինէի, եւ Նէնէին սպանած լինէի, այնուհետեւ այդ դժբախտութիւնը տեղի չէր ունենայ: Նրա բարկութեանը չափ չկար, թէ ինչպէս ես համարձակուեցայ խաբել նրան: Բայց այդ բարկութիւնը մասամբ մեղմանում էր, երբ նա ի նկատի էր առնում իմ սիրահարութիւնը, որը նրա կարծիքով մինչեւ խելագարութեան էր հասցրել ինձ: Բայց նա, որպէս երեւում էր, դեռ չգիտէր հօրս հետ իմ հանդիպելը, եթէ յայտնէի, գուցէ բոլորովին կը փարատէի թէ նրա եւ թէ ընկերներիս կասկածը իմ անհաւատարմութեան մասին: Քաւոր Պետրոսը ներող էր, երբ իրաւացի փաստեր էին ներկայացնում: Բայց ես այլ եւս փոյթ չունէի իմ անձը արդարացնելու նրա առջեւ: Նա հեռացաւ, հետեւեալ խօսքերը ասելով:

— Օրէնքի դատապարտութիւնից աւելի հեշտ է ազատել քեզ, բայց ես չգիտեմ, ինչպէս դու պիտի ազատուես քո ընկերների վրէժխնդրութիւնից...:

Այդ խօսքերը սարսափելի էին, սարսափելի էին աւելի այն պատճառով, որ դուրս էին գալիս մի խաչագողի բերանից: Բայց ես լսեցի խորին արհամարհանքով, եւ այդ աւելի վիրաւորեց նրան: Այդ անգութ մարդը դեռ սիրում էր ինձ, թէեւ թագցնում էր իւր սէրը, — դեռ մտածում էր իմ մասին, դեռ հոգ էր տանում իմ վրայ: Ես տեսայ, թէ ինչպէս նա վշտացած կերպով հեռացաւ, գնաց նստեց բանտի մի մթին անկիւնում, եւ գլուխը քաշ գցած, տխուր մտածութիւնների մէջ ընկաւ: Միթէ նա զգում էր, որ ես նրա դաստիարակութեան թշուառ զոհն էի...:

Նրբէք չէր պատահել, որ ես այնպիսի համարձակութեամբ խօսէի քաւոր Պետրոսի հետ, որպէս այն գիշեր:

Կարծես թէ, յանցաւորի կապանքները մի տեսակ ազատութիւն են շնորհում նրան: Շղթաների մէջ թէ մեծաւորը եւ թէ ստորադրեալը հաւասար իրաւունք են վայելում: Մեր վիճաբանութիւնը թէեւ խիստ տաք էր, բայց անցաւ հանդարտ կերպով, այնպէս որ, մեր միւս ընկերները, որոնք զբաղուած էին թղթախաղով, ոչինչ չսեցին: Այժմ նրանք վերջացրել էին իրանց խաղը եւ սկսել էին միմեանց հետ զանազան հանաքներ անել: Ինձ վրայ ուշադրութիւն անգամ չէին դարձնում: Ես խորին զգուանքով լսում էի նրանց զուարճութիւնները:

— Էգուց կը սկսուի մեր հարսանիքը, ասում էր մէկը յիշեցնելով քննութեան սկսուիլը:

— Տօ, Ցարօ, այդ քանիերո՞րդ անգամն է, որ տուներդ հագնում ես այդ զանգակները, հարցնում էր մի մանկահասակ խաչագող Ծերունի ընկերից, ցոյց տալով նրա շղթաները:

— Սատանան գիտէ, մոռացել եմ հաշիւը, պատասխանում էր Ծերունին ինքնաբաւական ժպիտով:

— Դու նրանից այդ հարցրու, թէ քանի անգամ փախել ես "կարմիր տնից", մէջ մտաւ մի կարճահասակ խաչագող:

"Կարմիր տուն" կոչում էին նրանք Սիբիրը:

— Այդ հարցնելու հարկ չկայ, պատասխանեց առաջինը, — չե՞ս մտածում, հաշիւը ճակատի վրայ գրած է, երկու գրոշմ, կը նշանակէ երկու անգամ:

— Այս անգամ երրորդ գրոշմը կը դրուի, պատասխանեց Ծերունի Ցարօն, շարունակելով իւր ժպիտը. — երեք գրոշմ, վատ չէ, խորհրդաւոր թիւ է:

Այդ ժամանակ դեռ գործադրվում էր այն օրէնքը, որ աքսորականների ճակատի վրայ գրոշմ էին դնում:

— Ապա դու ի՞նչպէս փախար բերդից, հարցրեց մեկը իւր ընկերից, որին կոչում էին Զաքօ:

— Այդ ի՞նչ մի զարմանալու բան է, պատասխանեց Զաքօն, — շատ հեշտ կերպով: Ինձ դրեցին բերդը: Ընկերս, որ աւելի յանցաւոր էր քան թէ ես, չքռնուեցաւ: Նա իւր հագուստն ու կերպարանքը փոխեց, եւ իրան ձեւացնելով իմ ազգական, թոյլ տուած օրեւրում գալիս էր ինձ տեսութիւն: Ամեն անգամ բերում էր իմ համար սպիտակ հաց եւ այլ ուտելիքներ: Վերջապէս հասաւ գատկի տօնը որ կաթնաւորների վրայ թափում է իւր ողորմութիւնը: Բարեպաշտ մարդիկ իրանց տան պատրաստութիւնից նրանց համար բաժին են ուղարկում: Այդ տօնին չմոռացուեցայ եւ ես: Ընկերս բերից ինձ համար մի ամբողջ հաց ու սառը փլաւ: Այդ երկրի հացերը, փառք Աստուծոյ, մեր բարակ եւ թափանցիկ լաւաշները չեն, նրանք այնքան ահագին են, որ ամեն բան կարելի է նրանց մէջ թագցնել: Հացի մէջ դրած էր փոքրիկ սղոց եւ աբրեշումի երկայն պարան: Առաջինը բաւական էր բանտի լուսամուտներից մէկի երկաթեայ վանդակապատը կտրելու, իսկ երկրորդով այնտեղից ցած իջնելու:

— Իսկ պահապանները չնկատեցի՞ն:

— Գատկի տօնին միթէ կարելի է մի պահապան գտնել, որ հարբած չլինի:

Այս տեսակ խօսակցութիւններ տեւեցին մինչեւ կէս գիշեր: Ես այլեւս լսել չկարողացայ: Մի կողմից յոգնածութիւնը, միւս կողմից հոգեկան տանջանքը այն աստիճան թուլացրել էին ինձ, որ երկար արթուն մնալ չկարողացայ:

Է.

ՆԱ ԻՆՁ ՉԹՈՂԵՑ

Անցել էր աւելի քան մի տարի այն օրից, որ ես կալանաւորուեցայ, որ ես բանտում մնշվում էի:

Հէնց առաջին անգամ, երբ տարուեցայ քննիչի մօտ, ես պարզ կերպով խոստովանուեցայ բոլորը, ինչ որ գործել էի: Ես ոչինչ չթագցրի, ես մինչեւ անգամ ցոյց տուի այն բանները, որ ինձանից չէին հարցնում: Ես մի ըստ միոջէ պատմեցի, թէ ինչպէս անմեղ սրտով դուրս եկայ հայրենիքից, ինչպէս ընկայ խաչագողների հասարակութեան մէջ, ինչպէս հետզհետէ ընտելացայ չարագործութեան, ինչեր արեցի, ինչեր կատարեցի, եւ վերջապէս ծրպէս հօրս խրատով բաժանուեցայ այդ հասարակութիւնից, եւ պատրաստվում էի բոլորովին հեռանալ նրանցից, բայց յանկարծ բռնուեցայ:

Ամեն ինչ անկեղծաբար պատմելուց յետոյ, ես յոյս ունէի, որ կ'արդարացնեն ինձ, տեսնելով, որ ես բոլորովին անդիտակցաբար ընկած էի այդ յանցանքների մէջ, եւ ի նկատի առնելով, որ ես արդէն զղջացել էի իմ մեղքերը, հասկացել էի իմ մոլորութիւնները եւ դարձել էի լաւ ճանապարհից:

Բայց այնպէս չեղաւ, ինչպէս ես սպասում էի: Իմ անկեղծ խոստովանութիւնը աւելի ծանրացրեց իմ վրայ

իմ մեղքերը: Ես ինքս ինձ համար վկայ դարձայ եւ հաստատեցի իմ յանցանքները: Իմ զղջման վրայ ուշադրութիւն չդարձրին, մատնեցին միայն ապաշնորհութեան մասին:

Մի քանի ամսից յետոյ, քաղաքի բարձր դատարանում, կարդացին իմ դատապարտութեան վճիռը. "Զրկել ամեն իրաւունքներից, աքսորել մինչեւ մահ տաժանական աշխատութիւնների մէջ „...:

Ես շատ տխրեցայ, երբ լսեցի այդ վճիռը. չներկել յանցաւորին, որ արդէն զղջացել էր, որ արդէն ուղղուել էր: Բայց ո՞վ է քննում մարդու սիրտը. նա այնպիսի մի խորութեան մէջ թագնուած է, որ ամենասրատես դատաւորի աչքն անգամ այնտեղ թափանցել կարող չէ:

Իմ ընկերները նոյնպէս աքսորանքի դատապարտուեցան, բայց նրանք այնպէս տխուր չէին, որպէս ես. նրանք աւելի զայրացած էին երեւում, քան թէ տրտում:

Շրջապատուած զինուորներով, դատարանից կրկին տարան ինձ բանտը: Երբ հասայրին բերդի դրանը, դեռ ներս չմտած, իմ եռեւից մի ձիչ, մի ցաւալի աղաղակ բարձրացաւ. "Ես պէտք է տեսնեմ նրան... միթէ դուք չունէք... միթէ դուք Աստուած չունէք... մարդիկ, ինչո՞ւ էք արգելում ինձ... ես պէտք է տեսնեմ նրան... թողէք, որ տեսնեմ նրան„...:

Ես յետ նայեցայ: Այդ խօսքերը լսում էին մի աղջկայ բերնից, որ պատառոտած հագուստով, հերարձակ, այս կողմ եւ այն կողմ էր ընկնում, աշխատում էր պատառել զինուորների շարքը եւ մօտենալ ինձ: Պահապանները հրացանների սուրիններով հեռացնում էին նրան, բայց նա դարձեալ առաջ էր մղվում:

Ուրքան եւ խռովութեան մէջ լինէի այն րոպէում, որքան եւ իմ զլուխը եւ խելքը ինձ չէին պատկանում, այսուամենայնիւ, այն սրտաշարժ պատկերի մէջ ես ճանաչեցի Նէնէին: Ինչո՞ղ աղջիկ, որտեղից յայտնուեցաւ նա...:

Նրա աղաղակից դուրս եկաւ բանտապահը:

— Դարձեալ այն ցնորուած աղջիկն է, ասաց նա եւ հրամայեց հեռացնել:

Երեւում էր, որ Նէնէն առաջին անգամը չէր, որ խնդրում էր՝ իրան թոյլ տան բանտը մտնելու: Նրան արդէն ճանաչում էին: Նա խիստ ողորմելի ձայնով պատասխանեց.

— Պարոն բանտապահ, ես ցնորուած չեմ... ի սէր Աստուծոյ, զթացէք իմ վրայ, թոյլ տուեցէք, որ տեսնեմ նրան...:

— Ո՞ւմ տեսնես:

— Այն կալանաւորին, որ տանում են...:

— Դու ո՞վ ես:

— Ես նրա բարեկամն եմ... թողէք տեսնեմ նրան... միթէ դուք Աստուած չունէք... եթէ չթողնէք, ես դատաւորի մօտ կը գնամ... թագաւորի մօտ կը գնամ...:

— Աւելի լաւ կը լինի, եթէ գժատունը գնաս, հեգնութեամբ պատասխանեց բանտապահը եւ հրամայեց հեռացնել:

Նրա անդիմադրութիւնը աւելի վշտացրեց ինձ, քան իմ դատապարտութեան վճիռը, որ այնօր կարդացին դատարանում: Ինձ ներս տարան, դռները փակուեցան իմ եռեւից, ես այլ եւս ոչինչ լսեցի...:

Ամբողջ օրը խելագարի նման էի: Ես բողոքվին մոռացել էի իմ թշուառ դրութիւնը. մոռացել էի, թէ

ուրախ սարսափելի ապագայ էր սպասում ինձ, — ես միայն մտածում էի անբախտ Նէնէի մասին: Միշտ իմ աչքերի առջեւն էր այն վըդովմունքով լի աղջիկը, տեսնում էի այն հերարձակ կոյսի վշտալի պատկերը, լսում էի նրա սգաւոր ձայնը...: Արեւը մտաւ, մութը պատեց, բանտի մէջ սիրում էր գիշերային խաւարը: Այդ մթութեան մէջ դարձեալ տեսնում էի նրան, լսում էի նրա ձայնը...:

Առաջին անգամ ես զգացի շղթաներիս ծանրութիւնը, առաջին անգամ բանտը ներկայացաւ ինձ իւր սոսկալի կերպարանքով: Մինչեւ այնօր ինձ տանելի էր բոլորը: Իսկ երբ տեսայ, թէ իմ պատճառով տանջվում է մի անմեղ հոգի, այն ժամանակ միայն հասկանալի եղաւ բոլոր զարհուրանքը իմ թշուառ դրութեան...:

Ամենքը թողեցին ինձ. իմ հաւատարիմ ընկերները ինձ մատնեցին. ես կորուեցայ լոյս աշխարհից... բայց նա ինձ չթողեց...: Նա եկաւ իմ տեսիլից. նա որոնում էր ինձ, երեւի, երկար որոնում էր, եւ գտաւ: Բայց գտաւ բանտի մէջ, դատապարտեալների մռայլ գերեզմանի մէջ...:

Այդ գերեզմանի շուրջը պտտվում էր նա, գիշերային մենաւոր ուրուականի պէս պտտվում էր նա, եւ խաւարի միջից մի մարգարէուհի մեռելահարցուկի նման կանչում էր դուրս կոչել իւր սիրելիին...:

Դա իրողութիւն էր, դա ցնորք չէր, ես լսում էի նրա ձայնը, նոյն սրտաշարժ, ողբալի ձայնը, որպէս լսել էի ցերեկով: Գիշերը խաղաղ էր. մարդիկ քնած էին. դրսում ամեն ինչ գանվում էր խորին լռութեան մէջ: "Թողէք, տեսնեմ նրան"... այդ խօսքերը միայն հնչվում էին գիշերային լռութեան մէջ...:

Բանտի պահապան զինուորը, հրացանը ուսին դրած, չափաւոր քայլերով անցուդարձ էր անում իւր պահականոցի մօտ: Նա նոյնպէս լսում էր ողբալի ձայնը, եւ անհետաքրքրութեամբ ասում էր. "դա այն ցնորուած աղջկայ ձայնն է"...:

Գիշերը ես անցուցի տենդային անհանգստութեան մէջ. ոչ քնած էի եւ ոչ արթուն: Առաւօտեան, երբ արեգակի առաջին ճառագայթները ներս ցոլացին բանտի նեղ լուսամուտներից, եւ ինձ համար ծագեց ուրախութեան լոյսը: Դուռը բացուեցաւ, խելագարի նման ներս վազեց Նէնէն: Նրա առաջին խօսքերը կցկտուր էին եւ անհասկանալի: Նա մօտեցաւ, գրկեց ինձ, եւ երկար ժամ իմ կուրծքի վրայ անխօս: Նա նման էր մի սպաննուածի, որի երեսի վրայ բնաւ գոյն չկար: Կենդանի ժպտացել էին գեռ չմարած աչքերը միայն, այն լի կատաղութեամբ աչքերը, որոնք իրանց խռովութեան մէջ եւս գեղեցիկ էին:

Նրա խռովութիւնը շուտով անցաւ, անցաւ, որովհետեւ գանվում էր ինձ մօտ, որովհետեւ տեսնում էր ինձ: Նա սկսեց խօսել.

— Ախ, սիրելիս, եթէ գիտենայիր որքան որոնել եմ քեզ... որքան ման եմ եկել...:

Նրա ձայնը սկսուեց խեղդուել. վոքր ինչ հանգըստացաւ եւ ապա շարունակեց.

— Անցնում էի քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, ամեն տեղ հարցնում էի քեզ...: Ախ, ինչքա՜ մարդիկ այսքան վատացել են... ամեն տեղ հալածում էին ինձ... ամեն տեղ հեռացնում էին ինձ... չէին թողնում, որ բնակարանների մէջ մտնեմ... ասում էին՝ դա ցնորուած աղջիկ է...:

— Ասա որտեղ էիր անցկացնում դու:

— Փողոցների վրայ, բաց երկնքի տակ... եւ աւելի հանգիստ էի, երբ գտնվում էի անապատում, կամ թագնվում էի անտառների ծառերի մէջ...: Այնտեղ լաւ էր, այնտեղ մարդիկ չկային...:

— Ապա ինչո՞վ էիր կերակրվում դու:

— Շատ անգամ օրերով քաղցած էի մնում... շատ անգամ ուտում էի դաշտային բանջարներ կամ կերակրվում էի վայրենի պտուղներով...: Երբեմն գտնվում էին բարի մարդիկ, որոնք ինձ հաց էին տալիս:

Եւ այդ բոլորը ո՞ւմ համար, ի՞նչի համար, — մի դատապարտեալ աքսորականի համար, որ պիտի մահուէր, պիտի ոչնչանար հանքերում...:

Բայց ինձ աւելի զարմացնում էր այն, թէ ի՞նչպէս Թոլ տուին «խելագար աղջկան» մնալ բանտը, որի մէջ ես ամենևին խելագարութեան նշան չէի նկատում, միայն վերին աստիճանի անձնազոհութիւնը եւ թշուառութեան սաստիկ կատաղութիւնը նրան բախտաւոր մահկանացուների աչքում խելագար էին ներկայացնում:

Նա պատմեց, թէ այն օրից, որ եկել էր այդ քաղաքը եւ տեղեկացել էր, որ ես այն բանտումն եմ գտնվում, — բանակի շրջակայքից չէր հեռանում. գիշերները անց էր կացնում նրա պատերի մօտ, իսկ ցերեկով կանգնում էր փողոցների վրայ, աղաչում էր, պաղատում էր անցորդներին, պատմում էր նրանց իմ անմեղութիւնը, խնդրում էր, որ օգնեն ինձ: Նա գեռ այնքան միամիտ էր, որ կարծում էր, թէ ամեն մարդ իրաւունք ունէր ինձ դատաւոր լինելու: Իսկ այն առաւօտ, երբ բանտը մտնում էր մի երիտասարդ ակնոցաւոր պարոն, նա վազեց, մօտեցաւ, եւ գրկելով նրա ոտները, խնդրեց, որ իրան էլ Թոլ տան բանտը մտնելու եւ իւր «սիրելին» տեսնելու: Ակնոցաւոր պարոնը գթացաւ նրա վրայ, խոստացաւ, որ իսկոյն հրաման կ'առնէ բանտապահից: Նա կատարեց իւր խոստումնքը, քանի րոպէից յետոյ նրան ներս թողեցին:

Որքան մխիթարական լինէր իմ դժբախտութեան ամուր ժամերում տեսնել իմ մօտ նէնէին, որքան սիրարժան լինէր նրա ծայրայեղ անձնազոհութիւնը, այսու ամենայնիւ, ես մտածում էի. «միթէ ես արժեմ դրան... ի՞նչով է մեղաւոր այդ անմեղ աղջիկը, որ տանջվում է մի չարագործի համար... ի՞նչու ես ձգեցի նրա սրտում այն սրբազան կայծը, որ այնքան բոցավառուեցաւ, որ այնքան բորբոքուեցաւ, մինչեւ խելքից հանեց նրան... ի՞նչու ես խլեցի նրա հանգստութիւնը...: Այդ բնութեան ազատ որդին, որի ցեղին վիճակուած է կեանքի անհոգ եւ աւելի ուրախ բաժինը, դուցէ աւելի բախտաւոր կը լինէր, եթէ չհանդիպէր ինձ... ի՞նչու ես թշուառացրի նրան...: Աւելի լաւ չէր լինի, որ հէնց այն օրը, երբ ես նրա կեանքը ազատեցի եղեռնագործի ձեռքից, բաց թողնէի նրան: Նա կը գնար, աշխարհը լայն ու արձակ է ցիպանուհու համար, — կը գնար եւ իւր համար նոր բախտ կ'որոնէր»...:

Արդէն ուշ էր... այդ բոլորը պէտք էր անցած համարել... ես միայն հարցրի.

— Ի՞նչու եկար դու, ի՞նչու չմնացիր հօրս մօտ. նա բարի մարդ էր, կը պահէր, կը պահպանէր քեզ:

Դժբախտները ամեն մի դժբախտութեան դէպքերում այն քաղաքավարական ձեւերը չգիտեն, որ պահպանում են բախտաւորները միայն: Նէնէն բոլորովին պարզ կերպով պատասխանեց.

— Հայրդ մեռաւ, նա մեռաւ հէնց այն օրը, երբ խոցաւ, որ դու կալանաւորուած ես:

Այդ բօթը սպասափելի ներգործութիւն ունեցաւ իմ վրայ: Նա մեռաւ իմ պատճառով, մոլորեալ որդու պատճառով, ես նրա մահուանը պարտական էի...:

Նէնէն հսկատեց իմ խռովութիւնը, շարունակեց պատմել:

— Այն առաւօտը, երբ դու հեռացար խրճիթից եւ խոստացար, թէ երեկոյեան կը վերադառնաս, մենք անհամբեր սպասում էինք քեզ: Արեւը մտաւ, օրը մթնեց, բայց դու չվերադարձար: Ամբողջ գիշերը չքնեցինք, հէնց նստած սպասում էինք քեզ: Հայրդ մեր բոլորից աւելի անհանգիստ էր: Միւս առաւօտը մինչեւ ճաշ դարձեալ սպասում էինք քեզ: Ցետոյ հայրդ ինձ իւր հետ առնելով, գնացինք այն "աւազակների" բնակարանի մօտ, տեսանք՝ նրանց տնակը այրուած էր, ոչ ոք չկար այնտեղ: Երբ յետ դարձանք, անտառում պատահեց մեզ մի խոզարած. նա պատմեց, թէ ինչ էր պատահել: Երբ հայրդ լսեց նրա պատմութիւնը, իսկոյն թուլացաւ եւ ցած ընկաւ: Ես եւ խոզարածը հազիւ կարողացանք նրան ուշի բերել եւ հասցրինք մինչեւ խրճիթը: Նոյն գիշերը նա սաստիկ ջերմի մէջ էր. առաւօտեան նրա մարմինը գտանք բոլորովին սառած: Ես եւ պառաւը թաղեցինք նրա մարմինը խրճիթից ոչ այնքան հեռու մի ծառի տակ: Ցիշում եմ ես այն եղեւինը, որ դու մինչեւ նրա մօտ թոյլ էիր տուել ինձ հեռանալ խրճիթից:

— Ցիշում եմ... պատասխանեցի ես բոլորովին մեքենաբար:

— Այնուհետեւ ես վճռեցի գալ քո ետեւից եւ որոնել քեզ: Ես հինգ տարի տեղ կը գնամ. ես հինգ

էլ չեմ վախենում: Պառաւը ինձ չէր ուզում թողնել, ասում էր՝ մնա ինձ մօտ, աչքիս լոյսի նման կը պահեմ քեզ: Նա ինձ շատ էր սիրում. նա քեզ էլ շատ էր սիրում, այնքան լաց էլաւ որ...:

— Ի՞նչու չմնացիր նրա մօտ:

— Քեզ ի՞նչպէս թողնէի...:

— Ես մի օր կը վերադառնայի, քեզ գարձեալ կը գտնէի... մենք գարձեալ միասին կը լինէինք...:

— Չէ, ես գիտեմ, ես բոլորը գիտեմ... այնտեղից, ուր քեզ պիտի ուղարկեն, մարդիկ էլ չեն վերադառնում...:

— Այդ դու ո՞րտեղից գիտես:

— Ես երէկ դատարանի դրանը կանգնած էի. ինձ չթողեցին, որ ներս մտնէի, այնտեղ էլ ասում էին, թէ ես խելագար աղջիկ եմ...: Դրսում հարցրի, ինձ պատմեցին բոլորը...:

Ես չգիտէի ի՞նչ անել նրա հետ, ի՞նչ խորհուրդ տալ. ես չուզէի այս աշխարհում մի բարեկամ անգամ, որի պաշտպանութեանը յանձնէի այդ անբախտ աղջկան: Ես առանց երկար մտածելու կրկին ասեցի նրան.

— Դու գարձեալ դնա պառաւի մօտ, այնտեղ սպասիր ինձ: Նա բարի կին է. նա կը պահէ քեզ: Ո՞վ է իմանում, գուցէ Աստուած կը յաջողէ, մի օր կը վերադառնամ քեզ մօտ...:

— Ես քեզանից չեմ բաժանուի:

— Դու լաւ գիտես, թէ ինձ որտեղ պիտի ուղարկեն:

— Գիտեմ: Ես էլ կը գամ քեզ հետ:

Սոյն միջոցին բանտի վերակացուներից մէկը ներս մտաւ, հրամայեց Նէնէին հեռանալ:

— Ես այստեղ պէտք է մնամ:

— Այստեղ հիւրանոց չէ, օրիորդ, պատասխանեց վերակացուն դառն ժպիտով:

— Ես դրան մենակ չեմ թողնի:

— Բաւական է, որքան միասին էք եղել...:

— Մի տարուց աւել չէ, որ մենք ճանաչում ենք միմեանց:

— Ցաւում եմ, որ այդքան կարճատես է եղել ձեր սէրը...: Այստ. ամենայնիւ, պէտք է հեռանաք, նաշելի օրիորդ:

Լսելով վերակացուի վերջին հեգնութիւնը, արիւնս բորբոքուեցաւ:

— Եթէ դու կը շարունակես այդպէս վերաբերիլ մի պատուաւոր աղջկայ, ես քո գլուխը կը ջարդեմ:

— Մտածի՛ր, թէ որտեղ ես գտնվում... այստեղ քո բնական անտառները չեն... պատասխանեց նա սառնութեամբ:

— Պարոն վերակացու, մէջ մտաւ Նէնէն, — միթէ դու քոյր չունես, մայր չունես, միթէ դու չե՞ս հասկանում կնոջ սիրտը: Ի՞նչու ես հալածում ինձ: Իմ Մուրադը վատ մարդ չէ. նա իմ կեանքը ազատեց մի եղեռնագործի ձեռքից... այնօրից ես սիրում եմ նրան...:

— Ես այդ հասկանում եմ... պատասխանեց վերակացուն աւելի կոպտութեամբ: — Բայց բանտի մէջ չեն սիրում...: Չեզ թոյլ տուեցին մնանել այստեղ պարոն բժշկապետի խնդրելով: Բաւական է. որքան տեսնուեցաք, որքան խօսեցիք: Ասում են ձեզ, որ հեռանաք այստեղից, եթէ չկամէք, որ ձեզ դուրս քաշէին:

Նէնէն աւելի կամակորուեցաւ:

— Ես կը մնամ այս բանտում:

— Ես ձեզ խրատ կը տայի, որ դժուռանը մնայիք:

— Անգութներ... բոլորը այդպէս են խօսում... ես ի՞նչով եմ գիժ... բայականչեց Նէնէն արտասուքը սրբելով:

Վերակացուն ուշադրութիւն չդարձրեց, կանչեց մի զինուոր, նրան դուրս քաշեցին եւ բանտի դռները կրկին կողպուեցան: Ես մնացի մենակ: Մի քանի րոպէ լսելի էր լինում նրա ձիչը, աղաղակը, եւ շուտով նրա ձայնը անհետացաւ բանտի խուլ-դերեզմանական լռութեան մէջ:

Սարսափելի դրութիւն: Քո սիրած էակին հալածում են, վերաւորում են, եւ դու սառն աչքով պիտի նայես այդ անիրաւութեան վրայ եւ լռես: Միթէ այդ է նշանակութիւնը այն խօսքերի, որ կարդացին ինձ դատարանում. "զրկել ամեն իրաւունքներից"...:

Ի՞նչ պէտք է լինի խեղճ աղջկայ վերջը, — ահա այդ էր ինձ տանջող միտքը, երբ դարձեալ մնացի մենակ, երբ սպանուածի նման տարածուեցայ իմ կալարանի խոնաւ յատակի վրայ:

Ը.

ԳԱՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Լինում են այնպիսի րոպէներ, որ մարդ իրան բոլորովին մոռանում է։ Ես մինչ այն աստիճան զբաղուած էի Նէնէի վիճակով, որ ամենեւին չէի յիշում, որ մօտենում է այն սարսափելի օրը, երբ ես պէտք է կրէի մահուան տանջանքների առաջին փորձը։ — Ինձ, բացի մշտական աքսորից, վճռել էին երկու-հարիւր մտրակի հարուածներ։

Այն ժամանակ դեռ տիրում էր այդ օրէնքը, որ դատապարտեալին նախ քան աքսորելը, ենթարկում էին մարմնական գանահարութեան։ Ի՞նչ սոսկալի բան է դահճի մտրակը։ Կարծես թէ, Ֆուրիաները առաջին անգամ դժոխքից դուրս գալով, սովորեցրին մարդիկներին այնպէս տանջել իրանց նմաններին։ Ջարդել, խեղաթիւրել, անդամալուծել եւ ամեն զօրութիւնից զրկել մարմինը մի թշուառականի, — ահա այդ է այն մտրակի նպատակը, որպէսզի, նրան սպառող դառն աշխատութիւնները հանքերի մէջ աւելի սպանիչ լինեն։ Եւ այդ բոլորը կատարվում էր չարագործներին ուղղելու նպատակով։

Բայց չարագործները չէին ուղղվում։ Ես տեսնում էի որքան խիստ էր լինում նրանց պատիժը, որքան չարաչար կերպով վերաբերվում էր նրանց անձնաւորութիւնը,

այնքան աւելի յամառ էին դառնում նրանք, այնքան աւելի կամակորվում էին իրանց մոլորութիւնների մէջ։ Եւ այդ շատ բնական էր։ Ցանցառը մտրակների հարուածքների ներքոյ, փոխանակ զղջալու, արձակում էր կծու հայհոյանքներ, անէծք եւ աւելի ոչինչ։

Կեանքի մէջ, իմ անձնական փորձերով, ես հասայ այն համոզմունքին, որ ամենավայրենի գազանը անգամ ազնուանում է, ընտելանում է աւելի խաղաղ կեանքի այն ժամանակ միայն, երբ նրան սիրում ես, փայփայում ես, երբ նրան չես վիրաւորում։

Իմ ընկերների մասին նոյնպէս վճռել էին աքսոր եւ գանահարութիւն։ Բայց նրանց պատիժը աւելի թեթեւ էր քան թէ իմը, երեւի նրա համար, որ նրանք ամեն ինչ ուրացան, ճշմարտապէս չխոստովանուեցան իրանց մեղքերը, բայց ես ոչինչ չծածկեցի, բոլորը յայտնեցի։

Այդ նախատեսեց քաւոր Պետրոսը. նա աւելի փորձուած մարդ էր քան թէ ես, եւ զգուշացնում էր ինձ՝ ուրանալ, ոչինչ չխոստովանուել, որովհետեւ դրանով աւելի կը հեշտացնէի դատաւորների գործը, իմ մասին սաստիկ վճիռ տալու։ Այնպէս էլ եղաւ։ Բայց իմ խիղճը հանգիստ էր, որ գոնէ իմ դատապարտութեան րոպէում սուտ չխօսեցի։

Վերջապէս հասաւ սարսափելի ճգնաժամը։

Քաղաքի բազմութիւնը խումբերով դիմում էր դէպի պատժարանը։ Նրանք շտապում էին հանդիսատես լինելու մի սոսկալի գործողութեան։ Զարմանալի հետաքրքրութիւն ունի ամբոխը. նրան միօրինակ զուարճութիւն է պատճառում թէ՛ քաղքի երաժշտութեան ներդաշնակութիւնը, եւ թէ՛ դատապարտեալի դառն հառաչանքները, դահճի գանահարութեան ներքոյ։

Ամեն ինչ պատրաստ էր սոսկալի հանդէսը սկսելու համար։

Իմ ընկերները բաւական քաջութեամբ տարան իրանց փորձութիւնը, կարծես թէ, նրանց համար շատ սովորական լինէր այդ։ Ես մինչեւ յիսուներորդ զարկը անցայ առանց մի ձայն հանելու, առանց իմ դէմքն անգամ այլայլելու։ Մի այսպիսի արհամարհական վարմունք իմ կողմից, վերաւորեց դահիճների անձնասիրութիւնը, զրգռեց նրանց բարկութիւնը, եւ նրանք խստացրին հարուածների սաստկութիւնը։ Սոյն րոպէում նրանց անգութ երեսները, կարծես, ասում լինէին ինձ. "մենք ճեղում ենք, որ յաւերժնենք քեզ, երբ դու յաւ չես զգում. դրանով վերաւորում ես մեր կատաղութիւնը"։

Բազմութիւնը վայրենի ոգեւորութեամբ նայում էր։ Ծանկարծ նրանց ուշադրութիւնը գարձաւ մի այլ առարկայի վրայ։ Ամբոխի միջից լսելի էր լինում մի ցաւալի հառաչանք. "Մարդիկ, ինչո՞ւ էք կանգնած... մեր Աստուած չունէք... սպանում են... սպանում են... ազատեցէք... աղաչում եմ... ազատեցէք... Մուրադ, սիրելս... ա՜խ, սպանում են... մարդիկ, դուք չէ՞ք տեսնում... դուք չէ՞ք լսում... սպանում են... ազատեցէք..."։ Ինչո՞ւ են սպանում... Նա աւազակ չէ... Նա բարի մարդ է... Նա ինձ սիրում էր... Նա իմ կեանքը ազատեց..."։ Մարդիկ, ինչո՞ւ չէք լսում..."։ Ա՜խ, Աստուած... չե՞ն լսում... ամենքը խլացել են..."։

Այն սարսափելի րոպէում, երբ մինը միւսի հետեւից յաջորդաբար շառաչում էին մարակների զարկերը, երբ արեան կաթիլները դուրս էին ցայտում իմ մերկ մարմնից — այդ մահուան տագնապի րոպէում իմ ականջներին

հասնում էր դժբախտ աղջկայ ձայնը..."։ Այդ ողբալի ձայնը այնքան մխիթարական էր, որ ես այլեւս չէի զգում հարուածների սաստկութիւնը։ Ես երջանիկ էի, որ այս աշխարհում գոնէ կար մէկը, որ սիրում էր դատապարտեալին, որ գիտէր, թէ նա անմեղ է..."։

Բայց ամբոխը ծաղրեց նրան։ Ամեն կողմից լսելի էր լինում. "դա այն խելագար աղջիկն է"..."։

Թէ ինչով վերջացաւ իմ փորձութիւնը, թէ ինչ դրութեան մէջ ինձ յետ բերեցին պատժարանից, — ես չեմ յիշում, միայն այսքանը գիտեմ, երբ առաջին անգամ աչքերս բացարի, ինձ քաղաքի հիւանդանոցի մէջ գտայ։ Իմ մահճակալի մօտ, կանգնած էր մի բաւական մաքուր հագնուած, ակնոցաւոր երիտասարդ, որի խելացի դէմքի իւրաքանչիւր գծերից արտափայլում էր բարութիւն եւ աղնուութիւն։ Նա ժամացոյցը ձեռին բռնած, հաշվում էր իմ երակի զարկը։

— Այժմ լաւ կայ..."։ Ճգնաժամը անցած պէտք է համարել... ասաց նա ինքն իրան մի առանձին բաւականութեամբ։

Երիտասարդը բժիշկ էր. նա մի քանի պատուէրներ տուեց իւր օգնականին եւ հեռացաւ։

Մի քանի շաբաթից յետոյ բժիշկը գալաւ ինձ աւելի առողջ։ Մարակների հարուածներից գիշատուած մարմնիս վէրքերը այնքան բարւոքուել էին, որ ես կարողանում էի առանց շատ ցաւալու մի կողմից միւսի վրայ շուռ գալ։ Իսկ ջերմը գեռ չէր անցել։ Իմ երեւակայութիւնը թէեւ արթուն էր, բայց գտնվում էր գեռ գրգռուած դրութեան մէջ։

Գեղեցիկ բան է ուղեղը այդ դրութիւնը: Կեանքի բոլոր լաւ եւ վատ տպաւորութիւնները, որոնք նրա ծալքերի վրայ ճնացել էին անջնջելի, բայց որոնք բոլորովին ջնջուած, անհետացած էին համարվում, — յանկարծ կենդանանում են, կերպարանագործվում են եւ երեւան հանում վաղեմի մոռացուած պատկերները...:

Ես ինձ տեսնում էի իմ հայրենիքում, այն հասակում, երբ դեռ պատանի էի, մի անմեղ եւ բախտաւոր պատանի, որի օրերը անցնում էին անհոգ դպատարկութեամբ: Բախտաւոր էի նրա համար, որ դեռ միամիտ էի, դեռ չէի հասկանում աշխարհի չարն ու բարին: Մայրս խրատում էր ինձ, ցոյց էր տալիս կեանքի աւելի ուղիղ ճանապարհը: Բարեսիրտ մայր, եւ այս րոպէիս տեսնում եմ քո միշտ արտասուքով լի աչքերը, քո միշտ տխուր դէմքը, որ երբէք չէր ժպտում: Աղքատութիւնից սպանուած, ամուսնից զրկուած, ընտանիքի հոգսերի տակ ճնշուած, այդ դժբախտ կինը դարձեալ չէր մոռանում իւր զաւակների օրինաւոր դաստիարակութիւնը:

Ցետոյ տեսնում էի ինձ վարպետիս դարբնոցում: Դատարկամէզ պատանին սովորում է աշխատանքի: Դործը յաջողութիւն է գտնում իմ ձեռքում: Աշխատանքը, երեսի քրտինքը օրըստօրէ աւելի կազդուրում են իմ ջղերը, աւելի բորբոքում են իմ եռանդը: Սիրտս ուրախ է, խիղճս հանգիստ է, որովհետեւ ես կարողանում եմ իմ արդար վաստակով օգնել ոչ միայն ինձ, այլ եւ այն անձինքներին, որոնք իմ օգնութեանը կարօտ էին: Մայրս, քոյրերս ապրում են իմ ձեռքի արդիւնքով:

Այնտեղ, այն դարբնոցի մուխի եւ սեւ փոշու մէջ ծագում է ինձ երանութեան առաւօտը... իւր բոլոր վարդակարմիր գեղեցկութեամբ երեւան է գալիս սիրոյ ա-

լեզակը... նա սիրտում է իմ հոգու մէջ լոյս եւ ջերմութիւն...: Մի նազելի օրիորդ հպեցնում է իմ սրտին իւր կախարդական մատը, եւ իսկոյն նրա մէջ բոցավառվում են սիրոյ սրբազան կայծերը...: Այդ ժամանակ երջանիկ էի ես, երջանիկ էի, որովհետեւ գործում էի, աշխատում էի եւ սիրում էի...:

Յանկարծ երջանկութեան արեգակը սկսում է խաւարել... չար դեւը բարեպաշտ մարդու կերպարանքով մօտենում է ինձ, խելքից հանում է, մոլորեցնում է... ես շինում եմ աղետալի բանալին... այդ բանալին բաց է անում իմ առջեւ կորստեան ճանապարհը...: Վարպետիս դարբնոցում կատարվում է սարսափելի բարբարոսութիւնը... ես փախստական եմ լինում...:

Մի խումբ գլխից ձեռք վեր առած պատանիներ, թաղնուած անտառի անյայտութեան մէջ, ընդունում են ինձ իրանց գաղտնի ընկերութեան մէջ: Այստեղ, մարդկային բնակութիւնից հեռու, ծառերի եւ թուփերի ամայութեան մէջ, ես առաջին անգամ սկսում եմ ճանաչել եւ սիրել հրաշալի բնութիւնը: Առաջին անգամ հրապուրում է ինձ սոխակի քաղցրիկ ձայնը, առաջին անգամ ծաղիկները գրաւում են ինձ իրանց անմեղ-ողջախոհական գեղեցկութեամբ: Իմ մանկահասակ ընկերների ուրախ եւ միտազուարթ հասարակութիւնը, նրանց անկեղծ բարեկամութիւնը, նրանց անձնանուէր մտերմութիւնը, առժամանակ հանգստացնում են սրտիս ցաւերը, առժամանակ մոռանալ են տալիս ինձ այն սարսափելի դժբախտութիւնը, որին ենթարկուած էի ես, եւ իմ պատճառով շատերը...: Սիրելի ընկերներս, ո՞րտեղ էք այժմ դուք, երանի թէ, բաժանուած չլինեի ձեզանից, երանի թէ, միշտ ձեր հասարակութեան մէջ մնայի: Դուք այնքան

բարի էիք եւ ազնիւ, ես ցաւում եմ, որ կորցրի ձեզ, որ զրկուեցայ ձեզանից...:

Մօրս վհճակը, վարպետիս թշուառութիւնը, ազգականներիս հալածանքը, որոնք բոլորը չարչարվում էին տեղային զանազան օրինազանցութիւնների պատճառով, բաժանեցին ինձ իմ մանկահասակ ընկերների հասարակութիւնից: Ես վերադարձայ դէպի իմ հայրենական օջախը, օգնելու նրանց, որոնք իմ պատճառով հալածանքի էին ենթարկուած...:

Այդ ժամանակ կրկին դուրս է գալիս իմ առջեւ չար դէւը բարեպաշտ մարդու կերպարանքով, առաջարկում է ինձ իւր հովանաւորութեան ձեռքը: Ես կրկին խաբվում եմ... կրկին մոլորութեան մէջ եմ ընկնում...:

Նա համոզում է ինձ, թէ հայրենիքի համար ես մի խորթ որդի էի դարձել, թէ պէտք է թողնել հայրենիքը եւ օտար երկիրներում բախտ որոնել: Նա խոստանում է եւ առաջնորդել ինձ...:

Մայրս, տխուր հանդամանքներից ստիպուած, յանձնում է ինձ իմ նենգաւոր Մենտօրի ձեռքը: Ես թողնում եմ իմ հայրենի երկիրը, որը այնքան լաւ եւ վատ յիշատակներով կապուած էր իմ սրտի եւ հոգու հետ: Ձեռք եմ առնում պանդխտութեան գաւազանը: Այդ տխուր, ցաւալի զգացմունքներով լի անջատման րոպէում, որպէս մխիթարիչ հրեշտակ, յայտնվում է իմ սիրոյ առարկան — Սառան: Նա իւր կուսական համբոյրներով կնքում է մեր ուխտը, խոստանում է մինչեւ իմ վերադարձը սիրել եւ սպասել ինձ...:

Աղքատութիւնը մղում է ինձ հեռու եւ հեռու, դէպի անծանօթ երկիրներ: Ինձ, բոլորովին անփորձ եւ

միամիտ պատանիս, առաջնորդում է մի հոյակապ մարդ, մի վիթխարի չարագործ, եփուած եւ թրծուած կեանքի քուրայի ամէն փորձութիւնների մէջ: Իմ բնական ձիրքերով հարուստ ընդունակութիւնը խիստ պտղաբեր հող է գտնում իմ առաջնորդի ձեռքում: Շուտով նրա ցանքը ընծայում է առատ եւ արդիւնաւոր հունձք, մի հունձք, ոռոգուած բաղմաթիւ զոհերի արիւնով եւ արտասուքով...: Բոլորովին անմեղ եւ բարեսիրտ պատանին, դառն հանգամանքների ընորհիւ, վերջապէս դառնում է մի սարսափելի եղեռնագործ...:

Ես ես տեսնում էի ինձ, որպէս մի քարաժայռ, դուրս կտրուած ահագին լեռան բարձրութիւնից, գլորվում է, գլորվում է դէպի ցած, դէպի անդունդը...: Ծանկարծ մէկին անյայտութիւնից երեւան են գալիս երկու ձեռքեր, աշխատում են կանգնեցնել գլորման արագ եւ ուժգին ընթացքը... բայց իզուր, ես արդէն հասած էի մինչեւ անդունդի յատակը...:

Այդ հօր վերկարար ձեռքն էր, որ աշխատում էր ազատել ընկած որդուն... այդ Նէնէի կախարդական ձեռքն էր, որ աշխատում էր սովորեցնել նրան սիրել բարին եւ գեղեցիկը...:

Իմ կորստեան խորին անդունդի մէջ յայտնվում է մխիթարական ոգին, — մի անարգուած եւ հալածուած ցեղի անմեղ դուստրը: Սիրոյ հրեղէն կայծակը փայլատակում է իմ սրտի խաւարի մէջ, եւ կարծես, երկնային կրակով գլովում, մաքրվում են իմ վատ կրքերը ամէն ախտերից: Ես սկսում եմ զարձեալ սիրել... սիրել այն ժամանակ, երբ իմ ոտներին կրում էի գատապարտեալի ծանր շղթաները, երբ իմ ճակատի վրայ գրած էր աքսորականի սեւ կնիքը...:

Ո՜վ սէր, ո՜վ դու երկնային զօրութիւն, որ ծաւալում ես թշուառականի հոգում կեանք եւ խաղաղութիւն, որ ամրացնում ես նրա կամքը, եւ լցնում ես նրա սիրտը պայծառ յոյսերով, — եւ այնուհետեւ բանտի խաւարը, երկաթի կապանքների ծանրութիւնը այլ եւս զգալի չէ լինում նրան...:

Աշխարհից կտրուած, որպէս մի անպէտք մարմին ձգուած եմ այդ գերեզմանի մէջ: Ինձ չէ տաքացնում արեւը իւր ջերմութիւնով. ինձ համար փակուած է արտաքին կեանքը: Բայց մի արարած, անմարմին ուրուական պէս, հետեւում է ինձ... եւ այս րոպէիս նա կանգնած է իմ առջեւ իւր գեղեցիկ, արտասուալի աչքերով...: Ա՜հ, ո՛րքան մխիթարական է այդ արտասուքը... նա թափվում է մի թշուառականի համար, որին ամենքըատում են...:

"Նէննէ, նազելի Նէննէ, հեռացիր, մի մօտենար ինձ... իմ շունչը կարող է թունաւորել քեզ... մի մօտենար ինձ... ես չեմ կարող գրկել քեզ... իմ ձեռքերը արիւնոտ են...: Անմեղ երեխայ, ի՞նչ է սաիպում քեզ կապուել մի թշուառականի հետ, որ արժան չէ ոչ քո սէրին եւ ոչ քո արտասուքին...: Գնա, հեռացիր, թո՛ղ տուր ինձ... մեր բոլոր կապերը կտրուեցան այն րոպէից, երբ կարդացին իմ դատապարտութեան վճիռը„...:

"Գնա՛, ո՜վ դու բնութեան ազատ զաւակ, բաց աշխարհում լայն է քո ասպարէզը... գնա՛, թափառի՛ր երկրէ երկիր, դուշակի՛ր մարդիկների բախտը, ցոյց տուր նրանց չարն ու բարին, նրանք գուցէ հաց կը տան քեզ„...:

Մինչ ես այդ զառանցութիւնների մէջ էի, մի ձեռք դիպաւ ճակատիս: Աչքերս բաց արի, տեսայ՝ մահ-

ճակալս մօտ կանգնած էր ակնոցաւոր երիտասարդը: Ես ճանաչեցի, դա բժիշկն էր: Երեւում էր, նա երկար լսում էր իմ բացականչութիւնները:

— Ի՞նչ եղաւ նա... հարցրի ես, դեռ ոչ բոլորովին սթափուելով իմ խռովութիւնից:

— Ո՞վ, հարցրեց երիտասարդը ժպտելով:

— Նա... այն աղջիկը... Նէննէն... որ հիմայ այստեղ էր...:

— Հա՛, իմանում եմ... պատասխանեց նա խորհրդաւոր ձայնով. — Նա գնաց. խոստացաւ, որ շուտով կը վերադառնայ...:

— Այո՛, նա կը վերադառնայ, նա ինձ չի թողնի... կրկնեցի ես ուրախանալով:

Երիտասարդ բժիշկը, որ մինչեւ այժմ ոտքի վրայ էր, նստեց իմ մահճակալի մօտ եւ կարեկցաբար նայում էր իմ վրայ: Երբ նկատեց, որ ես փոքր ինչ հանդստացայ, հարցրեց.

— Ո՞վ է այն աղջիկը:

Ես պատմեցի, թէ նա որբ ցիգանուհի է, պատմեցի, թէ ինչպէս ընկած էր նա չարագործների ձեռքը, որոնք վճռել էին սպաննել նրան, պատմեցի, թէ որպէս ինձ հանդիպեց նա անտառում, որպէս ազատեցի նրա կեանքը եւ այնուհետեւ կապուեցաւ ինձ հետ:

Երիտասարդ բժիշկը հետաքրքրութեամբ լսում էր: Ես նկատեցի նրա դէմքի վրայ եւ յաւակցութեան նշաններ: Մխիթարուեցայ, տեսնելով, որ աշխարհում կան մարդիկ, որոնց մէջ չեն մեռած աղնիւ զգացմունքները, որոնք կարող են խղճալ անբախտութեան վրայ:

Բժիշկը, այդ մարմնաւոր խոստովանահայրը, միակ մարդն է, որ նայում է դատապարտեալի վրայ, որպէս

մարդու վրայ: Նա միակ մարդն է, որի հետ կարելի է անկեղծ կերպով խօսել: Այդ պատճառով ես պատմեցի նրան բոլորը, ինչ որ ծանրացած էր իմ սրտի վրայ, ինչ որ տանջում էր ինձ: Պատմեցի այն երազը, որ մի քանի րոպէ առաջ պատկերանում էր ինձ, եւ ներկայացնում էր իմ կեանքի ճիշդ նկարագիրը, իւր բոլոր պայծառ եւ մռայլ գոյներով: Պատմեցի թէ ինչպէս անգիտակցաբար, փոքր առ փոքր շեղուելով ուղիղ ճանապարհից, անմեղութիւնից վերջապէս ընկայ անբարոյականութեան մէջ: Նա գլուխը խոնարհեցրած լսում էր: Յետոյ իմ խօսքը կարեց, ասելով.

— Այդ բոլորը ես գիտեմ...:

— Ո՞րտեղից գիտէք:

— Նայեցէք իմ վրայ, ծանօթ է ձեզ իմ դէմքը:

— Կարծես մի տեղ տեսած լինեմ ձեզ:

— Քննիչի մօտ: Ես այն օրը ներկայ էի, երբ դատարանում ձեզանից հարցուփորձ էին անում: Դուք խոստովանուեցաք ձեր բոլոր յանցանքները: Դուք նկարագրեցիք ձեր կեանքի պատմութիւնը սկսեալ ձեր մանկութիւնից մինչեւ ձեր կալանաւորութեան րոպէն: Այդ պատմութիւնը սաստիկ հետաքրքրեց ինձ, որովհետեւ նրա մէջ գտնում էի այն բոլոր պատճառները, որոնք ստիպում են մարդուն հակառակ իւր կամքի յանցաւոր լինել:

Բժշկի կարեկցութիւնը ոչ միայն շատ մխիթարական էր ինձ համար, այլ նա առիթ տուեց իմ վստահութեանը դէպի այդ աղնիւ երիտասարդը, ես հարցրի.

— Ուղեղն ասացէք, պարոն բժշկապետ, իրա՞ւ, նա խոստացաւ, որ շուտով կը վերադառնայ:

— Ո՞վ: — Հա... դուք, երեւի, զարմեալ այն աղջկայ մասին էք հարցնում, մտաբերեց նա ընդհատուած խօսակցութիւնը Նէնէի մասին:

— Այո, այն աղջկայ մասին:

— Դուք ձեր երազների մէջ էք տեսել նրան, նա այստեղ չէ եղել:

Ես հասկացայ, որ գրգռուած երեւակայութիւնը խաբել էր ինձ: Նայեցայ շուրջս, կրկին նկարուեցան տխուր պատկերները իմ պատժական կեանքի եւ բանտային հիւանդանոցի մռայլոտ կամարները յիշեցրին ինձ իմ դրութիւնը...:

— Ուրեմն ես բոլորովին ղեկուած եմ նրանից... էլ չեմ տեսնի նրան...:

— Զրկուած չէք լինի... յոյս ունեցէք, որ մի ժամանակ կը տեսնէք նրան... պատասխանեց երիտասարդը խորհրդաւոր ձայնով:

"Մի ժամանակ"... արդեօք երկա՞ր պիտի տեւէր այդ ժամանակը, մտածեցի ես:

— Միանգամ նրան թոյլ տուին մտնելու բանտը, ինձ մօտ, ասեցի ես:

— Գիտեմ, այդ ես լսեցի բանտապետից, որ թոյլ տան:

Նէնէն ինձ ասել էր, որ մի ակնոցաւոր երիտասարդ միջնորդեց նրա համար եւ թոյլտուութիւն ստացաւ բանտը մտնելու: Ո՞վ կը մտածէր, որ այդ բարեսիրտ երիտասարդը լինէր նա:

Նրա բարեսրտութիւնը մի այնպիսի համակրութիւն ազդեց իմ մէջ, մինչ ես վստահացայ ասել նրան.

— Ես գիտեմ, պարոն բժշկապետ, որ յատիտեան ղեկուած եմ նրանից: Բայց դուք այնքան բարի էք եւ

աղնիւ, որ կը գիտաք մի որբ, անտէր, անօգնական աղջկայ վըայ, որը այս աշխարհում ոչ մի խնամատար չունի: Ամեն տեղ հալածում են նրան, ամեն մարդ խելագար է համարում նրան, եւ ոչ ոք չէ խղճում անբախտին . . . :

— Նա խելագար չէ, ընդմիջեց բժիշկը:

— Աղաչում եմ, խղճացէք նրա վըայ, ընդունեցէք ձեր պաշտպանութեան ներքոյ, նա շատ լաւ աղջիկ է:

— Ես առանց ձեր խնդրելու եւս այդ պիտի անեմ, պատասխանեց երիտասարդը եւ վերկացաւ:

Նա պատրաստվում էր բռնել նրա ձեռքը, յայտնել իմ անչափ, անսահման ընորհակալութիւնը, բայց նա ուշադրութիւն չդարձրեց եւ շտապով հեռացաւ:

Թ.

ԱՔՍՈՐ

Անցան մի քանի ամիսներ եւս: Մենք բոլորովին առողջ էինք, առողջ այն չափով, որ կարող էինք դիմանալ ձանապարհի ծանրութեանը եւ ուղեւորուել դէպի հեռաւոր հիւսիս:

Առաւօտ էր: Մի խումբ դատապարտեալների հետ, շղթայապատած զինուորներով, մեզ դուրս էին տանում քաղաքից:

Այդ տխուր տեսարանը շատ նման էր դագաղների յուղարկաւորութեանը դէպի գերեզմանների լռութիւնը: Ծնողներին, քոյրերի, եղբայրների լացը, նրանց հառաչանքը միախառնվում էր իրանց կորցրած բարեկամների շղթաների հնչիւնների հետ:

Այո՛, տխո՛ւր տեսարան էր եւ աւելի տխուր քան թէ մահը: Այդ դէպքում մարդը կենդանի է մեռնում, եւ դեռ կենդանի կտրվում են նրա յարաբերութիւնները աշխարհի եւ բարեկամների հետ: Բայց նրա զգացմունքները դեռ մեռած չեն. նրա վըայ աղդում են շրջապատող երեւոյթները: Իսկ դագաղի մէջ դրած մարմինը աւելի բախտաւոր է. նա չէ զգում, չէ հասկանում, թէ ինչ է կորցնում: Մի փոս եւ սառ հողը պարգեւում են նրան յաւիտենական խաղաղութիւն:

Աքսո՛ր, ինչ սոսկալի միտք է բովանդակում իւր մէջ այդ բառը: Հազարաւոր մղոններ չափել շղթայակապ ոտ-

ներով, պատերազմել դառնաշունչ մրրիկների դէմ, որոնք հսկայ եղեւնիները խլում են արմատից, պատերազմել ջրերի հետ, որի սաստկութիւնից ահագին ժայռերը ճաքճքում են, պատառ-պատառ են լինում, — մաշուել, ուժաթափ լինել հանքերում տաժանական աշխատութիւններով, — այդ բոլորը այնպիսի տանջանքներ են, որոնց մարդ, միայն դատապարտուած մարդը կարող է դիմանալ:

Բայց մի բան, որին չէ դիմանում նա, որի առջեւ փշրվում են նրա բոլոր զօրութիւնները, — դա է սիրած աղջկայ արտասուքը...:

Ահա՛ դարձեալ յայտնուեցաւ նա...: Մազերը խառնուած, լի կատաղի վրդովմունքով, որպէս մի խելագար հրեշտակ յայտնուեցաւ նա...: Ա՜խ, ո՜րքան սարսափելի է նրա զայրացած դէմքը...:

Նա աշխատում է մօտենալ ինձ... զինուորները հեռացնում են... նա դարձեալ առաջ է նետվում... նա չէ վախենում սուիններից...: Ահա բռնեցին նրան... նա կրկին դուրս պրծաւ նրանց ձեռքից... վազում է դէպի ինձ... արգելում են...: Ահա նա խլեց զինուորներից մէկի հրացանը... մուխը բարձրացաւ... հրացանը գոռաց...: Բայց զարկեցին նրան... նա ընկաւ... էլ չէ վերկենում...:

‘‘Դա այն ցնորուած աղջիկն է,, լսելի եղաւ ամեն կողմից:

Իմ աչքերի առջեւ մթնեց, ես այլ եւս ոչինչ տեսնել չկարողացայ, միայն զգում էի հրացանների կոթերի հարուածը, որով քշում էին ինձ դէպի իմ դատապարտութեան օթեւանը...:

Ժ.

ՆՐԱՆ ԳՐԵՑԻՆ ՄԵՌԱԾՆԵՐԻ ԹՈՒՈՒՄ

Աքսորականների խումբը, որոնց հետ ես ուղեւորուեցայ, բաղկացած էր տասն եւ երեք հոգուց, նրանց մէջ էին եւ իմ ընկերները:

Մինչեւ առաջին իջեւանը հասնելը ես մինչ այն աստիճան խռովութեան մէջ էի, որ ամենեւին չնկատեցի, թէ մեր ընկերներից մէկը պակաս էր, այն եւս մեր գլխաւորը — Քաւոր Պետրոսը:

Մենք հասանք իջեւանը, երբ դեռ նոր էր մտնում արեւը: Այդ մի արքունի շինուածք էր փոստայի կայարանի մօտ, մարդկային բնակութիւնից հեռու, առանձնացած անապատի մէջ: Այնտեղից դուրս եկաւ մի ստոր աստիճանաւոր եւ ընդունեց մեզ: Մենք այժմ մարդ լինելուց դարձել էինք իրեր, նշանակուած նոմերներով: Նայեցին մեր նոմերներին, ստուգեցին թուերը, եւ ապա ածեցին մի նեղ նկուղի մէջ:

Գիշերը մեզ բաժանեցին մի-մի կտոր սեւ հաց եւ խմելու ջուր տուեցին: Ընկերներս սկսեցին ընթրիք անել, բայց ես ոչինչ ուտել չկարողացայ: Դա այն տխուր եւ ծանր գիշերներից մէկն էր, երբ ամեն յոյս կորած էր, երբ ամեն ինչ վերջացած էր եւ մեզ, ամեն մէկիս, յայտնի էր իւր թշուառ վիճակը:

Շուտով դատապարտեալներից ոմանք սկսեցին նիրհել, ոմանք տարածուեցան մերկ յատակի վրայ, փորձում էին քնել, ոմանք դեռ նստած, խորին ինքնամոռացութեան մէջ մտածում էին: Սկուղի մէջ տիրում էր գերեզմանական լռութիւն: Միայն խուլային ճրագը ճրճլթալով մի առանձին չարագուշակ ձայն էր արձակում եւ իւր շուրջը տարածում էր աղօտ լուսաւորութիւն: Սենեակի օդը տոգորուած բորբոսային խոնաւութեամբ, անկարելի էր շնչել: Ճրագն անգամ դժուարանում էր վառուել նրա մէջ: Դրսում անցուդարձ էր անում պահապան զինուորը եւ մենք լսում էինք նրա քայլերի ձայնը:

Իմ ընկերները այժմ հաշտուել էին ինձ հետ: Նրանց կասկածը թէ իմ եւ թէ Նէնէի վերաբերութեամբ բոլորովին փարատուած էր: Որովհետեւ քննութիւնների ժամանակ գործերից երեւաց, որ ո՛չ ես եւ ո՛չ Նէնէն չէինք մտանել նրանց, որպէս կարծում էին, այլ մտանել էր մի հրէայ, որ նրանց փորագրիչն էր: Հրէան նոյնպէս դատապարտութեան ենթարկուեցաւ:

Բայց ինձ զբաւել էր այն միտքը, թէ ո՞րտեղ միայ քաւոր Պետրոսը, ո՞ւր կորաւ այդ սատանան: Այդ միջոցին մօտեցաւ ինձ ընկերներիցս մէկը, որը հասակակից էր ինձ հետ: Այդ երիտասարդը յայտնի էր մեր մէջ իւր դիւրեկան եւ ուրախ բնաւորութեամբ: Նա նստեց ինձ մօտ:

— Ո՞ւր միայ քաւոր Պետրոսը, հարցրի նրանից:

— Նրան գրեցին մեռածների թուում... պատասխանեց նա:

— Ի՞նչպէս:

— Այնպէս:

— Ես ոչինչ չեմ հասկանում:

Երիտասարդը սկսեց ծիծաղել իմ միամտութեան վրայ: — Դանահարութիւնից յետոյ, պատմեց նա, քաւոր Պետրոսը, ինչպէս մեզանից ամեն մէկը, բանտի հիւանդանոցը տարուեցաւ: Այստեղ նա դիտմամբ սկսեց երկարաձգել իւր հիւանդութիւնը, մինչեւ առիթ ունեցաւ ծանօթանալու բանտապահի հետ: Շուտով կարողացաւ նա շօշափել այդ մարդու թոյլ կողմերը, եւ մանաւանդ մի դէպք հնարաւորեց նրան օգուտ քաղել նրա թոյլ կողմերից: Բանտապահը ծախսել էր արքունի փողեր եւ այդ պատճառով ոչ միայն դատի պիտի ենթարկուէր, այլ կը կորցնէր եւ իւր պաշտօնը, եթէ մի տեղից փողի պակասը չլրացնէր: Քաւոր Պետրոսը հասկանում է նրա անել դրութիւնը եւ մի օր ասում է նրան. — "Պարոն բանտապահ, ես ցանկանում եմ մի փոքրիկ ծառայութիւն անել ձեզ:" — Ի՞նչ ծառայութիւն, հարցնում է բանտապահը: — "Դուք, կարծեմ, փողի դժուարութեան մէջ էք, ես կարող եմ օգնել ձեզ":

Այս տեսակ սիրախօսութիւններ կալանաւորների եւ բանտապահի մէջ այնքան սովորական են, որ վերջինս ոչ միայն չէ վերաւորվում, այլ շատ հետաքրքրվում է, թէ քաւոր Պետրոսը ո՞րքանով կարող է օգնել իրան: — Ո՞րքան է ձեզ հարկաւոր, հարցնում է քաւոր Պետրոսը: — "Երկու հազար րուբլ, պատասխանում է բանտապահը: Քաւոր Պետրոսը խոստանում է վճարել նրան այդ գումարը:

— Ինչո՞վ կարող եմ երախտամտտյց լինել ձեր այդ օգնութեան համար, հարցնում է բանտապահը:

— Ինձ ազատելով բանտից, պատասխանում է քաւոր Պետրոսը:

— Ձեզ համար վճռուած է ցմահ աքսոր:

— Այդ ես գիտեմ։

— Ձեզ կը պահանջեն ինձանից։

— Այդ էլ գիտեմ։

— Ի՞նչ կարող եմ պատասխանել։

— Ձեր պատասխանը ես մտածել եմ, մի շատ հասարակ բան է։

— Ո՞րպէս։

— Ինձ կը գրէք մեռածների ցուցակի մէջ, կ՚ասէք՝ հիւանդանոցում մեռաւ, տարան թաղեցին։

— Դրա համար զանազան պաշտօնական ձեւեր են պահանջվում,

— Մատեանների մէջ հեշտ է շինել այդ ձեւերը։ Միթէ սակա՞ւ մարդիկ անհետանում են հիւանդանոցներում, եւ նրանց մասին բնաւ հարցափորձ չէ լինում։ "Մեռա՜ւ"... եւ դրանով վերջանում է ամեն բան։

— Այսու ամենայնիւ, մի դիակ պէտք է դնել ձեր տեղը,

— Հիւանդանոցի մառանի մէջ անտէր դիակներ խօ շատ կան, ընտրեցէք նրանից մէկը։

Երիտասարդի պատմութիւնը խիստ հետաքրքրական էր ինձ համար։ Իրաւ, շատերը կորչում էին այդ հիմնարկութեան մէջ։ Մեռածների դիակները չէին արժանանում մինչեւ անգամ թաղման. նրանց կտրատում էին, պղծնդակում էին եւ ձգում էին մեծ գետի մէջ, որ հոսում էր հիւանդանոցի մօտով։ Բանտը եւ հիւանդանոցը միեւնոյն շինուածքի մէջ էին։

— Դատաստանական վերանորոգութիւններից առաջ սարսափելի զեղծումներ էին կատարվում բանտերում, եւ շատ զարմանալի չէր, որ քաւոր Պետրոսի նման մի մարդ կարողացել էր այդ խորամանկութեամբ դուրս պրծնել

բանտից։ Իմ երիտասարդ ընկերը պատմեց ինձ մի ուրիշ դէպք, որ ոչ սակաւ հետաքրքրական էր։

— Տեսնո՞ւմ ես այդ մարդուն, ասաց նա, որ կծկուած, կոլորուած, նիրհում է այն անկիւնում, — այդ ողորմելին նոյնպէս զեղծումների մի անմեղ զոհ է։

Ես նայեցայ դէպի այն կողմը, տեսայ, մի նիհար մարդ, գունաթափ դէմքով, խորին թմրութեան մէջ նստած էր անկիւնում։ Գիշերուայ տխրութիւնը փարատելու համար, ես մեծ յօժարութեամբ սկսեցի լսել երիտասարդի տեղեկութիւնները այդ թշուառ աքսորականի մասին։ Նա գիտէր բաւական ճշգութեամբ նկարել մարդկանց պատկերը։

— Այդ ողորմելի արարածը, ասաց նա, — որին կոչում են Սիդոր Սիդորիչ, որի հետ ես խիստ մօտ ծանօթացայ, այն տեսակներից է, որոնք ոչ միայն զրկուած են մարդկային ընդունակութիւններից, այլ կեանքի տխուր պայմանները խլել են նրանից եւ այն սակաւ ընդունակութիւնները, որ ստացել են բնութիւնից։ Դա մի աստնական տեղի ստոր ծառայող է եղել, գրագրի պաշտօն է կատարել։ Ցարատեւ կեանքը գրասեղանի մօտ բոլորովին բթամտացրել է դրան, իսկ արաղի անչափ գործածութիւնը լրացրել է պակասը։ Նրան արտաքսել են ծառայութիւնից եւ չձանձրանալու համար սկսել է աւելի անձնատուր լինել արաղին։ Բայց Սիդոր Սիդորիչը խիստ խաղաղ եւ հանգիստ արբեցող է եղել։ Գինետնից դուրս գալուց յետոյ փողոցներում շրջելու եւ մարդկանց անհանգստացնելու սովորութիւն չէ ունեցել Սիդոր Սիդորիչը։ Նա ուղիղ կը դիմէր դէպի իւր տունը, եւ ամբողջ օրը կը ներկայացնէր մէկը այն անշարժ կարասիներից, որ վաճառանի մօտ անպակաս են լինում։ Նա կը

նստէր այնտեղ, կամ կը նիրհէր, կամ կը յօրանջէր, մոռանալով իրան մի առանձին անհոգ, անըղձաղ ապրութեան մէջ: Կինը նրան յանդիմանում է, հայհոյում է, բայց Սիդոր Սիդորիչը ոչինչ չէ պատասխանում, միայն յիմար կերպով ժպտում է, գլուխը քարշ է գցում եւ խուլ կերպով մրմթում է մի քանի անորոշ խօսքեր: Կինը այն ժամանակ միայն կարող էր նրան դուրս գցել, երբ պէտք էր սենեակը մաքրել եւ փոքր ինչ կարգի բերել: Այդ միջոցին Սիդոր Սիդորիչը կը նստէր դրան մօտ, արեւի ճառագայթներով կը տաքանար: Իսկ երբ սենեակը մաքրեցին, նա դարձեալ վառարանի մօտ էր:

— Բայց լինում էին րոպէներ, երբ Սիդոր Սիդորիչը դառնում էր եւ ժիր եւ աշխոյժ: Դա այն ժամանակ էր լինում, երբ նրա կինը ընդունում էր մի յարգելի հիւր: Յարգելի հիւրը նրա նախկին մեծաւորն էր: Երբ այդ մարդը յայտնվում էր, այն օրը Սիդոր Սիդորիչի համար տօն էր: Նա խիստ եռանդով հեռանում էր իւր նուիրական անկիւնից, երբ նրան փող էին տալիս, ուղարկում էին փողոցը, որ ուտելիքներ ու խմելիքներ գնէ: Որքան ուրախ էր լինում նա: Դեռ ճանապարհին, դեռ ըմպելիքները տուն չհասցրած, Սիդոր Սիդորիչը իւր կոկորդը ըստ կարգին փափկացնում էր: Սեղանը պատրաստուեցաւ: Տիկինը յարգելի հիւրի հետ ուտում են, խմում են, զուարճանում են: Սիդոր Սիդորիչը խիստ եռանդով պտտվում է սեղանի շուրջը, աշխատում է ամեն տեսակ սպասաւորութիւն ցոյց տալ: Նա մեծ բաւականութեամբ խմում է յարգելի հիւրի կենացը, երբ բաժակը նրա ձեռքն է հասնում: Կերուխումը տեւում է երկար: Բայց Սիդոր Սիդորիչը մինչեւ ընթրիքի վերջը սպասելու համբե-

րութիւն չունի: Նա օրօրվում է, գլուխը լաւ դրութեան մէջ չէ, կինը նրա ձեռքից բռնելով նստեցնում է հնոցի մօտ, այնտեղ սկսում է մրափել: Տիկինը շարունակում է յարգելի հիւրի հետ ժամանակ անցկացնել:

— Սիդոր Սիդորիչը թէեւ ապրում էր կնոջ ողորմութիւնով, նրա կօշիկների տակ, եւ մոռացած իւր բոլոր արժանաւորութիւնները, բայց մի բանով միշտ պարծենում էր նա, որ ինքը այր է, իսկ նա կին: Այդ ինքնաճանաչութիւնը աւելի յայտնվում էր նրա մէջ այն ժամանակ, երբ կինը շարժում էր նրա բարկութիւնը: Եւ այդ պատահում էր խիստ յաճախ, երբ Սիդոր Սիդորիչը տանից մի բան էր գողանում եւ տանում էր գինետունը: Կինը սկսում էր նախատել, հայհոյել նրան: Իսկ Սիդոր Սիդորիչը յիշելով, որ ինքը այր է, խլում էր պատահած առարկան եւ զարկում էր կնոջ գլխին: Երբեմն դրաման վերջանում էր արիւնով: Այսպիսի դէպքերից մէկն էր, որ առիթ տուեց Սիդոր Սիդորիչին բանտի մէջ ընկնել: Կինը ուրախ էր, որ ազատուեցաւ իւր անախորժ բեռնից, իսկ Սիդոր Սիդորիչը շատ չխորհեց, որ նրան մի այլ տան մէջ փոխադրեցին:

— Այստեղ նա բոլորովին մոռացուեցաւ, թէ ինքը իւր համար, եւ թէ իւր ընտանիքի համար: Նա մոռացել էր մինչեւ անգամ, թէ ո՛րքան ժամանակով բանտարկել էին իրան: Հիմայ նրան աքսոր են ուղարկում. դարձեալ չգիտէ, թէ ի՛նչու համար են ուղարկում. եւ զարմանալին այն է, որ հետաքրքրութիւն եւս չունի գիտենալու: Հրամայում են, նա խոնարհվում է: Խոնարհուելու ընդունակութիւնը սաստիկ զարգացած է նրա մէջ: Նա երբեմն յանդուգն է միայն դէպի իւր կինը, բայց հլու է դէպի ամեն մի օտար մարդ:

Իմ երիտասարդ ընկերոջ նկարագրութիւնը Սիպօ Սիպօրիչի մասին այն աստիճան գրաւեց իմ ցաւակցութիւնը դէպի այդ թշուառը, որ ես հարցրի նրանից.

— Ուրեմն դու որեւիցէ զեղծում ես գտնում այդ մարդու դատապարտութեան գործում:

— Այո՛, նոյնպիսի մի զեղծում, եւ նոյն մարդու ձեռքով կատարուած, որ քաւոր Պետրոսի անունը արձանագրեց մեռածների ցուցակի մէջ: — Սիպօր Սիպօրիչը աքսորւում է մի ուրիշ յանցաւորի փոխարէն, որին վաղուց բաց են թողել:

— Իսկ եթէ մի օր նրա կինը կը մտածէ որոնո՞ղ իւր ամուսնուն:

— Այն ժամանակ նրան էլ կը գրեն բանտում մեռածների ցուցակում:

Դատաստանական վերանորոգութիւններից առաջ այս տեսակ զեղծումներ շատ էին պատահում, եւ ես զարմանում էի, թէ ի՞նչու քաւոր Պետրոսը մտածեց միայն իւր ազատութեան համար, իսկ իւր ընկերների մասին հոգս չտարաւ:

— Նա իրան ազատեց, որ աւելի դիւրութիւններ ունենայ մեր մասին հոգ տանելու, պատասխանեց երիտասարդը: — Նա կը գայ մեր եառեւից եւ մինչեւ մեզ չազատէ, չի հանգստանայ:

Երիտասարդը չծածկեց ինձանից, յայտնեց այն ամբողջ ծրագիրը, որ խաչագողները կազմել էին իրանց մէջ, թէ ի՞նչ միջոցներով պէտք է փախչեն կէս ճանապարհից, ապա հարցրեց.

— Կը միանա՞ս մեզ հետ:

— Ո՛չ, պատասխանեցի ես:

Նա սկսեց զարմացած նայել իմ երեսին:

— Ուրեմն դու քեզ կորցնե՞լ ես ուզում:

— Աւելի լաւ է մաշուել հանքերում, քան թէ կրկին միանալ ձեզ հետ:

— Շատ կը փոշմանես... ասաց նա եւ վշտացած հեռացաւ ինձանից:

Մենք բոլոր ժամանակ խօսում էինք հայերէն, այն եւս խաչագողի բարբառով, եւ կասկած չունէինք, որ կը հասկանան մեզ:

Գիշերից բաւական անցել էր. յոգնած դատապարտեալները բոլորը խորին քնի մէջ էին: Բայց քունը, ախուր սրտի միակ մխիթարութիւնը, ինձ մօտ չէր գալիս: Դարձեալ ինձ երեւում էր Ենէնէն, ինձանից չէր հեռանում անբախտ աղջկայ սգաւոր պատկերը...:

ԺԱ.

ՓԱԽՈՒՍՏ

Սկիզբը . . .։

Սարսափելի ճանապարհորդութիւն է հալիւրաւոր մղոններ անցնել շղթայակապ ոտներով։ Ոչքան հեռանում ես դէպի հիւսիս, աղքատնակութիւնները հետզհետէ նոսրանում են, եւ այնուհետեւ դատարկ ու ձիւնապատ անապատներին վերջ ու սահման չկայ։ Ոմիստ հազիւ են պատահում փոքրիկ քաղաքներ, որոնք աւելի նման են մեծ գիւղերի։ Նրանց բնակիչները այն աստիճան սովորած են յաճախ աքսորականների խումբեր տեսնել, որ հէնց լսում են շղթաների հնչիւնները, տներից դուրս են թափւում, սառնասրտութեամբ նայում են նրանց վրայ եւ ոչ ոք են տալիս իրանց երեխաներին։ Ոմանք տալիս են թշուառներին մի կտոր հաց, կամ մի քանի գրօշներ։

Միշտ տխուր եւ միստեսակ է ընդհատակը։ Նոյն անվերջ անապատները ամեն օր տարածվում են քո առջեւ, նոյն մռայլասպատ հորիզոնը ամեն տեղ միախառնվում է սպիտակ սաւանով պատած տափարակների հետ, նոյն ցուրտ, խոնաւ եւ մթին իջեւանները սպասում են քեզ ճանապարհների վրայ, եւ շատ տեղ հանդիպում ես պաշտօնակատարների կոպիտ, անխիղճ վարմունքին։ Ամեն տեղ, կայարաններում նոյնպէս համբարքով սառնում են ճանապարհ են դնում թշուառականների խումբը։ Գնում ես, գնում ես... անցնում են օրեր, շաբաթներ, ամիսներ... օր ըստ օրէ ուժաթափ ես լինում, նուաղում ես, թուլանում ես, բայց չգիտես, թէ երբ պէտք է տեղ հասնես...։

Երբեմն երեւում են քեզ մարդիկների երեսներ, սառն եւ անվիտ, որպէս ինքը եղանակը։ Ոաքից ցցուել հագնուած մորթերի եւ մուշտակների մէջ, այդ դեւհիկները հազիւ որոշվում են թաւամազ արջերից, որոնք շատ անպատ ծոյլ եւ դանդաղ կերպով անցնում են դատապարտեալների խումբի մօտով, եւ մի առանձին հեգնական հայեացք ձգելով նրանց վրայ, կարծես, ուզում են ասել՝ "մենք աւելի բախտաւոր ենք, քան թէ դուք„։

Ցուրտ է։ Ամեն արարած այստեղ մրսում է, սառչում է, քարանում է։ Երկիրը զրկուկ է լոյսից եւ ջերմութիւնից։ Կարծես, արեւն էլ այստեղ մրսում է, կարծես, նա էլ մուշտակ ունի հագած։ Նրա դունաթափ դէմքը շատ չէ որոշվում նոյն դեւհիկների, նոյն արջերի երեսներից։ Նրա ճառագայթները կորցնում են իրանց զօրութիւնը ընդհանուր սառնութեան մէջ։

Մեռած բնութիւնը բոլորովին ուրիշ կերպարանք է ստանում, երբ հանդիպում ես անտառների։ Այստեղ երեւում է կեանք, բուսական թշուառ կեանք։ Ցարուայ այն եղանակում, երբ մեղ մօտ ծառերը բեռնաւորուած են զանազան տեսակ անուշ պտուղներով, երբ խաղողը մեղրի համ է ստանում մեր այգիներում, — այստեղ սառը քամին փչում է, ծառերի ճիւղերը սպրսափելով տատանվում են, ցած են խոնարհվում, դալկացած տերեւները խշխշալով թափվում են, եւ նրանց տխուր հառաչանքներից դու որոշում ես այս խօսքերը՝ "տէս, մենք էլ աքսորուած ենք այդ երկրում„։ Ես իրաւ,

բնութեան խստութիւնը մինչեւ այն աստիճան ճնշել է այդ ողորմելի արարածներին, որ նրանք ազատ կերպով աճել եւ զարգանալ կարող չեն: Որքան առաջ ես գնում, ծառերի աճելութեան ուժը պակասում է, պակասում է, եւ նրանք հետզհետէ փոքրանալով, բոլորովին մանրանում են, մինչեւ թզուկ թուփերի կերպարանք են առնում:

Ամեն ինչ այստեղ մեռ է երկրին, ամեն ինչ թեքուած, խոնարհուած է դէպի ցած: Լեռները եւ բլուրները անգամ չեն համարձակվում իրանց գագաթները շատ վեր բարձրացնել, կարծես նրանց վրայ եւս մի բան ճնշում է: Ու երկրի ընդարձակ տարածութիւնը առանում է տափակ, հարթ-հաւասար կերպարանք, — ձեւացնում է մի անսահման անապատ:

Չնայելով եղանակների խստութեանը, չնայելով մեր ուղեւորութեան ապահովիչ ազդեցութեանը, իմ ընկերները դարձեալ չէին կորցնում իրանց զուարթութիւնը: Նրանք իրանց սովորութեան համեմատ հանաքներ էին անում, ծիծաղում էին եւ շատ տեղ իջեւաններում անձնատուր էին լինում արբեցութեան:

Այդ երկրում լոյսի եւ ջերմութեան պակասութիւնից մարդը միշտ ցուրտ է զգում եւ ցնրտ: Պէտք է մի բանով տաքացնել առաջ մարմինը, — եւ արաղը հանդիսանում է որպէս փրկարար դարման: Նա թմրեցնում է ուղեղը, բթացնում է զգայարանքները, եւ դու բնութեան խստութիւնը այլ եւս չես զգում: Ու այդ է պատճառը, որ ոչ մի հիմնարկութեան այնքան չես հանդիպում, որքան գինետների: Նրանց թիւը հաշտարապատիկ աւել է եկեղեցիների, դպրոցների եւ այլ կրթական հիմնարկութիւնների թուից: Համարեա բոլոր իջեւաններում կարելի էր գտնել արաղ:

Թէեւ արբեցութիւնը աստիճ ապրելուած էր կալանաւորներին, բայց պահապանները այնքան բարի են գտնվում, որ չեն արգելում նրանց այդ միակ մխիթարութիւնից, մանաւանդ երբ նրանց էլ հրաւիրում են խմել իրանց հետ:

Իսկ այդ զուարճութիւնները այն աքսորականների համար են միայն, որոնք ունեն իրանց հետ փոքր ի շատէ արծաթ: Նրեւում էր, որ իմ ընկեր խաչագողները զուրկ չէին արծաթից. ամեն տեղ գնում էին ծխախոտ, սպիտակ հաց, ուտելիքներ եւ արաղ: Այդ բարիքներից նրանք մասն էին հանում միւս աղքատ դատապարտեալներին, եւ այդ պատճառով խումբի մէջ խաչագողները վայելում էին մի առանձին յարգանք:

Բայց ինձ խիստ անհաճոյ էր թուում նրանց մինչեւ յանդգնութեան հասցրած անհոգութիւնը: Ես զայրանում էի, երբ նկատում էի, որ նրանք առ ոչինչ էին համարում իրանց դրութեան բոլոր զարհուրանքը: Մարդիկ, որ կորցնում էին հայրենիք եւ ընտանիք, մարդիկ, որ իրանց տների մէջ անբախտ կին եւ անտէր զաւակներ ունէին, մարդիկ, որ յաւիտեան զրկվում էին այն բոլորից, որ միշտ սիրելի էր եղել իրանց, — այդպիսի թշուառ մարդիկ, դեռ եւս սիրտ ունէին զուարճանալու, դեռ եւս նրանց երեսը ծիծաղում էր:

Մենք գիշերները աւելի ազատ էինք լինում միմեանց հետ խօսելու եւ խորհրդակցելու, երբ անասունների նման ածում էին մեզ մի սենեակի մէջ եւ դռները կողպում էին: Բայց իմ ընկեր խաչագողները վաղուց արդէն սկսել էին ինձ հետ բաւական սառն կերպով վարուել, երեւում էր որ վստահութիւն չունէին դէպի ինձ եւ ամենայն ծածկամտութեամբ աշխատում էին թագցնել ինձանից

մի դաղտնիք: Ես էլ իմ կողմից ամենաւին հետաքրքիր չէի լինում խորամուխ լինել նրանց խորհուրդների մէջ:

Այդ սառնութիւնը սկսուեցաւ մեր մէջ այն օրից, երբ իմ երիտասարդ ընկերներից մէկը յայտնեց ինձ քաւոր Պետրոսի ամբողջ ծրագիրը, թէ ւրպիսի հնարներ էր նախապատրաստել նա, որ կէս ճանապարհից փախցնէր իւր աքսորական ընկերներին: Ես այն ժամանակ մերժեցի երիտասարդի առաջարկութիւնը, վճռական կերպով պատասխանելով, թէ ամենաւին չէ պիտի մասնակցեմ նրանց ձեռնարկութեան մէջ, եւ աւելացրի, թէ լաւ է ինձ հանգերում մնալուել եւ համբերութեամբ սպասել իմ ճակատագրի վախճանին, քան թէ ազատութիւն գտնել քաւոր Պետրոսի ձեռքով:

Այն օրից անցել էին երկու ամբողջ ամիսներ:

Մի գիշեր նոյն երիտասարդը մօտեցաւ ինձ:

— Մուրատ, ասաց նա, — դու դարձեա՞լ միտքդ չես փոխել:

— Ի՞նչ բանի համար, հարցրի ես:

— Ցիշում ես մեր մէջ մի քանի ամիս առաջ տեղի ունեցած խօսակցութիւնը:

— Ցիշում եմ:

— Իզուր երեկոյեան պահուն պիտի կատարուի գործողութիւնը . . .:

— Ինչ որ ուզում էք կատարեցէք: Ես չեմ փոխել իմ միտքը, — ես ամենաւին չեմ մասնակցելու ձեր ձեռնարկութեանը . . .:

Նա բռնեց իմ աջը եւ աղաչաւոր դէմքով աչքերը դարձրեց դէպի իմ երեսը:

— Լսիր, Մուրատ, յամառութեան ժամանակ չէ, քո կամակորութիւնը կը կորցնէ քեզ: Մտածիր, որ դու

դեռ երիտասարդ ես, քո առջեւ դեռ ընդարձակ ասպարէզ կայ գործելու եւ բախտաւոր լինելու: Քաւոր Պետրոսը իւր որդու նման սիրել է քեզ, այժմ նոյնպէս սիրում է: Նա քեզանից ձեռք չի վեր առնի. նա կը գայ քո ետեւից, ուր որ տանում են քեզ, եւ մինչեւ չազատէ քեզ, չի հանգստանայ: Եթէ ես հաւատում, քեզ ցոյց կը տամ նրա նամակը:

Նա տուեց ինձ մի թղթի կտոր, որի վրայ գրուած էին մի քանի տողեր միայն. ստորագրութիւնը եւ ձեռագիրը քաւոր Պետրոսինն էր: Ահա նրա բովանդակութիւնը. "Սիրելի Մուրատ, հնազանդուիր, ինչ որ քո ընկերները կ'առաջարկեն քեզ, — մեծ է փրկութեան ժամը„ . . .:

Թէ ինչպէս էր հասել այդ թուղթը նրա ձեռքը, ես չգիտեմ, բայց ես զզուանքով յետ տուի, ասելով.

— Եթէ հազար այս տեսակ նամակ գրելու լինի նա, ես դարձեալ իմ միտքը չեմ փոխի: Ես վճռել եմ, վաղուց վճռել եմ բնաւ յարաբերութիւններ չունենալ խաչագողների հետ: Ես նրանց մատնութեամբ Սիբիր եմ գնում, բայց չէի ցանկանայ նրանց ձեռքով ազատուած լինել:

— Այդ ես հասկանում եմ, պատասխանեց երիտասարդը, — եւ մեծապէս իրաւունք եմ տալիս քո դժգոհութեանը: Բայց ոչինչ չէ արգելում քեզ այդ դրութիւնից ազատուելուց յետոյ կտրել քո յարաբերութիւնները խաչագողների հետ:

— Բանը նրանումն է, որ նրանց ձեռքով ազատուելը ինձ համար անարգանք եմ համարում:

— Այդ խօսքը շատ վերաւորական է, Մուրատ, ասաց երիտասարդը փոքր ինչ վրդովուած ձայնով, — բայց ես ուշադրութիւն չեմ դարձնի եւ կը յիշեցնեմ քեզ մի ուրիշ բան, որը, որպէս երեւում է, մոռացել ես դու:

Դու յիշում ես այն անբախտ աղջկան, որը սիրում էր քեզ, որին սիրում էիր եւ դու։ Արդեօք չե՞ս մտածում վերադառնալ նրա մօտ, գտնել նրան, ուրախացնել նրան։

— Գիտե՞ս ինչ դրութեան մէջ թողեցիր նրան։

— Գիտեմ...։ Բայց ինձ յայտնի չէ, արդեօք ո՞ղջ է նա, թէ...։

Վերջին խօսքը ես չկարողացայ արտասանել, դա դանակի պէս կտրատում էր իմ սիրտը։ Երիտասարդը հանդստացրեց ինձ, ասելով.

— Ողջ է։ Նրա վէրքը մահացու չէր։ Մենք այդ մասին ճիշդ տեղեկութիւն ունենք։

Ընթերցողը յիշում է, որ ինձ դէպի աքսոր ճանապարհ դնելու առաւօտը յանկարծ յայտնուեցաւ Նէնէն եւ իւր բարկութեան խռովութեան մէջ խլեց զինուորների մէկի ձեռքից հրացանը եւ արձակեց։ Թէեւ ոչ որին չվնասեց նա, բայց նրա վարմունքը այն աստիճան հակառակ էր օրէնքի, որ մի զինուոր հրացանի սուինով վիրաւորեց նրան, եւ նա ընկաւ "Խելագար աղջկայ" համարումը եւ հոգեկան հիւանդութեան ապացոյցները միայն կարողացան ազատել նրան օրէնքի խիստ դատապարտութիւնից։

Նէնէի անունը յիշեցնելով, երիտասարդը շօշափեց սրտիս ամենազգայուն լարերը. իմ յամառութիւնը մեղմացաւ, իմ կամակորութիւնը միանգամից փշրուեցաւ եւ ես պատրաստ էի ասել նրան. "Լաւ, համաձայն եմ, կը միանամ ձեզ հետ", — բայց դարձեալ շուտով ես տիրապետեցի ինձ, կարծես, իմ կամքի զօրութիւնը կրկին վերադարձաւ, երբ մտաբերեցի թէ ինչ բան է խաչագողը կամ ինչ է նշանակում միանալ նրանց հետ։

— Ոչ, պատասխանեցի նրան, — երբէք, երբէք ձեզ հետ գործ ունենալ չեմ կարող։

Երիտասարդի դրութիւնը անտանելի դարձաւ։ Նա գործ դրեց իւր վերջին ուժը, աշխատելով Նէնէի յիշատակով դրաւել ինձ։ Այդ փորձը անցաւ ապարդիւն։ Այժմ ինչ պիտի անէր նա։ Նա յայտնեց ինձ մի գաղտնիք, հաստատ յոյս ունենալով, որ կը համոզէ ինձ, որ ես կը մասնակցեմ նրանց ձեռնարկութեան մէջ։ Ես մերժեցի։ Բայց գաղտնիքը մնաց ինձ մօտ։ Այժմ կարո՞ղ էր նա ապահով մնալ, որ ես նրանց գաղտնիքը չէի յայտնի ում որ հարկն էր եւ արգելք չէի դնի նրանց դիտաւորութեան կատարուելուն։ Խաչագողները սաստիկ կասկածաւոր մարդիկ են։ Ես նկատեցի այդ եւ բոլորովին անկեղծութեամբ միամտացրի նրան, ասելով.

— Դուք ինչ որ ցանկանում էք արեցէք, ես ոչ մի կերպով չեմ խանգարի ձեզ, միայն ինձ հանգիստ թողեցէք։

— Ազնիւ խօ՞սք ես տալիս։

— Ազնիւ խօսք եմ տալիս։

Նա սեղմեց իմ ձեռքը եւ հեռացաւ։

Ես մնացի միայնակ, մեր կալարանի մի անկիւնում նստած։ "Այդ մարդիկը պիտի փախչեն, մտածում էի ես, նրանց դեռ չբռնուած, ազատ մնացած ընկերները դրսից կ'օգնեն նրանց եւ անպատճառ կը յաջողեցնեն գործը, իսկ ես կը մնամ իմ կապանքների մէջ։ Ինձ կը տանեն այնտեղ, ուր մարդիկ կենդանի թաղւում են հանքերի անձաւներում եւ խլուրդների նման աշխատում են ստորերկրեայ մթութեան մէջ"։ Չնայելով այդ բոլորին, իմ սիրտը հանգիստ էր. ես հաւատացած էի, որ վերջ ի վերջոյ ինձ համար էլ կը բացուէր ազատութեան դուռը, բայց աւելի արդար, աւելի օրինաւոր ճանապարհով։ Իւր մեղքերը զղջացած, ճշմարտութեան շաւղի վրայ կանգնած

յանցաւորին պէտք է ներուէր, պէտք է նրա համար փրկութիւն լինէր: Եւ եթէ մարդիկ այնքան սրատեսութիւն չունեն, որ քննեն սրտերի բոլոր խորքերը եւ որոշեն յանցառ յանցաւորը ղղջացածից, ապրողը մեղաւորից, — բայց Աստուած, որի համար ոչինչ գաղտնիք չկայ, որ դիտէ բոլորը, ինչ որ հասարակ մահկանացուին անհասկանալի եւ մոլոր է, — միթէ ամենաբարի Աստուածը չէր օգնի ինձ: Իմ հաւատը այժմ այնքան ջերմ էր եւ իմ յոյսը այնքան հաստատուն էր, որ ես Նրա օգնութեանը հաւատում էի եւ սպասում էի:

Գիշերը անցաւ առանց որեւիցէ աղմուկի: Ամեն ինչ խաղաղ էր, ամեն ինչ իւր սովորական դրութեան մէջն էր: Առաւօտեան մեզ զարթեցրին խիստ վաղ: Օրը բաւական ցուրտ էր: Իմ ընկերները ջերմացրին իրանց մարմինը արագով եւ չմռացան մեր պահապան զինուորներին նոյնպէս խմացնել: Մենք ճանապարհ ընկանք, մեզանից իւրաքանչիւրը իւր ծանրութիւնները իւր մէջքի վրայ կրելով: Մեր եռեւից գալիս էր մի սայլակ, լծած միայն մի ձիով, որ բերում էր մեր եւ զինուորների աւելորդ ծանրութիւնները: Նրա վրայ երբեմն նստեցնում էին աքսորեալներից նրանց միայն, երբ հիւանդանում էին եւ չէին կարող ճանապարհը շարունակել: Իմ ընկերներից երկուսը, այն առաւօտ իրանց հիւանդ ձեւացնելով, պատկած էին սայլակի վրայ: Պահապանները հիւանդների վրայ շատ ուշադրութիւն չէին դարձնում. ինքը հիւանդութիւնը հսկում էր նրանց վրայ:

Երբ արեգակը բաւական վեր բարձրացաւ հորիզոնից, օրը սկսեց տաքանալ: Աքսորականների խումբը առաջ էր ընթանում դանդաղ եւ ծանր քայլերով: Նրանց ոտնակապերի երկաթները աննկատելի կերպով ձայն էին հանում:

Պահապանների եւ աքսորականների ուշադրութիւնը գարձրած էր մի ծերունի հրէայի վրայ, որը զանազան ծիծաղելի առակներով զուարճացնում էր նրանց: Հրէան մի փոքրիկ մարդ էր, որին կոչում էին Ժօզէֆ: Այդ խեղկատակը կատուի դէմքով, նեղ եւ խորամանկ աչքերով, բնիկ օդեսացի էր, որը սկզբում պարապվում էր մաքսանենգութեամբ, իսկ յետոյ մանելով խաչագողների ընկերութեան մէջ, վորագրվելն պաշտօն էր կատարում եւ նրանց հետ կեղծ թղթադրամներ էր շինում: Դա միեւնոյն անձն էր, որ մատնեց ամբողջ ընկերութիւնը:

Ժօզէֆը ամբողջ խմբի զուարճութիւնն էր. նրա սրախօսութիւնները, հանաքները եւ հրէական թլբատ լեզուներով խօսակցութիւնը թուլացնելու չափ ծիծաղելի էին: Կարծես թէ, այդ բոլորը նրա մէջ մի տեսակ կենսական պահանջ էր դարձել, եւ այդ պատճառով խեղկատակութեան ձիրքը աւելի զարգացել էր: Նայելով նրա վրայ, ես բացատրում էի նրա ցեղի մի քանի ընդհանուր գծերը, որոնք առաջ էին եկել կեանքի զանազան պայմաններից: Խեղկատակութիւնը ծնունդ է հաճոյամոլութեան. դրանք երկուսն էլ ճնշուած, հալածուած ցեղերի յատկութիւններ են: Պատմական հանգամանքների խաղութիւնից հրէան այնքան ստոր ընկած է հասարակաց կարծիքից, որ մի շրջանի մէջ գտնուելու ժամանակ ուրիշ բանով չէ կարողանում գրաւել նրանց ուշադրութիւնը, բայց միայն ծաղրածութիւններով: Այդ մնում է նրա բնաւորութեան մէջ եւ այն աստիճան ընտելանում է, որ միեւնոյն անգամ առանց վերաւորուելու թոյլ է տալիս ուրիշներին ծաղրել իրան: Այդպէս էր եւ Ժօզէֆը:

Օրը սկսել էր երեկոյանալ: Դեռ տասն վերստից աւել էր մնում մինչեւ առաջիկայ իջեւանը: Ճանապարհը

ձգվում էր անտառի միջով, ուր ասեղնաւոր տերեւներով պատած ծառերը այնպէս խիտ գրկած էին միմեանց, որ մի քանի քայլ հեռուից ուրիշ ոչինչ չէր երեւում, բացի ծառերից: Ճանապարհը նեղ էր. ծառերի ճտերը անպատրաստ դիպչում էին մարդու երեսին եւ ծակոտում էին: Բայց այդ չէր արգելում լսել Ժօզէֆի մի հետաքրքիր պատմութիւնը, որը կէսօրից յետոյ սկսելով, դեռ չէր աւարտել: Պատմութիւնը հետզհետէ աւելի ծիծաղաշարժ էր դառնում. բոլորի ուշադրութիւնը լարուած էր դէպի հրէան: Դա ամբողում էր եւ մեր յոգնածութիւնը: Ճանապարհը դանդաղ կերպով առաջ էր գնում:

Մի տեղ ճանապարհը աւելի նեղ ձեւ ստացաւ. մի կողմից բարձրանում էր փոքրիկ բլուր, իսկ միւս կողմից մի ուղղաձիգ զառիվայր իջնում էր դէպի անտառախիտ ձորը եւ կորչում էր ծառերի մէջ: Ես լսեցի մի ձայն, որ շատ նման էր սեւ ագռաւի կռնչիւնին: Ոլքան եւ բնական կերպով հնչուեցաւ այդ ձայնը, գարձեալ ես չէի կարող չհասկանալ, թէ դա խաչագողների սովորական նշանախօսութիւններից մէկն էր, որ նշանակում էր՝ "պատրաստ եղէք„: Ձայնը կրկնուեցաւ, բայց ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց, միայն իմ ընկերները խորհրդաւոր կերպով նայեցին միմեանց երեսին: Ժօզէֆի պատմութիւնը այդ միջոցին աւելի հետաքրքրական էր դարձել:

Փոքր ինչ առաջ գնալուց յետոյ, ձայնը երրորդ անգամ կրկնուեցաւ: Այդ միջոցին մեր խումբի մէջ գրանուած խաչագողները արագութեամբ դուրս եկան ճանապարհից մտան անտառի մէջ եւ շուտով ծածկուեցան ժայռերի ետեւում: Պահապաններից մի քանիսը փորձեցին հետամուտ լինել, բայց ժայռերի ետեւից եւ ծառերի միջից սլացող գնդակները երկուսին գետին գլորեցին:

Նրանք յետ դարձան, որ պահեն մեռածներին, որպէս զի չփախչեն:

Այդ բոլորը կատարուեցաւ մի քանի րոպէի մէջ: Ամբողջ խումբին տիրել էր երկիւղ եւ խորին ապշութիւն: Հրացանները դեռ երկու կողմից եւս արձակվում էին, գնդակները սուլելով անցնում էին ծառերի միջից: Ցետոյ ամեն ինչ լռեց, միայն անտառի խորքից լսելի էին լինում մարդերի շտապ-շտապ գարկերը: Նրեւում էր, խորտակում էին փախստականների երկաթեայ ոտնակապերը:

Կռուի խռովութեան ժամանակ յափշտակողներից ոչ ոք չերեւեցաւ անտառի խորքից: Նրանք գործում էին իրանց թագստի տեղից: Միայն վառօդի ծուխի մէջ ես նշմարեցի մի աղօտ պատկեր: Ոլքան էլ կերպարանափոխուած լինէր նա, այսուամենայնիւ ես չէի կարող չճանաչել քաւոր Պետրոսին: Նա խորհրդաւոր կերպով շարժեց դէպի ինձ իւր մատը եւ դեւի նման կրկին անյայտացաւ: Կարծես, դրանով ասել էր ուզում. "յիմար, ինչո՞ւ չհետեւեցիր իմ խրատներին„...

Երբ ամեն ինչ լռեց, հանգստացաւ, մենք դեռ նոր նկատեցինք, որ խեղճ Ժօզէֆը դիակների թումբն էր: Գնդակը, որ դիպել էր նրա գլխին, պատահական չէր, այլ նպատակով ուղղած: Այդ անպիտանը մտանել էր խաչագողներին, ոչնչացրել էր մի ամբողջ հիմնարկութիւն, որով նրանք միլիոններ վաստակելու յոյսեր ունէին: Խաչագողը մինչեւ մահ չէ մոռանում իւր ընկերի անհաւատարմութիւնը, եւ աշխատում է մի օր վրէժխնդիր լինել: Եւ այժմ Ժօզէֆը ստացաւ իւր վարձը:

Սարսափած եւ երկիւղից խռովութեան մէջ ընկած պահապանները հրէայի եւ իրանց երկու ընկերների դիակ-

նները դրեցին սայլակի վրայ, եւ մենք շարունակեցինք մեր ճանապարհը։ Իջեւանը բաւական հեռու էր, մենք հասանք այնտեղ, երբ արեւը վաղուց մայր էր մտել եւ մութը բոլորովին պատել էր։

Միւս օրը մենք մնացինք նոյն իջեւանում։ Պահապանները երկիւղ կրելով, մի գուցէ մնացած աքսորականների հետ պատահէր մի եւ նոյնը, այն օր մեր գնացքը յետ ձգեցին, մինչեւ պատահած անցքի մասին տեղեկութիւն կը տային մերձակայ փոքրիկ քաղաքի կառավարութեանը, եւ մինչեւ փախստականներին գտնելու միջոցներ գործ կը դրուէին։ Ես շատ ուրախ էի, որ մեր ուղեւորութիւնը ընդհատուեց, որովհետեւ փոքր ինչ կը հանգըստանայի, փոքր ինչ կը կազդուրէի իմ սպառուած ուժերը։

ԺԲ.

ՍԻՐԸ ՉԻ ՀԱՄԲԵՐՈՒՄ

Ղազաղոնների փախուստից յետոյ մեր խումբի մէջ մնաց մէկ քրիստոնեայ միայն ազգով վրացի։ Միւսները թուրք, թաթար եւ այլազգիներ էին։ Ազատուելով խաչադողների անտանելի հասարակութիւնից, ես սկսեցի որոնել յիշեալ վրացու բարեկամութիւնը։ Նա մի ուրախ, պարզամիտ եւ բաւական ընորհալի դէմքով երիտասարդ էր Իմերեթիայի կողմերից։ Նա խիստ շուտով մտերմացաւ ինձ հետ։ Նրան աքսորել էին սպանութեան համար։ Ես զարմանում էի, թէ ինչպէս մի այնպիսի բարեսիրտ տղան կարող էր սպանութիւն գործել։

Այդ երիտասարդը օրըստօրէ աւելի եւ աւելի համակրական էր դառնում ինձ։ Նրա բնաւորութեան մէջ այն քան պարզութիւն կար, որ չէր կարելի չսիրել նրան։

Մեզ արդէն տեղափոխել էին մերձակայ փոքրիկ քաղաքը։ Այստեղ եւս մի քանի օր պահեցին մեզ, որովհետեւ մեր խումբի հետ պիտի միացնէին մի քանի ուրիշ աքսորականներ, որոնց նոյնպէս Սիբիր էին ուղարկում։

Վասօն — այսպէս էր վրացի երիտասարդի անունը — այնքան ընտելացաւ ինձ հետ, որ ինձանից չէր հեռանում։ Գիշերները քնում էր իմ կողքին, եւ շատ անգամ, երբ քունը չէր տանում, ժամերով պատմում էր իւր կեանքի այս եւ այն արկածները։

Մի գիշեր, նստած իմ մօտ, կարկատում էր իւր մաշուած կօշիկները եւ յանուր, հաղիւ լսելի ձայնով շշնջում էր մի երգ: Երիտասարդը բոլորովին յափշտակուած էր իւր զգացմունքների մէջ եւ գործը համարեա մեքենաբար էր կատարվում նրա ձեռքում:

— Վասօ, չե՞ս պրծնում, հարցրի նրանից:

— Ի՜հ, Թոզ անիծէ Աստուած այդ անպիտանները, սաղ տեղ չէ ճնացել, կարում ես, կարում, էլի էն է ու էն:

— Մէկ հատը ինձ տուր, ես կ'օգնեմ քեզ:

— Շնորհակալ եմ, դու միայն ձրագը մօտ բռնիր, ես կը կարեմ:

Ես նկատեցի, որ Վասօի խնդիրը խիստ կարեւոր էր. ձրագուի մոմը, որ նա կպցրել էր յատակի աղիւսի վրայ, այնքան սպառուել եւ կարճացել էր, որ լոյսը կօշիկների վրայ չէր տարածում եւ այսպիսով դժուարացնում էր նրան աշխատել: Ես վեր առի մոմը, բարձր բռնեցի, նա շարունակեց կարել:

Բայց ինձ հետաքրքրում էր այն, թէ ի՞նչ պատճառով աքսորեցին նրան:

— Ես սպանեցի իմ պարոնին, պատասխանեց նա:

— Ինչո՞ւ համար:

— Երկար է, շատ երկար, եթէ պատմելու լինեմ, մինչեւ լոյս չի պրծնի:

Մի եւ նոյն է: Դու խօ չես քնում, իմ քունն էլ չէ տանում. դու պատմիր, ես կը լսեմ. այսպիսով աւելի կարճ կը լինի գիշերը:

Նա սկսեց պատմել.

"Ես Է... իշխանի ճորտերից էի: Նա շատ վատ մարդ էր, օրինակ քեզ՝ մի գազան: Պատահում էր, կամ տանը կնոջ հետ կռուած է, կամ մի ուրիշը բարկացրել է նրան եւ կամ հարբած է, նա կատաղած գուրս է գալիս տնից, վայ այն գիւղացուն, որ կը հանդիպի նրան: Նա իսկոյն մի առիթ կը գտնէր գիւղացուն ծեծելու, հայհոյելու եւ իւր սիրտը հանգստացնելու: Օրինակ, պատահում էին այսպիսի դէպքեր. գիւղացին մի զոյգ նոր արեհներ է հագել: (Նա համբերել չէր կարող, երբ գիւղացին նոր բան էր հագնում եւ պարոնի նմանութիւն էր ստանում:) Ծեսար, կանչում է՝ "էյ, մարդ": Գիւղացին մօտենում է, գլուխ է տալիս, կանգնում է: — "Այդ ի՞նչ է", ցոյց է տալիս նա արեհները: — "Աղա ջան, ցաւդ առնեմ, գնում եմ անտառը", պատասխանում է գիւղացին դողալով: — "Տօ, անպիտան, եթէ առանց արեհների գնալը լինես, ոտներդ կը մաշուե՞ն" եւ հրամայում է իսկոյն խլել նրանից արեհները: Մի անգամ գիւղացու մէկը փոթիկաց նրա մօտ: — "Տօ, անշնորհք աւանակ, համարձակվում ես փոթիկա՞լ քո պարոնի առջեւ", ասաց նա եւ հրամայեց ծեծել խեղճին:

"Մեր հարեւան Գիւորգին մի աղջիկ ունէր, շարունակեց նա, նրա անունը Կէկէլօ էր: Բայց ի՞նչ աղջիկ, այնքան սիրուն էր, որ կարծես գիւղացու աղջիկ չլինէր, այլ ուղիղ պարոնի տնից գուրս եկած լինէր: Մի անգամ նա հանդիպեց ինձ դաշտումը, գալիս էր անտառից, շալակած փայտ էր բերում իրանց համար: Քրտինքը թափվում էր նրա երեսից, թշերը խնձորի նման կարմրել էին: Հէնց որ տեսայ, իմ խելքը գնաց: — "Տուր, Կէկէլօ, ես կը տանեմ շալակդ" ասացի նրան: — "Շատ ծանր է, ես կարող եմ տանել" ասաց նա, աւելի կարմրելով: Մենք սկսեցինք խօսելով կամաց-կամաց դիմել դէպի գիւղը, երբ մօտեցանք, բաժանուեցանք միմեանցից, որ մեզ միասին չտեսնեն:

Այդ միջոցին Վասօն այն աստիճան յափշտակուած էր իւր պատմութիւնով, որ ամենեւին չէր նկատում, թէ ասեղը ընկել էր նրա ձեռքից եւ կօշիկները նոյնպէս ընկած էին նրա կողքին։ Նա շարունակեց.

“Ես մօրս յայտնեցի, որ Նէկկէլօին նշան դնէ ինձ համար. նա էլ հօրս յայտնեց։ Հայրս գնաց Գիօրգի տունը, խոստացաւ տալ մի այծ, հինգ թունգի գինի, մի քանի սօմար սիմինդր, կարմիր ասած, խօսեցին, բարիշեցան, նշանը դրեցին։ Սպասում էինք, որ աշունքը գայ, գինին պատրաստուի, որ հարսանիք անենք։ Այդ միջոցին, չեմ իմանում, ի՞նչ սատանայ մտաւ իմ պարոնի գլուխ, նա հրամայեց, որ Նէկկէլօին վեր առնեն իւր տանը որպէս աղախին։

“Աշունքը եկաւ, գինիները հասան, բայց հարսանիքը չկատարուեցաւ։ — “Այս տարի չի լինի„ ասում էր մեր պարոնը։ Իմ սիրտը տրաքվում էր անհամբերութիւնից։ Բայց ի՞նչ կարող էի անել, երբ պարոնը այսպէս էր հրամայում։

Մի անգամ Նէկկէլօն գտաւ ինձ անտառում, տեսնում եմ, երեսին գոյն չէ մնացել, կ'ասես թէ, սպաննուած լինէր։ Հարցնում եմ. — “Նէկկէլօ, ի՞նչ է պատահել քեզ հետ„։ Նա ոչինչ չէ ասում, հէնց լաց է լինում։ Գրկում եմ նրան, դարձեալ հարցնում եմ, — Նէկկէլօ, ինչո՞ւ ես լաց լինում„։ Նա արտասուքի միջից ինձ պատասխանում է. — “Ախ, վատ մարդ է… նա շատ վատ մարդ է… նա Աստուած չունի… նա„…։ Խեղճ աղջիկը չկարողացաւ վերջացնել իւր խօսքը, բայց ես հասկացայ բոլորը…։

Արիւնը թռաւ գլուխս, ես խստակ կատաղեցայ։ Հէնց էն սհաթին վազեցի դէպի մեր տունը, խենջալը

վեր առի, թագցրի չէրքէզկիս տակ, տնից դուրս եկայ։ Առաջ մտայ գինետունը, լաւ խմեցի, սիրտս պնդացրի, յետոյ գնացի պարոնի դրանը կանգնեցայ, սպասում էի, որ նա դուրս գայ։ Տեսայ, նա դուրս եկաւ, պատրաստվում էր որսի գնալ։ Առաջը կտրեցի, ասելով. — “Ի՞նչու ես պահել իմ նշանածին„։ Նա բարկացաւ, սկսեց հայհոյել եւ չորս կողմն էր նայում, աչքերով որոնում էր իւր սպասաւորներին, որ հրամայէ ինձ բռնեն։ — “Տուր իմ նշանածը„ կրկնում եմ ես, հէնց մօտ ու մօտ եմ գնում։ Նա դարձեալ գոռում է. — “Դու, լիրբ, անզգամ, համարձակվում ես… բռնեցէք այդ անիրաւին„։ Ես ուշադրութիւն չեմ դարձնում, հէնց մօտ ու մօտ եմ գնում։ — “Հիմայ քեզ խեղդել կը տամ„ ասում է աւելի կատաղելով։ Իսկ ես հէնց մօտ ու մօտ եմ գնում։ — “Տուր նշանածս, ասում եմ քեզ„։ Նա էլ չհամբերեց մինչեւ ծառաները հաւաքուէին, յարձակուեցաւ իմ վրայ։ Ես խենջալը, խրեցի նրա կողքը…։

Այդ միջոցին ես նայեցի Վասօի երեսին, նա այնպէս գունատվուած էր, նրա շրթունքը այնպէս դողդողում էին, որ կարծես, հէնց այն րոպէում նա իւր արիւնոտ խենջալը դուրս էր քարշում բռնակալ պարոնի կողքից։ Երբ նա փոքր ինչ հանգստացաւ, հարցրի.

— Իսկ դու չփախա՞ր։

— Փախայ, բայց երբեմն գիշերով յայտնվում էի մեր գիւղում, որ Նէկկէլօին էլ կարողանամ փախցնել։ Աստուած չյաջողեց, մի գիշեր բռնուեցայ։

Վասօին ես աւելի սկսեցի սիրել, երբ իմացայ նրա կեանքի պատմութիւնը։ Խեղճ տղան սիրոյ զոհ էր դարձել։ Սէր… ի՞նչ բան ես դու, ես մինչեւ այսօր չեմ

կարողացել հասկանալ քեզ, թէեւ ինքս սիրել եմ... եւ այժմ սիրում եմ...:

Վասօն եւ Կէկէլօն, որպէս ճորտեր, որպէս սեպհականութիւն մի անգութ պարոնի, յօժարութեամբ նուիրում են նրան իրանց աշխատանքը, իրանց վաստակը: Բայց երբ պարոնը դիպչում է եւ այն զգացմունքին, որը սուրբ է իւրաքանչիւր անհատի համար, այն ժամանակ ճնշուած, հլու ստրուկն անգամ այլ եւս չէ համբերում...:

Իսկ ես, ես Թշուառականս, ի՞նչ արեցի Ենէնէի համար, ի՞նչով ապացուցի, որ ճշմարիտ սիրում եմ նրան...:

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Ա.

ԱԽԱԶԱԿԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ



Հինգ էր երեք տարի այն օրից, որ ես աքսորուեցայ: Այժմ բաւական ընտելացել էի դատապարտեալի տաժանական կեանքին, բաւական տանելի էր դարձել ինձ ծանր աշխատութիւնը հանքերի մէջ, բաւական սովորել էի այն տուղի կերակրին եւ կեցութեանը խոնաւ, մթին կացարաններուի մէջ:

Աշխարհից կտրուած, կեանքի վայելչութիւններից զրկուած դատապարտեալը իւր շրջանի մէջ ոչինչ բաւականութիւն չէ գտնում: Այստեղ ամեն մարդ յանդիմայից է գործում, որովհետեւ իւր համար չէ գործում: Ուր չկայ շահ եւ շահերի միութիւն, շատ բնական է, որ այնտեղ չէ կարող կազմուել ընկերական կեանք, սէր եւ միաբանութիւն: Ու գուցէ այդ է պատճառը, որ այն

ահագին խառնիճաղանձ բազմութեան մէջ մարդ չէ կա-
րող գտնել մի լաւ բարեկամ, մի լաւ ընկեր:

Միակ բանը, որ երբեմն մօտեցնում է այդ թշուառ-
ներին եւ կապում է միմեանց հետ, է նրանց վիճակի
միանմանութիւնը: Դժբախտութեան մէջ մարդը իւր նման
ընկեր է գտնում: Ես գտայ մի այսպիսի ընկեր, որի հետ
բաժանում էինք մեր վշաերը:

Այդ երիտասարդը հէնց առաջին անգամից գրաւեց
իմ ուշադրութիւնը, քանի դեռ նրա հետ ծանօթացած
չէի: Նա մի բարեկազմ տղամարդ էր, բարձրահասակ, որի
երեսի փոքր ինչ խոշոր գծագրութիւնը տալիս էր դէմքին
խիստ այրական բնաւորութիւն:

Ես շատ էի հետաքրքրվում, թէ ինչ յանցանքի
համար աքսորուած էր նա: Բայց նա իւր մասին ոչինչ
չէր խօսում եւ միշտ տխրութիւնը պատում էր նրա
դէմքին, երբ խօսքը վերաբերում էր իւր անձին: Ինձ
ասեցին, թէ նա եղել է մի նշանաւոր աւազակապետ:
Հէնց որ այդ լսեցայ, սկզբում իմ մէջ ծագեց սաստիկ
հակակրութիւն դէպի այդ մարդը: Աւազակը իւր գործու-
նէութեամբ շատ չէ զանազանվում խաչագողներից: Իսկ
խաչագողներին ես ատում էի: Բայց իմ հակակրութիւնը
հետզհետէ անհետացաւ, երբ աւելի մօտ ծանօթացայ
նրա հետ:

Աւազակապետը բնիկ պարսկաստանցի էր Ատրպատա-
կանի կողմերից: Հայրենակցութիւնը առաջին բարեկամա-
կան կապը եղաւ իմ եւ նրա մէջ: Բայց երբ լսեցայ,
որ նա ազգով հայ էր, բոլորովին կապուեցայ նրա հետ:

Մի գիշեր, երբ երկար թախանձեցի նրան, յօժա-
րութեամբ հաղորդել ինձ իւր կեանքի պատմութիւնը: Նա
սկսեց այսպէս.

"Ինձ կոչում են Ջալլադ. դա իմ իսկական անունը
չէ. դա իմ մականունն է, որ նշանակում է դահիճ:
Այդ մականունը ստացայ ես ոչ թէ նրա համար, որ
դահճի պաշտօն եմ կատարել, այլ նրա համար, որ շատ
արիւն եմ թափել, բայց ոչ անմեղ արիւն...: Իմ հայրը
Ղարադաղ գաւառի հայ մելիքի տնտեսն էր: Մելիքը
չափազանց հաւատարմութիւն ունէր դէպի նա եւ հա-
մարեա իւր տնտեսական բոլոր գործերը յանձնել էր նրան:
Մելիքը միշտ պարսից խաների հետ կեանք վարելով,
ընդունել էր նրանց շատ սովորութիւնները: Նրա ընտա-
նեկան կեանքը, բարքը, վարքը, կատարեալ պարսկական
էր, պակաս էր հարեմը միայն, պակաս էին սեւամորթ
սարսւկներ եւ նեգրքինի ծառաներ, որ նրա տունը մահմե-
դական ընտանիքի ճիշդ կերպարանքը ստանար:

Շատ անգամ պատահում էր, որ հայրս մի որեւիցէ
բան էր գնում մելիքի տան համար, եւ տալիս էր ինձ
տանել այնտեղ: Ես աւելի ուրախութեամբ էի կատարում
հօրս պատուէրը, երբ մի բան պէտք էր տանել մելիքի
կանանոցը: Ամեն անգամ, այնտեղ մնալու ժամանակ,
մելիքի աղջիկները, աղախինները շրջապատում էին ինձ,
"ինչ ես բերել," հարցնում էին, եւ ամեն կողմից վրա-
պրծնելով, սկսում էին խլխլել իմ տարած փաթեթները:
Իսկ երբ իմ տարած բաները աղջիկներին չէին պատկա-
նում, նրանք հանաքներ էին անում ծիծաղում էին իմ
վրայ, ջիգրացնում էին ինձ, իսկ ես ամօթից քրտնած,
կարմրած, հեռանում էի նրանցից: Ես թէեւ արդէն հա-
սակ առած պատանի էի, բայց ինձանից չէին քաշվում,
ինձ վրայ նայում էին որպէս տան աղայի վրայ:

Մելիքը, մահմեդականների սովորութեանը հետեւե-
լով, ունէր մի քանի կնիկներ: Նրա առաջին կինը մեծած

էր որից մնացել էր մի աղջիկ միայն, որին կոչում էին Սանամ: Յորթ մայրերը, որպէս սովորաբար լինում է, վատ էին վարվում Սանամի հետ եւ շատ բաներում խտրութիւն էին դնում նրա եւ իրանց զաւակների մէջ: Սանամը զրկուած էր մայրական սէրից, զրկուած էր առհասարակ ընտանեկան քաղցրութիւնից: Նա շատ անգամ հանդիպում էի նրան արտասուքը աչքերում, բայց նա ինձ ոչինչ չէր ասում, նա վարժուց սովորել էր իւր վշտերը թաղցնել իւր սրտում: Հայրը զբաղուած լինելով իւր գործերով, նրա վրայ ուշադրութիւն չէր դարձնում: Պատահում էր, երբ աղջիկների հագուստի համար գանագան թանգագին իրեր էի տանում ես, երբ Սանամը բաժին չէր ստանում, նա իսկոյն լռութեամբ հեռանում էր, առանձնանում էր մի տեղ, եւ անձնատուր էր լինում խորին տխրութեան:

Այսպիսի դէպքեր, որ պատահում էին ոչ սակաւ անգամ, վերաւորում էին Սանամի սիրտը, նա վշտանում էր, ոչ թէ այն պատճառով, որ նա զրկվում էր այն զուարճութիւններից, որ վայելում էին նրա միւս քոյրերը, ոչ, — Սանամը այդ մասին շատ հպարտ էր, — այլ նա վերաւորվում էր զգեստորապէս նրա համար, որ խտրութիւն էին դնում նրա եւ միւսների մէջ եւ անդադար յիշեցնում էին, թէ "դու անբախտ ես, որովհետեւ մայր չունես":

"Այդ հանգամանքները ծնեցրին իմ մէջ մի չափ կարեկցութիւն դէպի դժբախտ աղջկայ վիճակը:

Անցան տարիներ, Սանամը արդէն հասունացած օրիորդ էր դարձել, իսկ ես նորահաս երիտասարդ էի: Այդ հասակում մարդիկ ամեն բան հասկանում են:

Մի այգամ, երբ մօտենում էր զատկի տօնը, մեծ աղջիկները կարել էին տալիս իրանց համար նոր հագուստներ: Սանամի համար նոյնպէս ձեւել էին տուել, բայց նա ամենեւին չէր շտապում, որ շուտով կարուեն եւ զատկուայ համար պատրաստ լինեն: Ես հարցրի պատճառը, նա պատասխանեց.

— Ի՞նչ կ'անեմ կարմիր շապիկը, երբ սիրտս միշտ սեւ ու սեւ է հագած...:

Նա այլեւս չխօսեց եւ հեռացաւ:

Ես նկատեցի, որ Սանամը այժմ էր տանջվում այն ցաւերով, որ երեխայութեան ժամանակ շատ անգամ էին թորեցնում նրա աչքերից, — այժմ նրա արտասուք էին թորեցնում նրա աչքերից, — այժմ նրա տանջանքը բոլորովին հոգեկան էր...:

Սանամը մի առանձին մտերմութիւն չունէր դէպի ինձ. նա նայում էր ինձ վրայ, որպէս իւր հօր տանը մեծացած սպասաւորի վրայ: Որքան էլ ճնշուած լինէր նրա դրութիւնը, այսուամենայնիւ, նա մելիքի աղջիկ էր, իսկ ես՝ — նրա հօր մօտ ծառայողի որդին: Ես շատ էի աշխատում շօշափել նրա սրտի խորքերը, բայց նա այնքան ծածկամիտ էր, որ երբէք իւր սիրտը չէր բաց անում ինձ մօտ: Նա միայն համարում էր ինձ մի երիտասարդ, որ իւր բոլոր շրջապատողներից աւելի համակրութիւն ունէր դէպի նա, եւ որին պատահած ժամանակ կարող էր հատուցում եւ ասել նրան մի քանի խօսքեր:

Մի անգամ գոյց նրան սպասաւելի խոստովանեցնելու մէջ. կարծես թէ, սպասնուած լինէր յուսահատութիւնից: Նա դարձաւ դէպի ինձ այդ խօսքերով.

— Աղաչում եմ քեզ, գնի՛ր ինձ համար մի կտոր քեղանից. դա կը լինի իմ առաջին եւ վերջին խնդիրը քեզանից:

Իսկոյն հասկացայ նրա միտքը։

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, հարցրի ես ոչ սակաւ զարհուրելով։

Նա ուշադրութիւն չդարձրեց իմ հարցերի վրայ, եւ կրկնեց իւր խնդիրը աւելի հրամայական ձայնով.

— Քո գիտնալու բան չէ... գնա գնի՛ր, ինչ որ ասում եմ քեզ... հէնց այսօր, հէնց այս րոպէիս... գնա, մի ուշացի՛ր...։

Ես դուրս եկայ Սանամի սենեակից, նրան այն յոյսի մէջ թողնելով, թէ կը կատարեմ նրա խնդիրքը։ Բակումը ինձ հանդիպեց մեկնքի վաղեմի ձիապանը, մի Ծերունի, որ Ծառայում էր այդ տան մէջ նրա հօր ժամանակներից։ Ծերունին լսելով, որ ես կանչեցի նրան, շարունակեց իւր դանդաղ քայլերը եւ մնաւ ախոռատունը։ Ես հետեւեցի նրան, պատմեցի, թէ ինչ դրութեան մէջ գտայ Սանամին։

— Ամեն բան տակնուվրայ եղաւ... ասաց նա, ինքն իրան խօսելով, — "էլ ի՞նչ ճնաց... ամեն բան կորաւ... ճնացել էր մեր սուրբ հաւատը, այն էլ կորաւ...։

— Ի՞նչ է պատահել, հարցրի ես, ոչինչ չհասկանալով նրա մթին խօսքերից։

— Ի՞նչ է պատահել... կրկնեց նա գլուխը շարժելով, բայց այդ միջոցին ոսկեզօծ նժոյգներից մէկը, տեսնելով իւր Ծերունի խնամատարին, սկսեց ուրախութեամբ խրխնջալ եւ առջեւի սմբակները յատակին զարկել։ Նա դարձաւ դէպի նժոյգը, ասելով. — "Սարի, խելօք կաց„։ Սարին փոքր ինչ հանգստացաւ եւ նա կրկին դիմեց ինձ դարձեալ նժոյգի վրայ խօսելով.

— Հինգ տարուց աւել է, որ աշխատում եմ այդ անզգամին խելքի բերել, բայց դա հէնց էն գիժն է ու էն գիժը։

Ծերունի Թունին սաստիկ սիրում էր իւր ձիաների մէջ կարգ պահպանել, եւ մանաւանդ ներել չէր կարող, երբ նրանք մի այլ մարդու ներկայութեամբ, չէին հետեւում համեստութեան կանոնների։ Նա պատրաստվում էր աւելի երկար բացատրութիւններ տալ իւր կարգապահութեան մասին, բայց իմ համբերութիւնը հատաւ, ես կրկին հարցրի.

— Դու այն ասա, ի՞նչ է պատահել։

— Էլ ի՞նչ լինի... ամեն բան փչացաւ... ամեն բան ծուռն է գնում„...։ Նժոյգը դարձեալ ընդհատեց նրա խօսքը։ — "Սարի, սաստնայի ծնունդ, քեզ են ասում, խելօք կաց„։

Նա մոռանալով իմ հարցմունքը, մօտեցաւ Սարիին սկսեց հայրաբար փայփայել նրա գեղեցիկ բաշը, եւ նորից խրատներ կարդալ։ Նժոյգը լսեց նրա խրատները, հանդըստացաւ, իսկ Ծերունին եկաւ, կրկին նստեց իմ մօտ։

— Անցան, գնացին հին ժամանակները... խօսեց նա, խորին կերպով հոգւոց հանելով. — "լինում էր, շատ անգամ հանդուցեալ մեկնքը մտնում էր այստեղ. ձիաները մէկը միւսի կողքին շարուած էին յիսունի չափ, չաղ, սիրուն, կ'ասես թէ, ամեն մէկը մի ռաշիս լինէր։ Հանդուցեալն սիրալ փառաւորվում էր, ձեռքով զարկում էր իմ քամակին, "շատ ապրես, ասում էր, Թունի, ձիաները լաւ ես պահել„... ու այն րոպէում հանում էր իւր հագիցը կաբան, ինձ խալաթ էր տալիս։ Բայց հիմայ... ոչ այն մեկնքը կայ, եւ ոչ այն ձիաները...։ Բոլորը պատիկ մեկնքը ընծայեց պարսիկ խաներին...։ Բայց առաջ... պարսիկ խաներն էին մեզ ձիաներ փեշքաշ անում, որ հանդուցեալ մեկնքը նրանց հոգին չհանէր... տերեւի նման դողդողում էին, երբ նրա շուաքն էին տեսնում...։

Մելիքների տան վաղեմի փառքի յիշատակը եւ նրա թուլանալը ներկայ մելիքի օրերում այն աստիճան ցաւերով լցրած էին բարեսիրտ ծերունու սիրտը, որ նա, կարծես, բոլորովին չէր նկատում իմ ներկայութիւնը, եւ իսպառ մոռացաւ այն հարցը, որով ես մի քանի անգամ դիմեցի նրան։ Ես դարձեալ հարցրի.

— Ես այդ բոլորը գիտեմ, դու այն ասա, ի՞նչ է պատահել Սանամի հետ։

Նա դարձեալ ինձ համբերութիւնից հանեց իւր երկարաբանութեամբ։

— Խե՜ղճ աղջիկ, երանի՜ թէ, բնաւ ծնուած չլինէիր... երանի՜ քո մօրը, որ շուտ մեռաւ եւ աչքերով չտեսաւ այդ նախատինքը...։ Բայց ալեւոր Թունին մեղաւոր էր, նա մնաց, չմեռաւ եւ չտեսած բաներ տեսաւ...։ Մի այդպիսի բան կարո՞ղ էր պատահել հանգուցեալ մելիքի օրերում։ Նրա ժամանակում Աստուծոյ բարութիւնով լցուած էր մեր երկիրը. գայլն ու գառը միասին էին ապրում. մարդիկ խաղաղութեամբ ցանում էին, հնձում էին, ուտում էին, ուրախանում էին...։ Բայց հիմա՞, — հիմայ մարդ ոչ իւր գլխի տէրն է եւ ոչ իւր ապրանքի տէրն է... ամեն բան փչացաւ... ոչ կարգ կայ, ոչ կանոն... ամեն մարդ իւր սրտի ուզածն է անում...։ Իսկ մեր մելիքը իւր քէֆերից չէ արթնանում...։ Բայց այդ վերջինը... նրա այդ վերջին արարմունքը... ա՜խ, Աստուած, այդ ի՞նչ բան է...։

— Ի՞նչ արարմունք, գոչեցի ես բարկութեամբ, — դէ ասա, ի՞նչ ես սիրտս տրաքեցնում։

— Ի՜նչ արարմունք... դու դեռ չե՞ս լսել, հարցրեց նա զարմանալով։

— Ես ոչինչ չեմ լսել։

— Մեր մելիքը (ա՜խ, Տէր Աստուած, նրան մէքիչ խելք տուր) հա՛, մեր մելիքը ամեն բան ոտքի տակ տուեց, ամեն բան տակնուվրայ արեց...։ Խաները նրա հօրից տերեւի նման դողում էին, երբ գալիս էին նրա սալամին, ժամերով կանգնում էին դրանը, մինչեւ հրաման չէին ստանում, չէին համարձակվում ներս մտնել։ Բայց թուլասիրտ որդին հիմայ խաների ոտքերն է լիզում, խոնարհվում է նրանց առջեւ...։ Այդ բաւական չէ, իւր հարազատ աղջիկը նրանց կնութեան է տալիս... մի լյս հոգի է կորցնում...։

— Սանամի՞ն է տալիս, հարցրի ես սարսափելով...։

— Սանամին, ապա ո՜ւմը, պատասխանեց նա, իւր մարած աչքերից արտասուքը սրբելով։

Ես հասկացայ դժբախտ աղջկայ խռովութեան պատճառը եւ իսկոյն դուրս եկայ ախոռատնից։ Արեւը արդէն մայր մտնելու մօտ էր։ Ես սպասում էի, մինչեւ բոլորովին մթնի, որ յարմար ժամանակ գտնեմ Սանամի հետ տեսնուելու։

Բայց մինչեւ մեր տեսնուելը, հարկաւոր է ձեզ տեղեկացնել, որ այն ժամանակ Ղարաբաղի գաւառում կային հայոց երկու նշանաւոր մելիքներ. մէկը մեր մելիքն էր, իսկ միւսը, նոյնպէս հին տոհմից, աւելի զօրաւոր էր քան թէ մերը։ Ղարադաղի հայերի իշխանութիւնը բաժանուած էր այդ երկուսի մէջ։ Երկուսն էլ անմիաբան, հակառակ միմեանց, միշտ աշխատում էին ստորացնել միմեանց, վնասել միմեանց, եւ այդ պատճառով ներքին երկպառակութիւնը երկրից անպակաս էր լինում։ Պարսիկ խաները, օգուտ քաղելով դրանց թշնամութիւնից, աւելի բորբոքում էին կռիւը։ Եւ այդ, ի հարկէ, աւելի ձեռնտու էր նրանց, երբ հայոց գլխաւորները չէին կարող

միանալ, որ ընդհանուր ուժերով պատերազմին երկրի ապաստին թշնամու դէմ:

Վերջին ժամանակներում մեր մելիքը մտածում է բոլորովին ոչնչացնել իւր հակառակորդին, եւ այդ նպատակին հասնելու համար, աշխատում է դէպի ինքը գրաւել Քուրդաշտի խանին, խոստանալով, որպէս բարեկամութեան առհաւատչեայ դեղեցիկ Սանամին նրան կնութեան տալ:

Մի այնպիսի մարդ, որպէս մեր մելիքն էր, պատրաստ էր իւր փառասիրութեան համար զոհել ամեն ինչ: Նա նայում էր իւր աղջկայ վրայ, որպէս իւր նժոյգներից մէկի վրայ, որ շատ անգամ ընծայում էր այս եւ այն խանին, նրանց բարեկամութիւնը գրաւելու համար:

Պարզ, մանուր, անարատ ճնացած ժողովրդի կրօնական զգացմունքը վերաւորվում էր, տեսնելով, որ իւր մելիքը մահմեդական սովորութիւններին է հետեւում, բայց նրա խուլ բողոքը լսելի չէր լինում:

Դուք մի փոքր տեղեկութիւն ստացաք մեր երկրի այն ժամանակուայ դրութեան մասին, շարունակեց աւազակապետը, հիմայ դառնանք դէպի օրիորդ Սանամը:

Ախոռատան բակից մի փոքրիկ դուռ տանում էր դէպի պարտէզը, որ կպած էր մելիքի ամրոցին: Սանամը սովորութիւն ունէր երեկոյեան պահուն պարտէզում պտտելու: Ես մտայ այնտեղ, յուսալով, թէ կը գտնեմ նրան: Երկար անհանգիստ կերպով թափառում էի, բայց ոչքերին չտեսայ: Արեւը մտաւ, մութը սկսեց հետզհետէ թանձրանալ: Ես մտայ ամրոցը այն դռնով, որ ուղղակի տանում էր դէպի Սանամի սենեակը: Նախասենեակում ճրագ չկար: Մօտեցայ նրա կացարանի դրանը, ներսից լսում էր մի այսպիսի սոսկալի խօսակցութիւն.

— Լուռ կաց, անզգամ... ինչպէս ես համարձակվում... քեզ մոլթել կը տամ... ինչ որ ասում եմ, պէտք է հնազանդուես...:

Այդ նրա հօր ձայնն էր:

— Հողեմ քո սարսաղ գլուխը... էլ ինչ ես ուզում... կը դնաս խանի տանը, խանում կը դառնաս... միշտ զառ ու ղուռաշ կը հագնես...:

Այդ նրա խորթ մօր ձայնն էր:

— Թէ որ սպանէիք, թէ որ կտրատէք ինձ, էլի այն կ'ասեմ — պարսկի կին չեմ դառնայ, հոգիս չեմ կորցնի...:

Այդ Սանամի պատասխանն էր:

Ես յետ քաշուեցայ, մի անկիւնում կծկուեցայ, երբ լսեցի մելիքի քայլերի ձայնը: Նա իւր կնոջ հետ դուրս եկաւ, անցաւ իմ մօտից, բայց մութի մէջ չկարողացաւ նկատել ինձ: Ես լսեցի հետեւեալ խօսակցութիւնը.

— Այ մարդ, ասաց կինը, — դու ինչո՞ւ ես մտիկ անում այն քաճի ասածներին, ինչ որ ուզում է, թող անէ. դու խանին խօսք ես տուել, խօս չե՞ս կարող խօսքիդ յետ կանգնել:

— Ես նրա լաց ու սուգին մտիկ չեմ տայ, պատասխանեց մելիքը, — ես աղամարդ եմ, իմ թքածը չեմ լիզի...:

Սանամի վիճակը արդէն վճռուած էր: Այլ եւս կին համաձայն էին: Դժբախտ օրիորդի ընդդիմադրութիւնը կը ճնար ապարդիւն, եթէ մէկը նրան օգնութեան հասնէր:

Մինչ ես այն մտածութեան մէջ էի, թէ ինչ ելք պէտք է գտնել, նախասենեակում մտաւ օրիորդի

դայեակը, ճրագը ձեռքին: Պառաւը տեսնելով ինձ, կանգնեց.

— Ախար այդ լաւ բան չէ... ասաց նա ցաւալի ձայնով, — ախար այդ ընդդէմ է մեր Տէր Աստծուն... ո՞վ է տեսել մի այդպիսի բան... ախ, այդ ի՞նչ են ուզում անել, սուրբ Աստուածածին...: Քանի՛ տարիներ կուրծքիս վրայ պահել, մեծացրել եմ նրան... իմ աչքի լոյսի պէս պահել եմ... հիմայ ուզում են տալ անօրէնին... ուզում են հոգին, հաւատը կորցնել...:

Պառաւը նկատեց, որ ես համբերութիւն չունեմ նրան լսելու, հարցրեց.

— Ո՞ւր ես գնում:

— Սանամի մօտ:

Նա էլ էր ցանկանում մտնել օրիորդի մօտ, բայց երբ տեսաւ, որ ես այնտեղ եմ գնում, չդաժեցաւ խանգարել մեր տեսութիւնը, յետ դարձաւ, ասելով.

— Գնա, մի ուշացիր, նա քեզանից լսօք կը լսէ, ասա, Թող ականջ չդնէ հօրն ու մօր խօսքին, ասա, Թող չկորցնէ լոյս հաւատն ու հոգին...:

Ես, հակառակ իմ սպասածին, գտայ Սանամին բաւական խաղաղ դրութեան մէջ: Բոցավառուած աչքերի կրակը, որ տեսել էի այնօր առաւօտեան, կարծես Թէ հանգել էր, միայն գունաթափ դէմքի վրայ երեւում էին խորին յուսահատութեան նշանները:

— Բերեցի՛ր, հարցրեց նա անհամբերութեամբ:

— Ի՞նչը, հարցրի ես:

— Այն, որ առաւօտեան խնդրեցի քեզանից:

— Այն, որ դու պահանջեցիր, այլեւս պէտք չի լինի... պատասխանեցի ես:

Նա երեսը շուռ տուեց ասելով.

— Լաւ, հեռացի՛ր, էլ չեմ ուզում...:

Ես անշարժ մնացի: Նա շարունակեց.

— Ի՞նչ մարդիկ են... չեն օգնում գոնէ մեռնել ինձ...:

Նա կրկին նայեց ինձ վրայ, եւ տեսնելով, որ դեռ կանգնած եմ, ասաց փոքր ինչ հրամայական ձայնով.

— Ինդրում եմ ինձ մենակ Թողնել:

Ինձ յայտնի էր օրիորդի հաստատամտութիւնը. ես չհեռացայ. ես գիտէի, Թէեւ ես աֆիօն չդնեցի նրա համար, բայց իմ հեռանալուց յետոյ նա մի այլ միջոցով անձնասպանութիւն կը գործէր: Ես մօտեցայ, ասելով.

— Թէեւ աֆիօն չդնեցի, բայց բերել եմ ձեզ համար մի այլ դարման...:

— Ի՞նչ դարման, հարցրեց նա հանգստանալով:

— Ես ձեզ պէտք է ազատեմ...:

— Շնորհակալ եմ... պատասխանեց նա արհամարհական եղանակով. — դու ինձ կ'ազատէիր, եթէ կը բերէիր իմ խնդրածը...:

— Ես ցանկանում եմ, որ դուք կենդանի մնաք եւ միեւնոյն ժամանակ ազատուած լինէք:

— Դա անկարելի բան է... ես ձանձրացել եմ իմ հօրն ու մօրը...:

— Կարելի է, եթէ դուք կ'ընդունէք իմ առաջարկութիւնը...:

— Ի՞նչ էք ուզում ասել:

— Փախչենք, հեռանանք այստեղից, եթէ ոչ, առաւօտեան ձեզ բռնութեամբ խանի ամրոցը կ'ուղարկեն: Ամեն ինչ պատրաստուած է ձեզ ճանապարհ դնելու համար: — Փախչենք, քանի որ դեռ ժամանակը կորած չէ:

Հէնց այս պիշերը ես կը տանեմ ձեզ մի ապահով տեղ, ուր ոչ ոք չէ կարող գտնել ձեզ:

"Մի քանի վայրկեան մտածելուց յետոյ, պատասխանեց նա.

— Ոչ: Թող ես մեռնեմ. այդ աւելի լաւ է...:"

"Նա վախենում էր հասարակաց կարծիքից, յիմար ամբոխի դատապարտութիւնից: Մարդիկ կը ծաղրէին նրան, ասելով, թէ փախաւ իւր հօր սպասաւորի հետ: Ես չոքեցի նրա առջեւ, աղաչելով.

— Սանամ, այս տան մէջ ես եղել եմ ձեր ամենահաւատարիմ սպասաւորը, նոյնպէս եւ կը մնամ այսուհետեւ: Մենք համարեա թէ միասին ենք մեծացել եւ ձեզ պէտք է յայտնի լինի, թէ որ աստիճան յարգում եմ ձեզ: Ապաւինեցէք ձեր ծառայի օգնութեան վրայ, որ յանձն է առել ամեն ինչ ձեր կեանքը եւ պատիւը պաշտպանելու համար:

Երկար ես բայ չէի թողնում նրա ձեռքը, մինչեւ պատասխան չստանամ, երկար իմ արտասուքով լի աչքերը յառած էին դէպի նրա դառնաթափ դէմքը: Նա տարուբերվում էր սարսափելի անվճռականութեան մէջ: Նա այնքան կամքի զօրութիւն չունէր, որ մնաքառէր ընդունած նախապաշարմունքների դէմ: Ես սկսեցի աւելի եւ աւելի թախանձել նրան, մինչեւ լսեցի նրա բերանից այդ ուրախալի խօսքը.

— Համաձայն եմ...:

Ես կանգնեցի, ասելով.

— Գնում եմ պատրաստելու, ինչ որ պէտք է մեզ ճանապարհի համար: Դուք պատէղում կը սպասէք ինձ:

Իմ ուրախութեանը չափ չկար: Օրիորդի սենեակից դուրս գալը եւ Ճերունի Թունկի մօտ մտնելը մի քանի րոպէի գործ եղաւ: Ձիապանը դեռ քնած էր: Ես գտայ նրան խորին ախորժակի մէջ, երեւի, նա էլ Սանամի վրայ էր մտածում: Հոլորովին վստահ լինելով Ճերունու բարեսրտութեան վրայ, յայտնեցի նրան իմ դիտաւորութիւնը: Նրա խորշոմած դէմքի վրայ երեւաց ուրախութեան նման մի բան, եւ ինձ գրկելով, ասաց.

— Օրհնեալ լինիս, Աստուած զօրացնէ քեզ: Եթէ չլինէր Թունկին վաթսուն տարեկան, նա ինքը կ'անէր այդ բանը, նա չէր թող տայ, որ մեր Հուսաւորիչ հօր գառը գայլերին տայնի...: Բայց Թունկի մէջ այժմ առաջուայ ուժը չէ մնացել: Կար ժամանակ, որ ալեւոր Թունկին էլ ուժը չէ մնացել: Կար ժամանակ, որ ալեւոր Թունկին էլ մի տղամարդ էր, տան, քսան պարսկին մարդ էր ասի...: Ինչ էն ժամանակը...: Բայց դու դեռ ջահիլ ես. քեզանում արիւնը դեռ եփ է գալիս. դու կարող ես շատ բան անել...:

Ես ընդհատեցի նրան ասելով.

— Դէ, շուտ, Թունկ ապէր, երկար խօսելու ժամանակ չէ. պէտք է թամքել ձիաներից երկուսը:

— Հա, պէտք է թամքել, ի հարկէ, պէտք է թամքել, երկու ամենալաւը մեր ձիաներից: Թող առաւօտեան մեկնքը ջարդել տայ Թունկի ալեւոր գլուխը, այդ ոչինչ, միայն թէ նա ազատուած լինի...: Թող ազատուի իմ հրեշտակը, նա իւր հանգուցեալ մօր կտորն է, նրա նման բալի է... Աստուած հանգիստ, աղքատութիւն պարգեւէ նրան: Հանգուցեալն պէս կնիկ չկար մեր երկրում, այնպիսի լաւ սիրտ ունէր, որ ձանձրին էլ չէր նեղացնի...: Շատ անգամ մտնում էր նա աղքատ Թունկի խրճիթը, եւ երբ նրա երեխաներից մեկին մերկ էր տեսնում, հագցնում էր, երբ մեկին հիւանդ էր տեսնում, օգնում էր...: Ոչ մի օր դարպակ ձեռքով նա

իմ շէմքի վրայ ոտք չէր կոխում, ամեն անգամ մի բան կը բերէր իմ երեխաների համար, կ'ասէր. 'Թուռնի, դու կին չունես, ես պէտք է պահպանեմ նրանց...', Այդ բոլորը աչեւոր Թուռնին չի մոռանայ... Թէկուզ մեռնի, Թէկուզ նրա գերեզմանի վրայ խոտեր բուսնեն, դարձեալ չի մոռանայ...':

Մինչեւ ծերուհին կը վերջացնէր իւր հին յիշողութիւնները, ես ձիաներից երկուսը թամքեցի: Ցետոյ նշանակեցի մի տեղ, խնդրելով նրան, որ ձիանները տանէ այնտեղ եւ սպասէ մեզ: Իսկ ես վազեցի դէպի մեր տունը, որ պէնքերս վերառնեմ: Դիշերը խիստ մութն էր: Մարդիկ քնած էին: Փողոցներում ոչ ոք չէր երեւում:

Վերադառնալով մեր տնից, մտայ պարտէզը, ուղիղ դիմեցի դէպի այն կողմը, ուր պատուիրել էի օրիորդին սպասել ինձ: Ես գտայ նրան իւր ծառայի հագուստով: Հազիւ կարելի էր ճանաչել նրան, եթէ չասէր նա "այդ ես եմ":

"Մեկնքի ամրոցի մէջ սիրում էր խորին լռութիւն: Հրամանատներից ոչ մի ձրագ չէր երեւում: Բոլորովին աննկատելի կերպով դուրս եկանք պարտէզից, եւ սկսեցինք դիմել դէպի այն կողմը, ուր Թուռնին իւր ձիանեռով սպասում էր մեզ: Օրիորդը շնորհակալութեամբ համբուրեց ծերուհու աչքը եւ առեց նրա օրհնութիւնը: Ես օգնեցի նրան նստել ձին: Մենք հեռացանք:

Ամեն ինչ խաղաղ հանգստութեան մէջ էր: Ոչ մի շնչաւոր արարած չէր երեւում: Ես յետ նայեցի, ծերուհին դեռ անշարժ կանգնած էր իւր տեղում, եւ որպէս մարմնացած բարեպատութիւն, ձեռքերը բարձրացրել էր դէպի երկինք, մեզ համար յաջողութիւն էր բարեմաղթում...:"

Բ.

ԵՐԿՐՈՐԴ ԴԻՇԵՐ

Աւազակապետի պատմութիւնը այնքան գրաւել էր իմ ուշադրութիւնը, որ ամենեւին չէի նկատել թէ դիշերը աննկատելի կերպով անցել էր: Երբ արեգակի առաջին շառաւիղները ներս ցոլացին մեր արգելանոցի նեղ լուսամուտներից, այդ ժամանակ դռները բացուեցան, եւ պահապանների կոպիտ ձայնը ընդհատեց հետաքրքիր պատմութիւնը: Մեզ խումբով դուրս քշեցին դէպի հանքերը աշխատելու:

Աւազակապետը ամբողջ օրը լուռ էր, նրա քաջաշնական դէմքը պատած էր մի խորհրդական մռայլով: Ես անհամբերութեամբ սպասում էի դիշերին, որ լսեմ նրա պատմութեան շարունակութիւնը:

Բայց ինձ աւելի զարմացնում էր նրա անձնաւորութիւնը. այդ անունը "աւազակապետ" ամենեւին սազ չէր գալիս նրան: Նրա մէջ կային շատ գեղեցիկ յատկութիւններ. նա ուժեղ էր, որպէս Հերքուլէս, եւ մեծահոգի ու բարի էր, որպէս մի աշնիւ հերոս: Նա ոչ միայն ունէր մի առանձին սէր դէպի ինձ, այլ թշուառականների ամբողջ հասարակութեան վրայ նայում էր խորին ցաւակցութեամբ: Այդ պատճառով բոլորը յարգում էին նրան:

Աւազակապետը անկիրթ եւս չէր. Նրա բաւական մշակուած լեզուն եւ առողջ դատողութիւնները ցոյց էին տալիս, թէ ինքը գրագէտ ոմն էր: Ո՞րտեղից պէտք է ուսած լինէր, երբ նրա ժամանակ Ղարադաղում չկար ոչ մի դպրոց: Այդ հարցին պատասխանեց նա, թէ իւր պատանեկութեան ժամանակ հայրը ուղարկեց նրան Տաթեւի վանքը, ուր մնաց նա ամբողջ վեց տարի: Այդ վանքում մեծ հռչակ էր ստացել մի վարդապետ որպէս քաջ հայկաբան, ճարտասան եւ աստուածաբան: Նրա մօտ ուղարկում էին ղարադաղցիք իրանց զաւակներին: Նրա աշակերտների թւում ուսանում էր եւ ինքը:

Այնօր աշխատութիւնից արձակեցին մեզ սովորականից խիստ վաղ, որովհետեւ հետեւեալ օրը տօն էր: Մենք խումբով անցնում էինք մեծ փողոցի միջով, որի երկու կողմերում միմեանց մօտ շարուած էին փոքրիկ խանութներ: Այդ խանութներում ծախվում էին ըստ մեծի մասին այնպիսի վաճառքներ, որ պէտք էին աքսորականներին, զինուորներին, տեղային պաշտօնատարներին, հանքային արհեստաւորներին, վարպետներին, եւ այլ ծառայողներին: Մանրավաճառների խանութների շարքում կային դարբնոցներ, հացթուխներ, դերձակներ, գինետներ, խոհարաններ եւ ուրիշ պիտոյքների կրպակներ:

Փողոցը լիքն էր մարդիկներով: Հետեւեալ օրուայ տօնի համար ամեն ոք գնում էր՝ ինչ որ իրան պէտք էր: Բայց իմ ուշադրութիւնը գրաւեց մի մուրացկան, որ մի խանութից միւսը անցնելով, ողորմութիւն էր խնդրում: Հնացած, պատառոտած, կիսակարկատ ցնցոտիներից շատ տեղ երեւում էր նրա մարմնի մերկութիւնը: Մի նոյնպէսի հնամաշ տօպրակ ուսից քարշ էր ընկած: Գլուխը կռացած էր մինչեւ գետին, իսկ քամակից բարձրացել էր

մէջքի ահագին կուզը: Իւր դողդոջուն մարմինը հազիւ-հազ կարողանում էր ոտքի վրայ պահել, նեցուկ տալով կուրծքին ձեռքի ցուպը: Նա կաղկղալով քարշ էր գալիս մի խանութի դռնից դէպի միւսը եւ ցաւալի ձայնով մրմնջում էր. "ողորմութիւն արէք, պարոններ, հիւանդ, սոված աղքատին": Ամեն մի անգութ սրտի վրայ կարող էր ազդել նրա դառն հառաչանքը:

Երբ նա տեսաւ աքսորականների խումբը, մօտեցաւ: "Դուք աւելի թշուառ էք, քան թէ ես" ասելով, սկսեց իւր հաւաքած գրօշները բաժանել նրանց: Նա դրեց եւ իմ ափի մէջ երկու հատ հինգ կոպէկնոց: Այդ ժամանակուայ հինգ կոպէկնոցները այնքան մեծ էին, որ կարող էին իշի նալի հետ մրցել: Ես նայեցայ մուրացկանի երեսին եւ շուարած մնացի...: Աւազակապետը իմ կողքին կանգնած էր: Երբ մուրացկանը հեռացաւ, նա ասաց.

— Այդ դէմքը ծանօթ է ինձ...:

Ես ոչինչ չպատասխանեցի:

— Մի՞թէ նա այժմ կաղ է դարձել եւ մէջքին կուզ ունի... ասաց նա ինքն իրան:

Տեսնելով, որ աւազակապետը ճանաչեց մուրացկանին, ես այլ եւս չթագցրի նրանից, պատասխանեցի.

— Նրա ոտները քո եւ իմ ոտներից աւելի ուղիղ են, մէջքն էլ նոյնպէս, միայն նա այնպէս ձեւացրել է իրան: Այդ մարդիկը հարկաւորած ժամանակ գիտեն իրանց կոյր, կաղ, սապատող ձեւացնել: Տեսար նրա խառնուած մազերը, խճճուած մօրուքը, ողորմելի երեսը, — բոլորը շինծու էր:

— Այդ երեսը ծանօթ է ինձ... դարձեալ կրկնեց աւազակապետը:

— Ո՞րտեղ ես տեսել նրան:

— Ցեսոյ կը պատմեմ...:

Ղօսմբը անցաւ: Ես մուրացկանիկ ստացած երկու հատ հինգ-կօպէկնոցները դրեցի գրպանս, այնտեղ մատներով շօշափեցի, յայտնուեցաւ, որ հինգ-կօպէկնոցներուն մէջտեղում դրած էր բոլորակ ձեւով ծալած թղթի կտոր: Առանց կարդալու, արդէն երեւակայում էի, թէ ինչ պէտք է գրուած լինէր այն թղթի վրայ, որ խորհրդաւոր ծրարի մէջ հասցրեց ինձ մուրացկանը: Այսուամենայնիւ, ու պատեհ ժամանակ էի որոնում, որ կարդամ թուղթը:

Երբ հասանք մեր արգելանոցը, արդէն մութն էր, ճրագները վառւում էին: Ես առիթ գտայ թուղթը կարդալու: Նրա մէջ գրուած էին հետեւեալ տողերը. «Մուրադ, ամէն ինչ կարգադրուած է քո փախուստի համար: Ցուսով եմ, որ դու այժմ կը հետեւես իմ խորհուրդներին: Դու երկրորդ անգամ ինձանից նամակ կը ստանաս եւ նրա համեմատ կը վարուես: Պետրոս»:

Նամակը կարդացի ես մի այնպիսի տեղում, ուր թոյլ էն տալիս կալանաւորներին մենակ մնալ: Գաղտնի կպցրած էր մի ճրագ, թուղթը բռնեցի ճրագի վրայ եւ քաւոր Պետրոսի խորհրդաւոր ազդարարութիւնը մի վայրկեանում ոչնչացաւ:

Ինձ հետաքրքրում էր աւազակապետի այն խօսքը, թէ մուրացկանի դէմքը նրան ծանօթ էր: Ես համոզուած էի, որ անպատճառ այդ ծանօթութեան հետ կապուած կը լինէր մի ահռելի պատմութիւն: Որովհետեւ քաւոր Պետրոսը այն պատուղներից չէր, որ նրա ճաշակելը ինչպէս առանց հետեւանքի:

Գիշերը, երբ մեզ տեղաւորեցին մեր կացարաններում, ես խնդրեցի աւազակապետից, որ պատմէ, թէ ինչ

առիթով ծանօթ է եղել ծպտեալ մուրացկանի հետ: Նա հաճութեամբ կատարեց իմ խնդիրքը:

«Դու յիշում ես, միանգամ պատմեցի քեզ, որ իմ պատանեկութեան հասակում հայրս ուղարկեց ինձ Տաթեւի վանքը ուսում առնելու: Այդ միջոցներում լուր տարածուեցաւ, թէ Ղոտնայ վանքում յայտնուել է մի հրաշագործ ճգնաւոր: (Ղոտնայ վանքը հեռու է Տաթեւի վանքից կէս օրուայ ճանապարհով միայն): Ճգնաւորի մասին խօսում էին, թէ նա ոչ ուտում է, ոչ խմում է, այլ լեցուած է սուրբ Հոգու շնորհով, թէ նրա կերակուրը մշտական աղօթքներն են: Նրա մասին պատմում էին զանազան հրաշքներ, այդ պատճառով ամեն կողմից կոյսեր, կաղեր եւ զանազան տեսակ հիւանդներ դիմում էին վանքը ճգնաւորից բժշկութիւն գտնելու համար»:

«Լսելով ճգնաւորի համբաւը, իմ հինգ տարի շարունակ անպատասխան մայրը հանգստութիւն չէր տալիս ինձ: Անդադար անից նամակ էի ստանում, որ գնամ, մօտս բերեմ ճգնաւորի մօտ: Նա էլ ցանկանում էր առողջանալ եւ ամէն ոտների վրայ մեն գալ: Հայրս էլ նոյնն էր ցանկանում: Ես ստիպուեցայ առ ժամանակ ընդհատել իմ ուսումը, Տաթեւի վանքից գնայի մեր տունը մօտս բերելու համար: Հայրս դրեց մեզ հետ ամեն բան, ինչ որ արժան էր վանքին ընծայ տանելու համար»:

«Ղոտնայ վանքը հասնելուց երկու օրից յետոյ, մեզ թոյլ տուեցին այցելել ճգնաւորի մօտ: Մենք գտանք նրան իւր ձեռքով ապառաժի մէջ փորած մի քարանձաւում, ուր նա ապրում էր, ուր սովորութիւն ունէր աղօթելու եւ իւր անձը զանազան ճգնութիւններով տանջելու: Այնտեղ տարաւ մեզ վանքի աբեղաներից մէկը:

Ճգնաւորը այդ միջոցին աղօթքով զբաղուած չէր, այլ նստած էր իւր խուցի մէջ, բոլորովին մերկ քարայատակի վրայ, եւ թեւքի արմունկը դնելով մի քարի կտորի վրայ, որ նրան բարձի տեղ էր ծառայում, ձեռքը նեցուկ էր տուած գլխին, եւ կիսաթեք դրութեան մէջ, նրա բաց աչքերը անշարժ յառած էին դէպի քարանձաւի առաստաղը: Այդ դրութեան մէջ, կարծես նրա միտքը վերասըլացել էր դէպի երկինքը եւ տիրել էր նրան խորին, սրբազան յափշտակութիւն: Այնպէս որ, նա ամենեւին չզգաց, երբ մայրս մօտեցաւ եւ համբուրեց նրա հագուստի քղանցը„:

"Հագուստը խիստ պարզ էր. կոշտ մազից գործուած սեւ բաճկոնը իջնում էր մինչեւ ոտները, մէջքը պնդած էր նոյնպէս մազէ սեւ չուանով: Ցրեխներ կամ հողաթափներ չէր հագնում, բոլորիկ ոտներով էր մեզ գալիս: Գլուխը բաց էր, բայց կիսրուած եւ չսանրուած մազերը այնքան երկարացել եւ աճել էին, որ պահպանում էին նրա գագաթը թէ ցրտից եւ թէ արեւի տօթից: Յստ ճուած մօրուքը խառնուել էր գլխի մազերի հետ եւ տալիս էր նրա դէմքին ահռելի կերպարանք: Ներսը գունաթափ եւ հիւանդոտ էր„:

"Ցեռնլով, որ ճգնաւորը ոչ շարժվում է, ոչ խօսում է եւ ոչ փոխում է իւր նստուածքի ձեւը, մենք կարծեցինք, թէ նա քնած է: Բայց աբեղան ասաց.

— "Նա քնած չէ, տեսնո՞ւմ էք, աչքերը բաց են, միայն հոգով բարձրացել է երկինքը„:

"Մայրս խնդրեց, թէ կը ցանկանար, որ ճգնաւորը տեսնէր նրան: Աբեղան պատասխանեց.

— "Մենք, մեղաւոր ադամորդիներս տեսնում ենք աչքերով, բայց նա տեսնում է հոգով„:

"Ցետոյ աբեղան խորհուրդ տուեց մօրս, որ մնտենայ ճգնաւորին, բռնէ միայն նրա հագուստի դրօշակը, եւ նա կ'ասէ, ինչ որ ոգիները կը ներշնչեն նրան„:

"Ես օգնեցի մօրս մնտենալ. նա կատարեց աբեղայի պատուէրը: Նոյն րոպէում ճգնաւորը մի անսովոր շարժում գործեց, եւ չփոխելով իւր առաջուայ դրութիւնը, արտասանեց մի քանի անկապ խօսքեր. —

Յնկի ծառը բուսել է... գլխին պսակ հիւսել է... տասերկու ճիւղ է արձակած... ամեն մի ճիւղի վրայ... մի մի հրեշտակ է նստած... բայց բոլորից վերեւը... սուրբ Տիրամայրն է նստած... գրկին մանուկ է բռնած... լոյս մազերով զարդարած... Մօր աչքերում արտասուք... սիրտը վշտերով լցուած... մանկան ձեռին է մի խաչ... դէմքը պայծառ է դարձած... արտասուքը սրբութիւն... իսկ խաչը մեզ փրկութիւն... Մայրն ու Որդին խոստանում„...:

"Ճգնաւորը լռեց: Աբեղան բացատրեց մեզ նրա պատգամախօսութեան իմաստը, թէ սուրբ Տիրամայրը եւ Որդին "փրկութիւն„ են խոստանում: Մայրս ուրախացաւ, կրկին համբուրեց ճգնաւորի հագուստի դրօշակները, եւ մենք երկիւղածութեամբ հեռացանք:

"Այնուհետեւ անցան մի քանի ամիսներ, ճգնաւորի մասին շատ անգամ լսվում էին այսպիսի խօսքեր, թէ նրա ժամանակը մօտեցել է, թէ նա երկար չի ճնալու երկրի վրայ, թէ հրեշտակները նրան իրանց մօտ են կանչում, թէ նա մի օր կ'անյայտանայ, թէ նրա վախճանը Մոսկուայի եւ սուրբ Լուսաւորչի նման կը լինի, որ ժողովուրդը նրա մարմինը չգտնէ եւ պաշտելու առարկայ չդարձնէ„:

"Եւ իրաւ, ճգնաւորը անյայտացաւ: Ո՞ւր գնաց, — ոչ ոք չգիտէր: Միայն ժողովրդի մէջ տարածուեցան զա-

նաշան կարծիքներ. ոմանք համարում էին նրան Հնովքի եւ Եղիայի նման երկինքը բարձրացած, ոմանք ասում էին, թէ նա առանձնացել է մի սարում, իւր կեանքի վերջին օրերը խստակեցութեամբ անցկացնելու եւ իւր անձը բոլորովին Աստուծուն նուիրելու համար: Ոմանք պատմում էին, թէ նրան տեսել են այս ինչ տեղում, լոյսի ճաճանչներով պատած, երբ մօտեցել են, նա աներեւոյթացել է: Վերջապէս, շատ այսպիսի խօսքեր էին ասում, իսկ նրանցից ոչն էր ճշմարիտ, — Աստուած գիտէ»:

Աւազակապետի պատմութիւնը թէեւ շատ հետաքրքրական էր, բայց ինձ աւելի էր զարմացնում: Ես քաւոր Պետրոսին լաւ էի ճանաչում. նրա համար այս եւ այն կերպարանք ընդունելը, այս եւ այն ձեւի մէջ մտնելը խիստ սովորական բան էր: Միայն ինձ անհասկանալի էր թուում մի բան, արդեօք քաւոր Պետրոսը միեւնոյն անձնաւորութիւնն էր, որին տեսել էր աւազակապետը ճգնաւորի քարանձաւի մէջ եւ ինչ ապացոյց ունէր այսպէս կարծելու: Դէմքի նմանութիւնը բաւական չէր. մանաւանդ քաւոր Պետրոսի դէմքը այն ժամանակից յետոյ պէտք է բաւական փոխուած լինէր: Երբ այդ հարցերը առաջարկեցի, աւազակապետը պատասխանեց.

— Նրան կոչում էին «ականջը կտրած» ճգնաւոր, պատմում էին, թէ նա միանգամ գերի է ընկել անօրէնների ձեռքը, նրան տանջել են, սպրդել են հասարքը ոտքանալ, նա մերժել է, եւ այդ պատճառով ականջները կտրել են: Այդ չարչարանքի համար նրան հանդիսում էին մի տեսակ նահատակ: Ես էլ նկատեցի, որ մեր տեսած մուրացկանի երկու ականջների ծայրերը կտրուած էին: Բացի դրանից, ճգնաւորի բաղուկների եւ ձեռքերի վրայ Նրուսաղէմի ուխտաւորների դրոշմը կար: Ոչինչ էս նկատեցի մեր տեսած մուրացկանի ձեռքերի եւ բազուկների վրայ:

Նշանները ուղիղ էին: Իրաւ է, Պարսկաստանում մի փոքրիկ դողութեան համար քաւոր Պետրոսի երկու ականջների ծայրերը կտրել էին: Այդ պատիժը ստացել էր նա իւր երիտասարդ հասակում: Ես թէ նա Նրուսաղէմի ուխտաւոր է եղել, — այդ նոյնպէս ուղիղ էր:

— Բայց ինչ նպատակով թափառում է այդ մարդը հեռաւոր հիւսիսում, խօսեց աւազակապետը, — եւ ինչ ողորմելի դրութեան մէջ էր նա:

Ես չգիտէի ինչ պատասխանել. ես դժուարանում էի յայտնել աւազակապետին, թէ ճանաչում եմ նրան, թէ մեր մէջ եղել են երկար տարիների յարաբերութիւններ եւ թէ նոյն ճգնաւորի առաջնորդութեամբ ես մի այնպիսի ծուռ ճանապարհի վրայ դրուեցայ, որ վերջը բերեց, հասցրեց ինձ այնտեղ, ուր տանջվում են յանցաւորները միայն: Ես չկայանեցի նաեւ, թէ նա ինձ համար էր մտել այն ողորմելի կերպարանքի մէջ եւ ինձ համար է թափառում գտատապարտեալների բնակութեան մերձակայքում: Ես ծածկեցի նրանից եւ այն, որ խորհրդաւոր մուրացկանը, մօտենալով մեզ, հինգ-կոպէկնոցների հետ տուեց ինձ մի թուղթ: Այդ բոլորը ծածկեցի իմ ամենալաւ ընկերից, որովհետեւ դեռ մտատանջութեան մէջ էի, դեռ չգիտէի, թէ ինչ պիտի պատասխանեմ քաւոր Պետրոսի առաջարկութեանը:

Ի՞նչ պէտք է պատասխանէի: Մերժէ՞ի, ընդունէ՞ի, — ոչ մէկը վճռել չէի կարողանում: Նա եկել էր ինձ ապատելու, նա անցել էր հարիւրաւոր մղոններ, հազարաւոր վերստեր. նա դեռ չէր մոռացել ինձ, դեռ մտածում էր ինձ համար: Բայց ինչ նպատակով: Արդեօք

աշխատում էր հանգստացնել խղճի խայթը, որ ինձ մոլորութեան եւ դատապարտութեան մէջ ձգեց, — թէ կամենում էր ինձ նորից ձեռք առնել, որպէս մի դործիք, որ նրան պակասում էր: Մինչ ես այս մտատանջութիւնների մէջ էի, աւազակապետը ասաց.

— Ես նրան երրորդ անգամն է, որ հանդիպում եմ:

— Առաջին անգամն որպէս ձիւնաւոր, վերջին անգամ որպէս մուրացկան, իսկ միւսը, հարցրի ես:

— Դա կապ ունի Սանամի անցքի հետ, յետոյ կը պատմեմ քեզ:

Գ.

ԵՐՐՈՐԴ ԴԻՇԵՐ

Երրորդ գիշերը աւազակապետը այսպէս սկսեց Սանամի ընդհատուած պատմութիւնը.

"Դու յիշում ես, որ գիշեր էր, երբ ես եւ Սանամը հեռացանք մեղքի ամրոցից, մի մթին եւ խուլ գիշեր, որ բնութիւնը ինքն էր նպաստում մեր փախուստին: Անցանք մի քանի մղոններ, գիշերային խաւարը սկսեց փոքր առ փոքր պարզուել: Ճանապարհին օրիորդը մի խօսք անգամ չխօսեց ինձ հետ: Նա լուռ էր, որպէս երեւում էր, ծանր մտախոհութիւններ տանջում էին նրան: Նա ունէր հայ օրիորդի թէ հնազանդութիւնը եւ թէ նախապաշարմունքները: Առաջինի դէմ բողոքեց նա, ընդդիմացաւ ծնողների բռնութեանը եւ չկամեցաւ մահմեդականի կին դառնալ. իսկ երկրորդը, նախապաշարմունքը, մնաց: Նա մի նախատինքից ազատուեցաւ, բայց մի այլ նախատինքի ենթարկեց իւր անձը: Նա փախաւ ծնողների տնից մի երիտասարդի հետ, որ ոչ նրա ազգականն էր եւ ոչ նրա բարեկամը: — Երեւի, այդ մտածութիւններն էին տանջում նրան":

"Իմ ձին ընթանում էր առաջ, իսկ նա հետեւում էր ինձ: Ես էլ իմ կողմից չէի խօսեցնում նրան, որովհետեւ չէի ցանկանում աւելի վրդովել նրա հոգեկան

խռովութիւնը: Նա միայն հիացած էր նրա կերպարանքի բարեկազմութեամբ, թէ որքան գեղեցիկ էր նա տղամարդի հագուստով, եւ որքան քաջալեր ձիավարում էր նա, նստած իր սիրուն նժոյգի վրայ: Նա ներկայացնում էր մի ընտրեալ ձիաւոր, որի նմանը կարելի էր տեսնել պարսից բարձր աշնուականների որդիների մէջ„:

«Բայց նրա հայրը իր կեցութեամբ, իր սովորութիւններով, իր բարք ու վարքով նոյնպէս ներկայացուցիչ էր պարսից բարձր աշնուականութեան: Շրջապատուած բազմաթիւ նոքարներով, որսորդական շներով ու բազէներով, վատնում էր նա իր ժամանակի մեծ մասը զանազան զբօսանքների ու զուարճութիւնների մէջ, որոնք կատարվում էին ըստ մեծի մասին ձիաների վրայ: Իսկատ սակաւ անգամ էր պատահում, որ նրա ընտանիքը չմասնակցէր այն զբօսանքներին, եւ այդ պատճառով Սանամը մանկութիւնից վարժուած էր ձիավարելու մէջ„:

«Մելիքը, ինչպէս Ղարադաղի բոլոր խաների, ունէր բազմաթիւ անասուններ, որոնց ամառը տանում էին լեռնային հովասուն տեղերում արածացնելու: Շատ անգամ մելիքի ընտանիքը ամբողջ ամիսներ անց էր կացնում ամարանոցում, իրանց հօտերի մօտ, հովիւների վրանների մէջ: Սանամին աւելի էր զուարճացնում լեռնային կեանքը: Ղարադաղը սարոտ եւ անտառապատ երկիր է: Շրթեմն ձի նստած, ամբողջ ժամերով թափառում էր նա ձորերի, անտառների եւ լեռների մէջ: Այստեղ աւելի ազատ էր շնչում, քան թէ հօր վրակուած անում, ուր ամեն ինչ ճնշում էր նրան: Շատ անգամ ես լսել էի նրանից այդ խօսքերը. «ես չեմ սիրում ձմեռը„: Երբ հարցնում էի պատճառը, պատասխանում էր. «նրա համար որ, ձմեռը միշտ տան ծածքի տակ եմ մնում„:

«Երբ արեւը ծագեց, չգիտեմ ինչ զգացմունքից զրդուած, նա կանգնեցրեց իր ձին, եւ մի քանի րոպէ լուռ նայում էր դէպի այն կողմը, ուր նրա հօր լայնատարած կալուածների սահմանները հեռուհեռուկ անյայտանում էին մեր տեսութիւնից: Նա իսկոյն երեսը շուռ տուեց, որ ես չնկատեմ նրա արտասուքը: Նա գնում էր, հեռանում էր այն երկրից, ուր ծնուել, մեծացել էր: Բայց ո՞ւր էր գնում, — ինքն էլ չգիտէր: Բայց ինչո՞ւ էր թագցնում ինձանից իր արտասուքը: Նա այնքան հպարտ էր, որ չէր ուժանացնում ինձ տեսնել՝ ոչ նրա ուրախութիւնը եւ ոչ տրտմութիւնը„:

«Ես մտածեցայ, երբ նկատեցի, որ ուզում էր խօսել ինձ հետ:

«Մենք լաւ չարեցինք, ասաց նա, — որ այդ ձիաները վեր առինք հօրս ախոռատանից:

— «Ինչո՞ւ լաւ չարեցինք, հարցրի ես:

— «Դու գիտես հօրս բնաւորութիւնը. նա այսօր այն խեղճ Թուխիին սպանել կը տայ, որ մեզ ձիաներ տուեց:

— «Ուրիշ ճար չկար. ջրտեղից կարող էինք գտնել ուրիշ ձիաներ:

— «Կարող էինք ոտքով փախչել:

— «Դա կը յոգնեցնէր ձեզ: Իսկ մեզ պէտք է, որքան կարելի է, շուտով հեռանալ այդ կողմերից:

— «Ինչո՞ւ:

— «Մխթիթ դուք չգիտէք, որ հետամուտ կը լինեն մեզ: Մխթիթ դուք չէք իմանում, որ հէնց այս առաւօտ, երբ կը նկատեն, որ դուք տանը չէք, ամեն ինչ կը յայտնուի, եւ ձեր հայրը դէպի ամեն կողմեր մարդիկ կ'ուղարկէ, որ ձեզ որոնեն„:

— "Թող ուղարկէ: Այդ մթին ձորերը, այդ անտառները, այդ լեռները կարող են տարիներով պահել մեզ իրանց ծոցում, եւ ոչ ոք գտնել չէ կարող մեզ: Այդպէս չէ՞:

— "Այդպէս է, բայց զգուշութիւն եւս հարկաւոր է„:

"Ես չկամեցայ օրիորդի վստահութիւնը թուլացնել, թէեւ մեր ձեռնարկութիւնը սաստիկ վտանգաւոր էր: Մենք կարող էինք եւ խանի մարդիկներին հանդիպել, որոնք իմանալով օրիորդի փախուստը, նոյնպէս հետամուտ կը լինէին: Այդ պատճառով շտապում էի, բոպէ անգամ չկորցնել, եւ այնօր, որքան կարելի էր, երկար ճանապարհ կտրել„:

"Գիշերը մենք միացինք անտառում, իսկ երկրորդ օրուայ երեկոյեան պահուն հասանք Երասխ գետի ափի մօտ: Երասխը այդ կողմերում ռուսաց եւ պարսից հողերի սահմանագլուխն է: Ես մտածում էի անցնել գետը եւ ռուսաց հողը վրայ ապաստան գտնել: Այդ կողմերում միակ անցքը Խուդա-աֆէրինի կամուրջն էր: Բայց կամուրջով անցնել անկարելի էր, նախ այն պատճառով, որ այնտեղ կարող էին մարդիկ դրած լինել մեզ բռնելու համար, երկրորդ, մեզանից անցարձրեր կը պահանջէին: Իսկ մենք, փախստականներս, անցարձրեր չունէինք„:

"Դժուարութիւնը մեծ էր: Ի՞նչպէս պէտք էր անցնել գետը: Ուրիշ հնար չկար, պէտք էր որոնել գետի ծանծաղուտներում մի ոչ այնքան խորին տեղ եւ մաքսասլոյների նման անցնել ջրի միջով: Բայց Սանամը կարող էր կատարել մի այսպիսի յանդուգն ձեռնարկութիւն: Ես միացել էի շուարած, չգիտէի, թէ ինչ պիտի անեմ: Երբ օրիորդը նկատեց իմ յուսահատութիւնը, հարցրեց.

— "Ինչո՞ւ էք կանգնած:

"Ես բացատրեցի նրան, թէ աւելի ապահով դրութեան մէջ լինելու համար, պէտք է անցնել ռուսաց հողի վրայ„:

— "Անցնենք, էլ ի՞նչ բանի ենք սպասում, պատասխանեց նա„:

"Ես ցոյց տուի ահարկու գետը„:

— "Անցնենք գետը, կրկնեց նա մի առանձին վստահութեամբ:

— "Դուք չէ՞ք վախենում:

— "Ի՞նչից պէտք է վախենամ:

"Ես յայտնեցի նրան, թէ այն տեղը, թէեւ գետի ծանծաղ տեղերից մէկն է, այսուամենայնիւ բաւական խորն է„:

— "Ես, ճշմարիտ է, լողալ չեմ իմանում, ասաց նա, — բայց ձին լաւ իմանում է, լողալով կը տանէ եւ կը հանէ ինձ միւս ափի վրայ:

— "Բայց դրա համար պէտք է բաւական քաջութիւն ունենալ, պէտք է սրտի եւ հոգու քաջութիւն ունենալ, չվախենալ, չմոլորուել եւ կարենալ իրան ձիու վրայ պահել:

— "Կարող եմ, ասաց նա: Յետոյ աւելացրեց.

— "Միեւնոյն չէ՞, ես լաւ ուզում էի սպաննել ինձ: Եթէ Աստուած կամենում է, որ ես կենդանի մնամ, նա ինձ կ'օգնէ եւ ոչ մի վտանգ չի պատահի: Իսկ եթէ հասել է իմ կեանքի վախճանը, աւելի լաւ է, որ այդ մահը լինի իմ գերեզմանը:

"Հաւատը, մի այսպիսի ջերմ հաւատը նախախնամութեան անօրէնութեան վրայ, միակ եւ ամենահաստատ զրաւականն էր, որ ինձ առիթ տուեց մտածելու, թէ

օրիորդը չի կորցնի իւր հոգու քաջութիւնը եւ երկիւղից չի շփոթուի: Ես այդքանը բաւական էր կատարեալ յաջողութիւն սպասելու համար: Բաւական էր, ասում եմ, այն պատճառով, որ եթէ նա կը կարողանար իրան ձիու վրայ պահել, ձին այնքան ուժեղ էր եւ վարժուած, որ առանց դժուարութեան կարող էր ըղալով դուրս տանել նրան միւս ափի վրայ":

"Այսուամենայնիւ, սպասելիք վտանգը մեծ էր: Ես բռնեցի օրիորդի ձիու սանձը իմ ձեռքում եւ պատուիրեցի նրան, որ իւր ձին կառավարելու համար ամենեւին հոգ չտանէ, միայն երկու ձեռքով պինդ բռնէ թամքից եւ աշխատէ, որ ոտները դուրս չպրծնեն ասպանդակներից: Իսկ ես իմ ձին առաջ քշեցի, նրա ձիուն իմ եռեւից քարշ տալով: Երբ նրա ձին առաջինն ոտները դրեց ջրի մէջ, ես նկատեցի, որ օրիորդը խաչակնքեց իւր դէմքը եւ լուռ աղօթում էր: Մենք սկսեցինք առաջ գնալ: Ջուրը հազիւ հասնում էր մինչեւ ձիանների կուրծքը: Օրիորդը սկսեց մինչեւ անգամ ծիծաղել իմ վրայ, թէ ինչքա՜ն ես այնքան չափազանցօրէն նկարագրեցի գետի ահաւորութիւնը: Բայց ես զգուշացնում էի նրան, թէ կարող են պատահել եւ աւելի խոր տեղեր":

"Ելասխի ծանծաղուտները այնքան վտանգաւոր չեն, մանաւանդ ամառը, երբ ջուրը փոքրանում է: Դիւզացիները մինչեւ անգամ ոչխարների հօտեր են անցկացնում: Միայն պէտք է ճանաչել այն տեղերը, ուր նշանաւոր խորութիւններ չեն պատահում: Իմ ընտրած տեղը ամենատաւորական տեղն էր, ուակից անց էին կնում այն տեսակ մարդիկ, որ չէին ցանկանում սահմանապահ զարաւուլների հանդիպել: Բայց ով կարող է նախազուշակել, թէ գետը ամեն ժամ, ամեն օր ինչ յեղափոխութիւններ

է կատարում իւր յատակում: Այնտեղ, ուր երէկ ծանծաղ էր, այսօր բացվում է մի ահագին խորութիւն: Իսկ ջրի խառնուսիկ մակերեւոյթը դարձեալ հարթ-հաւասար է մնում":

"Մինչեւ գետի լայնութեան կէսը անցանք առանց որեւէ դժուարութեան: Ես խարհուրդ էի տալիս օրիորդին, որ երբեմն աչքերը խփէ, շատ չնայի ջրին: Ձիաները ջրի պրընթացութեան հետ կռռւելով, փռնչալով, առաջ էին գնում: Դրա նրանց ոտները հատնում էին յատակին եւ այդ օգնում էր իրանց պինդ պահել եւ չգնալ հոսանքի հետ: Բայց երբ հասանք խորութիւնների, նրանք սկսեցին լողալ: Այդ ժամանակ ամենավտանգաւոր րոպէն էր: Ես անդադար ձայն էի տալիս օրիորդին, որ չվախենայ, եւ իրան ամուր պահէ թամքի վրայ: Բայց ջուրը արդէն հասել էր մինչեւ թամքը: Ձիանների վեր բարձրացրած գլուխներն էին միայն երեւում: Այդ միջոցին գետի սրընթաց հոսանքը սկսեց իւր հետ տանել օրիորդի ձիուն: Ես աշխատում էի կանգնեցնել նրան, ձիգ տալով սանձից, որ իմ ձեռքում բռնած ունէի: Բայց հնար չկար, սանձը կարուեցաւ, եւ նրա ձին բաւական հեռացաւ ինձանից: Վտանգը աներեւ էր: Օրիորդը, այսուամենայնիւ, չկորցրեց սրտի ամրութիւնը եւ քաջութեամբ պահում էր իրան ձիու վրայ: Ես փութացնում էի իմ ձիուն, որ առաջանամ եւ բռնեմ նրան: Բայց իսկոյն սարսափը տիրեց ինձ, երբ տեսայ, որ օրիորդը իւր ձիու հետ խորասուզուեցան ջրի տակ: Ուրիշ հնար չկար, պէտք էր թողնել իմ ձին, եւ լողալով որոնել նրան ալիքների մէջ: Նրա ձիու գլուխը կրկին յայտնուեցաւ, ջրի տակից, օրիորդը դեռ նրա վրայ էր գտնվում, երկու ձեռքով պինդ բռնած ունենալով նրա բաշից: Ես լողալով մօտենում էի: Մենք արդէն շեղուել էինք ծանծաղ

ղուանեերից եւ ընկել էինք սպասափելի խորութիւնների մէջ: Ես չեմ կարող նկարագրել այն բոլոր զարհուրանքը, որ այս րոպէիս էլ սիրտս է իմ սրտին, երբ մտաբերում եմ իմ անխոհեմութիւնը, թէ որպիսի յիմարութեամբ ես թոյլ տուեցի ինձ այնպէս անհոգութեամբ վերաբերուել դէպի կատաղի Նրասխը: Ես թէ այն ժամանակ եւ թէ այժմ դեռ չեմ կարողացել պարզ հասկանալ, թէ ինչ կատարուեցաւ, եւ ինչպէս եղաւ, որ երբ աչքերս բաց արի, ինձ ջրի խորութեան մէջ գտայ: Նրեւի, մի ուժգին պոյտ, մի կատաղի յորձանք ինձ եւս տարել էր ջրի տակ: Բայց երբ կրկին բարձրացայ ջրի մակերեւոյթի վրայ, նայեցի, օրիորդը այլեւս չէր երեւում: Նրկար ես լողում էի, այս կողմ եւ այն կողմ, երկար որոնում էի նրան, բայց նա չկար ու չկար...:

"Մի ձայն դեռ հակառակ ափից վաղուց կանչում էր ինձ: Բայց ես իմ խառնուածքի խորին տագնապի մէջ սկզբում ոչինչ չէի լսում: Նա կանչում էր. "դուրս եկէք, դուրս եկէք... դէպի այս կողմը:"

"Իմ ուժերը բոլորովին սպառուած չէին, միայն օրիորդի կորուստը մահուան չափ տանջում էր ինձ: Ես սկսեցի ալիքները պատառելով լողալ դէպի կոչող ձայնը: Երբ դուրս եկայ ափի վրայ, իմ ուրախութեանը չափ չկար: Օրիորդը այնտեղ նստած էր եւ գոչող մարդը կանգնած էր նրա մօտ: — Դու այժմ փրկուած ես... մի առանձին բերկրութեամբ ասում էր նրան, որպէս մի մարդ որ խորին բաւականութիւն էր զգում, որ ազատել էր մի կեանք: Ցետոյ դարձաւ նա դէպի ինձ, ասելով.

— "Դու բաւական քաջութեամբ կռւում էիր ջրի հետ, ես համոզուած էի, որ դու դուրս կը գաս, այդ պատճառով քո մասին հոգ չտարայ":

"Արեւը դեռ նոր մայր էր մտել, դեռ բաւական լոյս կար: Նրասխի գետաձորի մէջ միշտական քամին սաստիկ սառն է լինում, մանաւանդ երեկոյեան պահուն: Օրիորդը թրջուած հագուստի մէջ ամբողջ մարմնով դողդողում էր: Անծանօթ բարերարը առաջարկեց ինձ, տանել նրան մերձակայ գիւղը տաքացնելու եւ հագուստները չորացնելու համար: Սանամը ոչինչ չէր խօսում, նա գտնվում էր մի տեսակ տենդային դրութեան մէջ: Բայց անծանօթի առաջարկութիւնը ինձ անգործնական երեւաց: Մենք փախստականներ էինք, անխոհեմութիւն կը լինէր մեր կողմից մտնել բնակութիւնների մէջ: Թէեւ այդ մասին ես ոչինչ չհայտնեցի անծանօթին, բայց, կարծես թէ, նա մի բան նշմարում էր: Օրիորդը, թէեւ ծածկուած էր տղամարդի հագուստի մէջ, բայց նրա գտակը ջրի հոսանքի հետ գնալով, գլուխը մնացել էր բաց, եւ մազերի երկայն հիւսերը թափուել էին թիկունքի ու կուրծքի վրայ: Այդ կասկածանքի մէջ ձգեց անծանօթին: Ես աշխատեցի փարատել նրա կասկածը, ասելով, որ նա այս ինչ խաչի "ղուշն" է, մայրը ուխտել է, որ մինչեւ քսան տարեկան հասակը մազերը չկտրուեն":

— "Այդ ինձ շատ չէ հետաքրքրում... պատասխանեց նա, — բայց դրան հարկաւոր է շուտով մի տաք տեղ, եթէ ոչ իսկոյն տենդ կը ստանայ":

— "Ո՞նչ ազգից են այն գիւղացիները, հարցրի ես":

— "Հայեր են, պատասխանեց նա":

— "Երբ պատրաստուեցանք գնալ դէպի գիւղը, ես նոր նկատեցի, որ մեր ձիանները կորած էին: Անծանօթը ասաց, որ նրանք դուրս եկան գետի միւս ափի վրայ: Կորուստը շատ զգալի էր: Փախստականը առանց ձիանների ճանապարհ կարող էր գնալ: Կրկին լողալով անցնել գետը եւ

որոնել ձիաներին շատ դժուար էր, նախ, այն պատճառով որ ես չէի կարող մենակ թողնել օրիորդին, երկրորդ, ոչինչ հատկանշական չկար, թէ կարելի կը լինէր գտնել նրանց: Ձիաները այնքան սովորած էին եկած ճանապարհին, եթէ մի օտար մարդ չբռնէր նրանց, ուղղակի կը դիմէին իրանց տիրոջ տունը»:

«Երբ անծանօթը նկատեց իմ շուարուած դրութիւնը, ասաց.

— «Գնանք, ձիաների մասին կը մտածենք յետոյ:

— «Ի՞նչ կարող ենք մտածել, հարցրի ես:

— «Գիւղից ուրիշ մարդիկ կ'ուղարկենք, որ որոնեն նրանց:

«Գիւղը շատ հեռու չէր. մութը դեռ նոր էր պատել, երբ հասանք այնտեղ: Անծանօթը չբաժանուեցաւ ձեզանից, որպէս երեւում էր, նա իւր առաքելութիւնը կամենում էր մինչեւ ծայրը հասցնել: Իմանալով, որ մենք օտարականներ ենք, նա հոգ տարաւ մեզ համար գիշերելու օթեւան եւս գտնել:

— «Ես էլ այստեղ օտար եմ, ասաց նա, — ձեզ կը տանեմ միեւնոյն տունը, ուր ես մի քանի օր կացել եմ: Տրանք բարի եւ հիւրասէր մարդիկ են:

«Օրիորդը հազիւ էր շարժվում. սոսկալի դէպքը ընկել էր նրանից ամեն զօրութիւն: Ցեղած իմ թեւքի վրայ, գժուարութեամբ փոխում էր նա իւր դողդոջուն քայլերը»:

«Տունը, ուր տարաւ մեզ անծանօթը, գիւղի նշանաւոր անձինքներից մէկի տունն էր: Մեզ պատահած գժբախտութեան տեղեկութիւնը բաւական էր, որ հրաւիրեր բոլորի կարեկցութիւնը մեզ վրայ: Այդ պատճառով մեր փախուստի մասին ոչինչ չխօսեցինք»:

«Օրիորդին պէտք էր հանգստութիւն, պէտք էր ջերմացնել սառած մարմինը: Իսկոյն մի առանձին սենեակում տաք անկողին պատրաստեցին: Նա խնդրեց ինձ օգնել իրան, որ հանէ թրջուած հագուստը: Ես միւսներին հեռացրի, որպէս զի չնկատեն, թէ նա աղջիկ է եւ ոչ տղայ: Վէշտը, ցաւը, հիւանդոտ դրութիւնը խլել էին նրանից կանացի պարկեշտութեան այն զգուշութիւնները, որով կինը չէ ներւում մի օտար տղամարդին չշօշափել իւր մարմինը: Բայց այն դրութեան մէջ նա նայում էր իմ վրայ, որպէս իւր աղախիններից մէկի վրայ: Ես իմ զգացմունքները այնքան մաքուր էին, որ օրիորդը չէր սխալվում իւր մտերմութեան մէջ»:

«Նա անկողին մտնելուց յետոյ ես չհեռացայ նրա կշտից, մինչեւ տաքացաւ եւ ջերմ քրտինքը պատեց ճակատը: Քունը շուտով տիրեց նրան, բայց տենդային եւ անհանգիստ քունը: Հորթոքուած երեւակայութիւնը դեռ արթուն էր: Երկար նա տանջվում էր սոսկալի երազներով, եւ երբեմն խօսում էր խառն զառանցութիւնների մէջ: «Թէկուզ սպաննէք, թէկուզ կտրատէք, պարկի մէջ: «Թէկուզ սպաննէք, թէկուզ կտրատէք, պարկի կին չեմ զառնայ»... այդ խօսքերը մի քանի անգամ լսելի եղան նրա բերնից»:

«Գիշերը ես մնացի նոյն սենեակում, ուր պառկած էր օրիորդը: Միանգամ միայն մտաւ ինձ մօտ անծանօթը եւ հարցրեց օրիորդի դրութիւնը: Տանեցիներից ուրիշ ոչ ոք չհանգարեց նրա հանգստութիւնը»:

«Առաւօտեան օրիորդը իրան լաւ էր զգում. վերկացաւ եւ առանց իմ օգնութեան հագնուեցաւ: Ես միայն ջուր տուի լուացուելու: Նրա վճռակը ինձ այն աստիճան զբաղեցրել էր, որ դեռ ուշադրութիւն չէի դարձրել, թէ ո՞րտեղ ենք գտնվում, կամ ո՞վ է մեր հիւրընկալը: Ես

մինչեւ անգամ իմ ընտրհակալութիւնը դեռ չէի յայտնել անծանօթին, որ օրիորդի կեանքը ազատեց խեղդուելուց, եւ դեռ չգիտէի, թէ ի՞նչ դիպուածով պատահեց նա գետի ափի մօտ, երբ մենք ենթարկուեցանք սոսկալի վտանգին»:

«Առաւօտեան անծանօթը կրկին մնաւ մեզ մօտ: Մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նկատեցի, որ այդ մարդը ծանօթ էր ինձ: Դա միեւնոյն ճգնաւորն էր, որին իմ պատանեկութեան հասակում տեսել էի Որոտնայ վանքում: Այո, նոյն ճգնաւորը, երկու ականջների ծայրերը կտրած, բաղուկները եւ ձեռքի երեսը դրոշմուած Երուսաղէմի ուխտաւորի նշաններով: Իսկ այժմ նա աշխարհականի հագուստ ունէր, թէեւ այդ հագուստի մէջ եւս պահպանել էր իւր բարձր առաքինութիւնը»:

«Տեսնելով օրիորդին առողջ, չափազանց ուրախացաւ նա, եւ մի առանձին կարեկցութեամբ մօտեցաւ, նայեց մեզ մօտ: Երեւում էր, մեզ հետ առանձին խօսելիք ունէր, այդ պատճառով պատուիրեց ինձ սենեակի դուռը փակել եւ ոչ ոքին ներս չընդունել»:

— «Ես այստեղացի չեմ, ասաց նա, — ես էլ ձեզ նման օտարական մարդ եմ այս գիւղում: Այսօր պէտք է հեռանամ այստեղից: Ես եկայ ձեզ մօտ հրաժեշտ տալու, արդեօք այլ եւս հարկաւոր չեմ լինի ձեզ»:

— «Ձեր կատարած գործը այնքան մեծ է, որ մենք իրաւունք չունենք աւելին պահանջել ձեզանից, պատասխանեցի ես: — Մեզ միայն մնում է միայն ընտրհակալ լինել ձեր առաքինութեան համար»:

— «Այդ աւելորդ է, ասաց նա համեստութեամբ:

— «Ես արել եմ այն, ինչ որ ամեն մարդու պարտքն էր անել, երբ տեսնում է դժբախտութիւն:

Բայց դուք այն ասացէք, արդեօք մի որեւիցէ այլ բանում պէտք եմ ձեզ, թէ ոչ: Ես սիրում եմ պարզ խօսել. աւելի լաւ կը լինի, որ դուք եւս բոլորովին անկեղծ լինէք ինձ հետ...:

«Վերջին խօսքերը ինձ կասկած պատճառեցին. երեւում էր, որ նա փոքր ի շատէ տեղեկութիւն ունէր մեր գաղտնիքի մասին: Ես պատասխանեցի.

— «Մենք չենք կարող անկեղծ չլինել դէպի մի բարերար, որ այնքան մեծ զոհաբերութիւն յանձն առեց ազատելու մի կեանք»:

— «Մի օրիորդի կեանք... կրկնեց նա խորհրդաւոր ձայնով»:

«Ես ճնշոյի շուարած: Որտեղից գիտէր նա, որ որդեմարդի հագուստով ծպտեալ պատանին օրիորդ էր: Նա պատասխանեց.

— «Օրիորդին ջրից հանելու ժամանակ ես արդէն հասկացայ, որ նա տղամարդ չէ: Նրա մի այսպիսի ծպտեալ դրութիւնը առիթ է տալիս ինձ մտածելու, որ ձեր վարմունքի մէջ թաղնուած է մի գաղտնիք: Դուք չէք սխալուի, եթէ այդ գաղտնիքը կը յայտնէք ինձ: Գուցէ ես կարող կը լինեմ գալձեալ օգնել ձեզ»:

«Օրիորդը, որ բոլոր ժամանակը լուռ լսում էր, ընդհատեց մեր խօսակցութիւնը, ասելով.

— «Ես գաղտնիք չեմ պահի մի մարդուց, որը ազատեց իմ կեանքը: Եւ սկսեց նա մի ըստ միոջէ, պատմել, թէ ինքը ում աղջիկն է, պատմեց իւր հօր անգութ վարմունքը, որ իրան ուղում էր բռնութեամբ մահմեդական խանին տալ, եւ ինքը այդ բարբարոսութիւնից ազատուելու համար, ստիպուեցաւ փախուստի մէջ փրկութիւն որոնել եւ այլն»:

"Անծանօթը խորին ցաւակցութեամբ լսում էր: Երբ օրիորդը աւարտեց, ասաց նա.

— "Որքան ցաւալի է ձեր պատմութիւնը, յարգելի օրիորդ, այնքան գովելի է ձեր արիութիւնը, որով պատերազմեցիք կոպիտ բռնութեան դէմ եւ բարի օրինակ դարձաք շատերի համար: Հիմայ աղջիկները մահմեդականների խաներին տալը այն սովորական կաշառքներից մէկն է համարվում, որով չարամիտ մարդիկ ձգտում են այս եւ այն նպատակին հասնել: Դա վատ է, դա շատ ընդհասակար է: Ձեր պատմութիւնը աւելի եւ աւելի գրաւեց իմ կարեկցութիւնը: Ես ուրախ եմ, որ դեռ եւս մի փոքրիկ ծառայութիւն կարող եմ անել ձեզ„:

— "Հաւական է, ինչ որ արեցիք, պատասխանեց օրիորդը:

— "Ոչ, բաւական չէ, պատասխանեց նա հանդարտութեամբ: — Դուք այժմ գտնվում էք ռուսաց հողի վրայ, դուք վախճատական էք պարսից երկրից, դուք անցել էք այս կողմը առանց անցագրի, — այդ բոլորը ձեզ խիստ դժուարին դրութեան մէջ է դնում: Ձեր հայրը այնքան ազդեցութեան տէր մարդ է, բաւական է, որ նա գրէ այստեղի կառավարութեանը, ձեզ իսկոյն կը բռնեն եւ յետ կ'ուղարկեն, որովհետեւ դուք վախճատական էք, դուք անցագիր չունէք: Այդ լաւ է, որ դուք տղամարդի կերպարանքի մէջ էք մտել, բայց այդ բաւական չէ ձեր ապահովութեան համար: Դուք դեռ գտնվում էք պարսից սահմանի մօտ, պէտք է հեռանալ այստեղից եւ շուտով հեռանալ: Բայց այդ դժուար կը լինի ձեզ, որովհետեւ դուք կորցրիք ձեր ամենակարեւոր դիւրութիւնները, — ձեր ձիանները: Ես գիշերը այդ մասին մտածում էի, մի քանի լաւ ըղեացողներ ուղարկեցի, անցան գետը որոնելու ձեր ձիանները, բայց առաւօտեան լուր բերեցին, որ չգտան նրանց: Դուք առանց ձիանների ոչ մի տեղ դնալ չէք կարող: Ձեզ պէտք է շուտափոյթ կերպով տեղափոխուել մի տեղից միւս տեղ, իսկ այդ առանց ձիանների անկարելի է„:

"Նրա նկատողութիւնները ուղիղ էին: Մեր դրութիւնը խիստ դժուարին էր: Մենք զուրկ էինք ամեն միջոցներից, որ մեր պէտքերը հոգայինք: Մեր փախուստը այնքան անակնկալ եւ անպատրաստ կերպով կատարուեցաւ, որ ապագայ պէտքերի մասին ամենեւին չմտածեցինք: Մենք մինչեւ անգամ այնքան փող չունէինք, որ մեզ համար հաց գնէինք ուտելու:

— "Ես, շարունակեց նա, — բոլորը հոգացել եմ: Ես վարձեցի ձեզ համար երկու ձիաններ, որոնց տէրը կը տանէ ձեզ ուր որ կը կամենաք: Միայն խորհուրդ կը տայի, որ անցնէիք Ղափանի կողմերը. այնտեղ ժողովուրդը բարի է, ամեն տեղ կ'ընդունեն, ամեն տեղ կը պահպանեն ձեզ: Դուք ժամանակ չի պիտի կորցնէք, հէնց այսօր, հէնց այս առաւօտ պէտք է ճանապարհ ընկնէք: Օրիորդը այնքան առողջ է, որ կարող է շարունակել ճանապարհորդութիւնը: Ես հոգացել եմ ինչ որ պէտք է ճանապարհի համար: Ձեզ պակաս է մի բան, որ ամեն տեղ կը պահանջեն ձեզանից: Ես անցագրի մասին եմ խօսում: Ես կը տամ ձեզ երկու անցագրեր: Օրիորդը թող ձնայ իւր ծպտեալ կերպարանքի մէջ, որպէս եւ է, միայն տղամարդ ձեւանալով, պէտք է ընդունէ մի տղամարդի անուն: Իսկ դուք, դարձաւ դէպի ինձ, — նոյնպէս պէտք է փոխէք ձեր անունը„:

"Վերջացնելով իւր պատուէրները, հանեց նա իւր ծոցից երկու պարսկերէն անցագրեր, մէկը տուեց ինձ,

միւսը օրիորդին, յայտնելով, որ մենք կրենք այնուհետեւ նրանց մէջ նշանակուած անուննները»:

«Բոլոր ժամանակը խօսում էր նա մի այնպիսի եղանակով, կարծես, մեր վաղեմի բարեկամը կամ մտերիմ խորհրդակիցը լինէր: Գլուխը դէպի ցած խոնարհեցրած, կիսաբաց աչքերով խիստ հաղիւ անգամ նայում էր մեր երեսին: Բայց մի խորհրդաւոր վեհութիւն, առաքինական խիստ ազդու արտայայտութիւն նշմարվում էր նրա պատկառելի դէմքի վրայ: Ես Աստուծոյ մի առանձին ողորմութիւնն էի համարում, որ մեր նեղ դրութեան մէջ ուղարկեց մի այնպիսի օգնական: Բայց օրիորդը այնքան հպարտ էր, որ շատ դժուար եղաւ համոզել նրան, որ ընդունէ մի օտար եւ անծանօթ անձից այս տեսակ բարերարութիւններ: Բայց անհրաժեշտ կարիքը նրան եւս ստիպեց հաշտուել հանգամանքների հետ:

«Երբ ամեն ինչ պատրաստ էր, մենք սենեակից դուրս եկանք: Մեր հիւրընկալը բարեմաղթութեամբ ճանապարհ դրեց մեզ, իսկ անծանօթը բաւական տեղ եկաւ մեզ հետ: Օրիորդը նստած էր ձիու վրայ, իսկ ես անծանօթի հետ գնում էինք ոտով: Իմ ձին բերում էր մեր եռեւից չարվադարը»:

«Ինձ բոլորովին չէր զարմացնում այն միտքը, թէ ինչո՞ւ կամ ի՞նչ պատճառներից դրդուած, այդ մարդը ընդունում էր այնքան խորին կարեկցութիւն մեր դրութեան մէջ: Բաւական էր, որ ես գիտէի, թէ նա մի ժամանակ ճգնաւոր է եղել, թէ Աստուծուն նուիրուած մարդիկ միշտ պատրաստ են օգնել, բարիք գործել, երբ տեսնում են թշուառութիւն, երբ տեսնում են կարօտութիւն»:

«Բայց ես տակաւին տարակուսութեան մէջ էի գտնվում, իմ կասկածը բոլորովին փարատուած չէր, թէ

արդեօք դա միւնոյն անձնաւորութիւնն էր, որին իբրեւ ճգնաւոր մի ժամանակ տեսել էի Որոտնայ վանքում, թէ ես սխալվում էի չափազանց ճիշդ նմանութիւնների մէջ»:

«Բաւական տեղ մեզ ճանապարհ դնելուց յետոյ, երբ կամենում էր նա բաժանուել մեզանից, ես հարցրի.

— «Մենք չե՞ պիտի գիտենանք, թէ ումից պէտք է ընդհակալ լինենք այսքան բարութիւնների համար»:

«Նա յառնութեամբ պատասխանեց.

— «Կարծեմ, մի առանձին հարկաւորութիւն չկայ այդ գիտնալու:

— «Այսուամենայնիւ, ինձ շատ ցանկալի էր գիտենալ, թէ դուք ով էք:

— «Եթէ այդ ձեզ որեւիցէ օգուտ կը բերէր, ես կասէի ձեզ:

«Ես ուղիղ նայեցի նրա երեսին, ասելով.

— «Եթէ իմ յիշողութիւնը ինձ չէ խաբում, կարծեմ, ես տեսել եմ ձեզ մի ժամանակ մի վանքում... մի քարանձաւի մէջ... դուք ճգնաւոր էիք...:

«Նրան տիրեց մի վայրկենական խռովութիւն, բայց իսկոյն ծածկելով իւր շփոթութիւնը, պատասխանեց.

— «Դուք չէք սխալվում... այն ժամանակ ճգնում էի մի լեռան քարանձաւի մէջ, հեռացած մարդիկներից... իսկ այժմ ճգնում եմ կեանքի մէջ...:

«Այս ասելով, նա տուեց ինձ իւր քսակը: — «Ա՛ռ, ասաց, ճանապարհին ձեզ պէտք կը լինի,, եւ իսկոյն բաժանուեցաւ մեզանից:

«Ես ապշած ճնշայի, մի խօսք անգամ չգտայ նրան ասելու, միայն քարացածի պէս կանգնած, նայում էի նրա եռեւից: Նա էլ ճանապարհորդ էր, նա էլ մի տեղ էր գնում, բայց ո՞ւր էր գնում, — Աստուած գիտէ: Նա

իւր քսակը տուեց ինձ. ես հաւատացած էի, որ դա նրա վերջին արծաթն էր: Իսկ ինքը գնում էր միայնակ, ոտքով, մի երկայն ցուպ ձեռին բռնած, աղքատ ուղեւորի պարկը ուսին կապած»:

Երբ աւազակապետը վերջացրեց, հարցրի նրանից.

— Այնուհետեւ միւսանդամ չհանդիպեցիք նրան:

— Ոչ: Այն օրից անցել են շատ տարիներ, կրկին հանդիպեցի նրան միայն այստեղ, քեզ հետ միասին, մուրացկանի կերպարանքով, եւ այդ խիստ զարմացնում է ինձ: Այդ մարդը մի տեսակ հանելուկ է ինձ համար: Ես շատ կը ցանկանայի, որ մէկ անգամ եւս տեսնէի եւ խօսէի նրա հետ: Իրը մուրացկան նա նոյն բարի եւ առաքինի մարդը երեւաց ինձ, որպէս էր առաջ: Դու տեսար, ինչպէս կարեկցութեամբ մօտեցաւ նա դատապարտեալների խումբին, ինչպէս բաժանեց մեզ իւր հաւաքած դրօշները, ասելով. «դուք աւելի թշուառ էք քան թէ ես»...:

Ես դարձեալ դաղտնիք պահեցի խորհրդաւոր մուրացկանի մասին, այսքանը միայն ասելով իմ լաւ ընկերին.

— Գուցէ միւս անգամ եւս կը տեսնէք... այդ մարդը շուտով չի հեռանայ այստեղից...:

Ես հաւատում էի, բոլորը հաւատում էի, ինչ որ պատմում էր աւազակապետը: Քաւոր Պետրոսը այն տեսակ առասպելական արարածներից էր, որ ընդունակ էր հրեշտակից սատանայ լինել, իսկ սատանայից հրեշտակ: Թէ բարին եւ թէ չարը նրա մէջ միեւնոյն ուժով էին գործում: Միայն հանդամանքներից էր կախուած, թէ երբ կամ ինչ դէպքերում պէտք էր ուրը գործ դնել: Նա աշխարհի մարդ էր, գիտէր, թէ ինչպէս պէտք էր վարուել աշխարհի հետ: Ես ինքս վկայ էի եղել շատ դրուագների, որոնց մէջ նա ցոյց էր տուել թէ իւր վերին աստիճանի առաքինութիւնը եւ թէ իւր վերին աստիճանի անզգուշութիւնը: Ես տեսել էի նրան բարեսիրտ, որպէս աղաւնի, եւ նենգաւոր, որպէս օձ: Այդ մարդը, որի հետ տարիներով ապրել էի, գործել էի, ինձ համար եւս ճնացել էր որպէս մի մթին հանելուկ: Ես հասկանալ չէի կարողանում, թէ ինչպէս չարն ու բարին, առանց միմեանց հետ հակառակելու, հաշտուում էին նրա մէջ: Բայց հաւատացած էի, որ նա ամենայն անկեղծութեամբ, ամեն տեսակ զոհաբերութիւններ յանձն առնելով, եկել էր ինձ ազատելու իմ թշուառ դրութիւնից: Բայց ես կարծում էի կրկին անձնատուր լինել մի մարդու, որը որքան բարի էր, նոյնքան եւս չար էր: — Այդ հարցը դարձեալ ճնաց իմ սրտում անվճիռ...:

Գ

ՉՈՐՐՈՐԴ ԳԻՇԵՐ

— Դու այն պատմիր, թէ ինչո՞ւ են կոչում քեզ աւազակապետ եւ ո՞րպէս ընկար դատապարտեալների հասարակութեան մէջ, — հարցրի ես չորրորդ գիշերը, երբ բաւական հանգստացել էինք ցերեկուայ ծանր աշխատութիւնից:

Աւազակապետը շարունակեց.

"Մեր անճանաչ բարերարի վարձած ձիաներով անցանք Մեղրիի գաւառը: Այստեղ ճանապարհները այն աստիճան քարքարոտ են եւ լեռնային էլեւէջները այն աստիճան սարսափելի են, որ անկարելի է ձիով մանգալ: Մենք ստիպուած էինք մեր ձիաները փոխել եւ վարձել ջորիներ: Այդ խորամանկ անասուններըը սովոր են լեռնային քարքարոտներում մանգալ":

"Սկզբում Սանամը դժուարութեամբ յօժարուեցաւ ջորիի վրայ նստել: Ղարադաղի մեղքի աղջիկը, որ սովորած էր սիգապանծ ձիոյգների, կարծես, ամաչում էր, որ ստոր անասունների վրայ հեծած տեսնէին նրան: "Ինձ պլեւս ով է ճանաչում"... ասաց նա եւ մի առանձին մեերմութեամբ խնդրեց ինձանից օգնել իրան, որ հեծնէ: Ես զարմացայ: Սանամը, որ ծախ նման ձիաների վրայ թռչել գիտէր, ինձանից օգնութիւն էր խնդրում: Երբ փոքր ինչ առաջ գնացինք, ասաց նա.

— "Վերջին ժամանակներում շատ ուժաթափ եղայ...:

"Նրա ձայնի մէջ լսւում էր խորին տխրութիւն եւ սրտի դառն կսկիծ:

— "Դուք այս առաւօտ ոչինչ չկերաք. ասեցի նրան, — կարելի է քաղցածութիւնից լինի:

"Ոչ... պատասխանեց նա: — Շատ անգամ սուրը Սարգսի պասին, երկու կամ երեք օրով ծոմ էի պահում, ոչինչ չէի ուտում, բայց երբէք ուժաթափ չէի լինում:

— "Երեւի, գետը ձեզ վրայ վատ ազդեցութիւն գործեց... նկատեցի ես:

— "Ոչ: Այն մարդը շուտ վերահասաւ, ես դեռ բոլորովին ջրի տակը չէի գնացել, որ ազատեց ինձ: Ախ, երանի թէ գիտենայի՝ ով էր այդ մարդը: Երեւում է, որ Աստուած մեզ հետ է: Նա ուղարկեց այդ մարդուն մեզ օգնելու համար:

"Վերջին խօսքերը մխիթարում էին նրան եւ աւելի ամրացնում էին նրա հաւատը, որը խիստ վատ էր օրիորդի մէջ":

"Հնայելով, որ ջորիները դանդաղ էին ընթանում, դարձեալ մենք այն օրը անցանք բաւական ճանապարհ: Գնալով լեռների միջով, շատ անգամ ստիպուած էինք անցնել այնպիսի վտանգաւոր տեղերից, ուր անձնավստահ որսորդները միայն ոտք են կոխում, այն եւս խիստ հազիւ անգամ: Ջառիվայրների դժուարութիւնը երբեմն ստիպում էին մեզ ցած իջնել ջորիներից, եւ ապառաժների վրայով մագլցելով, առաջ գնալ: Սանամը բոլորովին յոգնած էր, հազիւ-հազ կարողանում էր իրան ոտքերի վրայ պահել: Ես մի քանի անգամ առաջարկեցի բռնել

նրա ձեռքից, օգնել նրան, բայց ամեն անգամ մերժում ստացայ: Նա դեռ խորշում էր ինձանից. նա այնքան հպարտ էր, որ դեռ նայում էր իմ վրայ, որպէս իւր հօր տան ծառաներից մէկի վրայ: Ես դեռ նրա մտերիմ, անձնանուէր բարեկամը չէի„:

"Երբ բարձրացանք սարերի վրայ, արեւը արդէն սկսել էր թեքուել դէպի իւր երեկոյեան մուտքը: Ստորոտներում տօթը խեղդում էր, իսկ այստեղ ցուրտը մըրսեցնելու չափ զգալի էր: Ձորիներից ցած իջանք, նստեցինք փոքր ինչ հանգստանալու: Ես առաջարկեցի օրիորդին փաթաթուել իմ վերարկուի մէջ. նա յօժարութեամբ ընդունեց, որովհետեւ վերարկու չէր առած իւր հետ: Ցետոյ տուեցի նրան մի բան ուտելու. նա բոլորովին կազդուրուեցաւ եւ գանվում էր բաւական խաղաղ տրամադրութեան մէջ„:

"Արեւը մտաւ: Երեկոյեան վերջալոյսը հետզհետէ զրկվում էր իւր պարզ-ծիրանի շառաւիղներից: Սարերի գագաթները պատած էին սպիտակ ձիւնափայլ մշուշով, որը միախառնուելով երկնքի կապուտակութեան հետ, ներկայացնում էր անսահման մանիշակագոյն ովկիանոս, որի մէջ լեռների ալեքաւոր բարձրութիւնները ձեւացնում էին սքանչելի տեսարան: Օրիորդը բնութեան սիրող էր: Ես նկատեցի՝ նոյն ժամուն յափշտակուած էր նա խորին հիացմունքով եւ նրա խոշոր աչքերը մի առանձին ոգեւորութեամբ նայում էին դէպի գեղեցիկ լեռնային տարածութիւնը: Ես նստած էի նրա մօտ: Նա դարձաւ ինձ այս խօսքերով.

— "Նայիր այն նեղ հովիտին, որ հազիւ երեւում է թափանցիկ մառախուղի միջից. նայիր այն բաց-կանաչազարդ խոտերին, որ պատել են նրա սիրուն տափարակը.

տես այն վտակը, ինչպէս շուտով վազում է դէպի ձորը. ականջ դիր, ոնքան քաղցր է լսվում նորա ձայնը: Ա՛խ, ոնքան գեղեցիկ է այդ բոլորը: Այնտեղ երեւում են հովիւների տաղաւարներ: Տես, ոչխարները վերադառնում են արօտից. ես լսում եմ նրանց ձայնը: Ահա խմբուեցան նրանք տաղաւարների շուրջը: Կնիկները դուրս եկան կթելու նրանց. փոքրիկ դառները, փոքրիկ ուլերը կռվում են կթողների հետ, թէ ինչո՞ւ են խլում իրանց անունդը: Բայց նրանց մայրերը այնքան առատ են, որ բաւականութիւն են տալիս՝ թէ՛ նրանց ախերին եւ թէ՛ իրանց ձագերին: Գնանք այդ հովիւների մօտ եւ վայելենք նրանց հիւրասիրութիւնը„:

"Հովիտը, որ այնքան ոգեւորութեամբ նկարագրում էր օրիորդը, շատ հեռու չէր մեր նստած տեղից: Երեկոյեան մթութիւնը սկսել էր թանձրանալ: Շարունակել մեր ճանապարհորդութիւնը չէինք կարող, որովհետեւ թէ՛ մենք եւ թէ՛ մեր անասունները սաստիկ յոգնած էինք: Պէտք էր մի օթեւան գիշերելու համար: Բայց նախ քան այդ հովիւների մօտ հիւրասիրութիւն խնդրելը, հարկաւոր էր տեղեկանալ, թէ նրանք ինչ տեսակ մարդիկ են: Այդ մտքով ես մօտեցայ մեր ջորեպանին, որ մեզանից փոքր ինչ հեռու արածացնում էր իւր անասունները„:

"Ջորեպանի տուած տեղեկութիւնները հովիւների մասին խիստ նպաստաւոր էին: Այդ խաշնարածները եկած էին Ղափանի կողմերից, ազգով հայ էին եւ յայտնի էին իրանց քաջութեամբ: Այստեղ ժամանակաւորապէս զետեղուել էին նրանք՝ ամառը անցկացնելու եւ իրանց անասունները արածացնելու համար: Վերջացնելով իւր խօսքերը, ջորեպանը խորհուրդ տուեց նրանց մօտ գնալ եւ

աւելի բարդ էր համարում գիշերը անցկացնել նրանց տաղաւարների մէջ, քան թէ բացօթեայ մնալ: Բայց միեւնոյն ժամանակ ակնարկեց նա, որ այդ հովիւները փոքր ինչ կասկածաւոր մարդիկ են, աւազակներ են»:

— «Եթէ ուզում ես աւազակից անվնաս մնալ, պէտք է աւազակի տունը գնալ, պատասխանեցի ես»:

«Ուրիշ հնար չկար. գիշերը բացօթեայ դրսում մնալը կարող էր վնասակար ազդեցութիւն ունենալ օրիորդի առողջութեան վրայ: Մենք ոչինչ պատրաստութիւն չունէինք մեզ հետ, ինչ էլ որ ունէինք. կապած էին մեր ձիանների վրայ, բայց Ներասխից անցկենալու միջոցին պատահած վտանգի ժամանակ, ձիանները իրանց հետ տարան: Ես վճռեցի գնալ հովիւների մօտ, մանաւանդ որ օրիորդի ցանկութիւնն էլ հէնց այդ էր»:

«Մութը բոլորովին պատել էր, երբ հասանք նրանց ամառանոցին: Ոչխարները մակաղել էին բնակութիւնից հեռու, առանձին հանդրուաններում, իսկ տաղաւարների մօտ խմբուել էին աւելի խոշոր անասունները՝ ձիաներ, կովեր, եղներ եւ այլն: Տեղ-տեղ վառվում էին խարոյկներ, որոնց շուրջը՝ խոտերի վրայ՝ նստած էին ալեւոր մարդիկ, ծխում էին, խօսում էին, իսկ կիները մի բան էին եփում ընթրիքի համար: Խարոյկների աղօտ լուսով այդ լեռնականների կերպարանքները աւելի մռայլ կերպով նշմարվում էին գիշերային մթութեան մէջ: Երիտասարդները զբաղուած էին իրանց նժոյգներով, քրքրում էին, մաքրում էին նրանց մարմինը եւ ծածկում էին թաղիքներով, որ գիշերը չմրսեն: Իսկ նրանց ծերունի հայրերը դեռ չէին աւարտել իրանց երեկոյեան աղօթքը, բայց երկնքի տակ, մերկ գետնի վրայ չոքած, լուռ աղօթում էին: Տիրում էր ընդհանուր լռութիւն.

երբեմն հեռուից լսելի էին լինում խուլ ձայներ. որոնում էին մի որեւիցէ կորած անասուն»:

«Շները ահագին աղմուկ բարձրացրին, երբ մօտեցանք նրանց տաղաւարներին: Հովիւները խռովութեան մէջ ընկան, ամեն կողմից վազեցին, որ տեսնեն, թէ ինչ մարդիկ ենք: Մեր ջորեպանը, որ ծանօթ էր նրանց սովորութիւններին, առաջ գնաց, յայտնեց, որ ճանապարհորդներ ենք, գիշերելու օթեւան ենք խնդրում: Նրանք հանգստացան եւ ամեն կողմից սկսեցին հրաւիրել մեզ իրանց տաղաւարները: Որպէս զի ոչ ոքին վիրաւորած չլինենք, մենք իջանք առաջին հանդիպած տաղաւարի առջեւ: Այստեղ, կարծես, վաղուց սպասում էին մեզ. երկու պատանիներ դուրս վազեցին, բռնեցին մեր ջորիները եւ մեզ ներս տարան»:

«Մեր բախտից տաղաւարը, որ վիճակուեցաւ մեզ, պատկանում էր խաշնարածների բաւական նշանաւոր եւ հարուստ ընտանիքներից մէկին: Ընտանիքի հայրը մի ծերունի էր, բայց դեռ ժիր եւ աշխոյժ, կարծես տարիների բոլոր ջանքերը իզուր էին անցել խլելու նրա մարմնի ամրութիւնը եւ սրտի զուարթութիւնը: Նա խիստ սիրով ընդունեց մեզ, յայտնեց իւր ուրախութիւնը եւ հրաւիրեց նստել իւր մօտ: Նա բնաւ հարցուփորձ չարեց, թէ ով էինք մենք, որտեղից էինք գալիս կամ ուր էինք գնում: Դա նրանց սովորութեամբ մի տեսակ վերաւորանք էր հիւրի համար: Բաւական էր, որ մենք նրա տաղաւարի ծածքի տակ էինք գտնվում, եւ այդ րոպէից նրա գերդաստանի անդամներից մէկն էինք համարվում»:

«Այդ լեռնաբնակները, դեռ պահպանուած լինելով նահապետական պարզութեան մէջ, աղատ էին ճնացել կրթուած աշխարհի կեղծ քաղաքավարութեան ձեւերից:

Երբ խոսքան մեր հայ-քրիստոնեայ լինելը, աւելի մտերմացան մեզ հետ: Ամենայն բարեսրտութեամբ խօսում էին, ծիծաղում էին, եւ ամեն կերպով աշխատում էին դոհացնել մեզ, որ ոչինչ պակաս չլինի մեզ համար„:

"Մեր հիւրընկալը առանձին ուշադրութիւն էր դարձնում մեր գինքերի վրայ. մեկ-մեկ վեր էր առնում, ճրագի լոյսի առջեւ գննում էր, եւ իւր հմտութիւնը գինքերի ճանաչելու մէջ ցոյց տալու համար, ասում էր, թէ որը ինչ գործարանի կամ ինչ ժամանակի գործ էր: Հին գինքերը յարգի էին դրանց մօտ: Գինքերից նա զաղափար կազմեց մեր ինչ դրութեան կամ ինչ աստիճանի մարդիկ լինելու մասին: Հասարակ մարդիկ չէին կարող ունենալ այս տեսակ հարուստ գինքեր: Այդ րոպէից նրա յարգանքը աւելի եւս բազմացաւ մեր վերաբերութեամբ„:

"Ընթրիքը երկար չտեւեց: Լեռնաբնակները շուտ են ուտում, եւ կերակուրների տեսակները այնքան առատ չեն, որ շատ ժամանակ պահանջեն: Ես մտածում էի օրիորդի հանգստութեան մասին. նա սաստիկ յոգնած էր: Ծերունին նոյնպէս նկատեց, որ մեր խօսակցութեան միջոցին, նստած տեղում, նիրհում էր նա: Բայց գերդաստանի հայրը երեւակայել անգամ չէր կարող, թէ մի ուրիշ արարած, որը հասակով փոքր էր իրանից, կարող էր հանգստութեան վրայ մտածել, քանի որ ինքը տակաւին նստած էր, քանի որ ինքը դեռ քնելու ախորժակ չունէր: Ամեն մարդ քնելու իրաւունք ունէր, երբ նա արդէն քնած էր. ամեն մարդ ուտելու իրաւունք ունէր, երբ նա արդէն կերած էր: Ամեն բանի մէջ պէտք է նա առաջինը լինէր, իսկ միւսները հետեւողներ„:

"Ես տեսնում էի՝ ընթրիքի ժամանակ ծերունու բոլոր որդիքը ոտքի վրայ սպասաւորութիւն էին անում,

կամ մի բան ներս էին բերում եւ կամ դուրս էին տանում: Նրանցից մէկը միայն, երէց որդին, հօրից թոյլտուութիւն ստացաւ մեզ հետ սեղանակից լինելու: Ննիկները ամենեւին չէին երեւում, նրանք փակուած էին տաղաւարի առանձին բաժնում: Երբ սեղանը հաւաքեցին, որդիները հեռացան, որ իրանք էլ մի բան ուտեն: Մենք ծերունու հետ մնացինք տաղաւարում միայնակ„:

"Որդիների թիւը հասնում էր չորս հոգու. բոլորը կարծես թէ տիտաննների սերունդից լինէին, առողջ եւ ամուր կազմուածքով: Ամենքը ամուսնացած էին, ունէին բազմաթիւ զաւակներ, որոնցից շատերը նոյնպէս ամուսնացած էին: Տունը լիքն էր ամեն հասակի երեխաներով: Այստեղ ապրում էին մի քանի սերունդներ, որոնք սերտ կերպով միացած էին միմեանց հետ, որոնց գլխին կանգնած էր ալեւոր պապը իւր նահապետական մեծութեամբ„:

Ե.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԻՇԵՐ

"Սանամի տկարութիւնը ստիպեց մեզ երկար մնալ մեր հիւրընկալի տաղաւարում, — շարունակեց աւագակապետը իւր ընդհատուած պատմութիւնը: — Օրիորդի ըարուած ուժերը հետզհետէ թուլացան, եւ նա վերջապէս չկարողացաւ տանել այն բոլոր տանջանքները, որ կրել էր իւր հօր տնից բաժանուելուց յետոյ: Ներսէս շէտի մէջ պատահած սարսափելի անցքից յետոյ, նա արդէն իրան ոչ բոլորովին առողջ էր զգում: Բայց նա թագցնում էր ինձանից իւր դրութիւնը, մինչեւ հիւանդութիւնը խիստ ծանր կերպարանք ստացաւ: Հիւանդի համար որոշել էին մի առանձին տաղաւար եւ ոչ ոք չէր խանգարում նրա հանգստութիւնը: Բժիշկ չկար. նրան թողել էինք բնութեան կամքին: Միայն երբեմն նրա մօտ մտնում էին զանազան պառաւներ, ինչ դեղ ու դարմաններ էին անում, — ոչ իրանք էին հասկանում եւ ոչ ես: Ես նրա մահճի մօտից չէի հեռանում. ամբողջ գիշերը անքուն նստած, լսում էի նրա խուլ հառաչանքները, ականջ էի դնում նրա ծանր շնչառութեանը, իսկ ցերեկով նայում էի նրա գունաթափ դէմքին: Մի առաւօտ նստած էի նրա մօտ, եւ լի տխուր մտածութիւններով նայում էի նրա վրայ: Այդ միջոցին քնած էր նա եւ, աւելի ճիշդ ասած, գտնվում էր մի այնպիսի

ինքնամոռացութեան մէջ, որ չէր զգում իմ ներկայութիւնը: Այն զուարթ դէմքը, որ մի ժամանակ իւր կանացի քնքշութեան հետ արտայայտում էր այրական վեհութիւն, այժմ թառամած էր, այժմ չունէր առաջուայ կենդանութիւնը: Այն խորախորհուրդ աչքերը, որոնց մէջ մի ժամանակ այնքան կեանք, այնքան զորով եւ այնքան հոգեկան ջերմ զգացմունքներ կային, — այժմ այդ աչքերը չունէին առաջուայ կրակը: Այն ողջախոհական շըթունքները, որոնցից լսել էի այնքան քաղցր, այնքան բարեկամական խօսքեր, որոնք միշտ մխիթարել եւ խրախուսել էին ինձ, — այժմ այդ շըթունքները թրթռում էին տենդային ցնցումներով եւ իմ մէջ ազդում էին սոսկում ու զարհուրանք միայն: Յուսահատական խառն մտածութիւնները տանջում էին ինձ: Ի՞նչ կը լինի մեր վերջը, եթէ երկար կը տեւէ նրա հիւանդութիւնը, ասում էի ես: Եթէ նա առողջ լինէր, նա այնքան ուժ եւ տոկունութիւն ունէր, որ ամեն տեղ կարող էր գալ ինձ հետ, եւ ես ամեն տեղ կարող էի տանել նրան: Կը գնայինք կը հեռանայինք մի անծանօթ աշխարհ եւ ոչ ոք չէր գտնի մեզ: Բայց ինչ կարելի էր անել հիւանդի հետ, ո՛ւր տանել նրան, ո՛րտեղ թագցնել, — այդ մտքերը սաստիկ խռովեցնում էին ինձ: Մենք դեռ պարսից սահմանից շատ չէինք հեռացել. մենք դեռ բաւական մօտ էինք գտնվում այն երկրին, որտեղ բնակվում էր նրա հայրը: Իսկ այդ անգութ հօր սատանայական հետապնդութիւններից անյայտ մնալը՝ հեշտ բան չէր: Անկարելի էր, որ նա ստուգած չլինէր, թէ մենք որ կողմը կամ ուր էինք գնացել: — Օրիորդը ընդհատեց իմ մտածութիւնները: Նա այժմ զառանցութեան մէջ արտասանում էր զանազան անկապ խօսքեր:

Մի քանի անգամ պարզ լեցի իմ անունը: Նա խօսում էր ինձ հետ. երաշների եւ ցնորքների աշխարհում խօսում էր ինձ հետ: Քնած դլուխեան մէջ մարդը գաղտնիք պահել չէ կարող, որովհետեւ աշխարհի պայմանները զգուշութեան մէջ չեն դնում նրան: Նա խօսում է, նա դատում է, որպէս մտածում է: Նրա զգացմունքները նոյնքան անկեղծ են լինում, որքան անկեղծ է նրա դրուխիւնը: — "Սիրում եմ քեզ... ասաց նա հեղութեամբ մի ձայնով, — քո ըհաբերութիւնը ուրիշ ոչինչով չեմ կարող վարձատրել, բայց միայն իմ սիրով „...: Այդ խօսքերը արտասանելու միջոցին նա իր տկարացած թեւերը տարածեց, երեւի, ինձ գրկելու համար: Բայց իմ ըմբռնունքները արդէն սեղմուած էին նրա տաքացած երեսի վրայ, եւ նրա բազուկները անգիտակցաբար փաթաթուել էին իմ պարանոցին: Երաշների աշխարհում նա գրկած ունէր իմ ուրուականը, բայց իսկութեան մէջ ես գրկել էի հիւանդ մարմինը: Իմ արտասուքը թրջում էր նրա բորբոքուած դէմքը: Որքան բարութիւն, որքան առաքինութիւն կար նրա անմեղ խոստովանութեան մէջ: Մինթէ ես կարող էի ընդունել նրանից մի այսպիսի ըհաբերութիւն: Ես երեւակայել անգամ չէի համարձակվում, որ նա իմ կինը լինէր: Մինթէ իւր սիրով պէտք է վարձատրէր նա իմ մատուցած ծառայութիւնները, — այն սիրով, որ աւելի բարձր, աւելի արժանաւոր արարածների համար էր պահուած: Ես ուրախ էի, որ այդ բոլորը կատարուեցաւ նրա քնած ժամանակ: Բայց իմ հպատակութիւնը արձնացրեց նրան. մռայլոտ աչքերը բացարեց, նայեց իմ վրայ: — "Դու այստեղ էիր...„ — եղաւ նրա առաջին հարցմունքը, յետոյ երեսը շուռ տուեց միւս կողմը, սկսեց դառն կերպով հոգոց հանել: Այդ ինչ տանջանք էր: Անտարակոյս, հիւանդութեան տանջանքը չի պիտի լինէր: Երեւի, նրա աղնուական արիւնը յուզվում էր, որ երազի մէջ անգամ ինձ նման ոամկին արժանացրել էր իւր սիրոյն: Քանի լոպէից յետոյ նա կրկին երեսը շուռ տուեց դէպի իմ կողմը: Արեւը այդ ժամանակ դեռ նոր էր սկսել ծագել եւ նրա առաջին ճառագայթները շողշողում էին նրա վհատած դէմքի վրայ: Նա հրամայեց ցած թողնել տաղաւարի մուտքի վարագոյրը, որ ազատուի ճառագայթներից: — "Ուզում եմ մութ լինի... միշտ մութ, որ ինձ ոչ ոք չտեսնի „...: Ես զարմացայ, թէ ինչն էր ստիպում նրան փախչել լոյսից, արդեօք ամօթը, որ նա քնի մէջ արել էր մի անմեղ խոստովանութիւն: Այդ ենթադրութիւնը աւելի հաւանական երեւաց ինձ, երբ հարցրեց նա. — "Շա՞տ ժամանակ է, որ դու այստեղ ես „: — "Շատ ժամանակ չէ, կէս ժամ հազիւ կը լինի, լեցի, որ քո քունը անհանգիստ է, ներս մտայ „: — "Այ՛ն, ես անհանգիստ էի „... ասաց նա եւ հրամայեց, որ իրան միայնակ թողնեմ: Ես դուրս եկայ, նստեցի տաղաւարի մուտքի մօտ: Այնտեղ քնում էի ես ամեն գիշեր, այնտեղ ամբողջ գիշերը հսկում էի նրա վրայ, այնտեղից լսում էի նրա դառն հառաչանքները եւ իմ սիրտը լցվում էր կրակով: Բայց այն առաւօտ որքան երջանիկ էի զգում ինձ, որքան ուրախ էի ես. իմ հոգին վայելում էր անսահման բերկրութիւն: Այն մի քանի խօսքերը, որ արտասանեց նա անգիտակցութեան մէջ, ինձ բաշխում էին աշխարհի բոլոր փառքերը: "Երեւի, նա մտածում է իմ վրայ, որ ես նրա երազների առարկան եմ դարձել „ — ասում էի ես, եւ այսքանով միայն ինձ բոլորովին բախտաւոր էի համարում: Բայց ոմ

կը մտածէր, որ այդ բախտաւորութիւնը երկար չէր տեւի„...:

"Այդ հոգեկան բերկրութեան մէջ էի ես, երբ մեր հիւրընկալէ կրտսեր որդին մօտեցաւ, յայտնեց, որ իւր հայրը կանչում է ինձ: Ես գնացի: Ծերունին առանձնացած էր եւ, որպէս երեւում էր, պատուիրել էր՝ իւր մօտ ոչ ոքի չթողնեն: Նա հարցրեց օրիորդի առողջութիւնը, յետոյ խնդրեց, որ նստեմ իւր մօտ: Նա ախոռ, միեւնոյն ժամանակ վրդովուած էր երեւում, կամենում էր մի բան խօսել, բայց դժուարանում էր: Վերջապէս ասաց նա.

— "Այն օրից, որ դուք ոտք էք կոխել իմ տան շէմքի վրայ, ես ամենեւին չեմ հարցրել ձեզ, թէ ո՞վ էք դուք, ո՞րտեղից էք գալիս, կամ ո՞ւր էք գնում: Ես այսքանով միայն ուրախ էի, որ իմ հայրը բաժանում եմ Աստուծոյ հիւրերի հետ: Բայց այժմ առանց հարցնելու եւս, ես գիտեմ, թէ դուք ով էք, եւ ամ որդին է ձեր մանկահասակ ընկերը, որի հիւանդութիւնը նոյնքան ցաւ է պատճառում ինձ, որքան ձեզ: Մենք, այս լեռների բնակիչներս, սովորութիւն ունենք, ոչ միայն հիւրասիրելու մի օտարականին, որ մեր տան ճաշքի տակ օթեւան է խնդրում, այլ վտանգի ժամանակ մեր պարտքն ենք համարում եւ պաշտպանել նրան ամեն չար պատահարներից: Մեր տունը մտնողը, ինչ մարդ էլ եւ լինելը նա, ինչ յանցանք էլ որ գործած լինելը, դարձեալ մեր օգնութիւնն է վայելում: Այդ մասին կարող էք բոլորովին ապահով լինել„...:

"Վերջին խօսքերի միջոցին Ծերունին զգուշութեամբ նայեց իւր շուրջը, մի գուցէ մի ուրիշը լսէր նրան: Նա արդէն նախապատրաստում էի, թէ նրա յառաջաբանը

ինչով պէտք է վերջանար, եւ չսխալուեցայ: Մեզ որոնում էին„...:

— "Այս րոպէիս ես վերադարձայ մեր տանուտէրի մօտից, — շարունակեց նա: — Տանուտէրը հաւաքել էր իւր մօտ մեր շէնի բոլոր ծերերին եւ կարդաց գաւառապետի հրամանը: Նրա մէջ գրուած էր, թէ Ղարադաղի մելիքի աղջիկը փախել է իւր ծառայի հետ եւ անցել են մեր կողմերը: Հրամայուած էր՝ որտեղ եւ գտնելու լինեն նրանց, յանձնեն կառավարութեան ձեռքը, որ յետ ուղարկեն Պարսկաստան: Հրամանի մէջ ծանր պատիժ եւ տուգանք էր նշանակուած, եթէ մէկը կը համարձակուի թագցնել նրանց իւր մօտ: Ես տարակոյս չունեմ, որ դուք եւ ձեր ուղեկիցը միեւնոյն անձնաւորութիւններն էք, որ ցոյց է տուած հրամանի մէջ„:

— "Այո՛, մենք ենք. — պատասխանեցի ես, առանց որեւիցէ կասկածանքի, առանց թագցնելու„:

— "Շնորհակալ եմ ձեր մտերմութեան համար, — ասաց Ծերունին, — հիմայ պատմեցէք, այդ անցքը ի՞նչպէս է պատահել„:

Ես Ծերունու անկեղծութեան վրայ կասկած չունէի: Ի՛ւր բարեսրտութեամբ նա այն աստիճան գրաւել էր իմ վստահութիւնը, որ ես պատմեցի բոլորը, ինչ որ գիտէի օրիորդի մասին, — պատմեցի նրա հօր փառասիրութեան մասին, թէ որպէս պարսիկ խանի բարեկամութիւնը գրաւելու համար՝ կամենում էր իւր աղջկան կնութեան տալ նրան, — պատմեցի օրիորդի ընդդիմադրութեան մասին, որ չդանկացաւ մահմեդականի կին գառնալ, — պատմեցի մեր փախուստը եւ այն բոլոր դժբախտ անցքերը, որ պատահել էին մեզ ճանապարհին: Ծերունին խորին ցաւակցութեամբ լսում էր: Նրա խորշոմած դէմքի

վրայ նշմարվում էին բարկութեան եւ դառն ատելութեան ցնցումներ»։

— «Ես չեմ զարմանում խեղճ աղջկայ հօր անգթութեան վրայ, — ասաց նա, երբ ես վերջացրի, — ես ճանաչում եմ նրա հօրը. նա իւր փառասիրութեան համար ամեն բան կ՚անէ, ամեն բան կը զոհէ։ Ես գովում եմ օրիորդի քաջութիւնը եւ ձեր անձնանուիրութիւնը, որ յանձն էք առել ազատել նրան։ Բայց այդ թողնենք, խօսենք գաւառապետի հրամանի վրայ»։

«Ծերունու խօսքերից երեւաց, որ իրանց տանուտէրը, որին հրամայուած էր որոնել մեզ, եթէ տեղեկութիւն ստանար իմ եւ օրիորդի մասին, իսկոյն կը մատնէր կառավարութեան ձեռքը»։

«Իմ յուսահատութեանը չափ չկար. ես գտնվում էի ամենաանելանելի դրութեան մէջ. չգիտէի ինչ հնար գտնել վտանգից ազատուելու համար. այդ պատճառով, երբ ծերունին հարցրեց, թէ ինչ պէտք է անել, ես ոչինչ պատասխանել չկարողացայ»։

— «Եթէ օրիորդը հիւանդ չլինէր, գործը շատ հեշտ էր, — ասաց նա փոքր ինչ մտածելուց յետոյ։ — Ես ձեզ՝ երկուսիդ եւս կ՚ուղարկէի Սիխանի կողմերը, իմ բարեկամի մօտ, նա կը պահէր ձեզ, մինչեւ հրամանը կը հնանար եւ ամեն բան կը մոռացուէր։ Բայց օրիորդի հիւանդութիւնը ինձ դժուարութեան մէջ է դնում»...։

«Նա դարձեալ մտածութեան մէջ ընկաւ եւ ապա շարունակեց».

— «Ռուսաց տիրապետութիւնից առաջ մեր կողմերի հայերը եւս միեւնոյն դրութեան մէջ էին, ինչ դրութեան մէջ գտնվում են այժմ Պարսկաստանի հայերը։ Պատահում էր այս եւ այն խանը, այս եւ այն բէկը մի

գեղեցիկ հայ աղջիկ էր տեսնում, իսկոյն իւր ծառաներին ուղարկում էր եւ բռնութեամբ տանում էր իւր տունը։ Ոչ մի ծնող համարձակութիւն չունէր հակառակելու։ Միանգամ Մահմեդականի տունը մտած աղջիկը, այլեւս այնտեղից դուրս չէր գալիս։ Նրան կամ աղախին էին դարձնում, կամ հարճ եւ կամ կին։ Ծնողները աշխատում էին տեղեկացնել իրանց աղջիկներին, որ մահմեդականների աչքին հաճելի չթուէին։ Այստեղից սովորական դարձան գլխի եւ երեսի այն այլանդակ փաթոթները, որ այժմ կրում են մեր կանայքը։ Բայց մի այլ հնար եւս երբեմն ազատում էր մեր աղջիկներին։ Երբ ծնողները հասկանում էին, որ մահմեդականը աչք ունի մէկի վրայ, իսկոյն վեր էին առնում աղջկան եւ պսակում էին պատահած հայ տղայի հետ։ Ամուսնացած կնոջը շատ չէին դիպչում, նրան անպատուում էին եւ բաց թողնում, որովհետեւ կին դարձնելու համար բաւական դժուարութիւններ կային։ Մահմեդական օրէնքը արգելում է՝ ամուսին ունեցող կնոջը, ինչ ազգից եւ կրօնքից լինէր նա, իրա կին դարձնել, քանի որ նա չէր բաժանուած իւր ամուսնից եւ մահմեդականութիւն չէր ընդունած։ Բայց ազաբ աղջիկների վերաբերութեամբ այդտեսակ պայմաններ չէին պահանջվում։ Ազաբ աղջիկը մի անգամ մահմեդականի ձեռքը ընկնելուց յետոյ, դառնում էր կորած աման, նրան այլեւս ոչոք չէր առնում. մինչեւ անգամ գտնվում էին այնպիսի անահաւատ ծնողներ, որ հրաժարվում էին իրանց տունը ընդունել «պղծած» աղջկան։ Պատահում էր, որ նշանած աղջիկներին եւս ուզում էին քաշել, տանել. այսպիսիներին իսկոյն պսակում էին նշանած տղայի հետ։ Բայց պատահում էր, որ տղան բացակայ էր լինում, մի ուրիշ երկիր գնացած էր լինում։ Այսպիսի դէպքերում

պակը կատարում էին մի առարկայի հետ, որ մնացել էր այն տղայից: Ես դեռ չեմ մոռացել մի այսպիսի դէպք. տղան գանվում էր հեռու երկրում, իսկ նրա նշանածին ուզում էին յափշտակել: Ժամանակ չկար տղային կանչելու: Ծնողները աղջկան ճաճուկ տարան եկեղեցի, կանգնացրին սեղանի առջեւ, իսկ խաչեղբայրը նրա մօտ կանգնած, ձեռին բռնած ունէր փեսայի հին գդակը: Քահանան անդադար դիմում էր այդ գդակին հարցնելով. "տէր ես", "սիրո՞ւմ ես", եւ կատարում էր պսակի խորհուրդը":

"Ես թէեւ հետաքրքրութեամբ լսում էի ծերունու խօսքերը, բայց չգիտէի, ինչո՞ւ համար էր այդ երկար պատմութիւնը: Նրա միտքը հասկացայ այն ժամանակ, երբ դարձաւ դէպի ինձ հետեւեալ հարցով.

— "Օրիորդը նշանած ունի՞:

— "Դեռ ոչ ոք նշան չէ դրել նրան, — պատասխանեցի ես:

— "Նա որեւիցէ մէկին սիրո՞ւմ է:

— "Չգիտեմ...:

— "Այդ մի եւ նոյն է, սիրում է, թէ չէ սիրում, — ասաց նա, — բայց պէտք է անպատճառ պսակել մէկի հետ, ուրիշ հնար չկայ ազատելու նրան:

— "Ո՞ւմ հետ:

— Հէնց ձեզ հետ, — ասաց ծերունին ուրախ դէմքով: — Ձեր անձնազոհութիւնը օրիորդի վերաբերութեամբ այնքան նշանաւոր է, որ դուք արժանի էք նրա ամուսինը լինելու":

— "Դա անկարելի բան է, — պատասխանեցի ես, — այդ մասին խօսելն անգամ աւելորդ է: Դուք չէք ճանաչում օրիորդին, նա ուրիշ աղջիկների նման չէ, նա սեպհական կամքի եւ խելքի տէր աղջիկ է, նրան չէ կարելի զօռով եկեղեցի տանել: Մտածենք ուրիշ հնարների վրայ":

"Իմ խօսքերը շատ օտարոտի թուեցան ծերունուն, որ աղջիկը եւս կարող էր իւր սեպհական կամքը եւ խելքը ունենալ, բայց, թէեւ շատ դժուարութեամբ, այսուամենայնիւ, նա համաձայնուեցաւ ինձ հետ չբռնադատել օրիորդին ամուսնութեան մասին եւ ուրիշ հնարների վրայ մտածել: Մենք երկար խորհեցինք, վերջապէս ծերունին այն եզրակացութեան հասաւ, որ օրիորդը պահուի իւր տանը, իսկ ես առժամանակ հեռանամ: — "Հիւանդին իմ տան ճաճքի տակ թաղցնելը հեշտ է, բայց ձեզ կարող են նկատել...", ասաց նա:

"Բայց ես ո՞րպէս կարող էի բաժանուել օրիորդից, ո՞ւմ հոգաբարձութեանը յանձնէի նրան, միթէ կարո՞ղ էի հանգիստ լինել, եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ նրան չտեսնէի, կամ ի՞նչ ազդեցութիւն կ'անէր նրա հիւանդութեան վրայ, եթէ այդ բոլորը յայտնուէր նրան":

— "Ուրիշ հնար չկայ, — կրկնեց ծերունին: — Եթէ օրիորդը առողջ եւս լինէր, ձեզ դարձեալ հարկաւոր էր բաժանուել միմեանցից, որովհետեւ ձեզ երկուսիդ միասին տեսնելով, աւելի հեշտ կարող էին ճանաչել":

"Ես իմ սրտի եւ զգացմունքների հետ կարող էի հաշտուել, բայց իմ բոլոր մտատանջութիւնը նրանումն էր, թէ ի՞նչպէս յայտնեմ օրիորդին, որ նրան միայնակ եմ թողնում: Բայց մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրան հաղորդեցի մեր աննախանձելի վիճակը, նա խիստ սառնասրտութեամբ ասաց ինձ":

— Դուք շատ արեցիր ինձ համար, աւելին պահանջել քեզանից իրաւունք չունեմ: Դուք, ուր որ կամենում ես, գնա, հեռացիր, գլուխդ ազատիր, ես կը մնամ այս-

հական կամքի եւ խելքի տէր աղջիկ է, նրան չէ կարելի զօռով եկեղեցի տանել: Մտածենք ուրիշ հնարների վրայ":

"Իմ խօսքերը շատ օտարոտի թուեցան ծերունուն, որ աղջիկը եւս կարող էր իւր սեպհական կամքը եւ խելքը ունենալ, բայց, թէեւ շատ դժուարութեամբ, այսուամենայնիւ, նա համաձայնուեցաւ ինձ հետ չբռնադատել օրիորդին ամուսնութեան մասին եւ ուրիշ հնարների վրայ մտածել: Մենք երկար խորհեցինք, վերջապէս ծերունին այն եզրակացութեան հասաւ, որ օրիորդը պահուի իւր տանը, իսկ ես առժամանակ հեռանամ: — "Հիւանդին իմ տան ճաճքի տակ թաղցնելը հեշտ է, բայց ձեզ կարող են նկատել...", ասաց նա:

"Բայց ես ո՞րպէս կարող էի բաժանուել օրիորդից, ո՞ւմ հոգաբարձութեանը յանձնէի նրան, միթէ կարո՞ղ էի հանգիստ լինել, եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ նրան չտեսնէի, կամ ի՞նչ ազդեցութիւն կ'անէր նրա հիւանդութեան վրայ, եթէ այդ բոլորը յայտնուէր նրան":

— "Ուրիշ հնար չկայ, — կրկնեց ծերունին: — Եթէ օրիորդը առողջ եւս լինէր, ձեզ դարձեալ հարկաւոր էր բաժանուել միմեանցից, որովհետեւ ձեզ երկուսիդ միասին տեսնելով, աւելի հեշտ կարող էին ճանաչել":

"Ես իմ սրտի եւ զգացմունքների հետ կարող էի հաշտուել, բայց իմ բոլոր մտատանջութիւնը նրանումն էր, թէ ի՞նչպէս յայտնեմ օրիորդին, որ նրան միայնակ եմ թողնում: Բայց մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրան հաղորդեցի մեր աննախանձելի վիճակը, նա խիստ սառնասրտութեամբ ասաց ինձ":

— Դուք շատ արեցիր ինձ համար, աւելին պահանջել քեզանից իրաւունք չունեմ: Դուք, ուր որ կամենում ես, գնա, հեռացիր, գլուխդ ազատիր, ես կը մնամ այս-

տեղ։ Այժմ ինձ համար միեւնոյն է... կեանքը զզուացրել է ինձ...։ Եթէ ինձ գտնելու եւ տանելու եւս լինեն հօրս տունը, դարձեալ չեմ վախենայ, որովհետեւ գիտեմ, որ մինչեւ այնտեղ հասցնելը կենդանի չեմ մնայ։ Այնուհետեւ իմ դիակի հետ ինչ որ ուզում են, թող անեն„...։

“Օրիորդի յուսահատական խօսքերը կրակի նման այրում էին իմ սիրտը. իմ լեզուն կապուեցաւ, ես մի բառ անգամ չկարողացայ գտնել նրան մխիթարելու։ Ես ցանկանում էի գրկել նրա ոտները, համբուրել եւ ասել՝ որ մինչեւ մահ քո ծառան, քո ստրուկը կը դառնամ, քո ոտքերի տակի հողը կը լինեմ, եւ քեզանից չեմ բաժանուի։ Բայց նա չթողեց ինձ խօսել, ասելով.

— “Իմ բանը պրծած է... ես շատ չեմ ապրի... դու քո գլուխը ազատիր եւ իմ վրայ մի մտածիր...։

“Իմ աչքերը լցուեցան արտասուքով։ Նա ափսոսում էր ինձ... արդեօք իմ մատուցած ծառայութիւնների համար, արդեօք երախտագիտութեան զգացմունքից դրդուած, թէ մի այլ կիրք թելադրում էր այդպէս խօսել։ — Ես այդ հասկանալ չկարողացայ, միայն նկատում էի, կարծես թէ, նա մինչեւ անգամ ուրախ էր, որ հանգամանքները փոխուեցան, կարծես թէ, ցանկանում էր առանձնանալ եւ առժամանակ անջատուած լինել ինձանից։ Ի՞նչ էր պատճառը։ Ես այդ հասկացայ, բայց շատ ուշ հասկացայ, երբ նա արդէն այս աշխարհից հրաժարուել էր, եւ իւր վշտերը իւր հետ գերեզման էր տարել...։ Հիւանդութեան մահճի մէջ երկու զգացմունքներ կռւում էին նրա սրտում, մէկը՝ սէրը, որ դեռ նոր բոցավառւում էր նրա մէջ, միւսը՝ ազնուատոհմական հպարտութիւնը՝ թէ ի՞նչպէս կարող էր կին լինել մի ռամիկի — իւր հօր

տան ծառայի որդուն։ Նա վախենում էր աշխարհի նախատինքից եւ ցանկանում էր օգուտ քաղել իմ բացակայութիւնից եւ խեղդել իւր սրտի մէջ իրան տանջող զգացմունքը„...։

Աւազակապետը կանգ առեց։ Վաղեմի յիշողութիւնները շօշափեցին նրա սրտի դեռ ոչ բոլորովին բուժուած վէրքերը։ Նա երեսը մի կողմ շուռ տուեց, որ ես չտեսնեմ նրա արտասուքը։

“Ես բոլորովին չանջատուեցայ նրանից, — շարունակեց դժբախտը ցաւալի ձայնով։ — Ես հեռացայ, բայց շատ հեռու չգնացի։ Ցերեկով անհետանում էի մերձակայ անտառներում, թափառում էի մթին ծմակների մէջ, կենակցում էի ծառերի, ժայռերի եւ գազանների հետ, եւ իմ վշտերը ցրւում էի որսորդութեամբ։ Իսկ գիշերը մտնում էի մեր հիւրընկալի տաղաւարներին, եւ եթէ միջոց էի գտնում, մտնում էի հիւանդին տեսնելու։ Երբ նա իւր պղտորուած աչքերը բաց էր անում, տեսնում էր ինձ իւր մահճի մօտ նստած, միշտ կրկնում էր միեւնոյն խօսքերը, — “Ինչո՞ւ եկար, կարող են կալանաւորել քեզ„...։ Անցան օրեր, անցան շաբաթներ, անցաւ մի ամիս։ Օրըստօրէ նրա հիւանդութիւնը աւելի վտանգաւոր կերպարանք էր ստանում։ Մի գիշեր, երբ մօտեցայ մեր հիւրընկալի տաղաւարին, նա արտասուքը աչքերում դուրս եկաւ իմ առջեւ եւ խորին ցաւակցութեամբ յայտնեց. — “Նա մեռաւ„...։ Ես սարսափեցայ, որպէս մի եղեռնագործ։ Ինձ այնպէս թուեցաւ, թէ ես եմ եղել նրա մահուան պատճառը։ Խղճի զարհուրանքը շանթահարեց ինձ„...։

Աւազակապետը կրկին կանգ առեց, ձեռքը տարաւ դէպի հանգած չիբուխը, որ դրած էր նրա մօտ, կրկին

վառեց եւ սկսեց ծխել: Ծուխը թանձր մէգի նման դուրս էր հոսում նրա բերանից, նրա պնչերից, կարծես թէ, նրա սիրտը ճարակում էր մի սարսափելի հրդեհ:

"Ոչինչ յայտնել չկարողացան ինձ նրա մահուան մասին, — առաջ տարաւ նա, — թէ նա իւր կեանքի վերջին րոպէներում ինչ դրութեան մէջ է եղել կամ ինչ է խօսացել: Նրա մօտ ոչ ոք չէր եղել, որ գոնէ վկայ լինէր անբախտ հանգուցեալի վերջին խօսքերին: Երկու օր էր, որ նա մեռած էր, երկու օր նրա մարմինը պահել էին, որ ես տեսնեմ: Առաւօտեան պէտք է կատարուէր նրա թաղումը: Ես այլեւս չդնացի անտառը, ճնշող, որ կատարեմ իմ վերջին պարտքը: Իմ մասին այլեւս չէի մտածում, թէ ինչ կարող էր պատահել ինձ հետ: Նրան կորցնելուց յետոյ, այլեւս կեանքը իմ աչքում արժէք չունէր: Ես իմ ձեռքով պէտք է գերեզման իջեցրէի այն նազելի արարածին, որին իմ կեանքում միայն սիրել էի, եւ որը նոյնպէս սիրում էր ինձ: Նրա գերեզմանը փորուեցաւ հէնց նոյն լերան վրայ, հեռու մարդկային բնակութիւնից, ուր երբեմն հանդիպում են հովիւները միայն: Նրա դագաղը հազիւ ծածկուած էր հողով, խաչնարածների քահանան կարդում էր վերջին աղօթքը: Ես սպաննուածի նման կանգնած էի եւ լաց էի լինում: Այդ միջոցին երկու եասաուլները մօտեցան եւ ինձ կալանաւորեցին: — "Նա մեռաւ եւ ազատուեցաւ, բայց դու ազատուել չես կարող„... — լսելի եղան տանուտէրի խօսքերը: Ինձ տարան, բանտարկեցին տանուտէրի տաղաւարում, որ միւս օրը ուղարկեն գաւառապետի մօտ: Օրիորդի կորուստը ինձ այն աստիճան ապշած եւ խելագարուած դրութեան մէջ էր դրել, որ ես համարեա չէի զգում, թէ ինձ հետ ինչ է կատարվում: Այսուամենայնիւ, հէնց նոյն գիշերը ինձ յաջողուեցաւ՝ իմ մօտ դրած պահապաններից մէկին սպաննել, միւսին սաստիկ վիրաւորել եւ փախչել իմ բանտից: Այնուհետեւ այլեւս ինչ էր ճնշում ինձ անել: Իմ յանցանքները կրկնապատկուեցան. այստեղ դարձայ մարդասպան, իսկ իմ հայրենիքից փախցրել էի իմ մեծաւորի աղջիկը: Իմ հայրենի երկիրը վերադառնալ չէի կարող, իսկ իմ գտնուած երկրում դարձայ մի փախստական եւ միացայ փախստականների խումբի հետ: Ուխտեցի այնուհետեւ վրէժխնդիր լինել բոլոր այն մարդկանցից, որ կրում են խան, բէկ, մելիք եւ տանուտէր անուննները: Իմ նպատակին մասամբ հասայ...: Բայց իմ ձեռնարկութիւնը այնքան սարսափելի էր եւ սրիւնոտ, որ վերջը բերեց ինձ այստեղ„...:

2.

ՀԱՄՐԸ

Աւազակապետը ծանօթացրեց ինձ մի այլ երիտասարդի հետ, որին կոչում էին Համր: Նրա իսկական անունը ոչ ոք չգիտեր: Զիտէին նաեւ թէ ինչ ազգից էր նա: Նա միշտ լուռ էր եւ մտախոհ. միանգամ գոնէ չէին տեսել նրան խօսելիս, եւ այդ էր պատճառը, որ ընկերները նրան Համր էին կոչում: Այդ օտարոտի խուլումունջը վաղուց գրաւել էր իմ ուշադրութիւնը: Նրանում կար մի խորհրդաւոր բան, որ իւր լռութեան մէջ եւս աչքի էր զարկում: Բաւական բարձրահասակ էր նա, նիհար եւ ցամաք կազմուածքով. դեղնած դէմքը գունաթափուելով, ստացել էր թառամած տերեւի գոյն, իսկ արագաշարժ աչքերը վառվում էին տենդային բոցով: Զնայելով իւր տակաւ, հիւանդոտ կազմուածքին, աշխատում էր նա չափազանց եռանդով, եւ այդ առիթ էր տուել վերակացուներին բաւական մեղմ վարուել նրա հետ, թէեւ նրա հսկողութեան վրայ դարձնում էին առանձին ուշադրութիւն:

Գիշեր էր, երբ առաջին անգամ առիթ ունեցայ խօսելու նրա հետ: Յոնաս պատերին կպցրած ճրագուի մոմերը հազիւ լուսաւորում էին դատապարտեալների մռայլոտ ու սառն օթեւանը: Մերկ յատակի վրայ, այստեղ ու այնտեղ, անկարգ կերպով պառկած էին ցերեկուայ տաժանական աշխատութիւնից յոգնած թշուառները: Քունը միակ մխիթարութիւնն է այդ ողորմելիների, նա կազդուրում է նրանց ջարդուած անդամները եւ մոռանալ է տալիս սրտի դառն վշտերը:

Արթուն էր Համրը միայն: Նա մռայլով, կարծես թէ, վերասլացել էր երկինքը, իսկ նրա խորախորհուրդ աչքերը մի առանձին կարեկցութեամբ նայում էին քնած թշուառների վրայ: Ես նրանից ոչ այնքան հեռու պառկած էի իմ յարգեայ անկողնի վրայ, եւ իմ աչքերը յառած էին դէպի երիտասարդի ոլորամած դէմքը, որ կրում էր իւր վրայ հետքերը մի դժբախտ անցեալի...:

Նա լուռ էր, որպէս միշտ: Ինչ այն գիշեր մեծ եղաւ իմ զարմանքը, երբ նրա ցամաք ու փակուած շրթունքներից դուրս հնչեց մի խուլ հառաչանք այդ երկու բառի հետ՝ "Աստուած իմ„...: Ես մինչեւ այնօր չգիտէի նրա ինչ ազգից լինելը, բայց յանկարծ լսեցի նրանից հայկական բառեր: Ես չկարողացայ զսպել իմ սրտի զեղմունքը:

— Դարձեալ մի հայ... բացականչեցի ես այնքան լսելի ձայնով, որ դէպի ինձ գրաւեցի Համրի ուշադրութիւնը: Նրա փակուած լեզուն բացուեցաւ եւ պատասխանեց ինձ հեռուեւալ խօսքերով.

— Ինչո՞ւ էք զարմանում, աշխարհի որ անկիւնում չկայ հայ: Արմատից խլուած եւ ցամաքած բոյսը տանում է քամին դէպի ամեն կողմ...: Նա կրկին լռեց:

Կան անձնաւորութիւններ, որոնց մի բառը, մի խօսքը բաւական է, որ մարդ նրանց մասին գաղափար կազմէ. Համրի ասածը թէեւ շատ պարզ չէր, բայց բաւական յատկանիշ էր նրա մտքին, ծանօթամիտ բնաւորութեանը: Ես մօտեցայ, նստեցի նրա մօտ:

— Ուրեմն դուք հայ էք, հարցրի նրանից։

— Այո... պատասխանեց նա։

Ես այն աստիճան զգացուեցայ, որ ձեռքերս տարածելով խնդրեցի նրանից.

— Թոյլ տուեցէք ձեր ազգակցին գրկել ձեզ։

— Կարծեմ, մեր դրութեան մէջ աւելորդ են այս տեսակ քնքշութիւնները, ասաց նա հրաժարուելով։

Նրա խօսքերը նոյնքան սառն էին, որքան նրա դէմքը, բայց ինչո՞ւ այնքան ջերմ կերպով ազդում էին իմ սրտին։ Ես աշխատում էի շարունակել նրա հետ խօսակցութիւնը, բայց դժուարանում էի կապը պահպանել։

— Դուք այս գիշեր չէք քնում, — ասացի ես, — համարեա ամեն գիշեր նկատում եմ, որ դուք խիստ սակաւ էք քնում։

— Այդ իմ սովորութիւնն է։

— Երեւի, մի բան տանջում է ձեզ։

— Մեզ ուղարկել են այստեղ հէնց տանջուելու համար։

— Այդ չեմ հարցնում, երեւի մի ուրիշ բան կայ։

— Խնդրեմ չմոռնել իմ սրտի խորքը, ասաց նա եւ երեսը շուռ տուեց։

Ես փոշմանեցայ, որ թոյլ տուի ինձ մի գեռ եւս անծանօթ մարդու գաղտնիքները ջուշափել։

— Ներեցէք, խնդրեմ, իմ անհամեստ հարցմունքի մասին։

Նա պատասխանեց ժպտալով.

— Ծանցանքների այդ քաւարանում իմ ներողութիւնը աւելորդ է։

Ես չկամեցայ այլեւս ձանձրացնել նրան, բարի գիշեր ասելով, հեռացայ եւ կրկին պառկեցի իմ յարդեայ անկողնի վրայ։ Իմ աչքերը դեռ երկար նայում էին նրա վրայ, իմ միտքը դեռ երկար զբաղուած էր նրանով։ Ո՞վ էր դա, ո՞ր երկրից եւ ի՞նչ յանցանքի համար էր դատապարտուած, — այդ հարցերը հետաքրքրում էին ինձ։ Ամեն մի դատապարտեալ սովորութիւն ունէր անամօթաբար եւ միեւնոյն անգամ պարծենալով պատմել իւր գործած յանցանքները, բայց Համրը իւր մասին խօսելու սովորութիւն չունէր։

Երբ առաւօտեան կրկին քշեցին մեզ հանքերի մէջ աշխատելու, ճանապարհին ես պատմեցի աւազակապետին իմ գիշերուայ խօսակցութիւնը Համրի հետ։

— Նա շատ հետաքրքիր մարդ է, — ասաց աւազակապետը, — ես քեզ կը բարեկամացնեմ նրա հետ։

Մենք հասանք հանքը, կրկին խլուրդների նման ներս սողացինք մթին խորշերի եւ խոռոչների մէջ, կրկին մեր բահերը, բրիչները եւ մուրճերը սկսեցին գործել։ Այն քարանձաւի մէջ, ուր մեր խումբը աշխատում էր, պատահեց մի ցաւալի անցք։ Յանկարծ ժայռի մի բաւական մեծ կտոր, դուրս պոկուելով անձաւի պատից, ցած գլորուեցաւ եւ բանուորներից մէկին տակով արեց։ Թուով չորս հոգի էինք այնտեղ՝ ես Համրը եւ մի այլ տաժանակիր, իսկ չորրորդը հեծում եւ հառաչում էր ժայռի տակ։ Համրը մեզանից փոքր ինչ հեռու էր. նա ընկատեց անցքը, բայց լսեց դղրդիւնի ձայնը։ Մինչեւ նրա մեզ մօտ վազելը, ես եւ իմ միւս ընկերը ամեն ճիգ թափում էինք, որ յետ մղենք ժայռը եւ նրա տակից դուրս բերենք թշուառին։ Բայց անգութ ժայռը ամենայն ծանրութեամբ նստած էր նրա ոտների ու ծնկերի վրայ, եւ չէր շարժվում տեղից։ Վրահասաւ Համրը։ Ես եւ իմ միւս ընկերը չկարողացանք զսպել մեր ծիծաղը։ Նա ուշադրու-

թիւն չդարձրեց մեզ վրայ, վերառեց երկաթեայ մեծ ձողը, նրա ծայրը դրեց քարի տակին, եւ այնպիսի մի ուժով շարժեց, որ քարը իսկոյն առաջ մղուեցաւ, եւ թշուառ դատապարտեալի ջարդուած սրունքները դուրս եկան նրա տակից։ Այդ գործողութիւնը, որ աւելի հնարագիտութեան արդիւնք էր, քան թէ մարմնական ուժի, զարմացրեց մեզ։ Իսկ Համրը, պարծենկոտութեան մի նշան անգամ չցոյց տալով մնաց լուռ եւ սառն, որպէս մեզ շրջապատող քարանձաւը։ Այդ դէպքը ազդեց իմ մէջ մի առանձին յարգանք դէպի համեստ եւ միեւնոյն ժամանակ վերին աստիճանի բարի երիտասարդը։

Երեկոյեան, մեր օթեւանը վերադառնալու ժամանակ, ճանապարհին ես մի քանի անգամ փորձեցի խօսակցել նրա հետ, բայց միշտ ստանում էի այնպիսի կտրուկ պատասխաններ, որ դժուարանում էի խօսակցութիւնը շարունակել։ Այսպէս մտեցանք այն փողոցին, ուր գտնվում էին մեր ֆերմայի կրպակները։ Հեռուից նկատեցինք, մի տեղ խմբուած էին մարդիկ եւ բազմութիւնը դէպի այն կողմն էր վազում։ Մենք մտածեցինք, որ մի տարօրինակ բան պէտք է պատահած լինի, եւ շտապեցրինք մեր քայլերը։ Երբ հասանք, անցքը շատ սովորական երեւաց. երկու մարդիկ կռվում էին, եւ բազմութիւնը նրանց շուրջը հաւաքուած զուարճանում էր, թէ որպէս նրանք վայրենի կերպով ջարդում էին միմեանց կողքերը։ Ոմանք աշխատում էին բաժանել։ Մէկին, որ աւելի ուժեղ էր երեւում, բռնեցին, իսկ միւսը դուրս պրծաւ նրա ճանկերից, “ազատեցէք... օգնեցէք„... գոչելով, փախաւ եւ մոլորուածի նման մտաւ մեր խումբի մէջ ապաստան որոնելու։ Մեր պահապանները մօտ վազեցին, որ սուիններով հեռացնեն նրան։ Բայց նա արդէն կպած էր իմ կուրծ-

քին, ինձ պինդ գրկած ունէր, այնպէս ձեւացնելով, որ վախենում է իւր հակառակորդից։ “Նա ինձ կը սպաննէ, նա Աստուած չունի„... ասում էր անդադար։ Այդ յանկարծակի դէպքից ես այն աստիճան շփոթուեցայ, որ ամենեւին չհասկացայ, թէ ինչ փսփսաց նա իմ ականջին, միայն զգացի, որ նրա ձեռքը խիստ ճարպիկ կերպով սողաց իմ գրպանի մէջ։ Մեր պահապանները հեռացրին նրան, նրա վարմունքը շատ բնական համարելով, որովհետեւ խեղճի հակառակորդը այնքան ուժեղ էր, որ կարող էր բոլորովին խեղդել նրան։ Տեղային ոստիկանութիւնը վրահասաւ, խռովութիւնը հանդարտուեց. ամբոխը ցրիւ եկաւ, իսկ մեր խումբը անցաւ։

Ամբոխի համար դա փողոցային սովորական անցքերից մէկն էր, իսկ խաչագողի համար դա նոր բան չէր։ Ես ճանաչեցի, թէ ով էր այն մարդը, ես հասկացայ, թէ ինչ նպատակով էր սարքել այդ կռիւը, եւ վերջապէս ես գիտէի, թէ ինչու մեր խումբի մէջ մտնելու միջոցին՝ ինձ միայն ընտրեց իւր պաշտպան եւ ուղղակի ինձ մօտեցաւ։ Խաչագողները շատ անգամ փողոցներում, հրապարակների վրայ, սարքում են այստեսակ կռիւներ։ Բազմութիւնը հաւաքվում է, մարդիկ խառնվում են միմեանց, իսկ նրանք, օգուտ քաղելով ընդհանուր շփոթութիւնից, գողանում են դրա ու նրա ժամացոյցը, կամ շատ անգամ կողոպտում են հէնց իրանց բաժանողների գրպանները։ Այդ մարդը նոյնպէս ձեռքը տարաւ իմ գրպանը, բայց այնտեղից ոչինչ չգողացաւ, եւ գողանալու բան էլ չկար, բայց զգացի, որ մի բան դրեց այնտեղ։ Առանց նայելու, ես գիտէի, թէ ինչ պէտք է լինէր այդ։ Դա միեւնոյն անձնաւորութիւնն էր, որ մի քանի շաբաթ առաջ, մուրացկանի կերպարանքով մօտեցաւ մեր խումբին եւ բաժա-

նեց մեզ իւր հաւաքած գլուխները: Այն ժամանակ, երկու հինգ-կոպէկանոցների մէջ թաղցրած, տուեց ինձ իւր խորհրդաւոր տումնակը: Այժմ միեւնոյն անձնաւորութիւնը, այդ հնարքով մօտենալով ինձ, դրեց իմ գրպանումս մի այլ տումնակ: Ի հարկէ, ոչ ոք չհասկացաւ նրա խորամանկութիւնը, եւ նա այն աստիճան կերպարանափոխ էր եղած, որ մինչեւ անգամ աւազակապետը չճանաչեց, որ այդ մարդը միեւնոյն ծպտեալ մուրացկանն էր:

Երբ հեռացանք, ձեռքս տարայ գրպանս, տեսայ, որ իմ ենթադրութիւնս սխալ չէր. այնտեղ կար մի թղթի կտոր: Առանց կարդալու, արդէն ինձ յայտնի էր նրա բովանդակութիւնը, այսուամենայնիւ, գիշերը միջոց գտայ ծածուկ կարդալու նրան: Նրա մէջ շտապ ձեռքով գրուած էին հետեւեալ տողերը.

"Մուրադ, մի շաբաթից յետոյ զատկի ուրբաթն է: Դու գիտես, ինչ գրութեան մէջ են լինում մարդիկ այդ օրերում: Արաղը կը յաջողեցնէ մեր դիտաւորութիւնը: Ուստի հետ, որ հարկաւոր էր, ես կարգադրել եմ: Քեզ բաց կը թողնեն: Դու կը գտնես ինձ եղեւիններից փոքրիկ անտառում, կարմիր բլուրի մօտ: Այնտեղ ամեն ինչ պատրաստ կը գտնես քո փախուստի համար":

"Պետրոս":



Է.

ԻՄ ՆՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Մօտեցան զատկի տօները: Մեզ այլեւս չէին աշխատեցնում, մեզ թոյլ էին տալիս փոքրիկ զուարճութիւններ անել, մեզ թոյլ էին տալիս եւ մեր հոգիների մասին մտածել, աղօթք կարդալ, խոստովանուել, հաղորդուել եւայլն: Ի հարկէ, այդ բոլորը կատարվում էր գինուորների հսկողութեան ներքոյ:

Այդ օրերում ես աւելի ընտելացայ Համրի հետ, մանաւանդ երբ աւազակապետը իմ մասին նրա ականջում մի քանի բաներ փսփսաց: Տարակոյս չունէի, որ վատ բան չէր խօսի իմ մասին: Այնուհետեւ այդ երիտասարդը, որ առաջ խորշում էր ինձանից, բաւական մտերմացաւ ինձ հետ:

Մի օր միասին նստած էինք մեր արդելանոցի բակում, տաքանում էինք արեգակի ճառագայթներով: Մեր առջեւ դատապարտեալները զանազան խաղեր էին անում, ծիծաղում էին, աղաղակում էին, հռհռում էին եւ ըստ բոթբրթում էին միմեանց: Տաժանակիրը իւր թշուառութեան մէջ գառնում է կատարեալ ստահակ: Ամօթը, պատկառանքը եւ մարդկային բոլոր արժանաւորութիւնները կորցնում է նա: Օրէնքը զրկում է նրան ամեն իրաւունքներից, բայց նա ինքը զրկում է իրան բարոյա-

կան եւ հոգեկան բոլոր լաւ յատկութիւններից։ Կարծես, նա հետզհետէ հաշտւում է այդ մտքի հետ՝ “ինձ համար վճռեցին, որ ես վատ եմ, անպիտան եմ, ես կը շարունակեմ մնալ անպիտան, որովհետեւ իմ ուզելը կամ լաւանալը երբեք չեն փոխի այն վիճակը, որին դատապարտուած եմ„....։

Ես նայում էի այդ մոլեգնած սատահակների վրայ։ Համրը ընկղմուած էր մտածութիւնների մէջ. նա տխուր էր, որպէս միշտ, տօները չէին ուրախացնում նրան։ Ես չգիտէի ինչ առարկայի վրայ խօսել նրա հետ։ Այդ մարդուն հանդիպելիս, իմ լեզուն կապվում էր, ես նոյնպէս համր էի դառնում։ Ես ուրիշ խօսք չգտայ եւ յիշեցրի նրա մի քանի օր առաջ կատարած քաջագործութիւնը քարանձաւի մէջ։

— Ձեր արածը կատարեալ հրաշք էր, ասեցի նրան։

— Միթէ դուք հաւատո՞ւմ էք հրաշքներին, ժպտալով հարցրեց նա։

— Հաւատում եմ։ Բայց ձեր գործը մարդկային ուժից բարձր էր։

— Մարդկային ուժը շատ եւ շատ բարձր է, քան ձեր տեսածը։

Նրա համեստութիւնը վիրաւորուեցաւ։ Ես տեսայ, որ իմ նկատողութիւնները հաճելի չեն նրան, այդ պատճառով խօսքս փոխեցի, նրա ուշադրութիւնը դարձնելով մեր առջեւում զուարճացող Թշուառների վրայ։

— Նայեցէք, ի՛նչպէս զուարճանում են դրանք՝ կարծես թէ, խելագարներ լինեն, բոլորովին մոռացել են իրանց դրութիւնը։

— Ինչո՞ւ չզուարճանան, երբ թոյլ են տալիս նրանց վայելել այդ փոքրիկ մխիթարութիւնը։

— Մի քաղցր կաթիլ դժբախտութեան անսահման ծովի մէջ, — ի՞նչ նշանակութիւն ունի այդ մի կաթիլը։

Նա ուղիղ նայեց իմ երեսին, կարծես, զարմանում էր, որ ես էլ դատել գիտեմ, որ ես էլ իմ առանձին համոզմունքներն ունեմ։

Բակը ընդարձակ էր։ Մենք բաւական հեռու նստած էինք խաղացողներից։ Մեր խօսակցութիւնը ոչ ոք չէր խանգարում։

— Մի՞թէ նրանք մեղաւոր են, որ դժբախտ են, հարցրեց նա։

— Ի հարկէ, մեղաւոր են, պատասխանեցի ես։

— Այդ դժբախտներից մէկն էլ դուք էք. ասացէք խնդրեմ, դո՞ւք էք մեղաւոր, որ ձեզ այստեղ ուղարկեցին։

— Ապա ո՞վ է մեղաւոր. ես յանցանք գործեցի, դրա համար էլ ուղարկեցին ինձ այստեղ պատժուելու։

Նա ոչինչ չպատասխանեց, միայն հետաքրքրուեցաւ իմ անցեալով, խնդրեց՝ մանրամասնաբար պատմել իմ կեանքի պատմութիւնը։ Աւազակապետից լսել էի, որ նա սովորութիւն ունի իւր բոլոր ծանօթների կեանքը ուսումնասիրելու, այդ պատճառով ես ամեն ինչ պատմեցի նրան։ Ես պատմեցի, թէ որպէս երեխայ ժամանակ հօրից զրկուելով, մնացի աղքատ մօր խնամատարութեան ներքոյ, թէ որպէս նա յանձնեց ինձ մի դարբնոցում արհեստ սովորելու, եւ միշտ խրատում էր, որ խաչագողների ճանապարհով չգնամ, մի բան սովորեմ եւ իմ արդար աշխատանքով ապրեմ։ Պատմեցի աղէտաւոր բանալիի անցքը, իմ վարպետի դարբնոցի հետ պատահած դժբախտութիւնը եւ իմ փախուստը այնտեղից։ Պատմեցի, թէ որպէս այնուհետեւ թափառական կեանք էի վարում, եւ որպէս միացայ մի խումբ մանկահասակ սրիկաների

հետ, որոնք ինձ պէս փախստականներ էին, եւ սկսեցի նրանց հետ մանր զրոյցներ անել: Պատմեցի, որ իմ երկրում ես հալածուեցայ, տանջուեցայ, փախստական եղայ օրէնքի եւ դատաստանի երեսից, — եւ այն մարդը, որ խաբել էր ինձ անմեղիս, եւ ես նրա թելադրութեամբ ակամայ ու անգիտակցաբար յանցանք էի գործել, — կրկին նոյն մարդը մօտեցաւ ինձ, եւ ես նրա առաջնորդութեամբ թողեցի իմ հայրենիքը, հեռացայ դէպի օտար աշխարհներ եւ մտայ խաչագողների հասարակութեան մէջ: Այստեղ ես գարձայ մի կատարեալ եղեռնագործ սովորեցի ամեն չարիքներ գործել, — սպանութիւն, գողութիւն բազմատեսակ խաբերայութիւններ, որոնցով ահագին գումարներ էինք ձեռք բերում, — սովորեցի ուրիշն վաստակով ապրել: Վերջապէս, բռնուեցայ եւ աքսորի դատապարտուեցայ:

— Այդ բոլորը շատ հետաքրքրական է, — ասաց նա, երբ ես վերջացրի: — Հիմայ տեսնում էք, որ դուք սկզբից անմեղ էք եղել եւ արդար, բայց ձեզ յանցանքի մէջ ձգեցին այն հանգամանքները եւ այն կենսական պայմանները, որոնցով սկսեալ մանկութիւնից շրջապատուած էք եղել: Եթէ այն հանգամանքները եւ այն պայմանները ձեզանից հեռացնէին կամ խափան չլինէին, դուք, անտարակոյս, կը ձեայիք ձեր անմեղութեան մէջ, եւ գուցէ շատ օրինաւոր մարդ կը դառնայիք: Ընտանիքի մէջ ոչինչ չսովորեցաք, ընտանիքը լաւ չվրթեց ձեզ: Ձեր վարպետի դարբնոցում կարող էիք արհեստ սովորել, եւ դա ձեր արդար ապրուստի հիմքը կը լինէր, բայց անիրաւալի պատճառներ այնտեղից եւս հալածեցին ձեզ: Ձեր պատանեկութեան փոքրիկ, սրիկայ ընկերները սովորեցրին ձեզ գողութեամբ ապրելու նախակրթութիւնը,

իսկ խաչագողների ընկերութիւնը բոլորովին կատարելագործեց ձեր մէջ այդ արհեստը եւ դարձրեց ապրուստի միակ միջոց: Այդ բոլորը — ընտանիքը, սրիկայ ընկերները, խաչագողները, մի խօսքով, այն ամբողջ միջնոլորտը, որի մէջ ծնեցին, աճեցին եւ հասունացան ձեր ընդունակութիւնները, — կոչվում է հասարակութիւն: Եթէ այդ հասարակութիւնը, կամ, որպէս ասեցի, այդ միջնոլորտը, մաքուր լինէր, առողջարար լինէր եւ ձեզ վրայ բարերար ազդեցութիւն գործէր, տարակոյս չկայ, որ ձեր ընդունակութիւնները կը զարգանային դէպի բարին, դէպի լաւը եւ դէպի օգտաւէտը: Բայց եթէ դուք դարձաք մի չարագործ, դուք ծնունդ էք նոյն միջնոլորտի, այլ խօսքով, նոյն հասարակութեան, որը իւր միջից արտադրել է ձեզ:

Ես նրա բացատրութիւնները հասկանալ չէի կարողանում: Նա շարունակեց, ձեռքը մեկնելով դէպի զուարճացող բազմութիւնը, որ խաղում էր բակի մէջ:

— Տեսնո՞ւմ էք այդ թշուառներին, դրանք նոյնպէս՝ հասարակութեան հիւանդոտ կազմուածքի արտադրած վէրքերն ու պալարներն են, որ կարել եւ այստեղ են ձգել, այն մտքով, որ կազմուածքը բոլորովին չվարակուի: Բայց ո՞րտեղից առաջ եկան այդ վէրքերը, այդ թարախալից պալարները, — յայտնի բան է, նոյն կազմուածքի հիւանդոտ դրութիւնից: Եթէ մարմինը առողջ լինէր, դրանք չէին լինի: Քննեցէք դրանց իւրաքանչիւրի կեանքի պատմութիւնը եւ դուք կը տեսնէք, որ դրանց գործած յանցանքների արմատը դրած է եղել այն հողի մէջ, որից դրանք բուսել, աճել եւ զարգացել են: Իւրաքանչիւրի յանցանքի ձեւը, տեսակը, որպիսութիւնը տեղային բնաւորութիւն ունի: Եւ այդ կէտից նայելով, այդ

թշուառների ամեն մէկի կեանքի պատմութիւնը՝ նոյն հասարակութիւնների մտաւոր, բարոյական եւ հոգեկան հիւանդութեան պատմութիւնն է, որոնց միջից դուրս են եկել դրանք: Այստեղ, այդ արգելանոցի մէջ, կարելի է ուսումնասիրել այն բոլոր կրթական, անտեսական եւ հասարակական պայմանները, որ առաջ են բերել այս տեսակ հրէշներ:

Վերջացնելով իւր խօսքը, նա կրկին դարձաւ դէպի ինձ, հարցրեց.

— Հիմայ հասկացաք, թէ ով է մեղաւորը, որ դուք, ես եւ այդ բոլոր թշուառները այստեղ բերուեցան:

— Ճշմարիտն ասած, շատ փոքր հասկացայ, — պատասխանեցի ես, ամաչելով իմ տգիտութեան վրայ: — Դուք բոլորովին նոր բաներ էք խօսում:

Նրա սառն դէմքի վրայ երեւաց մի թեթեւ ժպիտ:

— Ձեզ այսպէս է թուում, ասաց նա, — բայց իմ խօսքերը նոր չեն, խելացի մարդիկ այսպէս են մտածում: Հիմայ ես կը խօսեմ ձեզ հետ աւելի պարզ կերպով, հէնց ձեր լեզուով, որ դուք հասկանաք: Ես իբրեւ օրինակ կը վերառնեմ հէնց ձեր անձնաւորութիւնը, որովհետեւ դա աւելի մօտիկ եւ աւելի ծանօթ է ձեզ: Ասացէք, խնդրեմ, դուք ինչո՞ւ սկսեցիք գողանալ, երբ ձեր պատանեկութեան հասակում ընկերացաք այն մանկահասակ սրիկաների հետ:

— Մենք քաղցած էինք ճիում, այդ պատճառով գողանում էինք, որ սովից չմեռնինք:

— Շատ լաւ: Բայց միթէ չէիք կարող դուք, կամ այն մանկահասակ սրիկաները, ձեր աշխատանքով հայ վաստակել եւ չգողանալ:

— Մենք ոչինչ չէինք սովորած:

— Ցեսնո՞ւմ էք, այստեղ կան պատճառներ, որ մարդուն անբարոյական են դարձնում, այն է՝ աշխատանքին անսովոր եւ անընդունակ լինելը:

Ես նա սկսեց երկար բացատրել, թէ ինչ բան է հացի խնդիրը մարդկային հասարակութեան մէջ, թէ ինչո՞ւ մարդիկ հացի համար անբարոյական են դառնում, ասաց, որ ոչ միայն մի անհատը, գործելու անընդունակ լինելով եւ արդար աշխատանքի սովորած չլինելով, դառնում է գող, աւազակ, խաբեբայ, — այլ մի ամբողջ ժողովուրդ կարող է այսպէս դառնալ, եթէ աշխատանքի սովորած չէ: Նա օրինակ բերեց մի քանի ցեղեր, որ պարապում են աւազակութեամբ եւ կողոպտում են իրանց հարեւաններին: Ես հարցրի.

— Դան մարդիկ, որոնք աշխատանքի սովոր են, որոնք ընդունակ են գործելու, բայց դարձեալ գողանում են, խաբում են եւ իրանց վաստակի մէջ անաղնիւ միջոցների են դիմում, օրինակ, Պարսկաստանի խաչագողները եւ հրէաները:

Նա պատասխանեց.

— Ասացէք խնդրեմ, ինչո՞ւ ոչ մի այլ բարեկարգ երկիր, այլ միայն Պարսկաստանը արտադրեց խաչագողները: Այդ խաբեբաները ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ, պարսիկների բռնակալութեան բնական արդիւնք: Մահմեդական կրօնը պիղծ է համարում նրանց. օրէնքի առջեւ հաւասար իրաւունքներ չեն վայելում. նրանց կայքը, նրանց կեանքը ապահով դրութեան մէջ չէ գտնվում. նրանց մշակութեան պտուղները, մահմեդականներից պիղծ համարուելով, չեն վաճառվում, եւ այսպէսով զրկվում են ապրուստի ամենահաստատ միջոցների մէկից, որ մատակարարում է նրանց հողը, — աւելացրէք դրանց վրայ

պարսիկների ճնշումը, հալածանքը, կամայականութիւնը, հարստահարութիւնը եւ ձեզ հասկանալի կը լինեն խաչագողների գոյութեան բուն պատճառները։ Ստրկութիւնը խաչագողների մէջ զարգացրեց նենգաւորութիւն, իսկ ճնշուած, հալածուած եւ հարստահարուած դրութիւնը նրանց անբարոյական դարձրեց։ Հալածանքը զարգացրեց այդ հալածեալների մէջ նոյնպէս հալածասիրութեան ոգի, իսկ հարստահարութիւնը աճեցրեց նրանց մէջ անբարոյական բնազդումներ։ Վերեւից, այսինքն իրանից աւելի զօրաւորից, հարստահարուելով, սովորեցին նրանք հարստահարել իրանցից աւելի տկարներին։ Այսպիսի ճնշումը արտադրեց խաչագողներին։ Պարսիկները հարստահարում էին նրանց կոպիտ ուժով, իսկ նրանք սովորեցին հարստահարել պարսիկներին՝ կամ իրանցից աւելի տգէտ մարդկանց մեղմ խորամանկութեամբ եւ զանազան սատանայական խաբեբայութիւններով։ Ազատ մրցութեան մէջ եւ իրաւունքների հաւասարութեան մէջ նրանք կարող էին ազնիւ կերպով մաքառել։ Բայց որովհետեւ իրաւունքները անհաւասար էին, — մի կողմում կանգնած էր բռնութիւնը, կոպիտ ուժը, իսկ միւս կողմում՝ անձայն հնազանդութիւնը, — այսպիսի յարաբերութեանց մէջ, շատ բնական է, որ մրցութեան համար նրանք կ'ընտրէին անազնիւ միջոցներ։ Միշտ այդ դրութեան մէջ են եղել եւ են Պարսկաստանի խաչագողները։ Այլեւս ինչո՞ւ ենք մեղադրում խաչագողներին, որ նրանք անբարոյական դարձան. չէ՞ որ մահմեդական աշխարհը փչացրեց նրանց։

— Դուք օրինակ բերեցիք եւ Պարսկաստանի հրէաներին, — առաջ տարաւ նա։ — Չէ կարելի այդ ազգը անբարոյական կոչել, որ տուել է մարդկութեանը երկու ամենավսեմ եւ ամենաբարձր կրօնքներ, որոնք բարոյականութեան հիմունքն են կազմում։ Բայց ինչո՞ւ բարոյապէս փչացան հրէաները։ Եթէ նրանց ազատ ասպարէզ տային գործելու, եթէ նրանց չհալածէին, նրանք երբէք ստիպուած չէին լինի խաբեբայութեամբ ապրել։ Հրէան ցեղական հարուստ ձիրքեր ունի, նա խելքի, իմաստութեան, գիտութեան, ճարտարութեան եւ գեղարուեստի ասպարէզում հանդէս է բերել ամենանշանաւոր հանճարներ։ Օրինակ, Գերմանիայում նրա դրութիւնը փոքր ի շատէ ապահով է եղել, եւ նա միշտ նշանաւոր եւ օգտաւէտ է յայտնուել մարդկային գործունէութեան ամեն ճիւղերում։ Իսկ մահմեդական աշխարհում նրան ճնշել են, — նա դարձել է վնասակար։ Սկսեալ Եգիպտոսի փարաւոնների օրերից, աշխարհի երեսին ցիրուցան եղած այդ ազգը հալածվում է։ Հալածանքը սովորեցրեց նրան խաբեբայ լինել, խորամանկ լինել, նենգաւոր լինել։ Այդ յատկութիւնները, որ առաջ եկան նեղուած կեանքի անխուսափելի անհրաժեշտութիւնից, դարձան բնաւորութիւն եւ ժառանգաբար անցան սերունդից սերունդ։ Միայն դժբախտ դրութեան բարեփոխութիւնը կարող էր մաքրել այդ վատ յատկութիւնները։ Եւ որտեղ նրանց դրութիւնը բարեփոխուեցաւ, այնտեղ նրանք լաւացան։ Իսկ Պարսկաստանում եւ առհասարակ մահմեդական աշխարհներում նրանց դրութիւնը դեռ իր աննախանձելի պայմանների մէջն է գտնվում։ Նրանց կայքը յափշտակում են, նրանց բարբարոսաբար չարչարում են, նրանց ամեն կերպ հարստահարում են, — նրանք էլ սովորեցին իրանց զէնքով՝ խելքով հարստահարել իրանցից աւելի միամիտներին։ Այդ դէպքում խաչագողի նշանակութիւնը հրէայից ոչինչով չէ զանազանւում, տարբերութիւնը միայն նրանց գործունէութեան եղանակի մէջն է։

— Հիմայ հասկացա՞ք, — շարունակեց նա, — որ մահմեդականութիւնը լինքն է մեղաւոր, որ պատրաստում է իւր միջից անպիտան մարդիկ: Եւ Պարսկաստանի նման երկիրը միայն կարող էր արտադրել խաչադողներ: Ոչինչ չէ կարելի մի վատ, անարգաւանդ հողից առողջ եւ պաղաբեր բոյսեր սպասել, այնպէս էլ չէ կարելի մի անբարեկարգ երկրից սպասել լաւ մարդիկ: Վատ հողը կարելի է մշակել եւ պաղաբեր դարձնել, — նոյնպէս եւ մի անբարեկարգ երկրի, որպիսին է Պարսկաստանը, հասարակական կազմակերպութիւնը կարելի է այնպիսի պայմանների մէջ դնել, որ եթէ վատերը, անբարոյականները բոլորովին չսպառուէին, գոնէ նրանց թիւը համեմատաբար շատ փոքր լինէր:

Եւ նա երկար խօսում էր այն մասին, թէ ինչ միջոցներ է հարկաւոր գործ դնել, որ աղքատութիւնը եւ մարդկանց չարութիւնը վերացուի, որ բոլոր մարդիկ լինեն կրթուած, բարի, գոհ եւ բախտաւոր: Այդ ամենը բացատրում էր նա այնքան պարզ լեզուով, որ ես այժմ բոլորը հասկանում էի,

Այնուհետեւ ես համարեա ամեն դիշեր խօսում էի նրա հետ եւ շատ բաներ էի սովորում: Նրա հայեացքները, նրա կարծիքները բոլորովին տարբեր էին իմ մինչեւ այնօր լսածներից եւ սովորածներից: Օրինակ, մեր տերտերից շատ անգամ լսել էի, թէ գողութիւնը մեղք է, եթէ գողանալու լինես, մեռնելուց յետոյ հոգիդ կը տանեն դժոխքի կրակի մէջ կ'այրեն: Բայց ես դժոխքի կրակից շատ չէի վախենում, որովհետեւ դեռ նորահաս երիտասարդ էի, մինչեւ մեռնելը շատ ժամանակ ունէի, կարող էի հազար անգամ գողանալ, եւ նոյն տերտերի մօտ մեղքերս խոստովանուելով, նրանից թողութիւն

ստանալ: Եւ այսպէս իմ գործը հեշտացրած էր: Բայց թէ այս աշխարհի, ներկայ կեանքի համար գողութիւնը ի՞նչ միտս ունէր, — տէրտէրը այդ մասին ոչինչ չէր խօսում, նա միայն սպառնում էր դժոխքի կրակով: Բայց Համրը, բացի դժոխքից, նաեւ ասում էր, որ գողը համար հէնց այդ աշխարհը նմանապէս դժոխք է, եւ եթէ ես առաջուց գիտենայի, երբէք չէի գողանալ: Ես շատ էի գողացել, շատ էի խաբել, ահագին գումարներ էի ձեռք բերել, բայց երբէք բախտաւոր չէի եղել:

"Քո անձնական բարիքը պէտք է որոնես ուրիշի բարիքի մէջ„ — ասում էր նա, — "կը ցանկանայիր, որ ուրիշը անէ քեզ այն բանը, ինչ որ քեզ ախորժելի չէ, օրինակ, գողանայ քեզանից, խաբէ, հարստահարէ քեզ, անպատուէ քեզ, ճնշում գործ դնէ քեզ վրայ եւայլն„: — "Չէի ցանկանայ„, — պատասխանում էի ես: — "Ուրեմն դու էլ չպիտի անես ուրիշներին„: — Ծեսոյ հարցնում էր. — "Դու կը ցանկանայիր, որ ուրիշները սիրէին քեզ, օգնէին քեզ, յարգէին քո մարդկային իրաւունքները, չհարստահարէին քեզ„: — Կը ցանկանայի„: — "Ուրեմն դու էլ եւ միեւնոյն կերպով պէտք է վարուես ուրիշների հետ„: Նա ասում էր. — "Մեր օգուտը ուրիշի օգտի մէջն է, միասելով նրան, միասում ենք մեզ„:

Բայց քաւոր Պետրոսը, իմ նախկին դաստիարակը, բոլորովին հակառակն էր խօսում. նա ասում էր. — "Մենք մեր անձի համար ենք ապրում. մարդը պէտք է հոգ տանի իւր անձի եւ իւր բարօրութեան համար միայն, բայց երբ մի ուրիշը արգելք է լինում իմ բարօրութեանը, ես պէտք է աշխատեմ նրան ոչնչացնել, որ իմ անձը լաւ ապրի„: Ես այժմ հասկանում էի, թէ ո՛ր

աստիճան անբարոյական նշանակութիւն ունէին այդ խօսքերը, թէ որքան միւսասակար էին նրանք: Դիտցուք թէ, ես իմ անձի բարօրութեան համար ոչնչացնեմ մի ուրիշին, ինձանից աւելի տկարին. չէ՞ որ կը գանուէր մէկը, ինձանից աւելի զօրեղը, նա էլ իւր բարօրութեան համար ինձ կ'ոչնչացնէր, եւ այսպէս, զօրեղը անզօրին սպառելով, մարդկային հասարակութեան մէջ կը տիրէր ընդհանուր ամայութիւն, ընդհանուր դժբախտութիւն:

Համրը միշտ իւր խօսքերի մէջ օրինակ էր առնում իմ անձը, կարծես, ես ամբողջ մարդկութեան ներկայացուցիչը լինէի: Ասում էր, քո անձը քեզ աւելի մօտ է, դու նրա հետ աւելի ծանօթ ես, եւ քո անձի օրինակով կարող ես դատել բոլոր մարդերի վրայ: Ինձ երեւում էր, որ ես գրաւել էի նրա ուշադրութիւնը: Նա որքան սառն էր, որքան ծածկամիտ էր դէպի իւր ընկերները, այնքան եռանդոտ կերպով սկսեց հոգ տանել իմ զարգացման վրայ: Միանգամ ասաց ինձ.

— Մուրադ, դու այժմ գիտես (նա հիմայ ինձ հետ դու-ով էր խօսում) թէ ինչ է պատճառը, որ մարդիկ անբարոյական եւ միեւնոյն ժամանակ անբախտ են դառնում. դու գիտես նաեւ, որ մի մարդու անբախտութեան պատճառները հասկանալու համար, պէտք է ծանօթանայ նրա կեանքի պատմութեան հետ: Եւ այսպէս, մի ամբողջ ազգի անբախտութեան պատճառները հասկանալու համար, պէտք է նոյնպէս ծանօթանալ նրա պատմութեան հետ: Որովհետեւ մի ազգ մարդկութեան մէջ, նոյն տեղն է բռնում ինչ որ անհատը հասարակութեան մէջ: Եւ նա ազգերի պատմութիւնից բացատրեց ինձ շատ կրթիչ բաներ:

Երկար նա խօսում էր կրօնքի, լեզուի եւ գրականութեան մասին, բացատրում էր, թէ մի ազգի գրականութիւնը ինչ ուղղութիւն կարող է տալ նրա կեանքին եւ գործունէութեանը, բացատրում էր մեր նոր գրականութեան սխալ ընթացքը եւ նրա միւսասակար ազդեցութիւնը ժողովրդի վրայ: Նրա ասածները ինձ այն աստիճան գրաւեցին, որ ես վճռեցի, որքան կարելի է, լաւ սովորել հայոց լեզուն: Իմ լեզուն առաջ շատ կոշտ եւ ռամկական էր: Թուլքերէն եւ պարսկերէն բառերով լի էր իմ խօսակցութիւնը: Ես աշխատում էի այնուհետեւ բուն հայկական բառեր գործածել: Ես շատ շուտ սովորեցի բառերը, օրինակ, մի գիշերուայ մէջ սովորեցի այդ բոլոր բառերի նշանակութիւնը. անհատ, ընտանիք, ցեղ, ազգ, հայրենիք, պետութիւն, քաղաքակրթութիւն, լուսաւորութիւն եւ ուրիշ շատ բառեր: Նա ասում էր, որ այդ բառերի վրայ ամբողջ գլուխներ են գրուած, բայց նա մի քանի խօսքերով, բացատրում էր ինձ դրանց իմաստը: Ափսոս, որ թոյլ չէր տրուած մեզ մօտ գիրք, թուղթ, գրիչ ունենալ, թէ չէ, ես շատ բան կը սովորէի նրանից:

"Գիտութիւնը եւ ուսումը միայն միջոցներ են մի ժողովրդի համար հասնել բարօրութեան, բայց ոչ բարօրութեան առարկան", — ասում էր նա, եւ սկսում էր բացատրել, թէ ուրիշ ինչ պայմանների մէջ պէտք է դրուած լինի ժողովրդի կեանքը, որ կարողանայ լինել նա բախտաւոր: Երկար ու երկար խօսում էր հողի ու նրա մշակութեան պայմանների մասին, արհեստների կատարելագործութեան մասին, գրամատէրների գործունէութեան մասին եւայլն: Աշխատանքը նա աւելի բարձր էր դասում, քան ամեն ինչ: "Աշխատանքը կեանք է, ասում էր նա, իսկ անգործութիւնը՝ մեռելութիւն":

Նրա խօսակցութիւնը այնքան հաճելի էր, որ ես ժամերով լսում էի նրան եւ չէի կշտանում: Ոչ մի ան-

միտ բառ չէր դուրս թռչում նրա բերանից: Նա գիտէր խիստ լուրջ եւ խորին կերպով վերաբերուել դէպի ամէն մի հարց: Ես իմ կեանքում առաջին անգամ տեսնում էի մի այնպիսի երիտասարդ, որը անսահման բարութեան հետ ունէր եւ հմտութիւնների մեծ պաշար: Նա գիտէր մի քանի եւրոպական եւ ասիական լեզուներ եւ, որքան ասես, խելացի մարդ էր:

Իր մասին նա ոչինչ չէր խօսում: Մի քանի անգամ հետաքրքրուեցայ նրա անցեալով, բայց ստանում էի միշտ անորոշ պատասխաններ:

— Դուք բարի եւ ազնիւ մարդ էք, — մի օր ասեցի նրան, — դուք չէիք կարող ինձ նման եղեռնագործ լինել, պատմեցէք, խնդրեմ, ինչ յանցանքի համար աքսորեցին ձեզ:

— Այդ մի հարցրէք... պատասխանեց նա ոչ սակաւ յուզուած կերպով:

— Գոնէ ասեցէք, դուք ո՞վ էք եւ ո՞ր տեղացի:

— Այդ եւս մի հարցրէք...:

Որպիսի տխուր դաղտնիք էր թագնուած այն անբախտ երիտասարդի ճակատագրի մէջ: Ինչ էլ որ լինէր, ես համոզուած էի, որ նա ազնիւ մարդ էր, եւ նրա բարեկամութիւնը ինձ համար մեծ մխիթարութիւն էի համարում: Այդ էր պատճառը, որ քաւոր Պետրոսի երկրորդ նամակը ստանալուց յետոյ, ես ամենևին չէի մտածում օգուտ քաղել նրա օգնութիւնից եւ նրա ձեռքով ազատութիւն գտնել: Եկաւ գատիկը, անցան գատկի տօները, բայց ես ամենևին չգնացի եղեւիններին անտառը, Կարմիր բլուրի մօտ: Նա, որ ինձ մոլորեցրել էր, նա, որ ինձ ցոյց էր տուել շատ գործի շատ ճանապարհները, այժմ աշխատում էր փրկել ինձ: Բայց ինձ պէտք չէր փրկուել

թիւնը նրա ձեռքից ընդունել: Ես արդէն բարոյապէս ինձ փրկուած էի համարում, սկսեալ այն օրից, որ իմ նոր դաստիարակի շնորհիւ մկրտուեցայ կրթութեան նոր աւազանի մէջ: Ես իմ շրթանների մէջ իմ անձը բախտաւոր էի համարում, որ միշտ կարող էի տեսնել նրան, միշտ կարող էի վայելել նրա բարեկամութիւնը եւ լսել նրա իմաստալից խրատները:

Աւազակապետի պատմութիւնը ինձ վրայ խիստ տխուր տպաւորութիւն թողեց: Նա սիրել էր մէկին, նրան նուիրել էր իւր անձը, իւր հոգեկան բոլոր քաղցր զգացմունքները: Նրա սիրոյ առարկան այլեւս չկար. բնակվում էր շատ հեռու, ոգիների աշխարհում: Բայց այդ դժբախտ մարդը դեռ շարունակում էր սիրել նրան, դեռ նրան յիշելիս, նրա այրական դէմքը մռայլվում էր տխրութեան թախիծներում: Ես նոյնպէս սիրում էի մէկին, բայց իմ սիրոյ առարկան գուցէ դեռ կենդանի էր, գուցէ դեռ մտածում էր իմ վրայ: Այժմ ո՞րտեղ էր անհայր, անմայր, անտուն, անտեղ եւ անօգնական որբիկը...: Ես շատ անգամ մտաբերում էի նրան եւ իմ սիրտը լցվում էր անշիջանելի կրակով: Աչքերիս արտասուքը չէր զօրում հանգցնելու այդ կրակը: Դատապարտեալը մոռանում է ծնողներ, ազգականներ, բարեկամներ, մոռանում է իւր հայրենիքը, բայց սիրած կնոջ յիշատակը մնում է նրանից անբաժան: Սիրած կնոջ կորուստը աւելի ծանրացնում է նրա շրթանները, աւելի զգալ է տալիս իւր թշուառ դրութիւնը...:

Առժամանակ Համրի բարեկամութիւնը ինձ մոռանալ տուեց Ենէնէին, եւ սիրելի աղջկայ յիշատակը խիստ սա-

կաւ էր խառարեցնում իմ դժբախտ դրութեան լոպէները։ Բայց դա երկար չտեւեց, ես կրկին անձնատուր եղայ այն սովորական հոգեմաշ թախծութեանը, որ Նէնէից բաժանուելուց յետոյ միտապէս տանջում էր ինձ։ Միանգամ Համրը գտաւ ինձ այսպիսի տրամադրութեան մէջ։

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, — կարեկցութեամբ հարցրեց նա։

Ես նրանից թէեւ ծածուկ ոչինչ չունէի, բայց իմ կեանքի բոլոր անցքերը նրան պատմելու ժամանակ, ոչինչ չէի յիշել Նէնէի մասին։ Այժմ ինչպէս կարող էի թագցնել նրանից իմ սիրտը եւ նրան մաշող ցաւերը։ Ես պատմեցի նրան բոլորը, ինչ որ յայտնի է ձեզ Նէնէի մասին, թէ որպէս գայլ նրան անտառում, այն լոպէում, երբ մի չարագործ պատրաստվում էր սպաննել նրան, որպէս ազատեցի նրա կեանքը եւ բերեցի քաւոր Պետրոսի մօտ, թէ որպէս այդ վերջին չարագործը նոյնպէս հրամայեց ինձ սպաննել նրան, եւ որպէս ես խաբեցի նրան, յայտնելով, թէ հրամանը կատարուած է, բայց աղջկան թագցրի իմ հօր խրճիթում, — եւ վերջապէս, որպէս իմ վարմունքը ծնեցրեց անմեղ աղջկայ սրտում սէր դէպի ինձ, եւ այնուհետեւ նա չբաժանուեցաւ ինձանից եւ այն ժամանակ, երբ ես կալանաւորեցայ, բանտարկուեցայ եւ դատապարտուեցայ մշտական աքսորի։

Նախ սէրը, որպէս երեւում էր, շատ զգալի չէր Համրին, նա իւր կեանքում կամ երբէք չէր սիրել, կամ եթէ սիրել էր, կրակը վաղուց արդէն հանգել էր նրա սրտում։ Այդ էր պատճառը, որ նա խիստ սառնութեամբ լսեց իմ պատմութիւնը, վերջը նկատելով.

— Այդ պատմութեան մէջ ես գովում եմ ձեր առաքինութիւնը, դուք ազատել էք մի թշուառի կեանք։

— Բայց նրան կորցնելը այժմ իմ կեանքը անտանելի է դարձրել։

— Այդ ես հասկանում եմ... այդպիսի հանգամանքներում մարդուն փրկում է մի բան միայն — աշխատանքը։ Աշխատանքը մոռանալ է տալիս սրտի կսկիծները, որ առաջ էին եկել սիրոյ ալաքներից։

Նրա սառն փիլիսոփայութիւնը այժմ ինձ չէր գրաւում։ Ես տուեցի խիստ յուսահատական պատասխան.

— Այժմ մահը, միայն մահը կարող է հանգստացնել ինձ, աշխատանքից ես ձանձրացել եմ, մանաւանդ այսպիսի ապարդիւն աշխատանքից։

— Ոչինչ աշխատանք ապարդիւն չէ, երբ մարդկութեանը որեւիցէ օգուտ է բերում։

— Մեր աշխատանքը ինչ օգուտ է բերում։

— Երեւի դու մոռացել ես, որ միանգամ ես քեզ ասացի, որ մեր օգուտը ուրիշի օգտի մէջն է, եւ նոյնը փոխադարձաբար։ Ու եթէ մենք ուղղակի կերպով չենք շահվում մեր աշխատանքից, կը շահուին, անտարակոյս մեզ նմանները, այսինքն՝ ուրիշ մարդիկ։ Մենք փորում ենք լեռների սիրտը եւ այնտեղից դուրս ենք բերում պղինձ, երկաթ, ոսկի եւ արծաթ։ Այդ մետաղներով բացվում են դպրոցներ, կառուցանում են արհեստանոցներ եւ այլ բարեգործական հիմնարկութիւններ։ Նրանց մէջ ուսում են առնում, կրթվում են եւ լաւ մարդիկ են դառնում։

Ես այնքան զբաւուեցայ այդ վիճաբանութեամբ, որ մոռացայ Նէնէին, մոռացայ եւ նրա սէրը, որի առիթով սկսուել էր վիճաբանութիւնը։ Համրը, իւր սառնասրտութեան հակառակ, աւելի տաքացած էր։ Նա ուղիղ իմ աչք երի մէջ նայելով, ասաց.

— Դուք (երբ բարկանում էր նա, սկսում էր դուք-ով խօսել) միշտ մոռանում էք մեր անցեալ խօսակցութիւնները, որոնց մէջ մենք միշտ համաձայնուել ենք միմեանց հետ: Ես կրկին կը դառնամ դէպի ձեր անձնատուրութիւնը եւ ձեր անձի օրինակով կը բացատրեմ իմ մտքերը: Ասացէք, խնդրեմ, եթէ ես այժմ մոռացմամբ իմ քսակը ձեզ մօտ թողնէի, դուք ի՞նչպէս կը վարուէիք նրա հետ:

— Ես կը վեր առնէի, կը պահէի եւ կրկին ձեզ կը վերադարձնէի:

— Իսկ եթէ այդ պատահելու լինէր մի քանի տարի առաջ:

— Ձեզ կը սպաննէի եւ կը խլէի ձեր քսակը:

— Այդ փոփոխութիւնը ո՞րտեղից ծագեց ձեր մէջ:

— Դուք ինձ սովորեցրիք, որ գողութիւնը վատ բան է:

— Հիմայ տեսնո՞ւմ էք, ես ձեզ սովորեցրի, թէ գողութիւնը վատ բան է, չէ՞ որ այդ իմ օգտի համար արեցի, որովհետեւ դրանով ես ապահովացրի իմ քսակի դրութիւնը: Չէ՞ որ բոլոր վատ մարդիկ ձեզ նման են. նրանք էլ միեւնոյն ուղեղն, միեւնոյն նեարդային կազմուածքն ունեն, որպէս դուք: Եթէ մենք կը սովորեցնենք նրանց լաւ մարդիկ լինել, դրանով օգուտ կը բերենք մեզ — ինքներիս, որովհետեւ նրանք կը դադարեն մեզ չար գործելուց: Հիմայ հասկանո՞ւմ էք, թէ ի՞նչ եղանակով ենք օգտվում մենք մեր դուրսփորած ոսկուց եւ արծաթից:

— Հասկանում եմ. նրանցով մարդիկ կրթութիւն են ստանում եւ դադարում են իրանց նման մարդկանց կողոպտել:

— Միայն կրթութիւնը չէ, ուրիշ շատ լաւ բաներ են կատարվում մեր աշխատանքի արդիւնքով: — Եւ նա սկսեց երկար խօսել այդ առարկայի վրայ եւ իւր դատողութիւնները վերջացրեց հետեւեալ ասացուածքով. "Մէկը ամենքի համար, ամենքը մէկի համար":

— Այժմ հասկացայ, — պատասխանեցի ես, — բայց ինչո՞ւ դու մեր միւս ընկերներին եւս չես սովորեցնում ինձ նման բարի լինել:

Նա դժուարացաւ պատասխանել, եւ րոպէական շփոթութիւններից յետոյ՝

— Այդ թողնենք... — ասաց նա, խօսքը փոխելով, — լսիր. Մուրադ, միայն բարի լինելով չէ, որ մարդը կարող է ուրիշներին օգուտ բերել եւ ինքը բախտաւոր լինել: Մարդիկ հրեշտակները չեն, որ միայն բարի լինելով կարողանան լաւ ապրել: Մարդը պէտք է գործէ, իսկ գործելու համար պէտք է մի բան սովորած լինի: Այդ մարդիկը — նա ցոյց տուեց դատապարտեալներին, — եթէ անբարոյականացան, եթէ դժբախտացան, գլխաւոր պատճառն այն էր, որ ոչինչ հիմնաւոր բան սովորած չէին: Գոնէ այժմ սովորեցնէին...:

Ը.

ՍՊԻՏԱԿ ՏՆԱԿԸ

Դատապարտեալների ֆերմայի վրայ, գինուորանոցից եւ զանազան արքունի շինուածքներից յետոյ, աւելի աչքի էր ընկնում մի սպիտակ տնակ, որը շատ մօտ էր հիւանդանոցին: Այդ առանձնացած բնակարանը միայն երեք սենեակներ ունէր, փոքրիկ լուսամուտներով եւ լերդագոյն ներկած կտուրով: Մի կողմում գտնվում էր ծառաների կացարանը, որի մօտ էր խոհանոցը:

Ներեւում էր, որ վաղուց մարդիկ չէին բնակուել այստեղ: Հակի փոքրիկ պարտէզը, որ զարդարած էր մրգաբեր ծառերով, ճնացել էր անհնձակ, հովանոցը քայքայուել էր, փայտեայ վանդակապատը, շատ տեղ կոտրատուած էր, փտած սանդուղքից ցած էին թափուել մի քանի տախտակներ:

Սենեակների ներքին դրութիւնը շատ նման էր փոստային կայարանի, ուր ուշ-դիշերով եկած ճանապարհորդը իւր բոլոր ծանրութիւնները խառնիխուռն ածած է լինում այս կողմ եւ այն կողմ, ուշադրութիւն չդարձնելով նրանց կարգի դնել, որովհետեւ առաւօտեան կրկին պէտք է ճանապարհ ընկնի, կրկին պէտք է նրանց կարգը խանգարուի:

Այժմեան բնակիչները նոյնպէս նորեկներ էին, նրանք իջեւանել էին այստեղ հէնց նոյն գիշերը: Նրանց ծանրութիւնները նոյնպէս խառնիխուռն ածած էին այս կողմ եւ այն կողմ, ճանապարհի փոշին դեռ նստած էր նրանց վրայ: Բայց դրանք գնալու չէին, դրանք պէտք է մնային այդ բնակարանի մէջ:

Առաւօտ էր, խոնաւ, մառախլապատ առաւօտներից մէկը: Փոքրիկ բնակարանում դեռ քնած էին: Միայն սենեակներից մէկի դուռը կամաց բացուեցաւ եւ շէմքի վրայ յայտնուեցաւ մի բարձրահասակ օրիորդ: Նա նայեց իւր շուրջը, հանդարտ քայլերով ցած իջաւ սանդուղքներից, անցաւ պարտիզի տատասկներով պատած ճեմուղիքը, անցաւ կիսաւեր հովանոցի մօտից եւ մերձեցաւ փայտեայ վանդակապատին: Այստեղից սկսեց նայել դէպի շրջակայքը: Դիշերով եկած լինելով, նա դեռ ոչինչ չէր տեսել. այժմ առաւօտեան լուսով ցանկանում էր լաւ նայել այն աշխարհի վրայ, ուր դուցէ ընդերկար ստիպուած կը լինէր մնալ:

Առաւօտեան թանձր մառախուղը հետզհետէ նօսրանում էր, բայց դեռ եւս աղօտ կերպով նկարվում էին հեռաւոր առարկաները: Օրիորդը նայում էր, խորին անձկանօք նայում էր եւ, կարծես, զայրանում էր, որ ոչինչ չէր տեսնում:

Նրան կարելի էր ոչ աղախին համարել եւ ոչ տան աղջիկ: Նա ոչ աղախնի անվստահ կայտառութիւնն ունէր եւ ոչ տան աղջկայ նազելի վստահութիւնը: Նա աւելի նման էր տանտիկնոջ մի հեռաւոր ազգականին, որ զրկուած էր ծնողներից, որին թէեւ սիրում են, փայփայում են, բայց զգալապէս զգում է, որ ինքը որը է, որ իրան հոգու համար են պահում: Նրա թուխ դէմքը, սեւ, կրակոտ աչքերը, հարուստ, մթնագոյն գիսակները ամենեւին չէին համապատասխանում հեռաւոր հիւսիսին:

Նա կանգ էր առել, ջերմ, արեգնաւէտ հարաւից, ուր արիւնը մշտապէս եռ է գալիս, ուր դէպքերը սառնում են մոգ վարդի գոյն: Բայց որքան լոյս եւ կեանք կար այդ մթին աչքերի մէջ, որքան հրապուրանք այդ թախծալի դէմքի վրայ: Նա ներկայացնում էր մի աշխոյժ, անսանձ բնաւորութիւն, պղտոր տխրութեան ամպերով, թառամած դառն յուսահատութեան մէջ:

Նա շարունակում էր նայել:

Վերջապէս շողացին արեգակի առաջին ճառագայթները եւ երեւան հանեցին շրջակայ տեսարանները: Ահա այնտեղ, հալոցների բարձր ծխանիներից, թուխ ամպերի նման, դուրս էր հոսում թանձր մուխը եւ նսեմացնում էր դեռ նոր լուսաւորուած հորիզոնը: Մարդիկ մրոտած հագուստով, մրոտած դէմքով, սեւ, որպէս ուրուական, թափառում էին ծխային մթնոլորտի մէջ: Այդ տեսարանը սարսափ ազդեց օրիորդի վրայ: Հալոցներից ոչ այնքան հեռու, հանքային քարերի կոյտերի մօտ, գետնի վրայ նստած էին նոյնպէս մռայլոտ դէմքեր: Դրանք ծանր մուրճերով ջարդում էին, մանրում էին քարի մէջ թաղուած մետաղը, եւ պատրաստում էին հալելու համար: Օդը թնդում էր հարուածներից: Ոմանք փոքրիկ սայլակներով մանրած մետաղը քարշ էին տալիս, տանում էին ու ածում առանձին կոյտերի վրայ, որոնք բազմաթիւ բլրակների ձեւ էին ստացել: Այդ բլրակներից մի քանիսը ծխում էին: Ածուխը եւ ածումբը այրվում էր նրանց մէջ, եւ ուժասում, մաշում էր հանքային աւելորդ մասերը: Օդը այսաւեղ խեղդում էր ածումբի կծու հոտով:

Այդ կողմում ամէն առարկայ սեւ գոյն ունէր, կարծես, ամէն ինչ սուգ էր զգեցած: Մետաղի սեւ կղկղանքով պատած էին ճանապարհները, սեւ փոշին ծածկել էր գործարանների կտուրները, սեւացած էին եւ ճնճղուկները, որ բոյն էին դրել այդ շինուածքների ծածկի տակ:

Ամէն ինչ սեւ էր, ամէն ինչ մրոտած էր: Միայն կրակն ու բոցը, որ բորբոքւում էր հալոցների մէջ, ներկայացնում էր մի սոսկալի հակապատկեր ընդհանուր նսեմութեան մէջ: Այդ դժոխքում մարդիկ այրվում էին բայց չէին խորովւում: Հալած մետաղը ծփում էր բովերի մէջ, որպէս հրեղէն լճակ: Երկաթեայ երկայն շերեփներով վեր էին առնում բաց-դեղնագոյն հեղուկը եւ ածում էին արուրեայ կաղապարների մէջ: Քրտինքը յորդ վտակներով հոսում էր գործաւորների սարսափած դէմքից, բոցը խանձում էր նրանց կիսախարշ երեսները:

Օրիորդը դէմքը շուռ տուաց զարհուրելի տեսարանից:

Միւս առարկաները չէին հետաքրքրում նրան: Ահա այնտեղ, պաշտօնավար զինուորի հաստլիկ կինը, փէշերը վերքաշած, բոբիկ ոտներով, ցեխը կոխ տալով, վերադառնում էր մերձակայ վտակից, եւ ուսի վրայ դրած լծակի երկու ծայրերից թիւթեղեայ սաթլները քարշ տուած, ջուր էր բերում: Այնտեղ պառաւը մրմրթալով քշում էր դէպի դաշտ իւր մի հատիկ կովը: Փոքր ինչ հեռու, մի ստահակ տղայ, առանց անդրավարտիքի, միայն շապիկը հագին, նստած էր մերկ ձիու վրայ, եւ նոյնպէս մերկ ոտներով նրա կողքերը ծեծելով, բոլոր ուժով վազեցնում էր իւր նիհար եաբուն, Աստուած ոչ դիտէ, թէ դէպի ուր: Բայց գլխի մազերը ծածանվում էին, սաստիկ շփուելով օդի հետ: Մի կողմում սագերի սպիտակ երամը, իրանց լայն թաթիկների վրայ օրօրուելով, եւ մի առանձին բաւականութեամբ կչկչալով, դիմում էր

դէպի մերձակայ ձահիճը: Փողոցում գիւղացու մանկահասակ աղջիկը, մի քանի գրօշներ ափի մէջ սեղմած, վազ էր տալիս դէպի մերձակայ դուքանը քառորդ Ֆունտ շաքար գնելու: Նրան հանդիպեց մի գրագիր դեղին կօճակներով, ինչոր ասաց, աղջիկը հայհոյեց նրան եւ փախաւ:

Ուրիշ ոչինչ չէր տեսնում օրիորդը. միայն այստեղ ու այնտեղ երեւում էին մռայլոտ շինուածքներ հազիւ նշմարելի լուսամուտներով, որոնք այնքան առանձնացած էին, կարծես, վախենում էին մօտենալ միմեանց: Պահապան զինուորները, չափաւոր քայլերով, անցուդարձ էին անում դռների առջեւ: Օրիորդի արտասուքով լցուած աչքերը յառած էին դէպի այդ կողմը: Երկար նայում էր նա եւ, կարծես, աչքերով աշխատում էր ներս թափանցել այդ մռայլոտ շինուածքների հաստ պատերից: Ծանր, երկաթապատ դռներից մէկը բացուեցաւ եւ դրսում յայտնուեցաւ մի մոխրագոյն խումբ: Շրջապատուած զինուորներով, խումբը շարժուեցաւ դէպի այն կողմը, ուր կանգնած էր սպիտակ տնակը: Նրանք կրում էին բահեր, բրիչներ եւ փորելու ղանազան գործիքներ: Բայց ինչո՞ւ հսկողութեան ներքոյ էին տանում այդ թշուառ բանուորներին: Օրիորդի սիրտը սկսեց բաբախել: Նա պատրաստ էր վազել, գնալ, մերձենալ նրանց եւ մօտից, շատ մօտից նայել նրանց վրայ: Բայց նրա ոտները չհնազանդուեցան, ծնկները դողացին, գլուխը պտտուեցաւ, աչքերի առջեւ մթնեց. նա թուլացաւ, ընկաւ պարտիզի վանդակապատի վրայ: Մոխրագոյն խումբը հեռուից անցաւ: Ուշաթափ օրիորդը ոչինչ չտեսաւ, միայն նրա ականջներին, որպէս երազի մէջ, զարկում էին ծանր շղթաների անհերդաշնակ հնչիւնները...:

Յօրին ապշութեան մէջ նա ուշի եկաւ: Անրջային տեսիլքը անցել էր: Նրա առջեւ նկարուեցան միեւնոյն տխուր, սրտաբեկ տեսարանները: Նա դանդաղ, դողդոջուն քայլերով սկսեց դիմել դէպի այն սենեակը, որտեղից դուրս էր եկել: Պարտիզն միջով անցնելու ժամանակ նրա շրջագգեստի ներքին եզրը բռնուեցաւ վարդենու փշից եւ պատառուեցաւ: Նա այն աստիճան յուզուած էր, որ ոչինչ չզգաց: Սենեակի դրան մօտ հանդիպեց նրան սպասաւորը, հարցնելով.

— Պարոնները վե՞ր են կացել:

— Չգիտեմ:

— Սամովարը եփ է գալիս:

— Բերեցէք:

Նա մտաւ սենեակը:

Սպասաւորը մի քանի րոպէից յետոյ սամովարը ներս բերեց, դրեց սեղանի վրայ եւ լուռ դուրս գնաց: Օրիորդի տրամադրութիւնը, կարծես, նրա վրայ եւս ճնշում էր գործում:

Նա բացալեց յատակի վրայ ընկած անդուկներից մէկը, միւսը, նայեց ճամպանի մէջ, նայեց ճանապարհորդական զամբիւղի մէջ, որտեղ էր, թէ որտեղ է դրած թէյը: Շաքարն էլ անհետացել էր նրա աչքերից: Յիշողութիւնը դաւաճանում էր նրան: Վերջապէս գտաւ միեւնոյն փոքրիկ անդուկի մէջ, ուր տասն անգամ նայել էր: Սկսեց թէյ պատրաստել: Գործը փախչում էր նրանից. ձեռքերը չէին խոնարհվում. ջուրը վխթվում էր, բաժակը ցած էր ընկնում, աղմուկ էր բարձրացնում: Հազիւհազ կարողացաւ նա տաք ջրով լցրած թէյամանը սամովարի վրայ դնել: Գլուխը դարձեալ պտտվում էր: Նա հեռացաւ, նստեց լուսամուտի պատուհանում. եւ

ձեռքը նեցուկ տալով գլխին, սկսեց անխորհուրդ կերպով նայել դէպի պարտէզը: Արտասուքը հեղեղն նման թափվում էր նրա խոշոր աչքերից եւ զովացնում էր բորբոքուած երեսը եւ աւելն եւս բորբոքուած սիրտը...:

Կից սենեակում արդէն զարթել էին: Մանկահասակ տիկինը վեր էր կացել, իսկ նրա երիտասարդ ամուսինը դեռ պառկած էր մահճակալի վրայ:

— Դէ վե՛րկաց, — շտապեցնում էր նրան տիկինը, — վերկաց, լուացուիր, հագնուիր, դու այս առաւօտ պէտք է ներկայանաս քո մեծաւորին:

— Դա մի այնքան շտապելու գործ չէ, — պատասխանեց երիտասարդը, աւելի ամուր կերպով փաթաթուելով ամառուայ վերմակի մէջ: — Ինչուց էլ կարող եմ ներկայանալ:

— Այստեղ մեծաւորները, երեւի, խիստ պահանջողներ են, — նկատեց տիկինը:

— Իսկ ես խիստ պահանջը հեշտութեամբ չեմ վճարում, — ասաց ամուսինը:

Տիկինը, կարծես, ամուսնի յամառութիւնը պատժելու համար, վառեց մի բարակ պապիրոս, սկսեց ծխել: Ամուսինը, այդ նկատելով, սկսեց աղաչել նրան.

— Թո՛ղ տուր, ի սէր Աստուծոյ, քանի՛ անգամ ասել եմ քեզ, որ թէյից առաջ չծխես: Դու ամբողջ գիշերը անհանգիստ էիր, դարձեալ հազում էիր:

Տիկինը ուշադրութիւն չդարձրեց եւ, ամուսնուն աւելի ջնդրացնելու համար, մօտեցաւ նրա մահճակալին, ընկաւ նրա կուրծքի վրայ, ասելով.

— Ես քո բժշկութեանը չեմ հաւատում, չեմ հաւատում: Այդ միջոցին նա աւելի սաստկութեամբ ներս քաշեց պապիրոսի ծուխը եւ ապա իւր գունատ շրթունքների միջից փչեց երիտասարդի խիտ մազերի վրայ, որոնք կորան մուխի մէջ:

— Այդ ի՛նչ երեխայութիւն է, — ասաց երիտասարդը, եւ գլուխը վեր բարձրացնելով, իւր մանկահասակ կնոջ անմեղ չարութիւնը վարձատրեց ջերմ համբոյրներով:

Դրանք այն ամուսիններից էին, որ մինչեւ մահ, մինչեւ խորին ծերութիւն ապրում են իրանց ամուսնութեան մեղրամիսի մէջ: Արդէն հինգ տարի էր, որ միասին էին ապրում, իսկ այսօր, կարծես, առաջին գիշերուայ առաւօտը լինէր նրանց համար:

Երիտասարդը բժիշկ էր: Նա ընտրել էր ծառայութիւն կայսրութեան այդ հեռաւոր անկիւնում ոչ թէ այն նպատակով, որ ծառայութիւնը այսպիսի խուլ տեղերում առաւելութեամբ էր վարձատրվում, ոչ, այլ նա աւելի բարոյական վարձատրութիւն էր սպասում այստեղ: Նրան մի առանձին բաւականութիւն էր պատճառում բժշկել դատապարտեալներին, — այդ հօր, մօր, բարեկամների խնամատարութիւնից զրկուած թշուառներին:

Նրա մանկահասակ կինը նոյն մարդասիրական զգացմունքն ունէր: Նա այն բարեսիրտ եւ խելացի կիներից էր, որոնց նմանները խիստ հազուագիւտ են լինում ամուսնական կեանքում, — որոնք չեն ձգտում հաճոյանալ տղամարդին միմիայն կանացութեամբ, որոնք չեն բաւականանում օգնել նրան, բաժանել նրա հոգսերը, միմիայն խնայող տնտես եւ լաւ տանտիկին լինելով, — այլ որոնք պաշտում են տղամարդի իդէալները, նպաստում են նրանց իրագործուելուն, վառ եւ մշտաբորբոք դրութեան մէջ են պահում նրա հոգին իւր բարձր, մարդասիրական գաղափարներով: Այսպիսի լծորդութեան

մէջ կինը դառնում է այն գերագոյն ոգին, որից միշտ ներշնչուած է լինում տղամարդը, այսպիսի լծորդութեան մէջ տղամարդի եռանդը երբէք չէ մեռնում:

Դեռ եւս օրիորդ էր նա, դեռ եւս նոր էր ծանօթացել իւր ապագայ ամուսնացուի հետ, սկսեց բժշկական գրքեր կարդալ, յաճախել հիւանդանոցները եւ ներկայ գտնուել անդամահատական գործողութիւնների: Պատերազմի ժամանակ մտաւ նա "գթութեան քոյրերի" հասարակութեան մէջ, եւ գնդակների ու ռումբների տարափի ներքոյ՝ փաթաթում էր վիրաւոր զինուորների վէրքերը: Այստեղ նա նորից հանդիպեց իւր ամուսնացուին, այստեղ սիրեց նրան եւ սիրուեցաւ:

Ոչ եկեղեցական եւ ոչ քաղաքական ամուսնութեամբ կապուած չէին նրանք: Նրանց կապում էր մտքերի, ձգտումների եւ գաղափարների համերաշխութիւնը: Բնութիւնը նոյնպէս գլացաւ օրհնել նրանց ամուսնութիւնը այն շաղկապով, որ կոչվում է բնական կապ. — զաւակներ չունեցան նրանք: Զաւակը սիրոյ աւելի հաստատ գրաւականն է ամուսինների մէջ, մանաւանդ այն դէպքում, երբ օրէնքը չէ կապում նրանց:

Հետաքրքիր պատահարները պարզեւեցին նրանց մի զաւակ, թէեւ իրանց արիւնից չէր: Դա այն օրիորդն էր, որ, միւս սենեակում նստած լսց էր լինում: Օրիորդը պատկանում էր այն ցեղին, որ տուն, տեղ, հայրենիք չունի, որի հայրենիքը ամբողջ աշխարհն է, որը թափառում է ամեն տեղ: Նա գնչու (ցիգան) էր. նա բնութեան որդի էր: Ոլիսի ջերմ սիրով տիկինը ընդունեց իւր մօտ այդ վայրենի այծեամին, որպիսի եռանդոտ հոգատարութեամբ սկսեց նա կրթել նրան, ուղղել նրա վատ սովորութիւնները: Ամեն անգամ, երբ մի նոր փոփոխութիւն էր նկատում նրա մէջ դէպի լաւը, դէպի աղնիւը եւ դէպի մարդավայելը, առաքինի կնոջ սիրտը լցվում էր անսահման բերկրութեամբ: Նա իսկոյն վազում էր ամուսնի մօտ եւ պատմում էր իւր որդեգրուհու նոր յառաջադիմութիւնը: "Նրա մէջ թագնուած ձիրքեր եւ գեղեցիկ յատկութիւններ շատ կան", — ասում էր ամուսինը, ոչ սակաւ ուրախանալով, եւ տիկնոջ յոյսերը աւելի հաւանականութիւն էին ստանում: Շատ օրեր, ժամերով նստած, պարապում էր նրա հետ. սովորեցնում էր գրել, կարդալ եւ զանազան ձեռագործներ: Շատ անգամ ինքը պառկած էր լինում դիւանի վրայ, նրան նստեցնում էր իւր մօտ, բարձր ձայնով կարդալ էր տալիս եւ մեծ բաւականութեամբ լսում էր: Վերջին ժամանակներում սկսեց պարապել նրա հետ մուզիկայով եւ նկարչութեամբ. վերջինի մէջ թէեւ մի առանձին ընդունակութիւն չէր ցոյց տալիս նա, բայց երաժշտութեան մէջ չափազանց ընդունակ գտնուեցաւ: Նրա բնականից գեղեցիկ ձայնը, մշակուելով, զարգանալով, աքանչացնում էր լսողներին:

Ծիկնոջ դաստիարակութեան ոգին արտափայլեցաւ նրա աշխատասէր աշակերտուհու ոչ միայն մտաւոր եւ հոգեկան զարգացման վրայ, այլեւ նրա բնաւորութեան եւ բարոյական յատկութիւնների վրայ: Օրիորդը նոյնպէս սիրում էր իւր բարերարների հետ այցելել հիւանդներին. մտնել աղքատ շինականների խրճիթը եւ իւր հացի վերջին պատառը բաժանել կարօտեալների հետ:

Նա միայ անբաժան իւր խնամակալներից եւ այն բոլոր ժամանակներում, երբ նրանք պաշտօնի առիթով ստիպուած էին մի քաղաքից միւս քաղաք, մի գաւառից միւս գաւառ անցնել: Իսկ երբ նրանք վճռեցին Սիբիր տեղափոխուել, այդ միջոցին նա աւելի ուրախ էր, աւելի

բախտաւոր էր համարում իրան: Ի՞նչ էր, որ կապում էր խեղճ աղջկայ սիրտը հեռաւոր հիւսիսի հետ. ի՞նչ էր, որ քաշում էր նրան այդ կողմը: — Այդ գաղտնիքը յայտնի էր տիկնոջը, յայտնի էր եւ նրա ամուսնուն: Ամեն անգամ, երբ ասում էին նրան. "կը գնանք Սիբիր, կը տեսնենք նրան,,, — խեղճ աղջիկը հրճուանքից աքանչանում էր, եւ ուրախութեան արտասուքը աչքերում, գրկում էր թէ տիկնոջը եւ թէ նրա ամուսինն, համբուրում էր, անվերջ կերպով համբուրում էր, եւ թափում էր նրանց առջեւ իւր հոգու բոլոր շնորհակալութիւնները: Թէ տիկինը եւ թէ նրա ամուսինը՝ երկուսն էլ սիրում էին նրան, սիրում էին հարազատ զաւակի նման: Տիկինը սովորութիւն ունէր ասել. "Դա առաջ մի թանգագին, բայց անտաշ քար էր. ես ուրախ եմ, որ այդ գրութեան մէջ գտայ գրան, որովհետեւ իմ ցանկացած թրաշը (գրան) եւ փայլը կարողացայ տալ„:

Իսկ այն առաւօտ ոչ սակաւ վշտացաւ նա, երբ դուրս գալով միւս սենեակը, գտաւ օրիորդին պատուհանում նստած եւ լաց լինելիս: Նա մօտեցաւ եւ, փայփայելով նրա գեղեցիկ գլուխը, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ հետ, սիրելիս:

— Ոչինչ... պատասխանեց օրիորդը, վերկացաւ տեղից եւ սկսեց սրբել աչքերի արտասուքը:

— Դու քեզ վատ ես զգում:

— Ոչ... գլուխս փոքր ինչ ցաւում է...:

Տիկինը գրկեց նրան, ասելով.

— Հասկանում եմ... խեղճ աղջիկ, դու շատ տանջուեցար, երկար համբերեցիր... մի փոքր եւս համբերիր, այնուհետեւ վերջ կը դրուի քո արտասուքին...:

Թ.

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Աւելի քան մի ամբողջ տարի անցել էր այն օրից, որ ես Ծանօթացայ Համրի հետ: Այդ ժամանակամիջոցը պէտք է իմ կեանքի ամենագեղեցիկ եւ ամենաբախտաւոր մասը համարել: Ես նրանից շատ բան սովորեցայ. նրա ազդեցութեան ներքոյ ես բոլորովին ուրիշ մարդ դարձայ:

Ես թէեւ բալոյապէս եւ մտաւորապէս զարգանում էի, բայց իմ մարմնական զօրութիւնները օրըստօրէ թուլանում էին: Ծաժանական աշխատանքը հանքերի մէջ՝ խպատ մաշել էր ինձ: Ինձ տարան հիւանդանոց:

Հիւանդանոցը աքսորականի համար մի դուռն է, որտեղից բացվում է ճանապարհ դէպի գերեզման: Ու ես ուրախ կը լինէի, եթէ ինձ վիճակուէր այդ ճանապարհով գնալ: Կեանքը ձանձրացրել էր ինձ:

Կեանքը ձանձրալի է դառնում աւելի այն ժամանակ, երբ հասկանում ես նրա նպատակը եւ չես կարողանում ցանկացածդ կատարել: Մինչեւ այնօր ես տգէտ էի, ոչինչ չէի հասկանում, այդ պատճառով էլ հանգիստ էի: Բայց երբ շատ բան սովորեցայ, սկսեցի աւելի տանջուել: Եթէ անտաւննելին բնութիւնը շատ խելք տուած լինէր, եթէ նրանք դպրոց մտնէին, աւելի պահանջող կը լինէին եւ երբէք չէին յօժարուի կատարել այն բարբարոսական ծառայութիւնները, որ մարդիկ նրանց անել են տալիս:

Հիւանդանոցը դատապարտեալի ամենասիրելի օթեւանն է: Այստեղ նա աւելի հանգիստ է, այստեղ նրա հետ գոնէ մարդի պէս են վարվում: Այստեղ նրան մշտապէս չեն մտրակում, թէեւ երբեմն չարացած ֆելդշերը ծեծում է նրան, թէ ինչո՞ւ չէր կատարել իւր այս եւ այն պատուէրը, ինչո՞ւ դեղը իւր ժամանակին գործ չէր ածել, — այսուամենայնիւ, կրկնում եմ, հիւանդանոցը դատապարտեալի հանգստութեան տեղն է, եւ այդ է պատճառը, որ նա փափագում է, որ իւր հիւանդութիւնը երկարատեւ լինի, եւ աւելի բախտաւոր է համարում իրան, եթէ հիւանդութեան մահիճը բոլորովին գերեզմանի կը փոխուի:

Բայց մեռնելը հեշտ բան չէ դատապարտեալի համար: Օրէնքը մարդասիրական գեղեցիկ սկզբունքներ ունի: Կախաղանի դատապարտուած թշուառականն անգամ, երբ պատժի նշանակած օրը հիւանդանում է, այդ դէպքում պատիժը յետաձգում են, նրան առողջացնում են, յետոյ են կախաղան բարձրացնում: Աքսորականը նոյնպէս մի յայտնի ժամանակամիջոց ունի տաժանական աշխատանքների մէջ ճգնելու, ապաշխարելու եւ իւր մեղքերը քաւելու: Այդ ժամանակամիջոցը պէտք է լրացնէ նա: Եւ եթէ պատահում է նրան հիւանդանալ, աշխատում են առողջացնել, որ իւր ապաշխարանքը վերջացնէ:

Ես տարուեցայ հիւանդանոց: Ո՞րքան ժամանակ մնացի այնտեղ, ի՞նչ էր իմ հիւանդութիւնը, — չեմ յիշում, այսքանը միայն չեմ մոռացել, որ ինձ առանձնացրել էին միւս հիւանդներից եւ գտնվում էի տիֆով հիւանդների բաժնում: Առաջին անգամ երբ աչքս բացարի, երբ փոքր ինչ ուշի եկայ, ինձ մօտ գտայ հիւանդանոցի ծերունի սպասաւորներից մէկին, որը կանգնած, ինքն-իրան մրմրթում էր.

— Ինչպէս ամուսինն է, այնպէս էլ տիկինն է, ինչպէս տիկինն է, այնպէս էլ աղախինն է: Աստուած է վկայ, լա՛ւ մարդիկ են, այսպիսի մարդիկ մինչեւ այսօր չէ տեսել մեր հիւանդանոցը:

Արդեօք ու՞մ էին վերաբերում այդ խօսքերը, — ես ոչ հետաքրքրուեցայ եւ ոչ էլ հասկանալ կարողացայ, իսկ նա դեռ շարունակում էր մրմրթալ.

— Ինչ բարի աղջիկ է, ո՜րքան խնամքով նայում է հիւանդներին, կարծես, իւր եղբայրները եւ հօրեղբայրները լինեն:

-- Ի՞նչ աղջիկ, — մեքենաբար հարցրի ես:

— Այն աղջիկը, որ հիմայ այստեղ էր. չտեսա՞ր, — զարմանալով հարցրեց նա: — Այնօրից, որ դու պառկած ես, ճակատիդ թրջած քաթան ու սառոյց էր դնում: Ի՞նչպէս չտեսար:

Այդ միջոցին մի օրիորդ դանդաղ քայլերով անցաւ կորիդորից եւ անհետացաւ մթութեան մէջ:

— Ահա այն աղջիկը, — ասաց ծերունին: — Ոմանք ասում են՝ մեր նոր բժշկապետի աղախինն է, ոմանք ասում են՝ նրա կնոջ ազգականն է: Ով որ էլ լինի, Աստուած է վկայ, լաւ աղջիկ է: Իսկ բժշկապե՛տը, կատարեալ հրեշտակ է, մեղք է նրան մարդ ասել: Կը մտնէ հիւանդանոցը, կը նստէ ամեն մի հիւանդի մօտ, կը խօսէ, կը հարցնէ, հանաքներ կ՚անէ, սիրտ կը տայ, կը մխիթարէ: Յետոյ կը վերկենայ, ամեն բանի վրայ կը նայէ, կը մտնէ խոհանոցը, կը մտնէ եւ այնտեղ, ուր մենք զզուանքով ենք մտնում: Իսկ տիկինը, կատարեալ հոգի է. օր չի լինի, որ հիւանդների համար թէյ, շա-

քար, սպիտակ պաքսիմաթ եւ զանազան քաղցրաւենիք չբերէ: Կը նայէ նրանց անկողիններին, կը նայէ սպիտակեղէններին, եւ վա՜յ այն սպասաւորին, եթէ մի փոքր անմաքրութիւն տեսնէ: Բայց առաջուայ բժիշկները, ու նրանց տիկինները, Աստուած ազատէ, այսպէս չէին. շատ սակաւ անգամ էր պատահում, որ հիւանդանոցը ոտք կոխէին: Պատահում էր, գնում ես պարոն բժշկապետի մօտ, ասում ես. "Պարոն բժշկապետ, խեղճը մեռնելու վրայ է„... կամ կոպիտ կերպով կը պատասխանէր, թէ ժամանակ չունի, կամ եթէ չուզէր վշտացնել քեզ, ծիծաղելով կ'ասէր. "Թող հանգստանայ„...:

Ծերունի սպասաւորի շատախօսութիւնը վերջ չունէր: Ես ձանձրացայ լսել նրան, թէեւ նրա խօսքերը զուրկ չէին չափազանց ջերմ եւ բարի զգացմունքներից: Բնութեան մի առանձին խաղը պէտք է համարել, որ երբեմն այսպիսի կոշտ, կոպիտ, անկիրթ ռամիկների մէջ գտնւում է քնքոյշ սիրտ: Նա հին զինուոր էր: Դրանք են թշուառ հիւանդների մխիթարիչները, դրանք են ազատում նրանց սովից եւ ծարաւից. դրանք են փակում նրանց աչքերը մահուան վերջին րոպէներում: Պատահել են շատ դէպքեր, որ հիւանդը բոլորովին մոռացուել է եւ մեռել է ոչ թէ հիւանդութիւնից, այլ քաղցից եւ ծարաւից:

Մի շաբաթ անցել էր վերոյիշեալ խօսակցութիւնից: Իմ առողջութիւնը օրըստօրէ դէպի լաւն էր գնում. ուշք ու միտքս համարեա վերադարձել էր, աչքերս այժմ համեմատաբար աւելի պարզ էին տեսնում, թէեւ դեռ սաստիկ թոյլ էի զգում ինձ: Մի օր նոյն օրիորդը ծերունի սպասաւորի հետ մտաւ ինձ մօտ: Նա անցաւ, վերառեց իմ հիւանդութեան օրագրութեան թերթը,

ուշադրութեամբ կարդաց, որ տեսնէ՝ ինչ փոփոխութիւն է արել իմ դրութիւնը: Քանի օր էր, որ նա ինձ մօտ չէր եղել: Ես նայում էի նրա վրայ, զննում էի հասակը, դէմքը, աչքերը, ձայնը, եւ մի զարմանալի նմանութիւն էի գտնում...: Կարծես, հասկանալով այդ, նա երեսը շուռ տուեց, սկսեց խօսել սպասաւորի հետ: Որքան էլ նսեմացած լինէր իմ տեսութիւնը, դարձեալ ես նրա երեսի վրայ նկատեցի մի նշան, որ ինձ շատ ծանօթ էր: Դա մի խալ էր, ուղիղ այն տեղում, ուր երկու յօնքերը աղեղնաձեւ գալով, միանում էին միմեանց հետ: Դա բնութեան մի առանձին հրաշալիքն էր, որ խիստ հազիւ է գտնվում կանանց դէմքի վրայ: Դա այն միջնակէտն էր, որ կենտրոնացնում է իւր մէջ դէմքի բոլոր գեղեցկութիւնը: Նենէն միայն ունէր Արարչի այդ հարուստ պարգեւը:

Նա կրկին երեսը դարձրեց դէպի ինձ, նայեց իմ վրայ եւ, մի քանի պատուէրներ տալով սպասաւորին, պատրաստւում էր հեռանալ: Այո՛, նա էր, իմ սիրելի Նենէն էր: Իմ մաշուած կուրծքից դուրս պրծաւ մի խուլ հառաչանք, ես խելագարի նման նետուեցայ եւ փորձ փորձեցի գրկել նրան: Ծերունի սպասաւորը բռնեց ինձ: Նա իսկոյն հեռացաւ, ասելով.

— Այդ հիւանդը իւր խելքի առողջ դրութեան մէջ չէ...:

Ես մնացի խորին ապշութեան մէջ: Ի՞նչ էր այդ, երազ էր, ցնորք էր, թէ խանգարուած երեւակայութեան պատրանք: Ի՞նչ էր այդ: Նենէի գեղեցիկ դէմքն էր, նրա վառվռուն աչքերն էին, նրա նուրբ, բարձր հասակն էր, նրա արծաթի հնչիւններով ձայնն էր: Բայց մի՞թէ կրակոտ, պարզամիտ, աներկիւղ Նենէն կա-

րող էր իրան այնպէս զգոյշ եւ սառնասիրտ պահել: Ո՞րտեղից յայտնուեցաւ նա: Եթէ նա լինէր, չէր կարող զսպել իրան, անպատճառ կը նետուէր, կը գրկէր ինձ եւ կ'ասէր. “ահա ես գտայ քեզ, ես այստեղ կը մնամ, էլ քեզանից չեմ բաժանուի„: Նա այսպէս կը վարուէր: Այսպէս վարուեցաւ նա, երբ մի անգամ մտաւ ինձ մօտ բանտը: Այսպէս վարուեցաւ նա եւ այն օրը, երբ ինձ վարում էին դէպի աքսոր: Նա չէր ուզում բաժանուել ինձանից. նրան բռնութեամբ բաժանեցին...:

Ահա այդ մտածութիւնները պաշարեցին ինձ, գեղեցիկ տեսիլքը անցնելուց յետոյ:

Բայց միթէ չէ՞ր կարող պատահել, որ Նէնէն այնքան տարուայ մէջ փոխուած լինէր: Բաւական տարիներ էին անցել այն օրից, որ անջատուած էինք միմեանցից: Միթէ չէ՞ր կարող պատահել, որ այն, թէեւ կիսավայրենի, բայց աշխոյժ եւ ձիրքերով հարուստ բնաւորութիւնը, մի առաքինի հոգու ազդեցութեան ներքոյ, մեղմանար, ազնուանար եւ բարի կրթութիւն ստանար: Ես նոյնպէս մի վայրագ եղեռնագործ էի: Բայց ինչպէս փոխուեցայ: Համբը ինձ բոլորովին այլ մարդ դարձրեց: Միթէ միեւնոյնը չէ՞ր կարող պատահել եւ Նէնէի հետ: Ծերունի սպասաւորի ասելով, նա գտնվում էր բժշկապետի ընտանիքի մէջ: Գուցէ այդ ընտանիքը ազդել էր նրա վրայ. գուցէ հէնց նրանց հետ էր եկել, եթէ ոչ, ո՞վ կը բերէր նրան Սիբիր:

Վերջին ենթադրութիւնը ինձ աւելի հաւանական էր թւում: Բայց ես դեռ չէի տեսել այդ բժշկապետին եւ ոչ նրա կնոջը, թէեւ շատ անգամ այցելել էին ինձ մօտ: Ես այդ միջոցներում յիշողութիւնս կորցրած եմ եղել:

Խաչագողի արհեստը թողել էր իմ մէջ մի առանձին սրամտութիւն, այն է՝ շուտով ըմբռնել ամենանուրբ ակնարկութիւնները եւ իսկոյն յարմարուել հանգամանքների հետ: Ես յիշեցի այն խորհրդաւոր խօսքերը, որ նա հեռանալու ժամանակ ասաց. “Այդ հիւանդը իւր խելքի առողջ դրութեան մէջ չէ„...: Այդ խօսքերով կամեցաւ ծածկել նա, որ ես ճանաչեցի նրան, որ իմ եւ նրա մէջ եղել են հին յարաբերութիւններ: Այդ խօսքերով կամեցաւ արդարացնել իմ հոգու սաստիկ յուզմունքը, որը համարեց նա՝ իբր իմ ուղեղի անառողջ դրութեան արտայայտութիւն:

Ես տարակոյս չունէի, որ նա դարձեալ կ'այցելէ ինձ, եւ մի քանի օր շարունակ սպասում էի նրան: Մի անգամ նախասենեակից լսում եմ հետեւեալ խօսակցութիւնը.

— Այժմ ի՞նչ դրութեան մէջ է խելագարը:

— Բաւական հանգիստ է:

— Խեղճ տղայ... նա դեռ շատ ջահիլ է...:

— Եւ պատուական մարդ է:

— Երկիւղ չկա՞յ նրա մօտ մտնելու:

— Զգուշութիւնը վատ բան չէ:

— Ուրեմն կապեցէք նրան:

Ծերունի սպասաւորը ներս մտաւ, ինձ կաշկանդեց: Քանի րոպէից յետոյ ներս մտաւ եւ նոյն օրիորդը: Այդ Նէնէն էր, իսկ եւ իսկ Նէնէն:

Այժմ ես իմ կատարեալ դերի մէջն էի, ոչ իբրեւ կեղծ խելագար, այլ իսկապէս ինձ տիրեց մի տեսակ խելագարութիւն: Ես մոռացայ բոլոր այն պայմանները, որով նա սկզբից նախազգուշացրել էր ինձ: Ես ամեն բան մոռացայ եւ միայն տեսնում էի իմ առջեւ սիրելի աղջկան,

որին նուիրել էի իմ սրտի ամենաջերմ զգացմունքները, — տեսնում էի, եւ կատաղութիւնը տիրում էր ինձ, թէ ինչո՞ւ ես չէի կարող գրկել նրան, ինչո՞ւ չէի կարող ասել. “ահա մենք դարձեալ գտանք միմեանց, ապրե՛նք միասին եւ կեանք վայելենք„...: Եթէ առաջուայ ուժս կորցրած չլինէի, ես անպատճառ կը կոտրատէի այն շղթաները, որոնցով կապուած էին իմ ձեռքերն ու ոտները, եւ նրան կը սեղմէի իմ կուրծքին, ասելով. “մենք այլեւս չենք բաժանուի միմեանցից„...: Բայց ես միայն գոռում էի, գոչում էի, աղաչում էի արձակել ինձ, սպառնալիքներ էի կարդում, այսկողմ ու այնկողմ էի նետվում, խնդրում էի Նէնէից, որ գոնէ ինքը մօտենայ ինձ: Նա քաշուեցաւ դէպի դուռը ասելով.

— Խղճալի գրութիւնը ամենեւին չէ փոխուել...:

— Նա միայն ձեզ տեսնելու ժամանակ այսպէս անհանգիստ է լինում... նկատեց ծերունի սպասաւորը:

— Այդ իրաւ է... պատասխանեց օրիորդը առանց շփոթուելու: — Խելագարները զանազան տեսակ ցնորքներ ունեն. դա, երեւի, իմ մէջ գտնում է նմանութիւն մի որեւիցէ կնոջ, որի հետ կապեր է ունեցել:

— Ճշմարիտ է, խելագարները զանազան տեսակ ցնորքներ ունեն, — համաձայնուեցաւ ծերունի սպասաւորը: — Մենք ունենք մէկը, որը ամեն անգամ ինձ տեսնելիս, յարձակվում է իմ վրայ, որ կոտրատէ ինձ: Միւս սպասաւորները նրա մօտ մտնելու ժամանակ հանգիստ է: Նա միշտ երեւակայում է մի ինչ-որ ընկերին, որ նրան մատնել է, եւ իմ մէջ նրա նմանութիւնն է գտնում:

Օրիորդը կռացաւ եւ հազիւ լսելի ձայնով ասաց ծերունու ականջին.

— Տեսէք, եթէ ես այժմ երեսս ծածկեմ եւ մօտենամ նրան, նա այլեւս ոչինչ չի անի:

Ես, իրաւ որ, այժմ հանգիստ էի, հասկանում էի նրա դիտաւորութիւնը, հասկանում էի, որ իմ անխոհեմ վարմունքով մատնում էի նրան: Նա երեսի քօղը ցած ձգեց եւ կամաց մօտեցաւ փոքրիկ սեղանին, որ դրած էր իմ գլխի մօտ: Նրա վրայ մի ամանի մէջ ջուր էր դրած եւ մի կտոր հաց: Նա վերառեց ջրի ամանը, հոտոտեց եւ, դառնալով դէպի սպասաւորը, ասաց.

— Այդ ջուրը բոլորովին թարմ չէ, պէտք է փոխել:

— Կը փոխեմ, օրիորդ, — պատասխանեց ծերունին:

— Այս րոպէիս փոխեցէք:

Ծերունին վերառեց ամանը եւ հեռացաւ:

Նա շրթունքը մօտեցրեց իմ շրթունքներին եւ հազիւ լսելի ձայնով ասաց.

— Կարդա այդ տոմսակը եւ սպասիր ինձ...:

Նա դրեց իմ բարձի տակին մի թղթի կտոր: Կօրիդօրից լսելի եղաւ ծերունի սպասաւորի ծանր քայլերի ձայնը: Նէնէն հեռացաւ ինձանից եւ մօտեցաւ դրանը: Ծերունին բերեց ջուրը, դրեց իր տեղում:

Նա կրկին անգամ նայեց իմ երեսին եւ հեռացաւ: Ա՜խ, ո՛րքան սրտաշարժ խօսքեր կային այդ լուռ նայուածքի մէջ...: Դրսից լսելի եղաւ նրա պատուէրը սպասաւորին.

— Հիմայ կարող էք արձակել նրան, միայն դռները կողպած պահեցէք:

Ծերունին ներս մտաւ, բացարեց իմ ձեռքերն ու ոտները, եւ դուրս գնաց, իր ետեւից դուռը կողպելով: Ես իսկոյն վերառի բարձի տակում թողած տոմսակը եւ սկսեցի կարդալ: Նրա բովանդակութիւնը խիստ կարճ էր,

երկու տող միայն, բայց այդ երկու տողը պարունակում էր իւր մէջ ինձ համար անսահման բախտաւորութիւն:

"Մուրադ, կիւրակի գիշերը, երկու ժամին, սպասիր ինձ, ես քեզ մօտ կը լինեմ: Նէնէ„:

Հարիւր անգամ կարդացի այդ երկու տողը, հարիւր անգամ շրթունքիս վրայ սեղմեցի, բայց դարձեալ չէի կշտանում: Նրանից, այդ անշունչ թղթի կտորից, փափագում էի առնել սրտիս կարօտը: Նրա մատներն էին գրել. նրա սիրտն էր գրած նրա մէջ: Բայց ո՞վ սովորեցրեց նրան գրելը . . . :

Հիւանդանոցի այն մասը, ուր այժմ զետեղուած էի ես, բաժանուած էր միւս մասերից. այստեղ պահվում էին միայն խելագարները եւ վարակիչ ախտերով հիւանդները:

Նէնէն այլեւս չէր յայտնուեցաւ: Մինչեւ կիւրակի դեռ եւս չորս օր կար: Այդ չորս օրը աւելի երկարաձիգ էր թուում ինձ, քան թէ չորս տարի: Բայց աքսորականը սովորում է սպասել: Ես խորին անձկանօք սպասում էի:

Բժշկապետը նոյնպէս չէր յայտնվում, երեւի նա ինձ բոլորովին առողջացած էր համարում: Միայն երբեմն մտնում էր ծերունի սպասաւորը եւ իւր շտապօսութիւններով զբաղեցնում էր ինձ: Այդ բարեսիրտ ծերունին այնքան երկար տարի ծառայել էր հիւանդանոցում, որ համարեա կէս-բժիշկ էր դարձել: Նա ծաղրում էր ֆելդշերների կատարած յիմարութիւնները, ծաղրում էր դեղարարի տգիտութիւնը, թէ ինչպէս նա շատ անգամ խառնում է դեղերը եւ թոյնը հասարակ քինայի փոխարէն է տալիս: Պատմում էր զանազան դէպքեր, որ առաջ էին եկել՝ կամ դեղերը խառնուելուց, կամ նրանց չափն ու կշիռը չհասկանալուց: Ուրախանում էր, որ նոր բժիշկ-

պետը առաջարկել է փոխել այդ բոլորը "անպիտաններին„, եւ դիտաւորութիւն ունի նոր կարգեր մտցնել հիւանդանոցի մէջ: Նա հիացած էր նոր բժշկապետով եւ միշտ կրկնում էր միեւնոյն խօսքերը նրա տիկնոջ եւ մանկահասակ օրիորդի մասին:

Վերջապէս, եկաւ կիւրակին: Ես սարսափելով մտածում էի, թէ ինչպէս պէտք է անցկացնեմ այդ օրը, թէ ինչպէս պէտք է սպասեմ մինչեւ գիշերուայ ժամը երկուսը: Իսկ այնօր, որպէս կարծում էի, ինձ համար այնքան ծանր չանցաւ: Համրը թոյլտուութիւն էր խնդրել ինձ տեսնելու, եկաւ եւ ժամերով մնայ ինձ մօտ: Թէեւ այժմ նրա փիլիսոփայութիւնները շատ հետաքրքրական չէին ինձ համար, բայց, այնուամենայնիւ, նրա այցելութիւնը բաւական մխիթարեց ինձ:

Համրը ինձ մօտ եղած միջոցին ներս մտաւ բժշկապետը: Նրան ես ճանաչեցի, թէեւ այժմ փոքրիկ մօրուք ունէր: Զարմանալի բան է կեանքի մէջ դէպքերի հանդիպումը: Այդ երիտասարդին ես պատահել էի իմ կեանքում մի քանի անգամ: Երբ ես կալանաւորուեցայ, երբ ինձ տարան քննիչի մօտ հարցուփորձ անելու, այդ երիտասարդը, իբրեւ քաղաքային բժիշկ, այնտեղ ներկայ էր: Երբ դատարանում քննում էին իմ գործը, եւ ես մանրամասնաբար պատմում էի դատաւորներին իմ կեանքի պատմութիւնը, որպէս զի նրանց կարեկցութիւնը եւ բարոյական համոզմունքը շարժեմ իմ անմեղութեան վրայ, — այդ երիտասարդը դարձեալ այնտեղ էր: Երբ ինձ աքսորի դատապարտեցին, եւ սարսափելի գանահարութիւնից յետոյ, գիշատուած մարմնով ընկած էի բերդի հիւանդանոցում, — այդ երիտասարդն էր ինձ բժշկում: Նա գիտէր իմ կեանքի բոլոր պատմութիւնը, նա հետաքրքր-

քրուած էր այդ դժբախտ պատմութիւնով: Նա գիտէր, թէ որպէս հակառակ իմ կամքի, անխուսափելի հանգամանքները ձգեցին ինձ չարագործութեան մէջ: Ու այդ գրաւել էր նրա կարեկցութիւնը դէպի իմ թշուառութիւնը:

Նա նախաճանօթ էր եւ Նէնէի հետ: Նա գիտէր այդ անբախտ աղջկայ պատմութիւնը իւր բոլոր մանրամասնութիւններով: Նրա միջնորդութեամբ Նէնէն առաջին անգամ մտաւ ինձ մօտ բանտը: Նրա բարերարութեանը յանձնեցի ես անտէր, անօգնական աղջկան, այն ժամանակ, երբ մի քանի օրից յետոյ ինձ պէտք է վարձին դէպի աքսոր: Նա էր, որ բանտում մխիթարեց ինձ այդ խօսքերով. "յոյս ունեցէք, որ մի ժամանակ կը տեսնէք նրան„...:

Այժմ ամեն ինչ ինձ համար պարզ էր: Ցիշեալ խօսքերը ասաց նա մի քանի տարի առաջ, եւ ես այս գիշեր պիտի տեսնէի Նէնէին: Այժմ ես գիտէի, որ երիտասարդը հէնց այն ժամանակ, երբ ես անջատուեցայ Նէնէից, առել էր նրան իւր խնամակալութեան ներքոյ, եւ յետոյ, պաշտօնով այստեղ գալով, բերել էր իւր հետ:

Ընայելով այդ բոլոր հին յարաբերութիւններին, բժշկապետը ծանօթութիւն չտուեց ինձ: Նա երկար խօսում էր Համրի հետ, առանց ինձ վրայ ուշադրութիւն դարձնելու: Նրանց խօսակցութիւնը ես չէի հասկանում. որովհետեւ խօսում էին գերմաներէն լեզուով: Այդ լեզուն ես չգիտէի:

Բժշկապետի գնալուց յետոյ Համրը աւելի ուրախ տրամադրութեան մէջ էր գտնվում: Այդ մարդը այն քնաւորութիւններից էր, որ հազիւ կ'ուրախանար, եւ եթէ ուրախ էր, այդ կը նշանակէր, որ մի նշանաւոր բան կայ:

Ի՞նչ կար, ի՞նչ խօսեցին, ի՞նչ էր, որ ուրախացնում էր այդ մշտատխուր երիտասարդին, — այդ մասին նա ոչինչ չյայտնեց: Ես էլ իմ կողմից չհարցրի պատճառը: Նրա ներկայութիւնը, որ սկզբում այնքան մխիթարում էր ինձ, այժմ ձանձրալի դարձաւ: Ես ցանկանում էի միայնակ մնալ եւ յագեցնալու չափ մտածել Նէնէի վրայ: Ես չէի ներում, որ մի ուրիշի ներկայութիւնը խանգարէր այդ գեղեցիկ մտածութիւնները:

Համրը երկար չնստեց, նա գնաց, եւ ինձ ձեռք տալու միջոցին՝ ասաց այդ մթին խօսքերը.

— Հանգիստ կացէք, շուտով ձեզ փրկութիւն կը լինի...:

Ես ուշադրութիւն չդարձրի այդ խօսքերի նշանակութեան վրայ, կարծեցի, թէ իմ հիւանդութիւնից փրկուելու մասին էր խօսքը: Բայց այժմ ես չէի ցանկանում առողջանալ հիւանդութիւնից. այժմ ինձ խիստ ծանր էր թողնել հիւանդանոցը: Ես կամենում էի միշտ այնտեղ մնալ եւ առիթ ունենալ տեսնելու Նէնէին:

Ժ.

ՆԷՆԷԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կան այնպիսի դրուագներ, որ մարդ բոպէական զուարճութեան համար կորցնում է իւր ամբողջ ապագան եւ մինչեւ անգամ կեանքը, բայց դարձեալ չէ հրաժարվում իրան զրկել ցանկացած վայելքից: Այսպիսի վտանգաւոր ձեռնարկութիւններից մէկն էր Նէնէի գիշերային այցելութիւնը: Նա անհամբերութեամբ սպասում էի նրան, սպասում էի, թէ ե՞րբ կը զարկէ պիշերուայ երկու ժամը:

Վերջապէս, իմ օթեակի դուռը կամաց բացուեցաւ, Ծերունի սպասաւորը նրան ներս հրեց եւ հեռացաւ, ասելով.

— Ողբան կամենում էք, խօսեցէք, բայց ձայն չը բարձրացնէք:

Ինձ դժուար է նկարագրել այն սրտաշարժ տեսարանը, որ տեղի ունեցաւ մեր տեսակցութեան առաջին րոպէներում: Այո՛, դժուար է նկարագրել այն բոլոր լացը, արտասուքը, այն անսահման ուրախութիւնը, այն հոգեկան սաստիկ մրրիկը, որ փոթորկում էր մեր սրտերը՝ մեր դրկախառնութեան լուռ ցնծութեան մէջ: Մեր մէջ խօսում էր հոգին, սիրտը, ճախրում էին եւ թրթռում էին, վաղուց նիրհած, թախծալի զգացմունքները: Իսկ լեզուն բառեր չէր գտնում սրտի թարգման լինելու:

Դատապարտեալի սէրն անգամ իւր ոտներին շղթայ է կրում: Նա սիրում է՝ արտասուելով, նա սիրած կնոջը գրկում է սարսափելով: Նա սիրում է առանց սիրելու իրաւունք ունենալու: Սէրը նրա համար մի յանցանք է: Նոյն յանցանքի մէջն էինք գտնվում ես եւ Նէնէն:

— Ի՞նչպէս յայտնուեցար այստեղ, ի՞նչպէս եկար, — եղաւ իմ առաջին հարցմունքը, երբ Նէնէն, իմ ձեռքը առնելով իւր ափի մէջ, նստեց իմ մահճակալի վրայ, իմ կշտին:

— Ես քեզ այն ժամանակ ասեցի, որ կը գամ, եւ որտեղ էլ որ լինես դու, կը գտնեմ քեզ, — ասաց նա, սեղմուելով իմ կուրծքի վրայ: — Ցեանո՛ւմ ես, եկայ ու գտայ քեզ:

— Աշխ, ո՛րքան տանջուած կը լինես, ո՛րքան նեղութիւններ կրած կը լինես, Նէնէ:

— Այդ բոլորը ես մոռանում եմ քո գրկի մէջ: Իմ կրած չարչարանքները ոչինչ են այդ մխիթարութեան առջեւ, որ այժմ վայելում եմ:

Ես հիացման մէջ էի գտնվում: Մինչեւ այդ բարեսիրտ, նազելի արարածը առաջուայ կիսավայրենի Նէնէն էր: Ո՛ր աստուածային շունչը այսպէս մեղմացրեց, այսպէս աղնուացրեց նրա բնաւորութիւնը:

— Դու ո՞ւմ մօտ ես ապրում, — հարցրի նրանից:

— Բժշկապետի տանը: Նրա ամուսինը մի պատուական կին է, սաստիկ սիրում է ինձ: Գիտե՞ս, Մուրատ, նա ինձ սովորացրեց գրել, կարդալ, ես շատ գրքեր եմ կարդացել:

— Նրանք գիտե՞ն, որ դու հիմայ այստեղ ես:

— Գիտեն: Բժշկապետը ինքը պատուիրել էր Ծերունի սպասաւորին, որ ինձ ներս թողնէ: Ես նրան շատ

խնդրեցի, սկզբում չէր յօժարվում, ասում էր՝ քո այցելութիւնը վատ ազդեցութիւն կ'անէ հիւանդի առողջութեան վրայ, բայց երբ երկար աղաչեցի, յօժարուեցաւ։

Ինձ աւելի հետաքրքրում էին Նէնէի հետ պատահած անցքերը, սկսեալ այն օրից, որ ես անջատուեցայ նրանից։ Նա խնդրեցի պատմել բոլորը։ Նա խիստ դժուարութեամբ յանձն առաց պատմել, ասելով, որ իւր հետ պատահած արկածների մէջ կային այնքան դառն այնքան տխուր դէպքեր, որ չէր ցանկանայ՝ ես լսէի։

— Այսուամենայնիւ, ես պէտք է գիտենամ բոլորը։

— Ուրեմն կը պատմեմ։

Նա այսպէս սկսեց իւր պատմութիւնը.

— Դու յիշո՞ւմ ես, Մուրադ, քո կալանաւորուելուց յետոյ, ես միանգամ միայն կարողացայ տեսնուել քեզ հետ, այն էլ բերդի մէջ։ Այնուհետեւ ես ամեն օր գալիս էի, կանգնում էի բերդի դրան մօտ, լաց էի լինում, աղաչում էի, բայց ինձ ներս չէին թողնում։ — "Գիժ աղջիկը... տեսէք գիժ աղջիկը"... ասում էին ու ինձ հալածում էին։ Երբ խաւարը պատում էր, երբ չար մարդիկ այլեւս չէին երեւում, ես դարձեալ մօտենում էի բերդին, պատում էի նրա շուրջը, եւ գիշերային լռութիւնը աղմկում էր իմ հառաչանքներով։ Միայն առաւօտեան լոյսը ինձ հեռացնում էր այնտեղից։ Անցան օրեր, անցան շաբաթներ, անցան ամիսներ։ Մի առաւօտ բերդի դրան պահապան զինուորը ասաց ինձ. — "Խեղճ աղջիկ, այն որ դու պտտում ես, էլ այստեղ չէ"...։ — "Ապա ո՞րտեղ է", հարցրի ես սարսափելով։ — "Տարան"... պատասխանեց նա կարծես, ինքն էլ ես տխրելով, չգիտեմ իմ վրայ, թէ քեզ վրայ։ — "Ո՞րտեղ տարան", հարցրի ես, աւելի մօտենալով նրան։ — "Սիբիր"...։ Ես լսեցի

գարի նման սկսեցի վազ տալ։ Զգիտէի, թէ ո՛ր կողմը գնամ։ Նոյն զինուորը ետեւից ձայն տուեց. — "Բռնեցէք փոստայի մեծ ճանապարհը"։

— Վերջապէս, ես հասայ։ Մի խումբ աքսորեալների հետ քեզ վարում էին։ Ինձ թոյլ չտուին մօտենալ քեզ։ Որքան խնդրեցի, որքան աղաչեցի, դարձեալ թոյլ չտուին։ Ես կատաղեցայ, խելքս գլխիցս թռաւ, աչքերիս առջեւ մթնեց...։ Զգիտեմ այլեւս ի՞նչ արեցի, ի՞նչ պատահեց ինձ հետ, միայն այսքանը յիշում եմ, երբ աչքերս բաց արի, ինձ գտայ քաղաքային գժատան մէջ։ Երբ խելքս գլուխս եկաւ, ես տեսայ միեւնոյն բժշկապետին, որի տանը այժմ ապրում եմ։ Նա եկել էր ինձ նայելու։ Ես բռնեցի նրա ձեռքից եւ արտասուալի աչքերով ասեցի նրան. — "Պարոն բժշկապետ, ես գիժ չեմ, ի զուր են չար մարդիկ ինձ գիժ կոչում։ Ի՞նչու են բերել ինձ գժատունը"։ Բժշկապետը կարեկցութեամբ ասաց ինձ. — "Խեղճ աղջիկ, ես գիտեմ, որ դու գիժ չես. միայն խորհուրդ եմ տալիս, որ առժամանակ գժատանը մնաս։ — "Ի՞նչու", — հարցրի ես զայրացած կերպով։ — "Այդ միայն կարող է աղատել քեզ", — պատասխանեց նա հազիւ լսելի ձայնով։ — "Ինչ բանից", — հարցրի ես աւելի վըդովուելով։ — "Սիբիրից"...։ Ես սկսեցի ծիծաղել։ — "Ես էլ հէնց այդ եմ ուզում, որ ինձ ուղարկեն Սիբիր... այնտեղ կը տեսնեմ նրան..."։ — "Ո՛ւմը", հարցրեց նա։ — "Այն աքսորեալին, որ մի քանի օր առաջ տարան", — պատասխանեցի ես։ — "Դուք, պարոն բժշկապետ, կարծեմ, ճանաչում էք նրան, դուք բժշկում էիք նրան"։ — "Այո՛, ճանաչում եմ"... պատասխանեց նա, — "ես միանգամ խնդրեցի բերդապահից, քեզ թոյլ տուին նրա մօտ բանտը մտնել,

յիշում ես", հարցրեց նա: — "Այո, յիշում եմ, ես մինչեւ այսօր դեռ չեմ յայտնել ձեզ իմ շնորհակալութիւնը": Այդ խօսքերի հետ բռնեցի նրա ձեռքը եւ ամուր կերպով սեղմեցի:

— "Ես այն աքսորեալին սիրում եմ, ես անկարող եմ չսիրել նրան", — ասեցի ես, չթողնելով բժշկապետի ձեռքը: — "Նա իմ կեանքը ազատել է մի սարսափելի սպանութիւնից, ի՞նչպէս չսիրել նրան:" — Ցետոյ պատմեցի, թէ ո՛րպէս ծնողներից որբ մնալով, իբրեւ անտէր, անպաշտպան մի աղջիկ, սկսեցի թափառական կեանք վարել. միակ արհեստը, որ ուսուցել էր ինձ իմ մայրը, էր կախարդութիւնը. ես մարդկանց բախտը գուշակում էի, նրանք ինձ հաց ու մի քանի գրօշներ էին տալիս: Պատմեցի, թէ ո՛րպէս յափշտակուեցայ աւազակներից, եւ ո՛րպէս նրանք ինձ երկար չարչարելուց յետոյ, վերջը կամենում էին սպաննել, իսկ դու ազատեցիր ինձ: Մի խօսքով, պատմեցի բոլորը, ինչ որ մինչեւ այն օրը պատահել էր ինձ հետ: Բժշկապետը հետաքրքրութեամբ լսելուց յետոյ, ասաց ինձ. — "Այդ բոլորը ես գիտեմ, այն աքսորեալը պատմել է ինձ":

— Դուք պատմել էիք նրան, Մուրատ, — հարցրեց Նէնէն, կարելով իւր խօսքի թելը եւ դիմելով ինձ:

— Այո, պատմել էի, պատմել էի այն ժամանակ, երբ ես բանտումն էի: Ես խնդրեցի նրանից, որ քեզ առնէ իւր պաշտպանութեան ներքոյ, եւ նա խոստացաւ իմ խնդիրքը, եւ, որպէս երեւում է, կատարեց բարի մարդը:

— Այո, կատարեց, — կրկնեց Նէնէն մի առանձին զգացմունքով: — Ա՜խ, ի՞նչով կարող ենք փոխարինել այդ ազնիւ երիտասարդի երախտիքը... Նա գիտաւորութիւն ունի դեռ եւս շատ լաւութիւններ անելու մեզ...

Նէնէն ուրախութեան արտասուքը սրբելով իւր աչքերից, շարունակեց.

— Ես հարցրի բժշկապետից, թէ ի՞նչ էր պատճառը, որ ինձ բերել էին գժատունը: Նա ասաց, որ այն դատապարտեալին, այսինքն քեզ, դէպի աքսոր վարելու ժամանակ, ես խելագարի նման յարձակուել էի պահապան զինուորների վրայ, խլել էի մէկի ձեռքից հրացանը եւ արձակել էի: Թէեւ ոչընչին վնաս չէի հասցրել, բայց իմ վարմունքը օրէնքով համարվում էր ծանր յանցանք: Այդ յանցանքը աւելի խստութեամբ էր պատժվում գլխաւորապէս այն պատճառով, որ կատարուել էր քեզ յափշտակելու նպատակով: — "Դեռ երբ գործողութիւնը կատարուած է ուղեղի անառողջ դրութեան մէջ" — աւելացրեց բժշկապետը, — "պատիժը մեղմացնում են": Ես պատասխանեցի. — "Ամենեւին չեմ ցանկանում, որ իմ պատիժը մեղմացնեն: Ես շատ ուրախ կը լինեմ, եթէ ինձ կ'ուղարկեն Սիբիր: Այնտեղ կը տեսնեմ նրան. այնտեղ տարան, նրան, թող ես էլ նրա մօտ լինեմ": — "Խեղճ աղջիկ, — ասաց բժշկապետը, — դու դեռ այնքան անփորձ ես, որ չգիտես, թէ ի՞նչպէս են վարվում աքսորեալների հետ: Խելագարութիւնը միայն կարող է փրկել քեզ"...: Ես դարձեալ պնդեցի, թէ երբէք չեմ ասի, որ ցնորուած եմ եղել, այլ պարզ կը խոստովանեմ, որ կամենում էի ազատել սիրելիս, եւ այդ նպատակով յարձակում գործեցի: Բժշկապետը, թէեւ չկարողացաւ ինձ համոզել, բայց դարձեալ ուրիշ շատ խրատներ տալով, աւելացրեց, որ իմ վարմունքը իսկապէս "մինչեւ խելագարութեան հասած" սիրոյ ցնորք է եղել եւ աւելի ոչինչ:

— Բայց ես բժշկապետին չհաւատացի, թէեւ նա ինձ զանազան խոստմունքներ արեց եւ զանազան յոյսեր

տուեց: Ես հաստատ մնացի իմ կամքի մէջ, եւ երբ առաջին անգամ տարան ինձ դատարանը, ես պարզ ասեցի դատաւորներին. — "Պարոն դատաւորներ, ես խելագար աղջիկ չեմ, ես շատ խելացի աղջիկ եմ: Խելագարութիւնը չէր, որի պատճառով ես յարձակուեմ գործեցի զինուորների վրայ: Ես սիրում էի նրան, այն երիտասարդին, որին դուք Սիբիր ուղարկեցիք: Ես կամենում էի ազատել իմ սիրելիին: Ոչ, պարոն դատաւորներ, դուք մի հաւատացէք, որ ես խելագարուած եմ եղել: Ես միշտ խելացի էի, ինչպէս այժմ: Այդ յանցանքները ես գործել եմ իմ առողջ դատողութիւնով: Ինձ եւս աքսորեցէք Սիբիր, ես ցանկանում եմ սիրելիս հետ միասին լինել": — Բայց դատաւորները ինձ չհաւատացին: Ես շատ բարկացայ, երբ իմ վճիռը կարդացին: Փոխանակ Սիբիր ուղարկելու, վճռել էին՝ երեք ամիս նստացնել ապաշխարութեան տան մէջ: Թէեւ ես վճռից գոհ չմնացի, այնուամենայնիւ, ինձ տարան այնտեղ:

— Բայց գիտէս, Մուրադ, իմ սխալն ինչումն էր, — հարցրեց Նէնէն, դառնալով դէպի ինձ: — Ես չպէտք է ասէի, թէ խելացի աղջիկ եմ եւ ամեն ինչ գործել եմ իմ կամքով, իմ յօժարութեամբ: Ես պէտք է ասէի, թէ խելագարուած եմ եղել, չեմ հասկացել, թէ ինչ եմ գործել: Ես պէտք է աշխատէի արդարացնել իմ վարմունքը եւ խնդրել, որ ինձ չպատժեն: Այն ժամանակ կը մտածէին, որ ես գիտութեամբ եմ գործել եւ իմ ցանկացած պատիժը կը նշանակէին: Ինձ կ'ուղարկէին Սիբիր: Բայց դատարանի մէջ, երբ աշխատում ես քեզ արդար ցոյց տալ, մեղաւոր են համարում: Իսկ երբ ուզում ես քեզ գիժ ցոյց տալ, խելացի են համարում, եւ ընդհակառակն:

— Ապաշխարութեան տան մէջ եղած ժամանակս, — շարունակեց Նէնէն, — բժշկապետը մի քանի անգամ այցելեց ինձ: Այնտեղ ես առաջին անգամ ծանօթացայ նրա կնոջ հետ: Նա ինձ համար զանազան բաներ էր բերում եւ ամեն կերպով հոգ էր տանում, որ ես հանգիստ լինեմ: Թէ այր եւ թէ կին խոստանում էին, որ իմ ապաշխարութեան ամիսները վերջանալուց յետոյ, ինձ կ'ընդունեն իրանց տանը եւ կը պահեն ու կը պահպանեն իրանց զաւակի նման: Բայց ես իմ վրայ չէի մտածում, ես միշտ քեզ վրայ էի մտածում: Այդ էր պատճառը, հէնց որ վերջացաւ երեք ամիսը, ես փախայ այնտեղից, որ բժշկապետի անից ազատուեմ: Առանց որեւէ պատրաստութեան, ես ճանապարհ ընկայ քեզ մօտ գալու համար: Սիբիր, այդ անունը կրկնելով, շարունակում էի իմ ճանապարհը: Խիստ սակաւ էր պատահում, որ ես մի որեւիցէ բնակութեան հանդիպի: Ըստ մեծի մասին անց էի կացնում բացօթեայ: Մարդիկ, տեսնելով իմ պատառոտած հագուստը, խառնուած ծամերը, ցրտից եւ արեւից սեւացած դէմքը, ասում էին՝ "դա ջադուկ է", եւ ինձ օթեւան չէին տալիս:

Նէնէի նկարագրութիւնները ինձ սարսափեցնում էին: Որքան տանջուել էր, որքան չարչարուել էր խեղճ աղջիկը մի կորած, աշխարհից կտրուած դատապարտեալի համար: Մի՞թէ ես արժան էի այսքան զոհաբերութեանց: Ես խնդրեցի նրանից՝ համառօտել իւր պատմութիւնը եւ միայն այն ասել, թէ ի՞նչպէս կրկին հանդիպեց բժշկապետին:

— Ես շուտով այդ տեղը կը հասնեմ, — պատասխանեց նա, — մի փոքր եւս լսիր, եթէ չես ձանձրանում:

— Ես չեմ ձանձրանում, այլ տխրում եմ... իմ սիրտը լցւում է ցաւերով...:

— Շուտով կ'ուրախացնեմ քեզ... ասաց նա եւ շարունակեց.

— Միանգամ, երեկոյեան պահուն, հանում եմ մի գիւղ: Գիւղացիները հաւաքուած էին գինետան առջեւ, զանազան դատարկախօսութիւններ էին անում: Ես հարցրի նրանցից.

— "Ո՞ր ճանապարհն է տանում դէպի Սիբիր:„

Նրանք զարմացած նայեցին իմ վրայ:

— "Սիբի՞ր, — հարցրեց մէկը ծիծաղելով:

— Այո՛, Սիբիր: Հեռո՞ւ է:

— Այդ սատանայական սեւ մազերդ կը սիպտակի մինչեւ այնտեղ կը հասնես:

— Ցոյց տուեցէք ինձ ճանապարհը, — կրկնեցի ես:

— Ահա՛ ճանապարհը, գնա՛, գուցէ առաւօտեան կը հասնես, — ասաց մի ուրիշը, աւելի լբբաբար ծիծաղելով:

— Եթէ գայլերը չպատառոտեն, — նկատեց մի այլը:

— Մի ծաղրէք ինձ, բարի մարդիկ, ես Սիբիր եմ գնում, — աղաչեցի նրանց:

— Դա խելագար է, — ասաց մէկը:

— Չէ, անպատճառ անտառի գեւերից մէկը կը լինի. տեսէք, ինչպէս վառվում են աչքերը, — ասաց միւսը: — Նայեցէք մազերին:

Բոլորը խաչակնքեցին:

— Ոտքերիցը արիւն է հոսում, խեղճ աղջիկ, — նկատեց մի պառաւ կին: — Երեւի, փուշերը ծակոտել են:

— Դուք չէք հասկանում, ես Սիբիր եմ գնում, — զայրացած կերպով ձայն տուի ես: — Ցոյց տուեցէք ինձ ճանապարհը:

— Կորէք, Թող սատանան տանէ ձեզ, — ասեցին ինձ եւ երեսները շուռ տուին:

Ես բռնեցի առաջին պատահած ճանապարհը եւ հեռացայ: Դեռ գիւղից չէի դուրս եկել:

— Մուրացկան, մուրացկան, — ձայն տուեց մի երեխայ:

— Ես Սիբիր եմ գնում... պատասխանեցի նրան:

Ես անցնում էի փոստայի իջեւանի առջեւից: Այդ միջոցին ուզեւորի սայլակը, փոշու ամպերի մէջ ծածկուած, փոթորիկի նման հասաւ իջեւանը: Սայլակի միջից դուրս նետուեցաւ մի պարոն, վազեց իմ ետեւից, եւ իմ թեւքից բռնելով, ասաց.

— "Վերջապէս գտայ քեզ...:„

— Այդ պարոնը բժշկապետն էր: Ես իսկոյն նկատեցի նրա բարի դէմքի վրայ այն մեծ ուրախութիւնը, որ պատճառեց ինձ գտնելը: — "Ո՞ւր ես գնում„, — հարցրեց նա, չթողնելով իմ ձեռքը: — "Սիբիր„, — պատասխանեցի ես, աշխատելով դուրս պրծնել նրա ձեռքից: — "Այժմ ուշ է, — ասաց նա, — տեսնում ես, արեգակը մտնելու մօտ է, տեղ չես հասնի, անապատումը կը մնաս: — "Ես միշտ անապատումն եմ գիշերում. մարդիկ ինձ տեղ չեն տալիս„: — "Մնա ինձ մօտ, այս գիշեր հանգստացիր, առաւօտեան կը շարունակես քո ճանապարհը: — "Ես դեռ ոչ բոլորովին յոգնած եմ, կարող եմ անցնել մի քանի վերստ եւս, մինչեւ արեգակը կը մտնէր:„

— Վերջապէս նա համոզեց ինձ մնալ եւ տարաւ փոստայի կայարանը, շարունակեց Նէնէն: — Աշնան սառաւիկ ցրտերի ժամանակն էր: Իսկ իմ հնամաշ հագուստը հազիւ ծածկում էր իմ մարմինը: Ես նոր էի զգում, թէ որքան մրսել էի: Երբ մտայ սենեակը, իմ ատամները սկսեցին բաբախել: Իմ լեզուն դժուարանում էր շար-

ժուռել։ Նա իսկոյն փաթաթեց ինձ իւր մուշտակի մէջ եւ նստացրեց մահճակալի վրայ։ Ծաք թէյը կեանք տուեց ինձ, իսկ սպիտակ հացը կարագի հետ զօրացրին իմ սպառուած ուժերը։ Ես այժմ միայն հասկանում եմ, եթէ այն դրութեան մէջ անապատում մնայի, անպատճառ կը սառչէի։ Երբ ես բաւական հանգստացայ, երբ իմ գրգռուած դրութիւնը մեղմացաւ, բժշկապետը ասաց ինձ, որ ինքը յատկապէս ինձ համար եկած էր։ Նա պատմեց, թէ այն առաւօտը, երբ ինձ պէտք է արձակէին ապաշխարութեան տնից, ինքը եւ իւր կինը կառքով եկան այնտեղ, որ ինձ առնեն եւ իրանց տունը տանեն։ Բայց մինչեւ իրանց գալը, ես անյայտացած էի։ Ցետոյ հարցուփորձ անելով, տեղեկացան, թէ ես որ կողմն էի գնացել։ Բժշկապետը առանց ժամանակ կորցնելու հետամուտ եղաւ եւ գտաւ ինձ։

— Առաւօտեան, — շարունակեց Նէնէն, — բժշկապետը յայտնեց, թէ ինքը նոյնպէս Սիբիր գնալու դիտաւորութիւն ունի եւ խոստացաւ, որ ինձ եւս կը վերառնի իւր հետ։ Կարծես, ամբողջ աշխարհը ինձ տուեցին, ուրախութիւնից չգիտէի թէ ինչ անեմ։ Երեխայի նման քարշ ընկայ իմ բարերարի պարանոցից եւ սկսեցի համբուրել նրա աչքերը, երեսը, ձակատը, բոլորը։ — "Կը տանէ՞ք, կը տանէ՞ք", — անդադար հարցնում էի ես։ — "Անպատճառ կը տանեմ" — պատասխանեց նա, եւ աւելացրեց, թէ ինքը պէտք է պաշտօնով գնայ այնտեղ, եւ այդ մասին արդէն առաջարկել են իրան, եւ ինքը ընդունել է։ — "Եւ ես կը տեսնեմ Նրան"...։ — "Կը տեսնես, շատ անգամ կը տեսնես", — պատասխանեց նա։ Ես կրկին գրկեցի նրա պարանոցը։

— Բժշկապետը, — առաջ տարաւ Նէնէն, — ինձ շատ խրատներ էր տուել, ինձ շատ խորհուրդներ էր

տուել, բայց առաջ ես չէի հաւատում Նրան։ Մարդիկ ինձ այնքան շատ խաբել էին, որ ես կորցրել էի իմ հաւատը դէպի ամեն մարդ։ Բայց երբ նա խոստացաւ, որ ինձ կը տանէ Սիբիր, ես բոլորովին հաւատացի։ Այդ էր պատճառը, որ ես իսկոյն հնազանդուեցայ, երբ առաւօտեան առաջարկեց ինձ՝ նստել ճանապարհորդական սայլակի վրայ եւ վերադառնալ տուն։ Չնայելով, որ ես մինչեւ այն դիւղը հասել էի երեք օրուայ մէջ, բայց նոյն օրուայ երեկոյեան պահուն մենք հասանք քաղաքը։ Բժշկապետի բնակարանը բաւական ընդարձակ էր. իսկոյն ինձ համար որոշեցին մի առանձին սենեակ։ Նրա մանկահասակ կինը աւելի բարեսիրտ երեւաց ինձ, քան թէ ամուսինը, Նրա առաջին հոգսը եղաւ լուանալ իմ գլուխը, սանդրել եւ փոխել իմ հագուստը։ Երբ ես ոտքից ցգլուխ հագնուեցայ, նա մի առանձին ուրախութեամբ նայեց իմ վրայ, գրկեց, եւ համբուրելով, ասաց. — "Հիմայ դու շատ սիրուն աղջիկ դարձար"։ Եւ որպէս զի ես մի նոր ծանրութիւն չգառնամ այդ ոչ այնքան միջոցներ ունեցող ընտանիքի վրայ, հէնց երկրորդ օրը ես խնդրեցի տիկինից, որ ինձ ցոյց տայ մի քանի գործեր, թէ ինչով կարող էի ծառայել նրանց։ Տիկինը ժպտաց եւ ինձ յանձնեց մի քանի թեթեւ գործեր։ Ես իմ պարտաւորութիւնները այնքան ճշդութեամբ կատարում էի, որ նրանք, որ առաջ միայն խղճում էին ինձ, սկսեցին այնուհետեւ սիրել։ Տիկինը չափազանց գութ ունէր ինձ վրայ։ Նա մի առանձին եռանդով սկսեց զբաղուել իմ դաստիարակութեամբ. ամեն օր մի քանի ժամ պարապում էր ինձ հետ։ Ես սովորեցի գրել, հաշուել եւ գլքեր կարդալ։ Ախ, որքան լաւ բան են այդ գլքերը։ Նրանց մէջ խօսում են խելացի մարդիկ. նրանք այն չեն ասում, ինչ որ մենք սովորաբար

լսում ենք, կամ տեսնում ենք կեանքի մէջ: Նրանք պա-
խարակում են այդ մեր տեսածները, եւ ասում են, որ
լաւ բաներ չեն, եւ ցոյց են տալիս, թէ ինչպէս մարդիկ
կարող էին աւելի լաւ լինել:

— Ու դու լաւացար, — կորեցի ես Նէնէի խօսքը:

— Այո՛, լաւացայ, — պատասխանեց նա մի առան-
ձին բաւականութեամբ:

— Դու հէնց սկզբից բարի էիր, Նէնէ:

— Իմ առաջնուայ բարութեան եւ այժմեան բարու-
թեան մէջ մեծ զանազանութիւն կայ: Աղաւնին էլ բարի
է, բայց եթէ նրան հարցնելու լինես, թէ ինչու համար
է բարի, նա քեզ չէ կարող բացատրել պատճառը: Նա
բարի է, ինքն էլ չգիտէ, թէ ինչի համար: Այդպէս էր
եւ իմ բարի լինելը: Ոչխարի բարութիւն եւ աւելի ոչ-
ինչ: Բայց ես հիմայ գիտեմ, թէ ինչո՛ւ լաւ է բարին եւ
ինչո՛ւ վատ է չարը: Չէ՞ որ, ես առաջ սուտեր էի խօ-
սում, խաբում էի մարդկանց, բայց չէի հասկանում, որ
դա վատ է: Ես մի բօշայ աղջիկ էի, եւ մօրիցս սովորած
կախարդութեանը ինքս էլ հաւատում էի: Բայց հիմայ
գիտեմ, որ այն բոլորը խաբեբայութիւն էր: — Այդ Թող-
նենք, — խօսքը փոխեց Նէնէն, — բժշկապետը եւ նրա
կինը կատարեցին իրանց խոստմունքը: Երբ նրանք պաշտօն
ստացան Սիբիրում, ինձ եւս բերեցին իրանց հետ, իմ
յարաբերութիւնները քեզ հետ նրանք գիտէին, նրանց
յայտնի էր եւ այն, թէ ո՛ր աստիճան ես սիրում եմ քեզ:
Ցետոյ, թէեւ ինձանից գաղտնի, նրանք աշխատում էին, որ
դու ազատուած լինես քո դատապարտութիւնից, եւ մեզ
բախտաւորացնեն ամուսնական կեանքով: Այդ մասին ինձ
հետ չէին խօսում, բայց ես նրանց ակնարկութիւններից եւ
առանձին խօսակցութիւններից շատ բան էի հասկանում:

— Ի՞նչ միջոցներով էին աշխատում, — հարցրի
ես անհամբերութեամբ: — Արդեօք յոյս կայ... կարելի՞
է... եւ բազմաթիւ հարցերով շփոթեցրի Նէնէին:

Կարծես, նա վախենում էր, որ միանգամից հաղոր-
դած ուրախալի տեղեկութիւնը կարող էր վատ ազդել
իմ առողջութեան վրայ եւ, երեւի այդ մտքով բաւա-
կան հեռուից սկսեց իւր պատասխանը:

— Դու պէտք է գիտենաս, — ասաց նա, — որ
բժշկապետը աղքատ եւ շատ աղքատ ծնողների որդի է
եղել, ժողովրդի ստոր դասակարգից: Նրա հայրը փողոց-
ներում կօշկաների վաճառող է եղել, իսկ մայրը՝ մի
լուացարար կին: Բայց տիկինը բարձր շրջաններից է,
Ս. Պետերբուրգում նշանաւոր ազգականներ ու բարե-
կամներ ունի, որոնք նոյնպէս նշանաւոր պաշտօններ են
վարում: Բժշկապետը, որպէս աղքատ ուսանող, նրա
հօր տանը մանաւոր դասեր էր տալիս: Այստեղից սկսուեց
նրանց ծանօթութիւնը, որը յետոյ սիրոյ փոխուեցաւ:
Օրիորդի ծնողները, ի հարկէ, հակառակեցին նրա ամու-
նանալուն մի բժշկի հետ, որ թէ իւր դիրքով եւ թէ
իւր ծագումով չէր համապատասխանում նրանց կոչմանը:
Բայց օրիորդը այնքան բնաւորութեան զօրութիւն ունէր,
որ, հակառակ ծնողների կամքի, Թողեց հայրենական
տունը, եւ սկսեց սիրած երիտասարդի հետ ապօրինի
ամուսնութեամբ ապրել: Այնուհետեւ ծնողները բոլորովին
մերժեցին նրան, եւ միշտ անհաշտ մնացին նրա հետ:
Բայց տիկինը ունէր մի ազգական, որ ծառայում էր
մինիստրութեան մէջ: Այդ բարձր աստիճանաւորը սաս-
տիկ սիրում էր տիկնոջը եւ գնահատում էր նրա ար-
ժանաւորութիւնները: Նա միեւնոյն անգամ մեղադրում էր
տիկնոջ ծնողներին, որ այնպէս անգթաբար վարուեցան

նրա հետ։ Ահա այդ ազգականի հետ սիկինը սկսեց բանակցութիւններ անել քո ազատութեան մասին եւ, կարծեմ յաջողուած է...։

— Այդ դու ո՞րտեղից գիտես, իմ աւետաբեր հրեշտակ, — բացականչեցի ես եւ սկսեցի անյագաբար համբուրել նրա ձեռքերը։

— Գիտեմ, մի քանի օր առաջ սիկինը ցոյց տուեց ինձ մի նամակ, որ նոր էր ստացել Ս. Պետերբուրգից, ու ասաց. — "Նէնէ, քո բախտը վճռուած է,..."։

— Բարերար Աստուած, փառք լինի քո գթութեանը, — կրկին բացականչեցի ես, յետոյ դառնալով դէպի իմ ազատիչը. ասեցի նրան. — այդ բոլորը քեզ եմ պարտական, քե՛զ, եթէ դու չլինէիր, եթէ դու չգտնուէիր բժշկապետի ընտանիքի մէջ, ո՞վ կը դարձնէր նրանց բարի ուշադրութիւնը ինձ վրայ։ Դու, միայն դու քո հրեշտակային բնաւորութեամբ գրաւեցիր քո սիկնոջ սիրտը եւ նրա ամուսնու ցաւակցութիւնը դէպի մեր թշուառ վիճակը։ Եթէ դու չլինէիր, ես յաւիտեան կորած էի, թէ՛ աշխարհի եւ թէ՛ քեզ համար...։

Այդ միջոցին դուռը բացուեցաւ եւ ծերունի սպասաւորի երկայն կերպարանքը յայտնուեցաւ շէմքի վրայ։

— Օրիորդ, — դարձաւ նա դէպի Նէնէն, — օրը լուսանում է, լաւ չի լինի, եթէ քեզ տեսնեն այստեղ։

Նէնէն վերկացաւ եւ, ինձ հետ կրկին եւ կրկին համբուրուելով, հեռացաւ, ասելով.

— Շուտով դարձեալ կը տեսնուենք...։



ԺԱ.

ՆԵՐՈՒՄՆ

Սպիտակ տնակը այժմ բոլորովին ուրիշ տեսք էր ստացել։ Պատշգամի կոտրատուած վանդակապատը նորոգուել էր եւ փայլում էր ձիւնի պէս սպիտակ գոյնով։ Փտած սանդուղքները նոյնպէս նորոգուած էին, եւ աջուձախ կողմից շարած էին ծաղկեկների թաղարներ։ Պարտիզի ճեմելիքները պատած էին մանրած աղիւսի ծիրանագոյն փոշիով։ Հովանոցը կանաչազարդ վրանի էր նմանում. արեգակի ճառագայթները անկարող էին թափանցել պատատուկ բոյսերի սաղարթախիտ հիւսուածքի միջից։ Պարտիզի ցանկապատը, բոլորած կենդանի բոյսերով, ներկայացնում էր մի ծաղկաշարդ պատնէշ։ Ծառերը մանկացել էին, գեղեցկացել էին եւ տարածում էին իրանց շուրջը խիստ զովարար ստուեր։ Ծաղկները քաղցրանում էին առաւօտները ախորժելի անուշահոտութեամբ։ Հին, աւերակ դարձած տնակը այժմ փոքրիկ դրախտ էր դարձել։ Նա ներկայացնում էր խիստ աչքի զարկող հակապատկերը իւր տխուր, միօրինակ շրջակայքի մէջ։ Նէնէի եւ նրա աշխատասէր սիկնոջ ջանքերին էին պարտական այդ բոլոր նորոգութիւնները։

Երեկոյեան պահուն, երբ արեւը խոնարհվում էր դէպի իւր գիշերային մուտքը, Նէնէն, ցնցուղը ձեռին, առն ջրով սրսկում էր ցերեկուայ տօթից թառամած

ծաղկները: Նրա ժրաջան տիկինը, կարճ շրջազգեստով, գոգնոցը կապած, կամ փոքրիկ բահը ձեռին փորում էր ածուները, կամ մկրատով կտրատում էր թուփերի աւելորդ ճիւղերը: Նրա ամուսինը, հովանոցում նստած, գիրք էր կարդում եւ երբեմն, աչքերը բարձրացնելով, նայում էր գեղեցիկ կնոջ վրայ եւ աքանչանում էր:

Այդ պարտէզում առաւօտները եւ երեկոյները հաւաքվում էին մի խումբ երեխաներ, տղայ, աղջիկ, զանազան հասակների: Այդ փոքրիկ չարաճճիները, աւելի քան երգեցիկ թռչունները, կենդանացնում էին գեղեցիկ դրախտը իրանց ուրախ ձիվլոցով: Քրտնած, փխրած, կարմրած թշերով, վազվզում էին նրանք ճեմելիքներում, ընկնում էին փափուկ աւազի վրայ, վեր էին կենում, եւ կայտառ, անվաստակելի բնաւորութիւնները դարձեալ շարունակում էին վազվզել: Նէնէի տիկինը զրկում էր նրանց, հարբուրում էր, թափ էր տալիս փոշոտած հագուստները, պատուիրում էր զգոյշ լինել: Նոյն պարտէզում տիկինը շինել էր տուել փոքրիկ մանուկների համար զանազան մարմնամարզական գործիքներ, սովորեցրել էր նրանց մի քանի կանոնաւոր խաղեր, կրթութիւններ, եւ շատ անգամ ինքն եւս մանակցում էր նրանց զուարճութիւնների մէջ: Դրանք տիկնոջ աշակերտներն ու աշակերտուհիներն էին, որոնց հետ որոշեալ ժամերում պարապում էր նա: Դրանք Թշուառ աքսորեալների զաւակներն էին, որոնց ընտանիքով ուղարկել էին այնտեղ բնակութեան համար: Տարուայ բարեխառն ամիսներում տիկինը պարապում էր նրանց հետ պարտէզում, իսկ երբ սկսվում էին ցրտերը, նրանց համար մի առանձին սենեակ էր որոշել իւր տան մէջ: Նրա դպրոցը փոքրիկ էր. աշակերտների ու աշակերտուհիների թիւը հազիւ

ութն հոգու, որոնք սովորում էին ձրի եւ նոյնպէս ձրի ստանում էին թէ գրքեր եւ թէ դասական այլ առարկաներ: Տիկինը իւր ծանօթներից կազմել էր բարերարների մի շրջան, որոնք մատակարարում էին բոլոր ծախքերը:

Իսկ այնօր սպիտակ տնակում ինչ-որ անսովոր շարժում կար. ինչ-որ պատրաստութիւններ էին լինում: Փոքրիկ չարաճճիները այլեւս չէին վազվզում. նրանք, դարան մտած կատուների նման, հաւաքուել էին հովանոցի շուրջը եւ պլշած աչքերով նայում էին դէպի սենեակների լուսամուտները: Տիկինը այնօր խոստացել էր նրանց քաղցրաւենիք բաժանել: Նոր բոված զահվեի ախորժելի հոտը դեռ բուրում էր օդի մէջ: Սպասաւորը հագել էր իւր սեւ սերթուկը, որ խիստ հազիւ անգամ էր հագնում, եւ կրում էր սպիտակ ձեռնոցներ ու սպիտակ փողպատ: Նէնէն նոյնպէս հագել էր իւր տօնական հագուստները եւ պարտէզում ծաղկներ էր քնջում սեղանի համար: Բացուած լուսամուտներից երեւում էին սենեակներում անցուդարձ անող հիւրերի ուրախ դէմքերը: Ինքը բժշկապետը այն օր կարել էր գլխի մազերն ու եղունգները, որ տարուայ մէջ հազիւ մի քանի անգամ էր պատահում, ժամանակ չգտնելու պատճառով: Իսկ նրա մանկահասակ կինը հագել էր մեծաքսակ սեւ հագուստ, եւ գլխի շիկագոյն խիտ գիսակների մէջ երեւում էր մի մեծ, սպիտակ վարդ:

Հիւրերի թուում գտնվում էին տեղային ծառայողներից մեծ եւ փոքր աստիճանաւորներ իրանց կանանց հետ: Սեղանի վրայ պատրաստուած էր նախաճաշիկ, դրած էին զանազան ըմպելիները: Հիւրերը ոտքի վրայ ուտում էին, խմում էին, ծխում էին եւ շատախօսում էին: Տանտիկինը անդադար դիմում էր մէկից դէպի միւսը եւ ամենի համար նա պատրաստ ու-

նէը մի քանի քաղցր խօսքեր: Բժշկապետը ուշադրութիւն չէր դարձնում նրանց վրայ, այլ մի անկիւնում առանձնացած, տաք վիճաբանութեան մէջ էր մի լեռնային ինժիների հետ: Նա պնդում էր, թէ տեղային հանքային բուվագործութեան եղանակը խիստ ապարդիւն է, եւ աշխատում էր ապացուցանել, որ արտասահմանում այժմ բոլորովին ուրիշ սիստեմներ են ընդունուած: Վիճաբանութեանը վերջ դրուեցաւ, երբ հիւրերի մէջ լսելի եղաւ. «կամենդանտը գալիս է»: Այդ ժամանակ միայն բժշկապետը բաց թողեց ոգեւ ինժիների օձիքը, դուրս եկաւ իւր անկիւնից եւ դիմեց դէպի սանդուղքները՝ յարգելի հիւրին ընդունելու համար: Տիկինը նոյնպէս մօտեցաւ դրանը:

Կամենդանտի գալուց յետոյ, ներս բերեցին սուտեղների վրայ շարած շամպանիայի գինու երկայն գաւաթներ: Սառուցի մէջ դրած շիշերը վաղուց սպասում էին այդ հանդիսաւոր րոպէին:

Կամենդանտը, բոլորի հետ բարեւելուց յետոյ, անցաւ սեղանակի վերեւի կողմը եւ ոտքի վրայ ճիաց: Նրա կշռին կանգնած էր մի երիտասարդ, որին իւր հետ էր բերել: Գունաթափ, մաշուած դէմքով այդ երիտասարդը այնպիսի տխուր տպաւորութիւն էր գործում, որ, կամ նոր էր դուրս եկել հիւանդանոցից, կամ նոր էին բաց թողել նրան երկար տարիների բանտարկութիւնից: Այդ թառամած դէմքը, որը, երեւի, շատ ժամանակ չէր ծիծաղել այժմ փորը ինչ զուարթացել էր, եւ նրա մռայլուած աչքերում երեւում էին ուրախութեան նշոյլներ:

Սեղանակի մէջ տիրեց լռութիւն: Հիւրերը ոտքի վրայ սպասում էին. բոլորի աչքերը դարձրած էին դէպի կամենդանտը: Նա մի համառօտ յառաջաբանից յետոյ, հանեց ծոյից մի թուղթ, սկսեց կարդալ: Երբ վերջացրեց ընթերցումը, ամբողջ սեղանակը թնդաց ուռաների աղաղակներով. «Կեցցէ Կայսրը», մի քանի անգամ լսելի եղաւ բոլորի բերանից: Ցետոյ ամենքը, շամպանիայի գաւաթները ձեռներին, մօտեցան գունաթափ երիտասարդին եւ շնորհաւորեցին նրան:

Երիտասարդը Մուրադն էր. կարդացին նրան ներումն շնորհելու թուղթը: Նա ազատուած էր աքսորանքից:

Շամպանիայի գաւաթները դատարկուեցան. ամենքը խմեցին Կայսրի կենացը: Այդ ժամանակ առաջ անցաւ բժշկապետը եւ, առաջարկելով խմել մի նոր կենաց, խնդրեց նախապէս լսել իրան: Նա սկսեց մի փոքրիկ ճառ. խօսում էր հանդարտ, սահուն եւ առանց պաճուճանքների, լեզուով: Ճառախօսը, որ բաւական ծանօթ էր դատապարտեալի անցեալի հետ, նկարագրեց նրա կեանքի նշանաւոր գծերը, եւ գլխաւորապէս շեշտում էր այն կենսական պայմանների վրայ, որոնց անխուսափելի ազդեցութեան ներքոյ, այդ բնականից բարի եւ տաղանդաւոր երիտասարդը դարձաւ մի տաղանդաւոր չարագործ: Նա յետոյ աւելացրեց, թէ ինչպէս նա, հանդիպելով մի օրինաւոր ընկերի, նրա ազդեցութեան ներքոյ ուղղուեցաւ, զարգացաւ եւ բարոյական մարդ դարձաւ: Նա վերջացրեց իւր ճառը այդ խօսքերով. «Եթէ ցանկանում ենք, որ մեր բանտերը, որ մեր աքսորատեղերը չլցուեն յանցաւորների ահագին բազմութեամբ, պէտք է աշխատենք անհետացնել յանցանքների պատճառները իրանց բուն արմատի մէջ»:

Բոլորը ծափահարեցին: Գաւաթները դատարկուեցան. խմեցին ուղղուած եւ ներումն ստացած դատապարտեալի կենացը:

ԺԲ.

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

Մի ամիս անցել էր այդ օրից: Մի կառք սահում էր Հարթ, փոստային ճարապարհով: Նրա մէջ նստած էին Նէնէն եւ Մուրադը: Երկուսն էլ ուրախ, երկուսն էլ բախտաւոր: Կառապանը սուլելով քշում էր ձիաները, կարծես, նա եւս ուրախ էր, որ տանում է մի զոյգ նորապսակ ամուսիններ:

Առջեւում, երկայն կօշկինները հագին, ցուպը ձեռին, ուղեւորի պարկը ուսին, դանդաղ քայլերով գնում էր մի ճանապարհորդ: Երբ նա հեռուից նշմարեց կառքի մօտենալը, կանգնեց:

Կառքը հասաւ ճանապարհորդին:

— Ձեր անունով նամակ ունեմ, պարոն, — ասաց նա եւ մի ծրար մեկնեց դէպի կառքը:

Մուրադը նայեց օտարականի երեսին եւ սոսկաց: Նա ձեռքը տարաւ դէպի ատրճանակը եւ, ուշով բռնելով դէպի օտարոտի նամակաբերը, ասաց.

— Հեռացէ՛ք, եթէ չէք ցանկանում մեռնել:

— Երդւում եմ երկնքի եւ երկրի բոլոր սրբութիւններով, որ դէպի ձեզ ոչ մի չար նպատակ չունեմ, — ասաց նա համոզիչ ձայնով: — Ընդունեցէք այդ նամակը:

— Միթէ կարելի՞ է հաւատալ ձեր երդումներին:

— Ես կամենում եմ ապացուցանել, որ ես այնքան վատ չեմ, որքան դուք կարծում էք:

Այդ խօսակցութեան բոլոր ժամանակը Նէնէն կպած էր իւր սիրելի ամուսնու կողքին եւ անդադար հարցնում էր. — Ի՞նչ է ասում, ի՞նչ է ուզում այդ մուրացկանը:

Մուրադը հրամայեց կառքը կանգնեցնել, ձեռքը մեկնեց եւ առեց ծրարը: Նա խնդոյն բաց արեց նամակը, որ սկսվում էր այդ խօսքերով.

"Մուրադ, կարդացէք, յետոյ ոչնչացրէք այդ նամակը: Մեզ յաջողուեցաւ ազատուել դատապարտեալների անից: Մենք կը սպասենք քեզ O... քաղաքում: Ներեցէք նամակաբերին եւ մոռացէք անցեալը: Մեր ազատութիւնը նրան ենք պարտական":

Ստորագրուած էին նրա երկու բարեկամների՝ Համդի եւ Աւազակապետի անունները:

Մի քանի անգամ Մուրադը կարդաց այդ տողերը: Նրա սրտին տիրեց անչափ ուրախութիւն եւ միեւնոյն ժամանակ կասկած: Մի՞թէ այդ բոլորը կեղծ չէր: Ընդհակառակը, նամակաբերը նկատեց նրա տարակուսութիւնը եւ խիստ սրտաշարժ ձայնով ասաց.

— Երդւում եմ այն աղու-Հայով, որ շարունակ տասնեակ տարիներ միասին կերել ենք, եւ հաւատացնում եմ ձեզ, որ այդ նամակի մէջ կեղծ ոչինչ չկայ:

Մուրադը կրկին ուշադրութեամբ նայեց նամակի վրայ: Նրա մի անկիւնում հազիւ նշմարվում էր մի խորհրդաւոր էմբլեմա, որ կազմուած էր հայոց այբուբենի առաջին եւ վերջին տառերից՝ Ա եւ Ք, իսկ այդ երկու տառերի մէջտեղում զետեղուած էր մի խարիսխ, որ հովանաւորուած էր սեւ ձեռքով: Դա նրա եւ իւր երկու ընկերների մէջ մի պայմանական նշանաբան էր:

— Հաւատում եմ, — ասաց Մուրադը, եւ, նամակը բռնելով վառած լուցկիի վրայ, այրեց:

Նամակաբերը խօսեց.

— Իմ ձեռքով կատարուեցաւ քո անկումը, Մուրադ, ես ինձ բախտաւոր կը համարէի, եթէ քո ազատութիւնը նոյնպէս իմ ձեռքով կատարուէր: Դրանով ես իմ խիղճը հանգստացրած կը լինէի: Բայց դարձեալ ուրախ եմ, որ քեզ ազատուած եմ տեսնում եւ բախտաւոր: Իսկ այն ծառայութիւնը, որ պատրաստել էի կատարել քո փրկութեան համար, եւ որի մասին մի քանի անգամ դիմեցի քեզ, — այն ծառայութիւնը ես մատուցի քո երկու բարեկամներին: Յուսով եմ, որ այդ էլ բաւական կը լինի, որ դու ներես ինձ եւ չյիշես մեր անցեալը . . . :

Մուրադը, ձեռքը տալով նրան, ասաց.

— Շնորհակալ եմ, մոռանում եմ բոլոր անցեալը . . . :

Փօստային իջեւանը շատ հեռու չէր: Մուրադը իջաւ կառքից, սկսեց նրա հետ ոտքով գնալ: Նէնէն մնաց կառքի մէջ, որը կամաց-կամաց քշում էին դէպի իջեւանը:

Այդ մարդը քաւոր Պետրոսն էր: Մինչեւ իջեւան հասնելը, նա պատմեց, թէ ինչ հնարքով կարողացաւ փախցնել Համբին եւ Աւազակապետին:

— Բայց դու ի՞նչպէս կարողացար այդքան մօտիկ յարաբերութիւններ ունենալ դատապարտեալների հետ, — հարցրեց Մուրադը:

— Քեզ յայտնի է, որ վերջին օրերում տիֆով հիւանդների թիւը սաստիկ բազմացաւ. օր չէր անցնում, որ մի քանի հոգի չմեռնէին: Տեղային միակ քահանան նոյնպէս հիւանդացաւ, այդ պատճառով քահանայի մեծ

պահանջ կար: Ես, իբրեւ պատահական յոյն աբեղայ, առաջարկեցի իմ ձրի ծառայութիւնը: "Փէշքէշի ձիու ատամներին չեն մօտիկ անում„: Ինձ նոյնպէս չքննեցին: Ես ազատ մուտք ունէի թէ՛ բերդում, եւ թէ՛ հիւանդանոցում: Այդ բաւական էր իմ նպատակին հասնելու համար:

— Դու նախածանօ՞թ էիր Համբի եւ Աւազակապետի հետ:

— Ոչ: Այսքանը միայն գիտէի, որ նրանք քո բարեկամներն են: Բացի դրանից, այդ մարդկանց ես շատ հաւանեցի: Նրանք սովորական մարդկանց տեսակից չէին:

Կառքը հասաւ իջեւանին: Մուրադը մօտեցաւ, վերբերեց Նէնէին: Այստեղ պէտք է մի փոքր ճաշէին, յետոյ ճանապարհ ընկնէին: Նէնէն յայտնեց, թէ ուտելու ախորժակ չունի. նա մօտեցաւ, թէք ընկաւ դիւանի վրայ եւ մի քանի րոպէից յետոյ նրա քունը տարաւ: Նա սաստիկ յոգնած էր: Ամուսինը ծածկեց նրան եւ թողեց հանգստանալ:

Մուրադը եւ քաւոր Պետրոսը դուրս եկան միւս սենեակը եւ պահանջեցին նախաճաշիկ: Հասարակ կաղնեայ փայտից շինած սեղանի վրայ, — որի մակերեւոյթը պատած էր բազմաթիւ սեւ խորշիկներով, որոնք գոյացել էին ծակ սամօվարի տակից թափուած կրակներից, — դրուեցաւ մի շիշ գինի, պանիր, հաց եւ մի ամբողջ խարշած հաւ: Մուրադը իւր հին դաստիարակի հետ նստեց այդ սեղանի մօտ:

Քաւոր Պետրոսը տխուր էր. Նրա թախծալի դէմքը ցոյց էր տալիս ներքին խռովութիւն: Մուրադը այժմ միայն ուշադրութեամբ նայեց այդ երկաթի մարդու վրայ: Նա բաւական փոխուել էր: Նրա մօրուքի եւ գլխի մազերը բոլորովին ճերմակացել ,էին: Նրա ճակատի վրայ

առաջ կար մի մռայլ դրոշմ, որը դրուած էր այն ժամանակ, երբ առաջին անգամ մի մեծ յանցանքի համար նրան Սիբիր աքսորեցին։ Յետոյ փախչելով այնտեղից, այդ ամօթալի նշանը նա ամենայն զգուշութեամբ միշտ ծածկում էր, որ չճանաչուի։ Երբ նա իւր մորթեայ թանձր գլխարկը մի կողմ դրեց, այժմ միայն Մուրադը նկատեց, որ այն դրոշմի հետքերը բոլորովին եղծուած էին, իսկ նրա փոխարէն տարածուած էր լայն ճակատի վրայ մի սարսափելի սպի։ Երեւում էր, որ շիկացրած երկաթով ամբողջ ճակատը այրել ու խարել էին։

— Քո ճակատի վրայ ես մի փոփոխութիւն եմ նկատում, — հարցրեց Մուրադը։

— Այդ ես արեցի քեզ համար, — պատասխանեց նա, գլուխը վեր բարձրացնելով։ — Ես կորցրի այն սեւ դրոշմի հետքերը, որպէս զի չճանաչուեմ եւ աւելի վստահութեամբ կարողանամ մտնել այն բնակարանին, որտեղից մտածում էի ազատել քեզ։

Այդ վերին աստիճանի զոհաբերութիւնը մի պարզ ապացոյց էր այդ հին չարագործի անկեղծութեանը դէպի իւր սիրելի սանիկը, որը սաստիկ զգացուեցաւ եւ, լցնելով բաժակը, մեկնեց նրան ու ասաց.

— Խմիր, յագեցրու քաղցդ։ Ես քեզ կ'առնեմ իմ կառքի մէջ եւ կը տանեմ մեր հայրենիքը։ Բաւական է, որքան թափառեցիր, բաւական է որքան աշխարհից աշխարհ պտտեցար։ Թո՛ղ այժմ գոնէ ծերութիւնը ստիպեցնէ քեզ հայրենի տնակի տակ անցկացնել կեանքի վերջին օրերը։

Նա խմեց բաժակը, պատասխանելով.

— Ոչ, ես չեմ ների ինձ նստել այն կառքի մէջ, այն կնոջ մօտ, որին մի ժամանակ ես հրամայեցի սպանել եւ դահճի պաշտօնը քեզ յանձնեցի, Մուրադ։ Դու աւելի բարեխիղճ գտնուեցար, քան թէ ես, եւ խնայեցիր անմեղ կեանքը, եւ քո բարութիւնը վարձատրուեցաւ...։ Այդ նազելի հրեշտակը, երեւի, չէ ճանաչում ինձ, եթէ ճանաչէր, անպատճառ կը զզուէր ինձանից։ Ոչ, ես իմ ներկայութեամբ չեմ պղծի մի սուրբ ամուսնութիւն։ Գնացէ՛ք, Տէր ընդ ձեզ, եւ տարէ՛ք ձեզ հետ իմ օրհնութիւնը, եթէ Աստուած կ'ընդունէ օրհնութիւնը մի եղեռնագործի շրթունքներից։ Իսկ ես Կայէնի նման կը թափառեմ աշխարհից աշխարհ, մինչեւ դժոխքը կը խղճայ իմ վրայ եւ իմ առջեւ բաց կ'անէ իւր դռները...։

Նա գլուխը քարշ գցեց եւ նրա խիտ, ճերմակ ծամերը թափուեցան սոսկալի ճակատի վրայ, ծածկեցին արտասուքը, որ գետի նման հոսում էր այն աչքերից, որոնք երբէք արտասուելու սովոր չէին եղել։

— Դու կարծո՞ւմ ես, որ քեզ համար փրկութիւն չկայ, դու կարծում ես, որ չե՞ս կարող մաքրել քո խիղճը, — հարցրեց Մուրադը խորին ցաւակցութեամբ։ — Ապա ինչո՞ւ համար է քրիստոնէական ներողամտութիւնը, որ հաշտեցնում է մեղաւորին սիրոյ ու խաղաղութեան Աստուծոյ հետ։

— Շատ անգամ փորձել եմ, բայց չէ յաջողուել... պատասխանեց նա առանց գլուխը վեր բարձրացնելու։ — Մեղքը միացել է իմ հոգու, սրտի եւ ամբողջ մարմնի հետ։ Նա ամէն րոպէ սնունդ է պահանջում։ Չեմ կարող չկերակրել նրան։ Նա ինձ հետ պէտք է ապրէ, որպէս չարութիւն, միայն չար գործելու համար։ Չեմ կարող բաժանուել նրանից։ Միթէ կարելի՞ է օձից խլել թոյնը եւ կարիճին այնպէս դաստիարակել, որ չխայթէ...։

Նա գլուխը վեր բարձրացրեց եւ ճակատի վրայ թափուած մազերը մի կողմ ձգեց։ Այժմ նրա ահռելի աչքերում, փոխանակ արտասուքի, նկատւում էր բարկութեան կրակը։

— Այո՛, չեմ կարող... կրկնեց նա։ — Ես մի չար դեւի նման պէտք է պատժեմ մարդկանց անիրաւութիւնները միայն անիրաւութիւններով...։ Մարդիկ իրանք են ստեղծել ինձ նման պատիժը իրանց համար...։ Ես նրանց մեղքերի հրեշաւոր ծնունդն եմ...։ Նրանց վատ օրինակներով ես էլ մոլորուեցայ։

— Հէնց այդ գիտակցութիւնը բաւական է, որ ուղղէ եւ փրկէ քեզ, — կտրեց նրա խօսքը Մուրադը։ — Ես էլ այդ գիտակցութեանը հասայ եւ փրկուեցայ։

— Հասկանում եմ...։ Բայց այդ փրկութեան մէջ կը լինի եւ իմ մահը...։ Իսկ ես դեռ մեռնել չեմ ուզում...։ Սատանան պէտք է անմահ մնայ...։

Նա միայն խմում էր, բայց ոչինչ չէր ուտում։ Մուրադը պատուիրեց մի նոր շիշ գինի եւս դնել սեղանի վրայ։

— Երբեմն բարութիւն եմ գործում, — ասաց նա, — ինչպէս միգապատ երկնքի կամարի վրայ ճեղքւում են թանձր ամպերը եւ րոպէապէս դուրս են ցոլացնում արեգակի կենսատու ճառագայթները։ Բայց այդ երկար չէ տեւում. կրկին անցնում են սեւ ամպերը, եւ ամէն ինչ կրկին նսեմանում է, մթնում է...։ — Ես ուրախ կը լինէի, որ կատարեալ չարագործ լինէի եւ իմ մէջ բնաւ բարութեան սերմեր չլինէին։ Այն ժամանակ խիղճս աւելի հանգիստ կը լինէր։ Այն ժամանակ գուցէ ամենեւին չէի զգայ որ ես չար եմ։ Որովհետեւ, բարութիւնն է միայն զգալ տալիս մեր չարութիւնը, ինչպէս սպիտակի

վրայ աւելի պարզ կերպով նշմարւում է սեւը։ Կը ցանկանայի, որ իմ սրտի մէջ ամէն ինչ միագոյն լինէր, կամ սեւ, կամ սպիտակ, կամ բարի, կամ չար։ Սատանաները նրա համար միայն բախտաւոր են, որ զուտ չար են։ Այնպէս էլ բախտաւոր են հրեշտակները, որ զուտ բարի են։ Իսկ ի՞նչ եմ ես։ — Մի այլանդակ խառնուրդ։ Ի՞նչով կարող եմ ես բախտաւոր լինել, երբ իմ սրտի մէջ միշտ պատերազմ կայ, եւ մանաւանդ, չարը աւելի զօրեղ է, քան թէ բարին...։

Նա վերկացաւ, ասելով.

— Ախ, ինչո՜ւ եմ այդքան երկար խօսում։ Դուք պէտք է ճանապարհ գնաք, իսկ ես ուշացնում եմ ձեզ։

Նա մօտեցաւ իւր ճանապարհորդական պարկին, եւ հանելով նրա միջից մի ծանր քսակ, մեկնեց Մուրադին, ասելով.

— Ես կը խնդրէի քեզանից, որ թեթեւացնէիր իմ բեռը եւ ընդունէիր այդ, գուցէ քեզ հարկաւոր կը լինէր։

— Շնորհակալ եմ, — ասաց Մուրադը հրաժարուելով։ Բժշկապետը հոգացել է մեր ճանապարհի ծախքը։

— Գիտեմ... դու խորշում ես այդ ոսկիներից, որովհետեւ նրանք շաղախուած են արիւնով...։ Բայց գիտե՞ս հին առակը, Յուդայի ստացած երեսուն արծաթի մէջ նոյնպէս արիւն կար։ Այդ երեսուն արծաթով գնեցին մի ագարակ, որ կոչուեցաւ “Ակեղդամայ„, որ նշանակում է արեան ագարակ։ Աւանդութիւնն ասում է, որ այդ ագարակի վրայ մշակւում էին Երուսաղէմի ամենապտղաբեր ձիթենիները։ Երբ դու կը հասնես քո հայրենիքը, այնտեղ քեզ մեծ աշխատութիւններ են սպասում։ Այդ ոսկիներով կը գնես մի ագարակ եւ կը սկսես նրա

վրայ մշակութիւնները անել։ Թող այդ ագարակը կոչուի "արեան ագարակ„, փոյթ չէ, բայց քո աշխատութիւնը կը բուսեցնէ նրա վրայ հայրենիքի ամենապտղաբեր տունկերը։ Ես իմ բոլոր արժէքդրքերը Նուիրեցի Համլին եւ Աւազակապետին։ Այդ քո բաժինն էր, որ պահել էի քեզ համար։ Այն թղթերը նոյնպէս մաքուր վաստակ չէին։ Բայց նրանք ընդունեցին, ասելով. "հայը թող համեղ լինի, ի՞նչ փոյթ, որ ջհուդի թխած կը լինի„...։

Մուրադը ընդունեց ոսկիները։ Քաւոր Պետրոսը շարունակեց.

— Դու կը հանդիպես Համլի եւ Աւազակապետի հետ Օ... քաղաքում։ Երանք այնտեղ կը սպասեն քեզ։ Ճեռոյ միասին կը գնաք մեր հայրենիքը։ Երանք երկուսն էլ լաւ մարդիկ են։ Ոտրհուրդ եմ տալիս քեզ՝ չբաժանուել նրանցից, միասին կը սկսէք գործել ու աշխատել։ Քաղցր է աշխատանքը հայրենի հողի վրայ...։

Բոլոր այդ խօսակցութեան ժամանակ Մուրադը նկատում էր եւ մի աւելի մեծ փոփոխութիւն քաւոր Պետրոսի բնաւորութեան, հայեացքների եւ բարոյական յատկութիւնների մէջ։ Առաջ նա գործում էր միայն չարութեան համար, թէեւ նրա գործողութիւնները կատարվում էին՝ որոշուած, հաստատ եւ դիտակցական նպատակներով։ Իսկ այժմ նա, կարծես, օրօրվում էր այդ երկու մաքերի մէջ. միթէ աւելի լաւ չէր լինի, որ չարութիւնը բառնայինք բարութեամբ, — միթէ չարութիւնը չարութեամբ արմատախիլ անելը՝ դաստիարակութեան նոյն եղանակը չէր լինի, երբ վարժապետը աշխատում է կրթել եւ բան սովորացնել անպիտան աշակերտին ծեծի եւ պատիժների ուժով։ Քաւոր Պետրոսը հակուած էր երեւում դէպի զղջում, դէպի ուղղութիւն.

բայց նրան կատաղեցնում էր այն միտքը, թէ ինչո՞ւ ինքը առաջին քայլն անէ եւ ուղղուի, թէ ինչո՞ւ ինքը զիջումն անէ ուրիշների չարութեան դէմ, միթէ դրանով իրան մի անբախտ զոհի վիճակի մէջ չէ՞ դնի։ Երբ մարդիկ խաբում են, նա էլ պէտք է խաբէ, երբ մարդիկ հալածահալում են, նա էլ պէտք է հալածահալէ։

Կառքի ձիանները փոխել էին, անիւները ձիւթով օծել էին, եւ պատրաստ էր իջեւանի բակում։ Ընէնէն զարթնել էր, եւ յոգնածութիւնից կազդուրուած, վազեց նա կառքի մօտ, եւ առանց Մուրադի օգնութեան, ինքը ցատկեց, նստեց նրա մէջ։

— Ընէնէ, ձեռք տուր այդ օտարականին, դա իմ վաղեմի բարեկամն է, — ասաց Մուրադը։

Ընէնէն մեկնեց ձեռքը։ Քաւոր Պետրոսը բռնելով ասաց.

— Դուք երկուսդ էլ արժան էք միմեանց։ Նախանձամութիւնը, զանազան փորձանքների միջից անցկացնելով ձեզ, կրկին հանդիպեցրեց միմեանց։ Օրհնում եմ ձեր ամուսնութիւնը եւ բախտաւորութիւն եմ ցանկանում։

Մուրադը ընկաւ նրա գիրկը, եւ արտասուքը աչքերում, երկար աղաչում էր, խնդրում էր նրան, որ նստէ իրանց հետ կառքը եւ միասին վերադառնան իրանց հայրենիքը՝ Պարսկաստան։ Բայց քաւոր Պետրոսը դարձեալ մերժեց, ասելով.

— Դուք գնացէք, Ծէր ընդ ձեզ, ես դեռ բոլորովին չեմ վերջացրել իմ գործը... գուցէ հեռուից աւելի պիտանի կը լինեմ ձեզ...։

Մուրադը նստեց։ Կառքը շարժուեցաւ։ Քաւոր Պետրոսը բաւական տեղ ոտքով գնաց նրանց հետ։ Ճեռոյ

կրկին ձեռք տալով Սինէին, կրկին համբուրուելով Մուրադի հետ, բաժանուեցաւ: Նա երկար կանգնած նայում էր նրանց ետեւից, մինչեւ կառքը բոլորովին անհետացաւ նրա աչքերից: Այդ ժամանակ միայն դժբախտ թափառականը ճանապարհը ծռեց եւ սկսեց դիմել դէպի մի այլ կողմ...:

Երեք ամիս անցել էր այն օրից:

Պարսկաստանի Սալմաստ գաւառում, Սաւլա գիւղից ոչ այնքան հեռու (որը Մուրադի հայրենի գիւղն էր) տարածուած էին հին աւերակներ: Արաբական ճաշակով կառուցուած մի հոյակապ մինարէթ միայն կանգուն էր մնացել այդ տխուր աւերակների մէջ: Նրա բարձր կամարների ներքոյ թագաւորում էր մշտական ամայութիւն եւ խաւար: Զղջիկները եւ վայրենի աղաւնիները միայն երբեմն աղմկում էին այդ անբնակ մինարէթի գերեզմանական լռութիւնը: Բայց մի գիշեր այնտեղ լոյս էր երեւում: Յատակի վրայ վառվում էր խարոյկ եւ նրա լուսաւորութեան մէջ շարժվում էին անորոշ ստուերներ: Եթէ մեր ընթերցողը հանդգնակութիւն ունենար եւ, գաղտնի կերպով մօտենալով մինարէթին, նրա կիսաւեր դռնից նայէր ներսը, անպատճառ կը տեսնէր նոյն դէմքերը, որոնք ծանօթ են նրան, որոնց ճանաչում է նա, սկսեալ նրանց պատանեկութեան հասակից: Այնտեղ էին Մուրադը եւ Ջալլադը (աւազակապետը) երկուսն էլ կէյթունցու հագուստի մէջ կերպարանափոխ եղած: Այնտեղ էին Մուրադի ճանկութեան երեք ընկերները՝ Կարօն, Ասլանը եւ Սագօն, մշեցոց ծպտեալ հագուստով: Այնտեղ էր պատանի Փարհադը, որ նոր էր ընկել այդ շրջանի մէջ: Այնտեղ չէր միայն Համբը:

Մինարէթը շատ հեռու չէր այն վայրերից, այն այգիներից եւ այն ձեռատունկ անտառներից, որոնց մէջ Մուրադը իւր պատանեկութեան հասակում, իբրեւ փախստական, ապաստան գտաւ: Որպէս տեսանք այդ, յիշատակարանի սկզբում, այն ժամանակ նա վարում էր բաւական կասկածաւոր կեանք իւր երեք ընկերների՝ Կարօի, Ասլանի եւ Սագօի հետ: Այնուհետեւ աղետաւոր հանգամանքները բաժանեցին այդ փոքրիկ սրիկաներին եւ ձգեցին կեանքի տարբեր ճանապարհների վրայ: Թափառելով աշխարհից աշխարհ, երկրից երկիր, եւ անցնելով զանազան գառն փորձերի միջից, տասնեւերկու տարուայ անջատումից յետոյ, — վաղեմի ընկերները կրկին հանդիպում են միմեանց միեւնոյն մինարէթի մէջ, որ մանկութեան հասակում նրանց թագստի տեղն էր, նրանց սիրելի որջն էր: Երկու օր ճնացին այնտեղ, իսկ երրորդ օրը մինարէթը դարձեալ դատարկ էր, դարձեալ ամայի էր: Ի՞նչ եղան նրանք, ո՞ւր գնացին, — այդ կը տեսնէ ընթերցողը մեր մի այլ աշխատութեան — "Կայծերի„ մէջ...:


ZUUՌ-Apm CCP

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ՐԱՖՖԻ ՄԱՀԻՑ ՅԵՏՈՑ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

		րուբլի
1.	"ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ" (սպառուած)	—.—
2.	"ԽԵՆԹԸ" ԵՒ "ՋԱԼԱԼԻԴԻՆ" *մի գրքի մէջ ամփոփուած*, Բ. տպագր. (սպառուած)	—.—
3.	"ԴԱՒԻԹ-ԲԻԿ" *Հար.* Ա, Բ *եւ* Գ *վերջաբանով*, Բ. տպագր. (սպառուած)	—.—
4.	"ՄԻՆՆ ԱՑՍՊԷՍ, ՄԻՒՍՆ ԱՑՆՊԷՍ", *պատկերազարդ վէպ* (սպառուած)	—.—
5.	"ԿԱՑԾԵՐԻ" Ա. *Հար.* Բ. տպագր. (սպառուած)	—.—
6.	"ԿԱՑԾԵՐԻ ՎԵՐՋԸ" (սպառուած)	—.—
7.	"ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" *Հար.* Ա. (սակաւ.)	2.—
8.	"ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" *Հար.* Բ. (սակաւ.)	2.—
9.	"ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ" (սպառուած)	—.—
10.	"ԽԱՄՍԱՑԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ" Բ. տպագր. (սպառուած)	—.—
11.	"ՊԱՐՈՑՐ ՀԱՑԿԱՋՆ" (սպառուած)	—.—
12.	"Ո՞Վ ԷՐ ՄԵՂԱՒՈՐ" (սպառուած)	—.—
13.	"ՋԱՀՐՈՒՄԱՐ" *վէպ*	2.—
14.	"ՏԱՃԿԱՀԱՑՔ"	—.50
15.	"ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ" *Հրոս մասերը մի գրքի մէջ ամփոփ.* Բ. տպագր. (սպառուած)	—.—
16.	"ՈՍԿԻ ԱՓԱՂԱՂԸ" Բ. տպագր.	1.—
17.	"ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ" Բ. տպագր. (սպառ.)	1.—
18.	"ՍԱՄՈՒԷԼ" Ա, Բ *եւ* Գ, *Հատորները մի գրքի մէջ ամփոփուած*, Բ. տպագր.	3.50
19.	"ԴԱՒԻԹ-ԲԻԿ" *Հար.* Ա, Բ *եւ* Գ *վերջաբանով*, Գ. տպագր.	3.50
20.	"ԿԱՑԾԵՐ" Ա. *Հար.* Գ. տպագր.	2.—
21.	"ԿԱՑԾԵՐ" Բ. *Հար. եւ վերջ*, Բ. տպագր.	3.—
22.	"ԽԵՆԹԸ" *եւ* "ՋԱԼԱԼԻԴԻՆ" *մի գրքի մէջ ամփոփուած*, Գ տպագր.	2.—
23.	"ՋԱԼԱԼԻԴԻՆ" *առանձին*, Գ. տպագր.	—.50
24.	"ԽԱՉԱԳՈՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ" Ա. Բ. Գ. *եւ* Գ. *Հար. մի գրքի մէջ ամփոփուած* Գ. տպագր.	2.—

Հրատ. ԱՅՐԻ ԱՆՆԱ ՐԱՖՖԻ

Mme. Raffi

32, Richmond Gardens, Shepherd's Bush, London, W. (England).

ՀԵՏՋՀԵՏԷ ԼՈՑՍ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ

ԹԱՓՓԸՐ

ՀԵՏԵՒԵԱԼ ՍՊԱՌՈՒԱԾ ԵՒ ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. "ՍԱԼԻՒ" Ա. Բ. *եւ* Գ. *Մեծադիր Հատորներ* (անտիպ):
2. "ԽԱՄՍԱՑԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ":
3. "ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ":
4. "ՀԱՑ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ":
5. "ԱՐԾԻՒ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ":
6. "ՄԻՆՆ ԱՑՍՊԷՍ ՄԻՒՍՆ ԱՑՆՊԷՍ":
7. "ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ *եւ* սպառուած):
8. "ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ *եւ* սպառուած):
9. "ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ *եւ* սպառուած):
10. "ՓՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ" (անտիպ *եւ* սպառուած):
11. "ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" *Հար.* Գ (անտիպ *եւ* սպառ.):
12. "ՆԱՄԱԿՆԵՐ" (անտիպ):
13. "ԱԶԳԱՑԻՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ". *եւայլն, եւայլն:*

ՐԱՖՖԻ

ՎԱՃԱՌԵԼԵ ԳՐՔԵՐԵՑ ԵՒ

1.	„ՍԱՄՈՒԷԼ„ Հար. Ա. Բ. եւ Գ. *մի գրքի մէջ ամփոփուած, Բ. տպագրութիւն* . .	3.50	8
2.	"ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ" Հար. Ա.	2.—	4 ½
3.	"ՎԷՊԻԿՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ„ Հար. Բ.	2.—	4 ½
4.	"ՋԱՀՐՈՒՄԱՐ„ *վէպ*	2.—	4 ½
5.	"ԿԱՑԻՆԻ ԿՏԱԿԸ„	1.20	2 ½
6.	"ՏԱՃԿԱՀԱՑՔ„	—.50	1
7.	"ՈՍԿԻ ԱՓԱՂԱՂԸ„ Բ. տպագր. . . .	1.—	3
8.	"ԴԱՒԹ-ԲԷԿ" Հար. Ա. Բ. եւ Գ. *վերջաբանով, Գ տպագր.*	3.50	8
9.	"ԿԱՑԾԵՐ„ Հար. Ա., Գ. տպագր. . .	2.—	5
10.	"ԿԱՑԾԵՐ„ Հար. Բ. եւ վերջ, Բ. տպ.	3.—	7
11.	"ԽԵՆԹԸ„ եւ "ՋԱԼԱԼԷԴԻՆ„ *մի գրքի մէջ ամփոփուած, Գ. տպագր.*	2.—	5
12.	"ՋԱԼԱԼԷԴԻՆ„ *առանձին, Գ. տպագր.*	—.50	1 ½
13.	"ԽԱՉԱԳՕՂԻ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ„ Ա. Բ. Գ. եւ Գ. Հար. *մի գրքի մէջ ամփոփուած Գ. տպագր.*	2.—	5

գրդ.

«Ազգային գրադարան»
NL037018

59.229